ԵՐԱՆԵՐԻ
ՄՈՍԿՎԱՅՑՈՒ

ՏԱՍԸ
ՀԱՏՈՐՈՎ

জাতীয় পুরস্কার

VERIFIED

২০ সেপ্টেম্বর

২০,০০০ টাকা

AVSSIONAL

বাংলাদেশ সরকার 1963

Խմբագրական կոլեգիա՝
Հարությունյան Սաղաթել, Հրաչյան Խաչիկ,
Սիմոնյան Կարեն

Հավաքումը՝
Լ. Բերբերյանի

ЖЮЛЬ ВЕРН

СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ

в десяти томах

Том четвертый

20 000 ЛЬЕ ПОД ВОДОЙ

(на армянском языке)
Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1963

Թարգմանությունը՝

Հ. ՄԱԶՄԱՆՅԱՆԻ



ԱՌԱՋԻՆ ՍԱՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԼՈՂԱՅՈՂ ԽՈՒԹԸ

1866 թվականը նշանավոր դարձավ արտասովոր դեպքերով, որ հավանորեն մինչև այսօր էլ շատերը չեն մոռացել։ Այդ դեպքերի լուրերը հետաքրքրություն առաջ բերին մայր ցամաքների բնակչության մեջ, գրգռեցին նավահանգստային քաղաքների բնակիչներին և առանձնապես անհանգստացրին ծովագնացներին։ Վաճառականները, նավատերերը, նավապետները, ռազմական նավաստիները և նույնիսկ Հին ու Նոր Աշխարհի մի շարք պետությունների կառավարությունները,— բոլորն էլ վերին աստիճանի շահագրգռված էին արտասովոր այդ երևույթով։

Այդ թվականին մի քանի նավեր ծովում հանդիպեցին ինչոր մի երկար, իլիկաձև առարկայի. իր մեծությամբ ու արագաշարժությամբ դա գերազանցում էր կետ ձկան. երբեմն պայծառ լույս էր արձակում։

Այդ հանդիպումների վերաբերյալ լուրերը, որոնք գրված էին զանազան նավերի մատյաններում, միատեսակ էին նկարագրում նույն առարկայի կամ էակի արտաքինը, միևնույն ձևով հաղորդում նրա շարժման չլսված արագությունը։ Եթե այդ կետ ձուկ էր, ապա իր մեծությամբ գերազանցում էր բոլոր այն կետերին, որոնք հայտնի են գիտության։ Սակայն հուշակավոր գիտնականներից ոչ մեկը,— ոչ Կյուվեն, ոչ էլ Լասեբեղը, Դյումերիլն ու Կատրֆաժը,— չէր ուզում հավա-

տալ, թե այդքան մեծ կենդանիներ գոյություն ունեն, «մինչև որ չտեսներ իր սեփական աչքով»։

Ամփոփելով բազմաթիվ լուրերը, որոնք մերթ ասում էին, թե իբր այդ հազվագյուտ առարկայի երկարությունն ընդամենը երկու հարյուր ոտնաչափ է, մերթ էլ ասում, որ իբր առարկան ունի երեք մղոն երկարություն և մեկ մղոն լայնություն, այնուամենայնիվ կարելի էր համարձակ հայտարարել, որ այդ արարածը, եթե միայն իրոք գոյություն ունի, անհամեմատ ավելի մեծ է, քան ձկնաբաններին հայտնի բոլոր կենդանիները։ Մինչդեռ անկասկած էր նրա գոյությունը, անվիճելի փաստ էր այդ։

Ու քանի որ մարդկությունն առեղծվածներով գրավվելու հակում ունի, ուստի այդ լուրերը ծայրահեղության չափ հուզեցին ամբողջ աշխարհը։ Այստեղ բոլորովին անտեղի կլիներ կասկածամիտ լինել կամ հնարովի համարել այդ լուրերը։

Եվ իսկապես, 1866 թվականի հուլիսի 20-ին «Նահանգապետ Հիգինսոն» շոգենավը, որ պատկանում էր «Կալիֆոռնիայի շոգենավային ընկերությանը», Ավստրալիայի արևելյան ափից ոչ հեռու, հանդիպեց այդ շարժուն զանգվածին։

Նավապետ Բեկկերը սկզբում կարծեց, թե գտել է քարտեղի վրա չնշանակված մի խութ. նա արդեն ուզում էր որոշել խութի կոորդինատները, երբ հանկարծ տարօրինակ առարկայի միջից ջրի երկու սյուներ թռան ու բարձրացան մինչև հարյուր հիսուն ոտնաչափ։ Եթե այդ ստորջրյա մի հեյզերի ժայթքում չէր, ապա պարզ էր, որ «Նահանգապետ Հիգինսոնը» հանդիպել է ինչ-որ անհայտ ծովային կաթնասուն կենդանու, որը պինչերից գոլորշիախառն ջրասյուներ էր բաց թողնում։

1866 թվականի հուլիսի 23-ին խաղաղ օվկիանոսում նույնպիսի մի հանդիպում ունեցավ «Քրիստափոր Կոլումբոս» շոգենավը, որ պատկանում էր «Արևմտա-Հնդկական և խաղաղ-օվկիանոսյան շոգենավային ընկերությանը»։ Պարզ էր, որ այդ տարօրինակ կետն իսկապես ընդունակ էր շարժվել հրեշավոր արագությամբ, քանի որ «Նահանգապետ Հիգինսոնը» և «Քրիստափոր Կոլումբոսը» երեք օրվա ընթացքում

նրան հանդիպեցին երկրի մակերևույթի այնպիսի երկու վայրերում, որոնք յոթ հարյուր ծովային մղոն հեռու են մեկմեկուց։

Տասնհինգ օրից հետո «Ազգային ընկերության» «Հելվեցիա» և «Ռոյալ Մեյլ» ընկերության «Քանաան» շոգենավերը, հանդիպելով Ատլանտյան օվկիանոսում, Ամերիկայի ու Եվրոպայի միջև, հյուսիսային լայնության 42°15′ և արևմտյան երկարության 60°35′ տակ հայտաբերեցին «Հրեշին»։ Երկու շոգենավերի նավապետներն այդ կաթնասուն կենդանու երկարությունը որոշեցին առնվազն երեք հարյուր հիսուն անգլիական ոտնաչափ[1]. «Քանաանը» և «Հելվեցիան», որոնց ամենաառաջին ծայրից մինչև ամենահետին ծայրը հարյուր մետր էր, իրենց ծավալով փոքր էին այդ «Հրեշից»։ Մինչդեռ ամենախոշոր կետերը, որոնք լինում են Ալեության կղզիների շրջանում, հիսունվեց մետրից ավելի երկարություն երբեք չեն ունեցել։

Այդ հաղորդագրությունները և միմյանց հետևող այն լուրերը, որ «Պերեյրա» անդրատլանտյան շոգենավը նույնպես հանդիպել է Հրեշին, որ «Էտնա» նավը ընդհարվել է նրա հետ, վերջապես, ֆրանսիական «Նորմանդիա» մարտանավի սպաների կազմած արձանագրությունը և այն մանրամասն հաշվետվությունը, որ անգլիական ծովակալությունը ստացել էր «Լորդ Քլայդ» նավի հրամանատար Ֆիտց Ջեմսից,— այս բոլորը ծայրահեղ շափով հուզեց հասարակական կարծիքը։ Մի քանի երկրներում մարդիկ միայն ծիծաղում էին այդ արտասովոր երևույթի վրա, սակայն լուրջ ու դրական պետություններում՝ Անգլիայում, Ամերիկայում ու Գերմանիայում, կենդանի հետաքրքրություն առաջացավ «Հրեշի» շուրջը։

Բոլոր մեծ կենտրոններում «Հրեշը» դարձավ խոսակցության սովորական նյութ։ Նրա մասին երգեր էին երգվում էստրադաներից։ Լրագրերում զետեղվում էին «Հրեշի» ծաղրանկարները, թատրոններում ներկայացնում էին նրան։ Բոլոր լրագրերում երևացին մտացածին և իսկապես գոյություն ունեցող վիթխարի էակների պատկերները՝ բևեռամերձ ծովե-

---

1 Անգլիական մի ոտնաչափը հավասար է 30,4 սանտիմետրի։

րի սարսափելի, սպիտակ կետից մինչև ֆանտաստիկ ութոտնիկները, որոնք իբր թե ընդունակ են իրենց շոշափուկներով բռնել հինգ հարյուրտոննանոց նավը և տանել ծովի հատակը։ Արխիվներից շտապ հանվում էին հնամյա փաստաթղթերը, Արիստոտելի և Պլինիոսի վկայությունները, որոնք հնարավոր էին համարում ծովային հրեշների գոյությունը. նորվեգացի ծովագնացների պատմությունները, որ գրանցել էր Պոնդոպիդանի եպիսկոպոսը, Պաուլ Հեդեդի հաղորդագրությունները և, վերջապես, Հարրինգտոնի վկայություններն այն մասին, որ նա 1857 թվականին տեսել է հրեշավոր մեծությամբ ծովային մի օձ։ Իսկ Հարրինգտոնի անկեղծությունը հեռու է ամեն մի կասկածից։

Այն ժամանակ գիտական ընկերություններում հավատացողների ու չհավատացողների միջև անվերջ վեճեր սկսվեցին։ Բոլորի մտքերը զբաղված էին «հրեշի» հարցով։ Այդ նշանավոր վեճի ժամանակ թանաքի հեղեղներ էին, որ թափվում էին։

Վեց ամիս պայքարը շարունակվում էր փոփոխակի հաջողություններով։ Բուլվարային մամուլը ծաղրի առարկա դարձրեց այն հոդվածները, որ զետեղվում էին «Բրազիլիայի աշխարհագրական ինստիտուտի լրաբերում», «Բեռլինի գիտությունների ակադեմիայի տարեգրություններում», Վաշինգտոնի Սմիթյան ինստիտուտի հանդեսում։ Բուլվարային մամուլը ծաղրում էր Պետերմանի լուրջ հանդեսների—«Հնդկական արշիպելագի» և «Միջերկրական ծովի» վիճաբանությունը, Եվրոպայի լավագույն գիտական հանդեսների տված տեղեկությունները։ Կրկնելով Լիննեյի այն հայտնի խոսքը, թե «բնությունը ֆիմարներ չի ստեղծում» (այդ խոսքը հիշատակել էր «հրեշի» հակառակորդներից մեկը), լրագրողները համոզում էին գիտնականներին, որ սրանք «չվիրավորեն բնությունը, վերագրելով նրան այնպիսի անօգտակար հսկաների ստեղծումը, որոնք կարող են գոյություն ունենալ միայն հարբած նավորդների երևակայության մեջ»։ Վերջապես, հանրամատչելի երգիծաբանական մի շաբաթաթերթ ամենահայտնի մի գրողի գրչով այնպես գրահեց «հրեշի» վրա, որ բոլորը ծիծաղից թուլացան և «հրեշի» պաշտպանները ստիպված եղան նահանջել։ Այսպիսով սրամտությունը հաղթեց գիտությանը։

1867 թվականի առաջին ամիսների ընթացքում «Հրեշի» հարցը կարծես արդեն թաղված էր և հույս չկար, որ հարություն կառնի։ Սակայն ընթերցող հասարակությունը նոր փաստեր իմացավ։ Խոսքն արդեն վիրաբերում էր ոչ թե մի վերացական, դիտական խնդիր լուծելուն, այլ մի լուրջ և բոլորովին ռեալ վտանգի դեմ պայքարելուն։ Հարցը լուսաբանվեց նոր ձևով։ «Հրեշն» էլի դարձավ փոքրիկ մի կղզի, ժայռ, խութ, բայց այնպիսի մի խութ, որը շարժուն էր, անմատչելի ու առեղծվածային։

1867 թվականի մարտի 5-ի գիշերը «Մորավիա» շոգենավը, որ պատկանում էր «Մոնրեալյան օվկիանոսային ընկերության», 27°30′ լայնության և 72°15′ երկարության տակ հանդիպեց մի ժայռի, որը չէր նշանակված ոչ մի քարտեզի վրա։ Բարեհաջող քամու և շորս հարյուր ձիաուժանոց մեքենայի շնորհիվ «Մորավիան» ընթանում էր տաններեք հանգույցի արագությամբ։ Եթե շոգենավն ամուր չլիներ, այդչափ արագ գնալով ջրասույզ կլիներ ժայռին դիպչելուց, տանելով իր հետ երկու հարյուր երեսունչորթ ճանապարհորդներին և նավը սպասարկողներին։

Ընդհարումը տեղի ունեցավ առավոտյան ժամը հինգին։ Դեռ նոր էր լուսանում։ Հերթապահ սպաներն այս ու այն կողմ նեռվեցին։ Նրանք ամենամեծ ուշադրությամբ դիտեցին օվկիանոսի մակերևույթը, բայց կասկածելի ոչինչ չնկատեցին, եթե չհաշվենք մի մեծ ալիք, որ կարծես բարձրացավ մի զորեղ նավապտուտակի ուժով, երեք կաբելտով[1] տարածության վրա։ Նշելով այդ տեղի ճշգրիտ կոորդինատները, «Մորավիան» շարունակեց իր ճանապարհը։ Շոգենավն արագաքուստ ոչնչով չէր վնասվել և հրամանատարական կազմը գլուխ էր չարդում այն հարցի վրա, թե արդյոք ի՞նչի հետ է ընդհարվել շոգենավը՝ ստորջրյա մի ժայռի՞, թե՞ մի որևէ ջրասույզ նավի հետ։

Երբ «Մորավիան» հասավ նավահանգիստ, պարզվեց, որ նրա ողնուցի մի մասը ջարդվել է։

---

1 Կաբելտովը ծովային փոքր տարածությունները չափելու միավոր է, հավասար է մոտավորապես 200 մետրի։

Այս տարօրինակ դիպվածը, ինչպես և շատ ուրիշ պատահարներ, երևի շուտով կմոռացվեր, եթե երեք շաբաթից հետո չկրկնվեր նույնպիսի պայմաններում։ Միայն թե այս անգամ դեպքի համբավը տարածվեց լայն շափով և արձագանք գտավ ամբողջ աշխարհում, որովհետև վնասված նավը պատկանում էր ամենահայտնի մի շոգենավային ընկերության։

Հավանորեն բոլորը գիտեն անգլիացի նավատեր Քյունարդի անունը, քանի որ նրա շոգենավերն առաջին անգամ սկսեցին կանոնավոր հաղորդակցություն պահպանել Եվրոպայի ու Ամերիկայի միջև։ Քյունարդի նավագնացության քսանյոթ տարվա գոյության ընթացքում նրա նավերն ավելի քան երկու հազար անգամ անցան Ատլանտյան օվկիանոսը, ոչ մի անգամ չուշացան, ոչ մի անգամ չփոխեցին երթի ժամանակը, իրենց հանձնված փոստից ոչ մի նամակ չկորցրին։ Քյունարդի նավագնացության համբավն այնքան բարձր էր, որ նա բոլորովին չէր վախենում մրցակցությունից։ Հենց այս էր պատճառը, որ կայծակի արագությամբ տարածվեց ընկերության լավագույն նավերից մեկի հետ պատահած դեպքի լուրը։

1867 թվականի ապրիլի 13-ին, երբ ծովը ջինջ էր հայելու նման ու քամին բոլորովին դադարել էր, «Շոտլանդիան» գտնվում էր 15°12′ լայնության և 45°37′ երկարության տակ։ Իր հաղար ուժանոց մեքենայի շնորհիվ շոգենավն ընթանում էր մեկ ժամում տասներեք ամբողջ քառասուներեք հարյուրերորդական հանգույցի արագությամբ։ «Շոտլանդիայի» ադիվները ժամացույցի ճոճանակի պես համաչափ պտտվելով, ճեղքում էին ջուրը։

Ժամի 4-ից 17 րոպե անց, երբ ճանապարհորդները մեծ դահլիճում թեյ էին խմում, «Շոտլանդիան» մի փոքր ցնցվեց թեթև հարվածից։ Հարվածը հասել էր նրա աջ կողքին, անիվից մի քիչ հեռու։

Ցնցումն այնքան թույլ էր, որ տախտակամածի վրա գտնվող մարդկանցից ոչ ոք ուշադրություն չէր դարձնի, եթե նավամբարից չասվեր հետևյալ ճիշը.

— Այստեղ ջուր է լցվում։ Օգնեցե՛ք։

Ճանապարհորդների մեջ բնականաբար իրարանցում սկսվեց։ Նավապետ Անդերսոնը շտապեց հանգստացնել նրանց։

իսկապես, մի ճեղքվածքը չէր կարող վտանգավոր լինել «Շոտ-լանդիայի» համար, որն անթափանց ցոթ միջնորմներով էր շրջապատված։

Նավապետ Անդերսոնն անմիջապես իջավ նավամբար։ Նա պարզեց, որ հինգերորդ միջնորմում ջուր է լցվել։ Ջուրն արագությամբ ավելանում էր և այդ ցույց էր տալիս, որ ճեղքվածքը բավական մեծ պետք է լինի։ Բարեբախտաբար այդ միջնորմում չկային շոգեկաթսաները տաքացնող հնոցներ, որոնք իհարկե անմիջապես կհանգչեին։

Նավապետ Անդերսոնը կարգադրեց կանգնեցնել մեքենաները։ Նավաստիներից մեկին նա հրամայեց մտնել ջրի մեջ։ Նավաստին զեկուցեց, որ նավի դրսի կողմից երկու մետր լայնությամբ. ճեղքվածք է առաջացել։ Մովի վրա հնարավոր չէր այդպիսի ճեղքվածքը ծածկել։ «Շոտլանդիան», կլոսով չափ ջրասույզ եղած իր անիվներով մի կերպ շարունակեց ճանապարհը։

Այդ ժամանակ նավը գտնվում էր Կլեր կոչված հրվանդանից երեք հարյուր մղոն հեռավորության վրա։ Նավը երեք օրով ուշ հասավ Լիվերպուլի նավակայանը և դա ամբողջ Անգլիայում մեծ անհանգստություն առաջ բերեց։

«Շոտլանդիան» դուրս բերին ծովափ։ Ընկերության ինժեներները սկսեցին դիտել նավը։ Նրանք ուղղակի չէին հավատում իրենց աչքերին.— ջրագծից երկու և կես մետր ներքև երևում էր մի ճեղքվածք, որն ուներ կանոնավոր, հավասարակողմ եռանկյան ձև։ Ճեղքվածքի ծայրերը բոլորովին հարթ ու հավասար էին, կարծես դիտմամբ այդպես էր արված։

Պարզ էր, որ նավը ճեղքող գործիքը խիստ սուր է եղել։ Ավելի մեծ տարակուսանք առաջ բերեց այն հարցը, թե այդ ինչպե՞ս է եղել, որ գործիքը ճեղքել է չորս մատնաչափ հաստությամբ երկաթն ու դուրս պրծել։ Այդ բոլորովին անբացատրելի էր թվում։

«Շոտլանդիայի» հետ պատահած դեպքն էլի՛ զրգռեց հասարակության հետաքրքրությունը, որ մի փոքր սառել էր։ Այդ ժամանակից սկսած՝ «հրեշին» էին վերագրվում բոլոր ծովային աղետները, որոնց պատճառները չէին պարզվում։ Եվ որովհետև տարեկան երեք հազար աղետ էր պատահում նա-

վերի հետ և սրանցից երկու հարյուրն անհայտ կորչում էին, ուստի երևակայական «հրեշի» մեղքն օրեցոր ավելի էր ծանրանում։

Այդ բոլոր փորձանքների պատասխանատվությունն արդարացիորեն թե անարդարացիորեն դնելով «հրեշի» վրա, բոլոր երկրների հասարակական կարծիքը խիստ անհանգստացավ, որովհետև մայր ցամաքների միջև հաղորդակցությունը վտանգավոր էր դարձել, և պահանջեց կառավարություններից, որ վերջապես, ինչ կերպ էլ լինի, ծովերն ազատվեն այդ սարսափելի արարածից։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԹԵՐ ԵՎ ԴԵՄ

Այն ժամանակ, երբ կատարվում էին հիշատակված դեպքերը, ես վերադառնում էի գիտական ճանապարհորդությունից, որ կատարել էի Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների Նեբրասկ կոչված խուլ վայրերում։ Ինձ ուղարկել էր Ֆրանսիական կառավարությունը. ես բնագետ էի և Փարիզի բնագիտական թանգարանի պրոֆեսոր, ակադեմիկոսի օգնական։ Վեց ամսվա ընթացքում Նեբրասկում թանկարժեք հավաքածոներ կազմելով, 1867 թվականի մարտի վերջին ժամանեցի Նյու-Յորք։ Ես պետք է Ֆրանսիա վերադառնայի մայիսի սկզբներին, դրա համար էլ որոշեցի իմ տրամադրության տակ եղած ժամանակն օգտագործել հանքաբանական, բուսաբանական ու կենդանաբանական հավաքածոները կարգի բերելու համար։ Այդ ժամանակ էր, որ փորձանք պատահեց «Շոտլանդիայի» հետ։

Իհարկե ես միանգամայն իրազեկ էի այն բոլոր դեպքերին, որ հուզում էին հասարակական կարծիքը։ Ուրիշ կերպ չէր կարող լինել, որովհետև բոլոր լրագրերն ու հանդեսները լիքն էին այդ դեպքերին վերաբերող լուրերով։ Այդ հանելուկը վառեց իմ հետաքրքրությունը։ Չգիտեի ինչպես բացատրել դեպքերը և մեկ ծայրահեղությունից մյուսին էի դիմում։ Ան-

շուշտ այստեղ ինչ-որ մի առեղծվածային բան կար. բավական էր, որ չհավատացողները տեսնեին «Շոտլանդիայի» ճեղքված կողքը, որպեսզի համոզվեին դրանում։

Երբ ես ժամանեցի Նյու-Յորք, ամբողջ քաղաքը հուզված էր։ Շարժվող կղզու, անհայտ խութի վերաբերյալ ենթադրությունները, որ անում էին անիրազեկ մարդիկ, արդեն վերջնականապես հերքվել էին։ Հիրավի, դժվար էր բացատրել, թե այդ լողացող խութն ինչպե՞ս կարող է արագ շարժվել, եթե ուժեղ մեքենա չունի։

Հերքվեց նաև այն ենթադրությունը, թե «հրեշը» ջրասույզ եղած ինչ-որ մի վիթխարի նավ է, որովհետև «հրեշի» շարժման արագությունը դրանով էլ չէր բացատրվում։

Այսպիսով խնդիրը կարելի էր միայն երկու կերպ լուծել. «հրեշը» կամ հսկայական մի կենդանի էր, կամ ստորջրյա մի նավ, որը պետք է չափազանց ուժեղ մեքենա ունենար։

Սակայն այս վերջին ենթադրությունն էլ, որ մոտիկ էր ճշմարտության, երկու կիսագնդերում կատարված քննությունից հետո հօդս-ցնդեց։ Անկարելի էր պատկերացնել, որ այդպիսի ստորջրյա նավը մասնավոր մարդու է պատկանում։ Այն պետք է ինչ-որ մի տեղ կառուցված լիներ, բայց ինչպե՞ս կարող էր գաղտնի մնալ այդքան մեծ նավի կառուցումը։

Միայն մի որևէ պետություն կարող էր այդպիսի սարսափելի և ավերիչ ուժ ունեցող մեքենա ստեղծել։ Մեր ապրած տխուր ժամանակներում, երբ մարդկությունը վարժվում է մահացու, ավերիչ, նորանոր զենքեր հնարելու մեջ, հնարավոր է, որ մի որևէ պետություն ծածուկ կառուցել է այդպիսի մի մարտանավ և գործի դրել։

Սակայն մարտանավի վերաբերյալ ենթադրությունը նույնպես հօդս ցնդեց, որովհետև բոլոր պետություններն էլ հայտարարեցին, թե ոչ մի առնչություն չունեն այդ դեպքերի հետ։ Քանի որ «հրեշը» սպառնում էր միջազգային օվկիանոսային հաղորդակցության, ուստի կասկած չէր կարող լինել կառավարությունների հաղորդագրության նկատմամբ։ Բացի դրանից, անկարելի էր պատկերացնել, որ նման ստորջրյա վիթխարի նավի կառուցումը կարող էր մնալ իբրև խոր գաղտնիք։ Եթե այսպիսի պայմաններում մասնավոր մարդու հա-

մար դժվար է գաղտնիք պահել, ապա այդ է՛լ ավելի դժվար է պետության համար, որի յուրաքանչյուր քայլին նոանդով հետևում են մրցակից պետությունները։

Այսպիսով սառը ջրյա հածանավի վերաբերյալ ենթադրությունն էլ վերջնականապես չճշտվեց այն ժամանակ, երբ այդ մասին տեղեկություններ հավաքվեցին Անգլիայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում, Գերմանիայում, Իտալիայում, Ամերիկայում և նույնիսկ Թուրքիայում։

Չնայելով բուլվարային մամուլի ծաղրին, ծոլում նորից երևաց վիթխարի կենդանին։ Մարդու գրգռված երևակայությունն էլի՛ սկսեց առասպելական ենթադրություններ անել։

Նյու-Յորքում շատերն ինձ խնդրեցին, որ հայտնեմ իմ կարծիքը բոլորին հուզող այդ հարցի նկատմամբ։ Ֆրանսիայից մեկնելուս նախօրյակին ես լույս էի ընծայել երկու հատորից բաղկացած իմ աշխատությունը, որի վերնագիրն էր «Ծովի հատակի գաղտնիքները»։ Այս գիրքը, որ գիտական աշխարհում լավ ընդունելություն գտավ, հաստատեց բնագիտության այդ ճյուղում մասնագետ լինելու իմ իրավունքը, մի ճյուղ, որ համեմատաբար քիչ է ուսումնասիրված։

Ինձ համաձայն հրավիրում էին իմ կարծիքը հայտնելու։ Ես զանազան պատրվակներով խուսափում էի, սակայն «Նյու-Յորք Հերալդի» պնդերես թղթակիցները այնքան խնդրեցին, որ ես ստիպված եղա խոսք տալ, որ հասարակությանը կհայտնեմ իմ մտքերը օվկիանոսում տեղի ունեցող տարօրինակ երևույթների մասին։

Եվ ահա ապրիլի 30-ին թերթում երևաց «մեծարգո պրոֆեսոր Պիեր Արոնաքսի» բաղմակողմանի հոդվածը, որտեղ մանրամասն քննված էր «հրեշին» վերաբերող հարցը և բոլոր հայտնի փաստերին գիտական գնահատական էր տրված։

Ահա մի հատված այդ հոդվածից.

«Այսպես ուրեմն,— գրում էի ես, վերլուծելով եղած բոլոր ենթադրությունները,— քանի որ չկա քննադատության դիմացող մի այլ ենթադրություն, մեզ մնում է ընդունել, որ «հրեշն» ուրիշ բան չէ, եթե ոչ հսկայական ուժով օժտված մի ծովային կենդանի։

Օվկիանոսների խորքերում եղած կյանքը բոլորովին ան-

ծանոթ է մեզ։ Այդ խորքերը դեռևս չեն ուսումնասիրված։ Ի՞նչ է կատարվում այդ անհատակ անդունդներում։ Ծովի մակերևույթից տասներկու-տասնհինգ հազար մետր ցած ի՞նչ էակներ են ապրում և ինչ էակներ կարող են ապրել։ Ինչպիսի՞ օրգանիզմ ունեն այդ էակները։ Դժվար է այդ մասին նույնիսկ ենթադրություններ անել։

Մեր առաջ դրված խնդիրը երկու կերպ կարելի է լուծել։ մեզ հայտնի են կամ աշխարհիս բոլոր արարածները, կամ նրանց միայն մի մասը։

Եթե մենք գիտենք ոչ բոլոր էակներին, որոնք բնակվում են մեր մոլորակի վրա, եթե բնությունը դեռ մեզանից գաղտնիքներ է պահում, մանավանդ ձկնաբանության բնագավառում, ապա ոչ մի հիմք չկա ժխտելու մեզ անհայտ տեսակի կամ ցեղի, առանձնահատուկ կազմվածք ունեցող ձկների կամ ծովային կաթնասունների գոյությունը,—որոնք ապրում են հետազոտության անմատչելի օվկիանոսային խորքերում և ինչ-որ անհայտ պատճառներով կամ առանց որևէ պատճառի երբեմն դուրս են գալիս այդ խորքերից։

Ընդհակառակը; եթե մենք գիտենք կենդանի արարածների բոլոր տեսակները, ապա մեզ զբաղեցնող «հրեշին» պետք է որոնել արդեն դասակարգված ծովային կենդանիների շարքում։ Այս դեպքում ես հակամետ կլինեի ընդունելու ինչ-որ մի վիթխարի միաժանու գոյությունը։

Սովորական միաժանին հաճախ ունենում է վաթսուն ոտնաչափ երկարություն։ Հնգապատկեք, տասնապատկեք այդ չափը, ընդունեք, որ այդ կենդանին իր մեծության համապատասխան ուժ ունի, համեմատական չափով պատկերացրեք նրա ժանիքի հզորությունը,— և դուք պարզած կլինեք ձեզ հուզող գաղտնիքը։ Այս կենդանին կունենա «Քանանի» սալանների մատնանշած ծավալը, կունենա այնպիսի մի ժանիք, որը կարող է նույնպիսի մի ճեղքվածք առաջացնել, ինչ որ եղել է «Շոտլանդիայի» վրա, կունենա մի ուժ, որը կարող է օվկիանոսային շոգենավը նետել մինչև ծովի հատակը։

Եվ իսկապես, միաժանին զինված է յուրահատուկ ոսկրյա մի տեղով, կամ գեղարդով, ինչպես ասում են մի քանի բնագետներ։ Այդ գեղարդը պողպատի ամրություն ունի։ Այդպի-

ի գեղարդ հաճախ գտնվել է կետ ձկան մարմնի մեջ, որի հետ կռվելիս միաժանին համարյա միշտ հաղթում է։ Այդպիսի գեղարդները դժվարությամբ են հանվել փայտյա նավերի միջից, խրված լինելով դրանց մի կողքից մինչև մյուսը։ Փարիզի բժշկական ֆակուլտետի թանգարանում գտնվում է նման մի գեղարդ, որն ունի երկու ամբողջ և մեկ քառորդ մետր երկարություն ու բութ ծայրում քառասունութ սանտիմետր հաստություն։

Այսպես ուրեմն, պատկերացնենք մի այդպիսի միաժանի, սովորականից տասն անգամ մեծ, տասնապատիկ մեծությամբ գեղարդով կամ ժանիքով, ընդունենք, որ նա կարողանում է մեկ ժամում անցնել քսան ծովային մղոն տարածություն, նրա ծավալը բազմապատկենք արագության վրա, և դուք չեք զարմանա, եթե նրան ընդհարվող ամեն մի նավի դժբախտություն պատահի։ Վերջում պետք է ասեմ հետևյալը.— քանի դեռ ավելի մանրամասն տեղեկություններ չկան, ես այդ «հրեշին» պետք է համարեմ մի հսկայական միաժանի, որը զինված է ոչ թե հասարակ գեղարդով, այլ ինչպես զրահապատ մի մարտանավ,— իսկական բաբանով և որի մեծությունը և ուժն այդպիսի մարտանավից պակաս չի լինի։

Այսպես և միայն այսպես կարելի է բացատրել այդ անբացատրելի երևույթը, եթե... այն իսկապես գոյություն ունի։ Իսկ այդ դեռ կարոտ է ստուգման»։

Վերջին նախադասությունը վախկոտության արդյունք էր։ Ես ուզում էի պահպանած լինել իմ,— գիտնականիս արժանիքը և ծաղրի առիթ չտալ ամերիկացիներին, որոնք գիտեն և կարողանում են ծիծաղել։ Այսպիսով ես ինձ համար հող պատրաստեցի հետագայում արդարանալու, թեպետ ինքս չէի կասկածում, որ «հրեշը» գոյություն ունի։

Իմ հոդվածը ջերմ արձագանք գտավ և մեծ հռչակ ստացավ։ Նույնիսկ որոշ թվով կողմնակիցներ եղան։ Իմ հոդվածում լուսաբանված հանելուկի լուծումը առատ սնունդ էր տալիս երևակայության։ Մարդիկ սիրում են երազել գերբնական երևույթների մասին։ Ծովն էլ հենց այն միակ միջավայրն է, որտեղ իսկապես պայմաններ կան վիթխարի էակների զարգացման համար, որոնց հանդեպ երկրային հսկաները,—

փղերն ու ռնգեղջյուրներն ուղղակի թղուկներ են։ Ծովերում ապրում են կաթնասունների ամենախոշոր ներկայացուցիչները, օրինակ՝ կետերը։ Ինչո՞ւ չկարծել, որ այնտեղ ապրում են նաև վիթխարի կակղամորթներ, սարսափելի ծովային խեցգետիններ, որոնք ունենում են հարյուր մետր երկարություն և երկու հարյուր տոննա ծանրություն։ Չէ՞ որ մեր մոլորակի մանկության ժամանակներում չորս ոտ ու չորս ձեռք ունեցող կենդանիները, թռչուններն ու սողունները հսկայական մեծություն ունեին և միայն տասնյակ ու հարյուր հազարավոր տարիներից հետո են փոքրացել և ընդունել ժամանակակից մեծությունը։ Իսկ երկրաբանական ամենահին դարաշրջանների կենդանական աշխարհի ներկայացուցիչներն ինչո՞ւ չեն կարող պահպանված լինել ծովում, որի կաղմը բոլոր ժամանակներում մնացել է անփոփոխ, մինչև երկրի կեղևը փոխվում է անընդհատ։ Ինչո՞ւ ծովն իր խորքերում չէր կարող պահպանել այդ վիթխարի նախասաղմ էակներին, որոնց կյանքի տևողությունը չափվում է ոչ թե տարիներով, այլ դարերով կամ հազարամյակներով։

Սակայն նա տարվեցի ցնորքներով, իսկ դա ինձ ավելի քիչ է սազում, քան ուրիշ որևէ մեկին։

Կրկնում եմ, այդ արտասովոր երևույթի բնությունն այլևս վեճեր չէր առաջացնում, և հասարակությունն ընդունեց ինչպես մի հսկայական կենդանու գոյությունը, մի կենդանու, որն ընդհանուր ոչինչ չունի ծովային առասպելական օձերի հետ։

Բայց եթե ոմանց համար այդ հարցը վերացական էր, ուներ միայն զուտ գիտական հետաքրքրություն, ապա մյուսների, ավելի գործնական մարդկանց համար, մանավանդ անգլիացիների ու ամերիկացիների համար, որոնք շահագրգռված են օվկիանոսային հաղորդակցության ապահովությամբ, միանգամայն անհրաժեշտ էր դառնում բոլոր միջոցները ձեռք առնել և անհապաղ ազատել ծովերն այդ վտանգավոր հրեշից։

Ֆինանսական և առևտրական մամուլն այժմ միայն այդ տեսանկյունով էր զբաղվում հրեշին վերաբերող հարցով։ «Ծովային տեսությունը», «Լլոյդի թերթը», «Պակետբոտը», «Ծովային առևտրական թերթը»,— ապահովագրական ընկե-

թությունների այդ բոլոր տպագիր օրգանները միաբերան պահանջում էին անխնա պատերազմ հայտարարել Հրեշին, որովհետև այդ ընկերություններին խոշոր վնասներ էին պատճառում։

Հասարակական կարծիքը, առաջին հերթին Միացյալ Նահանգները, կողմնակից էր լրագրերին։ Նյու-Յորքում սկսեցին մի գիտական արշավախումբ պատրաստել միաժանուն որսալու համար։ Այդ նպատակով սարքավորվում էր «Աբրահամ Լինկոլն» արագընթաց մարտանավը։ Ջինապահեստի դռները լայն բացվել էին մարտանավի հրամանատարի՝ նավապետ Ֆարագուտի առջև, որն ամեն կերպ աշխատում էր արագացնել արշավախմբի մեկնումը։ Սակայն, ինչպես միշտ լինում է այդպիսի դեպքերում, հենց որ ընդունվեց հետապնդելու որոշումը, հրեշն այլևս չէր երևում։ Երկու և կես ամիս ոչ մի լուր չկար նրա մասին։ Ոչ մի նավ չէր հանդիպում նրան։ Կարելի էր կարծել, որ միաժանին զգացել է իրեն սպառնացող վտանգը։ Այդ մասին այնքա՞ն էին խոսել օվկիանոսի ստորջրյա հեռագրաթելով... Կատակասերներն ասում էին, թե միաժանին բռնել է բազմաթիվ հեռագրերից մեկն ու փախել ով գիտե ուր։

Այսպիսով, երբ մարտանավը սարքավորվել էր արտասովոր որսի համար անհրաժեշտ բոլոր պարագաներով և պատրաստ էր ճանապարհվելու, ոչ ոք չգիտեր, թե ուր պետք է ուղևորվել։

Ընդհանուր անհամբերությունն իր գագաթնակետին հասավ, երբ հուլիսի 2-ին լուր տարածվեց, թե Սան-Ֆրանցիսկոյից Շանհայ մեկնած մի շոգենավ մոտ երեք շաբաթ առաջ հանդիպել է կենդանուն խաղաղ օվկիանոսի հյուսիսային մասում։

Այս նորությունը հսկայական տպավորություն թողեց։ Նավապետ Ֆարագուտին նույնիսկ քսանչորս ժամվա արձակուրդ էլ չտվեցին։ Պարենը բեռնվեց նավի կողքերին, նավամբարները լիքը լցվեցին ածուխով, բոլոր նավորդները ներկա էին։ Մնում էր միայն վառել հնոցները, շոգի պատրաստել ու ճանապարհ ընկնել։

Նավապետ Ֆարագուտին չէին ների, եթե նա ուշանար թեկուզ կես օրով։ Ասենք նա ինքն էլ էր շտապում մեկնելու։

«Աբրահամ Լինկոլնի» մեկնելուց երեք ժամ առաջ ինձ հանձնեցին հետևյալ բովանդակությամբ մի նամակ.

«Պարոն Արոնաքսին,
Փարիզի թանգարանի պրոֆեսորին.
«Հինգերորդ ավենյու» հյուրանոց,
Նյու-Յորք.

Հարգելի՛ պարոն,

Եթե դուք կցանկանաք միանալ «Աբրահամ Լինկոլնի» գիտական արշավախմբին, ապա Միացյալ Նահանգների կառավարությանը հաճելի կլինի գիտենալ, որ Ֆրանսիան հանձին ձեզ մասնակցում է այդ ձեռնարկման։ Նավապետ Ֆարագուտը Ձեզ առանձին նավասենյակ կտրամադրի։

Սրտագին բարևներով՝

Սովային մինիստր՝ Դ. Բ. ՀՈԲՍՈՆ»։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԻՆՉՊԵՍ ՈՐ ՊԱՐՈՆԸ ԿԱՄԵՆԱ

Սովային մինիստրի նամակը ստանալուց երեք վայրկյան առաջ իմ մտքովն անգամ չէր անցնում միաժանուն հետապնդելը, ճիշտ այնպես, ինչպես Հյուսիս-արևմտյան անցքի[1] սառույցների միջով ճանապարհորդելը։ Նամակը ստանալուց երեք վայրկյան հետո ես հասկացա, որ իմ իսկական կոչումը, իմ կյանքի միակ նպատակն է հետապնդել այդ վտանգավոր «հրեշին», և աշխարհը փրկել նրանից։

Սակայն ես հենց նոր էի վերադարձել դժվար ճանապարհորդությունից, չափից դուրս հոգնել և հանգստի կարիք էի

---

1 Ատլանտյան օվկիանոսից դեպի խաղաղ օվկիանոսը տանող մի անցք, որ գտնվում է ամերիկական ցամաքի հյուսիսային ափերի մոտ։

զգում։ Ես երազում էի վերադառնալ հայրենիք, իմ բարեկամների մոտ, իմ փոքրիկ բնակարանը, որ գտնվում էր բուսաբանական այգուց ոչ հեռու, երազում էի տեսնել նորից իմ սիրած ու անգին հավաքածուները։ Սակայն էլ ոչինչ չէր կարող հրապուրել ինձ։ Ես մոռացա ամեն ինչ՝ հոգնածությունս, բարեկամներիս, հավաքածոներս, և առանց երկար մտածելու ընդունեցի ամերիկյան կառավարության հրավերը։

«Մանավանդ որ,— մտածում էի ես,— բոլոր ճանապարհները դեպի Եվրոպա են տանում և կարող է պատահել, որ միաժանին սիրալիր կերպով ինձ առաջնորդի դեպի ֆրանսիական ափերը։ Թերևս այդ արժանավոր կենդանին թույլ տա իրեն հաշիվը մաքրելու եվրոպական ծովերում։ Այդ դեպքում ես նրա գեղարդի առնվազն կեսմետրանոց մասը կտանեմ Փարիզի բնապատմական թանգարանը»։

Սակայն միաժանուն առայժմ պետք էր փնտրել խաղաղ օվկիանոսի հյուսիսային մասում, այսինքն Ֆրանսիա վերադառնալ միայն շուրջերկրյա ճանապարհորդությունից հետո։

— Կոնսե՛յ,— կանչեցի ես անհամբերությամբ։

Կոնսելն իմ սպասավորն էր և բոլոր ճանապարհորդությունների ժամանակ ուղեկցում էր ինձ։ Ես անկեղծորեն սիրեցի այդ համակրելի ֆլամանդացուն, նա էլ՝ ինձ։ Այդ մի սառնարյուն, դրական ու լուրջ մարդ էր, ջանասեր ու գործունյա, հանգիստ դիմավորում էր բոլոր կենսական անակնկալները, ամեն բանում վարպետ էր, սիրում էր աշխատել և հակառակ իր անվան[1], երբեք ու ոչ ոքի խորհուրդներ չէր տալիս, եթե նույնիսկ նրանից խնդրեին այդ խորհուրդները։

Մշտապես շփվելով գիտնականների շրջանի հետ, որոնք այցելում էին իմ փոքրիկ բնակարանը, Կոնսելն ինքն էլ հետաքրքիր շատ բան սովորեց և բնագիտական դասակարգման բնագավառում դարձավ մասնագետ, այնպես որ, հրաշալի գիտեր բոլոր բաժինները, խմբերը, դասերը, ենթադասերը, ջոկատները, ընտանիքները, ցեղերը, տեսակներն ու ենթատեսակները։ Բայց նրա բոլոր գիտելիքները հենց դրանով էլ սահմանափակվում էին։ Դասակարգել,— դրանում էր հենց նրա

[1] Conseil — խորհուրդ (ֆրանս.)։

ամբողջ կյանքը և դրանով էլ նա բավարարվեց։ Լինելով միանգամայն տեղյակ դասակարգման թեորիային և շատ հեռու գործնական գիտելիքներից, նա, իմ կարծիքով, չէր կարողանում կետը զանազանել վիշապաձկնից։

Եվ այնուամենայնիվ ի՞նչ հրաշալի մարդ էր նա։

Տասը տարի Կոնսելը շարունակ ուղեկցում էր այնտեղ, ուր ինձ տանում էր գիտությունը։ Երբե՛ք և ո՛չ մի գանգատ երկարատև ճանապարհորդության կամ հոգնածության մասին։ Միշտ համաձայն էր մեկնել ուր ասես, որ երկիրն ասես, ինքը այդ Չինաստանը, թե՝ Կոնգոն, ու չէր հարցնում, թե ինչո՞ւ է գնում։

Նա ուներ հիանալի առողջություն և ոչ մի հիվանդություն սարսափելի չէր նրա համար, ուներ պինդ մկաններ և իսկապես որ երկաթե ջղեր։

Նա երեսուն տարեկան էր։ Նրա տարիքը իր սիրոջ տարիքին հարաբերական էր այնպես, ինչպես տասնհինգը քսանին։ Ներողություն եմ խնդրում, որ մի քիչ բարդ ձևով խոստովանեցի իմ քառասուն տարեկան լինելը։ Կոնսելն ուներ միայն մի պակասություն։ Լինելով անուղղելի ձևամոլ, նա ինձ դիմում էր ոչ այլ կերպ, քան երրորդ դեմքով, և այդ հաճախ ինձ հանում էր համբերությունից։

— Կոնսե՛լ,— կրկնեցի ես, միաժամանակ սկսելով տենդային պատրաստություն տեսնել ճանապարհվելու համար։

Ես վստահ էի, որ Կոնսելն անսահմանորեն հավատարիմ է ինձ։ Սովորաբար ես նրան երբեք չէի հարցնում, թե արդյոք համաձա՞յն է ինձ ուղեկցել։ Սակայն այս անգամ ձեռնարկվում էր մի գիտարշավ, որը կարող էր անվերջ շարունակվել և բացի դրանից, խիստ վտանգավոր էր։ Հանաք բան չէր. պետք էր հետապնդել մի կենդանու, որ մարտանալն ընդունակ է չրասույզ անել ինչպես ընկույզի կեղև։ Ծովում ամենամեծ սառնասրտություն պահպանող մարդն անգամ կասկածանքով կվերաբերվեր այս ձեռնարկմանը։ Հապա ի՞նչ կասեր Կոնսելը։

— Կոնսե՛լ,— կանչեցի ես երրորդ անգամ։

Կոնսելը երևաց։

— Պարոնն ինձ կանչո՞ւմ է,— ներս մտնելով հարցրեց նա։

— Այո, սիրելիս, Պատրաստիր այն ամենն, ինչ որ հարկավոր է ինձ ու քեզ համար։ Երկու ժամից հետո մենք ճանապարհվում ենք։

— Ինչպես որ պարոնը կամենա,— հանգիստ պատասխանեց Կոնսելը։

— Ոչ մի րոպե չի կարելի կորցնել։ Պայուսակիս մեջ դիր այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ է ճանապարհին,— զգեստներ, շապիկներ, գուլպաներ։ Վերցրու դրանցից այնքան, ինչքան կտեղավորվի պայուսակում, միայն թե որքան կարելի է շո՛ւտ։

— Իսկ պարոնի հավաքածոնե՞րը,— հարցրեց Կոնսելը։

— Դրանցով մենք հետո կզբաղվենք։ Դրանք կպահվեն հյուրանոցում։

— Իսկ եղջերային վարա՞զը։

— Առանց մեզ էլ կկերակրեն նրան։ Հա՛, ես կկարգադրեմ, որ մեր ամբողջ գաղանանոցը Ֆրանսիա ուղարկեն։

— Ուրեմն մենք Փարիզ չե՞նք վերադառնալու,— հարցրեց Կոնսելը։

— Ինչպես ասեմ,—խուսափողաբար պատասխանեցի ես,— կվերադառնանք, բայց մի փոքր պետք է զարտուղի ճանապարհ անցնենք...

— Ամեն մի զարտուղի ճանապարհ կանցնենք, եթե այդ հարկավոր է պարոնին։

— Օ՜, դատարկ բան է, նույն ճանապարհն է, բայց մի քիչ ավելի երկար։ Ուրիշ ոչինչ։ Մենք ճանապարհվում ենք «Աբրահամ Լինկոլն» նավով։

— Ինչպես որ պարոնը կամենա,— հանգիստ պատասխանեց Կոնսելը։

— Գիտե՞ս, բարեկամս, գործը վերաբերում է հրեշին... հուշակավոր միաժանուն... Մենք պետք է օվկիանոսներն ազատենք նրանից... «Ծովի հատակի գաղտնիքները» երկհատորյակի հեղինակը չի կարող հրաժարվել նավապետ Ֆարագուտի հետ ճանապարհորդելուց... Սքանչելի, բայց և վտանգավոր է այս գործը։ Բոլորովին անհայտ է, թե ուր կհասց-

նի մեզ միաժանին... Այդ կենդանին կարող է շատ քմահաճ լինել։ Այնուամենայնիվ մենք կմեկնենք։ Մեր նավապետը հիանալի մարդ է։

— Ուր որ պարոնը գնա, ես էլ այնտեղ կգնամ,— ասաց Կոնսելը։

— Լա՛վ մտածիր։ Ես ոչինչ չեմ ուզում թաքցնել քեզնից։ Սա այնպիսի ճանապարհորդություններից է, որոնցից երբեմն չեն վերադառնում։

— Ինչպես որ պարոնը կամենա...

Քառորդ ժամ հետո մեր պայուսակները պատրաստ էին։ Կոնսելը մի քանի րոպեում վերջացրեց ամեն ինչ, ու ես համոզված էի, որ նա ոչինչ չի մոռացել։ Այդ մարդը շապիկներն ու զգեստները դասավորել էր նույնքան լավ, որքան և թռչուններն ու կաթնասունները։ Հյուրանոցի սպասավորը մեր իրերը դարսեց նախասրահում։ Ես իջա ստորին հարկը, վճարեցի հաշիվը մեծ բարձրասեղանի մոտ, որ միշտ պաշարված է լինում այցելուներով, և կարգադրեցի, որ իմ տրամադրության տակ եղած կենդանիներն ու չորացրած բույսերն ուղարկվեն Փարիզ։ Ես բավականաչափ վարկ բաց թողեցի եղջերային վարազի համար և վերջապես, կառք նստեցի Կոնսելի հետ։ Կառքը Բրոդվեյով սլացավ մինչև Յունիոն այգին, դարձավ գեպի Չորրորդ ավենյուն, անցավ մինչև Կատրին-սթրիթ և վերջապես, կանգ առավ Երեսունչորսերորդ առափնյա փողոցում։ Այստեղից մենք բոլորս,— մարդիկ, ձիերն ու կառքը,— լաստով տեղափոխվեցինք Բրուքլին՝ Նյու-Յորքի արվարձանը, որ գտնվում է Հուդզոն գետի ձախ ափին։ Մի քանի րոպեից հետո կառքը մոտեցավ հենց «Աբրահամ Լինկոլնի» կամրջակին։ Նավի երկու ծխնելույզներից քուլա-քուլա բարձրանում էր սև ծուխը։

Մեր իրերն անհապաղ տեղափոխվեցին մարտանավի տախտակամածը։ Ես շտապ վազեցի սանդուղքով և հարցրի, թե որտեղ կարելի է գտնել նավապետ Ֆարրագուտին։ Նավաստիներից մեկն ինձ տարավ դեպի կամրջակը և մատնացույց արավ բարձրահասակ, համակրելի դեմքով մի սպայի։ Վերջինս ձեռքը մեկնեց ինձ։

— Պարոն Պիեր Արոնա՞քսն եք,— հարցրեց նա։

— Այո, ես եմ,— պատասխանեցի,— նավապետ Ֆարրագո՞ւտն եք։

— Այո, այո։ Բարով եք եկել, պարոն պրոֆեսոր։ Նավասենյակը ձեզ է սպասում։

Ես զլուխ տվի, ու չուզենալով խանդարել նավապետին մեկնման այդ տենդային րոպեներում, խնդրեցի նավաստուն ցույց տալ ինձ հատկացված նավասենյակը։

Զեռնարկված գիտարշավի համար «Աբրահամ Լինկոլնի» ընտրությունն ավելի քան հաջող էր կատարված։

Այդ արագընթաց մի մարտանավ էր, ուներ ամենակատարելագործված մեքենաներ, որոնց շնորհիվ մեկ ժամում կարող էր անցնել տասնութ ամբողջ երեք տասնորդական մղոն։ Սակայն այդ հսկայական արագությունն էլ բավական չէր վիթխարի միաժանու դեմ կռվելու համար։

Նավագնացության համար որքան լավ էր այդ մարտանավը, նույնքան լավ էր և նրա ներքին սարքավորումը։ Ես միանգամայն գոհ էի ինձ տրամադրված նավասենյակից, որ գտնվում էր սպայական բաժանմունքում՝ նալի հետնամասում։

— Մենք շատ լավ կտեղավորվենք այստեղ,— ասացի Կոնսելին։

— Պարոնի թույլտվությամբ ես կասեի՝ նավասենյակը մեզ համար նույնքան հարմար է, որքան խխունջի խեցին կիսագիի համար,— պատասխանեց իմ կրթված սպասավորը։

Ես Կոնսելին թողեցի նավասենյակում, որ բաց անի պայուսակները, իսկ ինքս բարձրացա տախտակամածը, որպեսզի դիտեմ մեկնելու պատրաստությունները։

Հենց այդ րոպեին նավապետ Ֆարրագուտը հրամայեց քանդել պարանները, որոնք «Աբրահամ Լինկոլնը» պահում էին Բրուքլինյան առափնյա փողոցի մոտ։ Բավական էր, որ ես քառորդ ժամով ուշացած լինեի, և «Աբրահամ Լինկոլնը» կմեկնի առանց ինձ, ու ես չէի մասնակցի այդ արտասովոր գիտարշավին, որի վերաբերյալ ամենաճշմարիտ հաշվետվությունն անգամ հավանորեն անվստահությամբ կընդունվի կասկածամիտ մարդկանց կողմից։

Նավապետ Ֆարրագուտը ոչ թե մեկ օրով, այլ մի ժամով,

նույնիսկ մի բոպեով էլ չէր ուզում հետաձգել միաժամու դեմ ձեռնարկված արշավանքը։

Նա կանչեց նավի ինժեներին։

— Շոգու ճնշումը բավարա՞ր է,— հարցրեց նա։

— Այո, նավապետ։

— Դանդաղ ընթա՛ցք,— հրամայեց նավապետը։

Ստանալով այս հրամանը մեքենայական հեռագրով, որն աշխատում էր խտացրած օդի շնորհիվ, մեխանիկը շրջեց գործարկման լծակը։ Շոգին սուլելով նետվեց դեպի գլանները և մխոցները պտտեցրին անիվը։ Պտուտակի թևերները սկսեցին հետզհետե արագ պտտվել և «Աբրահամ Լինկոլնը» շարժվեց ծանր ու վեհաշուք, հարյուրավոր նավակների և բուքսիրային շոգենավակների ուղեկցությամբ, որոնք լիքն էին ճանապարհներով։

Բրուքլինի առափնյա փողոցները հեղեղված էին հարյուր հազարավոր հետաքրքրվող մարդկանցով։ Ինչպես որոտ, երեք անգամ թնդաց «ուռա»-ն, որ պոռթկում էր հինգ հարյուր հազար կոկորդից։ Հազարավոր թաշկինակներ ծածանվում էին օդում, ստվար ամբոխների գլխավերևում, ողջունելով «Աբրահամ Լինկոլնին», մինչև որ մարտանավը մտավ Հուդսոն գետի ջրերը, այն թերակղզու վերջավորության մոտ, որի վրա գտնվում է Նյու-Յորք քաղաքը։

Անցնելով Հուդսոն գետի հոսանքով դեպի ներքև Նյու-Ջերսիի ափերով, որտեղ երևում էր գեղեցիկ դղյակների շարանը, «Աբրահամ Լինկոլնը» հասավ ամրություններին և ի պատասխան սրանց ողջույնի—թնդանոթային կրակոցի—երեք անգամ բարձրացրեց և իջեցրեց իր հետնամասում գտնվող դրոշակը, որ զարդարված էր երեսունինը աստղերով։ Այնուհետև դանդաղեցնելով ընթացքը, մարտանավը մտավ ծովային ջրանցքը, որ նշված էր ձողերով, անցավ Սենդի-Հուկա կոչված ավազոտ ցամաքամասը, որտեղ նրան կրկին ողջունեց հազարավոր բազմությունը, և դուրս եկավ բաց օվկիանոս։

Մեծ ու փոքր նավակների մի ամբողջ խումբ ուղեկցեց մարտանավին մինչև լողացող փարոսները, որոնց լույսը նավերին ցույց է տալիս Նյու-Յորքի մուտքը։

Կեսօրվա ժամը երեքն էր։ Լոցմանը հեռացավ կամրջակից, մակույկը նրան արագությամբ հասցրեց մինչև շոգենավակը և «Աբրահամ Լինկոլնը» արագայնելով իր ընթացքը, լողաց Լոնդ-Այլենդի ափերի երկարությամբ։ Երեկոյան ժամը ութին չքացան Ֆայր-Այլենդի լույսերը, և մարտանավն իր ամբողջ արագությամբ սլացավ Ատլանտյան օվկիանոսի մթին ջրերով։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՆԵԴ ԼԵՆԴԸ

Նավապետ Ֆարրագուտը լավ ծովագնաց էր, միանգամայն արժանի իր հրամանատարության տակ գտնվող հիանալի մարտանավին։ Ֆարրագուտն ու նավը կարծես լինեին մի մարմին, որի մեջ նավապետն ուղեղի դեր էր կատարում։ Ֆարրագուտը բոլորովին չէր կասկածում միաժանու գոյության մասին և չէր թույլ տալիս, որ իր ներկայությամբ որևէ վեճ լինի այդ առթիվ։ Հրեշը գոյություն ուներ և Ֆարրագուտը պետք է նրանից փրկեր ծովերը, նա այդպիսի երդում էր տվել։

Կամ նավապետ Ֆարրագուտը կսպանի միաժանուն, կամ միաժանին կսպանի նավապետ Ֆարրագուտին. ուրիշ ելք չկար։

Նավի սպաները բաժանում էին իրենց պետի հավատը։ Հաճելի էր լսել, թե ինչպես նրանք խոսում են հրեշին շուտափույթ հանդիպելու հնարավորությունների մասին, հաշվում էին նրա շարժման արագությունը, նրան աչքերով փնտրում էին օվկիանոսի հարթ տարածության վրա։ Անգա՛մ նրանք, ովքեր սովորական պայմաններում հերթապահությունը ձանձրալի անհրաժեշտություն էին համարում, այս անգամ միշտ պատրաստ էին ավելորդ հերթապահություն անել։

Քանի դեռ արեգակն իր ճանապարհն էր անցնում երկնակամարում, կայմերի վրա տեղավորվել էին նավաստիների խմբերը, որոնք գերադասում էին նստել առագաստակալներին ու աչքերով փնտրել հրեշին, քան թե ժամերով կանգնել տախտակամածի տաքացած, ոտներն այրող տախտակների

վրա։ Այնինչ «Աբրահամ Լինկոլնը» դեռ հեռու էր խաղաղ օվ-կիանոսի կասկածելի տեղերից։

Նավորդները մի վառ ցանկություն ունեին՝ հանդիպել հրեշին, եռաժանիով հարվածել նրան, հանել նավի վրա և կտոր-կտոր անել։ Բոլորը, ովքեր ազատ էին լինում աշխատանքից, լարված ուշադրությամբ դիտում էին ծովային հարթ տարածությունը։ Ի դեպ ասած՝ նավապետ Ֆարրագուտը խրախուսում էր այդ, նա խոստանում էր երկու հազար դոլար պարգև, որ կարող էր տանալ ամեն մեկը՝ նավի սպասավորը, նավաստին, ավագ նավաստին կամ սպան, եթե առաջինը նկատեր միաժանուն։ Դժվար չէ պատկերացնել, թե մարտանավին սպասարկող կազմն ինչպիսի՞ ջանասիրությամբ էր դիտում ծովը։

Ինչ վերաբերում է ինձ, ես էլ ետ չէի մնում մյուսներից և ամբողջ օրերով բարեխղճաբար կանգնում էի տախտակամածի վրա։ Միմիայն Կոնսելն անտարբեր էր դեպի այդ ամենը ու չէր մասնակցում մյուսների զբաղմունքին։

Ես արդեն ասել եմ, որ նավապետ Ֆարրագուտը մարտանավում ստեղծել էր բոլոր հարմարությունները վիթխարի կետեր որսալու համար։

Հազիվ թե կետ որսող մի այլ նավ այնքան հարմարություններ ունենար, որքան «Արրահամ Լինկոլնը»։

Մենք ունեինք կետ որսալու բոլոր գործիքները, սկսած ձեռքի եռաժանուց մինչև ատամնաձև նետերը, որոնք արձակվում էին հատուկ թնդանոթներից։ Նավի առջևի ծայրում դրված էր արագաձիգ, կատարելագործված մի հրանոթ, որը չորս կիլոգրամանոց արկերով կրակում էր տասնվեց կիլոմետրի վրա։

Այսպես ուրեմն, «Աբրահամ Լինկոլնը» չէր կարող զանգատվել մահաբեր զենքերի պակասությունից։ Դեռ ավելին, այնտեղ էր գտնվում ինքը, Նեդ-Լենդը, եռաժանին բռնցնելու գործում մեծագույն վարպետը։

Նեդ Լենդը ծնվել էր Կանադայում, կետ որսալու մեջ ամենահմուտ մարդն էր աշխարհում, մի մարդ, որ մրցակից չուներ այդ վտանգավոր գործում։ Նա օժտված էր միանգամայն բացառիկ սառնասրտությամբ, ճարպկությամբ, խիզա-

խությամբ ու աչքաբացությամբ։ Կեսը կամ վիշապաձուկը պետք է չափից դուրս խորամանկ լիներ, որ կարողանար ազատվել նրա սարսափելի եռաժանուց։

Նեդ Լենդը մոտ քառասուն տարեկան էր։ Այդ մարդը բարձրահասակ էր, ուժեղ ու ահարկու։ Նա սակավախոս էր, տաքարյուն, և հեշտությամբ էր զայրանում, երբ մեկը չնչին չափով հակաճառում էր նրան։

Ակամա ուշադրություն էր գրավում նրա արտաքինը, մանավանդ աչքերը, որ չափազանց սուր էին և յուրահատուկ արտահայտություն էին տալիս նրա ամբողջ դեմքին։

Իմ կարծիքով նավապետ Ֆարրագուտը միանգամայն ճիշտ վարվեց, երբ նրան մասնակից դարձրեց արշավախմբին։ Երբ ուժեղ ձեռքի և սուր աչքերի կարիք զգացվի, միմիայն Նեդ Լենդն ավելի պետքական կլինի, քան բոլոր մյուս նավորդները։ Նրան կարելի էր համեմատել մի ուժեղ հեռադիտակի հետ, որին միացրած թնդանոթը միշտ պատրաստ է կրակելու։

Վերջապես, Նեդ Լենդը նույնպես ֆրանսիացի էր և որքան էլ լիներ լռակյաց, այնուամենայնիվ ես պետք է մատնանշեմ, որ նա շուտով մտերմացավ ինձ հետ,— ըստ երևույթին նրան գրավում էր իմ ազգությունը։ Նրան ուրախացնում էր ֆրանսերեն խոսելու առիթը։ Իսկ ինձ համար հաճելի էր լսել ֆրանսիական մի հին բարբառ, որ Բաբելի ժամանակներից սկսած՝ անաղարտ պահպանվել էր Կանադայի մի քանի նահանգներում։

Նեդ Լենդը պատկանում էր Կվեբեկի մի հին ընտանիքի, որը բազմաթիվ խիզախ ծովագնացներ է տվել դեռ այն հեռավոր ժամանակներում, երբ այդ քաղաքը պատկանում էր Ֆրանսիային։

Նեդ Լենդը կամաց-կամաց գրավվում էր ինձ հետ ունեցած զրույցներով, ես հաճույքով լսում էի նրա պատմածները բևեռային ծովերում իր ունեցած արկածների մասին։ Նա այնպես անբռնազբաս և բանաստեղծորեն էր պատմում որսորդության ու ճակատամարտերի մասին, որ երբեմն ինձ թվում էր, թե լսում եմ բևեռային երկրների «Իլիականը» երգող մի ինչ-որ կանադական Հոմերոսի։

Այդ խիզախ մարդուն ես նկարագրում եմ այնպես, ինչպես

որ ճանաչում եմ այժմ. մենք հին բարեկամներ ենք և մեր բարեկամությունը, որ ծնունդ է առել սարսափելի փորձությունների օրերում, ուժեղ է և անխորտակելի։

Ի՞նչ կարծիք ուներ Նեդ Լենդը ծովային հրեշի մասին։ Պետք է խոստովանեմ, որ նա չէր հավատում միաժանու գոյության և ամբողջ նավում միակ մարդն էր, որ հակառակ էր ընդհանուր կարծիքին։

Մի անգամ, երբ ես փորձեցի իմանալ նրա կարծիքը, նա խուսափեց այդ թեմայի շուրջը խոսելուց։

Մեր ճանապարհվելուց երեք շաբաթ հետո, հուլիսի 30-ին մարտանավը գտնվում էր Բայա-Բլանկից ոչ հեռու Պատագոնիայից երեսուն մղոնի վրա։ Մենք արդեն անցել էինք Այծեղջյուրի արևադարձը և հիմա Մագելլանի նեղուցը գտնվում էր մեզանից դեպի հարավ, յոթ հարյուր մղոնից պակաս հեռավորության վրա։ Ելա ութ օր, և «Աբրահամ Լինկոլնը» կճեղքի խաղաղ օվկիանոսի ջրերը։

Նեդ Լենդի հետ ես նստել էի նավի հետին մասում։ Մենք խոսում էինք ինչի մասին ասես և զիտում խորհրդավոր ծովը, որի խորքերը մինչև հիմա մարդկային հայացքին անմատչելի են մնում։ Բնականաբար ես խոսք բացեցի վիթխարի միաժանու մասին ու սկսեցի քննարկել այն բոլոր պայմանները, որոնցից կախված էր մեր ձեռնարկման հաջողությունը կամ անհաջողությունը։ Սակայն տեսնելով, որ Նեդ Լենդը լռություն է պահպանում, ես հարցը դրի ուղղակի կերպով։

— Այդ ինչպե՞ս է, Նեդ Լենդ,— ասացի ես,— որ ձեզ կասկածելի է թվում մեր հետապնդած վիթխարի միաժանու գոյությունը։ Արդյոք դուք որևէ առանձնահատուկ հիմք ունե՞ք այդպես թերահավատ լինելու։

Նեդ Լենդը մի քանի վայրկյան լուռ նայում էր ինձ։ Նախքան պատասխանելը նա իր սովորական ձևով ձեռքը տարավ ճակատին, կկոցեց աչքերը, կարծես մի փոքր մտածեց և միայն դրանից հետո ասաց.

— Թերևս այդպես է, պարոն Արոնաքս։

— Լսեցեք, Նեդ, չէ՞ որ դուք վարպետ եք ծովային կենդանիներ որսալու մեջ, ձեր կյանքում հարյուրավոր վիթխարի ծովային կաթնասուններ եք տեսել։ Դուք պետք է ավելի

շուտ հավատաք հսկա կետանման արարածի գոյության, քան որևէ ուրիշը։ Այսպիսի հանգամանքներում դուք վերջին մարդն եք, որը կասկածելի է համարում այդ կենդանու գոյությունը։

— Հենց այստեղ է, որ դուք սխալվում եք, պարոն պրոֆեսոր,— պատասխանեց Նեդը,— ոգեսը հաճույքով կհավատա հրեշավոր կենդանիների գոյության, որոնք բնակվում են երկրագնդի անմատչելի վայրերում,— այդ միանգամայն բնական է։ Սակայն երկրաբանը երբեք հավատ չի ընծայի այդ հեքիաթներին։ Կետորսը՝ նույնպես։ Ես հետապնդել եմ հարյուրավոր կետանման արարածներ, որանցից տասնյակներին բռնել եմ եռաժանիով ու շատերին էլ սպանել։ Բայց որքան էլ նրանք եղել են մեծ և ուժեղ, ոչ նրանց պոչերը, ոչ էլ ժանիքներն ի վիճակի չեն եղել ծակելու նավի շուրջը պատած թերթավոր երկաթը։

— Այնուամենայնիվ, Նեդ, եղել են դեպքեր, երբ միաժանու առամը ծակել ու անցել է նավի մի կողքից մինչև մյուսը։

— Դրանք փայտյա նավեր են եղել, պրոֆեսոր, փայտյա նավեր,— հակաճառեց Նեդը,— բայց ճիշտն ասած, ես դրան այնքան էլ չեմ հավատում։ Անձամբ ես նման բան չեմ տեսել։ Այդպես ուրեմն, քանի դեռ իմ կարծիքը ժխտող փաստ չկա, ես պնդում եմ, որ վիշապաձկները, կետերը կամ միաժանիները չեն կարող այդպիսի ավերածություն կատարել։

— Լսեցեք, Նեդ...

— Ոչ, պրոֆեսոր, ոչ։ Ինչ բանի մասին ասեք կհավատամ, միայն ոչ դրան։ Գուցե մի վիթխարի ութոտնանի...

— Ո՛չ մի դեպքում, Նեդ։ Ութոտնանին հսկայական մեծությամբ մի կակղամորթ է և փափուկ, թույլ մարմին ունի։ Թեկուզ նա հինգ հարյուր ոտնաչափ երկարություն ունենա, միևնույն է, անողնաշար է, հետևապես ոչ մի վտանգ չի սպառնում այնպիսի նավերին, ինչպիսին են «Շոտլանդիան» կամ «Աբրահամ Լինկոլնը»։ Ժամանակն է մի կողմ թողնել այն հեքիաթը, թե ութոտնանիները կարող են վտանգավոր լինել նավերի համար։

— Այդպե՛ս ուրեմն, պարոն բնագետ,— հեգնանքով ասաց Նեդը,— դուք համոզվա՞ծ եք, որ գոյություն ունի վիթխարի միաժանին։

— Այո, Նեդ, ես համոզված եմ և իմ համոզմունքը հիմնված է մի շարք անհերքելի փաստերի վրա։ Ես չեմ կասկածում հսկայական, կետանման մի կենդանու գոյության մասին, որը, ինչպես նաև կետերը, վիշապաձկներն ու դելֆիններները, պատկանում է ողնաշարավորների թվին և ունի չափազանց պինդ մի ատամ, եղջյուր կամ ժանիք։

— Հը՛մ,— ասաց Նեդը և կասկածանքով օրորեց գլուխը։

— Իմացեք, իմ սիրելի կանադացի,— շարունակեցի ես,— որ եթե այդպիսի մի կենդանի ապրում է օվկիանոսի խորքերում, ջրի մակերևույթից մի քանի մղոն ներքև, ապա նա բացառիկ ուժեղ օրգանիզմ պետք է ունենա։

— Ինչո՞ւ,— հարցրեց Նեդը։

— Որովհետև չլսված ուժ է հարկավոր, որպեսզի կենդանին, այդքան խորը տեղ գտնվելով, դիմանա ջրի հսկայական ճնշման։

— Իսկապե՞ս,— հարցրեց Նեդը, անվստահությամբ կկոցելով աչքերը։

— Իսկապես։ Այդ ապացուցելու համար կարող եմ մի քանի թիվ բերել։

— Օ՜, թվե՛րը,— ձայնը երկարացնելով ասաց Նեդը,— թվերով կարելի է ինչ ասես ապացուցել...

— Ո՛չ միշտ և ո՛չ ամեն ինչ, Նեդ։ Հապա լսեցեք ինձ։ Ենթադրենք թե երեսուներկու ոտնաչափ ջրի այսպես ճնշումը հավասար է մեկ մթնոլորտ ճնշման։ Իրականում ջրի այսպես բարձրությունը պետք է մի քիչ պակաս լինի, քանի որ ծովի ջուրը ավելի թանձր է, քան սովորական ջուրը։ Այդպես ուրեմն, Նեդ, երբ դուք սուզվում եք ջրի մեջ, ձեր մարմինը զգում է այնքան մթնոլորտ ճնշում, այսինքն ձեր մարմնի յուրաքանչյուր քառակուսի սանտիմետրի վրա լինում է այնքան կիլոգրամ ճնշում, որքան որ երեսուներկու ոտնաչափ ջրայուններով դուք հեռացած եք ծովի մակերևույթից։ Այստեղից հետևում է, որ եթե հարյուր քառակուսի մետր խորության տակ այդ ճնշումը հավասար է տասը մթնոլորտի, երեք հազար երկու հարյուր ոտնաչափ խորության տակ՝ հարյուր մթնոլորտի, իսկ երեսուներկու հազար ոտնաչափ խորության, այսինքն մոտ երկու և կես մղոն խորության տակ՝ հազար մթնո-

լորտ։ Ուրիշ խոսքով, եթե ձեզ հաջողվեր հասնել այդչափ խորության, ձեր մարմնի յուրաքանչյուր քառակուսի սանտիմետրի վրա կլիներ հազար կիլոգրամ կամ մեկ տոննա ճնշում։ Ի դեպ, սիրելի բարեկամ, գիտե՞ք արդյոք, թե ձեր մարմնի մակերևույթը քանի քառակուսի սանտիմետր ունի։

— Այդ մասին բոլորովին գաղափար չունեմ։

— Մոտ տասնյոթ հազար։

— Այդքան շա՞տ։

— Բայց որովհետև իրականում մթնոլորտի ճնշումը մի քիչ ավելի է իմ հիշած թվից,— մեկ քառակուսի սանտիմետրի վրա մեկ կիլոգրամ,— ուստի ձեր մարմնի մակերևույթի տասնյոթ հազար քառակուսի մետրն այս րոպեին գտնվում է տասնյոթ հազար հինգ հարյուր վաթսունութ կիլոգրամ ճնշման տակ։

— Եվ ես այդ չե՞մ նկատում։

— Այո, դուք այդ չեք նկատում։ Այդ հսկայական ծանրությունը ձեզ չի ճզմում միայն այն պատճառով, որ ձեր մարմնի մեջ գտնվող օդը հավասարակշռում է այդ ճնշման։ Այդ պատճառով դուք ոչինչ չեք նկատում։ Սակայն բավական է, որ դուք ընկնեք ջուրը, և խախտվում է այդ հավասարակշռությունը...

— Հասկանում եմ,— ընդհատեց ինձ Նեդը, որ ըստ երևույթին հետաքրքրվել էր իմ բացատրությամբ,— չէ՞ որ ջուրն ինձ կշրջապատի ամեն կողմից, բայց չի թափանցի իմ օրգանիզմի մեջ։

— Հենց այդ է բանը, Նեդ։ Այսպիսով երեսուներկու ոտնաչափ խորությամբ մտնելով ծովի ջուրը, դուք ձեզ վրա կունենաք տասնյոթ հազար հինգ հարյուր վաթսունութ կիլոգրամ ճնշում. երեք հարյուր քսան ոտնաչափ խորությամբ այդ ճնշումը կտասնապատկվի, այսինքն հավասար կլինի յոթանասուն հինգ հազար վեց հարյուր ութսուն կիլոգրամի։ Երեք հազար երկու հարյուր ոտնաչափ խորությամբ այդ ճնշումը կավելանա հարյուր անգամ և կկազմի մեկ միլիոն յոթ հարյուր հիսունվեց հազար ութ հարյուր կիլոգրամ։ Վերջապես, երեսուներկու հազար ոտնաչափ խորությամբ այն կուժեղանա հազար անգամ, և ձեր վրա կլինի տասնյոթ մի-

լիոն հինգ հարյուր վաթսունութ հազար կիլոգրամ ծանրություն։ Ուրիշ խոսքով՝ դուք վայրկենապես կդառնայիք լավաշ, ամենաբարակ թերթիկ, որպես թե ձեզ հանեին վիթխարի ջրաքաշիչական մեքենայի տակից։

— Վա՛յ, սատանան տանի,— բացականչեց Նեդը։

— Այսպե՛ս ուրեմն, թանկագին ընկեր, եթե մի քանի հարյուր մետր երկարություն ունեցող ողնաշարավոր կենդանին կարող է գոյություն ունենալ այդպիսի խորքերում, ապա նրա մարմնի մակերևույթի միլիոնավոր քառակուսի սանտիմետրերի վրա կլինի մի քանի միլիարդ կիլոգրամ ճնշում։ Հիմա մտածեցեք, թե այդ կենդանիներն ինչպիսի մկանային ուժով պետք է օժտված լինեն և ինչպիսի դիմադրություն պետք է ցույց տա նրանց օրգանիզմը, որպեսզի կարողանա անպատիժ կրել այդ ծանրությունը։

— Դուրս է գալիս, որ նրանք, ինչպես զրահակիրները, պետք է պատած լինեն ութ մատնաչափ հաստությամբ երկաթով,— ասաց կանադացին։

— Ճիշտ է, Նեդ։ Հիմա մտածեցեք, թե այդպիսի կենդանին, հանդիպելով նավին, ինչքան սարսափելի ավերածություն կգործի, եթե նա ընդունակ է ջրի մեջ շարժվել մեր ամենաարագընթաց գնացքների արագությամբ։

— Այո... իսկապես...— անվստահ քրթմնջաց կանադացին, շփոթվելով այս հաշիվներից, բայց դեռ չցանկանալով անձնատուր լինել։

— Հիմա համոզվեցի՞ք։

— Ես համոզվեցի, պարոն պրոֆեսոր, որ եթե այդպիսի կենդանիներ իրոք գոյություն ունեն օվկիանոսի խորքերում, ապա պետք է որ շատ ուժեղ լինեն։

— Ի՞նչ համառ մարդ եք եղել։ Իսկ եթե դրանք գոյություն չունեն, ապա ինչո՞վ եք բացատրում «Շոտլանդիայի» հետ պատահած դեպքը։

— Գուցե...— տատանվելով սկսեց Նեդը։

— Խոսեցեք։

— Գուցե... այդպիսի դեպք չի էլ եղել,— անսպասելի կերպով վրա բերեց կանադացին։

Սակայն այդ պատասխանը ցույց էր տալիս միայն նրա

համառությունը և ուրիշ ոչինչ։ Այդ օրն այլևս ես չփորձեցի նրան համոզել։ «Շոտլանդիայի» հետ պատահած դեպքը միանգամայն անվիճելի էր։ Ճեղքվածքն այնքան մեծ էր, որ հարկավոր եղավ ծածկել այն։ Ես կարծում եմ, որ սա միակ համոզիչ ապացույցն է ճեղքվածքի գոյության նկատմամբ։ Ոչ մի կասկած չէր առաջացնում նաև այն, որ այդ ճեղքվածքը չէր կարող ինքն իրեն գոյանալ, և որովհետև բոլորովին անհավանական էր համարվում նավի ընդհարումը ստորջրյա քարին կամ խութին, ապա անհրաժեշտ էր ճանաչել ծովային կենդանու զարհուրելի ատամի գոյությունը։

Անձամբ ես, վերոհիշյալ բոլոր նկատառումներով գտնում էի, որ այդ կենդանին պատկանում է ողնաշարավորների թվին, կաթնասունների դասին, ձկնանմանների ենթադասին և կետանմանների ջոկատին։ Ինչ վերաբերում է այն հարցին, թե հրեշն ինչ ընտանիքի է պատկանում՝ կետերի, վիշապաձկների կամ դելֆինների ընտանիքի՞ն, ենթաընտանիքի՞ն, թե՞ տեսակին, ապա այդ հարցին կարող էր պատասխանել միայն ապագան։

Այդ հարցը լուծելու համար հարկավոր էր դիահատել անհայտ հրեշին, իսկ դիահատելու համար անհրաժեշտ էր նախ՝ բռնել նրան։ Բռնելու համար հարկավոր էր գործադրել եռաժանին,— սա վերաբերում էր Նեդ Լենդին։ Եռաժանին գործադրելու համար հարկավոր էր տեսնել հրեշին,— սա էլ բոլոր նավորդների գործն էր։ Տեսնելու համար հարկավոր էր հանդիպել նրան,— սա էլ արդեն պատահականությունից էր կախված։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԿՈՒՐՈՐԵՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

«Աբրահամ Լինկոլնով» ճանապարհորդելու առաջին օրերին ոչ մի արկած չպատահեց։ Միայն մի անգամ տեղի ունեցավ մի դեպք, որը ցույց տվեց Նեդ Լենդի ապշեցուցիչ արվեստը և ապացուցեց, որ անպայման կարելի է հույս դնել այդ մարդու վրա։

Հունիսի 30-ին «Աբրահամ Լինկոլնը» Ֆալկլենդյան կղզիներից ոչ հեռու հանդիպեց ամերիկական «Մոնրոյե» նավին, որ կետ էր որսում։ «Մոնրոյեի» նավորդները ոչինչ չէին լսել միաժանու մասին։ Սակայն նրա նավապետը իմացավ, որ «Աբրահամ Լինկոլնում» է գտնվում հռչակավոր Նեդ Լենդը և խնդրեց որ վերջինս օգնի արդեն նկատված կետը որսալու համար։ Նավապետ Ֆարագուտը, որ ուզում էր տեսնել Նեդ Լենդի աշխատանքը, թույլ տվեց վերջինիս անցնել «Մոնրոյե» նավը։

Կանադացու գործը հաջող գնաց. մեկ կետի փոխարեն նա եռաժանիով հարվածեց երկուսին. առաջին կետին նա տեղն ու տեղն սպանեց, ցցելով եռաժանին նրա սրտի մեջ, իսկ երկրորդին սպանեց մի քանի րոպե հետապնդելուց հետո։

Թող միայն հրեշը երբևէ հանդիպի Նեդ Լենդի եռաժանու զորությա՛ն։ Այդ դեպքում ես շատ կզարմանամ, եթե հրեշն անվնաս մնա։

Մարտանավը շարունակում է մեծ արագությամբ լողալ Ամերիկայի հարավ-արևելյան ափերի ուղղությամբ։ Հուլիսի 3-ին մենք մոտեցանք Աղջկանց հրվանդանին, որ գտնվում է Մագելլանի նեղուցի մերձակայքում։

Սակայն նավապետ Ֆարագուտը կարգադրեց չմտնել այդ ոլոր-մոլոր նեղուցը և ընթանալ դեպի Հորն հրվանդանը։

Նավորդները միաբերան հավանություն տվին այդ որոշման։ Եվ իսկապես, այնքան էլ հավանական չէր թվում, որ միաժանին հանդիպի այդ փոքրիկ նեղուցում։ Նավաստիներից շատերը համոզված էին, որ հրեշն իր հաստության պատճառով չի կարող անցնել Մագելլանի նեղուցից։

Հուլիսի 6-ին, կեսօրվա ժամը մոտ երեքին «Աբրահամ Լինկոլնն» անցավ մենավոր մի կղզու և ամերիկյան ցամաքի ծայրում գտնվող ժայռի մոտից, որին հոլանդական ծովագնացներն անվանել են Հորն հրվանդան, իրենց հայրենի քաղաքի անունով։ Մարտանավն ուղևորվեց դեպի հյուսիս-արևմուտք և նրա պտուտակն սկսեց փրփրեցնել խաղաղ օվկիանոսի ջրերը։

— Աչալուրջ եղեք, լավ դիտեցեք,— ասում էին «Աբրահամ Լինկոլնի» նավաստիները։

Եվ նրանք իսկապես որ աշալուրջ էին։ Երկու հազար դոլլար շահելու համար մարդիկ սևեռել էին իրենց հայացքներն օվկիանոսի մակերևույթին։ Գիշեր ու ցերեկ նրանց աչքերն ու հեռադիտակները մի վայրկյան անգամ հանգիստ չէին մնում։ Նիկտալոպները, որ ընդունակ են գիշերները տեսնել նույնքան պարզ, որքան և ցերեկը, երկու անգամ ավելի տվյալներ ունեին պարգևը ստանալու, քան նորմալ տեսողություն ունեցող մարդիկ։

Ես էլ ամբողջ օրերով համառությամբ դիտում էի ջուրը, թեպետ պարգևն ինձ ամենևին չէր գայթակղեցնում։ Օրական քնելով ընդամենը երեք-չորս ժամ և մի քանի րոպե էլ գործադրելով ուտելու վրա, ես ամբողջ մնացած ժամանակը կանգնում էի տախտակամածում, անկախ նրանից, թե ինչպիսի եղանակ էր լինում։

Հենվելով մերթ նավի առջևի մասի բազրիքին ու մերթ նավախելին, ես ագահությամբ դիտում էի միալար, փրփրադեղ ալիքները, որ տարածվում էին ամեն կողմ, ինչքան որ աչքդ տեսներ։ Շատ հաճախ ես, ինչպես և մյուս նավորդները, խորը հուզումի րոպեներ էի ապրում, երբ հորիզոնում երևում էր կետի սև մեջքը։ Բոլոր նավորդները վայրկենապես դուրս էին թափվում տախտակամած։ Այս կամ այն դռնակից հորդում էր նավաստիների և սպաների հեղեղը։ Ամեն մեկը շնչասպառ, տեսողությունը լարելով այնքան, մինչև որ աչքերը ցավում էին, հետևում էր կետի շարժումներին։ Ես էլ էի նայում, այնքան նայում, մինչև որ աչքերս ուղղակի մթնում էին։

Պաղարյուն Կոնսելն այսպիսի դեպքերում հանգիստ ասում էր ինձ.

— Պարոնն ավելի շատ բան կտեսներ, եթե քի՛չ հառեր աչքերը։

Սակայն ամեն անգամ մեր հուզումն ապարդյուն էր լինում։ «Աբրահամ Լինկոլնը» մոտենում էր կարծեցյալ թշնամուն և համոզվելով, որ այդ ամենասովորական վիշապաձուկ է կամ կետ, կրկին բռնում էր նախորդ ուղղությունը, հազարավոր անեծքներ թափելով բոլորովին անմեղ կենդանու վրա։

Եղանակը միշտ նպաստավոր էր և մենք լողում էինք ամենալավ պայմաններում, չնայելով, որ հարավային կիսագնդի

հուլիսը համապատասխանում է հյուսիսային կիսագնդի հունվարին և այդ ժամանակ այնտեղ,— հարավային կիսագնդում առատ անձրևներ են լինում։ Այնուամենայնիվ ծովը հանգիստ էր, տեսանելիությունը հրաշալի։

Նեդ Լենդն առաջվա պես թերահավատ էր մնում։ Նա մինչև անգամ դիտմամբ չէր դիտում ծովն այն ժամերին, երբ ազատ էր լինում հերթապահությունից, կամ երբ կետ ձուկը չէր երևում։

Այդ վրդովեցուցիչ էր, որովհետև նրա բացառիկ սրատեսությունը կարող էր մեծ ծառայություն մատուցել գիտարշավին։

Սակայն կամակոր կանադացին գերադասում էր քանչորս ժամից տասնվեցն անցկացնել իր նավասենյակում,— քնել կամ կարդալ։ Ես հարյուրավոր անգամ հանդիմանում էի նրան իր անտարբերության համար։

— Ինչո՞ւ, պրոֆեսոր,— պատասխանում էր նա,— նախ և առաջ ընդհանրապես ոչինչ չկա, իսկ եթե նույնիսկ գոյություն ունենար որևէ մի կենդանի, որքա՞ն հավանական կլիներ նրան հանդիպելը։ Չէ՞ որ մենք նրան հետապնդում ենք կուրորեն, ենթադրաբար։ Ասենք թե որևէ մի նավ խաղաղ օվկիանոսում իսկապես հանդիպել է այդ խորհրդավոր կենդանուն։ Բայց չէ՞ որ այն ժամանակից արդեն անցել է մոտ երկու ամիս, իսկ այն, ինչ որ մեզ հայտնի է այդ միաժանու բնավորության մասին, ցույց է տալիս, որ նա չի սիրում երկար ժամանակ միևնույն տեղում մնալ։ Դուք ինքներդ ընդունում եք, որ նա ընդունակ է տեղափոխվել հսկայական արագությամբ, և իմ կարծիքով դուք կհամաձայնեք ինձ հետ, որ բնությունն աննպատակ ոչինչ չի անում և չէր կարող դանդաղաշարժ միաժանուն քամու արագությամբ սլանալու ընդունակություն տալ։ Հետևապես, եթե այդ կենդանին գոյություն ունի, նա արդեն հեռու է այստեղից։

Այս դատողության դեմ առարկելու ոչինչ չկար։ Իսկապես որ մենք կուրորեն էինք ճանապարհորդում։ Բայց ուրիշ ի՞նչ կարող էինք անել։ Նեդ Լենդն իրավացի էր։ Շատ չնչին էր հրեշին գտնելու հավանականությունը։ Այնուամենայնիվ վերջնական հաջողությունը կասկածելի չէր ոչ ոքի համար և ոչ մի

նավաստի չէր համարձակվի գրաղ գալ միաժամանակ շուտափույթ հանդիպելու դեմ։

Հուլիսի 12-ին մենք դարձյալ 105° երկարության տակ անցանք Այծեղջյուրի արևադարձը, իսկ նույն ամսի 27-ին 110° միջօրեականի տակ կտրեցինք հասարակածը։ Նույն օրը մարտանավը դարձավ դեպի արևմուտք, դեպի խաղաղ օվկիանոսի կենտրոնական ավազանը։ Նավապետ Ֆարագուտը խելացիորեն գտնում էր, որ հրեշը պետք է հանդիպի օվկիանոսի խոր տեղերում, մայր ցամաքներից ու կղզիներից հեռու, որոնց մոտենալուց մինչև այժմ խուսափել է նա, «երևի այն պատճառով, որ այնտեղ ծովը բավականաչափ խոր չէ նրա համար»,— ինչպես բացատրում էր մեր ավագ նավաստին։

Այսպիսով մարտանավն անցավ Պաումոտու, Մարքիզյան, Սանդվիչյան կղզիների մոտով, 132° երկարության տակ կտրեց Խեցգետնի արևադարձը և ուղևորվեց դեպի Չինական ծովը։

Վերջապես, մենք հասանք այնտեղ, որտեղ վերջին անգամ երևացել էր հրեշը։ Բոլորի սրտերը խփում էին այնպիսի տենդային արագությամբ, որ սրտի հիվանդություններն անխուսափելիորեն և մեծ չափով պետք է տարածվեին մարտանավում։ Բոլոր նավորդները կարծես տառապում էին մտքի լարվածությունից։ Մարդիկ ամբողջ շաբաթներով ոչ քնում էին, ոչ ուտում։ Օրական քսան անգամ տեսողության պատրանքները բուռն ցնծություն էին առաջ բերում և ամեն անգամ շարդարացվող այդ ակնկալիքները նավորդներին պահում էին այնպիսի ջղային լարվածության վիճակում, որը ոչ մի լավ բան չէր խոստանում։

Եվ իսկապես, ռեակցիան շուտով ունեցավ իր ազդեցությունը։ Ամբողջ երեք ամիս (երեք ամիս, որոնց ամեն մի օրը մի դար էր թվում) «Աբրահամ Լինկոլնը» շրջեց խաղաղ օվկիանոսի ամբողջ հյուսիսային մասը, հալածելով նկատված կետերին, հանկարծակի փոխելով ընթացքի ուղղությունը, հանկարծակի կանգ առնելով, մերթ արագացնելով ու մերթ դանդաղեցնելով ընթացքը և վտանգելով մեքենայի կանոնավոր աշխատանքը։ Ճապոնիայի ափերից մինչև ամերիկյան ցամաքը չմնաց մի կետ, որ հետազոտված չլիներ։ Սակայն այդ հսկայական տարածության վրա ոչինչ, ոչինչ չհա-

ջողվեց հայտնաբերել, ոչ մի բան, որ գեթ որևէ նմանություն ունենար վիթխարի միաժանուն, ատորջրյա կղզուն կամ խորտակված նավին, շարժվող խութին կամ մի որևէ այլ առարկայի։ Ոչի՛նչ։

Տեղի ունեցավ հոգելքում։ Հուսահատությունը ճանապարհ բացեց թերահավատության համար։ Բոլորին տիրեց մի զգացում, որի երեք տասնորդական մասն ամաչկոտություն էր, իսկ յոթ տասնորդականը վիրավորանք։

Ամեն մեկն ամաչում էր, որ հավատալով անհեթեթ առասպելին, հիմար դրության մեջ է ընկնում, և ամաչելուց ավելի շատ վիրավորանք էր զգում։ Անթիվ ու անհամար ապացույցները, որ մի ամբողջ տարվա ընթացքում կուտակվել էին իրար վրա, մեկ օրում և միանգամից օդը ցնդեցին։ Հիմա ամեն մեկը մտածում էր միայն այն մասին, թե ինչպես անի, որ քնելու և ուտելու միջոցով հատուցում ստանա այնքա՛ն հիմար կերպով կորցրած ժամանակի համար։

Մարդիկ մի ծայրահեղությունից դիմում էին մյուսին, մի բան, որ հատուկ է մարդկային մտքի փոփոխականության։ Ձեռնարկման ամենաջերմ կողմնակիցները դարձան նույն ձեռնարկման ամենակատաղի թշնամիներ։ Թերահավատությունը տիրեց ամբողջ մարտանավը, սկսած նավամբարից մինչև ընդհանուր նավասենյակը, և եթե չլիներ նավապետ Ֆարագուտի անհասկանալի համառությունը, «Աբրահամ Լինկոլնն» անմիջապես կդառնար դեպի հարավ։

Սակայն այդ ապարդյուն որոնումները չէին կարող անվերջ շարունակվել։ «Աբրահամ Լինկոլնն» ինքն իրեն կշտամբելու ոչ մի հիմք չուներ,— նավն արել էր այն ամենն, ինչ որ կախված էր իրենից, որպեսզի հաջողությամբ կատարի իրեն տրված հանձնարարությունը։ Ամերիկյան նավն ապասարկող կազմը դեռ երբեք այդչափ ջանասիրություն ու երկարատև համբերություն չէր ցուցաբերել։ Վերջապես, չէր կարելի ասել, որ ձեռնարկումն անհաջող է կազմակերպված։ Ըստ երևույթին հարկավոր էր վերադառնալ, ուրիշ ելք չկար։

Նավապետ Ֆարագուտին այդ մասին համապատասխան հայտարարություն արվեց։ Նա համառում էր։

Նավաստիները չէին թաքցնում իրենց դժգոհությունը։ Կարգապահությունը թուլացավ։ Ես չեմ ուզում ասել, թե նավում խռովություն սկսվեց, սակայն նավապետ Ֆարագուտը, ինչպես իր ժամանակին Կոլումբոսը, մի քիչ էլ դիմադրելուց հետո խնդրեց նավորդներին, որ երեք օր էլ համբերեն։ Եթե այդ երեք օրվա ընթացքում հրեշը չգտնվի, ապա մեքենավարը կդարձնի ղեկանիվը և «Աբրահամ Լինկոլնը» կբռնի վերադարձի ճանապարհը։

Այդ խոստումը տրվեց նոյեմբերի 2-ին։ Նավորդների տրամադրությունը միանգամից բարձրացավ։ Մարդիկ նորից սկսեցին ուշադրությամբ դիտել ալիքները։ Նորից գործի դրվեցին հեռադիտակները։ Դա մի վերջին մարտակոչ էր հակայական միաժանուն և թվում էր, որ հիմա նա չի կարող չընդունել իրեն ցույց տալու հրավերը...

Այսպես անցավ երկու օր։ «Աբրահամ Լինկոլնը» գնում էր դանդաղ։ Նավորդները հաղար ու մի միջոց էին հնարում հրեշի ուշադրությունը գրավելու կամ նրա անտարբերությանը վերջ տալու համար, եթե իհարկե նա հետու չլիներ։ Ճարպիկ ահագին կտորներ էին նետում ծովը, մեծագույն հաճույք պատճառելով շնաձկներին, որոնք խմբերով ուղեկցում էին մարտանավը։ Մակույկներն ակոսում էին ծովը, հետազոտելով նրա յուրաքանչյուր քառակուսի մետրը։ Սակայն արդեն նոյեմբերի 4-ի երեկոն էր, իսկ ստորջրյա գաղտնիքը դեռ չէր բացվում։

Հետևյալ օրը, նոյեմբերի 5-ին լրանում էր նշանակված ժամկետը։ Ժամը ուղիղ տասներկուսին նավապետ Ֆարագուտը, լինելով իր խոսքի տերը, պետք է հրամայեր դառնալ դեպի հարավ-արևելք և հեռանալ խաղաղ օվկիանոսի հյուսիսային մասից։

Այդ ժամանակ մարտանավը լողում էր 31°15′ հյուսիսային լայնության և 136°42′ արևելյան երկարության տակ։ Ճապոնիան գտնվում էր առնվազն երկու հարյուր մղոնի վրա։ Գիշերը վրա հասավ։ Ծովային ժամացույցը խփեց ժամը ութը։ Խիտ ամպերը ծածկեցին կիսալուսինը, որ կազմում էր ամբողջ լուսնի մի քառորդ մասը։ Ծովը համաչափ օրորում էր մարտանավը։

Այդ րոպեին ես կանգնած էի նավի աջ կողմում, հենվելով տախտակամածի բազրիքին։ Կոնսելն ինձ մոտ էր և անտարբեր նայում էր առաջ։ Առագաստակալների վրա բարձրացած նավաստիներն այդ օրը վերջին անգամ դիտում էին հորիզոնը, որ հետզհետե ծածկվում էր խավարով։ Սպաները գիշերային հեռադիտակներով դիտում էին օվկիանոսի մակերևույթը։ Լուսնի շողերը երբեմն ամպերի վարագույրի միջից արծաթե ցոլք էին նետում ալիքների վրա, սակայն նորից ծածկվում էին ամպերով, ու դարձյալ ամեն ինչ կորչում էր խավարում։

Ուշադրությամբ նայելով Կոնսելին, ես նկատեցի, որ մեր ճանապարհորդության ընթացքում առաջին անգամ այդ հանգիստ մարդը հուզված է մյուսների նման։

— Հը՛, Կոնսել,— ասացի ես,— ո՞նց է երկու հազար դոլար վաստակելու բանը։

— Պարոնի թույլտվությամբ ասած՝ ես երբեք հույս չեմ ունեցել այդ գումարը գրպանս դնելու,— պատասխանեց Կոնսելը,— Միացյալ Նահանգների կառավարությունը կարող էր խոստանալ ոչ թե երկու, այլ հարյուր հազար դոլլար, և նա դրանով չէր աղքատանա։

— Դու իրավացի ես, Կոնսել։ Վերջին հաշվով սա մի հիմար ձեռնարկում էր ու ես էլ անխելքություն արի, որ մասնակցեցի այս գործին։ Որքա՛ն ժամանակ վատնվեց զուր տեղը, որքան թանկ նստեց մեր ջղերի վրա։ Դեռ վեց ամիս առաջ մենք կարող էինք վերադառնալ Ֆրանսիա...

— Պարոնի փոքրիկ բնակարանը, նրա թանգարանը,— ավելացրեց Կոնսելը։— Ես էլ կդասավորեի մեր հավաքածոյի հանածոները, տիրոջ բերած եղջերավարազն էլ կնստեր կենդանաբանական այգու վանդակում, ու Փարիզի բոլոր ծայրերից դեպի իրեն կգրավեր հետաքրքրվողների բազմությանը։

— Այդ բոլորը հենց այդպես էլ կլիներ, Կոնսել։ Իսկ հիմա մենք թե այսքան նեղություն ենք քաշել և թե պիտի ծիծաղեն մեր վրա...

— Անկասկած,— սառնասրտությամբ շեշտեց Կոնսելը,— ես հավատացած եմ, որ պիտի ծիծաղեն պարոնի վրա։ Չգիտեմ, արժե՞ ասել, որ...

— Ասա, ասա, Կոնսե՛լ։

— Ես կարծում եմ, որ պարոնն արժանացել է այդ ծիծաղին։

— Իսկապե՞ս։

— Երբ մարդ այդպիսի խոշոր գիտնական լինելու պատիվ ունի, չպետք է փորձ անի...

Կոնսելը չվերջացրեց իր խոսքը։ Մեր շուրջը թագավորող լռության մեջ լսվեց հնչուն մի ձայն։

Այդ Նեդ Լենդի ձայնն էր։

Կանադացին գոչեց.

— Հե՛յ, հրեն մեր փնտրածը, քամու կողմը, մեր քթի տակ։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՐԱԳ ԸՆԹԱՑՔ

Այդ բացականչությունը լսվեց թե չէ, բոլոր նավորդները,— նավապետը, սպանները, սպասավորները, նույնիսկ ինքը,— նավապետը, սպանները, սպասավորները, նույնիսկ ինքը, նույնիսկ հնոցապանները, որոնք թողեցին իրենց մեքենաները, նույնիսկ հնոցապանները, որոնք թողեցին իրենց հնոցները, բոլորը վազեցին դեպի Նեդ Լենդը։

Նավապետը հրամայեց կանգնեցնել նավը։

Անթափանցելի խավարը պատել էր ամեն ինչ։ Թեև ես գիտեի, որ կանադացին հիանալի տեսողություն ունի, այնուամենայնիվ ինքս ինձ հարցնում էի, թե այդպիսի խավարում նա ինչպե՞ս և ի՞նչ կարող էր տեսնել։

Սիրտս խփում էր այնքան ուժեղ, որ քիչ էր մնում պայթեր։

Սակայն Նեդ Լենդը չսխալվեց։ Շուտով մենք բոլորս տեսանք այն, ինչ որ նա ցույց էր տալիս ձեռքով։

«Աբրահամ Լինկոլնից» երկու կաբելտով հեռու, նավի աջ կողմում ծովը թվում էր ներքուստ լուսավորված։ Անկասկած, այդ սովորական ֆոսֆորային լուսավորություն չէր։ Հրեշը, որ մի քանի մետր չրի տակ էր գտնվում, արձակել էր պայծառ

ու տարօրինակ մի փայլ, որի մասին շատ նավապետներ գրել էին իրենց հաշվետվություններում։ Պետք է որ այդ լուսավորությունն ունենար մի շատ պայծառ աղբյուր։ Օվկիանոսի մակերևույթի լուսավորված մասը բռնում էր երկար, ձվաձև մի տարածություն։ Այդ տարածության կենտրոնում լուսավորությունը խիստ ուժեղ էր, իսկ ծայրերում — թույլ։

— Դա ուղղակի ֆոսֆորափայլ մոլեկուլների կուտակում է,— բացականչեց սպաներից մեկը։

— Ո՛չ, դուք սխալվում եք,— համոզված առարկեցի ես,— քարակերները կամ սայլերը ոչ մի դեպքում չէին կարող այդպիսի պայծառ լույս արձակել։ Այդ լույսն անկասկած մի որևէ էլեկտրական աղբյուր ունի... Սակայն նայեցեք, նայեցե՛ք... Նա շարժվում է... նա դեպի մեզ է գալիս։

Տախտակամածի վրա հավաքվածները ճիչ արձակեցին։

— Լռե՛լ,— հրամայեց նավապետ Ֆարագուտը,— անցնել ղեկի՛ն։ Դանդաղ ընթա՛ցք։

Բոլորը նետվեցին դեպի իրենց տեղերը։ Հրամանն անմիջապես կատարվեց, ու «Աբրահամ Լինկոլնը» մի կիսաշրջան գծեց։

— Այս ուղղությամբ արագ դեպի առա՛ջ,— հրամայեց նավապետ Ֆարագուտը։

Պտուտակն էլի՛ սկսեց գործել՝ և մարտանավը հապճեպ հեռանում էր պայծառ լույսից։

Ես սխալվեցի. մարտանավն ուզում էր հեռանալ, սակայն գերբնական կենդանին կրկնակի արագությամբ մոտենում էր նրան։

Մենք շնչներս պահած՝ քարացանք մեր տեղերում առանց մի բառ արտասանելու, և այդ ոչ այնքան երկյուղից, որքան զարմանքից։ Կենդանին ասես կատակի տալով, մոտենում էր մեզ։ Նա հասավ մարտանավին, որ սլանում էր տասնչորս հանգույցի արագությամբ, և մեր վրա արձակեց իր էլեկտրական ճառագայթները, որոնք կարծես լուսեղեն փոշի լինեին։ Հետո նա հեռացավ երկու կամ երեք մղոն, թողնելով ֆոսֆորափայլ մի հետք, որ նման էր ճեպընթաց գնացքի շոգեքարշի ծխի քուլաներին։ Հանկարծ հրեշը սարսափեցնող արագությամբ նետվեց դեպի «Աբրահամ Լինկոլնը», անապատելի

կանգ առավ նրանից քսան քայլ հեռու և... հանգավ։ Նա չրաս-սույզ չեղավ, որովհետև այդ դեպքում նրա արձակած լույսը հետզհետե կաղոտանար, այլ միանգամից հանգավ, կարծես թե հանկարծակի խորտակվեց այն աղբյուրը, որից առաջանում էր լույսի այդ հեղեղը։ Մի ակնթարթում հրեշը նորից երևաց մարտանավի մյուս կողմից,— երևի անցել էր «Աբրահամ Լինկոլնի» կողքից, կամ նրա ոլնուցի տակից։

Ամեն վայրկյան կարող էր ընդհարում լինել, որն անխուսափելիորեն ճակատագրական հետևանք կունենար մեզ համար։

Մարտանավի շարժումները զարմացնում էին ինձ։ Նա փախչում էր և ոչ թե կռիվ սկսում հրեշի հետ։ Մարտանավը, որ ուղարկված էր հրեշին հետապնդելու, ինքն էր ընկել հետապնդվողի դրության մեջ։ Այդ մասին ես դիտողություն արի նավապետ Ֆարրագուտին։ Նրա դեմքը, որ միշտ հանգիստ էր, այժմ ծայրահեղ տարակուսանք էր արտահայտում։

— Ահա թե ինչ, պրոֆեսոր,— պատասխանեց նա,— ես չգիտեմ, թե ինչ վիթխարի գազանի հետ գործ ունեմ և չեմ ուզում իմ մարտանավը վտանգի ենթարկել այս անթափանցելի խավարում։ Ինչպե՞ս կարելի է գրոհել անհայտ թշնամու վրա, կամ պաշտպանվել նրանից։ Սպասենք մինչև լուսաբաց, այն ժամանակ գերերը կփոխվեն։

— Նավապետ, էլ հո չե՞ք կասկածում այդ արարածի բնության և գոյության նկատմամբ։

— Ոչ, պրոֆեսոր, ըստ երևույթին այդ մի վիթխարի միաժանի է, սակայն էլեկտրական միաժանի։

— Գուցե,— ասացի ես,— նրան մոտենալը նույնքան վտանգավոր է, որքան հիմնոտին[1] կամ լողացող ականի՞։

— Միանգամայն հնարավոր է,— համաձայնվեց նավապետը,— և եթե նա իր բոլոր հատկություններով հանդերձ զինված է էլեկտրականությամբ, ապա իսկապես որ ամենավտանգավոր կենդանին է աշխարհում։ Ահա թե ինչու ես որոշել եմ զգույշ լինել։

Ամբողջ գիշերը նավորդներից ոչ ոք չքնեց։ Բոլորը տախ-

---

1 Հիմնոտ — էլեկտրական օձաձուկ։

տակամածում էին։ Համոզվելով, որ միաժանու հետ իր արագությամբ չի կարող մրցել, «Աբրահամ Լինկոլնը» դանդաղեցրեց իր ընթացքը։

Իր հերթին միաժանին նույնպես սկսեց դանդաղ շարժվել և համաչափ օրորվել ալիքներում։ Թվում էր, որ նա միտք էլ չունի հեռանալու կռվի դաշտից։

Մոտավորապես գիշերվա կեսին նա չքացավ, կամ ավելի ճիշտ հանգավ ինչպես մի մեծ լուսատիտիկ։ Արդյոք փախա՞վ նա։ Դա ավելի շուտ երկյուղալի էր, քան ցանկալի։ Սակայն գիշերվա ժամը մեկից յոթ րոպե պակաս լսվեց խլացուցիչ մի ֆշշոց, որ նման էր ուժեղ ճնշման տակ նեղ անցքից ժայթքող ջրի աղմուկին։

Այդ ժամանակ նավապետ Ֆարագուտը, Նեդ Լենդն ու ես գտնվում էինք տախտակամածում։ Մենք ագահությամբ դիտում էինք մեզ շրջապատող անթափանցելի խավարը։

— Նեդ Լենդ,— ասաց նավապետը,— արդյոք դուք հաճա՞խ եք լսել կետի բարձրացրած աղմուկը։

— Հաճախ, նավապետ, սակայն մինչև այժմ ես չեմ հանդիպել այնպիսի կետի, որին նկատելն ինձ տար երկու հազար դոլար։

— Իսկապես որ դուք արժանացաք այդ պարգևին։ Բայց ասացեք խնդրեմ, արդյոք այս ձայները նմա՞ն են կետի պինչերից թափվող ջրի աղմուկին։

— Ձայները նման են, միայն թե անհամեմատ ավելի ուժեղ են սովորականից։ Սակայն կասկածելու կարիք չկա, մեր առաջ անպայման գտնվում է կետանման մի արարած, և ձեր թույլտվությամբ, նավապետ,— ավելացրեց Նեդ Լենդը,— վաղը լուսաբացին ես կխոսեմ նրա հետ։

— Եթե միայն նա բարեհաճեր լսել ձեզ, Նեդ,— ասացի ես,— սակայն դա այնքան էլ հավանական չի թվում։

— Եթե ինձ հաջողվի բավականաչափ մոտենալ նրան,— հակաճառեց կանադացին,— ապա նա ստիպված կլինի ծանոթանալ ինձ հետ։

— Սակայն դրա համար հարկավոր կլինի ձեզ մի մակույկ տրամադրել, այնպես չէ՞,— հարցրեց նավապետը։

— Անշո՛ւշտ։

— Թիավարողների կյանքն էլ վտանգի կենթարկվի։

— Ինչպես նաև իմ կյանքը,— հանգիստ պատասխանեց Նեդ Լենդը։

Գիշերվա ժամը մոտ երկուսին էլեկտրական փայլը, որ պայծառ էր առաջվա պես, նորից երևաց հողմի ուղղությամբ, «Աբրահամ Լինկոլնից» հինգ մղոնի վրա։ Չնայելով այդ մեծ հեռավորության, քամու և ծովի աղմուկին, պարզ լսվում էր, թե ինչպես կենդանու վիթխարի պոչը ճողփում է ջուրը և ինչպես շնչում է նա։

Կարելի էր կարծել, որ երբ միաժանին ջրի երեսն է ելնում շունչ քաշելու համար, օդը նրա թոքերն է լցվում այնպիսի ուժով, ինչպես գոլորշին — երկու հազար ուժանոց մեքենայի գլանները։

«Գրողը տանի,— մտածեցի ես,— այն կետը, որ մի ամբողջ հեծելազորային գնդի ուժ ունի, պետք է որ արտասովոր կետ լինի»։

Ամբողջ գիշերը մենք սպասողական դրության մեջ էինք և ճակատամարտի էինք պատրաստվում։ Նավի կողքերից դեպի ծովն էին նայում կետ որսալու թնդանոթները։ Նավապետի երկրորդ օգնականը հրամայեց լցնել եռաժանու թնդանոթները,— որոնք եռաժանիները նետում էին մի ամբողջ մղոն,— և կարճ հրացանները, որոնց պայթող գնդակներով կարելի էր մահացու վիրավորել նույնիսկ ամենախոշոր կենդանիներին։ Նեդ Լենդը բավականացավ նրանով, որ սրեց եռաժանին, նրա ձեռքում սարսափելի այդ զենքը։

Ժամը վեցին բացվեց արշալույսը։ Լույսի առաջին ճառագայթները շողալուն պես, միաժանու շուրջը եղած էլեկտրական փայլը չքացավ։

Ժամը յոթին արդեն բոլորովին լույս էր, սակայն առավոտյան թանձր մշուշը, որ անթափանցելի էր անգամ ամենաուժեղ հեռադիտակների համար, սահմանափակում էր տեսանելիությունը։ Դժվար չէ պատկերացնել, թե նավորդները որչափ էին վրդովվում ու զայրանում։

Ես բարձրացա հետակայմի առաջին շեղափայտի վրա։ Մի քանի սպաներ ավելի վերև բարձրացան։

Ժամը ութին մառախուղը սահեց ալիքների վրայով, այպա

դանդաղ, քուլա-քուլա բարձրացավ վերև։ Հորիզոնը պարզվում էր և միաժամանակ լայնանում։

Ինչպես նախընթաց օրը, հանկարծ լսվեց Նեդ Լենդի ձայնը.

— Միաժանին քամու կողմում է, նավի հետևում,— զոռաց նա։

Բոլորի հայացքները դարձան դեպի մատնանշված կողմը։

Այնտեղ, մարտանավից մեկ և կես մղոն հեռու, երկար ուսև մի մարմին մոտավորապես մի մետրի չափ դուրս էր եկել ջրից։ Ինչպես երևում է, նրա պոչը գալարվում էր արագությամբ, որովհետև այնտեղ ծովը փրփրում էր ու ալեկոծվում։ Մեզ հայտնի և ոչ մի կենդանի չէր կարող այդպիսի ուժով ալեկոծել ծովը։ Հրեշն առաջ էր շարժվում և նրա հետևից մնում էր ծուռումուռ գիծ կազմող, ձյան պես սպիտակ փրփուրի հսկայական մի հետք։

Մարտանավը շարժվեց դեպի կետանման այդ արարածը։ Ես, ուշադրություն լարած, ուսումնասիրում էի նրան։ «Քանանի» և «Հելվեցիայի» զեկույցներում մի քիչ չափազանցրած էր հրեշի մեծությունը։ Ես հաշվեցի, որ նրա երկարությունը պետք է լինի ընդամենը երկու հարյուր հիսուն ոտնաչափ։ Նրա հաստության մասին դժվար էր գաղափար կազմել, սակայն ես այն տպավորությունն ստացա, որ կենդանու երկարությունը, լայնությունն ու բարձրությունը մի հիանալի համաչափություն են կազմում։

Այն ժամանակ, երբ ես հետևում էի այդ արարածին, նրա պինչերից դուրս թռան ջրի երկու սյուն ու քառասուն մետր դեպի վեր բարձրացան։ Այդ երևույթի շնորհիվ ես մոտավորապես պատկերացրի, թե նա ինչպես է շնչում։ Ես վերջնականորեն եկա այն եզրակացության, որ կենդանին պատկանում է ողնաշարավորների թվին, կաթնասունների դասին, միափորների ենթադասին, ձկնանմանների խմբին, կետանմանների ջոկատին, իսկ թե որ ընտանիքին էր պատկանում, այդ ես դեռ չգիտեի։ Կետանմանների ջոկատն ունի երեք ընտանիք — կետեր, վիշապաձկներ ու դելֆիններ։ Վերջին ընտանիքին պատկանում են նաև միաժանիները։ Այդ ընտանիքներից յուրաքանչյուրը բաժանվում է բազմաթիվ ենթաընտա-

նիքների, վերջիններիը — ցեղերի, իսկ ցեղերը,— տեսակների։ Տեսակ, ցեղ, ենթաընտանիք և ընտանիք,— այդ մասին ես դեռ չէի կարող դատել, սակայն կասկած չկար, որ շուտով, Նեդ Լենդի վարպետության և նավապետ Ֆարրագուտի փորձառության շնորհիվ կստանամ և այդ տվյալները։

Նավորդներն անհամբերությամբ սպասում էին իրենց պետի հրամանին։ Ուշադրությամբ դիտելով կենդանուն, նավապետը հրամայեց կանչել ինժեներին։ Վերջինս անմիջապես ներկայացավ։

— Գոլորշին բաց թողնվա՞ծ է,— հարցրեց նավապետը։

— Ճիշտ այդպես, նավապետ,— պատասխանեց ինժենները։

— Լա՛վ, ուժեղացրեք հնոցների կրակը։

Այս հրամանն ընդունվեց երեք անգամ կրկնվող «ուռա-յով»։

Հասավ պայքարի ժամը։

Մի քանի րոպեից հետո մարտանավի երկու ծխնելույզներից քուլա-քուլա բարձրացավ սև ծուխը։ Տախտակամածը սկսեց դողդղալ կաթսաներում եռացող ջրի ուժից։

«Աբրահամ Լինկոլնի» հզոր պտուտակը մարտանավը տարավ ուղիղ դեպի կենդանին։ Վերջինս անտարբերությամբ թույլ տվեց, որ նավը մինչև կես կաբելտով մոտենա իրեն։ Հետո, առանց ջրասույզ լինելու, սկսեց հանդարտ հետանալ, պահպանելով նախկին տարածությունն իր և մարտանավի միջև։

Հետապնդումը շարունակվեց երեք քառորդ ժամ, սակայն այդ ժամանակվա ընթացքում մարտանավին չհաջողվեց թեկուզ մեկ ոտնաչափով ավելի մոտենալ։ Պարզ էր, որ այդպիսի արագությամբ անկարելի էր հասնել կենդանուն։

Նավապետ Ֆարրագուտը բարկացած շփում էր իր խիտ մորուքը։

— Նեդ Լի՛նդ,— գոչեց նա։

Կանադացին մոտեցավ։

— Հապա, պարոն մասնագետ,— դիմեց նրան նավապետը,— արդյոք դուք խորհուրդ տալի՞ս եք այժմ գործի դնել մակույկները։

— Ո՛չ,— պատասխանեց Նեդ Լենդը,— այդ կենդանուն կհաջողվի բռնել, եթե նա ինքն ընկնի մեր ձեռքը։

— Հապա ի՞նչ անել։

— Արագացնել նավի ընթացքը, եթե այդ հնարավոր է։ Իսկ ես ձեր թույլտվությամբ կլինեմ նավի առջևի մասում ու հենց որ մենք բավականաչափ մոտենանք նրան, ես կխփեմ եռաժանիով։

— Լավ, Նեդ,— ասաց նավապետը և խոսափողով հրամայեց ինժեներին.— արագացնել ընթացքը։

— Այո՛, արագացնե՛լ ընթացքը,— պատասխանեց ինժեները։

Նեդ Լենդը գնաց իր տեղը։ Հնոցներն ածուխի նոր պաշար լցվեց և ջուտակը սկսեց մի բոպեում քառասուներեք պտույտ անել։ Արագությունը չափող գործիքը ցույց տվեց, որ «Աբրահամ Լինկոլնը» մի ժամում անցնում է տասնութ և կես մղոն։

Սակայն անիծված կենդանին նույնպես սկսեց մեկ ժամում տասնութ և կես մղոն անցնել։

Մարտանավը մի ամբողջ ժամ գնում էր այդ արագությամբ, առանց մի սանտիմետր տարածություն անգամ շահելու։ Այդ ստորացուցիչ էր ամերիկական տորպիդի ամենաարագընթաց նավի համար։ Բոլոր նավորդները զայրույթից չգիտեին ինչ անեն։ Նավաստիները թունդ հայհոյում էին միաժանուն, բայց վերջինս լռում էր արհամարհանքով։ Նավապետ Ֆարրագուտն արդեն ոչ թե շփոթում, այլ կծում էր իր մորուքը։

Ինժեներին էլի՛ կանչեցին դեպի կամրջակը։

— Արդյոք նավը գնո՞ւմ է ամենամեծ արագությամբ,— հարցրեց նավապետը։

— Այո՛,— պատասխանեց ինժեները։

— Քանի՞ մթնոլորտ է գոլորշու ճնշումը։

— Վեց և կես։

— Ճնշումը հասցրեք մինչև տասը մթնոլորտի։

Այդ զուտ ամերիկական մի հրաման էր։ Ավելին չէր կարող ասել նույնիսկ Միսիսիպիի շոգենավի պետը, որ ձգտում է առաջ անցնել մրցակցից։

— Կոնսե՛լ,— զիմեցի ես իմ հիանալի սպասավորին, որ կանգնած էր ինձ մոտ,— գիտե՞ս արդյոք, որ մենք հավանորեն հօդս կցնդենք։

— Ինչպես որ պարոնը կամենա,— պատասխանեց Կոնսելը։

Խոստովանում եմ, որ ինձ նույնիսկ դուր եկավ նավապետի հանդուգն համարձակությունը։

Հնոցապաններն ածուխ ավելացրին կրակակալների վրա։ Հողմահարիչներն օդի հեղեղներ էին նետում հնոցների մեջ։ Շոգու ճնշումն ավելի ուժեղացավ։ «Արբահամ Լինկոլնը» ահռաջ էր սլանում։ Կայմերը դողդողում էին մինչև հիմքերը և, ծուխը մրրիկի ուժով ժայթքում էր ծխնելույզների նեղ անցքերից։

Երկրորդ անգամ շափվեց նավի արագությունը։

— Որքա՞ն է,— հարցրեց նավապետը։

— Տասնինը ամբողջ երեք տասնորդական մղոն։

— Նորի՛ց արագացնել։

Ինժենները հնազանդվեց։ Խտաշափի սլաքը ցույց էր տալիս տասը մթնոլորտ։ Բայց ըստ երևույթին հրեշը նույնպես ավելացրեց իր ընթացքի արագությունը։ Հիմա նա, առանց որևէ նկատելի ջանք թափելու, մեկ ժամում անցնում էր տասնինը ամբողջ երեք տասնորդական մղոն...

Ինչպե՛ս էինք հեռապնդում կենդանուն։ Ո՛չ, ես չեմ կարող նկարագրել իմ հուզումը։

Ես ամբողջովին դողում էի ջղայնությունից։

Նեդ Լենդը եռաժանին բռնած՝ կանգնել էր նավի առջևի մասում։

Կենդանին մի քանի անգամ թույլ տվեց, որ նավը մոտենա իրեն։

— Հասնո՛ւմ ենք, հասնո՛ւմ ենք,— գոչում էր կանադացին։

Սակայն այն րոպեին, երբ նա բարձրացնում էր ձեռքը, որպեսզի նետի եռաժանին, հրեշը հանկարծ հեռանում էր, երևի մեկ ժամում առնվազն երեսուն մղոն արագությամբ։ Այդ բավական չէր։ մենք ընթանում էինք ամենամեծ արագությամբ, նա, կարծես մեզ ծաղրելով, լայն պտույտ էր կատարում

ում մեր շուրջը։ Բոլորը կատաղության ճիչեր էին արձակում։

Կեսօրին մենք գտնվում էինք միաժամուց նույնքան հեռու, որքան առավոտյան ժամը ութին։

Այդ ժամանակ նավապետ Ֆարագուտը որոշեց ուրիշ միջոցներ գործադրել։

— Ուրեմն այդպե՞ս,— բացականչեց նա,— այդ կենդանին ավելի արագ է լողում քան «Աբրահամ Լինկո՞լնը»։ Լա՛վ։ Հապա տեսնենք, թե կարո՞ղ է նա խուսափել կոնաձև ռումբից։ Ավա՛գ նավաստի, ուղարկի՛ր հրետաձիգին առջևի թնդանոթի մո՛տ։

Թնդանոթն անմիջապես լցվեց և ուղղվեց միաժանու վրա։ Կրակոցը որոտաց, սակայն արկը թռավ կենդանուց մի քանի ոտնաչափ վերև։ Կենդանին գտնվում էր մեզանից կես մղոն հեռու։

— Թող մի ուրիշ, ավելի ճարպիկ հրետաձիգ կրակի,— գոչեց նավապետը,— ով խփի այդ անիծված արարածին, հինգ հարյուր դոլար կստանա։

Ալեհեր մորուքով մի ծեր հրետաձիգ,— ես այժմ էլ պարզ հիշում եմ նրա անդորր հայացքը և սառնարյուն դեմքը,— մոտեցավ թնդանոթին և մանրակրկիտ նշան բռնեց։ Նորից որոտաց կրակոցը, որին անմիջապես հետևեց հուժկու «ուռան»։

Արկը խփել էր կենդանուն։ Սակայն ցանկալի հետևանք չստացվեց, արկը սահեց նրա կլորաձև մարմնի վրայով ու թռավ դեպի ծովը։

— Ա՛խ, սատանա,— բացականչեց զայրացած հրետաձիգը։— մի՞թե այդ զզվելի արարածը վեց մատնաչափ հաստությամբ զրահով է պատած։

— Անե՛ծք,— գոռաց նավապետ Ֆարագուտը։

Հետապնդումը շարունակվում էր։

Մտենալով ինձ, նավապետն ասաց.

— Ես պետք է հետապնդումը շարունակեմ այնքան, մինչև որ մարտանավը հասնի։

— Ճիշտ է։— պատասխանեցի ես,— այդպես էլ հարկավոր է։

Կարելի էր հուսալ, որ կենդանին վաղ թե ուշ կհոգնի, անկարող լինելով մրցել անընդհատ աշխատող շոգեմեքենայի

հետ։ Սակայն առայժմ այդ չէր նկատվում։ Անցնում էին ժամերը, իսկ կենդանին հոգնածության ոչ մի նշան չէր ցույց տալիս։

Ի պատիվ «Աբրահամ Լինկոլնի» պետք է ասել, որ նա մեծ ծաղույն համառությամբ շարունակում էր հետապնդումը։ Իմ հաշվով նա այդ շարաթաստիկ օրը, նոյեմբերի 6-ին, անցավ առնվազն հինգ հարյուր մղոն։ Նորից իջավ գիշերը և խավարը պատեց ալեծուփ ծովը։

Այդ րոպեին ես մտածում էի, որ մեր արշավն արդեն ավարտված է, և մենք այլևս երբեք չենք տեսնի առասպելական կենդանուն։

Սակայն ես սխալվեցի։

Երեկոյան ժամը 11-ից 10 րոպե պակաս էլեկտրական փայլը նորից երևաց մարտանավից երեք մղոն հեռավորության վրա։

Միաժանին անշարժ էր թվում։ Գուցե ցերեկը հոգնել էր ու հիմա քնել ծփող ալիքներում։ Հարկավոր էր օգտվել այդ հանգամանքից, և նավապետը որոշեց էլի՛ փորձել մեր բախտը։

Նա կարգադրություն արեց։ «Աբրահամ Լինկոլնը» դանդաղ շարժվեց առաջ, ա՛յնպես, որ չզարթեցնի կենդանուն։ Օվկիանոսում հաճախ կարելի է հանդիպել խորը քնած կետերի և նեղ լենդը բաղմաթիվ կետեր է սպանել հենց նրանց քնած ժամանակ։ Կանադացին նորից տեղ գրավեց նավի առջևի մասում։

Մարտանավն անաղմուկ մոտեցավ այնքան, որ մինչև կենդանին մնում էր ընդամենը երկու կաբելտով։ Այնուհետև մեքենան կանգ առավ, և նավն իներցիայով էր շարժվում։

Նավորդները դիտում էին լարված ուշադրությամբ։ Տախտակամածում գերեզմանային լռություն էր տիրում։ Մինչև շողշողուն, ձվաձև մարմինն ընդամենը հարյուր քայլ էր մնում և նրա լույսը կուրացնում էր մեզ։

Այդ րոպեին նայելով Նեդ Լենդին ես տեսա, թե ինչպես նա բարձրացրեց իր սարսափելի զենքը։

Մարտանավն ավելի մոտեցավ անշարժ կենդանուն. ընդամենը քսան քայլ էր մնում։

Հանկարծ նեղ լենդի ձեռքը հուժկու թափով մի կիսաշրջան կատարեց օդում և թռավ եռաժանին։ Ես լսեցի բարձրաձայն մի շրխկոց, կարծես հարվածը հասել էր մի ինչ-որ կարծր մարմնի։

Էլեկտրական փայլը վայրկենապես հանգավ և ջրի երկու այուներ հանկարծակի խփեցին տախտակամածին, վայր գցելով մարդկանց և ավերելով ամեն ինչ։

Այդ հետևեց զարհուրելի մի ցնցում և ես, չկարողանալով բռնել բազրիքից, ընկա ծովը։

Չնայելով, որ դա բոլորովին անսպասելի էր, ես մի առ մի հիշում եմ այն ամենը, ինչ որ պատահեց ինձ հետ։

Սկզբում ես ջրասույզ եղա։

Ես լավ եմ լողում, թեպետ իհարկե այդ արվեստի մեջ չեմ կարող մրցել այնպիսի վարպետների հետ, ինչպիսին են Բայրոնը և Էդգար Պոն։ Ջրասույզ լինելիս ես ինձ չկորցրի։ Ոտների երկու ուժեղ շարժում կատարելով, ես դուրս եկա օվկիանոսի մակերևույթը։

Առաջին հերթին ես աչքերով փնտրեցի մարտանավը։ Արդյոք այնտեղ նկատե՞լ են իմ անհետանալը։ Արդյոք նավապետ Ֆարրագուտն ինձ որոնելու համար մակույկ ուղարկե՞լ է։ Արդյոք ես կարո՞ղ եմ փրկության հույս ունենալ։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԿՆՏԻ ԱՆՀԱՅՏ ՏԵՍԱԿԸ

Չնայած խավարին, արևելքում ես նկատեցի ինչ-որ մի սև զանգված, որը, ինչպես ցույց էին տալիս նրա վրա եղած լույսերը, հեռանում էր։ Մարտանավն էր այդ։

Հագուստս նեղում էր ինձ։ Թրջվելուց հետո այն կպչում էր մարմնիս և խանգարում շարժումներս։ Շունչս կտրվում էր։ Արդեն քիչ էր մնում, որ ջրասույզ լինեի...

— Օգնեցե՛ք։

Իմ վերջին ճիչն էր այդ։ Հուսահատված թպրտում էի, զգալով, որ ջրասույզ եմ լինում։

Հանկարծ ուժեղ մի ձեռք բռնեց իմ օձիքից և միանգամից հանեց ջրի երեսս։

Ես լսեցի հետևյալ խոսքերը, որ արտասանվեցին հենց իմ ականջի մոտ.

— Եթե պարոնը բարեհաճի հենվել իմ ուսին, նրա համար լողալն ավելի հարմար կլինի։

Ես բռնեցի ինձ հավատարիմ Կոնսելի թևից։

— Այդ դո՞ւ ես,— բացականչեցի,— դո՞ւ...

— Ես եմ որ կամ,— պատասխանեց Կոնսելը,— պատրաստ եմ ձեզ ծառայելու։

— Ուրեմն դու է՞լ ինձ նման ծովն ընկար ցնցումից։

— Ո՛չ երբեք։ Ծառայելով պարոն պրոֆեսորի մոտ, ես պարտք համարեցի հետևել նրան։

Այդ սքանչելի մարդուն բնական էր թվում իր վարմունքը։

— Իսկ մարտանա՞վը,— հարցրի ես։

— Մարտանա՞վը,— Կոնսելը կրկնեց հարցը, դառնալով մեջքի վրա,— ինձ թվում է, որ ավելի լավ կլիներ, եթե պարոնն օգնություն չսպասեր նրանից։

— Ինչո՞ւ։

— Որովհետև այն րոպեին, երբ ես ջուրը նետվեցի, հերթապահ նավաստին գոչեց՝ «Պտուտակն ու ղեկը ջարդված են»։

— Ջարդվա՞ծ են։

— Այո, ջարդված են հրեշի ատամի հարվածից։ Կարծեմ «Աբրահամ Լինկոլնը» պրծել է այդքանով։ Սակայն ափսոս, նավն այլևս չի աշխատելու։

— Ուրեմն մենք կորա՞ծ ենք։

— Հնարավոր է,— հանգիստ պատասխանեց Կոնսելը,— սակայն մեր տրամադրության տակ դեռ մի քանի ժամ կա և կարելի է շատ բան անել։

Կոնսելի անօրինակ սառնասրտությունը քաջալերեց ինձ։ Ես սկսեցի ավելի եռանդով լողալ։ Բայց հագուստս էլի խանգարում էր ինձ, չէր թողնում, որ մնամ ջրի երեսին։

Կոնսելը նկատեց այդ։

— Խնդրեմ պարոնը թույլ տա կտրատել նրա հագուստը,— ասաց նա։

Եվ նա դանակով պատռեց իմ հագուստը վերևից մինչև

ներքև կ արագ հանեց վրայից ս, իսկ ես մեզ երկուսիս պահում էի ջրի երեսին։ Իմ հերթին ես էլ նույնը արի Կոնսելի հագուստի հետ։ Այնուհետև մենք սկսեցինք լողալ կողք-կողքի։

Դրանով, սակայն, չփոխվեց մեր հուսահատական դրությունը։ Մեր անհետանալը կարող էր չնկատվել, իսկ եթե նույնիսկ նկատվեր, ղեկը և պտուտակը կորցրած մարտանավը չէր կարող ընթանալ հողմի դեմ ու որոնել մեզ։ Հետևապես մենք կարող էինք հույս դնել միայն մակույկների վրա։

Գալով այդ եզրակացության, մենք որոշեցինք որքան հնարավոր է մնալ ջրի երեսին։ Մեր ուժերը միաժամանակ չվատնելու համար որոշեցինք վարվել այսպես. մեզանից մեկը ձեռները խաչաձև պահած անշարժ կպառկի մեջքի վրա, իսկ մյուսը կլողա ու առաջ կմղի պառկածին։ Յուրաքանչյուր տասը րոպեից հետո պետք է փոխեինք մեր դերերը։ Այսպիսով մենք կարող էինք ջրի վրա մնալ մի քանի ժամ, գուցե և մինչև արևածագը։

Փրկության ինչպիսի՞ անշան հույս։ Սակայն մարդուն հատուկ է հուսալ, որքան էլ անհուսալի լինի նրա դրությունը։ Չէ՞ որ մենք երկու հոգի էինք...

Մարտանավի և միաժանու ընդհարումը տեղի ունեցավ երեկոյան ժամը մոտ տասնմեկին։ Հետևապես մինչև առավոտ մենք ութ ժամի չափ պետք է մնայինք ջրի երեսին։ Անշուշտ այդ հնարավոր էր, եթե հաճախակի փոխվեին մեր դերերը։ Երբեմն ես փորձում էի որևէ բան նկատել անթափանցելի խավարում, ուր մեր շարժումներից ալեկոծվող ջուրը ֆոսֆորային փայլ էր արձակում։ Ես նայում էի այդ առկայծող ալիքներին, որ դիպչելով իմ թևին, փշրվում էին և նրանց հայելանման մակերևույթը վայրկենապես ծածկվում էր աղոտ բծերով։ Թվում էր, թե մենք լողում էինք սնդիկային վաննայում։

Մոտավորապես գիշերվա ժամը մեկին ես մահացու հոգնածություն զգացի։ Ոտներս ու ձեռներս սաստիկ ջղաձգվում էին։

Կոնսելին վիճակվեց շարունակ օգնել ինձ և մենակ հոգալ մեր փրկության մասին։ Շուտով խեղճը սկսեց շնչել արագ և ծանր, ես հասկացա, որ նա այլևս երկար չի դիմանա մեր վիճակին։

— Թո՛ղ ինձ, թող,— ասացի ես։

— Թողնե՞մ պարոնին, երբե՛ք,— պատասխանեց իմ հավատարիմ ապասավորը,— ես հաստատ որոշել եմ ավելի շուտ խեղդվել, քան թե նա։

Այդ բոպեին լուսինը երևաց մթին ամպերի միջից, որոնց հողմը դեպի արևելք էր տանում։ Օվկիանոսի մակերևույթը պայծառացավ լուսնի շողերից։ Այդ փրկարար լույսը վերադարձրեց իմ ուժերը։ Ես բարձրացրի գլուխս և դիտեցի հորիզոնը։

Ես տեսա մարտանավը, որ գտնվում էր մեզանից հինգ մղոն հեռու։ Այդ հեռավորության վրա նա հազիվ նկատելի մի կետ էր թվում։ Ոչ մի մակույկ չէր երևում։

Ես ուզում էի ճչալ։ Բայց ինչ օգուտ, երբ իմ ճիչը տեղ չէր հասնի։ Եվ արդյոք իմ ուռած շրթունքները չէի՞ն խանգարի որևէ ձայն հանելու։ Կոնսելը դեռ կարող էր ճչալ։ Ես լսում էի, թե ինչպես կրկնում է նա...

— Օգնեցե՛ք, օգնեցե՛ք։

Մի քանի ակնթարթ կանգ առնելով, մենք ականջ դրինք։ Ի՞նչ էր այդ, ականջնե՞րս էին խաշշում արյունս գլխիս խփելուց, թե՞ իսկապես որևէ մեկը պատասխանում էր մեզ։

— Դու լսեցիր,— շշնջացի ես։

— Այո, այո՛։

Եվ Կոնսելը կրկին մի հուսահատական ճիչ արձակեց։

Այո, ո՛չ մի կասկած։ Մարդկային մի ձայն պատասխանում էր Կոնսելին։ Արդյոք պատասխանողը որևէ մի դժբախտ մա՞րդ էր, որ կորել էր անսահման օվկիանոսում, նավի ցնցման զոհ դառել մեզ նման։ Կամ գուցե խավարում անկատելի մակույկի՞ց էին մեզ ձայն տալիս։

Կոնսելը սոսկալի չափով լարեց ուժերը և հենվելով իմ ուսին,— ես էլ դրա համար լարեցի վերջին ուժերս,— կիսով չափ դուրս եկավ ջրից, սակայն ուժասպառ եղավ ու էլի վայր ընկավ։

— Ի՞նչ տեսար։

— Ես տեսա...— շշնջաց նա,— տեսա... բայց ավելի լավ է լռենք, խնայենք մեր ուժերը...

Ի՞նչ տեսավ նա։ Չգիտեմ ինչու, բայց այդ բոպեին միտքս եկավ հրեշը...

Կոնսելը շարունակում էր առաջ մղել ինձ։ Երբեմն նա բարձրացնում էր գլուխը և կանչում ինչ-որ մեկին։ Նրան անմիջապես պատասխանում էր մի ձայն, որ հեռահեռ մեղ էր մոտենում։ Բայց ես արդեն լավ չէի լսում։ Բոլորովին ուժասպառ էի եղել։ Մատներս թուլացել էին։ Չէի կարողանում հենվել ձեռներիս։ Աղի ջուրը լցվում էր ջղաձգորեն բացվող բերանս։ Ցուրտը մինչև ոսկորներս էր թափանցում։ Ես վերջին անգամ բարձրացրի գլուխս, որպեսզի հրաժեշտ տամ կյանքին...

Այդ վայրկյանին ես զգացի ինչ-որ մի կարծր մարմին։ Բռնեցի դրանից։ Հետո զգացի, որ ինձ դուրս են քաշում ջրից, որ կուրծքս շնչում է ազատ, և կորցրի գիտակցությունս։

Ինչպես երևում է, ինձ խնամող կար, որովհետև շուտով ուշքի եկա։

Աչքերս կիսով չափ բաց արի։

— Կոնսե՛լ—ՀՀնչացի ես։

— Պարոնը կանչո՞ւմ է ինձ,— իսկույն արձագանքեց Կոնսելը։

Այդ վայրկյանին, հորիզոնում թաքնվող լուսնի վերջին լույսի տակ ես տեսա մի դեմք։ Այդ Կոնսելը չէր, այլ մի ուրիշը, որ լայլ ծանոթ էր ինձ։

— Նե՛դ,— բացականչեցի ես։

— Հենց նա է որ կա, պարոն պրոֆեսոր։ Ինչպես տեսնում եք, աշխատում եմ ստանալ իմ պարգևը,— պատասխանեց կանադացին։

— Նավի ցնցման ժամանակ դուք ծո՞վն ընկաք։

— Այո, պարոն պրոֆեսոր, միայն թե իմ գործն ավելի լավ գնաց, քան ձերը,— ես համարյա անմիջապես ընկա լոգան մի կղզյակի վրա։

— Կղզյակի՞։

— Այո, կամ ավելի ճիշտ՝ ձեր վիթխարի միաժանու վրա։

— Պարզ խոսեք, Նեդ։

— Եվ միայն այստեղ ես հասկացա,—շարունակեց կանադացին,— թե ինչու իմ եռաժանին չխոցեց նրա մաշկը, այլ սահելով անցավ նրա վրայից։

— Ինչո՞ւ, Նեդ, ինչո՞ւ։

— Իրավհետև, պարոն պրոֆեսոր, այդ կենդանին ծածկված է պողպատյա սալերով։

Կանադացու խոսքերը հանկարծակի հեղաշրջում առաջ բերին իմ մտքերի մեջ։

Ես արագ վեր կացա և ուղիղ կանգնեցի կիսով չափ ջրասույզ եղած արարածի մեջքին, կամ այն առարկայի վրա, որ մենք ապատան էինք գտել։

Ոտս խփելով այդ առարկային, ես համոզվեցի, որ նա անխոցելի է ու կարծր, և ոչ թե պիրկ ու փչափուկ, ինչպես լինում է խոշոր կաթնասունների մարմինը։

Մի քանի վայրկյան ես մտածեցի, որ մենք գտնվում էինք ոսկրաշատ գանգի վրա, որը նման է անդրջրհեղեղյան կենդանիների գանգերին։ Այս դեպքում պետք էր հրեշին դասել երկկենցաղ սողունների շարքը, ինչպես, օրինակ, կրիաներին և ալիգատորներին։

Բայց ոչ։ Նրա սև մեջքը, որի վրա ես կանգնած էի, հարթ էր ու հղկված և ոչ թե թեփուկապատ։ Խփելիս նա մետաղի ձայն էր հանում և որքան էլ այդ անհավանական թվա, նա կարծես պողպատյա թերթերից էր կազմված։ Այլևս կասկածից դուրս էր, որ այն կենդանին, հրեշը, բնական ֆենոմենը, որի գաղտնիքը հուզել էր ամբողջ դիտական աշխարհը և ցնցել երկու կիսագնդերի ծովագնացների երևակայությունը, դուրս եկավ ավելի զարմանալի ֆենոմեն, որ ստեղծված էր մարդու ձեռքով։ Այդ մենք տեսնում էինք մեր սեփական աչքերով։

Եթե ես հայտնաբերեի ամենաարտառոց, ուղղակի առասպելական մի կենդանու գոյությունը, իմ զարմանքն ավելի մեծ և ավելի ցնցող չէր լինի, քան այժմ։ Որ բնությունը հրաշքներ է ստեղծում, այդ բոլորովին զարմանալի չէ։ Բայց հանկարծ տեսնել սեփական աչքերով, որ մարդը ստեղծել է հրաշք, գերբնական մի առարկա, ուղղակի գժվել կարելի է դրանից։

Այնուամենայնիվ կասկածել չէր կարելի։ Մենք գտնվում էինք մի յուրահատուկ ատորջրյա նավի վրա, որ ըստ երևույթին իր ձևով նման էր վիթխարի, պողպատե ձկան։ Նեդ Լենդն

այդ մասին արդեն հաստատուն կարծիք էր կազմել։ Ինձ և Կոնսելին մնում էր միանալ այդ կարծիքին։

— Սակայն այս դեպքում,— ասացի ես,— այդ նավը պետք է ունենա շարժիչ և ամեն տեսակ մեխանիզմներ, հետևապես պետք է լինեն նաև այդ մեխանիզմները կառավարող մարդիկ։

— Անշուշտ,— պատասխանեց Նեդ Լենդը,— բայց և այնպես, երեք ժամ գտնվելով այս լողացող կղզու վրա, ես կյանքի նշույլ անգամ չնկատեցի։

— Այս նավը չէ՞ր շարժվում։

— Ոչ, պրոֆեսոր։ Նա օրորվում է ալիքների ուժով, բայց տեղից չի շարժվում։

— Սակայն մենք լավ գիտենք, որ նա կարող է շարժվել մեծ արագությամբ։ Ու քանի որ դրա համար մեքենա և մարդիկ են հարկավոր, ես գտնում եմ, որ... մենք փրկված ենք։

— Հը՛մ,— թերահավատությամբ ասաց Նեդ Լենդը։

Այդ րոպեին, կարծես իմ խոսքերը հաստատելու համար, տարօրինակ նավի հետին կողմից լսվեց ինչ-որ խլխլթոց ու նավը շարժվեց տեղից։ Ըստ երևույթին նա շարժվում էր ինչ-որ պտուտակի միջոցով։ Մենք հապիվհապ մեզ պահեցինք ամենաբարձր տեղում՝ նավի առջևի մասում, որ ութսուն սանտիմետրի չափ բարձր էր ջրի մակերևույթից։ Բարեբախտաբար նավն այնքան էլ արագ չէր ընթանում։

— Քանի դեռ նա լողում է հորիզոնական դիրքով,— քրթմնջաց Նեդ Լենդը,— ես առարկելու ոչինչ չունեմ։ Բայց եթե նա ջրասույզ լինի, ես իմ կաշու համար երկու դոլար էլ չեմ տա։

Կանադացին կարող էր ավելի քիչ գնահատել իր կաշին։ Ակներև էր, որ մենք պետք է անհապաղ հարաբերության մեջ մտնեինք այդ լողացող ապարատի ներսում գտնվող մարդկանց հետ, ովքեր էլ որ լինեին։

Ես սկսեցի մի որևէ անցք փնտրել նավի վրա... Սակայն ոչոչպատյա թերթերն ամեն տեղ ամուր և միատեսակ ձուլված էին մեկմեկու։

Բացի դրանից, լուսինը մայր մտավ, և անթափանցելի խավարը ծածկեց ամեն ինչ։ Այդ ստորջրյա նավի մեջ մտնելու համար հարկավոր էր սպասել մինչև լուսաբաց։

Այսպես ուրեմն, մեր կյանքն ամբողջովին կախված էր նավի խորհրդավոր ղեկավարների քմահաճույքից։ Եթե նրանք ջրասույզ լինեն, մենք կորած ենք։ Իսկ եթե այդպես չլինի, անկասկած մեզ կհաջողվի նրանց հետ հարաբերության մեջ մտնել։ Եվ իսկապես, եթե նրանք նավի ներսում թթվածին չէին արտադրում, ուրեմն ժամանակ առ ժամանակ պետք է դուրս գային օդի պաշարը լրացնելու։ Այստեղից հետևում էր, որ պետք է գոյություն ունենար մի որևէ անցք, որով օդն անցներ նավի ներսը։

Մենք արդեն կորցրել էինք նավապետ Ֆարագուտի միջոցով փրկվելու հույսը։ Մի ժամում տասներկու մղոն անցնելով, մենք գնում էինք դեպի արևմուտք։ Պտուտակը համաչափ ճեղքում էր ջուրը ու երբեմն ջրի փայլուն սյուներ շպրտում դեպի վեր։

Առավոտյան ժամը մոտ չորսին նավի ընթացքն արագացավ։ Մեզ համար դժվար էր մնալ նավի վրա, մանավանդ, երբ ալիքները խփում էին մեզ։ Բարեբախտաբար Նեդը ձեռքով շոշափելիս գտավ ինչ-որ մի օղակ, և մենք բոլորս բռնեցինք այդ օղակից։

Վերջապես, անցավ այդ երկար ու ձիգ գիշերը։ Այժմ ես չեմ կարող հիշողության մեջ վերականգնել իմ բոլոր ապրումները, սակայն մի բան լավ եմ հիշում։ Երբեմն, երբ հանդարտվում էին քամու աղմուկը և ալիքների երդը, ինձ թվում էր, թե լսում եմ ինչ-որ երաժշտության ձայն, թրթռուն ակկորդներ և անավարտ մեղեդի։

Ի՞նչ գաղտնիք կար այդ ստորջրյա նավում։ Ի՞նչ տարօրինակ արարածներ էին ապրում նրա մեջ։ Այդ ի՞նչ շարժիչ էր, որի միջոցով այդչափ արագ էր ընթանում նավը։

Լուսացավ։ Առավոտյան մշուշը պատեց մեզ, հետո չքացավ։ Ես փորձեցի մանրամասն դիտել նավի այն մասերը, որ ջրից դուրս էին գտնվում, սակայն հանկարծ նա սկսեց ջրասույզ լինել։

— Հե՛յ, գրողը ձեզ տանի,— գոռաց Նեդ Լենդը և ինչքան ուժ ուներ, ոտով խփեց թնդացող մետաղին,— թողեք որ ներս գանք...

Սակայն նրա ձայնը կորավ պտուտակի հանած խլացուցիչ աղմուկում։ Բարեբախտաբար նավն այլևս ջրասույզ չեղավ։

Հանկարծ նավի ներսից լսվեց բացվող փականքների շրխկոց։ Բացվեց ինչ-որ անցքի կափարիչը և այնտեղից դուրս նայեց մի մարդ։ Նա ճչաց ու վայրկենապես չքացավ։

Մի քանի րոպեից հետո անցքից դուրս եկան ութ ածղուհա մարդիկ։ Առանց մի բառ արտասանելու նրանք մեզ տարան հանելուկային նավի ներսը։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

MOBILIS IN MOBILE[1]

Այդ գործողությունը կատարվեց կայծակի արագությամբ, այնպես որ, ոչ ես, ոչ էլ իմ ընկերները չկարողացանք նույնիսկ մի բառ ասել մեկմեկու։ Չգիտեմ թե նրանք ինչ զգացին, երբ մտան այդ լողացող բանտը, բայց ես այդ ժամանակ ինչ-որ մի սարսուռ զգացի։ Ո՞ւմ հետ գործ ունեինք։ Անկասկած նոր տեսակի ծովահենների հետ։

Հենց որ մեր հետևից փակվեց անցքի փոքրիկ կափարիչը, մեր շուրջը բոլորովին խավարեց։ Իմ աչքերը, որ ընտելացել էին ցերեկվա պայծառ լույսին, ոչինչ չէին տեսնում։ Մերկ ոտներով ես կարողանում էի շոշափել երկաթե փոքրիկ սանդուղքը։

Ինձ հետևում էին Նեդ Լենդը և Կոնսելը, որոնք նույնպես շրջապատված էին պահակներով։

Սանդուղքի ներքևում գտնվում էր մի դուռ, որը բացվեց և խկույն շրխկալով փակվեց մեր հետևից։

Մենք երեքով էինք։ Ո՞րտեղ։ Այդ ես չէի կարող ասել և նույնիսկ չէի կարող պատկերացնել։ Մեր շուրջը խավար էր, այնքան խավար, որ այնտեղ երկար ժամանակ գտնվելուց հետո աչքերս լույսի ոչ մի նշույլ չէին տեսնում։

Մինչ այս մինչ այն, Նեդ Լենդը, որ զայրացել էր այդպիսի կոպիտ վարմունքից, սկսեց թափել իր բարկությունը։

---

[1] Շարժականը՝ շարժականի մեջ (լատ.)։

— Գրո՛ղը տանի,— գոռաց նա,—ա՛յ քեզ մարդիկ, որոնք իրենց հյուրընկալությամբ չեն զիջում կալեդոնիական վայրենիներից ամենավայրենիներին։ Ո՞վ գիտե, գուցե և մարդակեր են սրանք։ Այդ ինձ ամենևին չի զարմացնի... Բայց ես վաղօրոք հայտարարում եմ, որ ով փորձի ինձ ուտել, նա կիմանա, թե ինչ է իմ բռունցքը։

— Հանգստացեք, Նեդ, հանգստացեք,— սառնարյուն հորդորում էր Կոնսելը,— չարժե վաղօրոք տաքանալ։ Կարծեմ դեռ մեզանից խորոված չեն անում։

— Համաձայն եմ, դեռ մեզանից խորոված չեն անում,— պատասխանեց կանադացին,— սակայն շշերն արդեն պատրաստում են, այո՛։ Այստեղ բավականաչափ մութն է։ Բարեբախտաբար դանակս մոտս է, և այն գործի դնելու համար ես այնքան էլ լույսի կարիք չեմ զգա։ Այդ ավազակներից հենց առաջինը, ով ինձ ձեռք տա...

— Նեդ, մի աղմկեք,— ասացի ես,— և մի բարդացնեք մեր դրությունը... Ո՞վ գիտե, գուցե նրանք լսում են մեր ասածները։ Ավելի լավ է փորձենք պարզել, թե որտեղ ենք գտնվում։

Ես զգուշությամբ մի քանի քայլ արի և հանդիպեցի մի պատի, որ ծածկված էր երկաթյա շերտով։ Այնուհետև շոշափելով գտա փայտյա մի սեղան, որի շուրջը մի քանի աթոռներ էին դրված։ Մեր բանտի հատակին խսիր էր փռված, այնպես որ քայլերի ձայնը չէր լսվում։ Ոչ լուսամուտ կար, ոչ էլ դուռ։ Կոնսելը, որ պատը շոշափելով հակառակ կողմն էր գնացել, հանդիպեց ինձ, և մենք միասին վերադարձանք սենյակի մեջտեղը։ Սենյակի երկարությունը քսան ոտնաչափ էր, լայնությունը՝ տասը։ Բարձրությունը որոշել մենք չէինք կարող, որովհետև նույնիսկ Նեդ Լենդը, չնայելով իր բարձր հասակին, չէր կարողանում ձեռքն առաստաղին հասցնել։

Անցավ մոտ կես ժամ, սակայն դրությունը չէր փոխվում։ Հանկարծ կուրացուցիչ ու պայծառ լույս վառվեց։ Իր գունեղությամբ այդ լույսը հիշեցնում էր հենց այն էլեկտրական փայլը, որ մենք նկատել էինք ստորջրյա նավի շուրջը։ Առաջին վայրկյանում ես ակամա կկոցեցի աչքերս։ Վերևին նա-

յելով ես տեսա, որ լույսը տարածվում էր առաստաղին ամրացված ինչ-որ կիսագնդաձև լապտերից։

— Վերջապե՛ս, ամեն ինչ երևում է,— բացականչեց Նեդը։

Նա կանգնել էր պաշտպանողական դիրք բռնած, դանակը ձեռքին։

— Այո,— պատասխանեցի ես ու կատակով ավելացրի,— չի երևում միայն մի բան, թե ինչ կպատահի մեզ հետ։

— Պարոնին խորհուրդ եմ տալիս զինվել համբերությամբ,— ասաց սառնասիրտ Կոնսելը։

Պայծառ լույսի շնորհիվ մենք կարողացանք մի լավ դիտել մեր բանտը։ Մի սեղան և հինգ աթոռ. ահա ամբողջ կահավորանքը։ Գաղտնի դուռը փակված էր այնպես, որ հետքն էլ չէր երևում։ Մենք ոչ մի ձայն չէինք լսում։ Կարծես ամբողջ նավում գերեզմանային լռություն էր տիրում։ Ես չէի կարողանում որոշել, արդյոք նա կանգնա՞ծ է միևնույն տեղում, շարժվո՞ւմ է արդյոք, ջրասո՞ւզ է եղել, թե՞ առաջվա պես լողում է ջրի երեսին։

Պարզ էր սակայն, որ էլեկտրական լապտերը վառվել էր ինչ-որ նպատակով։ Ես չէի կասկածում, որ նավորդներից մեկն ու մեկն իսկույն կերևա,— հո իզուր չէի՞ն լուսավորել մեր սենյակը։

Ես չսխալվեցի։ Շուտով լսվեց հետ տարվող սողնակների ձայնը, դուռը բացվեց և ներս մտան երկու հոգի։

Նրանցից մեկը կարճահասակ էր, մկանոտ, լայնաթիկունք, մեծ գլխով, խճճված, սև մազերով, երկար բեխերով և խորագրին հայացքով։ Նրա դեմքին երևում էր այն հարավային կայտառությունն ու աշխուժությունը, որ Ֆրանսիայում, օրինակ, հատուկ են պրովանսալցիներին։

Երկրորդ անձնավորությանը պետք է ավելի մանրամասն նկարագրել։ Մեծ դիմագեղեցիկների աշակերտը,— Գրասիոլեն կամ Էնգելիան,— այդ մարդու դեմքին կկարդար նրա բնավորությունը, ինչպես գրքում։ Ես առանց տատանվելու որոշեցի նրա գլխավոր հատկությունները. ինքնավստահություն,— գլուխը հպարտ, բարձր դիրք ուներ և սև աչքերը նայում էին սառը վճռականությամբ. հանգստություն,— նրա մաշկի գունա-

տությունը սառնասրտություն էր ցույց տալիս. հոանդ,— այդ երևում էր հոնքավերևի մկանների արագ սեղմվելուց. վերջապես, համարձակություն,— այդ էլ երևում էր նրա զորեղ շընչառությունից, որը նաև կենսական ուժի մեծ պաշար էր դրսևորում։ Ավելացնեմ և այն, որ այդ մարդը հպարտ էր, որ նրա անդորր ու հաստատուն հայացքը արտացոլում էր մտքերի վեհություն և որ ընդհանրապես նրա դեմքը խորն անկեղծության տպավորություն էր գործում։

Հենց որ նա ներս մտավ, ես իսկույն զգացի, որ կարելի է չանհանգստանալ մեր բախտի նկատմամբ և որ նրա հետ տեսնվելը բարեհաջող հետևանք կունենա մեզ համար։

Այդ մարդուն կարելի էր համարել երեսուն հինգից մինչև հիսուն տարեկան,— ես չկարողացա դրանից ավելի ճիշտ որոշել նրա հասակը։ Նա բարձրահասակ էր, լայնաճակատ, ուղիղ քթով, համաչափ բերանով, հիանալի ատամներով, բարակ ու գեղեցիկ ձեռներով։ Ընդհանրապես նա ներկայացնում էր տղամարդու գեղեցկության ամենակատարյալ օրինակ, ինչպիսին ես հազվագյուտ դեպքերում էի տեսել։

Զմռռանամ նաև նրա դեմքի մի յուրահատուկ, աչքի ընկնող կողմը. լայնադիր աչքերը մի հայացքով կարող էին ընդգրկել հորիզոնի առնվազն քառորդ մասը։ Այս հատկությունը, ինչպես ես հետո իմացա, լրանում էր սուր տեսողությամբ,— նա ավելի սրատես էր, քան Նեդ Լենդը։

Երբ այդ անծանոթը հայացքը հառում էր որևէ առարկայի, նրա հոնքերը մթնում էին, կոպերը մոտենում իրար՝ սահմանափակելով տեսողության դաշտը, և նրա հայացքը խորը թափանցում էր իր դիտած առարկայի մեջ։ Ինչպիսի՛ հայացք։ Նա մեծացնում էր հեռավոր առարկաները, խորանում մեր ուղեղի ամենամեծ գաղտնիքներում, թափանցում ջրերի մեջ ու կարդում ծովի խորքերում գոյություն ունեցող կյանքի մասին, ինչպես գրքում։

Երկու անծանոթները ծածկել էին ջրասամույրի մորթուց կարած գդակներ, հագել փոկի կաշուց պատրաստված երկարաճիտ, ծովային կոշիկներ։ Նրանց կոստյումները չգիտեմ ինչ կտորից էին, բայց հարմար էին, գեղեցիկ, չէին խանգարում մարմնի շարժումները։

Բարձրահասակ մարդը, որ ըստ երևույթին պետն էր, մեծագույն ուշադրությամբ նայեց մեզ, բայց ոչ մի բառ չասաց։ Ապա դառնալով դեպի իր ուղեկիցը, նա խոսեց մի լեզվով, որն անծանոթ էր ինձ։ Այդ մի հնչեղ, ճկուն, սահուն լեզու էր, որ հարուստ էր ձայնավորներով ու կայուն շեշտերով։

Մյուսը գլխով նշան արավ և իր հերթին երկու-երեք նույնքան անհասկանալի բառեր արտասանեց։

Այնուհետև պետը նայեց ինձ, կարծես ուզում էր ինչ-որ հարց տալ։

Ես մաքուր ֆրանսերենով պատասխանեցի, թե չեմ հասկանում նրա հարցը։ Սակայն նա էլ ըստ երևույթին չհասկացավ ինձ։ Դժվար դրություն էր ստեղծվում։

— Պարոնին խորհուրդ եմ տալիս պատմել մեզ հետ պատահածը, գուցե սրանք որևէ բան հասկանան,— ասաց Կոնսելը։

Ես հետևեցի այդ խորհրդին, պատմեցի մեր գլխով անցածը, շեշտելով յուրաքանչյուր բառը և բաց չթողնելով ոչ մի մանրամասնություն։ Վերջում ես թվեցի մեր անունները ու կոչումը քաղաքավարության բոլոր կանոնների համաձայն, անծանոթներին ներկայացրի պրոֆեսոր Արոնաքսին, նրա սպասավոր Կոնսելին և եռաժանի նետելու գործում վաստակավոր վարպետ Նեդ Լենդին։

Նա, որ ուներ խորը և բարի աչքեր, քաղաքավարի և ուշադրությամբ լսում էր ինձ։ Սակայն նրա դեմքը ոչինչ չէր արտահայտում, չկար որևէ նշան, թե նա գեթ մի բառ է հասկացել իմ ասածներից։

Մնում էր դիմել անգլերենի օգնության։ Թերևս այդ լեզուն, որ համարյա միջազգային է, ավելի հեշտ հասկացվի։ Անգլերեն, ինչպես և գերմաներեն, ես գիտեի այնքան, որ կարողանում էի կարդալ առանց բառարանի, բայց ազատ խոսել չէի կարող։ Մինչդեռ այստեղ հարկավոր էր հնարավորին չափ լավ խոսել։

— Այժմ հերթը ձերն է,— ասացի ես Նեդ Լենդին,— սկսեցեք, մեջտեղ բերեք ձեր անգլիական նուրբ լեզուն և աշխատեցեք ավելի լավ արդյունքի հասնել, քան ես։

Նեղը երկար սպասեցնել չտվեց և անգլերենով կրկնեց իմ ասածները։ Ավելի ճիշտ՝ նա հայտնեց իմ ասածների էությունը, սակայն բոլորովին այլ ձևով։ Կանադացին խոսում էր բավական տաքացած։ Նա կտրականապես բողոքում էր մեր վերաբերմամբ կատարված բռնության դեմ, որը, ինչպես նա արտահայտվեց, հակասում է մարդկային իրավունքներին։ Հարցնում էր, թե ի՞նչ օրենքի հիման վրա են մեզ բանտարկել այս սենյակում, դատարանով սպառնում էր նրանց, ովքեր իրեն զրկել էին ազատությունից, ձեռներով զանազան շարժումներ էր անում, գոռում և վերջիվերջո հասկացրեց, որ մենք մեռնում ենք սովից։

Այդ միանգամայն ճիշտ էր, սակայն մենք գրեթե մոռացել էինք դրա մասին։

Եռաժանու վարպետը մեծ զարմանքով համոզվեց, որ իր ճառը նույնքան քիչ էր հասկացվել, որքան և իմը։ Մեզ այցելողներն իսկի աչքերն էլ չթարթեցին։ Ակներև էր, որ նրանք Ֆարադեյի լեզուն գիտեին այնքան, որքան և Արագոյի լեզուն։

Անհաջողությունից շփոթված, սպառելով իմ լեզվագիտական պաշարը, ես չգիտեի ինչ անել։ Այդ ժամանակ Կոնսելը դիմեց ինձ։

— Եթե պարոնը թույլ կտա, ես միևնույն բանը կպատմեմ գերմաներեն։

— Ինչպե՛ս, դու խոսո՞ւմ ես գերմաներեն,— զարմացած հարցրի ես։

— Ինչպես ամեն մի ֆլամանդցի, եթե պարոնին հաճելի է գիտենալ այդ։

— Հաճելի է, հաճելի է, Կոնսել։ Շուտ արա, խոսի՛ր։

Ու Կոնսելը բոլորովին հանգիստ կրկնեց մեր արկածներին վերաբերող պատմությունը։ Սակայն, չնայելով պատմելու նուրբ ձևերին և հռետորական ճարտարության, գերմաներեն լեզուն էլ հաջողություն չունեցավ։

Վերջապես, երկար մտածելուց հետո ես կարողացա վերհիշել դպրոցական օրերը և նույն պատմությունը սկսեցի լատիներենով։ Եթե Ցիցերոնն ինձ լսեր, կփակեր ականջներն ու

ինձ կքշեր խոհանոց, բայց և այնպես, ես կարողացա վերջացնել ճառս։

Նորից նույն անբավարար հետևանքը։

Իմ վերջին անհաջող փորձից հետո անծանոթները մի քանի բառ փոխանակեցին իրենց լեզվով, որ անհասկանալի էր մեզ, ապա հեռացան, առանց մեզ պատասխանելու հանգստացուցիչ ժեստով, որը միատեսակ է բոլոր երկրներում ու բոլոր ժողովուրդների մեջ։

Դուրս գալով, նրանք փակեցին դուռը։

— Սա սորություն է,— գոռաց Նեդ Լենդը, որ արդեն քսաներորդ անգամ թափում էր իր զայրույթը,— ինչպե՛ս, նրանց հետ, այդ անկիրթների հետ խոսենք ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, լատիներեն, և ոչ մեկը ոչ մի բառով չպատասխանի՞։

— Հանգստացեք, Նեդ,— ասացի ես եռաժանու վարպետին,— բարկությունից բան դուրս չի գա։

— Բայց դուք հասկանո՞ւմ եք, պրոֆեսոր,— պատասխանեց հուզված կանադացին,— հասկանո՞ւմ եք, որ այս երկաթե վանդակում մենք սովամահ կլինենք։

— Հը՛մ,— առարկեց Կոնսելը փիլիսոփայի հանգստությամբ,— դա այնքան էլ շուտ չի լինի։

— Բարեկամնե՛ր,— ասացի ես,— չպետք է հուսահատվել։ Մենք ավելի մեծ փորձանքներ ենք տեսել։ Բարի եղեք այդքան շուտ չդատափետել այս նավի պետին և մյուս նավորդներին։ Մենք դեռ ժամանակ կունենանք նրանց մասին կարծիք կազմելու։

— Ես արդեն վերջնականապես կարծիք եմ կազմել,— հայտարարեց Նեդը,— դրանք սրիկաներ են։

— Լավ, բայց որտեղացի՞ են,— հանգիստ տոնով հարցրեց Կոնսելը։

— Սրիկաների երկրից։

— Սիրելի Նեդ, այդ երկիրը բավականաչափ պարզ չի գծված աշխարհագրական քարտեզի վրա, ուստի խոստովանում եմ, որ ինձ համար դժվար է որոշել այդ մարդկանց ազգությունը։ Կարելի է միայն համոզված ասել, որ նրանք ոչ անգլիացիներ են, ոչ էլ ֆրանսիացիներ ու գերմանացիներ։ Ես

այսպիսի տպավորություն ստացա, պետը և նրա ուղեկիցը ծնվել են մի երկրում, որը գտնվում է լայնության ցածր աստիճանների տակ, նրանց արտաքինի մեջ ինչ-որ հարավային բան կա։ Սակայն նրանց ցեղային առանձնահատկություններն այնքան պարզ չեն արտահայտված, որպեսզի հնարավոր լինի վստահությամբ ասել, թե ովքեր են նրանք,— իսպանացի՞նե՞ր, թուրքե՞ր, արաբնե՞ր, թե՞ հնդիկներ։ Նրանց լեզուն բոլորովին անծանոթ է ինձ։

— Ահա թե որքան վատ բան է բոլոր լեզուները չգիտենալը,— ասաց Կոնսելը,— ինչքա՛ն լավ կլիներ, եթե գոյություն ունենար միջազգային մի լեզու։

— Դրանից ոչինչ չէր դուրս գա,— առարկեց Նեդ Լենդը,— մի՞թե դուք չեք տեսնում, որ սրանք ունեն իրենց լեզուն, իսկ ինչի՞ համար է հնարած այդ լեզուն՝ ուտելիք խնդրող մարդկանց հոգին հանելու համար։ Ամբողջ աշխարհում, բոլոր երկրներում մարդիկ հասկանում են, թե ինչ է նշանակում բացված բերանը, ճքճքացող ատամները, շարժվող ծնոտները։ Կվեբեկում, Փարիզում, Պառմատոյում, հակոտնյանների[1] մեջ,— ամենուրեք այդ բոլորը միայն մի նշանակություն ունի՝ ես քաղցած եմ, ուտելու բան տվեք։

— Հը՛մ,— հանգիստ արձագանքեց Կոնսելը,— կա՛ն այդպիսի անհասկացող մարդիկ...

Այդ ժամանակ դուռը բացվեց ու ներս մտավ սպասավորը։ Նա մեզ համար հագուստեղեն էր բերել,— բաճկոն և շալվար, որոնք կարված էին ինձ անծանոթ՝ ինչ-որ գործվածքից։ Ես շտապեցի հագնվել։ Ընկերներս հետևեցին իմ օրինակին։

Այդ նույն ժամանակ սպասավորը, որ համր էր, գուցե և խուլ, մեզ համար սեղան պատրաստեց։

— Այ քեզ լավ բան,— ուրախացավ Կոնսելը,— չէ, գործը լավ է գնում։

— Տեսնե՛նք,— քրթմնջաց հիշաչար Նեդը,— երևակայում եմ, թե այստեղ ինչով են կերակրում,— երևի ձողաձկան լյարդով, պերկեսի սուկիով կամ ծովաշան մսից պատրաստված բիֆշտեքսով։

---

[1] Հակոտնյաներ — երկրագնդի հակադիր կետերում բնակվողներ։

— Շուտով մենք այդ կիմանանք,— պատասխանեց Կոնսելը։

Ափսեները ծածկված էին կափարիչներով ու համաչափ դասավորված սփռոցի վրա։ Մենք ոեղան նստեցինք։ Կասկած չկար, որ մենք գտնվում էինք քաղաքակիրթ մարդկանց մեջ, և եթե չլիներ էլեկտրական լուսավորությունը, կարելի էր կարծել, որ մենք գտնվում ենք Լիվերպուլի Ադելֆի հյուրանոցի ճաշարանում կամ Փարիզի Գրանդ-օթելում։

Սակայն հարկավոր է հիշատակել, որ հաց և գինի բոլորովին չկար։ Ջուրը թարմ էր ու հստակ, բայց այդ միայն ջուր էր, որ խիստ տխրեցրեց Նեդին։

Սեղանի վրա գտնվող ուտելեղենների թվում կային ձրկնեղեն կերակուրներ, որոնք շատ լավ էին պատրաստված։ Իսկ մյուս կերակուրնե՞րը։ Արդյոք մսեղե՞ն էին, թե՞ բուսեղեն,— այդ ես չէի կարող ասել։

Ճաշի ամանները չափազանց նուրբ էին ու գեղեցիկ։ Յուրաքանչյուր գդալի, պատառաքաղի, ափսեի, անձեռոցի և այլ իրերի վրա գրված էր հետևյալը.

Mobilis in mobile
N

Շարժականը շարժական միջավայրո՛ւմ,— այս նշանաբանը միանգամայն հարմար էր ստորջրյա նավին։ «N» տառն ըստ երևույթին ստորջրյա նավի հանելուկային պետի անվան սկզբնատառն էր։

Նեդ Լենդը և Կոնսելը մտքերով չէին ծանրաբեռնում իրենց։ Նրանք ուտում էին ագահությամբ։ Շուտով ես էլ հետևեցի նրանց օրինակին։ Հիմա մեր դրությունն ինձ չէր անհանգստացնում։ Ինձ համար պարզ էր, որ նավի տերերը մեզ քաղցած չեն թողնի։

Սակայն այս աշխարհում անցնում է ամեն ինչ, նույնիսկ քաղցը այն մարդկանց, որոնք տասնհինգ ժամ ոչինչ չեն կերել։ Մի լա՛վ կշտանալով, մենք զգացինք, որ քունը հաղթա-

հարում է մեզ։ Այդ միանգամայն բնական էր, քանի որ ամբողջ գիշերը մենք մաքառել էինք մահվան դեմ և խիստ հոգնել։

— Հը՛մ, ես հաճույքով կքնեի,— ասաց Կոնսելը։

— Ես արդեն քնում եմ,—հայտարարեց Նեդ Լենդը։ Իմ ուղեկիցները մեկնվեցին հատակին փռված խսիրի վրա և անմիջապես խոր քուն մտան։

Ես չէի կարող այդքան շուտ քնել։ Չափազանց շատ մրոտքեր էին պաշարել ուղեղս, չափազանց շատ, դեռ չլուծված խնդիրներ էին հուզում ինձ և բազմաթիվ դեմքեր պատկերանում իմ առաջ։ Երկար ժամանակ չէի կարողանում փակել աչքերս։ Ո՞ւրտեղ էինք մենք գտնվում։ Ի՞նչ տարօրինակ ուժ էր իշխում մեզ վրա։ Ես զգում էի, ավելի ճիշտ ինձ թվում էր, որ զգում էի, թե նավը սուզվում է օվկիանոսի խորքերը։ Մրջնավանջները հալածում էին ինձ։ Այդ խորհրդավոր անդունդներում, իմ աչքի առջև երևում էր անհայտ կենդանիների մի ամբողջ աշխարհ, կենդանիներ, որոնք կարծես հարազատ էին այդ ստորջրյա նավին, նրա պես վիթխարի էին, նրա պես արագաշարժ և ուժեղ։

Բայց շուտով այդ պատկերներն աղոտացան, ուղեղս ընկղմվեց նիրհի մշուշի մեջ, ու ես քնեցի։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՆԵԴ ԼԵՆԴԸ ՎՐԴՈՎՎԱԾ Է

Չգիտեմ որքան տևեց իմ քունը։ Սակայն, ըստ երևույթին երկար էի քնել, որովհետև արթնանալով, ինձ զգացի բոլորովին թարմացած ու կայտառ։

Առաջինը ես արթնացա։ Իմ ընկերները դեռ խորը քնած էին։

Վեր կենալով իմ բավականաչափ կոշտ տեղից, զգալով, որ ուղեղս հանգստացել է ու վերստին ընդունակ է կանոնավոր աշխատելու, ես ամենից առաջ զբաղվեցի մեր նավասենյակի ամենաուշադիր ուսումնասիրությամբ։

Մեր քնած ժամանակ այնտեղ ոչինչ չէր փոխվել։ Բանը մնացել էր բանտ և կալանավորները—կալանավորներ։ Սպասավորը կամացուկ հավաքել էր սեղանը։ Այսպիսով չկար մեր բախտի փոփոխության որևէ նշան, ու ես անհանգստացած հարցնում էի ինձ, թե արդյոք մենք մշտապես չե՞նք արգելափակվել այդ վանդակում։

Այդ հեռանկարն ինձ մռայլ թվաց, մանավանդ որ թեև ուղեղս ազատվել էր երեկվա մղձավանջներից, բայց կուրծքս ինչ-որ բան էր ճնշում։ Դժվար էր շնչել։ Խեղդուկ օդը խանգարում էր Թոքերիս նորմալ աշխատանքը։ Չնայելով, որ նավասենյակը փոքր չէր, մենք ըստ երևույթին արդեն կլանել էինք օդում եղած թթվածնի մեծ մասը։ Հիրավի, մի ժամում մարդուս շնչառության համար այնքան թթվածին է ծախսվում, որքան պարունակվում է հարյուր լիտր օդում։ Եվ այդ օդը, հավասարաչափ քանակությամբ ածխաթթվով հագեցած, անպետք է լինում շնչառության համար։

Այսպիսով հարկավոր էր շտապ կարգով թարմացնել մեր բանտի, գուցե և ամբողջ ատրջրյա նավի օդը։

Հարց էր ծագում, թե նման դեպքերում ի՞նչ է անում ատրջրյա նավի հրամանատարը։ Արդյոք նա քիմիական միջոցո՞վ է թթվածին ստանում, շիկացնելով բերտոլետյան աղը։ Այս դեպքում նա իհարկե պետք է կապ պահի ցամաքի հետ, որպեսզի լրացնի աղի պաշարը։ Գուցե նա բավականանում է նրանով, որ օդը խտացնում է հատուկ տեղերում և ապա օգտագործում է հետզհետե։ Կարող է և այդպես լինել։ Գուցե, վերջապես, յուրաքանչյուր քսանչորս ժամը մեկ անգամ նա դուրս է գալիս նավից և օդի պաշար է վերցնում։

Բայց այդ միջոցներից որն էլ որ նա գործադրելիս լիներ, իմ կարծիքով ժամանակն էր թարմացնել մեր բանտի օդը։

Ես արդեն ստիպված էի երկու անգամ ավելի արագ շընչել, որպեսզի ներշնչեի Թոքերիս համար անհրաժեշտ օդը։ Հանկարծ նավասենյակը լցվեց թարմ օդի մի հոսանք, որից աղի հոտ էր գալիս։ Այդ ծովային քամի էր, որը զովացուցիչ էր ու յոդով հագեցված։ Ես լայն բաց արի բերանս և ագահությամբ կլանում էի օդը։ Այդ նույն րոպեին նավը սկսեց օրորվել, ճիշտ է, ոչ ուժեղ, սակայն բավականաչափ զգալի։ Պարզ

էր, որ սառրջրյա նավը, այդ երկաթե հրեշը կետի նման բարձրացել էր օվկիանոսի մակերևույթը, որպեսզի մաքուր օդ վերցներ։

Այսպիսով միանգամայն պարզվեց, թե նավում ինչպես է տեղի ունենում օդափոխությունը։

Մի լավ ծծելով օդը, ես սկսեցի փնտրել այն անցքը, որտեղից ներս էր լցվել կենսապարար գազը։ Առանց դժվարության ես գտա այդ անցքը, որ գտնվում էր դուռն վերևում։

Հենց այդ րոպեին Նեդը և Կոնսելը գրեթե միաժամանակ արթնացան։ Նրանք տրորեցին աչքերը, ձգվեցին ու վեր կացան։

— Ինչպե՞ս քնեց պարոնը,— հարցրեց Կոնսելն իր սովորական քաղաքավարությամբ։

— Շատ լավ, սիրելիս,— պատասխանեցի ես,— իսկ դո՞ւք, Նեդ։

— Մեռածի պես էի քնել, պարոն պրոֆեսոր։ Այս ի՞նչ է, կարծես ծովի շունչն եմ զգում։

Ես պատմեցի կանադացուն, թե ինչ էր կատարվել նրա քնած ժամանակ։

— Այդպե՞ս,— ասաց նա,— դրանով հրաշալի բացատրվում է այն տարօրինակ բառաշոցը, որ մենք լսեցինք այն ժամանակ, երբ «միաժանին» երևում էր «Աբրահամ Լինկոլնից»։

— Ճիշտ է, Նեդ, այդ նա էր «շնչում»։

— Գիտե՞ք ինչ, պարոն պրոֆեսոր, ես ոչ մի կերպ չեմ կարողանում պատկերացնել, թե ժամը քանիսն է հիմա։ Ճաշելու ժամանակը չէ՞ արդյոք։

— Ճաշելու ժամանա՞կը։ Երևի դուք ուզում էիք նախաճաշի մասին հարցնել, Նեդ, չէ՞ որ մի ամբողջ օր ու գիշեր մենք քնած ենք եղել։

— Չեմ վիճի ձեզ հետ,— պատասխանեց Նեդ Լենդը,— սակայն ես գրկաբաց կընդունեմ սպասավորին, ինչ էլ որ նա բերի, ճաշ, թե նախաճաշ։

— Մանավանդ եթե նա բերի թե մեկը և թե մյուսը,— ավելացրեց Կոնսելը։

— Ճիշտ է,— ասաց կանադացին,— մենք իրավունք ու-

նենք ստանալու թե մեկը և թե մյուսը։ Անձամբ ես դեմ չեմ պատվով ընդունելու թե նախաճաշը և թե ճաշը։

— Կապասենք, Նեդ,— ասացի ես,— պարզ է, որ այդ մարդիկ մտադիր չեն մեզ քաղցած թողնել, այլապես ինչո՞ւ պետք է երեկ ճաշ տային։

— Գուցե նրանք ուզում են մեզ կերակրել, շաղացնել հետո մորթել,— առարկեց Նեդը։

— Ո՛չ, Նեդ, արդարացի եղեք։ Մի՞թե իսկապես դուք կարծում եք, որ մենք սովորական մարդակերների ճանկն ենք ընկել։

— Մի անգամ մարդ ուտելը սովորություն չէ,— լուրջ պատասխանեց կանադացին,— ո՞վ գիտե, գուցե այդ մարդիկ վաղուց թարմ միս չեն կերել... Իսկ այդ դեպքում երեք առողջ, լավ կազմվածքով և գիրուկ մարդ, ինչպես պարոն պրոֆեսորն է, նրա սպասավորն ու ես...

— Բավական է, Նեդ,— ընդհատեցի ես կանադացուն,— հրաժարվեցեք այդ մտքերից։ Գլխավորը՝ չլինի թե այդպես խոսեք մեր տերերի հետ, դրանով կարող է վատթարանալ մեր դրությունը։

— Ինչևիցե,— ասաց Նեդ Լենդը,— բայց ես քաղցած եմ շան պես, իսկ մեզ նախաճաշ կամ ճաշ չեն բերում։

— Սիրելի Նեդ, մենք պետք է ենթարկվենք այստեղ գոյություն ունեցող կարգերին։ Ես կարծում եմ, որ մեր ստամոքսներն ավելի են շտապում, քան նավի խոհարարի ժամացույցը։

— Ի՛նչ արած,— ստամոքսներիս սլաքը հետ կտանենք և ամեն ինչ կարգին կլինի,— հանգիստ ասաց Կոնսելը։

— Դրանով էլ ճանաչիր քեզ, Կոնսել,— ասաց անհամբեր կանադացին,— դուք, ինչպես միշտ, պահպանում եք ձեր ջղերը։ Ի՛նչ հանգիստ մարդ եք եղել։ Դուք պատրաստ եք ավելի շուտ քաղցից մեռնելու, քան բողոքելու։

— Բողոքելս ո՞ւմ է։ Միևնույն է, դրանից բան չի դուրս գա։

— Ինչպե՛ս թե բան չի դուրս գա։ Չէ՞ որ հենց միայն բողոքը թեթևացնում է մարդու սիրտը։ Իսկ եթե այդ ծովահենները,— ես նրանց ծովահեններ եմ անվանում միմիայն պա-

րոն պրոֆեսորին հարգելու համար, որն արգելում է նրանց մարդակեր անվանել,— եթե, ասում եմ, այդ ծովահենները կարծում են, որ ես լռությամբ թույլ կտամ պահել ինձ այս որջում, ուր ես շնչասպառ եմ լինում, և նույնիսկ չեմ ծանոթացնի նրանց իմ հայհոյանքների ռեպերտուարի հետ, ապա նրանք շարաշար սխալվում են։ Լսեցեք, պարոն պրոֆեսոր, ասացեք անկեղծությամբ, ձեր կարծիքով նրանք մեզ երկա՞ր պիտի պահեն այս վանդակում։

— Ճիշտն ասած, Նեդ, ես այդ մասին գիտեմ այնքան, որքան և դուք։

— Բայց այդ առթիվ դուք ի՞նչ եք մտածում։

— Ես մտածում եմ, որ մենք պատահմամբ իմացել ենք մի կարևոր գաղտնիք։ Եթե ստորջրյա նավի անձնակազմը շահագրգռված է այդ գաղտնիքի պահպանությամբ, և այդ շահագրգռվածությունն ավելի կարևոր է, քան երեք մարդու կյանքը, ապա մեզ լուրջ վտանգ է սպառնում։ Հակառակ դեպքում այս «հրեշը», որ կլանել է մեզ հենց առաջին հարմար դեպքում կվերադարձնի այն աշխարհը, որտեղ մեզ նման մարդիկ են բնակվում։

— Կամ թե չէ մեզ կընդունեն նավախումբը,— ավելացրեց Կոնսելը,— և կթողնեն այստեղ...

— Այնքան ժամանակ,— վերջացրեց նրա նախադասությունը Նեդ Լենդը,— մինչև որ «Աբրահամ Լինկոլնից» ավելի արագընթաց և ավելի զորեղ մի մարտանավ կգրավի այս ավազակային բունը և ամբողջ նավակազմը մեզ հետ միասին կբարձրացնի միջնակայմի ծայրը։

— Խելացի դիտողություն ես անում Նեդ,— ասացի ես,— սակայն, որքան հայտնի է ինձ, նման առաջարկներ առայժմ մեզ ոչ ոք չի արել։ Այս պատճառով շարժե քննարկել, թե տվյալ դեպքում մենք ինչպես պիտի վարվենք։ Կրկնում եմ, զինվե՛նք համբերությամբ, սպասենք, հաշվի առնենք հանգամանքները և առայժմ ոչինչ չանենք, որովհետև միևնույն է, ոչինչ չենք կարող անել։

— Ընդհակառակը,— առարկեց համառ կանադացին, որ չէր ուզում պարտվել,— անհրաժեշտ է որևէ քայլ անել։

— Բայց ի՞նչ քայլ, Նեդ։

— Ազատվե՛լ։

— Խավար բանտից փախչել չափազանց դժվար է, իսկ ստորջրյա բանտից փրկվելը բոլորովին անկարելի,— առարկեցի ես։

— Հը՛, սիրելի Նեդ,— ասաց Կոնսելը,— ի՞նչ կարող եք պատասխանել պարոնի դիտողության։ Ես գիտեմ, որ ամերիկացիք խոսքի տակ չեն մնա։

Նեդ Լենդը լռում էր շփոթված։ Այն պայմաններում, որոնց մեջ մենք գտնվում էինք, իրոք որ անկարելի էր փախչել։ Սակայն կանադացին կիսով չափ ֆրանսիացի է։ Նեդ Լենդն այդ ապացուցեց իր պատասխանով։

— Պարոն պրոֆեսոր,— ասաց նա մի քանի րոպե մտածելուց հետո,— դուք չգիտե՞ք թե ինչ պետք է անեն այն մարդիկ, որոնք չեն կարող փախչել բանտից։

— Ոչ, բարեկամս։

— Բայց չէ՞ որ դա պարզ է միանգամայն։ Նրանք հարմարվում են այնպես, որ բանտում մնալը հաճելի լինի...

— Իհարկե,— ասաց Կոնսելը,— ավելի լավ է գտնվել ստորջրյա բանտի մեջ, քան նրա տակը կամ վրան։

— Սակայն հարկավոր է վաղօրոք դուրս շպրտել բանտապահներին, դռնապաններին ու պահապաններին,— ավելացրեց Նեդ Լենդը։

— Ի՞նչ եք ասում, Նեդ, մի՞թե դուք լուրջ մտածում եք տիրանալ այս նավին։

— Բոլորովին լուրջ,— պատասխանեց կանադացին։

— Այդ անկարելի է։

— Ինչո՞ւ, պրոֆեսոր։ Կարելի է, եթե դրա համար հարմար առիթ լինի։ Եվ ինչո՞ւ չօգտվել այդպիսի առիթից։ Իմ կարծիքով այս նավում քսան հոգուց ավելի չեն լինի։ Այդքան մարդիկ չեն կարող հաղթահարել երկու ֆրանսիացու և մեկ կանադացու։

Ավելի լավ էր լռության մատնել կանադացու առաջարկը, քան թե վեճի բռնվել նրա հետ։ Ուստի ես սահմանափակվեցի հետևյալ խոսքերով.

— Սպասենք այդ առիթին, Նեդ, հետո կտեսնենք։ Իսկ մինչ այդ խնդրում եմ զսպել ձեր անհամբերությունը։ Այս-

տեղ կարելի է գործել միայն խորամանկությամբ, իսկ ձեր տաքարյուն լինելն այնքան էլ չի նպաստում հարմար առիթի կանալու սպասել այդ առիթին։

— Ես այդ խոստանում եմ ձեզ, պարոն պրոֆեսոր,— պատասխանեց Նեդ Լենդը ոչ այնքան վստահ ձայնով,— դուք ինձանից ոչ մի կոպիտ խոսք չեք լսի, ոչ մի կտրուկ ժեստ չեք տեսնի,— եթե նույնիսկ մեզ ուտելիք չմատուցվի այնպես, ինչպես ցանկալի ենք համարում։

— Հիշեցնեք ձեր խոսքը, Նեդ,— պատասխանեցի ես կանադացուն։

Խոսակցությունը դադարեց, և բոլորս մտածմունքի մեջ ընկանք։ Ինչ վերաբերում է ինձ, ես պետք է խոստովանեմ, որ չնայելով եռաժանու վարպետի բոլոր հավաստիացումներին, ոչնչի վրա հույս չէի դնում։ Ես հնարավոր չէի համարում և ոչ մի երջանիկ պատահականություն, որի մասին խոսում էր Նեդ Լենդը։ Կասկած չկար, որ ստորջրյա նավն ուներ բազմաքանակ անձնակազմ, հետևապես, կռվելու դեպքում մենք պետք է գործ ունենայինք բավականաչափ ուժեղ մի թշնամու հետ։ Սակայն Նեդ Լենդի պլանն իրագործելու մասին լուրջ մտածելու համար ամենից առաջ հարկավոր էր, որ մենք ազատ լինեինք, մինչդեռ մենք գերի էինք։ Ես ոչ մի հնարավորություն չէի տեսնում այդ երկաթե, հերմետիկորեն փակված վանդակից ազատվելու համար։ Եվ եթե նավի տարօրինակ պետը ինչ-որ գաղտնիք էր պահում,— մի բան, որ շատ հավանական էր,— նա չի թույլ տա, որ մենք անարգել շրջենք իր նավի մեջ։ Արդյոք նա շուտով կազատվի՞ մեզնից, թե հետագայում կթողնի մի կտոր անբնակ հողի վրա,— այդ բոլորովին անհայտ էր։ Բոլոր ենթադրություններն ինձ միանգամայն հավանական էին թվում և նման պայմաններում ազատության հույս ունենալու համար հարկավոր էր միայն Նեդ Լենդ լինել։ Ես հասկանում էի, որ Նեդ Լենդն ինչքան շատ մտածի, այնքան շատ կջղայնանա։ Ես արդեն զգում էի, որ նա պատրաստ է թափելու իր բարկությունը և տեսնում էի, որ նրա շարժումները հետզհետե ավելի սպառնական են դառնում։ Նա ետ ու առաջ էր վազում ինչպես վայրի գազանը վանդակում, և ստա-

ներով ու բռունցքներով խփում էր պատերին։ Ժամանակն անցնում էր, քաղցը շարաչար կերպով ղժալ էր տալիս իրեն, իսկ սպասավորը դեռ չէր երևում։ Այդ անուշադիր վերաբերմունքը ոչ մի լավ բան չէր խոստանում մեզ, դժբախտ պատահարի ենթարկվածներիս։ Նեդ Լենդը ջղաձգված տանջվում էր սովից և ավելի ու ավելի զայրանում։ Չնայելով նրա խոսումին, ես վախենում էի, որ նավորդներից որևէ մեկի երևալու դեպքում կպայթի նրա բարկությունը։

Հետևյալ երկու ժամվա ընթացքում Նեդ Լենդի ցասումն ավելի սաստկացավ։ Կանադացին կանչում էր, ճչում, բայց իզո՞ւր։ Լռում էին երկաթե պատերը։ Ես ոչ մի շշուկ չէի լսում այդ նավի մեջ, որը կարծես բոլորովին մեռած էր։ Նա կանգնած էր միևնույն տեղում, այլապես մենք կզգայինք, որ երերվում է պտուտակի շարժումներից։ Ընկղմված լինելով ջրային անդունդը, նավն այլևս չէր պատկանում երկրին։ Զարհուրելի էր այդ լռությունը։

Ես վախենում էի նույնիսկ մտածել, թե մենք որքան ժամանակ պետք է բանտարկված լինենք այդ երկաթե վանդակում։

Այն հույսերը, որ իմ մեջ ծագել էին նավապետի հետ տեսնվելուց հետո, հետզհետե չքացան։ Փաղաքշական հայացք, դեմքի պարզ արտահայտություն, հիանալի կեցվածք,— այս ամենը ջնջվեց իմ հիշողությունից։ Այդ հանելուկային մարդուն ես պատկերացնում էի այնպես, ինչպես իրոք նա կար,— դաժան և անգութ։ Ես նրան պատկերացնում էի մարդկայնությունից զերծ, կարեկցության զգացումից զուրկ, մարդկանց անհաշտ թշնամի, այնպիսի մեկը, որ երդվել էր մշտապես ատել նրանց։ Սակայն մի՞թե այդ մարդը թույլ կտա, որ մենք քայքայվենք ու մեռնենք այս նեղ բանտում, ենթակա լինելով այդ զարհուրելի գայթակղություններին, որոնք հաղթահարում են սովատանջ մարդուն։ Այս ծանր միտքը մի վայրկյան անգամ հանգիստ չէր տալիս ինձ։ Ես սարսափում էի։ Կոնսելը հանգիստ էր մնում։ Նեդն ավելի և ավելի էր տաքանում։

Այդ վայրկյանին պատի հետևից ձայներ լսվեցին։ Ոտնաձայներն արձագանքվում էին մեռաղյա պատերում։ Սողնակի ճռռոց։ Դուռը բացվեց ու երևաց սպասավորը։

Կանադացին հարձակվեց այդ դժբախտի վրա, գցեց հատակին ու բռնեց կոկորդից, այնպես որ ես նույնիսկ չկարողացա միջամտել։ Սպասավորը շնչասպառ էր լինում կանադացու ուժեղ ձեռներում։

Կոնսելը փորձում էր ազատել կանադացու զոհին, որ արդեն խեղդված էր կիսով չափ, ես էլ պատրաստվում էի իմ ջանքերը միացնել Կոնսելի ջանքերին, երբ հանկարծ տեղումս քարացա, լսելով հետևյալ ֆրանսերեն խոսքերը.

— Հանգստացեք, միստր Լենդ, դուք է՛լ, պարոն պրոֆեսոր։ Խնդրեմ լսեք ինձ։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԱՆԴՈՒՆԴԻ ՄԱՐԴԸ

Այդ ասողը նավապետն էր։

Նեդ Լենդը մի ակնթարթում վեր թռավ։ Սպասավորը, որը քիչ էր մնում խեղդվեր, ենթարկվեց իր տիրոջ հրամանին և օրորվելով դուրս գնաց նավասենյակից։ Եվ չնայելով, որ նավապետն իշխող դեր էր կատարում այնտեղ, ոչնչով չարտահայտեց այն ատելությունը, որ անշուշտ պետք է տածեր դեպի կանադացին։ Ես ու Կոնսելն ապշած սպասում էինք, թե ինչով պիտի վերջանա այդ տեսարանը։

Նավապետը ձեռները կրծքին խաչած, խորին ուշադրությամբ նայում էր մեզ։ Գուցե նա չէ՞ր ցանկանում խոսել։ Գուցե ափսոսո՞ւմ էր, որ ֆրանսերեն մի քանի բառ է արտասանել։ Այդ շատ հավանական էր։

Մի քանի վայրկյան տիրեց լռություն, որը մեզանից ոչ ոք չէր խախտում։

— Պարոննե՛ր,— վերջապես, ասաց նավապետը,— ես բոլորովին ազատ խոսում են ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն ու լատիներեն։ Հետևապես, հենց մեր առաջին հանդիպումին կարող էի պատասխանել ձեզ։ Սակայն ես ուզում էի նախ՝ դիտել ձեզ, մտածել ձեր մասին։ Դուք բոլորդ մեկմեկ պատմեցիք ինձ միևնույն բանը, այդ միանգամայն հա-

մոգեց ինձ, որ դուք հենց այնպիսի մարդիկ եք, ինչպիսին ցույց եք տալիս ձեզ։ Հիմա ես գիտեմ, որ առիթ եմ ունեցել հանդիպելու պարոն Պյեր Արոնաքսի, Փարիզի թանգարանի բնապատմության պրոֆեսորի հետ, որը գիտական միսիայով ուղարկվել է արտասահման, ապա նրա սպասավոր Կոնսելի և կանադացի Նեդ Լենդի, «Աբրահամ Լինկոլն» մարտանավի եռաժանի նետողի հետ, իսկ այդ մարտանավը մտնում է Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների ռազմական նավատորմիղի կազմի մեջ։

Ես գլխով համաձայնության նշան արի։ Նավապետն ինձ հարց չէր տալիս, հետևապես պատասխան էլ չէր պահանջվում։ Այդ մարդը ֆրանսերեն խոսում էր բոլորովին մաքուր, առանց ամենաչնչին օտար շեշտադրության։ Նրա արտասանությունն անթերի էր, բառերը՝ ճիշտ, խոսվածքը՝ թեթև ու անբռնաղատ։ Չնայելով այդ բոլորին, ես չէի զգում, որ նա կարող է իմ հայրենակիցը լինել։

Նա շարունակեց իր ճառը.

— Իհարկե դուք դժգոհ եք, պարոններ, որ մի քիչ ուշացավ իմ երկրորդ այցելությունը։ Սակայն երբ ես իմացա ձեր ով լինելը, պետք է կշռադատեի, թե ինչպես վարվեմ ձեզ հետ։ Երկար ժամանակ ես տատանվում էի։ Վրդովեցուցիչ հանգամանքները մեզ հանդիպեցրին իրար, մինչդեռ ես մի մարդ եմ, որը խզել է իր կապն ամբողջ մարդկության հետ։ Դուք խախտեցիք իմ առանձնությունը...

— Մեր կամքից անկախ,— ասացի ես։

— Ձեր կամքից անկա՞խ,— ձայնը բարձրացնելով կրկնեց անծանոթը,— մի՞թե «Աբրահամ Լինկոլնը» աննպատակ էր ոռոնում ինձ բոլոր ծովերում։ Մի՞թե ակամա դուք ձեռնարկեցիք ձեր ճանապարհորդությունն այդ մարտանավով։ Մի՞թե ձեր ոռմբերն աննպատակ էին խփում իմ նավին։ Հապա Լե՞նդը, նա է՞լ աննպատակ էր խփում ինձ եռաժանիով։

Ես նավապետի խոսքերում զսպված բարկություն զգացի։ Սակայն այդ բոլոր կշտամբանքներին ես ունեի բոլորովին բնական մի պատասխան։

— Պարոն,— ասացի ես,— անկասկած ձեզ հայտնի չեն այն վեճերը, որ դուք առաջացրել եք Ամերիկայում ու Եվրո-

պայում։ Դուք չգիտեք, որ մի շարք պատահարներ առաջացել են ձեր ստորջրյա նավի և ուրիշ նավերի ընդհարումից և երկու մայր ցամաքներում հուզել են հասարակական կարծիքը։ Ես կարող եմ թվել անհամար ենթադրություններ՝ այս առեղծվածը լուծելու փորձեր, իսկ այդ լուծման հնարավորությունը միայն ձեզ է հայտնի։ Սակայն իմացեք, որ հետապնդելով ձեզ մինչև խաղաղ օվկիանոսի ամենահեռավոր մասերը, «Լաբրահամ Լինկոլնը» հավատացած էր, թե հետապնդում է ինչոր մի հզոր ծովային հրեշի, որից պետք է փրկեր ծովերն ինչգնով էլ լիներ։

Ժպիտի պես մի բան երևաց Նավապետի դեմքին։

Նա ավելի հանգիստ տոնով ասաց.

— Պարոն Արոնաքս, արդյոք դուք կհամարձակվե՞ք պնդել, որ ձեր մարտանավը կարող էր չհետապնդել և չռմբակոծել ստորջրյա նավը, ճիշտ այնպես, ինչպես և ծովային հրեշին։

Այս հարցը շփոթեցրեց ինձ, որովհետև Նավապետ Ֆարրագուտն իրոք որ առանց տատանվելու կաներ այդ։ Նա պարտք կհամարեր ոչնչացնել ստորջրյա նավը, ինչպես և վիթխարի միաժանուն։ Ես ոչինչ չպատասխանեցի։

Նավապետը շարունակեց.

— Այսպե՛ս ուրեմն, դուք հասկանում եք, որ ես իրավունք ունեմ ձեզ հետ վարվել ինչպես թշնամիների հետ։

Ես կրկին լուռ էի, այն էլ բոլորովին դիտակցաբար։ Ի՞նչ կարիք կա քննարկել նման հարցերը, երբ ուժը կարող է ոչընչացնել ձեր լավագույն ապացույցները։

— Երկար ժամանակ ես տատանվում էի,— շարունակեց Նավապետը,— ինձ ոչինչ չէր պարտավորեցնում հյուրասեր լինել։ Եթե որոշած լինեի ազատվել ձեզնից, այլևս անիմաստ կլիներ մի անգամ ևս տեսնվել ձեզ հետ։ Ես կարող էի ձեզ դուրս անել նավից, խորասուզել ծովի մեջ և... մոռանալ, որ դուք երբևէ գոյություն եք ունեցել։ Մի՞թե ես այդպիսի իրավունք չէի ունենա։

— Այդ կլիներ վայրենու և ոչ թե կուլտուրական մարդու իրավունք,— պատասխանեցի ես։

— Պարոն պրոֆեսոր,— աշխուժությամբ առարկեց նավապետը,— ես չգիտեմ, թե դուք ինչն եք անվանում «կուլտուրական մարդու իրավունք»։ Հասարակության հետ ես իմ կապերը խզել եմ մի շարք պատճառներով, որոնց լրջության մասին միայն ես իրավունք ունեմ դատելու։ Ես չեմ ենթարկվում նրա օրենքներին և առաջարկում եմ ձեզ դրանց մասին երբեք չհիշեցնել ինձ։

Այդ ասված էր խիստ կտրուկ։ Անհայտ մարդու աչքերը վառվեցին բարկությամբ ու արհամարհանքով։ Այդ ակնթարթում ես մտածեցի, որ անծանոթ մարդու անցյալում ինչ-որ սարսափելի բան է պատահել։ Իզուր չէ, որ նա իրեն բարձր է դասում օրենքներից, առանձնացել է մարդկությանն անմատչելի տեղերում, անկախ է դարձել այդ բառի ամենալայն իմաստով։

Ո՞վ կհամարձակվի նրան հետապնդել ծովի խորքերում, երբ նույնիսկ ծովի վրա նա հեշտությամբ ջախջախում էր իրեն դեմ պայքարելու ամեն մի փորձ։ Ո՞ր նավը կարող է դիմադրել նրա ստորջրյա զրահանավին։ Ո՞ր նավի զրահը կլինի այնքան ամուր, որպեսզի դիմանա նրա սարսափելի ժանիքի հարվածներին։ Աշխարհումս ոչ ոք չի կարող նրանից հաշիվ պահանջել իր գործողությունների համար։

Այսպիսի մտքեր էին պաշարել ուղեղս այն ժամանակ, երբ այդ տարօրինակ մարդը ետ ու առաջ էր քայլում, նույնպես մտքերի մեջ խորասուզված։ Հետաքրքրության ու սարսափի խառը զգացմունքով ես նայում էի նրան։

Երկար լռելուց հետո նավապետը սկսեց խոսել։

— Այսպես ուրեմն, ես տատանվում էի,— շարունակեց նա,— սակայն ես մտածեցի, որ իմ շահերը կարելի է համատեղել բնական կարեկցության հետ, որին արժանի է յուրաքանչյուր մարդկային արարած։ Քանի որ դեպքերի բերմամբ դուք ընկել եք այստեղ, կմնաք իմ նավում։ Դուք ազատ կլինեք և այդ ազատության համար,— որ սակայն խիստ սահմանափակ է,— դուք պետք է համաձայնվեք միայն մի պայմանի։ Եթե դուք խոստանում եք ենթարկվել այդ պայմանին, ես միանգամայն բավարարված կլինեմ։

— Խոսեցեք, նավապետ,— ասացի ես,— հույս ունեմ ձեզանից լսել այնպիսի մի պայման, որն ընդունելի կլինի ազնիվ մարդու համար։

— Անկասկա՛ծ։ Ահա իմ առաջարկը։ Հնարավոր է, որ մի քանի շնախատեսված հանգամանքներ ինձ ստիպեն մեր նավասենյակներում ձեզ փակված պահել մի քանի ժամ, գուցե և մի քանի օր, հիմա այդ դժվար է որոշել։ Չցանկանալով ոչ մի դեպքում դիմել բռնության, ես ուզում եմ ձեզնից խոստում ստանալ, որ դուք անպայման կհնազանդվեք այդպիսի դեպքերում։ Առաջարկելով ձեզ, ես ամբողջովին ազատում եմ ձեզ այն պատասխանատվությունից, որ դուք պիտի կրեիք այս կամ այն դեպքի համար, քանի որ դուք հնարավորություն չեք ունենա տեսնելու այն, ինչ որ չպետք է դիտենաք։ Ընդունո՞ւմ եք այս պայմանը։

Ուրեմն ստորջրյա նավում երբեմն տեղի էին ունենում այնպիսի դեպքեր, որոնք նույնիսկ անհայտ պիտի լինեին մարդկային օրենքներից մեկուսացածներին։ Սպասվող անակնկալներից դա ամենաանհաճելին էր ինձ համար։

— Ընդունում ենք,— պատասխանեցի ես,— միայն թե... թույլ տվեք, նավապետ, մի հարց տալ ձեզ։

— Խնդրեմ։

— Դուք ասացիք, որ մենք նավի մեջ ազատ կլինենք։

— Այո, միանգամայն։

— Ես խնդրում եմ բացատրել, թե այդ ինչպես պիտի հասկանալ։

— Դուք կարող եք շրջել ամբողջ նավում, տեսնել, դիտել այն ամենն, ինչ որ կատարվում է այստեղ, չնչին բացառություններով։ Մի խոսքով, լինել նույնքան ազատ, որքան ես և իմ ուղեկիցները։

Պարզ էր, որ մենք չենք հասկացել իրար։

— Ներեցեք, նավապետ,— ասացի ես,— բայց այդպիսի ազատություն կարող է ունենալ նաև կալանավորը, որին թույլատրվում է քայլել բանտում։ Մենք չենք կարող դրանով բավականանալ։

— Այնուամենայնիվ դուք պետք է բավականանաք դրանով։

— Ինչպե՞ս, մենք այլևս երբեք չենք կարող վերադառնալ հայրենի՞ք, մեր ընտանիքների ու բարեկամների մո՞տ։

— Այո։ Սակայն հրաժարվել այն զզվելի ճնշումից, որ կոչվում է հասարակության օրենք և որը մարդիկ կուրորեն ազատություն են համարում,— այդ այնքան էլ ծանր չէ, որքան կարծում եք դուք։

— Ինչ վերաբերում է ինձ,—բացականչեց Նեդ Լենդը,— ես երբեք չեմ խոստանա, որ այստեղից փախչելու փորձ չեմ անի։

— Ես այդպիսի խոստում չեմ է՛լ խնդրում ձեզանից, միստեր Լենդ,— ասաց պատասխանեց Նավապետը։

— Նավապետ,— գոչեցի ես, այլևս չկարողանալով ինձ զսպել,— դուք ի չարն եք գործ դնում մեր վրա ունեցած իշխանությունը։ Այդ դաժանությո՛ւն է։

— Ո՛չ, պարոններ, սա գթություն է։ Դուք ճակատամարտից հետո գերի եք ընկել այստեղ։ Ես ձեզ կյանքից չեմ զրկում, թեպետ կարող էի ձեզ շպրտել օվկիանոսը։ Դուք հարձակվեցիք ինձ վրա։ Դուք իմացաք այն գաղտնիքը, որ չպիտի իմանար ոչ մի մարդ, իմ կեցության գաղտնիքը։ Եվ դուք կարծում եք, որ ես ձեզ թո՞ւյլ կտամ անարգել վերադառնալ այն աշխարհը, որտեղ ոչ ոք չպիտի իմանա իմ գոյության մասին։ Երբեք։ Պահելով ձեզ իմ ստորջրյա նավում, ես մտածում եմ ոչ թե ձեր, այլ իմ սեփական շահերի մասին։

Նավապետի ձայնը հնչում էր այնպես վճռական, որ ես նրան համոզելու փորձերն այլևս աննպատակ համարեցի։

— Այդպե՞ս ուրեմն, նավապետ, դուք մեզ ուղղակի առաջարկում եք կամ գերություն կամ մահ։

— Բոլորովին ճիշտ է։

— Բարեկամնե՛ր,— դիմեցի ես Կոնսելին և Նեդ Լենդին,— քանի որ հարցն այդպես է դրվում, ուրեմն կարիք էլ չկա վիճելու։ Սակայն հիշեցեք, որ մենք և ոչ մի խոստումով կապված չենք այս նավի տիրոջ հետ։

— Ո՛չ մի խոստումով,— կրկնեց Նավապետը։

Ապա ավելի մեղմ նա շարունակեց.

— Հիմա խնդրում եմ լսեք այն, ինչ որ ես դեռ պիտի ասեմ։ Ես ձեզ ճանաչում եմ, պարոն Արոնաքս։ Չգիտեմ ձեր

ընկերներն ինչպես կվերաբերվեն դեպի այս ամենը, սակայն անձամբ դուք դժգոհ չեք լինի այն առիթից, որով մենք հանդիպեցինք մեկմեկու։ Այն գրքերի թվում, որոնցով ես միշտ օգտվում եմ, դուք կգտնեք նաև ձեր աշխատությունը ծովի հատակի գաղտնիքների մասին։ Հաճախ ես վերընթերցում եմ այդ աշխատությունը։ Ձեր գրքով դուք հասել եք իմացության այն սահմանը, որը մատչելի է երկրային գիտության։ Սակայն դուք չգիտեք ամեն ինչ, որովհետև քիչ բան եք տեսել։ Թույլ տվեք հավատիացնել ձեզ, որ դուք չեք կղզա այս նավում անցկացվելիք ժամանակի համար։ Դուք կճանապարհորդեք հրաշքների աշխարհում։ Զմայլանքը, խորագույն ու հիացմունքով լի զարմանքը հավանորեն կպարուրեն ձեր միտքը։ Դուք շուտ չեք հագենա այն տեսարաններից, որոնք անընդհատ կպատկերանան ձեր աչքերի առաջ։ Ես որոշել եմ ձեռնարկել մի նոր, ո՞վ գիտե, գուցե վերջին ստորերկրյա ճանապարհորդություն աշխարհի շուրջը, որպեսզի ամփոփեմ այն բոլոր դիտողությունները, որ արել եմ նախկին անհամար ճանապարհորդությունների ժամանակ։ Այդ աշխատանքի ընթացքում դուք պետք է օգնեք ինձ։ Այսօրվանից սկսած դուք ընկնում եք բոլորովին մի նոր աշխարհ։ Դուք կտեսնեք այն, ինչ որ չի տեսել ոչ մի մարդ, չհաշված ինձ և իմ ընկերներին, և մեր մոլորակը ձեր առաջ բաց կանի իր վերջին գաղտնիքները։

Չեմ կարող չխոստովանել, որ Նավապետի խոսքերը հրակայական տպավորություն թողեցին ինձ վրա։ Նա շոշափեց իմ էության ամենազգայուն լարը, և ես մի ակնթարթ մոռացա, որ այդ հրաշքները տեսնելը չէր կարող փոխարինել կորցրած ազատության։ Սակայն ես հույս ունեի, որ ապագայում առիթ կունենամ անդրադառնալու այդ կարևոր հարցին։ Այս պատճառով ես տվի հետևյալ պատասխանը.

— Նավապետ, ես հուսով եմ, որ դուք, խզելով ձեր կապը մարդկությունից, պահպանել եք մարդկային զգացումները։ Մենք պատահարի ենթարկված մարդիկ ենք, որոնց դուք գթացիք և ապաստան տվիք ձեր նավում։ Ոչ ես, ոչ էլ իմ ընկերները երբեք այդ չենք մոռանա։ Խոստովանում եմ, որ անձնապես ինձ համար գիտության շահերին ծառայելու

հնարավորությունը որոշ չափով փոխարինում է կորցրած ազատության։

Ես կարծում էի, թե նավապետը ձեռքը կմեկնի ինձ, որպեսզի դրանով վավերացնի մեր պայմանը։ Սակայն նա այդպես չարեց։ Ես էլ հոգուս մեջ անկեղծորեն խղճացի նրան։

— Մի հարց ևս,— ասացի ես այն րոպեին, երբ այդ տարօրինակ մարդն արդեն հեռանալ էր ուզում։

— Լսում եմ, պարոն պրոֆեսոր։

— Մենք ինչպե՞ս պիտի անվանենք ձեզ։

— Դուք ինձ կանվանեք միայն նավապետ Նեմո, իսկ դուք ինքներդ և ձեր ուղեկիցները ինձ համար կլինեն միայն «Նաուտիլուսի» ճանապարհորդներ։

Նավապետ Նեմոն կանչեց ինչ-որ մեկին։ Սպասավորը մտավ նախասենյակ։ Նավապետը դարձյալ ինձ անծանոթ լեզվով հրաման տվեց նրան։ Այնուհետև դառնալով դեպի կանադացին և Կոնսելը, նա ասաց.

— Ձեր նավասենյակում նախաճաշը ձեզ է սպասում։ Խնդրում եմ հետևեք այս մարդուն։

— Ցեմ հրաժարվի,— ասաց եռաժանու վարպետը։

Կոնսելն ու Նեդ Լենդը դուրս եկան այս վանդակից, որտեղ մենք համարյա թե երեսուն ժամ բանտարկված էինք։

— Հիմա հերթը ձերն է, պրոֆեսոր։ Նախաճաշը սպասում է մեզ։ Թույլ տվեք ձեզ ցույց տալ ճանապարհը։

— Խնդրեմ, նավապետ։

Ես հետևեցի նավապետ Նեմոյին։ Մենք դուրս եկանք էլեկտրականությամբ լուսավորված մի միջանցք, որ նման էր նավերի սովորական միջանցքներին, և անցնելով տասը մետր, կանգ առանք մի փակ դռան առաջ։

Նավապետ Նեմոն բաց արեց դուռը և ինձ ճանապարհ տվեց։ Ես մտա մի սեղանատուն, որ նուրբ ճաշակով կահավորված էր ու զարդարված։ Դահլիճի հակադիր ծայրերում տեղավորված էին բարձր, կաղնի ծառից պատրաստված դարակները, որոնք դրվագված էին սև գույնի փայտով։ Դարակներում փայլում ու ճառագում էր բյուրեղապակյա, ճենապակյա ու արծաթե ամանեղենը, որի գեղարվեստական ձևավորումը բարձր էր ամեն մի գնահատությունից։ Սեղանատան

պատերի նուրբ արտաքինը մեղմացնում էր առաստաղից տարածվող լույսի անսահման պայծառությունը։

Դահլիճի մեջտեղում ճոխ սեղան էր բացված։ Նավապետ Նեմոն ինձ տեղ ցույց տվեց։

— Նստեցեք և կերեք,— ասաց նա,— երևի դուք մոռնում եք սովից։

Ես չտիպեցի երկրորդ անգամ խնդրել։

Նախաճաշը բաղկացած էր մի քանի ձկնեղեն ուտելիքներից և այնպիսի կերակուրներից, որոնք չգիտեմ թե ինչ մթերքներից էին պատրաստված։ Դրանք բոլորը համեղ էին, թեպետ ինչ-որ անախորժություն ունեին, որը, սակայն անցնում էր հետզհետե։ Այդ մթերքները հարուստ էին ֆոսֆորով։ Մտածեցի, որ դրանք ձեռք են բերվել ծովում։

Նավապետ Նեմոն անթարթ նայում էր ինձ։ Ես ոչ մի հարց չէի տալիս, բայց նա շտապեց պատասխանել չտրված հարցերին, որոնք, իհարկե, սաստիկ հետաքրքրում էին ինձ։

— Այս կերակուրների մեծ մասն անծանոթ է ձեզ,— ասաց նա,— այնուամենայնիվ դուք կարող եք ուտել առանց վախենալու։ Դրանք բոլորն առողջարար են և սննդաստուր։ Վաղուց է, որ ես հրաժարվել եմ ցամաքային մթերքներից և չնայելով դրան, ինձ շատ լավ եմ զգում։ Իմ բոլոր նավորդները, որոնք անվում են այնպես, ինչպես ես, նախանձելի առողջություն ունեն։

— Ուրեմն այս բոլոր կերակուրները ծովային մթերքնե՞րից են։

— Այո, պրոֆեսոր, ծովը բավարարում է իմ բոլոր պահանջները։ Երբեմն ես ծովն եմ նետում ուռկանը և առատ որս անում։ Երբեմն ես որսի եմ գնում դեպի տարերքը, որ անմատչելի է ուրիշ մարդկանց, և որսում եմ իմ ստորջրյա անտառներում ապրող «թռչուններին»։ Իմ հոտերը, ինչպես ծերունի հովիվ Նեպտունի հոտերը, հանգիստ արածում են օվկիանոսային արոտներում։ Իմ կալվածքները մեծ են ու անսահման և նրանցից միայն ես եմ օգտվում։

Ես զարմանքով նայեցի նավապետ Նեմոյին և պատասխանեցի նրան.

— Հասկանում եմ, նավապետ, որ ձեր ուռկանը հիանա-

լի ձկներ է հանում ծովից, որոնցով ճոխանում է ձեր սեղանը։ Հնարավոր եմ համարում նաև այն, որ դուք կարող եք «թռչուններ» որսալ ձեր ստորջրյա անտառներում, թեպետ չգիտեմ թե այդ ինչպես է լինում։ Սակայն մի բան բոլորովին անհասկանալի է ինձ,— ո՞րտեղից է ձեր սեղանի վրա եղած միսը, թեպետ և դուք այն քիչ եք գործածում։

— Բայց ես երբեք չեմ ուտում ցամաքային կենդանիների միսը,— առարկեց նավապետը։

— Իսկ սա՞,— հարցրի ես, ցույց տալով մի ափսե, որի մեջ մի քանի պատառ սուկի կար։

— Այդ ուտելիքը, որ դուք մսի տեղ եք ընդունել, ուրիշ բան չէ, բայց եթե ծովային կրիայի սուկի։ Ահա դելֆինի լյարդից պատրաստված սոուս, որն իր համով ձեզ կթվա խոզի ռագու։ Իմ խոհարարն իսկական արտիստ է իր գործի մեջ և ոչ ոք չի կարող նրա նման ուտելիք պատրաստել ծովային ձկներից ու կենդանիներից։ Ահա ձկնականջից պատրաստված պահածոներ, որ յուրաքանչյուր մալայացի լավագույն կերակուրը կհամարի աշխարհում, ահա կրեմ, որի համար սերն ստացված է կետի կրծքային գեղձից, իսկ շաքարը՝ Հյուսիսային ծովի ջրիմուռներից։ Վերջապես, ահա ծափկոտրուկներից եփած քաղցրավենիք, որ իր համով չի զիջում ցամաքային ամենաքաղցր պտուղներին։

Ոչ թե ագահությունից, այլ հետաքրքրությունից դրդված, ես փորձում էի այդ բոլոր կերակուրները և հրապուրված լսում նավապետ Նեմոյի պատմածը։

— Ծովը ոչ միայն կերակրում, այլև հագցնում է ինձ,— շարունակեց նա,— այն գործվածքը, որից կարված է ձեր հագուստը, հյուսված է ծովային մի շարք խխունջներից։ Այդ հագուստը ներկված է ծիրանի գույնով, որը պատրաստելու գաղտնիքը չքացել է Հնադարյան Հռոմեացիների և Հույների հետ միասին, իսկ այդ ներկը ես ձեռք եմ բերել Միջերկրական ծովում, ջրիմուռներից։ Այն օծանելիքը, որ գտնվում է ձեզ հատկացված նավասենյակի արդուղարդի փոքրիկ սեղանի վրա, ստացվել է ծովային մի քանի բույսերից։ Ձեր ներքնակն օվկիանոսային լավագույն խոտերից է պատրաստված։ Այն գրիչը, որով դուք պետք է գրեք, պատրաստված է կետի

բեղից, իսկ թանաքը — թանաքաձկան արտազատումից։ Այն ամենը, ինչով ես օգտվում եմ հիմա, ծովն է հայթայթում ինձ և երբևէ դրանք էլի՛ կվերադառնան ծով։

— Դուք սիրո՞ւմ եք ծովը, նավապետ։

— Այո, այո, սիրում եմ։ Ծովն ամեն ինչ է։ Նա ծածկում է երկրագնդի յոթ տասնորդական մասը։ Նրա գոլորշիացումները թարմ են և կենսաբեր։ Նրա վիթխարի անապատում մարդն իրեն մենակ չի զգում, որովհետև շարունակ իր շուրջը զգում է կյանքի շունչը։ Եվ իսկապես, չէ՞ որ ծովում կան բնության երեք թագավորությունները,— հանքային, բուսական ու կենդանական։ Վերջինս բաղկանում է զոոֆիտների[1] չորս խմբերից, հոդվածոտունքների երեք դասից, կակղամորթների հինգ դասից, ողնաշարավորների երեք դասից, կաթնասուններից, սողուններից և անթիվ ձկներից, կենդանիների հսկայական մի խմբից, որի մեջ ավելի քան տասներեք հազար տեսակներ են մտնում, իսկ սրանցից հաղիվ մեկ տասներորդ մասն է ապրում անուշահամ ջրերում։ Ծովը բնության վիթխարի ջրամբարն է։ Երկրագնդի վրա կյանքը սկսվել է ծովում և ո՞վ գիտե, արդյոք ծովում չի՞ վերջանալու։ Ծովում տիրում է բարձրագույն անդորրությունը... Ծովը չի պատկանում բռնակալներին։ Սրանք դեռ կարող են ծովի մակերևույթի նկատմամբ իրավունքներ բանեցնել, ճակատամարտել, կլանել մեկ-մեկու, կրկնել ցամաքային կյանքի ամբողջ սարսափը։ Սակայն երեսուն ոտնաչափ խորության տակ վերջանում է նրանց իշխանությունը, չքանում նրանց հզորությունը։ Ա՜խ, պրոֆեսոր, ապրեցե՛ք ծովի խորքերում։ Միայն այնտե՛ղ է լիակատար անկախությունը, միայն այնտե՛ղ է, որ իսկապես ազատ է մարդը, միա՛յն այնտեղ ոչ ոք նրան չի կարող ճնշել։

Նավապետ Նեմոն հանկարծ ընդհատեց իր թունդ ճառը։ Արդյոք չէ՞ր զղջում, որ շեղվել է իր սովորական զսպվածությունից։ Արդյոք չվախեցա՞վ, որ ավելորդ բան է ասել։

Մի քանի բոպեի ընթացքում, դեռևս հուզված, նա հետ ու

---

1 Զոոֆիտներ — կենդանական բույսեր։ Առաջ այդպես էին կոչում կորալիոնե պոլիպներին, մամուկենդանիներին ու ասղամորթներին։

առաջ էր քայլում սեղանատանը։ Այնուհետև, հանգստացնելով իր չղերը, վերատին սառը վսեմության արտահայտությունն տալով իր դեմքին, նա ինձ դիմեց հետևյալ խոսքերով.

— Իսկ այժմ, պրոֆեսոր, եթե ձեզ համար հաճելի է դիտել «Նաուտիլուսը», ես պատրաստ եմ ձեզ ծանոթացնել

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

«ՆԱՈՒՏԻԼՈՒՍԸ»

Նավապետ Նեմոն քայլեց դեպի դուռը։ Ես հետևեցի նրան։ Սեղանատան խորքում երկփեղկ դուռը բացվեց, և մենք մտանք հարևան սենյակը, որ ուներ նույն մեծությունը, ինչ որ այն սենյակը, ուր մենք քիչ առաջ գտնվում էինք։

Այդ գրադարանն էր։ Բազմաբանակ, միատեսակ կազմով գրքերը շարված էին բարձր, մինչև առաստաղը հասնող պահարաններում, որոնք ծիրանափայտից էին և բրոնզով դարդարված։ Պահարանները տեղավորված էին սենյակի բոլոր պատերի երկարությամբ։ Պահարանների տակ դրված էին լայն, կինամոնագույն կաշիով պատած բազմոցներ, որոնք շատ հարմար էին հանգստանալու համար։ Բազմոցների մոտ կային թեթև, շարժական գրասեղաններ։ Սենյակի մեջտեղում գտնվում էր մի մեծ սեղան, որի վրա գրքեր էին կուտակված։ Նույն տեղում կային մի քանի լրագրեր, որոնք արդեն հնացած էին։

Այս հոյակապ դահլիճը լուսավորվում էր չորս էլեկտրական հսկա լապտերներով, որոնք կիսագնդաձև լուսամփոփներով տեղավորված էին առաստաղում։

Ես հիացմունքով դիտում էի այդ սենյակը, որ այնքա՛ն փարթամ ու գեղեցիկ էր կահավորված։

— Նավապետ Նեմո,— ասացի ես գրադարանի տիրոջը, որ մեկնվել էր բազմոցներից մեկի վրա,— սա մի գրապահեստ է, որով կարող էր հպարտանալ ցամաքի ամեն մի պալատ։ Ես ուղղակի հուզված եմ այն մտքից, որ այս հրաշալի գրադարանը ձեզ ուղեկցում է օվկիանոսների խորքերում։

— Էլ ուրիշ որտե՞ղ դուք կարող եք այսչափ նպաստավոր

պայմաններ գտնել աշխատանքի համար, պրոֆեսոր,— ասաց նավապետը,— մի՞թե թանգարանում եղած ձեր առանձնասենյակը ձեզ այսպիսի անխռով հանգստություն է տալիս։

— Իհարկե ոչ... Ես պետք է խոստովանեմ, որ իմ առանձնասենյակը շատ աղքատ է այս դահլիճի համեմատությամբ։ Դուք այստեղ ունեք վեց-յոթ հազարից ոչ պակաս գիրք, այո՞։

— Տասներկու հազար, պարոն Արոնաքս։ Սա միակ բանն է, որ ինձ կապում է երկրի հետ։ Սակայն աշխարհն ինձ համար այլևս գոյություն չունի այն օրից, երբ «Նաուտիլուսն» առաջին անգամ ջրասույզ եղավ։ Այն օրը ես գնեցի վերջին գրքերը, վերջին բրոշյուրները և լրագրերի վերջին համարները։ Այն ժամանակներից սկսած մարդկությունն ինձ համար այլևս չի մտածում, չի գրում։ Այս գրքերը գտնվում են ձեր լիակատար տնօրինության տակ, պրոֆեսոր, օգտվեցեք նրանցից, երբ և որքան կուզեք։

Շնորհակալություն հայտնելով նավապետ Նեմոյին, ես մոտեցա գրքերի դարակներին։ Գրքերը բոլոր լեզուներով էին ու վերաբերում էին ստույգ գիտությունների զանազան ճյուղերին, փիլիսոփայության, գրականության։ Իմ աչքով ընկավ հետաքրքիր մի հանգամանք.— գրքերը դասավորված էին այբբենական կարգով, անկախ նրանից, թե ինչ լեզվով էին գրված։ Այդ վկայում էր, որ նավապետ Նեմոն հավասարաչափ տիրապետում է բոլոր լեզուներին։

Գրադարանում ես տեսա հին և ժամանակակից հեղինակների երկերը, այն լավագույնը, ինչ որ մարդկային հանճարը ստեղծել է գիտության, գեղարվեստական արձակի ու պոեզիայի բնագավառում, Հոմերոսից մինչև Վիկտոր Հյուգոն, Քսենոֆոնից մինչև Միշլեն, Ռաբլեից մինչև Ժորժ Սանդը։ Այնուամենայնիվ այս գրադարանում գրքերը գերակշռող թիվ էին կազմում։ Զգաբանական[1], ջրաբանական[2], օդերևութաբա-

---

1 Զգաբանությունը մի գիտություն է, որն ուսումնասիրում է թնդանոթի արկերի թռիչքի օրենքները։

2 Ջրաբանությունը մի գիտություն է, որն ուսումնասիրում է երկրագնդի ջրային մասի (օվկիանոսների և ծովերի) ֆիզիկական հատկությունները։

նական, աշխարհագրական, երկրաբանական և այլ գրքերը ոչ պակաս տեղ էին գրավում, քան բնագիտական աշխատությունները, իսկ բնագիտությունը, որքան ես հասկացա, նավապետ Նեմոյի գիտական զբաղմունքների գլխավոր առարկան էր։ Դարակներում դրված էին Հումբոլդտի և Արագոյի լրիվ երկերը, Ֆուկոյի, Հանրի Սենի, Կղեր-Դեվիլի, Շասլյայի, Միլն Էդվարսի, Կատրֆաժի, Տինդալի, Ֆարադեյի, Բերտելլոյի, աբբա Սեկկիի, Պետերմանի, Մորիի, Ագասսիսի և այլոց աշխատությունները, գիտությունների ակադեմիայի «Տարեգիրը», զանազան աշխարհագրական ընկերությունների բյուլետենները և այլն։ Նույն տեղում, այդ պատկառելի գրադարանում գտնվում էին այն երկու հատորները, որոնց համար ես ինձ երախտապարտ զգացի նավապետի հանդեպ։ Ժոզեֆ Բերտրանի «Աստղաբաշխության հիմունքները» գիրքը ինձ հնարավորություն տվեց պարզելու հետևյալը.— ես գիտեի որ այդ գիրքը լույս է տեսել 1865 թվականի կեսին, հետևապես, «Նաուտիլուսը» դրանից առաջ չէր կարող հեռանալ ցամաքից։ Այդպե՛ս ուրեմն, նավապետ Նեմոն ստորջրյա ճանապարհորդ է դարձել ոչ ավելի, քան երեք տարի առաջ։ Ես մտածեցի, որ եթե հաջողվի գտնել էլ ավելի նոր գրքեր, կարելի է ավելի ճիշտ որոշել ստորջրյա նավի ծով մտնելու օրը։ Սակայն այդ անելու համար ես դեռ բավականաչափ ժամանակ ունեի, իսկ առայժմ չէի ուզում հետաձգել «Նաուտիլուսի» հրաշքների հետ ծանոթանալու գործը։

— Շնորհակալ եմ ձեզնից, նավապետ,— ասացի ես,— որ դուք թույլ տվիք օգտվել ձեր գրադարանից։ Սա գիտության իսկական գանձարան է և ես կօգտվեմ այս գանձարանից։

— Այս սենյակը ոչ միայն գրադարան է, այլև ծխարան։

— Ծխարա՞ն,— զարմացած բացականչեցի ես,— մի՞թե «Նաուտիլուսում» ծխում են։

— Անշուշտ։

— Այդ դեպքում, նավապետ, ես պետք է ենթադրեմ, որ դուք կապ եք պահում Հավաննայի հետ, այո՞։

— Ոչ մի կապ,— պատասխանեց նավապետ Նեմոն,— ա՛յ, փորձեցեք այս սիգարը, պրոֆեսոր։ Թեպետ դա Հավաննա-

յից չէ, բայց եթե դուք գիտակ եք ծխախոտի նկատմամբ, այս սիգարը դուր կգա ձեզ։

Սա վերցրի սիգարը, որ իր ձևով հիշեցնում էր Հավաննայի սիգարների լավագույն տեսակները, բայց ավելի բաց գույնի ուներ և պատրաստված էր ավելի դեղին տերևներից։ Սա սիգարը վառեցի կանթեղից, որ դրված էր բրոնզե մի նուրբ պատվանդանի վրա, և ծուխը ներս քաշեցի այնպիսի ագահությամբ, ինչպիսին հատուկ է լինում թունդ ծխողին, երբ նա երկու օր ծխած չի լինում։

— Սա հրաշալի սիգար է, բայց... կարծես ծխախոտ չէ։

— Այո,— պատասխանեց նավապետը,— այս ծխախոտը ո՛չ Հավաննայից է, ոչ էլ Արևելքից։ Սա ծովային ջրիմուռների մի տեսակն է, որը հարուստ է նիկոտինով։ Հիմա դուք արդյոք ասիսո՞ւմ եք, որ Հավաննայի սիգար չեք ծխում։

— Այս բոպեից սկսած Հավաննայի սիգարներն արհամարհելի են ինձ համար։

— Այդ դեպքում ինչքան ուզում եք ծխեցեք, առանց հարցնելու, թե որտեղից են սիգարները։ Ծխախոտի ոչ մի մենաշնորհով հարկ չի գանձվում դրանց համար։ Բայց այդպիսով դրանց որակը չի իջել, այնպես չէ՞։

— Իհարկե։

Այդ բոպեին նավապետ Նեմոն բաց արեց մի դուռ, որ գտնվում էր այն գրան դիմաց, որտեղից մենք ներս մտանք գրադարանը։ Սա մտա մի մեծ, հիանալի լուսավորված սրահ։

Այդ մի ընդարձակ, քառանկյունի դահլիճ էր կտրված անկյուններով, ուներ տասը մետր երկարություն, վեց մետր լայնություն և հինգ մետր բարձրություն։ Առաստաղը զարդարված էր արաբական պարզ և նուրբ նախշերով։ Առաստաղում թաքնված լապտերները պայծառ, բայց ո՛չ կուրացուցիչ լույս էին սփռել այդ թանգարանում հավաքված հրաշալի իրերի վրա։ Այո, այդ իսկական թանգարան էր... Հմուտ և կարող ձեռներն այստեղ հավաքել էին բնության ու արվեստի բոլոր գանձերը և դասավորել այնպիսի գեղարվեստական կարգով, որը հատուկ է նկարչի բնակարանին։ Պատերը ծածկված էին նկարագեղ պաստառներով։ Մեծ վարպետների երեսուն նկարներ, որոնք միատեսակ շրջանակներ ունե-

ին, զարդարում էին թանգարանը։ Նկարների միջև գտնվում էին վահաններ ու զենքեր, ինչպես նաև արձաններ, որոնց վրա հարմարեցված էին ասպետական բոլոր զենքերը։ Ես տեսա հսկայական արժեք ունեցող պատկերներ, որոնք եղել էին Եվրոպայի ցուցահանդեսներում և մասնավոր պատկերասրահներում։ Հին վարպետների գործերից այստեղ կային Ռաֆայելի «Մադոննան», Լեոնարդո-դա-Վինչիի «Կույսը», Կորեջիոյի «Հաճրը», Տիցիանի «Կինը», Վերոնեզի «Մոգերի երկրպագությունը», Մուրիլոյի «Հարությունը», Հոլբեյնի «Դիմանկարը», Վելասկեզի «Վանականը», Ռիբեյրայի «Նահատակը», Տենիրսի «Տոնավաճառը», Ռուբենսի ֆլամանդական երեք բնանկարները, երեք փոքր նկարներ, որոնք պատրաստված էին Ժերարդ-Դոուի, Տերսուի, Պոլ Պոտտերի ժանրով, Ժերիկոյի և Պրուդոնի երկու պատկերները, Բայկուղենի և Վեռնեի մի քանի ծովային տեսարանները։ Ժամանակակից նկարչական գործերի թվում ես տեսա պատկերներ, որոնց վրա գտնվում էին Դելակրուայի, Էնգրի, Դեկանի, Տրուայնի, Մեյսոնեյի, Դոբինյիի և այլոց ստորագրությունները։

Այս փառահեղ թանգարանի անկյուններում, բարձր պատվանդանների վրա դրված էին անտիկ քանդակագործությունների փոքրացրած, մարմարե ու բրոնզե, սքանչելի պատճենները։

Նավապետ Նեմոյի ասածներն իրականանում էին. «Նաուտիլուսը» դիտելու հենց առաջին քայլերից ես ապշած էի մնացել։

— Հույս ունեմ, պրոֆեսոր, որ դուք ինձ կներեք ձեզ ընդունելու համարձակության և այն անկարգության համար, որ տիրում է այս սենյակում,— ասաց այդ տարօրինակ մարդը։

— Նավապետ,— պատասխանեցի ես,— պետք է ասեմ, որ դուք իսկական արտիստ եք։

— Օ՜ ոչ, միայն սիրող եմ,— առարկեց նա,— ինձ հաճելի էր հավաքել մարդկային հանճարի այդ հոյակապ արտադրությունները։ Ես անխոնջ էի իմ որոնումներում և այդպես՝ այս կամ այն իրը ձեռք բերելու մեջ։ Այդ ինձ հնարավորություն տվեց գտնել մի շարք իսկապես որ բարձրարժեք իրեր։

Դրանք իմ վերջին հուշերն են ինձ համար մեռած երկրի մասին։ Ձեր ժամանակակից նկարիչներն անգամ հին վարպետներ են իմ աչքում։ Ես այնպես եմ դիտում նրանց նկարները, որ կարծես սրանք երկու-երեք հազար տարի առաջ են ստեղծագործված։ Հանճարների համար հասակն այնքան էլ նշանակություն չունի։

— Իսկ այս երաժիշտնե՞րը,— հարցրի ես, ցույց տալով Վեբերի, Ռոսինիի, Մոցարտի, Բեթհովենի, Հայդնի, Մեյերբերի, Վագների, Օբերի, Գունոյի և այլոց երկերը, որ թափված էին մի մեծ դաշնամուր-երգեհոնի կափարիչի վրա։ Դաշնամուրն ահագին տեղ էր բռնել սրահում։

— Այս երաժիշտներն Օրփեոսի[1] ժամանակակիցներ են ինձ համար։ Մեռածների հիշողությունից ջնջվում են տարբերությունները, իսկ ես մեռած եմ, պրոֆեսոր, մեռած եմ ճիշտ այնպես, ինչպես և ձեր այն բարեկամները, որոնք նիրհում են վեց ոտնաչափ գետնի տակ։

Նավապետ Նեմոն լռեց և խորը մտածմունքի մեջ ընկավ։ Ամենաջերմ հետաքրքրությամբ ես դիտում էի նրան և լուռ ուսումնասիրում նրա դեմքի առանձնահատկությունները։ Հենված լինելով մի թանկագին, գեղազարդ սեղանի, նա չէր տեսնում ինձ և կարծես բոլորովին մոռացել էր իմ գոյության մասին։

Ես որոշեցի չխանգարել նրա մտորումները և շարունակեցի դիտել սրահում ժողովված հրաշքները։

Արվեստի կոթողների հետ միասին աչքի ընկնող տեղ էին գրավում նաև բնության հազվագյուտ իրերը։ Դրանք գլխավորապես բույսեր էին, և խեցիներ և օվկիանոսի բուսական ու կենդանական աշխարհին պատկանող այլ նմուշներ, որոնք ըստ երևույթին հավաքված էին հենց նավապետ Նեմոյի ձեռքով։ Սրահի մեջտեղում գտնվում էր մի շատրվան, որը ներքևից լուսավորված էր էլեկտրականությամբ։ Ջրի կաթիլները թափվում էին ավազանի մեջ, որ կառուցված էր մի վիթ-

---

[1] Օրփեոսն ըստ հին հունական դիցաբանության, եղել է մի երգիչ, որն իր երգերով իբր թե շարժել է ծառերն ու ժայռերը և սանձահարել վայրենի գազաններին։

խարի խեցիից։ Խեցիի շրջագիծը հասնում էր վեց մետրի։ Ուրեմն դա գերազանցում էր նույնիսկ այն հռչակավոր խեցիից, որ Վենետիկի հանրապետությունը նվիրել էր թագավոր Ֆրանցիսկ առաջինին։

Ավազանի շուրջը, ապակյա գեղեցիկ փեղկերում, որոնք գեղազարդված էին պղնձով, դասավորված էին ծովային ամենաթանկարժեք և ամենահազվագյուտ իրեր, որոնց նմանը հազիվ թե տեսած լինի մի որևէ բնագետ։ Կարելի է պատկերացնել, թե դրանք որչափ ուրախացրին ինձ։

Կենդանաբույսերի բաժնում գտնվում էին կակղամորթների ու ասղամորթների նմուշները։ Առաջին խմբում գտնվում էին հովհարանման գորգոններ, ծովային օրգանիկներ, սիրիական շրթնիկներ, Մոլուքյան կղզիների կորալներ, այլցիոնի հիանալի մի նմուշ, գրավիչ հովհարատերևներ, Ռեյունյոն կղզու ակնավորներ և մադրեպորների մի ամբողջ հավաքածո, որոնց մեջ առանձնապես ուշադրություն էր գրավում Անթիլյան կղզիների «Նեպտունի կառքը»։ Այստեղ հավաքված էին կորալների ամենատարբեր տեսակները, որոնց գաղութները կազմում են ամբողջ կղզիներ, ո՞վ գիտե, գուցե դարերի ընթացքում նաև ցամաքներ։ Իրենց փշոտ թաղանթով աչքի ընկնող ասղամորթների խմբում գտնվում էին ծովասողերի, ծովագլանների, ողնիների, մազաճիճուների, օձասողերի, տուբիպորների մի քանի տեսակները։

Եթե իմ տեղը լիներ թույլ չղերով մի խխունջագետ, զարմանքից կքարանար, տեսնելով հարևան ցուցափեղկերը, ուր տեղավորված էին կակղամորթների հավաքածոները։ Այդ նմուշները բարձր էին ամեն մի գնահատությունից և կարելի էր մի ամբողջ հատոր նվիրել նրանց նկարագրության։ Ես կսահմանափակվեմ միայն ամենահետաքրքիր նմուշները թվելով։ Այստեղ էին գտնվում Հնդկական օվկիանոսի նրբագեղ ուռնաձուկը, որի կարմիր-կինամոնագույն մարմնի վրա կանոնավոր դասավորված էին սպիտակ բծերը. այսպես կոչված՝ «կայսերական սպոնդիլը», որ ամբողջովին պատած էր գնդիկներով ու վառ դույն ուներ,— մի կենդանի, որի համար եվրոպական ամեն մի թանգարան չէր խնայի քսան հազար ֆրանկ. ավստրալիական հասարակ ուռնաձուկը, որ համար-

յա անկարելի է գտնել. սենեգալյան միջուկավորները, որ երկփեղկ էին, սպիտակ, այնպես փխրուն, որ ցնդում են նույնիսկ ամենաթեթև հողմից, ինչպես օճառի պղպջակներ. ճավայի մի շարք ծովային ցնցուղները, ծալ-ծալ վերջավորություններ ունեցող կրային փողիկներ, որոնք սիրողների կողմից բարձր են գնահատվում. մի ամբողջ շարք փորոտանիներ, որոնցից դեղին-կանաչագույնները լինում են ամերիկյան ծովերում, իսկ թուխ-դարչնագույնները՝ Նոր Զելանդիայի ափերի մոտ, Մեքսիկայի ծոցում, և աչքի են ընկնում իրենց կղմինդրաձև խխունջներով. զարմանալի ծծմբային թելիններ, ցիտրանների թանկագին տեսակներ, ցանցավոր արևուկներ, մարմարե կուբարներ իրենց սադափե բծերով։ Այնուհետև դասավորված էին ճենախխունջների բոլոր տեսակները, որոնք Հնդկաստանում գործ են ածվում դրամների փոխարեն. «ծովի փառքը»՝ Արևելյան Հնդկաստանի ամենաթանկագին խեցին։ Վերջապես, զափնյաներ, յանտիններ, ձվակերպներ, խույրեր, սաղավարտանմաններ, ծիրանեձկներ, տավիղանմաններ, տրիտոններ, պտերոցերներ, պատելներ, հիալեններ, կղերոդորներ, քնքուշ ու փխրուն խեցիներ, որոնց գիտնականները գեղեցիկ անուններ են տվել։

Առանձին ցուցափեղկերում դրված էին շտեսնված գեղեցկության մարգարիտների թելեր, որոնք շքեղ առկայծում էին էլեկտրական պայծառ լույսի տակ։ Այնտեղ էր վարդագույն մի մարգարիտ, որը հանվում է Կարմիր ծովի հատակից, այնտեղ էին կանաչ, դեղին, կապույտ ու սև մարգարիտները՝ զանազան կակղամորթների մարմնի ուռուցքները, որ պատահում են համարյա բոլոր ծովերում և օվկիանոսներում։

Այդ մարգարիտներից մի քանիսն աղավնու ձվից մեծ էին։ Նրանց արժեքը գերազանցում էր այն մարգարիտի արժեքից, որ ճանապարհորդ Տավերնեն երեք միլիոնով ծախել էր պարսից շահին, իսկ գեղեցկությամբ նրանք ավելի բարձր էին Մասկատի իմամի մարգարտից, որը ես աշխարհում առաջինն էի համարում։

Այսպիսով անկարելի էր որոշել այդ հավաքածոյի արժեքը։ Նավապետ Նեմոն պետք է միլիոններ ծախսած լիներ այն ձեռք բերելու համար։

Ինքս ինձ հարց էի տալիս, թե ո՞րն է այդ շլված հարբուտության աղբյուրը։ Հանկարծ նավապետը դիմեց ինձ։

— Դուք իմ հավաքածոնե՞րն եք դիտում, պրոֆեսոր։ Դրանք իսկապես որ արժանի են քնագետի ուշադրության։ Իսկ ինձ համար նրանց արժեքն առավել բարձր է այն չափով, որչափով նրանցից յուրաքանչյուրը ես իմ սեփական ձեռքերով եմ հավաքել։ Երկրագնդի վրա չկա մի ծով, որն ինձ մի որևէ բան տված չլինի այդ ցուցափեղկերի համար։

— Նավապետ, ինձ միանգամայն հասկանալի է այն բերկրանքը, որ դուք պիտի զգաք այս հարստությունները տեսնելիս։ Եվրոպական ոչ մի թանգարան չունի օվկիանոսի արտագրության այդչափ լրիվ հավաքածու։ Սակայն եթե ես իմ ամբողջ հիացմունքը սպառեմ թանգարանը դիտելով, էլ ի՞նչ կմնա իմ մեջ, նավի մնացած մասը դիտելու համար։ Ես բոլորովին չեմ ուզում անհամեստ լինել ու քրքրել ձեր զաղտնիքները, բայց խոստովանում եմ, որ ինձ վերին աստիճանի հետաքրքրում է «Նաուտիլուսը», նրան շարժող ուժը, այն կառուցվածքները, որոնց միջոցով նավը կարողանում է շարժվել մեծ արագությամբ։ Այս սրահի պատերի վրա ես տեսնում եմ այնպիսի պարագաներ, որոնց նպատակը պարզ չէ ինձ համար։ Արդյոք կարո՞ղ եմ հարցնել...

— Պարոն Արոնաքս,— ընդհատեց ինձ նավապետը,— ես արդեն ասացի, որ դուք ազատ եք այս նավում, հետևապես «Նաուտիլուսում» չկա մի անկյուն, որի մուտքն արգելված լինի ձեզ համար։ Կարող եք նավը դիտել որքան ուզենաք, իսկ ես պատրաստ եմ լինելու ձեր ուղեկիցը։

— Չգիտեմ ինչպես շնորհակալ լինեմ ձեզնից, նավապետ։ Կաշխատեմ ի չարը չգործադրել ձեր սիրալիրությունը։ Թույլ տվեք միայն իմանալ, ինչի՞ համար են այս ֆիզիկական պարագաները։

— Ճիշտ նույնպիսի պարագաներ կան նաև իմ առանձնասենյակում, պրոֆեսոր, այնտեղ ես ձեզ կբացատրեմ դրանց նշանակությունը։ Սակայն նախ անցնենք ձեզ հատկացված նավասենյակը։ Չէ՞ որ դուք պետք է իմանաք, թե ինչ պայմաններում պետք է ապրեք «Նաուտիլուսում»։

- Նեղ միջանցքով ես հետևեցի նավապետին։ Անցնելով նավի առջևի մասը, նավապետ Նեմոն ինձ տարավ շքեղ կահավորված, ընդարձակ մի սենյակ, ուր աչքովս ընկան մահճակալը, արդուզարդի սեղանը, բազկաթոռները և այլն։

Ես շնորհակալության խոսքեր չէի գտնում։

— Ձեր նավասենյակը կից է իմ առանձնասենյակին,— ասաց նավապետը դուռը բանալով,— իսկ իմ առանձնասենյակն էլ միանում է այն սրահին, ուր մենք քիչ առաջ գտնվում էինք։

Մենք մտանք նավապետի սենյակը, որ ուներ վերին աստիճանի պարզ ու հարմար կահավորություն։ Երկաթե մահճակալ, աշխատանքի սեղան, մի քանի աթոռ, լվացարան՝ ահա այդ սենյակի ամբողջ կահավորանքը։ Միայն անհրաժեշտ իրեր և ոչ մի շքեղություն։

Նավասենյակում կիսախավար էր տիրում։

Նավապետ Նեմոն ցույց տվեց ինձ աթոռը.

— Խնդրեմ նստեցեք։

Ես նստեցի։ Նա մի փոքր լռեց և ապա սկսեց խոսել։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԱՄԵՆ ԻՆՉ ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Նայեցեք, պրոֆեսոր,— սկսեց նավապետ Նեմոն, ցույց տալով պատերից կախված պարագաները,— սրանք այն ապարատներն են, որոնք օգտագործվում են «Նաուտիլուսը» կառավարելու համար։ Ինչպես սրահում, այնպես էլ այստեղ նրանք միշտ իմ աչքերի առաջ են և ինձ ճշգրիտ ցույց են տալիս, թե «Նաուտիլուսն» օվկիանոսի որ կետում է գտնվում և դեպի ուր է գնում։ Այդ պարագաներից մի քանիսը հայտնի են ձեզ։ Ահա ջերմաչափը, որը ցույց է տալիս օդի բարեխառնությունը «Նաուտիլուսում»։ Ահա ծանրաչափը, որը ցույց է տալիս օդի ճնշումը և հենց դրանով նախատեսում եղանակի փոփոխությունը։ Ահա խոնավաչափը, որը ցույց է տալիս խոնավության աստիճանը մթնոլորտում։ Կողմնացույցը որոշում

է նավի ուղղությունը։ Ահա անկյունաչափը, որը հնարավորություն է տալիս արևի բարձրությամբ որոշել տեղի լայնությունը։ Սա էլ ժամանակաչափ է, որի միջոցով մենք գտնում ենք արևմտյան կամ արևելյան երկարությունը։ Վերջապես, սրանք էլ ցերեկվա և գիշերվա հեռադիտակներ են, որոնցով ես դիտում եմ հորիզոնն այն ժամանակ, երբ «նաուտիլուսը» բարձրանում է ջրի երեսը։

— Այդ բոլոր պարագաները,— պատասխանեցի ես,— սովորական են ծովագնացության մեջ և վաղուց ծանոթ են ինձ։ Սակայն այստեղ կան ինձ անհայտ ինչ-որ պարագաներ։ Ինչպես երևում է, հենց դրանց մեջ են թաքնված «նաուտիլուսը» կառավարելու առանձնահատկությունները։ Արդյոք խտաչափ չէ՞ այս մեծ թվացույցն իր շարժական սլաքով։

— Այդ իսկապես որ խտաչափ է։ Կապված է ծովի հետ և ցույց է տալիս ջրի ճնշումը, միաժամանակ նաև «նաուտիլուսի» ընկղմման խորությունը։

— Իսկ սրանք մխանո՞ր են։

— Այո, միայն թե նոր կառուցվածքի մխաններ։ Դրանք ջերմաչափի դեր են կատարում,— ցույց են տալիս ջրի զանազան շերտերի բարեխառնությունը։

— Իսկ այս պարագանե՞րը։ Ես չեմ պատկերացնում, թե ինչի համար են։

— Այստեղ հարկավոր կլինի մի քանի բացատրություններ տալ ձեզ, պրոֆեսոր,— պատասխանեց նավապետ Նեմոն։

Նա մի փոքր լռեց և ապա շարունակեց.

— Բնության մեջ կա հնազանդ, արագաշարժ և հասարակ ձևով գործադրվող մի ուժ։ Այդ ուժն ամեն ինչ կատարում է իմ նավում, լուսավորում է, տաքացնում, աշխատեցնում մեքենաները։ Այդ էլեկտրականությունն է։

— Էլեկտրականությո՞ւնը,— զարմացած բացականչեցի ես։

— Այո՛։

— Սակայն, նավապետ, ձեր նավն արտասովոր արագությամբ է շարժվում։ Դա քիչ է կապվում այն ամենի հետ, ինչ որ մեզ հայտնի է էլեկտրականության մասին։ Մինչև այժմ էլեկտրականության մեխանիկական ուժի մասին եղել է այն կարծիքը, թե խիստ սահմանափակ է այդ ուժը։

— Գիտե՞ք ինչ, պրոֆեսոր,— պատասխանեց Նավապետ Նեմոն,— էլեկտրականության էներգիան ես չեմ օգտագործում այնպես, ինչպես առհասարակ ընդունված է օգտագործել։ Բույլ տվեք ինձ սահմանափակվելու միայն այս բացատրությամբ։

— Ինչպես կուզեք, նավապետ, թեպետ ես բոլորովին ապշած եմ ձեր հաղորդած տեղեկություններից։ Խնդրում եմ ձեզ պատասխանել միայն մի հարցի, եթե իհարկե այդ հարցը ձեզ անհամեստ չթվա։ Չէ՞ որ այն տարրերը, որոնք աղբյուր են ծառայում այդ զարմանալի ուժն ստանալու համար, պետք է որ շուտով սպառվեն, մանավանդ ցինկը։ Հապա ինչպե՞ս եք լրացնում դրա պաշարը, եթե կապ չեք պահում երկրի հետ։

— Հաճույքով կպատասխանեմ ձեր այդ հարցին,— ասաց նավապետ Նեմոն,— ամենից առաջ իմացեք, որ ծովի հատակում կա ցինկ, երկաթ, արծաթ, ոսկի և այլ մետաղներ, որոնց շահագործումն անպայման հնարավոր է։ Սակայն ես չեմ օգտվում այդ մետաղներից և հենց ծովից եմ ստանում էներգիայի այն քանակը, որ անհրաժեշտ է ինձ։

— Ծովի՞ց։

— Այո, պրոֆեսոր, ծովից։ Այդ կերպ էներգիա ստանալու համար կան բազմաթիվ միջոցներ։ Օրինակ՝ ես կարող էի հաղորդիչ մարմինները զանազան խորությամբ ընկղմել ծովը և ջրի շերտերի բարեխառնության տարբերությունից էլեկտրական հոսանք ստանալ։ Սակայն ես գերադասեցի ընտրել մի այլ, ավելի գործնական միջոց։

— Այսի՞նքն։

— Դուք գիտե՞ք ծովի ջրի բաղադրությունը։ Դրա հարյուր մասից իննսունվեց և կես մասը մաքուր ջուր է, իսկ մոտ երկու և երկու երրորդ մասը՝ քլորային նատրիում։ Ապա նրա մեջ պարունակվում է քիչ քանակությամբ քլորային մագնիում և քլորային կալցիում, բրոմային մագնիում, ծծմբաթթվուտային մագնիում, ծծմբաթթվուտ և ածխա-կալցիումային աղ։ Ինչպես տեսնում եք, ծովի ջուրը բավական զգալի քանակությամբ քլորային նատրիում է պարունակում։ Եվ ահա իմ մարտկոցի համար օգտագործվում է հենց այդ քլորային նատրիումը, որը հանվում է ծովից։

— Քլորային նատրիո՞ւմը։

— Այո։ Միանալով անդիկին, քլորային նատրիումը կազմում է ամալգամ, որը Բունզենի տարրերում փոխարինում է ցինկին։ Անդիկն տարրերի մեջ չի քայքայվում։ Այսպիսով ծախսվում է միայն նատրիումը, որը ես ձեռք եմ բերում ծովից։ Պետք է նաև ասեմ ձեզ, որ նատրիումի տարրերն առնըվազն երկու անգամ ուժեղ են ցինկային տարրերից։

— Նավապետ, ես հասկանում եմ նատրիումի առավելություններն այն պայմաններում, որոնց մեջ գտնվում եք դուք։ Ծովում ինչքան ուզեք նատրիում կգտնեք։ Հրաշալի։ Սակայն չէ՞ որ նատրիումը պետք է զատել իրեն միացած քլորային նյութերից։ Դրա համար դուք ի՞նչ եք անում։ Իհարկե ձեր մարտկոցները կարող էին օգտագործվել քլորային նատրիումի էլեկտրալուծման համար, սակայն, եթե ես չեմ սխալվում, էլեկտրալուծման համար ավելի շատ նատրիում է հարկավոր, քան այդ էլեկտրալուծումից ստացվող նատրիումը։ Եվ դուք ավելի շատ նատրիում կծախսեք, քան կըստանաք։

— Հենց այդ պատճառով է, պրոֆեսոր, որ ես նատրիումը ձեռք եմ բերում ոչ թե էլեկտրաձուլման միջոցով, այլ քարածխի այրվելուց առաջացող էներգիան օգտագործելու շնորհիվ։

— Քարածխի՞։ Ուրեմն այնուամենայնիվ դուք կապվա՞ծ եք երկրի հետ։

— Ո՛չ։ Եթե ուզում եք, այդ ածուխը կարող եք անվանել ծովային։

— Նշանակում է դուք գտել եք մի միջոց, որով կարելի է շահագործե՞լ ստորջրյա ածխաշերտերը։

— Այդ դուք կտեսնեք ձեր սեփական աչքերով, պրոֆեսոր։ Ես ձեզ խնդրում եմ միայն մի քիչ համբերել, մանավանդ որ ժամանակը միանգամայն թույլ է տալիս ձեզ համբերող լինելու։ Հիշեցնեք միայն մի բան, ես բացարձակապես ամեն ինչ ստանում եմ օվկիանոսից։ Նա ինձ տալիս է էլեկտրականություն, իսկ էլեկտրականությունը «նաուտիլուսին» տալիս է տաքություն, լույս, շարժվելու հնարավորություն, մի խոսքով կյանք։

— Բացի շնչառության համար անհրաժեշտ օդից, այո՞։

— Օ՜, ես կարող էի հեշտությամբ պատրաստել հարկավոր քանակությամբ օդ, սակայն դա ավելորդ է, որովհետև ես կարող եմ ուղածս ժամանակ դուրս գալ ջրի մակերևույթը։ Սակայն հիմա էլ էլեկտրականությամբ են գործում այն զոլեղ պոմպերը, որոնցով օդը հավաքվում է հատուկ պահամաններով։ Այսպիսով ես կարող եմ երկար ժամանակ մնալ ջրի տակ, եթե այդ հարկավոր լինի։

— Նավապետ,— ասացի ես,— կարող եմ միայն խոնարհվել ձեր առաջ։ Ըստ երևույթին ձեզ հաջողվել է հայտնագործել այն, ինչ որ մարդիկ պիտի հայտնագործեն շատ ավելի ուշ՝ էլեկտրականության վիթխարի դինամիկական ուժը։

— Չգիտեմ, երբևէ նրանք կհայտնագործե՞ն այդ,— սառը պատասխանեց նավապետ Նեմոն,— սակայն, այսպես թե այնպես, դուք արդեն գիտեք, թե ես ինչպես եմ գործադրում այդ զարմանալի ուժը։ Այդ ուժն է, որ արևից էլ ավելի կանոնավոր և անընդհատ լուսավորում է նավը։ Հիմա նայեցեք այդ ժամացույցին, դա էլեկտրական է և աշխատում է այնպիսի ճշտությամբ, ինչպես կաշխատեր լավագույն քրոնոմետրը։ Ես թվատախտակը բաժանել եմ քսանչորս ժամի, ինչպես իտալական ժամացույցները, որովհետև ինձ համար գոյություն չունի ոչ ցերեկը, ոչ գիշերը, ոչ արևը, ոչ լուսինը, այլ գոյություն ունի միայն այն արհեստական լույսը, որով ես օգտվում եմ ծովերի խորքերում։ Նայեցեք, հիմա առավոտյան ժամը տասն է։

— Միանգամայն ճիշտ է։

— Ահա ձեզ էլեկտրականության մի այլ գործադրություն։ Այս թվատախտակը, որ փակցված է ձեր աչքերի առաջ, ցույց է տալիս «Նաուտիլուսի» շարժման արագությունը։ Դա էլեկտրալարերով միացած է պտուտակին և սլաքները ինձ ասում են, թե նավն ինչ արագությամբ է գնում։ Ա՛յ, տեսնո՞ւմ եք, հիմա մենք գնում ենք չափավոր արագությամբ, մեկ ժամում տասնհինգ մղոն։

— Ապշեցուցիչ է այդ բոլորը,— բացականչեցի ես,— այժմ ես տեսնում եմ, նավապետ, որ դուք միանգամայն ճիշտ եք վարվել, օգտագործելով բնության հենց այդ ուժը, որ փոխարինում է քամու և գոլորշու ուժին։

— Մենք դեռ չենք վերջացրել մեր դիտումը, պրոֆեսոր,— աթոռից վեր կենալով ասաց նավապետ Նեմոն,— եթե դուք չեք հոգնել, անցնենք «Նաուտիլուսի» հետին մասը։

Հիրավի, ես արդեն ծանոթացել էի ստորջրյա նավի առջևի ամբողջ մասի հետ։ Ահա այն սենյակների ցուցակը, որոնք գտնվում էին նավի այդ մասում, մեջտեղից մինչև առջևի ծայրը.— հինգ մետր երկարությամբ սեղանատունը, որ գրադարանից բաժանված էր անջրանցիկ միջնորմով, նույնքան երկարությամբ գրադարանը, տասը մետրանոց մեծ սրահը, որ նավապետի սենյակից բաժանված էր երկրորդ անջրանցիկ միջնորմով, նավապետի հինգ մետրանոց սենյակը, իմ սենյակը, որի երկարությունը հասնում էր երկու և կես մետրի և վերջապես, օդի պահեստը, որ ուներ յոթ և կես մետր երկարություն և հասնում էր մինչև ցուկը։

Ընդհանրապես նավի այդ մասի երկարությունը կազմում էր երեսուն հինգ մետր։ Անջրանցիկ միջնորմներն ունեին հերմետիկորեն փակվող դռներ և պետք է «Նաուտիլուսն» ապահովեին ջուրը ներս լցվելուց, այն դեպքում, եթե նավի մի որևէ մասից ջուր հոսեր։

Նավի մեջտեղի միջանցքներում ես հետևեցի նավապետ Նեմոյին։ Ես տեսա նեղ ջրհորի նման ինչ-որ մի բան, որ գտնվում էր երկու անջրանցիկ միջնորմների արանքում։ Երկաթե, փոքրիկ մի սանդուղք, որ պտուտակներով ամրացրած էր ջրհորի պատերին, տանում էր դեպի առաստաղը։ Ես հարցրի նավապետին, թե ինչի համար է այդ ջրհորը։

— Այնտեղից կարելի է իջնել դեպի մակույկը,— պատասխանեց նավապետը։

— Ինչպե՞ս, դուք մակո՞ւյկ ունեք,— տարակուսանքով հարցրի ես։

— Իհարկե։ Հիանալի մակույկ, որ թեթև է և ջրաստույգ չի լինում։ Դա օգտագործվում է զբոսանքի և ձկնորսության համար։

— Եվ այդ մակույկը ջուրն իջեցնելու համար դուք բարձրանում եք ծովի երեսը, այո՞։

— Բոլորովին ոչ։ Մակույկը տեղավորվում է «Նաուտիլուսի» տախտակամածում, հատուկ տեղում։ Դա ունի հերմետի-

կորին փակվող, անջրանցիկ կափարիչ, և իր տեղում ամրացվում է հեղույսներով։ Այս սանդուխքը տանում է «նաուտիլուսի» տախտակամածում գտնվող մի անցք, որը միանում է մակույկի հատակում եղած մի ուրիշ անցքի հետ։ Այդ ճանապարհով ես մտնում եմ մակույկը։ Այնուհետև փակվում է «նաուտիլուսի» անցքը։ Մակույկի անցքն էլ ես եմ փակում հատուկ կափարիչով։ Հետո ես հանում եմ պտուտակները, և մակույկը մեծ արագությամբ դուրս է գալիս ծովի երեսը։ Այդ ժամանակ ես քանդում եմ ծալվող կափարիչը, իր տեղն եմ դնում կայմը, առագաստը, կամ սկսում եմ թիավարել և զբոսնել ծովի վրա։

— Իսկ ինչպե՞ս եք վերադառնում նավը։

— Ես չեմ վերադառնում։ «Նաուտիլուսն» է գալիս ինձ մոտ։

— Ձեր հրամանո՞վ։

— Այո, իմ հրամանով։ Մակույկն էլեկտրալարով միացած է նավին։ Երբ ես ուզում եմ վերադառնալ, հեռագիր եմ տալիս։

— Իսկապե՛ս,— բացականչեցի ես, ապշած լինելով այդ բոլոր հրաշքներից,— ի՞նչ հասարակ բան է եղել այդ բոլորը։

Անցնելով դեպի տախտակամածը տանող սանդուղքի մոտից, մենք հասանք երկու մետր երկարությամբ մի նավասենյակ, որտեղ Նեդ Լենդն ու Կոնսելը կուլ էին տվել փառավոր նախաճաշը։ Այնտեղ էր գտնվում խոհանոցը, որ ուներ երեք մետր երկարություն։ Այնտեղ էին գտնվում նաև ընդարձակ մառանները։ Խոհանոցն էլեկտրականությամբ էր տաքացվում։ Պլատինե թիթեղները շիկանում էին իրենց հետ միացած էլեկտրալարերից, պահպանելով այնքան տաքություն, որքան անհրաժեշտ էր եփելու, տապակելու կամ թխելու համար։ Էլեկտրականությամբ էր տաքացվում նաև զտիչ մի ապարատ, որը ծովի ջուրը թորելու միջոցով բավականաչափ խմելու ջուր էր մատակարարում նավորդներին։

Խոհանոցի կողքին գտնվում էր վաննան ու լվացարանը՝ տաք և սառը ջրով։

Վաննայից դենը նավորդների սենյակն էր, որն ուներ հինգ մետր երկարություն։ Այս սենյակի դուռը փակ էր, և ես չկա-

ողացա որոշել «Նաուտիլուսի» անձնակազմի քանակը, թեպետ այդ շատ էի ուզում։

Այստեղ էր գտնվում նաև չորրորդ անջրանցիկ միջնորմը, որ նավորդների սենյակը բաժանում էր մեքենաների բաժանմունքից։ Անցնելով միջնորմի դռնից, մենք մտանք մի սրահ, որտեղ նավապետ Նեմոն, այդ առաջնակարգ ինժենները, տեղավորել էր «Նաուտիլուսը» շարժող մեքենաները։

Պայծառ լուսավորված այդ սրահն ուներ առնվազն քսան մետր երկարություն։ Սրահը բաժանվում էր երկու մասի։ Առաջին մասում տեղավորված էին էլեկտրական էներգիա արտադրող տարրերը, երկրորդում — մեքենաները, որոնք շարժում էին նավի պտուտակը։

Ինձ զարմացրեց այդ սրահում տարածված ինչ-որ տարօրինակ մի հոտ։ Նավապետ Նեմոն նկատեց իմ տարակուսանքը։

— Սա նատրիումի հանուրդից առաջացող գազի հոտն է,— ասաց նա։ Սակայն վերջին հաշվով դա այնքան էլ մեծ անհարմարություն չի ներկայացնում։ Ամեն առավոտ մենք հիմնովին մաքրում ենք նավի օդը։

Ես լարված հետաքրքրությամբ դիտում էի «Նաուտիլուսի» մեքենաները։

— Ինչպես տեսնում եք,— ասաց նավապետ Նեմոն,— ես օգտվում եմ ոչ թե Ռումկորֆի, այլ Բունզենի տարրերով։ Ռումկորֆի տարրերն ինձ չէին կարող տալ անհրաժեշտ քանակությամբ էներգիա։ Բունզենի մարտկոցներից ես շատ չունեմ, սակայն եղածներից յուրաքանչյուրը չափազանց ուժեղ է։ Մարտկոցներում առաջացող էլեկտրականությունը հաղորդվում է սրահի հակադիր ծայրը, այնտեղ ներգործում է հրակայական էլեկտրամոտորների վրա, որոնք մխոցների և շարժանիվների բարդ սիստեմների միջոցով պտտեցնում են թիակավոր գլանը։ Այդ գլանի շառավիղը վեց մետր է, երկարությունը՝ յոթ և կես մետր։ Չնայելով այդ մեծ ծավալին, գլանը մի վայրկյանում հարյուր քսան պտույտ է կատարում։

— Եվ ձեր նավի արագությունը...

— Մի ժամում հասնում է հիսուն մղոնի։

Այստեղ ինչ-որ գաղտնիք էր թաքնված, սակայն ես չէի համարձակվում բացատրություն պահանջել։ Որտեղի՞ց էր

էլեկտրականության այդ հսկայական ուժը։ Ո՞րն էր այդ շրջված, որեթե անսահմանափակ հզորության աղբյուրը։ Գուցե այստեղ օգտագործվում են նոր ձևի կոճեր, որոնք բարձր լարվածություն են ցույց տալիս, կամ գոյություն ունի փոխհաղորդիչների մի առանձնահատուկ համակարգ։ Այդ անհասկանալի էր ինձ համար։

— Նավապետ Նեմո,— ասացի ես,— խոնարհվում եմ այս ամենի առաջ և չեմ էլ փորձում պարզել, թե դուք ինչպես եք հասել նման արդյունքների։ Ես տեսա, թե ինչպես «Նաուտիլուսը» լողում էր «Աբրահամ Լինկոլնի» շուրջը և գիտեմ, թե նա ինչպիսի հրեշավոր արագությամբ է կարողանում ընթանալ։ Սակայն չէ՞ որ միայն արագությունը բավական չէ։ Հարկավոր է նաև տեսնել, թե ուր ես գնում։ Հարկավոր է հնարավորություն ունենալ նավն ուղղելու դեպի վերև, ներքև, աջ և ձախ։ Այդ բոլորը դուք ինչպե՞ս եք հաջողեցնում օվկիանոսի խորքերում, ուր ճնշումը հարյուրավոր մթնոլորտների է հասնում։ Ինչպե՞ս եք բարձրանում օվկիանոսի երեսը։ Վերջապես ի՞նչ միջոցով եք նավին ուղղություն տալիս ձեր ընտրած ջրային շերտերում։ Արդյոք այսչափ հարցեր տալն անհամեստություն չէ՞ իմ կողմից։

— Ամենևին, պրոֆեսոր,— պատասխանեց նավապետը մի փոքր տատանվելուց հետո,— չէ՞ որ դուք երբեք չեք հեռանալու այս ստորջրյա նավից։ Անցնենք սրահ։ Այնտեղ է իմ աշխատասենյակը և այնտեղ դուք կիմանաք այն ամենը, ինչը պետք է իմանաք «Նաուտիլուսի» մասին։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Մի քանի թվեր

Մի քանի րոպեից հետո մենք արդեն նստել էինք սրահում, բազմոցների վրա, և սիգար էինք ծխում։ Նավապետ Նեմոն ինձ տվեց այն գծագրերը, որոնք պատկերացնում էին «Նաուտիլուսը» երկարության ու լայնության կտրվածքով։ Այնուհետև նա սկսեց իր բացատրությունը։

— Ահա, պարոն պրոֆեսոր, այն նավի ուրվագծերը, որտեղ գտնվում եք դուք։ Սա երկար մի գլան է՝ կոնաձև ծայրերով։ Իր ձևով նա նման է սիգարին, իսկ այդ ձևը Լոնդոնում լավագույնն է համարվում նման նավերի վերաբերմամբ։ Գլանի ամբողջ երկարությունը հավասար է ճիշտ յոթանասուն մետրի, իսկ ամենամեծ լայնությունը (մեջտեղում)՝ ութ մետրի։ Ես չեմ պահպանել այն հարաբերությունը, որ սովորաբար պահպանվում է արագընթաց նավերի երկարության ու լայնության միջև, այսինքն երբ երկարությունը տասն անգամ ավելի է լինում լայնությունից։ Սակայն իմ ընտրած երկարության ու լայնության հարաբերությունն այնպես է, որ նավն առջևից այնքան էլ մեծ դիմադրության չի հանդիպում, և դուրս մղվող ջուրը չի արգելակում նրա ընթացքը։ Այս տվյալներն արդեն ձեզ թույլ են տալիս հաշվելու «Նաուտիլուսի» մակարդակն ու ծավալը։ Նրա մակարդակը կազմում է ճիշտ հազար տասնմեկ ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական քառակուսի մետր, ծավալը՝ հազար հինգ հարյուր ամբողջ երկու տասնորդական խորանարդ մետր։ Սրանից հետևում է, որ ամբողջովին ջրասույզ լինելու դեպքում նավը դուրս է մղում հազար հինգ հարյուր խորանարդ մետր կամ նույնքան տոննա ջուր։

Այս սուզանավի պլանը կազմելիս ես հետապնդում էի հետևյալ նպատակը.— այնպես անել, որ «Նաուտիլուսը» ծովում ինը տասներորդ մասով լինի ջրի տակ և տասներորդ մասով — ջրից դուրս։ Նման պայմաններում նավը պետք է դուրս մղեր իր ծավալի ինը տասներորդ մասի չափ ջուր, կամ հազար երեք հարյուր հիսունվեց ամբողջ քառասունութ հարյուրերորդական խորանարդ մետր ջուր և կշռեր նույնքան տոննա։ Ուրեմն ես պետք է այնպես անեի, որ նավի ծանրությունը դրանից ավելի չլիներ։

«Նաուտիլուսն» ունի երկու մաս, ներքին և արտաքին։ Այդ մասերը միացած են երկաթե դերաններով, որոնք ունեն «Т» տառի ձևը։ Դերաններն արտասովոր ամրություն են տալիս նավին։ Հիրավի, այդպիսի կառուցվածքի շնորհիվ, «Նաուտիլուսը» դատարկ լինելու դեպքում նույնպիսի դիմադրություն ունի, ինչ որ այն դեպքում, երբ նա ասենք թե լցված

լինի ջրով։ Նավի կառուցվածքը չափազանց ամուր է և ծովային ոչ մի փոթորիկ և ալեկոծություն սարսափելի չէ նրա համար։

Հիշված երկու մասերը բաղկացած են պողպատյա թերթերից, որոնք չափազանց դիմացկուն են։ Ներքին մասի թերթերի հաստությունը հավասար է մոտավորապես հինգ սանտիմետրի, իսկ այդ մասի ծանրությունը՝ երեք հարյուր իննսունչորս ամբողջ և իննսունվեց հարյուրերորդական տոննայի։ Արտաքին մասը, որ ունի հիսուն սանտիմետր բարձրություն և քսանհինգ սանտիմետր լայնություն և կշռում է վաթսուներկու տոննա, ապա մեքենաները, բեռը, մնացած ամբողջ կահավորանքը, սարքավորումը, ներքին միջնորմներն ու հենարանները՝ այս ամենը միասին վերցրած կշռում է ինը հարյուր վաթսունմեկ ամբողջ հիսուներկու հարյուրերորդական տոննա, որ ներքին մասի երեք հարյուր իննսունչորս ամբողջ իննսունվեց հարյուրերորդական տոննայի հետ միասին կազմում է նավի ընդհանուր ծանրությունը՝ հազար երեք հարյուր հիսունվեց ամբողջ քառասունութ հարյուրերորդական տոննա։ Հասկացա՞ք։

— Հասկացա։

— Այսպես ուրեմն,—շարունակեց նավապետը,—երբ «Նաուտիլուսը» գտնվում է ջրի երեսին, այդչափ բեռնվածության դեպքում ջրից դուրս է գալիս մեկ տասներորդ մասով։ Հետևաբար, եթե նավում լինեին պահաստներ այդ տասներորդ մասի տարողությամբ, այսինքն հարյուր հիսուն ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական տոննա տարողությամբ, և եթե այդ պահաստները լցվեին ջրով, ապա «Նաուտիլուսը», որ դուրս է մղում հազար հինգ հարյուր խորանարդ մետր ջուր, կամ որ միևնույն է, կշռում է հազար հինգ հարյուր յոթ տոննա, ամբողջովին ջրասույզ կլիներ։ Հենց այդպես էլ լինում է գործնականում։ «Նաուտիլուսն» ունի պահաստներ, որոնք տեղավորված են նրա ներքին մասում։ Բավական է բաց անել ծորակները, և այդ պահաստները լցվում են ջրով ու նավն ամբողջովին ջրասույզ է լինում, իր վերին մասով հավասարվելով ծովի մակերևույթին։

— Շատ գեղեցիկ, նավապետ։ Բայց իմ կարծիքով հենց

այստեղից են սկսվում դլխավոր դժվարությունները։ Անշուշտ դուք կարող եք ջրասույզ լինել այնքան, որ «նաուտիլուսի» ոչ մի սանտիմետրը ջրից դուրս չմնա։ Սակայն, երբ ձեր նավը խորն է իջնում, մի՞թե ուժեղ դիմադրության չի հանդիպում։ Մի՞թե այդ ճնշումը նավը վարից վեր չի մղում այնպիսի ուժով, որը կազմում է մոտավորապես մեկ մթնոլորտ ջրի յուրաքանչյուր երեսուներկու ոտնաչափ շերտի վրա, կամ այլ կերպ ասած՝ այնպիսի ուժով, որը հավասար է մեկ քառակուսի սանտիմետրի վրա մեկ կիլոգրամի ճնշման։

— Միանգամայն ճիշտ է, պրոֆեսոր։

— Այդ դեպքում, եթե դուք ամբողջ «նաուտիլուսը» չեք լցնում ջրով, ապա ես չգիտեմ, թե նավն ինչպես է ջրասույզ լինում։

— Պարոն պրոֆեսոր,— ասաց նավապետ Նեմոն,— չպետք է շփոթել ստատիկան և դինամիկան, թե չէ կարող են լուրջ սխալներ լինել։ Օվկիանոսի խորքերը մտնելու համար այնքան էլ բարդ աշխատանք չի պահանջվում։ Հետևեցեք իմ դատողությունների ընթացքին։

— Ես ուշադրությամբ լսում եմ ձեզ։

— Ինչքա՞ն պետք էր ավելացնել «նաուտիլուսի» ծանրությանը, որպեսզի նա իջներ ծովերի խորքը։ Այդ բանը պարզելու համար ես պետք է հաշիվ անեի, թե ինչքան է ծովի վերին շերտերի ճնշումն այս կամ այն խորության ստորին շերտերի վրա։

— Դա ակներև է, նավապետ։

— Սակայն, թեև չի կարելի ժխտել, որ ջուրը սեղմվելու հատկություն ունի, բայց և այնպես, այդ հատկությունը խիստ սահմանափակ է։ Եվ իսկապես, նորագույն տվյալների համաձայն, ճնշումը մեկ մթնոլորտով ավելանալու դեպքում, այսինքն՝ երեսուն ոտնաչափ խորությամբ, ջուրը սեղմվում է շորս հարյուր երեսունվեց տասը միլիոներորդ մասով։ Հազար մետը խորությամբ ջրասույզ լինելու համար պետք է հաշվի առնել հազար մետր բարձրությամբ ջրային սյան ճնշումից, այսինքն հարյուր մթնոլորտ ճնշումից առաջացող՝ ծավալի փոքրացումը։ Այս դեպքում ծավալի փոքրացումն արտահայտվում է շորս հարյուր երեսունվեց հարյուրերորդականով։

Հետևաբար, նավի կշիռը պետք է ավելանա մինչև հազար հինգ հարյուր տաններեք ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական տոննա՝ հազար հինգ հարյուր յոթ ամբողջ երկու տասնորդական նորմալ կշռի փոխարեն։ Այսպիսով հարկավոր կլինի նավի ծանրությունն ավելացնել ընդամենը վեց ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական տոննայով։

— Ընդամե՞նը։

— Այո, պարոն Արոնաքս, իսկ այս հաշիվը դժվար չէ ստուգել։ Հետո, ես ունեմ պահեստի պահամաններ հարյուր տոննա տարողությամբ։ Դրանց շնորհիվ ես կարող եմ ավելի խորը չրասուզվել։ Ջրի երեսը բարձրանալու համար բավական է, որ ես դատարկեմ այդ լրացուցիչ պահամանների ջուրը։ Իսկ եթե ուզում եմ, որ «Նաուտիլուսի» մեկ տասներորդ մասը դուրս գա ջրից, ամբողջովին դատարկում եմ բոլոր ամբարները։

Ես էլ ի՞նչ կարող էի առարկել այդ դատողությունների դեմ, որոնք հիմնվում էին ստույգ թվերի վրա։

— Ես ընդունում եմ ձեր փաստարկումները, նավապետ, — ասացի ես,— և իսկապես, ծիծաղելի կլիներ դրանք վիճելի դարձնել այն ժամանակ, երբ գործնական կյանքն ամեն օր հաստատում է դրանց ճշտությունը։ Սակայն իմ մեջ առաջանում է մի կասկած ևս։

— Ի՞նչ կասկած։

— Երբ դուք չրասուզվում եք հազար մետր խորությամբ, «Նաուտիլուսի» պատերի վրա հարյուր մթնոլորտ ճնշում է լինում։ Հետևաբար, եթե դուք, գտնվելով այդչափ խորը, ցանկանաք դատարկել պահամանները, որպեսզի ձեր նավը թեթևանա և բարձրանա ծովի երեսը, ապա պահամաններից ջուրը դատարկող պոմպերի վրա կլինի լրացուցիչ ճնշում, յուրաքանչյուր քառակուսի սանտիմետրի վրա հարյուր կիլոգրամ։ Իսկ դա պոմպերից կպահանջի այնպիսի հզորություն...

— Որը կարող է տալ միայն էլեկտրականությունը,— ընդհատեց ինձ նավապետ Նեմոն։— Կրկնում եմ, պրոֆեսոր, իմ մեքենաների հզորությունը համարյա անսահման է։ «Նաուտիլուսի» պոմպերն արտասովոր ուժ ունեն։ Դրանում դուք պետք է համոզվեիք այն ժամանակ, երբ իմ պոմպերի ուժով

ջրի այունները, ինչպես ջրվեժ, թափվեցին «Աբրահամ Լինկոլնի» տախտակամածի վրա։ Սակայն, որպեսզի իմ մարտկոցները չծանրաբեռնեմ լրացուցիչ պահամաններով, ես դրանցով օգտվում եմ միայն այն դեպքերում, երբ ուզում եմ ջրասույզ լինել հազար հինգ հարյուրից մինչև երկու հազար մետր։ Իսկ եթե խելքիս փչում է այցելել օվկիանոսի ամենախորը մասերը՝ ութ-տասը հազար մետր դեպի ցած, ապա ես դիմում եմ ուրիշ միջոցների, որոնք թերևս ավելի բարդ, սակայն հուսալի են, ինչպես և իմ թված մյուս միջոցները։

— Այսի՞նքն, նավապետ։

— Որպեսզի ձեզ համար այդ հասկանալի լինի, ես պետք է նախ պատմեմ, թե ինչպես եմ կառավարում «Նաուտիլուսը»։

— Ես անհամբերությամբ ուզում եմ իմանալ այդ։

— Նավը դեպի աջ կամ դեպի ձախ տանելու համար, կամ ուրիշ խոսքով, նրան հորիզոնական ընթացք տալու համար ես օգտագործում եմ սովորական մի ղեկ, որ գտնվում է նավախելի մոտ։ Այդ ղեկը գործում է անիվի և պարանի միջոցով։ Սակայն «Նաուտիլուսը» կարելի է ուղղել նաև դեպի վերև ու ներքև, որի համար օգտագործվում են նավի կողքերին, ջրագծի մոտ գտնվող երկու հատուկ մասեր։ Սրանք վերև ու ներքև են շարժվում նավի ներսում գտնվող լծակների միջոցով։ Երբ հիշված մասերը զուգահեռական դիրք են ընդունում ողնուցի հետ, «Նաուտիլուսը» գնում է հորիզոնական ուղղությամբ։ Երբ նրանք թեքված են, «Նաուտիլուսը», նայած այդ թեքման աստիճանին, իջնում է թեք կամ բարձրանում թեք գծով, իսկ այդ գծի երկարությունն ամբողջովին կախված է իմ ցանկությունից։ Դեռ ավելին, եթե ես ուզում եմ արագացնել վերելքը, կանգնեցնում եմ պտուտակը և ջրի ճնշման շնորհիվ «Նաուտիլուսը» բարձրանում է վեր, ինչպես ջրածնով լցված օդապարիկ։

— Կեցցեք, նավապետ,— բացականչեցի ես,— սակայն ջրասույզ եղած «Նաուտիլուսը» կուրորե՞ն է կառավարվում։

— Բոլորովին ոչ։ «Նաուտիլուսի» տախտակամածում, նրա առջևի մասում կառուցված է հատուկ տեղ ղեկավարի համար։ Այնտեղ տեղավորված լուսացույցներն ունեն ոսպնյակներ։

— Եվ այդ ապակիները դիմադրո՞ւմ են ճնշումներին։

— Այո՛։ Բյուրեղապակին, որ կարող է փշրվել վայր ընկնելուց կամ ցնցումից, միևնույն ժամանակ որոշ դեպքերում բավականաչափ ամուր է լինում։ 1864 թվականին, երբ Հյուսիսային ծովում էլեկտրական լույսի տակ ձուկ որսալու փորձեր էին կատարվում, յոթ միլիմետր հաստությամբ բյուրեղապակյա թիթեղները դիմացան տասնվեց մթնոլորտ ճնշման։ Իսկ այն ապակիները, որ ես եմ օգտագործում, ունեն մինչև քսանմեկ սանտիմետր հաստություն, այսինքն երեսուն անգամ ավելի հաստ են։

— Ես հասկացա։ Սակայն տեսանելիությունն ապահովելու համար շատ ուժեղ լույս է հարկավոր, այնպես որ, հարց է ծագում, թե ինչպես օվկիանոսի մթին խորքերում...

— Ղեկի ձեղնախցիկի հետևում տեղավորված է էլեկտրական մի ուժեղ անդրադարձիչ,— ընդհատեց ինձ նավապետ Նեմոն,— որի ճառագայթները ջուրը լուսավորում են կես մղոն տարածությամբ։

— Կեցցեք, եռակի կեցցեք, նավապետ։ Հիմա ինձ հասկանալի է տխրահռչակ «միաժանու» տարածած էլեկտրական լույսը, այն միաժանու, որ այնքա՛ն շփոթեցրել էր գիտնականներին։ Ի դեպ, թույլ տվեք իմանալ, արդյոք սոսկ պատահականությո՞ւն է եղել «Նաուտիլուսի» և «Շոտլանդիայի» ընդհարումը, որ այնքան աղմուկ հանեց ամբողջ աշխարհում։

— Միմիայն պատահականություն, պրոֆեսոր։ Ընդհարումը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ իմ նավն ընթանում էր երկու մետր ջրի տակ։ Սակայն ես իսկույն տեսա, որ ոչ մի փորձանք չի պատահել։

— Միանգամայն ճիշտ է։ «Շոտլանդիան» հաջողությամբ հասավ նավահանգիստ։ Լավ, իսկ ինչո՞վ վերջացավ ձեր հանդիպումն «Աբրահամ Լինկոլնի» հետ։

— Պարոն պրոֆեսոր, ես էլ եմ ցավում ամերիկական քաջարի նավատորմիղի այդ լավագույն նավի համար, սակայն նա հարձակվում էր ինձ վրա և ես պետք է պաշտպանվեի։ Այնուամենայնիվ ես սահմանափակվեցի նրանով, որ մարտանավը զրկեցի ինձ վրա հարձակվելու հնարավորությունից։

նրա համար դժվար չի լինի ամենամոտիկ նավահանգստում կարգի բերել վնասված տեղերը։

— Օ՜, նավապետ,— բացականչեցի ես,— իսկապես որ սքանչելի նավ է «Նաուտիլուսը»։

— Այո, պրոֆեսոր,— մի փոքր հուզված պատասխանեց նավապետ Նեմոն,— ես սիրում եմ այս նավն ինչպես հարազատ մանկան։ Օվկիանոսում գտնվող նավերին հազարավոր վտանգներ են սպառնում։ Յուրաքանչյուր պատահականություն կարող է նրանց համար ճակատագրական դառնալ։ Մինչդեռ այստեղ, ծովերի խորքում մարդը ոչնչից չպիտի վախենա։ Կարիք չկա վախենալու, որ նավը կարող է ճզմվել որոշ ճնշումից, քանի որ այն ավելի ամուր է, քան երկաթը։ Այս նավը չունի մաշվող սարքավորում, չունի առագաստներ, որոնց կարող է պոկել քամին։ Չկան այնպիսի կաթսաներ, որոնք կարող են պայթել։ Հրդեհը սարսափելի չէ, քանի որ նավը փայտյա մասեր չունի։ Չկա ածուխ, որի պաշարը ընպառվում է արագությամբ, չէ՞ որ «Նաուտիլուսը» միմիայն էլեկտրականությամբ է շարժվում։ Սարսափելի չեն ընդհարումները, որովհետև միայն «Նաուտիլուսն» է, որ ակոսում է օվկիանոսների խորքերը։ Փոթորիկները վտանգավոր չեն, որովհետև օվկիանոսի մակերևույթից մի քանի մետր ցած միշտ տիրում է անդորրություն։ Ահա, պրոֆեսոր, իդեալական մի նավ։ Եվ եթե ճիշտ է այն, որ գյուտարարը միշտ ավելի է հավատում իր նավին, քան կառուցող ինժեները, իսկ վերջինս ավելի է հավատում, քան նավապետը, ապա դուք կհասկանաք, թե ես ինչպիսի անսահման վստահությամբ եմ վերաբերվում դեպի «Նաուտիլուսը», ես, որ միաժամանակ նավի և՛ գյուտարարն եմ, և՛ կառուցողը, և՛ նավապետը։

Նավապետ Նեմոն խոսում էր մեծ ոգևորությամբ։ Նրա աչքերում վառված կրակը, շարժումների աշխուժությունը կերպարանափոխել էին նրան։

Գլխումս մի նոր հարց ծագեց, ու թեև այն կարող էր անհամեստ թվալ, այնուամենայնիվ ես ինձ չկարողացա զսպել և այդ հարցը տվի նավապետ Նեմոյին։

— Ուրեմն դուք ինժեներական կրթությո՞ւն եք ստացել։

— Այո,— պատասխանեց նա,— այն ժամանակ, երբ ես

ցամաքի բնակիչ էի, սովորում էի Լոնդոնում, Փարիզում և Նյու-Յորքում։

— Բայց այս զարմանալի սուզանավը կառուցելիս դուք ինչպե՞ս կարողացաք պահել գաղտնիքը։

— Պարոն պրոֆեսոր, նավի առանձին մասերն արտադրվել են երկրագնդի զանազան վայրերում, իսկ թե ինչի համար էին պատրաստվում դրանք, ես այդ թաքցնում էի գործարաններից։ «Նաուտիլուսի» ողնուցը կոփվել է Ֆրանսիայում, Կրեզոյի գործարաններում, թիակավոր գլանը՝ Լոնդոնում, Պենա և Ընկ. գործարաններում՝ պտուտակը՝ Գլազգոյում, Սկոտի գործարանում, պահամանները՝ Փարիզում, Կայլ և Ընկ. ձեռնարկություններում, մեքենան Գերմանիայում, Կրուպպի գործարաններում, բաբանը՝ շվեդացի Մոթանի գործարաններում, ճշգրիտ պարագաները Նյու-Յորքում, եղբայրք Հարտերի գործարաններում և այլն և այլն։ Յուրաքանչյուր մատակարար ստացել է իմ գծագրությունները, որոնք ստորագրված են եղել ուրիշ անունով։

— Սակայն,— ասացի ես,— չէ՞ որ բավական չէր ունենալ առանձին մասերը, հարկավոր էր դրանք հավաքել, տեղը գցել, իսկ դա բարդ հարմարեցումներ է պահանջում։

— Հետո՛ւ օվկիանոսում, ամայի մի կղզու ափին ես ինձ համար նավաշինարան կառուցեցի։ Այնտեղ ինձ մոտ սովորած բանվորները, իմ հավատարիմ ընկերները իմ հսկողությամբ հավաքեցին «Նաուտիլուսը»։ Երբ այդ գործն ավարտվեց, հրդեհը ոչնչացրեց այդ կղզում մեր գտնվելու բոլոր հետքերը։ Եթե հնարավոր լիներ, ես կպայթեցնեի ամբողջ կղզին։

— Պետք է ենթադրել, որ այս նավը հսկայական գումարներ է նստել ձեզ վրա։

— Սովորական երկաթյա նավի յուրաքանչյուր տոննան արժե հազար հարյուր քսանհինգ ֆրանկ։ Իմ «Նաուտիլուսը» կշռում է հազար հինգ հարյուր տոննա։ Հետևաբար նա արժե մոտ երկու միլիոն ֆրանկ, եթե հաշվենք միայն նրա սարքավորման արժեքը, իսկ եթե նկատի ունենանք նաև այստեղ գտնվող հավաքածոները և արվեստի պարագաները, ապա «Նաուտիլուսի» արժեքը կլինի չորս-հինգ միլիոն ֆրանկ։

— Թույլ տվեք, նավապետ, մի վերջին հարց եւս։

— Ասացեք, պրոֆեսոր։

— Դուք շա՞տ եք հարուստ։

— Ես անսահման հարստություն ունեմ և կարող էի առանց դժվարությունների հանդիպելու և աղքատանալու տասը միլիարդ պարտք վճարել Ֆրանսիային։

Ես զարմացած նայեցի այդ տարօրինակ մարդուն։

Արդյոք նա ի՞նչ էր գործադրում իմ դյուրահավատությունը։

Այդ պետք է ցույց տար ապագան։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

«ՍԵՎ ԳԵՏԸ»

Երկրագնդի վրա ջրի բռնած տարածությունը հավասար է երեք հարյուր վաթսունմեկ միլիոն քառակուսի կիլոմետրի։ Ջրային այդ զանգվածի ծավալը կազմում է երկու միլիարդ երկու հարյուր հիսուն միլիոն խորանարդ մղոն։ Եթե այդ ամբողջ ջուրը կշռվի, դուրս կգա երեք կվինտիլիոն տոննա։ Այդ թվի մասին գաղափար կազմելու համար պետք է գիտենալ, որ կվինտիլիոնը միլիարդին հարաբերական է այնպես, ինչպես միլիարդը—մեկին, կամ այլ կերպ ասած, կվինտիլիոնի մեջ կա այնքան միլիարդ, որքան միավոր կա միլիարդի մեջ։ Այդ զանգվածը մոտավորապես համապատասխանում է ջրի այն քանակին, որ երկրագնդի բոլոր գետերը կարող են ծովերը լցնել քառասուն հազար տարվա ընթացքում։

Երկրագնդի գոյության սկզբներում, հրեղեն ժամանակաշրջանին հետևեց ջրային ժամանակաշրջանը։ Սկզբում օվկիանոսը ծածկում էր ամբողջ երկիրը։ Այնուհետև, սիլուրիական դարաշրջանում հետզհետե սկսվեց լեռների առաջացման պրոցեսը։ Օվկիանոսից լեռնագագաթները դուրս եկան։ Այնուհետև երևան եկան կղզիները. սրանք էլի չքացան մասնակի ջրհեղեղներից, հետո էլի երևացին, ամրացան, դարձան մայր ցամաքներ։ Վերջապես, ցամաքը հասավ այն դրության, որ

մենք տեսնում ենք հիմա։ Ցամաքը ջրից նվաճեց հարյուր քառասուն միլիոն վեց հարյուր հազար յոթ քառակուսի կիլոմետր տարածություն։

Մայր ցամաքների դիրքը թույլ է տալիս ջուրը բաժանել հինգ գլխավոր մասերի.

Հյուսիսային Սառուցյալ օվկիանոս։

Հարավային Սառուցյալ օվկիանոս։

Հնդկական օվկիանոս։

Ատլանտյան օվկիանոս և

Խաղաղ օվկիանոս։

Խաղաղ օվկիանոսը տարածված է հյուսիսից հարավ, երկու բևեռային շրջանների միջև, ապա արևմուտքից արևելք, Ասիայի ու Ամերիկայի միջև՝ հարյուր քառասունհինգ աստիճան երկարության տակ։ Սա ամենահանգիստն է բոլոր օվկիանոսներից։ Նրա հոսանքները լայն են ու դանդաղ, մակընկիանոսները թացությունները ու տեղատվությունները մեծ չեն, հորդ անձրևներ են գալիս։

Այսպես է այն օվկիանոսը, որտեղից սկսվեցին իմ արտասովոր ճանապարհորդությունները։

— Եթե ուզում եք, պրոֆեսոր,— ասաց ինձ նավապետ Նեմոն,— մենք ճշտությամբ կորոշենք այն տեղը, ուր գտնվում ենք։ Ժամը տասներկուսից քառորդ է պակաս։ Հիմա ես կկարգադրեմ «Նաուտիլուսը» բարձրացնել օվկիանոսի մակերեսը։

Այս խոսքերի վրա նավապետը երեք անգամ սեղմեց էլեկտրական զանգի կոճակը։ Պոմպերը սկսեցին ջուրը դուրս մղել պահեստանոցներից։ Խտաչափի սլաքը շարժվեց ու սահեց թվացույցի վրա, ցույց տալով, որ ճնշումը շարունակ պակասում է։ Այդ նշանակում էր, որ «Նաուտիլուսը» վերս էր բարձրանում։ Վերջապես, սլաքն անշարժացավ։

— Մենք բարձրացանք ջրի մակերեսը,— ասաց նավապետ Նեմոն։

Ես քայլեցի դեպի կենտրոնական սանդուղքը, բարձրացա երկաթե աստիճաններով և բացված անցքից դուրս եկա «Նաուտիլուսի» տախտակամածը։

Նավն ընդամենը ութ, տասը սանտիմետր դուրս էր եկել

ջրից։ «Նաուտիլուսի» իլիկաձև ուրվագծերն իսկապես որ հիշեցնում էին երկար սիգարի։ Ես ուշադրություն դարձրի այն հանգամանքի վրա, որ նավի արտաքինը նման էր ցամաքային խոշոր սողունների մարմինը ծածկող թեփուկին։ Հիմա ինձ համար հասկանալի դարձավ, թե ինչու բոլոր նավերը «Նաուտիլուսը» ծովային կենդանի էին համարում։

Տախտակամածի մեջտեղում երևում էր մակույկի մի մասը, իսկ մյուս մասը մտնում էր նավի մեջ։ «Նաուտիլուսի» առջևի ու հետևի կողերում ցցված էր երկու ոչ բարձր վանդակ, թեք պատերով, որոնք ծածկված էին ոսպանման, հատ բյուրեղապակիով։ Առջևի վանդակում տեղավորվում էր ղեկավարը՝ «Նաուտիլուսը» կառավարողը, իսկ հետևի վանդակում՝ էլեկտրական պայծառ մի լուսարձակ, որը լուսավորում էր ճանապարհը։

Ծովը սքանչելի էր, երկինքը՝ պայծառ։ Նավը հաղիվ օրորվում էր օվկիանոսի մեծ ալիքներում։

Արևելյան թեթև քամին ալեկոծում էր ջրի մակերևույթը։ Բոլորովին պարզ, անմշուշ հորիզոնը թույլ էր տալիս միանգամայն ճիշտ դիտողություններ կատարել։

Ծովի վրա ոչինչ չէր երևում,— ոչ կղզի, ոչ ժայռ։ «Աբրահամ Լինկոլնը» նույնպես չէր երևում։ Մեզ շրջապատում էր անծայրածիր, վեհաշուք մի անապատ։

Նավապետ Նեմոն ապասեց մինչև կեսօր և սեքստանտը մոտեցնելով աչքերին, որոշեց արևի բարձրությունը, ինչպես նաև լայնության աստիճանը։ Դիտողության ժամանակ նրա դեմքի ոչ մի մկանը չշարժվեց։ Նրա ձեռքերում սեքստանտը չէր դողում, չէր շարժվում, կարծես թե գտնվում էր մարմարյա մի արձանի ձեռքերում։

— Կեսօր է,— ասաց նավապետը— պրոֆեսոր, արդյոք չէի՞ք ցանկանա մտնել նավը։

Ես մի անգամ էլ դիտեցի ծովը, որի ջուրը մի փոքր դեղնավուն էր, որն անհերքելիորեն ապացուցում էր ճապոնիայի ափերի մոտիկությունը, և նավապետի հետ իջա սրահ։

Այստեղ նավապետ Նեմոն ժամանակաչափի միջոցով որոշեց մեր գտնված տեղի երկարության աստիճանը, նախորդ անկյունաչափային դիտողությունների հիման վրա ստուգեց

իր կատարած հաշիվները և քարտեզի վրա նշանակեց այն կետը, ուր գտնվում էր «Նաուտիլուսը»։

— Պարոն Արոնաքս,— ասաց նա,— մենք գտնվում ենք 137°15′ արևմտյան երկարության տակ։

— Ո՞ր միջօրեականից եք հաշվում,— իսկույն հարցրի ես, հույս ունենալով, որ նավապետի պատասխանը որոշ չափով կպարզի նրա ազգությունը։

— Ես ունեմ զանազան քրոնոմետրեր,— պատասխանեց նա,— որոնք ցույց են տալիս Փարիզի, Գրինվիչի և Վաշինգտոնի ժամանակը։ Սակայն, ի պատիվ ձեր ներկայության, այսօր ես օգտվեցի Փարիզի միջօրեականով։

Այդ պատասխանը ոչինչ չպարզեց ինձ համար։ Ես գլխով շնորհակալության նշան արի։ Նավապետը շարունակեց.

— 137°15′ արևմտյան երկարություն, հաշված Փարիզի միջօրեականից, և 30°7′ հյուսիսային լայնություն։ Այլ կերպ ասած՝ մենք գտնվում ենք Ճապոնիայի ափերից մոտավորապես երեք հարյուր մղոն հեռու։ Այսպես ուրեմն, այսօր, նոյեմբերի ութին, կեսօրին մենք սկսում ենք մեր շուրջերկրյա հետազոտական ճանապարհորդության արշավը։ Իսկ այժմ, պարոն պրոֆեսոր, ես չեմ խանգարի ձեր աշխատանքը։ Ես հրամայեցի ուղևորվել դեպի արևելք—հյուսիս-արևելք և ընթանալ հիսուն մետր խորության։ Այս մեծ քարտեզի վրա ամեն օր կնշանակվի անցած ճանապարհը։ Սրահն ամբողջովին կլինի ձեր տրամադրության տակ, իսկ ես ձեզնից թույլտվություն եմ խնդրում հեռանալու։

Նավապետ Նեմոն գլուխ տվեց և դուրս գնաց։ Սրահում ես մնացի մենակ և անձնատուր եղա մտքերին։ Այդ մտքերը շարունակ պտտվում էին «Նաուտիլուսի» տիրոջ շուրջը։ Արդյոք մի օր ես կիմանա՞մ, թե ինչ ազգության է պատկանում այդ մարդը, որ հպարտությամբ հայտարարում է, թե հայրենիք չունի։ Ի՞նչը. կամ ո՞վ է նրա մեջ ատելություն առաջ բերել դեպի մարդը։ Արդյոք նա չի՞ եղել այն չճանաչված գիտնականներից մեկը, որոնց «վիրավորել է աշխարհը»,— ինչպես ասում է Կոնսելը,— չի՞ եղել ժամանակակից մի Գալիլեյ կամ իր երկրից արտաքսված մի հեղափոխական գիտնական։

Այդ ես դեռ չգիտեի։ Նա հյուրընկալությամբ ընդունեց ինձ, որ պատահմամբ ընկել էի նրա նավի վրա, սակայն այդ ընդունելության մեջ կար ինչ-որ սառնություն, որը շարունակ մտածել էր տալիս ինձ, թե նա իշխում է իմ կյանքի վրա։ Ոչ մի անգամ նա չսեղմեց իմ ձեռքը, որ ես մեկնում էի իրեն, և ոչ մի անգամ իր ձեռքը չմեկնեց ինձ։

Մի ամբողջ ժամ ես խորասուզված էի այդ մտքերի մեջ, աշխատելով հասկանալ այդ մարդու խորհրդավոր գաղտնիքը։

Հետո աչքովս ընկավ սեղանի վրա բացված քարտեզը, և ես մատս դրի այն կետին, ուր հատվում էին նավապետ Նեմոյի որոշած երկարությունն ու լայնությունը։

Ինչպես մայր ցամաքները, այնպես էլ ծովն ունի իր գետերը։ Դրանք այնպիսի հոսանքներ են, որոնք հեշտությամբ են ճանաչվում, որովհետև իրենց գույնով ու բարեխառնությամբ տարբերվում են մնացած ջրերից։ Ամենից հայտնի օվկիանոսային հոսանքը Գոլֆստրիմն է։ Գիտությունը քարտեզի վրա նշանակել է հինգ ամենագլխավոր հոսանքների ուղղությունը, դրանցից մեկն Ատլանտյան օվկիանոսի հյուսիսային մասումն է, մյուսը՝ հարավային մասում, երրորդը՝ խաղաղ օվկիանոսի հարավային մասում, չորրորդը՝ հյուսիսային մասում և վերջապես, հինգերորդը՝ Հնդկական օվկիանոսի հարավային մասում։ Միանգամայն հավանական է, որ վաղուց անցած ժամանակներում, երբ Կասպից և Արալյան ծովերն ու ասիական մեծ լճերը միացած էին Հնդկական օվկիանոսի հյուսիսային մասում գոյություն ուներ վեցերորդ հոսանքը։

Քարտեզի այն կետից, ուր նշանակված էր «Նատիլուսի» տեղը, անցնում էր այդ հոսանքներից մեկը, ճապոնական Կուրո-Սիվո հոսանքը, որ նշանակում է «Սև գետ»։ Արևադարձային արևի ուղիղ ճառագայթներից տաքացած ջրերով դուրս գալով Բենգալյան ծոցից, այդ հոսանքն անցնում է Մոլուքյան նեղուցը, գնում է Ասիայի ափերով, անցնում խաղաղ օվկիանոսի հյուսիսային մասը և հասնում մինչև Ալեության կղզիները։

Այդ հոսանքն իր հետ տանում է կամֆարայի ծառերի և այլ արևադարձային բույսերի բները և իր բաց-կապույտ

գույնով ու քարձր ջերմությամբ խիստ տարբերվում է օվկիանոսի մուգ-կանաչավուն ու սառը ջրերից։

«Նաուտիլուսը» պետք է գնար այդ հոսանքի ուղղությամբ։ Ես քարտեզի վրա հետևում էի հոսանքին, պատկերացնելով, թե ինչպես է նա շքանում ժայռոտ օվկիանոսի անծայրածիր տարածության մեջ։ Ես այնքան հետու գնացի իրականությունից, որ չնկատեցի, թե ինչպես նեդ Լենդը և Կոնսելը՝ մատանը զահլիճ։

Իմ պանծալի ուղեկիցներն ուղղակի քարացան, տեսնելով սրահում գտնվող զանձերը։

— Որտե՞ղ ենք մենք գտնվում,— բացականչեց Կանադացին,— մի՞թե Վվերեկի թանգարանում։

— Պարոնի թույլտվությամբ,— առարկեց Կոնսելը,— ես ավելի շատ կկարծեի, որ մենք գտնվում ենք Սոմերար հյուրանոցում։

— Բարեկամներս,— ասացի ես,— դուք ոչ Կանադայում եք, ոչ Ֆրանսիայում, այլ «Նաուտիլուս» նավի մեջ, ծովի մակերևույթից հիսուն մետր ցած։

— Մնում է հավատալ, քանի որ այդ պարոնն է ասում,— պատասխանեց Կոնսելը,— բայց ճիշտն ասած՝ այս սրահը կարող է ապշեցնել նույնիսկ այնպիսի մի ֆլամանդացու, ինչպիսին եմ ես։

— Բարեկամս, կարող ես զարմանալ ինչքան ցանկանում ես։ Բայց միևնույն ժամանակ դիտիր ցուցափեղկերը։ Այնպիսի գաղափարդիշը, ինչպիսին դու ես, այնտեղ շատ բան կգտնի անելու։

Կարիք չկար Կոնսելին երկուսանգամ խնդրել, որ դաստակերգելով դբաղվի։ Թեքվելով դեպի ցուցափեղկերը, նա արդեն բնագծանների լեզվով ինչ-որ բան էր քրմնջում՝ դաս, ֆոկաս, ենթաջոկաս, ընտանիք, ցեղ, տեսակ...

Այդ ժամանակ Նեդ Լենդը, որին այնքան էլ չէր հետաքրքրում խխունջաբանությունը, ինձ հարց ու փորձ էր անում նավապետ Նեմոյի հետ տեսնվելու մասին, արդյոք ես իմացա՞, թե ով է Նեմոն, որտեղացի՞ է, ո՞ւր է գնում, դեպի ո՞ւր է տանում մեզ։ Նեդը հարցերի տարափ էր թափում, հնարավորությունն չտալով պատասխանելու դրանցից որևէ մեկին։

Երբ նա լռեց, ես նրան հարցրեցի այն ամենը, ինչ որ գիտեի և ինչ որ չգիտեի իմ հերթին հարցրի նրան, թե այդ ժամանակվա քնթացքում ինչ է լսել ու տեսնել։

— Ոչինչ չեմ լսել և ոչինչ չեմ տեսել,— պատասխանեց կանադացին։— Ես նույնիսկ անձնակազմից ոչ ոքի չտեսա։ Գուցե նա է՞լ էլեկտրական է։

— Էլեկտրակա՞ն։

— Ամենիվ խոսք, դրան էլ կարելի է հավատալ... բայց ասացեք, պարոն պրոֆեսոր,— դիմեց ինձ Նեդ Լենդը, նորից նույն մտահղացումով տարված,— քանի՞ հոգի է այստեղի անձնակազմը։ Տա՞ս, քսա՞ն, հիսո՞ւն, հարյո՞ւր։

— Այդ հարցին ոչինչ չեմ կարող պատասխանել, Նեդ։ Հավատացե՛ք ինձ, հրաժարվեցեք «Նաուտիլուսին» տիրանալու կամ նրանից փախչելու մտքից։ Այս նավը ժամանակակից տեխնիկայի հրաշքն է և ես ամբողջ կյանքումս կզղջայի, եթե ինձ չհաջողվեր մի լա՛վ ծանոթանալ նրա հետ։ Շատերը կնախանձեին մեր դրությանը, թեկուզ այն պատճառով, որ մենք հնարավորություն ունենք ճանապարհորդելու հրաշքների աշխարհում։ Այսպես ուրեմն, ձեզ հանգիստ պահեցեք և եկեք դիտենք այն ամենն, ինչ որ կատարվում է մեր շուրջը։

— Դիտե՞նք,— տարբացավ նորածանոթ վարդեսը,— ի՞նչ կարող ենք տեսնել այստեղ, այս եռկոթյա բանտում։ Չէ՞ որ մենք կուրորեն ենք շարժվում։

Նեդ Լենդը գեռ շէր վերջացրել նավարկությունը, երբ հանկարծ սալոնը բոլորովին մթնեց։ Առաստաղի լույսերը հանգան այնպե՞ս հանգեցին, որ աչքերս նոսլինի ցավեցին, ճիշտ այնպես, ինչպես այդ լինում է անթափանց խավարում հանկարծակի պայծառ լույս վառվելիս։

Մենք հանդարտվեցինք և նույնիսկ չէինք հանդգնում տեղներից շարժվել, որովհետև չգիտեինք, թե ինչ անակնկալ է սպասում մեզ՝ հանգի՞ստ, թե՞ ահա։ Բայց այդ վայրկյանին շարժման ձայն լսվեց, կարծես թե բացվում էր «Նաուտիլուսի» եռկոթեն կեռվը։

— Սա մեր վերջն է,— ասաց Նեդ Լենդը։

Հանկարծ սալոնը լուսավորվեց։ Լույսն անցնում էր երկու կողմից, պատերի միջև եղած ճեղքերից։ Էլեկ-

տրական լուսարձակը պայծառ լուսավորել էր ջրի շերտերը։ Երկու հաստ, բյուրեղապակյա պատուհաններ մեզ բաժանում էին ծովից։ Սկզբում ես ցնցվեցի, մտածելով, որ այդ փխրուն անջրպետը կարող է ջարդվել։ Սակայն, լավ դիտելով լուսամուտների հաստ, պղնձյա պատյանը, ես հանգստացա. պետք է որ այդ ապակիները հսկայական դիմացկունություն ունենային։

Ծովը բոլորովին պարզ երևում էր «Նաուտիլուսից» մի ամբողջ մղոն տարածության վրա։ Ինչպիսի արտասովոր տեսարան։ Ո՞ր գրիչը կկարողանա այն նկարագրել։ Ո՞վ կարող է հաղորդել լույսի այն զմայլելի ցոլքը, որ թափանցել էր ջրի խորը շերտերը, այն մեղմ ելևէջները, որ առաջանում էին լույսերի ու ստվերների փոփոխումից, կիսատոնների այն անկարագրելի հարստությունը։

Բոլորը գիտեն, թե որչափ թափանցիկ է լինում ծովի ջուրը, որ ավելի մաքուր է, քան ամենամաքուր աղբյուրի ջուրը։ Ծովի ջուրն է՛լ ավելի թափանցիկ է դառնում իր մեջ լուծված հանքային աղերի շնորհիվ։ Օվկիանոսի մի քանի տեղերում, օրինակ՝ Անթիլյան կղզիների մոտ, հարյուր քառասունհինգ մետր խորությամբ հատակում պարզ երևում է ավազի յուրաքանչյուր հատիկը։ Որքան մեզ հայտնի է, արևի ճառագայթները երեք հարյուր մետրի չափ թափանցում են ծովի խորքը։

Էլեկտրական լույսը, որ վառվել էր ծովի խորքում, կարծես թե «Նաուտիլուսի» շուրջը գտնվող հեղուկ զանգվածները դարձրել էր բոցերի հսկայական մի հեղեղ։

Եթե ճիշտ համարենք Էրեմբերգի այն ենթադրությունը, թե ջրի խորը շերտերը ֆոսֆորացվում են, ապա բնությունը սքանչագեղ տեսարաններ է պարգևել ջրի խորքերում ապրող արարածներին։ «Նաուտիլուսի» լուսամուտից դիտելով ջրերում ճառագած լույսի ելևէջները, ես համոզվեցի դրանում։

Սրահի երկու կողմերից էլ մի-մի լուսամուտ էր բացված դեպի անհայտ ու չհետազոտված աշխարհը։ Սրահում տիրող խավարն ուժեղացնում էր արտաքին լուսավորության տպավորությունը, և մենք դիտում էինք կարծես թե ակվարիումի մի հսկայական ապակու միջից։

Թվում էր, թե «Նաուտիլուսն» անշարժ կանգնած է միևնույն

նույն տեղում։ Դա բացատրվում էր նրանով, որ նավից դուրս չկար որևէ անշարժ առարկա, որի հակառակ ընթացքը ցույց տար, թե մենք շարժվում ենք։ Սակայն երբեմն մեր աչքերի առջևից հսկայական արագությամբ անցնում էին ջրի կոհակները, որոնք առաջանում էին նրանից, որ նավի առջևի սուր ծայրը ճեղքում էր ջուրը։

Մենք կախարդված ու սքանչացած սեղմվել էինք ապակիներին ու խոսք չէինք գտնում մեր զմայլանքն արտահայտելու համար։

Հանկարծ Կոնսելը սկսեց խոսել։

— Հը՛մ, Նեդ, դուք ուզում էիք դիտե՞լ։ Դե՛, նայեցեք։

— Հետաքրքիր է, հետաքրքիր է,— ասաց կանադացին, այդ հրապուրիչ տեսարանի ազդեցությամբ մոռանալով թե՛ իր բարկությունը և թե՛ փախչելու ցնորքները,— արժեր հեռուներից գալ այստեղ և զմայլվել այս հիանալի ներկայացումով։

— Հիմա ինձ համար հասկանալի է այդ մարդու կյանքը,— գոչեցի ես,— նա իր համար ստեղծել է մի առանձին աշխարհ և այժմ վայելում է այդ աշխարհի ցնցող հրաշքները։

— Բայց ո՞ւր են ձկները,— հարցրեց կանադացին,— ես նրանց չեմ տեսնում։

— Մի՞թե միևնույն չէ ձեզ համար,— պատասխանեց Կոնսելը,— չէ՞ որ ձկներն անծանոթ են ձեզ։

— Ինչպես թե անծանոթ են։ Գիտե՞ք, որ ես ձկնորս եմ,— տաքացավ Նեդ Լենդը։

Երկու բարեկամների միջև վեճ առաջացավ։ Երկուսն էլ ծանոթ էին ձկներին, բայց ամեն մեկը յուրահատուկ կերպով։ Բոլորին հայտնի է, որ ձկները կազմում են ողնաշարավոր կենդանիների չորրորդ և վերջին դասը։ Գիտությունը նրանց միանգամայն ճիշտ բնորոշում է տվել.— «Սառն արյուն ունեցող ողնաշարավորներ, որոնք քիմուխներով են շնչում և հարմարվել են ջրում ապրելուն»։ Ձկները բաժանվում են երկու տարբեր ենթադասերի.— ոսկրավորներ, այսինքն այնպիսի ձկներ, որոնց ողնաշարը բաղկացած է ոսկրյա ողներից, և կոճիկավորներ, այսինքն այնպիսիները, որոնց ողնաշարները բաղկացած են կոճիկային ողներից։

Հնարավոր է, որ կանադացին լսած լիներ ձկների այդ տարաբաժանման մասին, սակայն Կոնսելն անշուշտ ավելի իրազեկ էր տվյալ խնդրում։ Բարեկամանալով Նեդի հետ, նա անկեղծորեն ցանկանում էր իր գիտեցածը հաղորդել կանադացուն, ուստի ասաց.

— Իմ բարեկամ Նեդ, դուք ձկների արհավիրքն եք, դուք ճարպիկ ու խիզախ ձկնորս եք։ Ձեր կյանքում դուք քանի-քանի՛ անգամ բռնել եք այդ հետաքրքիր արարածներին։ Բայց ես պատրաստ եմ գրազ գալու, որ դուք դաղափար չունեք, թե նրանց ինչպես կարելի է դասակարգել։

— Բոլորովին ոչ,— կատարյալ լրջությամբ պատասխանեց կանադացին,— ձկները բաժանվում են երկու տեսակի՝ ուտելի և ոչ ուտելի։

— Այդպես դասակարգում են ոսկրամոլները,— ծիծաղեց Կոնսելը,— բայց ասացեք, գիտե՞ք թե ինչ տարբերություն կա ոսկրավոր ու կոճիկավոր ձկների միջև։

— Գուցե և գիտեմ, Կոնսել։

— Իսկ այդ դասակարգերի տարաբաժանումնե՞րը։

— Ոչ, Կոնսել, այդ մասին գաղափար չունեմ։

— Այդ դեպքում լսեցեք, Նեդ, և միտներդ պահեք։ Ոսկրավոր ձկները բաժանվում են վեց ջոկատի։ Առաջին ջոկատը փշափեսուր ձկներն են, որոնք ունեն ամբողջական ու շարժուն վերին ծնոտ և սանրի նման քիմուխտներ։ Այս ջոկատի մեջ մտնում է տասնհինգ ընտանիք, այսինքն բոլոր հայտնի ձկների համարյա երեք քառորդ մասը։ Ջոկատի ներկայացուցիչը սովորական պերկեսն է։

— Բավական համեղ ձուկ է,— դիտեց Նեդ Լենդը։

— Երկրորդ ջոկատը,—շարունակեց Կոնսելը,—բաց-փամփուշտավոր ձկներն են, որոնց որովայնային լողաթևերը գտնվում են փորերի տակ, կրծքային լողաթևերի հետևում, և չեն ամրացված ուսերի ոսկորներին։ Այս ջոկատի մեջ մտնում է հինգ ընտանիք և գետերում ու լճերում ապրող ձկների մեծ մասը։ Սրանց ներկայացուցիչներն են ծածանը և գայլաձուկը։

— Թո՛ւ,— անտարբեր ասաց կանադացին,— այդպիսի ձկներ չեմ սիրում։

— Երրորդ ջոկատը,— շարունակեց Կոնսելը,— փափկա-

փետուրներն են, որոնց որովայնային լողաթևերը գտնվում են կրծքային լողաթևերի տակ և անմիջականորեն ամրացված են ուսերի ոսկորներին։ Այս ջոկատում կան չորս ընտանիք։ Ջոկատի ներկայացուցիչը փափկաձուկն է։

— Ա՛յ, հրաշալի ձուկ է,— բացականչեց եռաժանու վարպետը, որ համառորեն շարունակում էր ձկները գնահատել միայն խոհարարական տեսակետից։

— Չորրորդ ջոկատը,— առանց նրան լսելու շարունակեց Կոնսելը,— բաղկացած է միայն օձաձկների ընտանիքից։ Սրանք ունեն երկար մարմին, առանց որովայնային լողաթևերի են ու ծածկված են պինդ, հաճախ լորձունքային մաշկով։

— Համեղ չեն,— ավելացրեց Նեդը։

— Հինգերորդ ջոկատը,— շարունակեց Կոնսելը,— փնջաքիմուխտավորներն են, որոնք ունեն ամբողջական ու շարժուն ծնոտ, բայց փոքրիկ փնջերից բաղկացած քիմուխտ, իսկ այդ փնջերը զույգ-զույգ դասավորված են քիմուխտային աղեղների երկայնքով։ Այս ջոկատի մեջ մտնում է միայն փշավորների ընտանիքը։ Սրանց ներկայացուցիչը ծովային ձիուկն է։

— Թո՛ւ, զզվելի բան,— բացականչեց Կանադացին։

— Վեցերորդ և վերջին ջոկատը,— այդ ամրածնոտներն են, որոնց ծնոտի ոսկորն անշարժ միացած է ծնոտների միջև եղած ոսկորի հետ, իսկ քիմքատակի կամարը՝ գանգի հետ։ Այս ջոկատն ունի երկու ընտանիք՝ պնդամաշկներ և բաց-ատամնավորներ։ Սրանց ներկայացուցիչը լուսնյակ-ձուկն է։

— Որը կարող է միայն պղծել կաթսան,— դիտեց Կանադացին։

— Դուք ինձ հասկացա՞ք, բարեկամս,— հարցրեց գիտնական Կոնսելը

— Մաղաչափ անգամ չհասկացա, Կոնսել,— պատասխանեց եռաժանու վարպետը,— սակայն շարունակեցեք. այն, ինչ որ դուք ասում եք, շատ հետաքրքիր է։

— Ինչ վերաբերվում է կոճիկային ձկների ենթադասին,— հանգիստ տոնով շարունակեց Կոնսելը,— նա բաժանվում է ընդամենը երեք ջոկատի։

— Որքան քիչ, այնքան լավ,— ասաց Նեդը։

— Առաջինը կլորաբերաններն են, որոնց ծնոտները միա-

ցած են ու կազմում են մի օղակ, իսկ քիմուխանների մեջ կան բազմաթիվ անցքեր։ Այս ջոկատում կա միայն մի ընտանիք։ Ներկայացուցիչը քարալեզն է։

— Վատ ձուկ չէ,— արձագանքեց Նեդ Լենդը։

— Երկրորդ ջոկատը շնաձկներն ու կատվաձկներն են, որոնց քիմուխանները նման են կլորաբերանների քիմուխաններին, բայց ունեն շարժական ներքին ծնոտ։

— Ինչպե՛ս,— գոչեց Նեդը,— շնաձուկն ու կատվաձուկը պատկանում են միևնույն ջոկատի՞ն։ Է՛հ, սիրելի Կոնսել, եթե դուք ուզում եք, որ կատվաձկները կենդանի մնան, խորհուրդ չեմ տալիս նրանց շնաձկների հետ տեղավորել միևնույն ընտանիքում։

— Երրորդ ջոկատը,— նույնիսկ առանց աչքերը թարթելու շարունակեց Կոնսելը,— թառափներն են, որոնց քիմուխանները բացվում են կափարիչով ծածկվող մի անցքով։ Այս ջոկատում կա չորս ընտանիք։ Ներկայացուցիչը թառափն է։

— Հը՛մ, Կոնսել, ամենալավերի մասին վերջում եք խոսում։ Վերջացրի՞ք։

— Այո, Նեդ։ Բայց չմոռանաք, որ այն ամենն, ինչ որ իմացաք, շատ քիչ է, քանի որ ջոկատները բաժանվում են ենթաջոկատների, ընտանիքների, ենթաընտանիքների, ցեղերի, տեսակների, փոփոխակների։

— Հրե՛ն, Կոնսել, մի քանի տեսակներ,— ասաց Կանադացին, դեմքը դարձնելով դեպի լուսամուտը։

— Այո, դրանք ձկներ են,— բացականչեց Կոնսելը,— կարծես մենք ակվարիումում ենք գտնվում։

— Ո՛չ,— առարկեցի ես,— չէ՞ որ ակվարիումը միայն վանդակ է, իսկ այդ ձկները ազատ են այնպես, ինչպես թրուշունն օդում։

— Դե՛հ, Կոնսել, տվեք այդ ձկների անունները,— խնդրեց Նեդ Լենդը։

— Դրանք իմ մասնագիտությանը չեն վերաբերում,— պատասխանեց Կոնսելը,— դիմեցեք իմ տիրոջը։

Եվ իսկապես, այդ հրաշալի մարդը, կենդանիների այդ մոլեռանդ դասակարգողը բնագետ չէր, և ես չգիտեմ, թե արդյոք նա կարո՞ղ էր թյուննոսին զանազանել մյուս ձկներից։

Այս տեսակետից նա կատարյալ հակապատկերն էր Կանադացու, որն առանց տատանվելու ասում էր բոլոր ձկների անունները։

— Դա թիկնեղջյուրն է,— ասացի ես։

— Ուղղանկյուն թիկնեղջյուր,— ավելացրեց Նեդ Լենդը։

— Թիկնեղջյուրների ցեղից, պնդամաշկների ընտանիքից, ամրածնոտների ջոկատից,— շշնջաց Կոնսելը։

Այո՛, Կոնսելը և Նեդ Լենդը միասին վերցրած կլինեն մի արտասովոր բնագետ։

Կանադացին չխաբվեց։ Բազմաթիվ թիկնեղջյուրներ ուղղանկյուն, կարծես մամլած մարմիններով, թեփուկավոր մաշկով, մեջքի լողաթևի վրա գտնվող բութակով, խաղում էին «Նաուտիլուսի» շուրջը, շարժելով պոչերի քառաշար փշերը։ Դժվար է պատկերացնել մի ավելի գեղեցիկ բան, քան նրանց թեփուկը, որ մեջքի վրա մոխրագույն է, իսկ որովայնի վրա՝ ապիտակ։ Նրանց թեփուկի ոսկեգույն բծերը շողշողում էին մթին ջրերում։ Թիկնեղջյուրների մոտ լողում էին կատվաձկները, որ կարծես հողմից ծածանվող պաստառներ լինեին։ Նրանց մեջ ես նկատեցի չինական կատվաձկանն իր դեղնավուն մեջքով, նուրբ-վարդագույն որովայնով և աչքերի վերևում գտնվող երեք փշերով։ Ձկների այս տեսակը խիստ հազվագյուտ է։ Լասբեդի ժամանակներում մարդկանց նույնիսկ կասկածելի էր թվում չինական կատվաձկների գոյությունը, քանի որ Լասբեդը դրանց տեսել էր միայն ճապոնական նկարների մի հավաքածոյի մեջ։

Երկու ժամվա ընթացքում ստորջրյա մի ամբողջ բանակ ուղեկցում էր «Նաուտիլուսին»։ Իրենց գեղեցկությամբ, գունեղությամբ և արագաշարժությամբ մրցող ձկների մեջ ես տեսնում էի հուբանը, արքայաձուկը, որ մեջքի վրա ունի երկու սև գիծ, ճապոնական թյունիկը, որ ունի կապույտ մարմին և արծաթավուն գլուխ, փայլուն կապտաձկները, որոնց միմիայն այդ անունը փոխարինում է մի ամբողջ նկարագրության, զոլավոր ապարները, որ ունեն կապույտ-կանաչավուն լողաթևեր, այլ տեսակի ապարները, որոնց պոչերի շուրջը սև շերտեր են լինում, կամ որոնք շրջապատված են վեց «գոտիներով», բեկասյան ձկները, որոնցից մի քանիսը մի ամ-

բողջ մեծ երկարություն ունեին, ճապոնական սալամանդրը, փողոցը, որ ունի վեց ոտնաչափ երկարություն, փոքրիկ, աշխույժ աչքեր և լայն բերան ու ատամներ։

Մենք շարունակում էինք զմայլվել։ Նեդը տալիս էր ձկների անունները, Կոնսելն իսկույն դասակարգում էր նրանց, իսկ ես սքանչանում էի ձկների գեղեցկությամբ և արագաշարժությամբ։ Դեռ ոչ մի տեղ ես չէի տեսել կենդանի, ազատ ձկներին իրենց բնական միջավայրում։

Ես էլ չեմ թվի մեր տեսած ձկների բոլոր տեսակները, ճապոնական ու Չինական ծովերի այդ ամբողջ հավաքածոն։ Ինչպես երևում է, նրանք հրապուրվում էին էլեկտրական պայծառ լույսով, որովհետև ամբողջ վտառներով խմբվում էին նավի շուրջը և ավելի բազմաթիվ էին, քան թրուշուններն օդում։

Հանկարծ սրահը լուսավորվեց։ Երկաթյա փեղկերը ծածկվեցին։ Կախարդական տեսարանը չքացավ, սակայն ես դեռ երկար ժամանակ անձնատուր եղա ցնորքներին, մինչև որ պատահմամբ աչքովս ընկան պատերից կախված պարագաները։ Կողմնացույցի սլաքը շարունակում էր ցույց տալ դեպի արևելք-հյուսիս-արևելք, ծանրաչափը՝ հինգ մթնոլորտ ճնշում, որ համապատասխանում էր հիսուն ոտնաչափ խորության, իսկ էլեկտրական մի այլ պարագա ցույց է տալիս, որ նավը մի ժամում անցնում է տասնհինգ մղոն։

Ես սպասում էի նավապետ Նեմոյին։ Սակայն նա չէր երևում։ Ժամանակաչափը ցույց էր տալիս կեսօրվա ժամը հինգը։

Նեդ Լենդը և Կոնսելը վերադարձան իրենց սենյակը։ Ես էլ գնացի իմ սենյակը։ Ճաշն արդեն դրված էր սեղանիս վրա։ Ինձ մատուցել էին կրիայի մսից պատրաստված ապուր, տապակած արքայաձուկ, որի լյարդն առանձին էր եփած և շափազանց համեղ մի խորտիկ էր, կլորագլուխ ակնափուշ ձկան սուկի, որ ավելի համեղ էր, քան սալմոնը։

Երեկոյան ես կարդում էի, գրում և մտածում։ Երբ քունը հաղթահարեց ինձ, ես պառկեցի մահճակալի վրա և խոր քուն մտա այն ժամանակ, երբ «Նաուտիլուսն» արագ ընթանում էր «Սև դեմի» հոսանքով։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳՐԱՎՈՐ ՀՐԱՎԵՐ

Հետևյալ օրը, նոյեմբերի 9-ին, ես արթնացա ուշ առավոտյան, տասներկու ժամ քնելուց հետո։ Կոնսելն ըստ իր սովորության եկավ տեղեկանալու, թե «տերն ինչպես անցկացրեց գիշերը», և իր ծառայություններն առաջարկեց։ Նրա բարեկամը, կանադացին այնքան խորն էր քնել, որ կարծես թե դրանից բացի ուրիշ ոչնչով չէր զբաղվում իր կյանքում։

Ես թույլ տվի, որ պանծալի Կոնսելը խոսի ինչքան ցանկանում է։ Նրան ես պատասխանում էի մի կերպ, տեղի թե անտեղի։ Ինձ շփոթեցնում էր այն հանգամանքը, որ նավապետ Նեմոն ներկա չէր եղել երեկվա «ներկայացման»։ Հույս ունեի, որ այդ օրը կտեսնեմ նավապետին։

Ես հագա զգեստս, որ կարված էր բեհեզից։ Կոնսելը մի շարք դիտողություններ արավ այդ գործվածքեղենի մասին։ Ես նրան ասացի, որ գործվածքեղենը պատրաստված է այն մետաքսանման թելերից, որոնցով Միջերկրական ծովի մի քանի խեցիներ ամրանում են ժայռերին։ Հին ժամանակներում այդ թելերից արտադրվում էին զեղեցիկ գործվածքներ, զուլպաներ, ձեռնոցներ, որովհետև բեհեզը չափազանց փափուկ և խիստ տաք հյուսվածք է տալիս։ Այսպիսով ծովը «նաուտիլուսի» անձնակազմն ապահովում էր հագուստով և այդ նավորդներին հարկավոր չէր ոչ բամբակ, ոչ ոչխարի բուրդ և ոչ էլ շերամի մետաքս։

Ես հագնվեցի ու մտա սրահ։ Այստեղ ոչ ոք չկար։

Խորապես հափշտակված, ես դիտում էի թանկարժեք հավաքածոները, որ դրված էին ապակե ցուցափեղկերում։ Պրպտում էի հերբարիումները, որոնք լիքն էին ամենահազվագյուտ ծովային բույսերով։ Չնայելով, որ դրանք չորացրած էին, այնուամենայնիվ պահպանել էին իրենց արտասովոր գեղեցկությունն ու պայծառ գույները։

Ամբողջ օրն անցկացրի այդ զբաղմունքով։ Նավապետ Նեմոն չէր երևում։ Սրահի լուսամուտների երկաթե փեղկերը չէին բացվում։ Հնարավոր է, որ մեզ չէին թողնում հագենալ այդ հրաշալի տեսարանով։

«Նաուտիլուսը» շարունակում էր ընթանալ դեպի արևելք և հյուսիս-արևելք, հիսուն—վաթսուն մետր խորությամբ, անցնելով մի ժամում տասներկու մղոն։

Հետևյալ օրը, նոյեմբերի 10-ը ես դարձյալ նույն կերպ անցկացրի։ «Նաուտիլուսի» անձնակազմից ոչ ոքի չտեսա։ Նեդն ու Կոնսելն օրվա մեծ մասն անցկացրին ինձ հետ։ Նավապետի բացակայությունը նրանց էլ էր զարմացնում։ Գուցե հիվանդացե՞լ էր այդ տարօրինակ մարդը։ Կամ գուցե փոխե՞լ էր մեզ վերաբերող իր որոշումը։

Վերջին հաշվով, ինչպես իրավացիորեն ասաց Կոնսելը, մենք գանգատվելու ոչ մի հիմք չունեինք։ Մենք լիակատար ազատություն էինք վայելում, մեզ կերակրում էին համեղ ու աննզարար ուտելիքներով։ Մեր տերը խստորեն պահպանում էր պայմանագրի կետերը։ Բացի դրանից, մեր դրության արտասովոր բնույթն այնքան սփոփանքներ էր խոստանում մեզ, որ մենք իրավունք չունեինք դժգոհ լինելու մեր բախտից։

Այդ օրվանից ես սկսեցի գրի առնել բոլոր դեպքերը, այդ ինձ թույլ տվեց հիմա դրանց մասին պատմել ամենամեծ ճշտությամբ։ Մի զվարճալի մանրամասնություն՝ իմ օրագիրը ես գրում էի ծովային ջրիմուռներից պատրաստված թղթի վրա...

Նոյեմբերի տասնմեկի վաղ առավոտյան թարմ օդի հոսանքն ինձ հասկանալ տվեց, թե մենք բարձրացել ենք օվկիանոսի երեսը, որպեսզի լրացնենք թթվածնի պաշարը։ Ես քայլեցի դեպի սանդուղքը և բարձրացա «Նաուտիլուսի» տախտակամածի վրա։

Առավոտյան ժամի վեցն էր։ Թանձր մշուշը պատել էր մեր շուրջը։ Ծովը գորշ էր, բայց հանգիստ։ Նրա մակերևույթը հազիվ օրորվում էր թեթև ալեկոծությունից։

Ինձ զբաղեցնում էր մի հարց,— արդյոք վերև կբարձրանա՞ նավապետ Նեմոն։ Սակայն առայժմ տախտակամածում ոչ ոք չկար, բացի ղեկորդից, որ գտնվում էր իր ապակյա վանդակում։

Նստելով մասամբ դուրս ցցված մակույկի վրա, ես ագահությամբ ներշնչում էի աղով հագեցված գոլորշիները։

Արևի ուղիղ ճառագայթների ներգործությամբ հեռահեռ

ցրվում էր մշուշը։ Արևելքում, հորիզոնից բարձրացավ հրեղեն լուսատուն։ Նրա ճառագայթների տակ բոնկվեց ծովը, որպես վառոդով պատրաստված հրթիռ։ Բազմաթիվ փետրանման, ծայրերը կտրատված ամպեր, որոնք ցույց էին տալիս, թե այդ օրը քամի է լինելու, զարմանալի նուրբ գույներ ստացան։

Բայց ի՞նչ է քամին «Նաուտիլուսի» համար, որը փոթորիկներից էլ չի վախենում։

Ես զմայլվում էի արևի այդ խնդագին, կենսուրախ ծագումով, երբ ինչ-որ ոտնաձայն լսեցի։ Մեկը բարձրանում էր տախտակամածը։

Ես արդեն պատրաստվում էի բարևելու նավապետ Նեմոյին, բայց նրա փոխարեն երևաց օգնականը, որին տեսել էի առաջ, երբ նավապետն առաջին անգամ այցելեց մեզ։ Օգնականը բարձրացավ տախտակամածը և կարծես թե չնկատեց ինձ։ Ուժեղ հեռադիտակը մոտեցնելով աչքերին, նա մեծագույն ուշադրությամբ սկսեց դիտել հորիզոնը։ Վերջացնելով դիտումը, նա մոտեցավ դռնակին և արտասանեց հետևյալ նախադասությունը, որը ճշտությամբ մնացել է իմ հիշողության մեջ, մանավանդ որ հետագայում, նույնպիսի պայմաններում ես լսում էի այդ նախադասությունը.

«Nautron respoc lorni virch»!

Չգիտեմ, թե այդ ինչ էր նշանակում։

Այդ խոսքերն ասելուց հետո օգնականը սանդուղքով ցած իջավ։

Ես կարծում էի, թե «Նաուտիլուսն» էլի ջրասույզ է լինելու, ուստի իմ հերթին շտապեցի ներքև ու վերադարձա իմ սենյակը։

Այսպես առանց որևէ փոփոխության անցավ հինգ օր։ Ամեն առավոտ ես դուրս էի գալիս տախտակամածը։ Ամեն առավոտ նույն մարդը նույն նախադասությունն էր ասում։ Նավապետ Նեմոն չկար ու չկար։

Ես արդեն հաշտվեցի այն մտքի հետ, որ նրան այլևս չեմ տեսնի։ Սակայն նոյեմբերի 16-ին, Կոնսելի և Նեդ Լենդի ուղեկցությամբ մտնելով սենյակս, սեղանի վրա գտա ինձ հասցեագրված մի նամակ։

Ես անհամբերությամբ բաց արի ծրարը։ Հատցեն գրված էր բոլորովին պարզ ձեռագրով և ֆրանսերեն, բայց տառերի ձևը հիշեցնում էր գերմանական այբուբենի գոթական տառերը։

Ահա այդ նամակի բովանդակությունը.

Պարոն պրոֆեսոր Արոնակսին
«Նաուտիլուս» նավ

1867 թվականի նոյեմբերի 16-ին

Նավապետ Նեմոն խնդրում է պրոֆեսոր Արոնակսին մասնակցել ուսին, որ կայանալու է վաղն առավոտյան, Կրեսպո կղզու անտառներում։ Նավապետ Նեմոն շատ ուրախ կլինի, եթե պարոն պրոֆեսորի ուղեկիցները ցանկանան միանալ այդ արշավին։

«Նաուտիլուսի» հրամանատար՝
Նավապետ Նեմո։

— Որտե՞ղ ենք գնում,— բացականչեց Նեդը։

— Այն էլ Կրեսպո կղզու անտառնե՞րը,— ավելացրեց Կոնսեյը։

— Ուրեմն այդ մարդը երբեմն ցամա՞ք է այցելում,— հարցրեց Նեդը։

— Իմ կարծիքով այդ ասված է բոլորովին պարզ,— պատասխանեցի ես, նորից կարդալով նամակը։

— Հը՛մ, այդ դեպքում հարկավոր է ընդունել հրավերը,— հայտարարեց կանադացին,— դուրս գալով ցամաք, մենք, նայած հանգամանքներին, կմշակենք մեր գործողությունների ծրագիրը։ Բացի այդ բոլորից, ես դեմ չեմ մի պատառ թարմ միս ուտելուն։

Նավապետ Նեմոն մի կողմից հայտարարում էր, թե մայր ցամաքներն ու կղզիները զզվանք են պատճառում իրեն, իսկ մյուս կողմից մեզ հրավիրագիր էր ուղարկել որսի համար անտառ գնալու մասին։ Ես չփորձեցի հաշտեցնել այդ աղաղակող հակասությունը և հետևյալ պատասխանը տվի ուղեկիցներիս.

— Եկեք նախ տեսնենք, թե իրենից ինչ է ներկայացնում Կրեսպո կղզին։

Դիտելով քարտեզը, ես այդ կղզին գտա 32°40′ հյուսիսային լայնության և 167°50′ արևմտյան երկարության տակ։ 1801 թվականին այդ կղզին հայտնագործել էր նավապետ Կրեսպոն։ Իսպանական հին քարտեզների վրա կղզին կոչվում էր Ռոկկա դե լա Պլատա, որ նշանակում է «արծաթե ժայռ»։ Այդ կղզին գտնվում էր մեր մեկնակետից մոտավորապես հազար ութ հարյուր մղոն հեռավորության վրա։ Այսպիսով «Նաուտիլուսը» մի քիչ փոխել էր իր սկզբնական ուղղությունը և այժմ լողում էր դեպի հարավ-արևելք։

Ես ընկերներիս ցույց տվի այդ փոքրիկ կետը, որ հազիվ նշմարվում էր խաղաղ օվկիանոսի հյուսիսային մասում։

— Պարզ է, որ եթե նավապետ Նեմոն երբեմն ցամաք է դուրս գալիս, դրա համար նա ընտրում է բոլորովին անբնակ կղզիները։

Նեդ Լենդն առանց պատասխանելու օրորեց գլուխը։ Հետո նա դուրս գնաց Կոնսելի հետ։

Վայելելով ընթրիքը, որ մատուցել էր անվրդով և կարծես թե համբ սպասավորը, ես, մի փոքր մտահոգված, պատկեցի քնելու։

Հետևյալ առավոտ, նոյեմբերի 17-ին, ես արթնացա և զգացի, որ «Նաուտիլուսը» կանգնած է բոլորովին անշարժ։ Սրաց հագնվեցի և մտա սրահ։

Այնտեղ էր նաև նավապետ Նեմոն։ Նա վեր կացավ ինձ դիմավորելու, բարևեց ու հարցրեց, թե արդյոք համաձա՞յն եմ իրեն ուղեկցելու։

Որովհետև նա ոչ մի ակնարկ չարեց իր ութ օրվա բացակայության մասին, ես այդ մասին չխոսեցի և կարծես պատասխանեցի, որ ես ու իմ ընկերները պատրաստ ենք հետևելու իրեն։

— Միայն թե թույլ տվեք, նավապետ, մի հարց տալ,— ավելացրի ես։

— Խնդրե՛մ, պրոֆեսոր,— ասաց նա,— եթե կարողանամ, կպատասխանեմ ձեզ։

— Ինչպե՞ս է պատահել, նավապետ,— հարցրի ես,— որ երկրի հետ կտրած լինելով ձեր բոլոր կապերը, դուք այնուամենայնիվ տիրապետում եք Կրեսպո կղզու անտառներին։

— Գիտե՞ք ինչ, պրոֆեսոր,— պատասխանեց նավապետը,— արևի լույսն ու տաքությունը հարկավոր չեն այն անտառներին, որոնք ինձ են պատկանում։ Այդ անտառներում չկան, ոչ առյուծներ, ոչ վագրեր, ոչ հովազներ և ընդհանրապես ոչ մի չորքոտանի։ Միայն ինձ է հայտնի անտառների գոյությունը։ Դրանք միայն ինձ համար են աճում... Այդ անտառները ոչ թե ցամաքային են, այլ ծովային։

— Ծովային անտառնե՞ր,— զարմացած հարցրի ես։

— Այո, պրոֆեսոր։

— Եվ դուք ինձ առաջարկում եք գնալ այնտե՞ղ։

— Միանգամայն ճիշտ է։

— Ոտքո՞վ։

— Ձեր ոտքերը նույնիսկ չեն էլ թրջվի։

— Եվ մենք այդ կերպ ո՞ւր կանենք։

— Այո։

— Հրացանո՞վ։

— Հրացանով։

Ես նավապետ Նեմոյին նայեցի այնպիսի մի հայացքով, որը ոչ մի լավ բան չէր ասում նրա մասին։

«Կասկած չկա,— մտածեցի ես,— այդ մարդը հիվանդ է հոգեպես։ Հենց վերջերս եղել է նրա հիվանդության մուցքը, որը հիմա էլ շարունակվում է։ Ափսո՛ս։ Ես կգերադասեի, որ նա լիներ տարօրինակ և ոչ թե խելագար մարդ»։

Հավանորեն դժվար չէր այդ մտքերը կարդալ իմ դեմքի վրա։ Սակայն նավապետ Նեմոն, առանց որևէ բան ասելու, ձեռքով նշան արավ, որ հետևեմ իրեն, և ես գնացի։ Այդ րոպեին ես նման էի մի մարդու, որը պատրաստ է ամեն մի տհաճ անակնկալի։

Մենք անցանք սեղանատուն, ուր արդեն մեզ սպասում էր նախաճաշը։

— Պարոն Արոնաքս,— ասաց նավապետը,— խնդրեմ նստեք և ուտեք առանց քաշվելու։ Նախաճաշի ժամանակ մենք կխոսենք։ Ես ձեզ խոստացել եմ ստորջրյա զբոսանք, բայց ոչ ստորջրյա ռեստորան։ Ուստի խորհուրդ եմ տալիս ձեզ մի լավ նախաճաշել, քանի որ մենք ճաշել կարող ենք միայն ուշ երեկոյան։

Ես լսեցի այդ խորհուրդը և սկսեցի նախաճաշը։

Սեղանի վրա դրված էր զանազան ձկնեղեն, որը համեմված էր ծովային ջրիմուռներով։ Նախաճաշի ժամանակ մենք խմում էինք մաքուր ջուր, որին երկուսս էլ ավելացրինք ջրիմուռից եփած թրմաջրի մի քանի կաթիլ։ Այդ ջուրը հայտնի է «թաղանթանման ռոդիմենիա» անունով։

Սկզբում նավապետ Նեմոն ուտում էր առանց խոսելու։

Սակայն, մասամբ հագեցնելով քաղցը, նա ասաց.

— Ես կարծում եմ, պրոֆեսոր, որ դուք, ստանալով իմ հրավերը Կրեսպո կղզու անտառում կայանալիք որսի մասին, ինձ համարեցիք ո՛չ հետևողական մարդ։ Իսկ երբ իմացաք, որ ես ձեզ հրավիրում եմ ստորջրյա անտառը, կարծեցիք, թե ես խելագարվել եմ։ Պարոն պրոֆեսոր, երբեք չպիտի մակերեսային դատողություններ անել մարդկանց մասին։

— Բայց նավապետ, հավատացեք, որ...

— Բարեհաճեցեք լսել ինձ, հետո դատեցեք, թե արդյոք կարելի՞ է ինձ մեղադրել անհետևողականության կամ խելագարության համար։

— Ես լսում եմ ձեզ։

— Թե դուք և թե ես գիտենք, պրոֆեսոր, որ մարդը կարող է ջրի տակ գտնվել այն պայմանով, եթե շնչառության համար օդի բավականաչափ պաշար է վերցնում։ Ստորջրյա աշխատանքներ կատարելիս բանվոր-սուզակները, որոնք հագնում են անջրանցիկ զգեստ և գլուխները պաշտպանող մետաղյա սաղավարտ, դրսից օդ են ստանում և մի հատուկ կաշեփողի միջոցով, որը միացած է պոմպի և ածխաթթուն դուրս քաշող կանոնավորիչի հետ։

— Այո, այդ հագուստը կոչվում է զրահազգեստ։

— Ճիշտ է։ Սակայն զրահազգեստ հագած սուզակն ազատ չէ։ Նա կապված է ռետինե փողրակով, որի միջով պոմպերը նրան օդ են մատակարարում։ Այդ իսկական շղթա է, որ նրան կապում է ցամաքի հետ։ Եթե մենք փողրակով կապվեինք «Նաուտիլուսին», հետու չէինք գնա։

— Իսկ ի՞նչ միջոց կա ազատ լինելու համար,— հարցրեցի ես։

— Օգտվելով Ռուկեյրոլ-Դենեյրուզի պարագայով։ Այս պարագան հնարել են ձեր երկու հայրենակիցները, պարոն պրոֆեսոր։ Ես էլ այդ կատարելագործել եմ այնքան, որ դուք առանց որևէ վնաս հասցնելու ձեր օրգանիզմին, կարող եք նրանով գնալ ջրի տակ՝ միջավայր, ուր բոլորովին այլ են ֆիզիոլոգիական պայմանները։ Ապարատն իրենից ներկայացնում է հաստ, թերթավոր երկաթից պատրաստված մի պահաման, որտեղ օդը խտացրած է հիսուն մթնոլորտ ճնշման տակ։ Պահամանը սուզակի մեջքին ամրացվում է ճիշտ այնպես, ինչպես պարկը զինվորի մեջքին։ Պահամանի վերին մասում շինված է դարբնոցի փուքսի նմանությամբ մի հարմարանք, որն օդի ճնշումը հասցնում է նորմալ դրության և միայն դրանից հետո է օդն անցկացնում կափարիչի միջով։ Ռուկեյրոլ-Դենեյրուզի սովորական պարագայի վրա երկու ռետինե խողովակներ, որոնք միացած են պահամանին, հասնում են մինչև հատուկ դիմակը, որ լինում է սուզակի դեմքին։ Այդ ռետինե խողովակներից մեկը պահամանից օդ ներշնչելու համար է, մյուսը՝ արտաշնչվող ածխաթթուն դուրս քաշելու համար։ Սուզակը լեզվով բաց է անում երբեմն մեկ, երբեմն էլ մյուս խողովակը, նայած թե ներշնչե՞լ է ուզում, թե՞ արտաշնչել։ Սակայն ծովերի խորքում ջրի վերին շերտերի մեծ ճնշումը հաղթահարելու համար ես հարկ համարեցի այդ դիմակը փոխարինել պղնձյա սաղավարտով, ներշնչելու և արտաշնչելու խողովակներն էլ ամրացնել այդ սաղավարտին։

— Հրաշալի է, նավապետ։ Սակայն այն օդը, որ դուք տանում եք ձեզ հետ, պետք է արագությամբ ապառվի, իսկ երբ թթվածնի քանակն իջնի մինչև տասնհինգ տոկոս, օդն այլևս անպետք կլինի շնչառության համար։

— Այդ ճիշտ է, պրոֆեսոր։ Սակայն ես արդեն ձեզ ասացի, որ «նաուտիլուսի» պոմպերի շնորհիվ ես կարող եմ զգալի քանակությամբ օդ հավաքել պահամանի մեջ։ Այս [illegible]

— [illegible] — [illegible] — [illegible]

ռում ձեր ճանապարհն օվկիանոսի խորքերում։ Չէ՞ որ այնտեղ հավանորեն անթափանցելի խավար է տիրում։

— Լուսավորում եմ Ռումկորֆի ապարատով, պրոֆեսոր։ Խտացրած օդ պարունակող պահմանն ամրացվում է մեջքին, իսկ այդ ապարատը՝ գոտուն։ Ապարատը կազմված է Բունզենի տարրից, որի մեջ ես պահում եմ նատրիում և ոչ թե երկքրոմաթթու կալիում, ինչպես լինում է սովորաբար։ Ինդուկցիոն կոճը հավաքում է ստացվող հոսանքը և ուղղում դեպի առանձնահատուկ կառուցվածք ունեցող լապտերը։ Այդ լապտերն իրենից ներկայացնում է օձանման, գատարկ, ապակյա մի խողովակ, որը լցված է ածխաթթու գազով։ Երբ ապարատն աշխատում է, գազը բավականաչափ պայծառ, սպիտակավուն լույս է արձակում։ Այսպիսով ես կարողանում եմ ջրի տակ թե շնչել և թե տեսնել։

— Նավապետ Նեմո, իմ բոլոր առարկությունների դուք այնպիսի ապառիշ պատասխաններ եք տալիս, որ ես չեմ համարձակվում որևէ խնդրում կասկածել։ Սակայն, ինձ պարտված ճանաչելով Ռուկեյրոլի և Ռումկորֆի ապարատների հանդեպ, ես դեռ հույս ունեմ վրեժ լուծել հրացանների խնդրում, որոնցով դուք խոստացել եք զինել մեզ ստորջրյա որսի համար։

— Բայց չէ՞ որ դրանք վառոդով լցվող սովորական հրացաններ չեն,— ասաց Նավապետը։

— Նշանակում է ձեր հրացանները գործում են խտացրած օդո՞վ։

— Իհարկե։ Ինքներդ դատեցեք, ես ինչպե՞ս կարող էի վառոդ պատրաստել «Նաուտիլուսում», ուր չկա ոչ քորակ, ոչ ծծումբ, ոչ էլ ածուխ։

— Բայց չէ՞ որ ջրի տակ կրակելիս, որտեղ միջավայրը հազար ութ հարյուր հիսուն անգամ ավելի խիտ է օդից, գնդակը պիտի հանդիպի հակայական դիմադրության։

— Այդ չի խանգարում իմ հրացանների ի դեպ ասած՝ դոյության ունեն թնդանոթներ, որոնք կրակով են լցվում նույն այդպիսի պարկուճներով։ Դուրսանիր հետո այդ թնդանոթի նեղը կատարելագործել են անգլիացիներ Ֆիլիպը Գոլտը և Բուլիցը, Ֆրանսիայի Նոտարին և իտալացի Լանդրին։ Սակայն,

կրկնում եմ, ածուխ չունենալու պատճառով ես իմ հրացանների համար գործ եմ ածում խտացրած օդ, որի պաշարը «նաուտիլուսի» էլեկտրական պոմպերի շնորհիվ իհարկե անսահմանափակ է։

— Բայց ամեն անգամ կրակելուց հետո պետք է վերականգնել այդ պաշարը։

— Ի՞նչ կա որ, մի՞թե ես չունեմ։ Ռուկեյրոլի պահամանը, որպեսզի վերսին լցնեմ հրացանը։ Դրա համար բավական է շուտ տալ ծորակը։ Ասենք դուք ինքներդ կտեսնեք, որ ստորջրյա որսի ժամանակ մեծ քանակությամբ խտացրած օդ և գնդակներ ծախսելու կարիք չի լինում։

— Բայց և այնպես ինձ թվում է, որ ծովի հատակում, ուր կիսախավար է տիրում և ուր հեղուկ միջավայրն օդի համեմատությամբ շատ ավելի պինդ է, անհնարին է հետու կրակել և գնդակները մահացու չեն լինի։

— Ընդհակառակը, պրոֆեսոր, իմ հրացանների բոլոր կրակոցները մահացու են։ Բավական է, որ գնդակը դիպչի «թռչունին», թեկուզ աննշան չափով, և «թռչունը» կընկնի այնպես, ինչպես կայծակնահար լինելու դեպքում։

— Ինչո՞ւ։

— Որովհետև իմ հրացանները կրակում են ոչ թե հասարակ, այլ փոքրիկ, ապակյա գնդակներով, որ հնարել է ավբատրիական քիմիկոս Լենիբրոկը։ Ես բավական զգալի պաշար ունեմ այդ գնդակներից։ Դրանք պատած են պողպատյա թաղանթով, ծանր արճիճով, և ոչ այլ ինչ են, բայց եթե փոքրիկ լեյդենյան բանկաներ, որոնք շատ բարձր լարվածության էլեկտրական լիցք են պարունակում։ Դրանք պայթում են ամենաթեթև ցնցումից և կենդանին, որքան էլ մեծ լինի, վայր է ընկնում ու սատկում։ Ավելացնում եմ, որ այդ ապակու կտորները համարյա չորս կոտորուքից ավելի մեծ չեն և որ հրացանի սովորական լիցքը տեղավորում է ոչ պակաս, քան տասը գնդակ։

— Անձնատուր եմ լինում,— ասացի ես, վեր կենալով սեղանից,— դուք հաղթահարեցիք իմ բոլոր առարկությունները։ Ինձ միայն մնում է զինվել իմ հրացանով և հետևել ձեզ, ուր էլ որ գնաք։

Նավապետ Նեմոն ինձ տարավ «Նաուտիլուսի» հետին մասը։ Անցնելով Նեդ Լենդի և Կոնսելի սենյակի դռնից, մենք կանչեցինք նրանց։

Երկուսն էլ իսկույն միացան մեզ։

Բոլորս միասին մտանք մի խուց, որ գտնվում էր մեքենայական բաժնի կողքին։ Այստեղ մենք հագանք զրահազգեստները, որպեսզի սկսենք մեր ստորջրյա զբոսանքը։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

ՋԲՈՍԱՆՔ ՍՏՈՐՋՐՅԱ ՀԱՐԹԱՎԱՅՐՈՒՄ

Այդ խցիկը «Նաուտիլուսի» թե զինապահեստն էր և թե հանդերձարանը։ Մի ամբողջ դյուժին զրահազգեստ կախված էր պատերից և սպասում էր որսորդներին։

Նեդ Լենդը նայեց զրահազգեստներին և ծռմռեց դեմքը։ Նրան պարզապես անհաճելի էր այդ ծանր հագուստը։

— Դուք պետք է իմանաք, Նեդ,— ասացի ես քաջ կանադացուն,— որ Կրեսպո կղզու անտառները գտնվում են ջրի տակ։

— Ա՜յ քեզ բա՛ն,— հիասթափված և ձայնը երկարացնելով ասաց եռաժանու վարպետը, տեսնելով, որ մի պատառ միս ուտելու իր ցնորքները հօդս են ցնդում։— Իսկ դուք, պարոն պրոֆեսոր, պատրաստվում եք հագնե՞լ այս ձիասարքը,— հարցրեց նա ինձ։

— Անպայման, թանկագին Նեդ։

— Ինչպես ուզում եք,— պատասխանեց Նեդ Լենդը, թափահարելով ուսերը,— իսկ ես իմ կամքով չեմ հագնի սրանք, եթե ուժով չստիպեն ինձ։

— Ձեզ ոչ ոք չի ստիպի, պարոն Լենդ,— ասաց տոնով ասաց նավապետ Նեմոն։

— Իսկ Կոնսելը կգնա՞,— հարցրեց Նեդը։

— Կոնսելը կհետևի իր պարոնին ոչ միայն ջրի, այլև կրակի մեջ,— պատասխանեց Կոնսելը։

Նավապետը կանչեց երկու նավաստի, որպեսզի սրանք օգնեն մեզ հագնելու այդ ծանր, անչրանցիկ հագուստը, որ

պատրաստված էր ռետինի ամբողջական կտորներից։ Այդ զրահազգեստները, որոնց պատրաստման ժամանակ հաշվի էին առնված բարձր ճնշումները, մասամբ հիշեցնում էին միջնադարյան ասպետի զրահը, որից սակայն տարբերվում էին իրենց ճկունությամբ։

Հագուստը բաղկացած էր մի բաճկոնից և շալվարից, որին միացած էին հատ կոշիկները, իսկ սրանց ներբանները ամրացված էին արճիճով։ Բաճկոնի վրա կային պղնձե օղակներ, որոնք կուրծքը պաշտպանում էին ջրի ճնշումից և թոքերին հնարավորություն էին տալիս ազատ շնչելու։ Թևերը վերջանում էին փափուկ ձեռնոցներով, որոնք չէին խանգարում մատների շարժմանը։

Նավապետ Նեմոն, նրա նավաստիներից մեկը, որ իր արտաքինով իսկական Հերկուլես էր և ըստ երևույթին հրեշավոր ուժ ուներ, ապա Կոնսելը և ես արագ հագանք զրահազգեստները։ Մնում էր միայն մետաղյա սաղավարտն անցկացնել գլուխներիս։

Սակայն նախքան այդ ես խնդրեցի նավապետին թույլ տալ դիտելու այն հրացանը, որ ինձ էր տրվելու։

Նավաստիներից մեկն ինձ տվեց արտաքուստ սովորական մի հրացան, որի կոթը մի փոքր ավելի մեծ էր, քան հրաձակ հրացանինը, ներքուստ դատարկ էր և պատրաստված էր պողպատից։ Կոթը ծառայում էր իբրև պահման խառցրած օդի համար, որը դուրս է նետվում փողից այն վայրկյանին, երբ իջնում է հրահանը և ետ տանում պահամանի կափարիչը։ Գնդակների պահունակը, որ ամրացված էր հրացանի մետաղյա մասին, պարունակում էր քսան հատ էլեկտրական գնդակ, որոնք հատուկ զսպանակի շնորհիվ ավտոմատ կերպով մտնում էին հրացանի փողը։ Հենց որ հրացանից դուրս էր թռչում մի գնդակ, նրա տեղն իսկույն մյուս գնդակն էր բռնում։

— Նավապետ Նեմո,— ասացի ես,— այս երևելի զենք է և շափազանց պարզ է սրա գործածությունը։ Ես անհամբերությամբ սպասում եմ այն րոպեներին, երբ կկարողանամ փորձել այս զենքը։ Սակայն մենք ինչպե՞ս պիտի իջնենք ծովի հատակը։

— «Նաուտիլուսն» այժմ կանգնած է հատակում, տապք մեր խորությամբ։ Մենք կարող ենք մեկնել, պրոֆեսոր։

— Բայց ինչպե՞ս դուրս գանք նավից։

— Հիմա կտեսնեք։

Սվ նավապետ Նեմոն պղնձե սաղավարտը գրեց գլխին։ Կոնսելն ու ես հետևեցինք նրա օրինակին։ Նեդ Լենդը հրաժեշտի ժամանակ հեգնանքով ասաց, որ հաջող որս է ցանկանում մեզ։ Բաճկոնի օձիքը վերջանում էր պղնձյա օղակով, որի պատուհակային պարույրին ամրացվում էր պղնձե սաղավարտը։ Սաղավարտի երեք անցքերը ծածկված էին հատատապակիով, որոնց միջով կարելի էր դիտել բոլոր կողմերը, գլուխն ազատ շարժելով սաղավարտի մեջ։ Հենց որ սաղավարտներն ամրացրինք, սկսեց աշխատել Ռուկեյրոլի ապարատը, որ ամրացված էր մեր մեջքին։

Ես գոտուցս կախեցի Ռումկորֆի լապտերը և վերցրի հրացանը։ Ազնվաբար խոստովանում եմ, որ զրահազգեստը ծանր էր ինձ համար, ծանր կոշիկներս կարծես մեխվել էին հատակին, և ես կարծում էի, թե մի քայլ անգամ չեմ կարող անել։

Ակներև էր, սակայն, որ այդ սովորական բան է եղել։ Ինձ տարան հանդերձարանի կողքին գտնվող մի փոքրիկ խցիկ։ Նույն ձևով առաջնորդեցին նաև իմ ուկեղիցներին։ Ես լսեցի, թե ինչպես մեր հետևից փակվեց դուռը, և մեր շուրջը տիրեց անթափանցելի խավար։

Մի քանի քայլերից հետո ես լսեցի մի ուժեղ սուլոց։ Զգացի, որ ինչ-որ սառը բան բարձրանում է ոտներիցս դեպի կուրծքս։ Գարզ էր, որ նավի ներսում բացել էին այն ծորակը, որով փակվում է ջրի ճանապարհը, և հիմա շուրջը լցվում էր մեր խցիկը։ Հենց որ այդ խցիկն ամբողջովին լցվեց ջրով, բացվեց երկրորդ դուռը, որ շինված էր «Նաուտիլուսի» կողքին, և մենք տեսանք գունատ մի կիսալույս։ Մի վայրկյան անց մենք արդեն քայլում էինք ծովի հատակում։

Հիմա ես ինչպես նկարագրեմ այն տպավորությունները, որ առացա ծովի հատակում կատարած այդ ճանապարհորդությունից։

Խոսքերն անզոր են արտահայտելու իմ տեսած հրաշքնե-

ը։ Ինչպե՞ս այդ պահանջես գրչից, երբ նկարչի վրձինն անգամ անզոր է պատկերացնել ջրային տարերքի ապշեցուցիչ էֆեկտները։

Նավապետ Նեմոն գնում էր առջևից, նավաստին՝ բոլորիս հետևից։ Կոնսելը և ես քայլում էինք կողք-կողքի, բայց մեր մետաղյա սաղավարտների միջով չէինք կարող իրար հաղորդել մեր տպավորությունները։ Ես այլևս չէի զգում զրահազգեստի, արճիճե կոշիկների, խտացրած օդով լի պահամանի և մեռաղյա սաղավարտի ծանրությունը։ Գլուխս ազատ էր այդ սաղավարտում, ինչպես ընկույզն իր կեղևի մեջ։ Այդ բոլոր առարկաները, որ ջրասույզ էին եղել, իրենց ծանրությունից կորցնում էին ճիշտ այնքան, որքան կորցնում էր նրանց դուրս մղած ջուրը։ Ես պատրաստ էի ողջունելու այդ ֆիզիկական օրենքը, որ դեռ Արքիմեդն էր հայտնագործել, որովհետև դրա շնորհիվ ես նորից կարողանում էի ազատ շարժումներ անել։

Ինձ զարմացրեց հատակում եղած պայծառ լույսը, որ տարածվել էր ջրի երեսուն ոտնաչափանոց շերտի տակ։ Արեգակի ճառագայթներն ազատ թափանցում էին մինչև հատակը և լուսավորում շրջապատը։ Հարյուրավոր մետր տարածության վրա ես պարզ տեսնում էի ամենափոքր առարկաները։ Ավելի հեռու տեղերում ուրվագծերը սկսում էին գունատվել, գույները խտանում էին, կապտանում, և ապա ամեն ինչ չքանում էր զմրուխտե հեռուներում։ Ինձ շրջապատող միջավայրն օդի պես թափանցիկ էր, թեև ավելի թանձր էր օդից։ Վերևում ես տեսնում էի ծովի անվրդով մակերևույթը։

Մենք քայլում էինք ծանծաղ, պինդ և բոլորովին հարթ ավազի վրայով։ Չկային այն խորդուբորդությունները, որ ալիքներն առաջացնում են առափնյա ավազուտներում։ Այդ կուրացուցիչ գորգը մի իսկական ռեֆլեկտոր էր արևի ճառագայթների համար։ Ահա թե ինչու այնքան պայծառ էին լուսավորված ջրային շերտերը, որոնց յուրաքանչյուր մասնիկը շողշողում էր բառիս իսկական իմաստով։ Արդյոք կհավատա՞ն ինձ, եթե ասեմ, որ այնտեղ, երեսուն ոտնաչափ խորությամբ այնպես լույս էր, ինչպես լինում է ծովի վրա, պայծառ եղանակի դեպքում։

Քառորդ ժամվա չափ մենք քայլում էինք այդ առկայծուն, ավազե գորգի վրա, ուր տարածված էր միլիարդների հասնող մանրագույն խեցիների նուրբ փոշին։ «Նաուտիլուսը», որ հեռվից թվում էր մի երկարաձև ժայռ, հետզհետե փոքրանում էր մեր աչքում։ Երբ իջներ գիշերը, նավի լուսարձակն իր պայծառ, հեռվից նկատելի ճառագայթներով պիտի լուսավորեր մեր վերադարձի ճանապարհը։

Մենք գնում էինք ու գնում, իսկ ավազոտ հարթավայրը կարծես սահման չուներ։ Ես ձեռներով բաց էի անում հեղուկ վարագույրները, որոնք անմիջապես ծածկվում էին և ջրի ճնշումը վայրկենապես ոչնչացնում էր ոտներիս հետքերը։

Վերջապես, հեռվում հազիվհազ նկատվեցին ինչ-որ ուրվագծեր։ Մոտենալով ես տեսա, որ դրանք ստորջրյա ժայռերն են և ծածկված են զոոֆիտներով։ Այստեղ ես տեսա մի պատկեր, որ լինում է միայն հեղուկ միջավայրում։

Առավոտյան ժամի մոտ վեցն էր։ Արևի ճառագայթները թեք ընկել էին ջրի մեջ, և նրանց լույսը, բեկվելով ջրում, ինչպես պրիզմայում, արևի յոթ գույներով զարդարել էր ժայռերը, պոլիպները, բույսերը։ Լույսերի այդ քառսը, մանիշակագույն, կապույտ, կանաչ, դեղին, նարնջագույն ու կարմիր գույների այդ սքանչելի տեսարանը, որ նկարչի ներկատախտակն էր հիշեցնում, իսկական տոն էր մեր աչքերի համար, իսկական հրաշք։

Որքա՜ն ցավալի էր, որ ես չէի կարող Կոնսելին հաղորդել իմ զգացումները, այն էներկրանքը, որ ծովանում էր իմ հոգում և ձգտում էր դուրս թափվել հիացմունքի բացականչություններով։ Ափսոս, որ ես չգիտեի այն նշանները, որոնցով նավապետ Նեմոն խոսում էր իր նավաստու հետ։ Ես ստիպված էի խոսել ինքս ինձ հետ, զանազան բացականչություններ անել, ապարդյուն խուքեր արտասանել և այդպիսով վատնել օդի թանկագին պաշարը։

Կոնսելը, ինչպես նաև ես, կանգ առավ, ապշելով այդ զմայլելի տեսարանից։

Ինձ թվաց, որ այդ արժանավոր մարդը, տեսնելով զոոֆիտներն ու կակղամորթները, սկսում էր զբաղվել դրանց դասակարգելով։

Ծովի հատակը ծածկված էր բազմաքանակ պոլիպներով ու աղամորթներով։ Զանազան տեսակի ասցիդիաները, մեռակյաց կորպուլարիաները, խավոտ օկուլինները, որոնց առաջ անվանում էին «ապիտակ կորալներ», ֆունդիաները, որոնք թնոպրի ձևեր ունեին, ակտինաները, որոնց բերանի շուրջը գտնվում էր շոշափուկների պսակը, այս բոլորն իսկական ծաղկանոց էր հիշեցնում։ Սակայն այդ ծովային այգու լավագույն զարդարանքն էին՝ պորպիտները, կապտավուն շոշափուկներից կազմված ժանյակային օձիքներով, ծովային աստղերը, որոնք ավազի վրա մի ամբողջ համաստեղություն էին կազմել, աստերոֆիտները, որոնց քնքուշ ժանյակները, կարծես նայադների[1] ձեռքով հյուսված, համաչափ օրորվում էին ջրի թույլ տատանումներից, որ առաջ էին գալիս մեր քայլերից, վերջապես, pelagia ռապորուգան, որ իր ֆոսֆորային փայլով կլուսավորեր մեր ճանապարհը, եթե գիշեր լիներ։

Ես անկեղծորեն ցավում էի, որ ստիպված էի ոտներով ճզմել հիանալի կակղամորթները, որ հաղարներով փռվել էին հատակին, կալմարները, սանրաձև կախանները, ապակյակները, պտերոտրախները, բայդարները և օվկիանոսի այլ հարստությունները։

Սակայն հարկավոր էր առաջ գնալ, և մենք գնում էինք։

Մեր գլխավերևում դանդաղ լողում էին ֆիզալիաները իրենց ծածանվող, կապույտ-երկնագույն շոշափուկներով, մեդուզաները իրենց քնքուշ-վարդագույն կամ արևակնային գլխիկներով, որոնց ծայրերը կապտավուն շերտերով էին ծածկված։

Այս բոլոր հրաշալիքները ես տեսնում էի մեր ճանապարհին, ընդամենը մեկ քառորդ մղոն տարածության վրա։ Հարկավոր էր հետ չմնալ նավապետ Նեմոյից, որ արագ և առանց կանգ առնելու առաջ էր գնում։

Շուտով ծովի հատակը փոխվեց։ Ավազե գորգին հաջորդեց մածուցիկ տիղմի շերտը, որին ամերիկացիք «օազ» են անվանում։ Այս տիղմը բաղկացած էր գլխավորապես կայծքա-

---

1 Նայադներ (ջրանուշներ) — այսպես էին կոչվում հին հունական դիցաբանության մեջ ջրային ոգիները։

ռոտ կամ կրային խեցիներից։ Հետո մենք գնում էինք ջրիմուռներով ծածկված տարածություններով։ Սորջրյա փոքրիկ մարգագետինները, առատ բուսականությամբ ծածկված, փռվել էին մեր ոտքերի տակ ինչպես ամենահմուտ վարպետի ձեռքով հյուսված փափլիկ գորգեր։

Բույսերը ծաղկել էին ոչ միայն մեր ոտների տակ, այլև մեր գլխավերևում։ Կարծես մենք գնում էինք մի ծառուղիով, որը վերևից ծովային բույսերով էր ծածկված։ Այդ բույսերը պատկանում են ջրիմուռների արգասավոր ընտանիքին, որի անդամների թիվը համարյա թե երկու հազարի է հասնում։ Այստեղ էին աղվեսուկների երկար ժապավենները, դնդաձև կամ խողովակաձև լավրենցիաները, կլադոստեֆներն իրենց նուրբ տերևներով, թաղանթանման ռոդոմենները, որ նման էին կակտուսների հովհարներին։

Ես նկատեցի, որ կանաչ ջրիմուռներն ավելի մոտիկ են ծովի մակերևույթին, կարմիրները միջին խորության շերտերում են, իսկ կինամոնագույններն ու սևերը ծաղկանոցներ և այգիներ են դարձել օվկիանոսի ավելի խոր շերտերում։

Ջրիմուռները բնության իսկական հրաշալիքն են։ Այս ընտանիքին են պատկանում աշխարհիս թե ամենափոքր և թե ամենախոշոր բույսերը։ Այսպես, բացի մանրագույն ջրիմուռներից, որոնց քառասուն հազարը տեղավորվում է հինգ քառակուսի միլիմետր տարածության վրա, կան նաև այնպիսի ջրիմուռներ, որոնց երկարությունը մոտ հինգ հարյուր մետրի է հասնում։

Արդեն ժամ ու կես անցել էր այն պահից, երբ մենք թողեցինք «Նաուտիլուսը»։ Մոտենում էր կեսօրը։ Այդ երևում էր նրանից, որ արևի ճառագայթներն ուղղահայաց դիրք էին ընդունում և չէին բեկվում ջրի մեջ։ Գույների ֆանտաստիկ հարստությունը նվազում էր հետզհետե, շափյուղն ու զմրուխտե երանգները չքանում մեր երկնակամարից։ Մենք համաշափ քայլում էինք առաջ և մեր ոտնաձայները լսվում էին արտասովոր պարզությամբ։ Ամենաչնչին ձայնը տարածվում էր արագությամբ, այդպես չի լինում ցամաքում։ Եվ իսկապես, ջուրն ավելի հեշտ է անցկացնում ձայնը, քան օդը, ջրի մեջ ձայնը շորս անգամ ավելի արագ է անցնում։

Մինչ այս մինչ այն, հառակը սկսեց թեքվել։ Հիմա մենք գտնվում էինք հարյուր մետր խորության տակ և զգում տաքը մթնոլորտ ճնշում։ Բայց, ինչպես երևում է, իմ գրահագգեստը հարմարեցրած էր այդ պայմաններին, քանի որ ես բոլորովին չէի տանջվում այդ ճնշումից։ Ես զգում էի միայն ինչ-որ անորոշ ճնշում մատներիս հոդակապերում, սակայն այդ զգացումն ևս, որ մի քիչ անհաճելի էր, շուտով չքացավ։ Չնայելով, որ երկու ժամ քայլում էի ինձ համար բոլորովին արտասովոր զգեստով, այնուամենայնիվ ոչ մի հոգնածություն չէի զգում։ Ջուրը պահում էր ինձ, և ես գնում էի անսովոր հեշտությամբ։

Գտնվելով երեք հարյուր ոտնաչափ խորության տակ, ես նկատում էի արևի ցոլքը, որը, սակայն աղոտանում էր։ Ցերեկվա պայծառ լույսն իր տեղը զիջում էր կարմրավուն մթնաշաղին, որ լինում է այն ժամանակ, երբ ցերեկն ու գիշերը հաջորդում են իրար։ Սակայն մենք լավ էինք տեսնում ճանապարհը և դեռ կարիք չկար դիմելու Ռումկորֆի լապտերի օգնության։

Հանկարծ նավապետ Նեմոն կանգ առավ։ Նա սպասեց, մինչև որ ես մոտենամ իրեն և մատը տնկելով, ցույց տվեց ինչ-որ մի սև զանգված, որ պարզ ուրվագծվում էր կիսախավարում, մեզանից քիչ հեռու։

«Այդ Կրեսպո կղզու անտառն է»,— մտածեցի ես ու չսխալվեցի։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

ՍՈՐՋՐՅԱ ԱՆՏԱՌԸ

Վերջապես, մենք հասանք այն անտառը, որ հավանորեն ամենապեղեցիկ վայրերից մեկն էր նավապետ Նեմոյի անծայրածիր կալվածքներում։ Նա այդ անտառը համարում էր իր սեփականությունը, իրեն էր վերապահում այն իրավունքները, որ ունեին առաջին մարդիկ, աշխարհի գոյության առաջին օրերում։ Սակայն ո՞վ կարող էր վիճելի համարել նրա իրավունքը սորջրյա կալվածքների վրա։ Ո՞վ էր այն քա-

ջը, որ ավելի համարձակ լիներ և կացինը ձեռքին գար կտրատելու այս մթին անտառը։

Կրեսպո կղզու անտառը բաղկացած էր մեծ, ծառանման բույսերից։ Հենց որ մենք մտանք անտառ, ինձ ապշեցրեց ճյուղերի դասավորության մի առանձնահատկությունը։ Մինչ այդ ես ոչ մի նման բան չէի տեսել։

Կանաչները, որ գորգի նման զարդարել էին հատակը և ոտները, որ աճել էին ծառերի վրա, չէին ծռվում, հորիզոնական դիրք չէին ընդունել, այլ կանգնել էին ուղղահայաց, ծայրերն ուղղել դեպի օվկիանոսի մակերևույթը։ Ամենաբարակ ցողունները լարի պես ձգվել էին դեպի վեր, ինչպես երկաթյա ձողիկներ։ Աղվեսուկներն ու լիանաները, շրջապատող միջավայրի թանձրության շնորհիվ, բարձրանում էին վեր, ծովի մակերևույթին բոլորովին ուղղահայաց գծով։ Ես փորձում էի թեքել այդ բույսերը, բայց հենց որ դրանք ազատվում էին իմ ձեռքից, էլի նախկին դիրքն էին ընդունում։

Շուտով ես ընտելացա բույսերի այդ տարօրինակ դիրքին, ինչպես ընտելացել էի մեզ շրջապատող կիսախավարին։ Անտառի «հողը» լիքն էր սուր քարերով, որոնցից դժվար էր խուսափել։ Ստորջրյա բուսականությունն ինձ շատ հարուստ թվաց։

Ես չկարողացա միանգամից զանազանել բուսական և կենդանական աշխարհը։ Կենդանաբույսերը՝ զոոֆիտները, ես ընդունեցի ջրաբույսերի՝ հիդրոֆիտների տեղ և ընդհակառակը։ Ասենք, ով էլ որ լիներ իմ տեղը, կսխալվեր։ Չէ՞ որ կենդանական աշխարհն ու բուսականությունն այնքա՛ն անորոշ են այդ ստորջրյա վայրերում։

Ես նկատեցի, որ բոլոր բույսերն արհեստականորեն կպել էին հատակին և ոչ թե աճել այնտեղից։ Դա բոլորովին զարմանալի չէ։ Արմատներ չունենալով, նրանք գետնից պահանջում էին ոչ թե կենսական հյութ, այլ միայն հենակետ։ Այս պատճառով նրանք հավասարաչափ աճել էին թե քարերի, թե ավազի, թե կոպիճների ու խեցիների վրա։ Այդ բույսերն ապրում, շնչում ու սնվում են իրենց շրջապատող ջրով։ Դրանց մեծամասնությունը տերևների փոխարեն ամենատարօրինակ ձևի թանթեր է արձակում։ Այդ թանթերը լինում են վարդա-

գույն, կարմրալուն, կանաչ, ձիթենագույն, թուխ և դարչնագույն։ Այստեղ ես նորից տեսա այն բույսերը, ինչ որ տեսել էի «Նաուտիլուսի» հավաքածոներում», բայց արդեն ոչ թե չորացրած, այլ կենդանի վիճակում, այստեղ էին պադինպալլինները, որ նման էին բացված հովհարների, վառ-կարմիր ցերամիաները, լամինարիաները, որ մատաղ ոստեր էին արձակել, թելանման նեբեոցիստեաները, որ աճում են տասնհինգ մետր բարձրությամբ, փունջ-փունջ ացետաբուլները, որոնց ցողունների վերին մասերն ավելի հաստ են լինում, քան ստորին մասերը, և էլի ուրիշ շատ ծովային բույսեր, որոնք ծաղիկ չունեին։ «Ի՞նչ տարօրինակ աշխարհ է,— ասել է մի բնագետ,— այստեղ կենդանիները ծաղկում են, իսկ բույսերը ծաղիկ չեն տալիս»։

Իրենց մեծությամբ չափավոր գոտու ծառերին չվիջող պատաղան բույսերի հովանու տակ երևում էին կենդանի ծաղիկների իսկական փնջեր, զոոֆիտների ամբողջ շարքեր, որոնց վրա ծաղկել էին գույնզգույն մեանդրիններն իրենց ոլորուն ակոսիկներով, դեղնալուն կարիոֆիլներն իրենց թափանցիկ շոշափուկներով։ Ինչպես ցամաքի այդիներում միջատներն են թռչկոտում ծաղկից ծաղիկ, այնպես էլ այստեղ ձուկ-ճանճերը կոլիբրիների պարսի նման թռչում էին ծաղիկների վրա, իսկ մեր ոտների տակից ճահճակոցարների նման բարձրանում էին լեպիսականտները, դակտիլոպտերները և մոնոցենտները։

Ցերեկվա ժամը մոտ մեկին նավապետ Նեմոն հանդատանալու ազդանշան տվեց։ Ես զոհունակությամբ ընդունեցի։ Մենք պառկեցինք հատակին, ալարիաների հովանու տակ, որոնց երկար ցողունները նետերի պես դեպի վեր էին ցցված։

Այս հանդիսությունը չափազանց հաճելի էր։ Ափսոս որ խոսելու հնարավորություն չկար։ Ոչ կարելի էր խոսել, ոչ էլ լսել։ Ես բավականացա նրանով, որ իմ մեծ, պղնձե գլուխը մոտեցրի Կոնսելի գլխին և տեսա, որ իմ պանծալի ընկերոջ աչքերը փայլում են հրճվանքից։ Իր լիակատար զոհունակությունն արտահայտելու համար նա մեռոդյա սաղավարտում գտնվող իր գլխով մի ծիծաղելի շարժում կատարեց։

Ինձ շատ զարմացրեց այն հանգամանքը, որ չորս ժամ զրոսնելուց հետո քաղց չէի զգում։ Ես չգիտեմ, թե ինչու

ատամոքս այդպես համբերող էր դարձել։ Սակայն, մյուս կողմից, քնելու սաստիկ ցանկություն ունեի, ինչպես այդ պատահում է չրասուզակների հետ։ Աչքերս կամաց-կամաց փակվեցին, ու ես անձնատուր եղա քնին, որը մինչ այդ հաղթահարում էի քայլելու շնորհիվ։ Նավապետ Նեմոն և նրա ժողովուրդ նավաստին առաջիններն էին, որ օրինակ ցույց տվին։ Մեկնվելով իրենց հեղուկ անկողնում, նրանք խորը քուն մտան։

Չգիտեմ որքան քնեցի։ Երբ արթնացա, արևը թեքվել էր դեպի մայրամուտ։ Նավապետ Նեմոն արդեն վեր էր կացել։ Ես նոր էի սկսել ձգել մարմինս, երբ հանկարծ անսպասելի մի երևույթ ինձ ստիպեց վեր թռչել։

Ինձնից մի քանի քայլի վրա կանգնած էր ծովային մի ահագին սարդ, մի ամբողջ մետր բարձրությամբ։ Ծուռը աչքերը շռել էր իմ կողմը և ըստ երևույթին ուզում էր հարձակվել ինձ վրա։ Թեպետ իմ զրահազգեստը բավական ամուր էր և կարող էր ինձ պաշտպանել սարդի կծելուց, այնուամենայնիվ ես չկարողացա զսպել սարսափի զգացումս։ Այդ բոպեին Կոնսելն ու «Նաուտիլուսի» նավաստին արթնացան։ Նավապետ Նեմոն վերջինիս մատնացույց արեց զզվելի կենդանուն, որը և տեղն ու տեղը սատկեց հրացանի կոթի հարվածից։

Սարդին հանդիպելուց հետո ես մտածեցի, որ ծովի այդ մոայլ խորքերում կարող են լինել նաև ուրիշ, ավելի սարսափելի կենդանիներ, որոնցից անկարելի կլինի պաշտպանվել իմ զրահազգեստով։ Ես որոշեցի աչալուրջ լինել։

Ես կարծում էի, թե հանգստանալուց հետո մենք այլևս չենք շարունակի մեր զբոսանքը, բայց բանից դուրս եկավ, որ սխալվել եմ։ Փոխանակ վերադառնալու դեպի «Նաուտիլուսը», նավապետ Նեմոն էլի՛ առաջ գնաց։

Ծովի հատակը հետզհետե ցածրանում էր, և մենք ավելի խորը տեղեր էինք մտնում։ Կեսօրվա ժամը մոտ երեքին մենք հասանք մի ձորակ, որ գտնվում էր երկու սեպաձև ժայռերի արանքում, ծովի մակերևույթից հայտուր հիսուն մետր ցած։ Մեր հարմար հագուստի շնորհիվ մենք իննսուն մետր իջանք այն սահմանից, որ կարծես բնությունն ինքն էր որոշել մարդու ստորջրյա էքսկուրսիաների համար։

Ըստ երևույթին մենք գտնվում էինք հարյուր հիսուն մետր խորության տակ, թեև իհարկե ոչ մի գործիք չկար այդ խորությունը չափելու։ Սակայն ես գիտեի, որ անգամ ամենաթափանցիկ ծովերում արևի ճառագայթները չեն կարող դրանից ավելի խորը թափանցել։ Մինչդեռ մենք հասել էինք այնտեղ, ուր անթափանցելի խավարն էր տիրում։ Ստիպված էինք շոշափելով գնալ։ Բայց ահա մեր առջև պայծառ լույս վառվեց։ Այդ նավապետ Նեմոն էր վառել իր էլեկտրական լապտերը, նրա ուղեկիցը նույնպես վառեց իր լապտերը իսկ Կոնսելն և ես հետևեցինք նրանց օրինակին։ Մենք շուտ տվեցինք անջատիչը և օձանման խողովակը, որ լցված էր գազով, էլեկտրական հոսանքի ներգործությամբ լույս արձակեց։ Մեր շորս լապտերների լույսը քսանհինգ մետր տարածության վրա լուսավորեց ծովը։

Նավապետ Նեմոն շարունակում էր քայլել մթին անտառում։ Անտառը նոսրանում էր։ Ես նկատեցի, որ բուսականությունն ավելի արագ է չքանում, քան կենդանական աշխարհը։ Մենք համարյա թե էլ չէինք հանդիպում ծովային բույսերի, մինչդեռ զոոֆիտները, բազմոտանիները, կակղամորթներն ու ձկները շարունակում էին վխտալ մեր շուրջը։

Ես մտածեցի, որ էլեկտրական լապտերները դեպի մեզ պետք է գրավեն այդ մթին աշխարհի բնակիչներին։ Սակայն նրանք թեև մոտենում էին մեզ, այնուամենայնիվ կանգ էին առնում զգալի տարածության վրա, ու հնարավոր չէր լինում հաջող որս կատարել։

Մի քանի անգամ ես նկատեցի, թե ինչպես նավապետ Նեմոն կանգ էր առնում և հրացանով նշան բռնում։ Բայց մի քանի վայրկյան հետո առանց կրակելու իջեցնում էր հրացանը։

Վերջապես, ցերեկվա ժամը մոտ չորսին մենք հասանք այնտեղ, ուր ձգտում էինք։ Հանկարծ տեսանք վիթխարի, գրանիտե մի պատ, ժայռերի վեհաշուք մի զանգված՝ մթին քարանձավներով։ Պատը համարյա թե բոլորովին ուղիղ էր կանգնած։ Այդ Կրետայի կղզու ստորոտն էր։ Մենք հասել էինք ցամաքը։

Նավապետ Նեմոն հանկարծ կանգ առավ։ Նա մեզ նշան

արեց, որ հետևենք իր օրինակին, և որքան էլ ես ուզում էի բարձրանալ այդ ժայռը, այնուամենայնիվ ստիպված եղա կանգ առնել։ Այստեղ վերջանում էին նավապետ Նեմոյի կալվածքները։ Նա չէր ուզում անցնել այդ կալվածքների սահմանը։

Այնուհետև սկսվում էր մի ուրիշ աշխարհ, ուր նա չէր ուզում ոտ դնել։

Մենք ետ դարձանք։ Նավապետ Նեմոն կրկին անցավ մեր փոքրիկ ջոկատի գլուխը և առանց տատանվելու առաջնորդեց մեզ։ Ինձ թվաց, թե մենք ուրիշ ճանապարհով ենք վերադառնում դեպի «Նաուտիլուսը»։

Այդ նոր ճանապարհը, որ սեպաձև էր և ուրեմն՝ խիստ հոգնեցուցիչ, մեզ շուտով մոտեցրեց ծովի մակերևույթին։ Սակայն դեպի ջրի վերին շերտերը մենք չվերադարձանք այնպես արագ, որ անհաճելի հետևանքներ ստացվեին մեզ համար. ինչպես հայտնի է, ճնշման վայրկենական փոփոխությունը արյունահոսություն է առաջ բերում մարդու օրգանիզմում, պատռելով արյունատար անոթները։ Այսպիսի վտանգ է սպառնում այն բոլոր ջրասուզակներին, որոնք անզգուշություն են թույլ տալիս և ծովի խորքից արագ բարձրանում են նրա մակերևույթը։

Շուտով մենք հասանք ջրի լուսավորված շերտերը։ Արևն արդեն մոտ էր մայրամուտին։ Նրա ճառագայթները բեկվում էին ջրերում և ծիածանային ցոլքեր էին վառում բույսերի շուրջը։

Մենք գնում էինք տասը մետր խորությամբ, շրջապատված բազմապիսի ձկների վտառներով, որ ավելի բազմաթիվ էին, ավելի կայտառ, քան թռչուններն օդում։ Մինչև այժմ մենք չպատահեցինք ոչ մի ջրային կենդանու, որ արժանի լիներ որսալու։

Հանկարծ ես տեսա, թե ինչպես նավապետ Նեմոն հրացանով նշան բռնեց ստորջրյա թփուտներում շարժվող մի ինչոր կենդանու վրա։ Նավապետն իջեցրեց հրացանը։ Լսվեց թույլ մի շվոց և կենդանին վայր ընկավ մեզանից հինգ քայլի վրա։

Այդ ծովային մի հիանալի սամույր էր, ծովային միակ

շորքոտանին։ Նրա մորթին, որ մեկ և կես մետր երկարություն ունի, մեջքի վրա թուխ-կինամոնագույն է, իսկ փորի վրա արծաթավուն-սպիտակ, շատ բարձր արժեք ունի ռուսական ու չինական շուկաներում։ Ես հետաքրքրությամբ դիտում էի այդ փոքրիկ գազանին, որ ուներ տափակ մարմին, կարճ ոտներ, տափակ գլուխ, բութ դունչ, կարճ ու կլորիկ ականջներ, մատների արանքում լավ զարգացած թաղանթ և երկար, տափակ պոչ։ Այդ թանկարժեք, միատրովայն կենդանին, որին համառությամբ փնտրում են ձկնորսները, վերջին ժամանակներս հազվագյուտ երևույթ է դարձել։ Հիմա նա պատահում է միայն խաղաղ օվկիանոսի հյուսիսային մասերում և հավանորեն հեռու չէ այն ժամանակը, երբ բոլորովին կչքանա։

Նավաստին վերցրեց սպանված կենդանուն, շալակեց, և մենք ճանապարհ ընկանք։

Մի ժամի չափ մենք քայլում էինք ավազոտ հարթավայրում։ Տեղ-տեղ պակասում էր ջրի խորությունը, հասնելով ընդամենը երկու մետրի։ Այդ ժամանակ կարծես մենք բոլորովին պարզ անդրադառնում էինք հայելու մեջ, թվում էր, թե մեր գլխավերևում քայլում են մի խումբ մարդիկ, որոնք կրկնում են մեր բոլոր շարժումները, բայց... գլխիվայր են քայլում։

Ե՛վ մի երևույթ, որ արժանի է հիշատակության. մեր գլխավերևում անընդհատ անցնում ու չքանում էին ամպերի քուլաներ, որոնք վայրկյան առ վայրկյան ծածկում էին լույսը։ Ես մտածում էի, թե ի՞նչն է այդ տարօրինակ երևույթի պատճառը, ապա հասկացա, որ այդ «ամպերի» էֆեկտն ուրիշ բան չէր, բայց եթե ալեկոծության արդյունք, իսկ ալեկոծության շնորհիվ փոփոխվում էր մեր վերևում եղած ջրային շերտերի հաստությունը։ Ամբի ուշադրությամբ դիտելով, ես նույնիսկ փրփրուն «գառներ» նկատեցի ալիքների վրա։ Ջուրն այնքան թափանցիկ էր, որ ես պարզ տեսնում էի ծովային այն մեծ թռչունների ստվերները, որոնք արագ թռչում էին ջրերի վրա։

Հենց այդ ժամանակ ես լսեցի մի արտասովոր կրակոց, որը հազվագյուտ է որսորդների կյանքում։ Ինչ-որ մի մեծ թռչուն, թևերը լայն բացած, մոտենում էր ջրին։ Թռչունը

երևում էր բոլորովին պարզ։ «Նաուտիլուսի» նավաստին նշան բռնեց ու կրակեց այն ժամանակ, երբ թռչունը գտնվում էր ջրի մակերևույթից ընդամենը մի քանի մետրի վրա։ Թռչունը քարի նման ընկավ ջուրը։ Անկման թափն այնքան ուժեղ էր, որ թռչունը, հաղթահարելով ջրի դիմադրությունը, ընկավ վարպետ կրակողի հենց ձեռքերի վրա։ Դա մի խոշոր մրրկահավ էր, ծովային թռչունների խմբի նշանավոր ներկայացուցիչը։

Երկու ժամվա ընթացքում մենք քայլում էինք մերթ ավազոտ հարթավայրում, մերթ ջրիմուռներով ծածկված մարգագետիններում, որոնց միջով անցնելն ավելի դժվար էր լինում։ Պետք է խոստովանեմ, որ արդեն բոլորովին ուժասպառ էի լինում, երբ մեզանից կես մղոն հեռու ինչ-որ աղոտ լույս նկատեցի։ Այդ «Նաուտիլուսի» լուսարձակն էր։ Ընդամենը քսան րոպեից հետո մենք պետք է վերադարձած լինեինք նավը։ Ես հույս ունեի այնտեղ մի լավ շունչ քաշել,— թվում էր, թե պահամանից մատակարարվող խտացրած օդը հիմա բավականաչափ թթվածին չի պարունակվում։ Սակայն ես չէի նախատեսել մի դեպք, որի շնորհիվ մի քիչ ձգձգվեց մեր վերադարձը։

Ես քայլում էի նավապետ Նեմոյի հետևից, քսան քայլ հեռավորությամբ։ Հանկարծ նա ետ դարձավ և արագ եկավ դեպի ինձ։ Նա իր ուժեղ ձեռներով պառկեցրեց ինձ։ Նավաստին նույնն արավ Կոնսելի հետ։

Սկզբում ես չգիտեի, թե ինչպես կարելի է հասկանալ այդ հանկարծակի հարձակումը, բայց հետո հանգստացա, տեսնելով, որ ինքը, նավապետը պառկեց իմ կողքին ու մնաց անշարժ։

Ես պառկած էի ջրիմուռների թփի տակ, չհասկանալով, թե ինչ է կատարվում։ Հանկարծ բարձրացնում եմ գլուխս և ի՞նչ եմ տեսնում. վերևից անցնում են երկու հսկայական, ֆոսֆորացնող կենդանիներ։ Սարսափը պատեց ինձ։ Դրանք երկու շնաձկներ էին, որոնք պարզ լուսավորված էին։ Այդ զարհուրելի կենդանիներն ունեն հսկայական պոչեր, երկաթյա ծնոտներ, որոնք կարող են մի հարվածով երկու կես անել մարդուն։ Շնաձկների աչքերը գունատ են և ապակենման։

Չգիտեմ, Կոնսիլը զբաղվո՞ւմ էր արդյոք դասակարգելով։ Ինչ վերաբերում է ինձ, ես շնաձկների արծաթավուն որովայններին և ահագին առամներով լի երախներին նայում էի իբրև զոհ և ոչ թե իբրև գիտնական-բնագետ։

Բարեբախտաբար այդ սարսափելի գիշատիչների տեսողությունը թույլ է։ Նրանք անցան առանց մեզ նկատելու, թեպետ նրանց մուգ-դարչնագույն լողաթևերը շփվեցին մեզ։ Մենք ազատվեցինք վտանգից, որ ավելի ահավոր էր, քան վագրին հանդիպելը մթին անտառում։

Կես ժամից հետո մենք հասանք «Նաուտիլուսը», որի պայծառ լուսարձակը լուսավորում էր մեր ճանապարհը։ Արտաքին դուռը բաց էր մնացել։ Հենց որ մենք մտանք խցիկը, նավապետ Նեմոն փակեց այդ դուռը։ Ապա նա սեղմեց էլեկտրական կոճակը։ Ես լսեցի, թե ինչպես պոմպերն աղմկում էին նավի ներսում և զգացի, որ իմ շուրջը պակասում է ջուրը։ Մի քանի րոպեում խցիկը բոլորովին դատարկվեց ջրից։ Այնուհետև բացվեց ներքին դուռը, և մենք մտանք հանդերձարան։

Իմ վրայից հանեցին զրահաղցնտը։ Կիսամահ լինելու չափ հոգնած, քնելու անհաղթահարելի ցանկություն զգալով, բայց անսահման չափով գոհ այդ հրաշալի ստորջրյա զբոսանքից, ես վերադարձա իմ սենյակը։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

ՁՈՐՍ ՀԱԶԱՐ ԼՅՈ ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՍԻ ՋՐԵՐԻ ՏԱԿ

Հետևյալ օրը, նոյեմբերի 18-ին, ես արթնացա բոլորովին հանգստացած։ Բարձրացա «Նաուտիլուսի» տախտակամածը հենց այն րոպեին, երբ նավապետի օգնականն արտասանում էր իր սովորական ֆրազը։ Իմ մեջ ծագեց այն միտքը, թե այդ ֆրազը նշանակում է հետևյալը. «Ոչինչ չի երևում»։

Եվ իսկապես, օվկիանոսը բոլորովին ամայի էր։ Հորիզոնում՝ ոչ մի առագաստ։ Կրեպո կղզու լեռները չքացել էին, երևի դեռ գիշերը։ Ծովը, որ կլանում էր արևի բոլոր գույները, բացի կապույտից, անդրադարձնում էր այդ գույնը

բոլոր կողմերում, զարդարում այն գեղածիծաղ ելևէջներով։

Ես դեռ շարունակում էի զմայլվել օվկիանոսային առավոտվա սքանչելի տեսարաններով, երբ նավապետ Նեմոն նույնպես դուրս եկավ տախտակամած։ Նա կարծես թե չնկատեց ինձ և սկսեց զբաղվել աստղաբաշխական դիտողություններով։ Ավարտելով այդ դիտողությունները, նա մոտեցավ ղեկանիվի խցիկին, հենվեց դրան և աչքերը հառեց դեպի օվկիանոսը։

Այդ ժամանակ «Նաուտիլուսի» նավաստիներից քսան հոգի ևս բարձրացան տախտակամածը։ Դրանք բոլորն առողջ և ամրակազմ մարդիկ էին։ Սկսեցին զբաղվել ուրկանով, որ ըստ երևույթին դեռ անցած գիշերն իջեցրած էր ջուրը։ Նավաստիների արտաքինից երևում էր, որ նրանք պատկանում են զանազան ազգություններին, բայց որ բոլորը եվրոպացիներ էին, դրանում ոչ մի կասկած չէր կարող լինել։ Նրանց մեջ աչքովս ընկան մի քանի իռլանդացիներ, ֆրանսիացիներ, սլավոններ, մի հույն, մեկն էլ Կրետե կղզուց։ Նրանք բոլորն էլ մեծ մասամբ լուռ էին, մեկմեկու հետ երբեմն խոսում էին ինչ-որ անհասկանալի լեզվով, որի ծագումն անգամ անհայտ էր ինձ։ Այս պատճառով ես հրաժարվեցի նրանց հարցեր տալուց։

Նավաստիներն ուրկանը դուրս քաշեցին տախտակամած։ Այդ ուրկանը հիշեցնում էր նորմանդական ուրկանները և իրենից ներկայացնում էր մի մեծ պարկ, որի անցքը ջրի մեջ կիսաբաց է մնում շնորհիվ այն ձողի և շղթայի, որն անց է կացվում ստորին օղակի միջով։ Այդ պարկը, որ պողպատե ճոպաններով կապված է լինում նավախելին, սրբում է օվկիանոսի հատակը, հավաքելով այն ամենը, ինչ որ հանդիպում է նավի ճանապարհին։

Այդ օրն ուրկանը դուրս էր հանել հետաքրքիր նմուշներ օվկիանոսի կենդանական աշխարհից, ինչ-որ գորտանման արարածներ, որ «ծովային սատանաներ» են կոչվում իրենց այլանդակության, արտասովոր շատակերության և շարժման տարօրինակ ձևերի համար։ Նրանք մնում են հատակում և տեղից տեղ են ցատկում իրենց լողաթևերի օգնությամբ։ Այնուհետև ուրկանում գտնվեցին թիկնեղջյուրներ, որոնք այդ-

պես են կոչվում այն պատճառով, որ նրանց մարմինը պատած է սև գծերով, իսկ այդ գծերն իրար միանում են համարյա թե ուղիղ անկյուն կազմելով. բծավոր աղավորներ, որոնք հանգիստ վիճակում իրենցից ներկայացնում են ներսընկած փորով երկարաձև ձկներ, իսկ վտանգը մոտենալիս ուռչում են, կաշվի ծալքերը փռում փորերի վրա, գունդ են դառնում և թշնամուց պաշտպանվում են փշապատ փորերով։ Այստեղ էին մի քանի գեղնավուն քարտղիացներ, երկու արծաթավուն գորշ մաղապոշներ, որոնց երկարաձև մարմինը պոչի լողաթևերի փոխարեն վերջանում է բարակ թելերով, թեփուկավոր ուղղաթևեր, որոնց մարմնի ստորին կողմում գտնվում են երկար և ուղիղ լողաթևերը, գորշ-գեղնավուն բրաձկներ իրենց դարչնագույն բծերով, բազմատեսակ ցլիկներ և, վերջապես, մի քանի խոշոր ու գեղեցիկ թյուններներ, որոնք չէին աղատվել ուռկանից, չնայած, որ խիստ արագաշարժ են։

Ուռկանը հանել էր առնվազն հազար ֆունտ ձուկ։ Որսը հաջող էր, բայց ո՛չ արտասովոր։ Հիրավի, չէ՞ որ ուռկանը մի քանի ժամ եղել էր ջրի տակ և քարշ գալով նավի հետևից, հավաքել այն ամենը, ինչ որ պատահում էր ճանապարհին։ Հիմա ես հասկացա, որ «Նաուտիլուսի» համար դատարկ բան է շարունակ թարմ ու համեղ ձուկ ունենալը, քանի որ նավը խիստ արագընթաց է և իր էլեկտրական լուսարձակով կարողանում է դեպի իրեն գրավել ձկներին։

Բոլոր ձկներն անհապաղ տեղափոխվեցին մառանը. մի մասը պետք է գործածվեր հենց թարմ վիճակում, իսկ մյուս մասը՝ պահվեր իբրև պաշար։

Չկան որսն ավարտվեց և «Նաուտիլուսն» արդեն կարողացավ օդի նոր պաշար վերցնել։ Ես կարծում էի, թե նավը հիմա պետք է ջրասույզ լինի, որպեսզի շարունակի իր ճանապարհը, ուստի պատրաստվում էի վերադառնալ իմ սենյակը։ Այդ ժամանակ նավապետ Նեմոն անսպասելիորեն դարձավ դեպի ինձ և ասաց առանց որևէ նախաբանի.

— Նայեցե՛ք օվկիանոսին, պրոֆեսոր։ Մի՞թե ձեզ չի թվում, որ այդ կենդանի մի արարած է, որ երբեմն ցասկոտ է լինում, երբեմն էլ քնքուշ։ Երեկ երեկոյան նա քնեց մեզ

նման, իսկ այսօր արթնացավ լալ տրամադրությամբ, որովհետև գիշերը հանգիստ է անցկացրել։

«Ոչ բարև, ոչ ցտեսություն,— մտածեցի ես,— կողմնակի մարդուն այնպես կթվար, որ այս տարօրինակ մարդը շարունակում է վաղուց ինձ հետ սկսած խոսակցությունը»։

— Նայեցե՛ք,— շարունակեց նավապետ Նեմոն,— ահա նա արթնանում է արևի փայփայանքից, սկսում է ապրել իր ցերեկվա կյանքով։ Որքա՜ն հետաքրքիր է հետևել նրա օրգանիզմի գործունեության արտահայտություններին։ Նա սի՛րտ ունի, զարկերակնե՛ր ունի... Ես միանգամայն համաձայն եմ գիտնական Մորիի հետ, որը պնդում է, թե օվկիանոսում նկատել է երևույթների այնպիսի մի շրջապտույտ, որը ճիշտ և ճիշտ նման է կենդանիների արյան շրջանառության։

Բոլորովին պարզ էր, որ նավապետ Նեմոն ինձնից պատասխան չի սպասում։ Այդ պատճառով ես ավելորդ համարեցի արձագանքել այն անբովանդակ խոսքերով, թե «միանգամայն ճիշտ է», «դուք իրավացի եք», «այո, իհարկե»։ Նավապետն ուղղակի խոսում էր ինքն իր հետ, ֆրազների միջև մեծ դադարներ անում։ Դրանք սոսկ բառերով արտահայտված մտքեր էին, որոնք պատասխանների կարիք չէին զգում։

— Այո՛,— ասում էր նավապետը,— օվկիանոսում տեղի է ունենում երևույթների մշտական շրջապտույտ, որը պայմանավորվում է բարեխառնության փոփոխություններով, աղերի և մանր օրգանիզմների գոյությամբ։ Բարեխառնության փոփոխություններն առաջ են բերում ջրի տարբեր խտություն և դրա հետևանքը լինում են հոսանքներն ու հակահոսանքները։ Ջրի գոլորշիացումը, որ բևեռային շրջաններում չնչին է, իսկ հասարակածային գոտում շափազանց արագ, առաջ է բերում արևադարձային ու բևեռային ջրերի մշտական փոխանակություն։ Բացի դրանից, ես պարզել եմ, որ ջուրը շարունակ շարժվում է իր մակերևույթից մինչև հատակը և հատակից մինչև մակերևույթը, որ ուրիշ բան չէ, բայց եթե օվկիանոսի իսկական շնչառություն։ Ես տեսել եմ, թե ինչպես արևի ճառագայթներից տաքացած մի կաթիլը ծովի մակերևույթից իջել է նրա խորքերը, երկու աստիճան բարեխառնության տակ խտացել է առավելագույն շափով,

սառչել է ու թեթևացել ու էլի՛ բարձրացել ջրի երեսը։ Բևեռի մոտ դուք կտեսնեք այդ երևույթի հետևանքը և այն ժամանակ կհասկանաք, թե ինչու ջուրը միայն երեսից է սառչում։

Մինչև նավապետ Նեմոն կվերջացներ իր խոսքը, ես մտածում էի՝ «Բևեռի մո՞տ։ Մի՞թե այս մարդն ուզում է մեզ այնտեղ տանել»։

Նավապետ Նեմոն լռեց։ Նրա հայացքը մեխվել էր օվկիանոսի վրա, որը նա ուսումնասիրել էր այնպե՞ս մանրակրկիտ, սիրով և համառությամբ։

Մի փոքր լռելուց հետո նա շարունակեց.

— Ծովը մեծ քանակությամբ աղ է պարունակում։ Եթե հավաքենք ծովի ջրում լուծված ամբողջ աղը, դուրս կգա չորս ու կես միլիոն խորանարդ մղոն մի զանգված։ Եթե դուք, պրոֆեսոր, ցանկանայիք այդ աղը հավասար շերտով փռել ամբողջ երկրագնդի վրա, ապա այդ շերտի հաստությունը կլիներ ավելի քան տասը մետր։ Սակայն չկարծեք, թե ջրի մեջ աղի գոյությունը պայմանավորված է բնության ինչ-որ քմահաճույքով։ Ո՛չ։ Աղը պակասեցնում է ծովային ջրի գոլորշիացումը, չի թողնում, որ քամիները շափից դուրս շատ գոլորշի տանեն և դրանով կանխում է մեր մոլորակի չափավոր գոտիների հեղեղումը, որ կարող է առաջանալ անձրևներից։ Ստեղծել երկրագնդի տարերքի աշխատանքի հավասարակշռություն, դա այնպիսի մի դեր է, որ և հսկայական է և պատվավոր։

Նավապետ Նեմոն էլի լռեց, մի քանի քայլ արավ տախտակամածում և շարունակեց.

— Ինչ վերաբերում է ինֆուզորիաներին, այդ մանրագույն կենդանի օրգանիզմներին, որոնք միլիոնավոր քանակությամբ տեղավորվում են մեկ կաթիլ ջրում և որոնց ութսուն հազար հատը կշռում է մեկ միլիգրամ, նրանք ևս պակաս դեր չեն խաղում։ Նրանք կլանում են ծովային աղը, ծծում են ջրում լուծված բոլոր պինդ նյութերը և կազմելով կորալլների ու պոլիպների գաղութներ, ամբողջ մայր ցամաքներ են առաջացնում։ Ջրի կաթիլը, կորցնելով իր հանքային մասնիկը, թեթևանում է, բարձրանում ծովի երեսը, կլանում աղը, որ մնացել է գոլորշիացած մասնիկներից,

էլի՛ ծանրանում և իջնում է ջրի խորքը, որպեսզի infուզորիաների համար կերակրի նոր պաշար բերի։ Դրանից է, որ ծովում շարունակ հոսանք է լինում դեպի վերև ու ներքև, տեղի է ունենում մշտական շարժում, երբեք չի մարում կյանքը։ Այդ կյանքն ավելի լարված է, քան մայր ցամաքների կյանքը, ավելի արդասավոր է, անվերջ, չդադարող ու ծաղկող է օվկիանոսի բոլոր մասերում, օվկիանոսի, որը մարդկանց մեծամասնության համար մեռած է, իսկ անթիվ ու անհամար կենդանիների և ինձ համար՝ կենսաթրթիռ։

Այդ ասելիս նավապետը կարծես ամբողջովին կերպարանափոխվել էր։ Նրա խոսքերը հսկայական տպավորություն թողին ինձ վրա։

— Իսկական կյանքը,— ավելացրեց նա,— այստեղ է և միայն այստեղ։ Ես հավատում եմ, որ կարելի է ստեղծել ստորջրյա քաղաքներ, ստորջրյա տներ, որոնք «Նաուտիլուսի» նման ամեն առավոտ կբարձրանան օվկիանոսի մակերեսը, որպեսզի թարմ օդ շնչեն, քաղաքներ, որոնք կլինեն ազատ, ոչ ոքից կախում չեն ունենա... Եվ ո՞վ գիտե, եթե մի որևէ բռնակալ հարձակվի...

Նավապետ Նեմոն չվերջացրեց խոսքը և ձեռքով սպառնական շարժում արավ։

Հետո դառնալով դեպի ինձ և կարծես թե ցանկանալով մոռանալ տխուր մտքերը, ասաց.

— Պարոն պրոֆեսոր, գիտե՞ք ինչքան կլինի օվկիանոսի խորությունը։

— Ես գիտեմ միայն այն թվերը, նավապետ, որոնք գայտնի են մինչև այժմ։

— Կարո՞ղ եք դրանք ասել ինձ, որպեսզի ես հարկավոր դեպքում ստուգեմ։

— Խնդրեմ, ես ձեզ կասեմ այն ամենն, ինչ որ հիշում եմ։ Եթե չեմ սխալվում, հետազոտություններից պարզվել է, որ Ատլանտյան օվկիանոսի հյուսիսային մասում միջին խորությունը հասնում է ութ հազար երկու հարյուր մետրի, իսկ Միջերկրական ծովում՝ երկու հազար հինգ հարյուր մետրի։ Խորության ամենանշանավոր չափումները եղել են Ատլանտյան օվկիանոսի հարավային մասում, մասավորապես լայ-

նության երեսունհինգ տարիների տակ։ Ստացվել է հետևյալ արդյունքը։ Տասներկու հազար մետր, տասնչորս հազար իններորդական մետր և տասնհինգ հազար հարյուր քառասունինը մետր։ Գիտնականները գտնում են, որ եթե ծովի հատակի մակարդակը չափվեր, ամբողջ երկրագնդի վրա նրա միջին խորությունը կլիներ մոտավորապես յոթ կիլոմետր։

— Հրաշալի է, պրոֆեսոր,— ասաց նավապետ Նեմոն,— ես հույս ունեմ, որ կկարողանամ ավելի հետաքրքիր տվյալներ հաղորդել ձեզ։ Եթե ձեզ հետաքրքրում է խաղաղ օվկիանոսի այս մասի խորությունը, ապա ես կարող եմ հաղորդել ձեզ, որ այդ խորությունը չորս հազար մետրից ավելի չէ։

Այս ասելով, նավապետ Նեմոն քայլեց դեպի դռնակը և երկաթե սանդուխքով ներքև իջավ։ Ես հետևեցի նրան ու մտա սրահ։ Գրեթե նույն րոպեին պտուտակը սկսեց պտտվել և արագությունը չափող գործիքը ցույց տվեց մեկ ժամում քսան մղոն։

Հետևյալ օրերի կամ նույնիսկ շաբաթների ընթացքում նավապետ Նեմոն հազվագյուտ դեպքերում էր ինձ պատվում իր այցելությամբ։ Ես ուշ-ուշ էի հանդիպում նրան։ Նավապետի օգնականն ամեն առավոտ ճշտապահությամբ դիտողություններ էր անում և ստացվող արդյունքները նշանակում քարտեզի վրա, այնպես որ, ես միշտ գիտեի, թե ուր է գնում «Նաուտիլուսը»։

Կոնսելն ու Նեդ Լենդն ամեն օր մի քանի ժամ անց էին կացնում ինձ հետ։ Կոնսելն իր բարեկամին պատմեց մեր ստորջրյա հրաշալի զբոսանքի մասին և հիմա եռաժանու վարպետն անկեղծորեն ցավում էր, որ չի մասնակցել։

...Բայց ես նրան մխիթարում էի այն հույսով, որ հավանորեն դեռ առիթ կունենանք այցելելու օվկիանոսային անտառները։ Համարյա ամեն օր մի քանի ժամով բացվում էին սրահի պատուհանների երկաթյա փեղկերը և մենք դիտում ու սքանչանում էինք ստորջրյա աշխարհի հրաշալիքներով։

«Նաուտիլուսն» այժմ գնում էր դեպի հարավ-արևելք, պահպանելով հարյուրից մինչև հարյուր հիսուն մետր խորու-

թյուն։ Մի անգամ, սակայն, նավապետի ինչ-որ քմահաճույքի հետևանքով նավը իջավ մինչև երկու հազար մետր։ Հարյուր աստիճանանոց ջերմաչափը ցույց էր տալիս շորս և մի քառորդ աստիճան զրոյից վերև, մի բարեխառնություն, որ կարծեմ բոլոր լայնությունների տակ հատուկ է այդ խորությանը։

Նոյեմբերի քսանվեցին, առավոտյան ժամը երեքին «Նաուտիլուսը» երկարության 172° տակ անցավ խեցգետնի արևադարձը։ 27-ին երևացին Սանդվիչյան կղզիները, ուր 1779 թվականի փետրվարի 14-ին մեռավ հռչակավոր նավապետ Կուկը։ Ճանապարհ ընկնելուց հետո մենք արդեն անցել էինք շորս հազար ութ հարյուր վաթսուն լյո տարածություն։

Նոյեմբերի 29-ի առավոտյան, դուրս գալով տախտակամածը, ես երկու մղոն հեռավորության վրա, քամու ուղղությամբ տեսա Հավայը՝ Հավայան արշիպելագը կազմող յոթ կղզիներից ամենամեծը։ Ես պարզ տեսնում էի մշակված դաշտերը, նախալեռներն ու լեռնաշղթաները, որոնք ձգված էին ծովափին զուգընթաց, հրաբուխները, որանց մեջ աչքի ընկնող Մունա-Ռեա լեռնագագաթը, որ հինգ հազար մետր բարձր է ծովի մակերևույթից։

«Նաուտիլուսը» շարունակում էր ընթանալ դեպի հարավարևելք։ Դեկտեմբերի 1-ին նա 142° երկարության տակ անցավ հասարակածը, իսկ դեկտեմբերի 4-ին, արագ անցնելով ճանապարհը, որ աչքի չէր ընկնում ոչնչով, մենք մոտեցանք Մարքիզյան կղզիների խմբին։

Քամու ուղղությամբ երեք մղոն տարածության վրա ես տեսա Մարտին լեռնագագաթը. Նուկա-Խիվա կղզում, որ ամենամեծն է Մարքիզյան կղզիներից և գտնվում է 8°57′ հարավային լայնության և 139°32′ արևմտյան երկարության տակ։ Սակայն բացի խիտ անտառներից, որ ծածկել էին սարը, ուրիշ բան տեսնել չհաջողվեց, որովհետև նավապետ Նեմոն չէր սիրում ցամաքին մոտենալ։

Այստեղ ուռկանը դուրս բերեց մի քանի ոսկեհուր-կապտավուն թյուննիկ, որի միսը չափազանց հաճելի է, մի քանի ծովաձի՝ իրենց կեռանման ահագին ծնոտներով, կապտավուն-կանաչ սարգաններ՝ արծաթե երանգավորումով։ Այս

բոլոր ձկներն արժանի էին սեղանի վրա պատվավոր տեղ բռնելու։

Հրաժեշտ տալով այդ գեղեցիկ կղզիներին, որոնց վրա ծածանվում է Ֆրանսիայի դրոշակը, «Նաուտիլուսը» դեկտեմբերի 4-ից մինչև 11-ը անցավ մոտ երկու հազար մղոն։ Ճանապարհին մենք տեսանք կալմարների հսկայական մի վտառ, շատ հետաքրքիր կակղամորթներ, որոնք ցեղակից են թանաքաձկան և պատկանում են գլխոտանիների դասին, երկքիմուխների ընտանիքին, որին պատկանում են նաև թանաքաձկները ու արգոնավտները։ Հայտնի չէ ինչու այս կակղամորթներն արժանանում էին հնադարյան բնագետների ուշադրության, և պատվավոր տեղ բռնելով հին հռետորների մետաֆորաններում, համարվում էին հարուստ քաղաքացիների սիրված ուտելիք։ Գոնե այդպես է պնդում Աթենոսը՝ հին հունական մի բժիշկ, որ եղել է հռչակավոր Հալենի նախորդը։

Դեկտեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը «Նաուտիլուսը» հանդիպեց կալմարների մի ամբողջ բանակի։ Բազմամիլիոն այդպիսի կակղամորթներ չափավոր գոտիներից տեղափոխվել են ավելի տաք գոտիները, անցնելով նույն ճանապարհը, ինչ որ տատեխն ու սարդինը։

Բյուրեղապակյա լուսամուտից մենք դիտում էինք այդ արարածներին, ապշելով նրանց հետագնաց, արագ շարժումից, նրանք լողում էին հետույքները դեպի առաջ, անդադար թափահարում տասը ոտները, որ բնությունը տեղավորել էր նրանց գլուխների վրա, ուտում էին մանր ձկներին, իրենք էլ մեծ ձկների կերակուր էին դառնում։

Չնայելով իր ընթացքի արագության, «Նաուտիլուսը» մի քանի ժամ շրջապատված էր կալմարներով, որոնք անհամար քանակությամբ ընկնում էին ուռկանի մեջ։ Այստեղ ես հայտնաբերեցի խաղաղ օվկիանոսում դ'Օրբինի գտած կալմարների բոլոր ինը տեսակները։

Ծովը չէր թողնում, որ մենք ձանձրանայինք մեր ճանապարհին։ Մեր առջև ցուցադրում էր այս կամ այն տեսարանը, այս կամ այն «ներկայացումը», բազմազանություն մտցնում դրանց մեջ, ամեն ժամ փոխելով դեկորացիաները

ու պատկերները։ Ծովը ոչ միայն զբաղեցնում էր մեզ, այլև թույլ էր տալիս, որ մենք իմանայինք իր ամենանվիրական գաղտնիքները։

Դեկտեմբերի 11-ին, ցերեկով ես նստած էի սրահում կարդում էի նավապետ Նեմոյի պրոֆեսորից վերցրած մի գիրք։ Նեդ Լենդը և Կոնսելը բյուրեղապակյա լուսամուտից դիտում էին պայծառ լուսավորված ջուրը։ «Նաուտիլուսը» կանգնած էր անշարժ։ Լցնելով պահամանները, նա գտնվում էր հազար մետր խորության տակ, օվկիանոսի սակավաբնակ շերտերում, որտեղ միայն հազվագյուտ դեպքերում խոշորագույն ձկներ են պատահում։

Այդ ժամանակ ես կարդում էի Ժան Մասեի «Ստամոքսի սպասավորները» նշանավոր գիրքը, հիանալով հեղինակի աննախընթաց ոգևորությամբ։ Հանկարծ Կոնսելը ձայն տվեց ինձ.

— Արդյոք տերը չէ՞ր ցանկանա մի բոպեով մոտենալ լուսամուտին,— ասաց նա ինչ-որ տարօրինակ ձայնով։

— Ի՞նչ է պատահել, Կոնսե՛լ։

— Թող պարոնն ինքը նայի։

Ես մի կողմ դրի գիրքը և մոտենալով լուսամուտին, սկսեցի դիտել։

Հեղուկ տարածության մեջ, որ պայծառ լուսավորված էր էլեկտրական լուսարձակով, ինչ-որ մի վիթխարի, սև զանգված կախվել էր անշարժ։ Ես ուշադրությամբ դիտում էի այդ զանգվածը։ Հանկարծ կայծակի արագությամբ գլխի ընկա, թե ինչումն է բանը։

— Դա նավ է,— բացականչեցի։

— Այո,— պատասխանեց կանադացին,— դա խորտակված նավ է...

Նեդ Լենդը չէր սխալվում։ Մեր առջև գտնվում էր խորտակված մի նավ, որի կտրատված կայմապարանները դեռ կախված էին շղթաներից։

Նավի իրանը, դեռ գտնվում էր լավ վիճակում և թվում էր, թե խորտակումը տեղի է ունեցել ընդամենը մի քանի ժամ առաջ։ Երեք կոճղակտորները, որոնք տախտակամածից բարձր էին ընդամենը երկու ոտնաչափով, ցույց էին տալիս,

որ նավը կյանքի ու մահվան պայքարի ժամանակ զոհաբերել է իր կայմերը։ Սակայն, ըստ երևույթին, այդ չի օգնել...

Ինչպիսի՛ տխրություն էր պատճառում այդ խորտակված նավի տեսքը...

Է՛լ ավելի տխուր տեսարան էր ներկայացնում նավի տախտակամածը, ուր ընկած էին մի քանի դիակ։ Սրանք պարաններով կապված էին բաղրիքին, ըստ երևույթին այն նպատակով, որ ալիքները չտանեն իրենց։ Նա հաշվեցի վեց դիակ։ Զորքը տղամարդ էին։ Սրանցից մեկը կանգնած էր և ձեռքից բաց չէր թողել ղեկը։ Մի կին կիսով չափ դուրս էր եկել գոնակից և երեխային պահել գրկում։ Կինը ջահել էր։ Լուսարձակի պայծառ լույսի տակ ես նույնիսկ տեսա նրա դիմագծերը, որոնք դեռ չէին այլանդակվել։ Վերջին ջանքը թափելով, կինը վեր էր բարձրացրել երեխային։ Խեղճ փոքրիկն այնպես էլ մեռել էր, թաթիկով մոր պարանոցը գրկած...

Երեք նավաստիների դիակները մնացել էին սարսափելի վիճակում, ըստ երևույթին մահը վրա էր հասել այն րոպեին, երբ նրանք ջղաձգաբար փորձ էին արել քանդել պարանը, որով կապված էին եղել խորտակված նավի տախտակամածին։ Զորրորդը՝ ղեկավարը, կանգնել էր ուղիղ, հանգիստ ու լուրջ դեմքով։ Նրա սպիտակող մազերը կպել էին դեմքին։ Ձեռքերը մնացել էին ղեկի վրա։

Թվում էր, որ ծերունի ղեկավարը շարունակում է վարել խորտակված եռակայմ նավը օվկիանոսի խորքերում...

— Ինչպիսի՞ զարհուրելի տեսարան։ Մենք քարացել էինք, ոչ մի բառ չէինք արտասանում։ Մեր սրտերն ուժեղ խփում էին։ Չէինք կարողանում աչքաթող անել խորտակված նավը։

Ես տեսա, թե ինչպես մոտենում էին վիթխարի շնաձկները, որոնց գրավում էր մարդկային մսի հոտը...

«Նաուտիլուսը» պտտվեց ջրասույզ նավի շուրջը, և ես կարողացա կարդալ հետևյալ մակագրությունը.

„ՖԼՈՐԻԴԱ“
ՋՈՒՆԴԵՐԼԱՆԴ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

ՎԱՆԻԿՈՐՈ

Այս ողբերգական հանդիպումն առաջինն էր, որ «Նաուտիլուսն» ունեցավ իր ճանապարհին, ծովային վթարներից մեկի հետ։ Այն ժամանակից սկսած, երբ մենք անցնում էինք ավելի բանուկ ծովերով, հաճախ հանդիպում էինք խորտակված նավերի, որոնք կախված էին ջրերում ու վտում էին։ Ավելի խորը շերտերում, հատակում, մենք տեսնում էինք թընդանոթներ, արկեր, խարիսխներ, շղթաներ և հազարավոր այլ երկաթյա առարկաներ, որոնք փչացել էին ժանգից։

Դեկտեմբերի տասնմեկին մենք մոտեցանք Պաումոտու արշիպելագին, որին մի ժամանակ Բուգենվիլը տվել է «Կղզիների վտանգավոր խումբ» անունը։ Այս արշիպելագի կղզիները ցրված են ավելի քան երկու հազար կիլոմետր տարածության վրա, արևելքից ու հարավ-արևելքից դեպի արևմուտք և հյուսիս-արևմուտք, 13°30′—20°50′ հարավային լայնության և 125°30′— 151°30′ արևմտյան երկարության միջև։ Արշիպելագի արևելյան ծայրում գտնվում է Դյուսի կղզին, արևմտյան ծայրում՝ Լազարևի կղզին։

Այդ արշիպելագը բռնում է երեք հարյուր յոթանասուն քառակուսի լյո և բաղկացած է փոքրիկ կղզիների վաթսուն խմբից, որոնց թվին է պատկանում նաև Ցրանսիայի տիրապետության տակ գտնվող Գամբե խումբը։ Այդ կղզիները կորալային են։ Պոլիպների դանդաղ, բայց անդադար աշխատանքի շնորհիվ նրանք բարձրանում են ջրից և վաղ թե ուշ կմիանան։ Այնուհետև այդ նոր կղզին կմիանա հարևան արշիպելագներին և մի կողմից Նոր Զելանդիայի և Նոր Կալեդոնիայի ու մյուս կողմից Մարքիզյան կղզիների միջև կառաջանա մի նոր մայր ցամաք։

Այն օրը, երբ ես նավապետ Նեմոյի մոտ մեկնաբանում էի այս թեորիան, նա ասաց պատասխանեց ինձ.

— Երկրին հարկավոր են ոչ թե նոր մայր ցամաքներ, այլ նոր մարդիկ։

«Նաուտիլուսը» պատահմամբ անցնում էր Կլերմոն-Թոն-

ներ կղզու մոտից, որ ամենահետաքրքիր կղզիներից մեկն էր ամբողջ արշիպելագում և հայտնագործվել էր 1822 թվականին, «Միներվայի» նավապետ Բելլեի կողմից։ Այդ պատահականությունն ինձ հնարավորություն տվեց ուսումնասիրելու մադրեպորների զաղութները։ Խաղաղ օվկիանոսի այդ մասի կղզիները հենց այդ մադրեպորներից են ծագել։

Մադրեպորները, որոնց չպետք է շփոթել կորալների հետ, իրենցից ներկայացնում են ինչ-որ հյուսվածք, որ ծածկված է կրի թաղանթով։ Նրանց թաղանթի տարբեր կառուցվածքը Միլն-Էդվարդսին, իմ հռչակավոր ուսուցչին, հիմք է տվել բաժանելու նրանց հինգ խմբերի։ Այդ մանրագույն կենդանի էակները, որոնք միլիարդների են հասնում, կազմում են մի զաղութ։ Նրանց թողած կրից ստեղծվում են ժայռեր, կղզյակներ և կղզիներ։ Այստեղ նրանք կազմում են կրե օղակ, որը շրջապատում է այս կամ այն լճակը, իսկ վերջինս ստորջրյա ճեղքերի միջոցով միանում է ծովին։ Մի այլ տեղ նրանք ժայռերից պատնեշներ են կառուցում, որոնք նման են Նոր Կալեդոնիայի ափերում գտնվող ժայռերին, կամ առաջացնում են ամբողջ կղզիներ, ինչպես, օրինակ, Պաումոտու արշիպելագը։ Ուրիշ տեղերում, օրինակ, Մավրիկիա կղզիներում նրանք առաջացնում են ատամնաձև ժայռեր, բարձրաբերձ, սեպաձև պատեր, որոնց ստորոտում օվկիանոսը շատ խորն է լինում։

Մենք ընթանում էինք Կլերմոն-Թոններ կղզուց մի քանի կաբելտով հեռու, և ես շարունակ զմայլվում էի այն վիթխարի աշխատանքով, որ կատարել են փոքրիկ շինարարները։

Կոնսելն ինձ հարց տվեց, թե ինչքան ժամանակ է պահանջում այդ պատի կառուցումը, և շատ զարմացավ, երբ, ես նրան հաղորդեցի, թե գիտնականների հաշվով հարյուր տարվա ընթացքում պատը բարձրանում է մեկ ութերորդ մատնաչափ, ո՛չ ավելի։

— Հետևապես երեք հարյուր մետր բարձրությամբ պատ կառուցելու համար...

— Հարկավոր է եղել հարյուր իննսունմեկու հազար տարի, սիրելի Կոնսե՛լ։ Դուրս է գալիս, որ աստվածաշունչը չափից դուրս երիտասարդացրել է երկիրը։ Աստվածաշնչի

ովյալներն է՛լ ավելի անհավանական են դառնում, երբ հիշում ենք, թե ինչպիսի երկար ժամանակ է պահանջվել, որպեսզի անդրջրհեղեղյան անտառները քարածուխ դառնան։

Երբ «Նաուտիլուսը» դուրս եկավ օվկիանոսի մակերեսը, ես կարողացա մանրամասն դիտել այդ Կլերմոն-Թոններ կղզին, որ հազիվ երևում էր ջրի տարածության վրա և ծածկված էր խիտ անտառով։ Հավանորեն նրա կրային հողը բեղմնավորվել էր փոթորիկների ու մրրիկների միջոցով։ Մի գեղեցիկ օր որևէ հատիկ, որին մրրիկը բերել էր հարևան ցամաքից, ընկել էր կղզու հողը, պարարտացված է եղել ծովի ձկների ու ջրիմուռների նեխած մնացորդներով։ Այնուհետև փոթորկահույզ ալիքները նրա վրա են նետել կոկոսյան ընկույզը, որ աճել է հազար մղոն հեռու գտնվող արմավենու վրա։ Հատիկը ծիլ է տվել, ծառեր են բուսել։ Այդ ծառերը դանդաղեցրել են գոլորշիացումները։ Առաջացել են առվակներ։ Բուսականությունն սկսել է փարթամանալ։ Կղզու առաջին բնակիչները եղել են ինչ-որ միջատներ, ճիճուներ, որոնք այստեղ են ընկել մոտակա ցամաքից փոթորկի բերած ծառերի հետ։ Այնուհետև կրիաներն առափնյա ավազում թաղել են իրենց ձվերը։ Թռչունները բուն են հյուսել մատաղ ծառերի վրա։ Կենդանական աշխարհը հետզհետե զարգացել է այստեղ։ Վերջապես, թարմ կանաչով և կենդանիների առատությամբ զարդարված, մարդը բնակություն է հաստատել այստեղ։

Այսպես է առաջացել կյանքն այն կղզիներում, որոնք ստեղծվել են մանրագույն արարածների աշխատանքով։

Երեկոյան Կլերմոն-Թոնները չքացավ և «Նաուտիլուսը» փոխեց իր ընթացքի ուղղությունը։ Հասնելով այծեղջյուրի արևադարձին, 135° երկարության, նավն ուղղվեց դեպի արևմուտք-հյուսիս-արևմուտք, մնալով արևադարձային գոտու սահմաններում։ Թեպետ արևի ճառագայթներն անտանելի տաքություն ունեին, այնուամենայնիվ մենք բոլորովին չէինք տառապում շոգից։ Երեսուն—քառասուն մետր խորության ջրի բարեխառնությունն ընդամենը տասը—տասներկու աստիճանի էր հասնում։

Դեկտեմբերի տասնհինգին մենք անցանք Թաիթի կոչված գեղեցիկ կղզու, խաղաղ օվկիանոսի այդ մարգարիտի արևմտյան կողմից։ Առավոտյան ես հնարում տեսա այդ կղզու բարձր լեռնագագաթները։

Այստեղ մենք բռնեցինք մի քանի հիանալի թյուննաձկներ և ծովային օձի մի տեսակը՝ երկգույն պելամիդան։

«Նաուտիլուսն» անցել էր ութ հազար հարյուր մղոն։ Այն օրը, երբ մենք անցանք Թոնգա-Թաբու արշիպելագը, ուր զոհվել էր «Արգոյի» և «Դյուկ օֆ Պորտլանդի» անձնակազմը, «Նաուտիլուսի» արագությունը չափող գործիքը ցույց տվեց, որ մենք ինը հազար յոթ հարյուր քսաներորդ մղոնն ենք անցնում։

Այնուհետև մենք անցանք Ֆիջի կղզին, որտեղ վայրենիներն սպանել էին «Յունիոն» նավի նավաղներին և նավապետ Բյուրոյին «Սիրալիր Ժոզեֆինայի» հրամանատարին։ Այս արշիպելագի տարածությունը հյուսիսից հարավ չորս հարյուր կիլոմետր է և արևելքից արևմուտք՝ երեք հարյուր վաթսուն կիլոմետր. 6° և 2° հարավային լայնության և 174 աստիճան արևմտյան երկարության միջև։

Արշիպելագը բաղկացած է մի շարք մեծ ու փոքր կղզիներից ու ժայռերից, որոնցից ամենամեծերն են Վիտի-Լևուն, Վանուա-Լևուն և Կանդյուբոնը։

Այս կղզիները հայտնագործել է Թասմանը 1643 թվականին, երբ Տորիչելլին հնարեց ծանրաչափը, իսկ Լյուդովիկոս տասնչորսերորդը Ֆրանսիայում դահ նստեց։ 1774 թվականին այստեղ այցելեց Կուկը, 1793 թվականին՝ դ'Անտրկաստոն և վերջապես, 1827 թվականին՝ Դյումոն Դյուրվիլը պարզեց այստեղի աշխարհագրական դիրքը։

«Նաուտիլուսը» մոտեցավ Վայլեա ծովախորշին, որ հայտնի է նավապետ Դիլլոնի սարսափելի արկածներից։ Նավապետ Դիլլոնն առաջինն էր, որ լուսաբանեց Լապերուզի նավերի խորտակման գաղտնիքը։

Մի քանի անգամ ուզեցինք նետեցինք այդ ծովախորշը և բազմաթիվ ոստրեներ հանեցինք։ Սգահությամբ կլանում էինք դրանց, տեղն ու տեղը բաց անելով սեղանի վրա, Սենեկայի ցուցումների համաձայն։ Վայլեա ծովախորշում ոստ-

բենների ծանծաղուտը բավական մեծ տարածություն է բռնում։

Յուրաքանչյուր ոստրե իր մեջ ունենում է մինչև երկու միլիոն ձու։ Իհարկե ոստրեներն անհամար քանակությամբ կբազմանային ծովախորշում, եթե չլինեին նրանց հազարավոր թշնամիները։

Եթե նեդ Լենդը հետագայում չզղջաց իր շատակերության համար, ապա դա այն հանգամանքի շնորհիվ, որ ոստրեները միշտ լավ են մարսվում։ Հիրավի, այդ անգլուխ կակղամորթների տանվեց դյուժինի մեջ պարունակվում են երեք հարյուր տասնհինգ գրամ ազոտային նյութեր, որոնք և կազմում են շափահաս մարդու օրական սննդի բաժինը։

Դեկտեմբերի քսանհինգին «Նաուտիլուսը» լողում էր Նոր-Հեբրիդյան արշիպելագի կղզիների միջև։ 1606 թվականին այս արշիպելագը հայտնագործել է Կվիրոսը, 1768 թվականին այն ուսումնասիրել է Բուգենվիլը, իսկ 1773 թվականին Կուկն այդ արշիպելագին տվել է այժմյան անունը։ Արշիպելագը բաղկացած է ինը մեծ և մի շարք փոքր կղզիներից և չորս հարյուր ութսուն կիլոմետր տարածությամբ ձգվում է հյուսիս-հյուսիս-արևմուտքից դեպի հարավ և հարավ-արևելք, 15°—2° հարավային լայնության և 164°—168° երկարության միջև։ Մենք անցնելիս բավական մոտեցանք Վատե կղզուն։ Կեսօրվա դիտողությունների ժամանակ ես դուրս եկա տախտակամածը և տեսա այդ կղզին։ Դա ամբողջովին ծածկված էր խիտ անտառներով։ Կղզու վրա երևում էր շատ բարձր մի լեռնագագաթ։

Արդեն ութ օր կլիներ, որ ես չէի տեսել Նավապետ Նեմոյին։ Վերջապես, դեկտեմբերի 27-ի առավոտյան նա մատակարար և գլուխ տվեց մի այնպիսի ձևով, որ կարծես ինձնից բաժանվել էր ընդամենը հինգ րոպե առաջ։ Այդ ժամանակ ես քարտեզի վրա փնտրում էի «Նաուտիլուսի» ճանապարհը։ Նավապետը մոտեցավ սեղանին, մատը դրեց քարտեզին և միայն մի բառ արտասանեց.

— Վանիկորո։

Այդ բառը կարծես կրակոց լիներ։ Այդպես էր կոչվում

այն փոքրիկ կղզին, որի մոտ խորտակվել էին Լապերուզի նավերը։

— Ես վեր թռա տեղից։

— «Նաուտիլուսը» դեպի Վանիկորո՞ է գնում։

— Այո, պրոֆեսոր,— պատասխանեց նավապետը։

— Եվ ես կարող եմ այցելել այդ հռչակավոր կղզին, ուր ջարդվել են «Բուսոլն» ու «Աստրոլաբիա՞ն»։

— Եթե կցանկանաք։

— Իսկ ե՞րբ կհասնենք Վանիկորո։

— Մենք արդեն հասել ենք, պրոֆեսոր։

Նավապետ Նեմոյի ուղեկցությամբ ես բարձրացա տախտակամածը և սկսեցի ագահությամբ դիտել հորիզոնը։ Հյուսիս-արևելքում երևում էին երկու կղզի, որոնք անշուշտ հրաբխային ծագում ունեին և շրջապատված էին մոտավորապես քառասուն մղոն երկարությամբ կորալային պատնեշով։ Մենք գտնվում էինք Վանիկորո կղզու առջև, Վանու կոչված նավահանգստի մոտ, որ գտնվում է 16°4′ հարավային լայնության և 164° 32′ արևելյան երկարության տակ։ Կղզին ծածկված է անտառով օվկիանոսի ափից մինչև Կապոգո լեռան գագաթը, որ ինը հարյուր քսան մետր բարձրություն ունի։

Փոքրիկ նեղուցով «Նաուտիլուսն» անցավ կորալային պատնեշը, մակընթացության գիծը և մտավ նավահանգիստը, որի խորությունը հիսուն—վաթսուն մետրի է հասնում։ Բարձր արմավենիների հովանու տակ ես տեսա մի քանի վայրենիների, որոնք մեծագույն զարմանքով հետևում էին մեր մոտենալուն։ Հավանական է, որ նրանք «Նաուտիլուսի» սև, իլիկանման իրանն ընդունում էին վիթխարի կետ ձկան տեղ և վախենալով հետևում էին նրա շարժումներին։

Այդ րոպեին նավապետ Նեմոն ինձ հարցրեց, թե ի՞նչ գիտեմ Լապերուզի խորտակման մասին։

— Այն, ինչ հայտնի է ամբողջ աշխարհին, նավապետ,— պատասխանեցի ես։

— Հրաշալի։ Բայց արդյոք դուք չե՞ք կարող հաղորդել ինձ այն, ինչ որ հայտնի է ամբողջ աշխարհին,— ո՛չ առանց հեգնանքի հարցրեց նավապետ Նեմոն։

— Մե՛ծ հաճույքով,— պատասխանեցի ես։

Ապա պատմեցի Դյումոն Դյուրվիլի հաղորդագրությունների բովանդակությունը։

Ահա այդ փաստերի կարճ շարադրությունը։

1785 թվականին Լյուդովիկոս XVI-ը Լապերուզին ու նրա օգնական նավապետ դե Լանգլին երկու մարտանավով «Բուսոլով» և «Սատրոլաբիայով», ուղարկել էր շուրջերկրյա ճանապարհորդության։

1791 թվականին ֆրանսիական կառավարությունը, անհանգստանալով Լապերուզի նավերի երկարատև բացակայությունից, կազմակերպեց փրկության արշավախումբ, բաղկացած «Հետախուզություն» և «Հույս» մարտանավերից, որոնք սեպտեմբերի 28-ին ճանապարհվեցին Բրունի դ'Անտրկաստոյի հրամանատարությամբ։ Երկու ամիս հետո կառավարությունը ոմն Բոուենից՝ «Էլբերմել» նավի հրամանատարից իմացավ, որ վերջինս Հարավային Գեորգիայի ափերի մոտ խորտակված նավերի բեկորներ է նկատել։ Սակայն դ'Անտրկաստոն, չիմանալով այս լուրը, որ ի դեպ ասած, շատ անորոշ էր, շարունակում էր իր ճանապարհը դեպի Ծովակալության կղզիները, որոնց մոտ, ինչպես ասված էր նավապետ Հունտերի զեկուցագրում, խորտակվել էին Լապերուզի մարտանավերը։

Դ'Անտրկաստոյի որոնումներն ապարդյուն անցան։ «Հետախուզությունն» ու «Հույսն» առանց կանգ առնելու անցան Վանիկորոյից։ Արշավախումբը դժբախտության հանդիպեց, զոհ գնացին՝ ինքը, դ'Անտրկաստոն, նրա երկու օգնականները և բազմաթիվ նավաստիներ։

Լապերուզի նավերի խորտակման անվիճելի հետքերն առաջին անգամ գտավ ծովային հին գայլ, նավապետ Դիլոնը։ 1824 թվականի մայիսի 15-ին նրա «Սուրբ Պատրիկ» նավը կանգ առավ Տիկոպիա կղզու մոտ, որ պատկանում է Նոր-Հեբրիդյան խմբին։ Այնտեղ մի բնիկ նրան ծախեց ինչոր սրի արծաթե մի կոթ, որի վրա դեռ մնացել էին փորագրված մակագրության հետքերը։ Նույն բնիկը Դիլոնին հաղորդեց, թե վեց տարի առաջ Վանիկորոյում տեսել է երկու եվրոպացու։ Սրանք եղել են այն նավերի նավաստիները,

որոնք շատ տարիներ առաջ այդ կղզու մոտ ընդհարվել են խութերին ու ջարդվել։

Դիլոնը գլխի ընկավ, որ խոսքը վերաբերում է Լապերուզի նավերին, որոնց անհետանալը հուզել էր ամբողջ աշխարհը։ Դիլոնը որոշեց մեկնել Վանիկորո, որտեղ, ընիկի ասելով, պահպանվել էին խորտակման բազմաթիվ հետքերը։ Սակայն հողմերն ու ծովային հոսանքները թույլ չտվին, որ նա իրագործի իր ցանկությունը։

Դիլոնը վերադարձավ Կալկաթա։ Այնտեղ նա կարողացավ Ասիական և Արևելա-Հնդկական ընկերություններին շահագրգռել իր հայտնագործությամբ և նրան տրամադրվեց մի նավ, որ նույնպես «Հետախուզություն» էր կոչվում։ 1827 թվականի հունվարի 23-ին Դիլոնը ֆրանսիական ներկայացուցչի ուղեկցությամբ մեկնեց Կալկաթայից։

Խաղաղ օվկիանոսի զանազան մասերում մի քանի անգամ կանգ առնելուց հետո 1827 թվականի հունիսի 7-ին, վերջապես, «Հետախուզությունը» խարիսխ գցեց հենց այն վանքը կոչված նավահանգստում, ուր այժմ գտնվում է «Նատուֆլու

»։

Այստեղ Դիլոնը գտավ խորտակման բազմաթիվ հետքեր՝ խարիսխներ, գործիքներ, ճախարակներ, քարանետիչներ, տասնութ ֆնտանոց մի արկ, ատաղաբաշխական ջարդված գործիքներ և վերջապես, բրոնզե մի զանգ, հետևյալ մակագրությամբ. «Ինձ ձուլել է Բազենը»։ Զանգի վրա եղել է Բրեստի զինապահեստի դրոշմը և «1785» թվականը։ Հիմա արդեն ոչ մի կասկած չէր կարող լինել։

Դիլոնը մինչև 1827 թվականի հոկտեմբերը մնաց Վանիկորոյում, որպեսզի ավելի շատ ապացույցներ գտնի։ Այնուհետև նա նոր Զելանդիայի վրայով մեկնեց Կալկաթա, ուր ժամանեց 1828 թվականի ապրիլի 7-ին։ Դիլոնը Կալկաթայից մեկնեց Ֆրանսիա, որտեղ նրան ջերմությամբ ընդունեց Կարլոս X-ը։

Այդ ժամանակ Դյումոն Դյուրվիլը, այն նավի հրամանատարը, որ ի պատիվ Լապերուզի չքացած նավի կոչվում էր «Աստրոլաբիա», անտեղյակ լինելով Դիլոնի հայտնագործության, նավաբեկության հետքերը փնտրում էր բոլորովին

այլ ուղղությամբ. նա մի կետորսից իմացել էր, որ Նոր Կալեդոնիայի և Լուզիադի վայրենիների մոտ տեսել են Ս. Լյուդովիկոսի մեդալը և շքանշանը։

Անցել էր երկու ամիս այն օրերից, երբ Դիլոնը հեռացել էր Վանիկորոյից։ Հենց այդ ժամանակ Դյումոն Դյուրվիլը խարիսխ գցեց Հոբարտ-Թոունի մոտ։ Միայն այստեղ նա իմացավ Դիլոնի հաջողության մասին։ Նույն տեղում Դյումոն Դյուրվիլը լսեց, որ Ջեմս Հոբբսի՝ «Յունիոն» նավի պետի կալկաթացի օգնականի վկայությունները։ Վերջինս պնդում էր, որ երբ իր նավը կանգնած է եղել 8° 18′ հարավային լայնության և 158° 30′ արևելյան երկարության տակ գտնվող կղզու դիմաց, նա բնիկների մոտ տեսել է երկաթյա ձողեր և կարմիր հյուսվածքեղենի կտորներ։

Դյումոն Դյուրվիլը, որ շփոթվել էր այդ հակասական լուրերից և չգիտեր հավատա՞լ դրանց, թե՞ ոչ, այնուամենայնիվ որոշեց գնալ նավապետ Դիլոնի հետքերով։

1828 թվականի փետրվարի տասին «Աստրոլաբիան» մոտեցավ Տիկոպիա կղզուն, որպես ուղեցույց վերցրեց սպիտակամորթ մի նավաստու, որ այնտեղ բնակություն էր հաստատել, ուղևորվեց դեպի Վանիկորո։ Փետրվարի 12-ին «Աստրոլաբիան» մոտեցավ կղզուն, ինը օր մնաց կղզու կորալային օղակից դուրս և միայն փետրվարի 20-ին մտավ Վանու նավահանգիստը։

Փետրվարի քսաներեքին «Աստրոլաբիա»-ի նավաստիները, վերադառնալով կղզում կատարած շրջագայությունից, մի քանի սակավարժեք տվյալներ բերին խորտակման մասին։ Բնիկները հրաժարվում էին ցույց տալ դժբախտության վայրը և բոլոր հարցերին պատասխանում էին, թե ոչինչ չգիտեն ու ոչինչ չեն հասկանում։ Բնիկների վարմունքը կասկածելի էր և մտածել էր տալիս, որ նրանք վատ են վարվել խորտակված նավերի անձնակազմի հետ։ Եվ իսկապես, բնիկները ըստ երևույթին վախենում էին, որ Դյումոն Դյուրվիլը եկել է վրեժ լուծելու Լապերուզի և նրա դժբախտ ուղեկիցների մահվան համար։

Սակայն փետրվարի 26-ին, գայթակղվելով ընծաներ տալու խոստումներից և համոզվելով, որ իրենցից վրեժ լուծող

չկա, բնիկները նավապետի օգնական ժակինոյին ցույց տվին խորտակման տեղը։

Այնտեղ, շրջա-հինգ մեծ խորությամբ, Պակու և Վանու ժայռերի միջև ընկած էին խարիսխները, թնդանոթները, երկաթե ու արճիճե զանազան մնացորդներ, որոնք արդեն ծածկվել էին կրային շերտերով։ «Աստրոլաբիա»-ի մակույկները մոտեցան այդ տեղին և հատակից մեծ դժվարությամբ հանեցին հազար ութ հարյուր ֆունտ կշռող խարիսխը, ութ ֆնտանոց արկերով կրակող թնդանոթը, մի արճիճե ձուլվածք ու երկու պղնձե քարանետիչ։

Հարցաքննելով տեղացիներին, Դյումոն Դյուրվիլն իմացավ հետևյալը. կղզու ափերի մոտ իր երկու նավը կորցնելուց հետո Լապերուզը նրանց մնացորդներից կառուցել էր մի նոր փոքրիկ նավ և դուրս եկել բաց ծով, որպեսզի անհետ կորչի...

Այդ ժամանակ «Աստրոլաբիա»-ի հրամանատարը կարգադրեց մանգիֆերաների հովանու տակ կառուցել խիզախ ծովագնացի և նրա ընկերների արձանը։ Այդ մի հասարակ, քառակողմ բուրգ էր, որ կառուցվեց քարից, իսկ պատվանդանը՝ կորալներից։ Ոչ մի կտոր երկաթ չդրվեց, որպեսզի բնիկները դրանից չգայթակղվեն ու չքանդեն արձանը։

Դրանից հետո Դյումոն Դյուրվիլն ուզում էր անմիջապես մեկնել։

Սակայն «Աստրոլաբիա»-ի նավորդները քայքայվել էին դողերոցքից, որ սաստիկ տարածված է այդ վայրերում։ Հիվանդ էր նաև նավապետը։ Այս պատճառով նավը կարող էր մեկնել միայն մարտի 17-ին։

Մինչ այս մինչ այն, ֆրանսիական կառավարությունը, որ կարծում էր, թե Դյումոն Դյուրվիլը ոչինչ չգիտի Դիլոնի հայտնագործության մասին, «Բայոնեզ» մարտանավը լեգոարան դ'Տրոմելենի հրամանատարությամբ ուղարկեց դեպի Վանիկորո։ «Աստրոլաբիա»-ի հեռանալուց մի քանի ամիս հետո միայն «Բայոնեզը» կանգ առավ Վանիկորոյի մոտ, չգտավ ոչ մի նոր ապացույց, միայն համոզվեց, որ վայրենիները ձեռք չեն տվել Լապերուզի արձանին։

Ահա այն ամենը, ինչ որ ես կարող էի հաղորդել նավապետ Նեմոյին։

— Այդպես ուրեմն,— ասաց նա ինձ,— մինչև հիմա ոչ ոք չգիտե, թե որտեղ է խորտակվել այն երրորդ նավը, որ կառուցել էին Վանիկորոյի մոտ դժբախտության ենթարկվածները։

— Ոչ ոք չգիտե այդ։

Նավապետ Նեմոն ոչինչ չպատասխանեց ինձ, բայց ձեռքով նշան արավ, որ իր հետ գնամ սրահ։ «Նաուտիլուսը» մի քանի մետր խորացավ ջրի տակ, և բացվեցին երկաթե՝ փեղկերը։

Ես մոտեցա լուսամուտին ու կորալլի շերտերի, զոոֆիտների ու ջրիմուռների, այս ու այն կողմ լողացող ձկների միջև նկատեցի խորտակված նավերի մնացորդները, որոնք չէին հանված, խարիսխներ, թնդանոթներ, կայմեր, շղթաներ ու արկեր։ Այդ բոլորը հիմա ծածկված էր զոոֆիտների կենդանի ծաղիկներով։

Այն ժամանակ, երբ ես դիտում էի այդ ողբերգական մնացորդները, նավապետ Նեմոն տխուր ձայնով ասաց.

— Նավապետ Լապերուզի արշավախումբը Ֆրանսիայի ափերից հեռացավ 1785 թվականի դեկտեմբերի ցոթին, «Բուսսոլ» և «Աստրոլաբիա» նավերով։ Սկզբում նա ուղևորվեց դեպի Բոտանի-Բայ, Տոնգա կղզին, Նոր Կալեդոնիա, ապա՝ դեպի Սանտա-Կրուսուա և կանգ առավ Նամուկի կղզու մոտ, որ պատկանում է Հավայան կղզախմբին։ Վերջապես, Լապերուզի նավերը մոտեցան Վանիկորոյի անհայտ ժայռերին։ «Բուսսոլ» մարտանավը, որ գնում էր առջևից, հարավային ափում ընդհարվեց ստորջրյա ժայռերին։ «Աստրոլաբիա»-ն շտապեց օգնության և իր հերթին նույնպես ընդհարվեց ստորջրյա ժայռերին։ Առաջին մարտանավը խորտակվեց գրեթե րոպեապես։ Երկրորդը, որ նստել էր ծանծաղուտին, դիմադրեց մի քանի օր։ Բնիկները բավական լավ ընդունելություն ցույց տվին նավորդներին։ Վերջիններս ապաստանեցին կղզում և սկսեցին երկու մեծ մարտանավերի բեկորներից մի փոքրիկ նավ կառուցել։ Մի քանի նավաստի իրենց կամքով մնացին Վանիկորոյում։ Մյուսները, որ մաշվել էին

հիվանդություններից և թուլացել, Լապերուզի հետ մեկնեցին դեպի Սողոմոնյան կղզիները և բոլորն էլ մեռան այնտեղ, գլխավոր կղզու մոտ, Հիասթափության և Բավարարության հրվանդանների միջև։

— Բայց դուք որտեղի՞ց գիտեք այդ,— զարմացած հարցրի ես։

— Ահա թե ինչ եմ գտել հենց վերջին խորտակման տեղում։

Եվ նավապետ Նեմոն ինձ ցույց տվեց թիթեղյա մի արկղ, որի կափարիչի վրա քանդակված էր Ֆրանսիայի զինանշանը։ Արկղիկն ամբողջովին ժանգոտված էր աղի ջրում։ Նավապետը բացեց արկղիկը, ու ես տեսա դեղնած, բայց դեռ չփչացած փաստաթղթերի մի կապոց։

Դա ծովային մինիստրի հրահանգն էր, որ ուղղված էր նավապետ Լապերուզին։ Հրահանգի լուսանցքներում պահպանվել էին Լյուդովիկոս XVI-ի դիտողությունները։

— Ահա թե ինչպես է մեռնում քաջարի ծովագնացը,— ասաց նավապետ Նեմոն։— Նա հանգչում է կորալային անդորր գերեզմանում, և ես ուրախ կլինեի, եթե իմ ընկերներն ու ես նույնպիսի գերեզման ունենայինք...

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

ԹՈՐԵՍԻ ՆԵՂՈՒՑԸ

Դեկտեմբերի 27-ից 28-ի գիշերը «Նաուտիլուսը» թողեց Վանիկորոն և հսկայական արագությամբ սլացավ դեպի հարավ-արևմուտք։ Երեք օրում նավն անցավ այն տարածությունը, որ գտնվում է Վանիկորոյի և Նոր-Գվինեայի հարավ-արևելյան մասի միջև, այսինքն ավելի քան երեք հազար կիլոմետր։

Հունվարի մեկին, վաղ առավոտյան Կոնսելն ինձ գտավ «Նաուտիլուսի» տախտակամածում։

— Արդյոք պարոնը թույլ չի՞ տա նրան երջանիկ նոր տարի ցանկանալու,— հարցրեց նա։

— Ինչպե՛ս չէ, ինչպե՛ս չէ, Կոնսել, քո բարեմաղթությունն ընդունում եմ այնպիսի հաճույքով, որ կարծես մենք լինենք Փարիզում, իմ առանձնասենյակում, բուսաբանական այգում։ Շնորհակալ եմ քեզանից, ես էլ քո նոր տարին եմ շնորհավորում։ Միայն թույլ տուր հարցնել, ինչպե՞ս հասկանալ նոր տարում քո կողմից երջանկություն ցանկանալը։ Արդյոք դու ցանկանո՞ւմ ես, որ վերջ լինի մեր գերության, թե՞ շարունակվի մեր հրաշալի ճանապարհորդությունը։

— Ճիշտն ասած,— վրա բերեց Կոնսելը,— ես չգիտեմ ինչ պատասխանեմ պարոնին։ Անկասկած, մենք հետաքրքիր բաներ ենք տեսնում և երկու ամիս գտնվելով այստեղ, բոլորովին չենք ձանձրացել։ Այստեղ միշտ վերջին տեսարանները լինում են ամենից զմայլելի, և եթե այդպես շարունակվի, ապա ո՞վ գիտե էլ ինչ հրաշքներ պիտի տեսնենք։ Կարծում եմ, որ էլ երբեք այսպիսի առիթի չենք հանդիպի։

— Երբե՛ք... Դու իրավացի ես, Կոնսել։

— Բացի դրանից, նավապետ Նեմոն միանգամայն արդարացնում է իր լատինական անունը, որ նշանակում է անհայտ. մենք նրանից այնքան քիչ ենք ճնշվում, որ կարծես նա գոյություն չունի աշխարհում։

— Ճիշտ է, Կոնսել։

— Ուստի ես ինձ թույլ եմ տալիս ասելու պարոնին, որ ես երջանիկ կհամարեմ այն տարին, որը մեզ հնարավորություն կտա տեսնելու ամեն ինչ։

— Ամեն ինչ տեսնե՞լ, Կոնսել։ Այդ շատ երկար կտևի։ Ի դեպ, այդ մասին ի՞նչ է մտածում Նեդ Լենդը։

— Նեդ Լենդը բոլորովին հակառակն է մտածում,— պատասխանեց Կոնսելը,— այդ մի մարդ է, որ ունի պրոզաիկ մտածելակերպ և պահանջկոտ ստամոքս։ Նա ձանձրացել է շարունակ ձկները դիտելուց և ձուկ ուտելուց։ Հացի, մսի, գինու բացակայությունը տանջում է այդ անգլո-սաքսին, որը սովորել է արյունոտ բիֆշտեքս ուտել և ամեն օր շատ թե քիչ քանակությամբ վիսկի, ջին կամ բրենդի խմել։

— Իսկ ես բոլորովին չեմ դժգոհում,— ասացի ես,— հրաշալի կերպով հարմարվել եմ «նաուտիլուսի» ռեժիմին.

— Ես է՛լ,— պատասխանեց Կոնսելը,— ուստի հաճույ-

քով պատրաստ եմ մնալու այստեղ, ինչպես Նեդ Լենդը հաճույքով պատրաստ է փախչել։ Այսպես, եթե նոր սկսվող տարին դժբախտ լինի ինձ համար, երջանիկ կլինի նրա համար և ընդհակառակը։ Ուրեմն մեզնից մեկն ու մեկը անպայման բավարարված կլինի։ Ինչ վերաբերում է տիրոջը, ես ինձ թույլ եմ տալիս նրան ցանկանալու այն, ինչ որ ինքն է ցանկանում իր համար։

— Շնորհակալ եմ, Կոնսել։ Միայն թե խնդրում եմ քեզնից առժամանակ հետաձգել նոր տարվա նվերների հարցի լուծումը և բավականանալ ջերմ շնորհավորանքով։ Հիմա ես քեզ ուրիշ ոչինչ չեմ կարող առաջարկել։

— Պարոնի կողմից այդ կլինի ամենամեծ առատաձեռնությունը,— պատասխանեց Կոնսելը։

Այդ ասելով, հրաշալի մարդը հեռացավ։

Հունվարի երկուսին արագությունը չափող գործիքը ցույց տվեց, որ մենք անցել ենք տասնմեկ հազար երեք հարյուր քառասուն մղոն, կամ հինգ հազար երկու հարյուր հիսուն լյո, սկսած այն օրից, երբ ճանապարհ ընկանք Ճապոնական ծովից։

«Նաուտիլուսի» առջև գտնվում էին Ավստրալիայի հյուսիս-արևելյան կողմում եղած կորալային ծովերի վտանգավոր տեղերը։

Մեր նավը լողում էր ընդամենը մի քանի մղոն հեռու այն ստորջրյա ժայռերից, որոնք 1770 թվականի հունվարի 10-ին քիչ էր մնացել դառնային նավապետ Կուկի նավերի խորտակման պատճառ։ Այն նավը, ուր գտնվում էր ինքը, Կուկը, ընդհարվեց ժայռին և չխորտակվեց միայն այն պատճառով, որ ընդհարման ժամանակ պոկված կորալի մի կտոր ծածկեց նավի վնասված տեղը։

Ես շատ էի ուզում տեսնել երեք հարյուր վաթսուն լյո տարածություն բռնող այդ ստորջրյա ժայռերը։ Երբ մրրկահույզ ալիքները խփվում են այդ ժայռերին, լսվում է ահավոր մի դղրդյուն, որը նման է որոտի ճայթյուններին։

Սակայն այդ ժամանակ «Նաուտիլուսն» իջավ ծովի ստորին շերտերը և ինձ այնպես էլ չհաջողվեց տեսնել կորալե ժայռերը։ Մնում էր բավականանալ մի բանով՝ դիտել մեզ

ուկանի հանած ձկներն ու այդպիսով ուսումնասիրել այն-տեղի կենդանական աշխարհը։

Ես տեսա թյունիկ ձկան մի տեսակը, որ բավականաչափ խոշոր է, ունի արծաթավուն-մուգ-կապույտ մարմին և խոտորնակի շերտեր։ Երբ այդ ձուկը մեռնում է, շերտերը չքանում են։ Թյունիկների վտառներն ուղեկցում էին մեզ և չափազանց համեղ միս մատակարարում նավորդներին։ Ուռկանը դուրս էր բերում նաև մեծ քանակությամբ սպարներ, որոնք ունեն հինգ սանտիմետրից ոչ ավելի երկարություն, բայց շատ համեղ են, ապա տրիտլաներ, իսկական ծովային ծիծեռնակներ, որոնք մութ գիշերով ֆոսֆորային փայլ են տարածում ջրում և օդում։ Ուռկանի մեջ, կակղամորթների ու զոոֆիտների թվում ես տեսա այլցոնարների, կենդանածին մարգաձկների, ուռնաձկների ու բայդարների զանազան ներկայացուցիչներ։

Կորալլյան ծովն անցնելուց երկու օր հետո, հունվարի 4-ին մենք նկատեցինք Նոր Գվինեայի ափերը։ Նավապետ Նեմոն ինձ հայտնեց, որ մտադիր է Թորրեսի նեղուցով անցնել Հնդկական օվկիանոս։ Նա էլ ուրիշ ոչինչ չասաց, սակայն այդքանն էլ բավական էր նեդ Լենդի համար։ Վերջինս միանգամայն գոհ էր, որ մենք մոտենում ենք եվրոպական ծովերին։

Թորրեսի նեղուցը վատ համբավ ունի, որովհետև այնտեղ կան բազմաթիվ ստորջրյա ժայռեր և նեղուցի ափերում ապրող բնիկները հայտնի են իրենց վայրենությամբ։ Նեղուցն Ավստրալիան բաժանում է Նոր Գվինեայից։

Նոր Գվինեան ունի չորս հարյուր լյո երկարություն և երեք հարյուր լյո լայնություն ու բռնում է քառասուն հազար աշխարհագրական լյո տարածություն։ Կղզին գտնվում է 0°19′ և 10°2′ հարավային լայնության և 128° 23′ ու 146° 15′ երկարության տակ։

Կեսօրին, երբ նավապետի օգնականը սեքստանտով չափում էր արևի բարձրությունը, ես տեսա Արֆալակ կոչված լեռները, որոնք բարձրանում են աստիճանաձև և վերջանում սուր գագաթներով։

Նոր Գվինեան 1511 թվականին հայտնագործել է փորթու-

գալացի Ֆրանցիսկ Սերանոն։ 1526 թվականին այս կղզին այցելել է դոն Խոզե դը Մենեսեսը, 1527 թվականին՝ Գրիխալվը, 1528 թվականին իսպանացի գեներալ Ալվար դ'Սաավեդրան, 1545 թվականին՝ Հուգո Օրտեսը, 1616 թվականին՝ հոլանդացի Շաուտենը, 1753 թվականին Նիկոլա Սարեյքը, 1792 թվականին Թասմանը, Դամպեն, Ֆյումելը, Կարտերեն, Էդվարդսը, Բուհենվելը, Կուկը, Ֆորբեսը, Մակ Կլյորը, դ'Անտրկաստոն, 1823 թվականին Դյուպերեյը և, վերջապես, 1827 թվականին Դյումոն Դյուրվիլը։

«Այդ Մելանեզիայի ամբողջ սևամորթ բնակչության կենտրոնն է»,—ասել է դը Ռիենցին Նոր Գվինեայի մասին։

Իմ մտքով անգամ չէր անցնում, որ մեր ճանապարհորդության պատահականություններն ինձ կհասցնեն այդ տիերը։

«Նաուտիլուսը» մոտեցավ աշխարհիս այդ ամենավտանգավոր նեղուցին, որի առջև անվճռական տրամադրությամբ կանգ են առել նույնիսկ ամենախիզախ ծովագնացները։ Այս նեղուցը հայտնագործել է Լուի Թորրեսը, հարավային ծովերից դեպի Մելանեզիա վերադառնալիս։ Այստեղ 1840 թվականին քիչ մնաց խորտակվեին Դյումոն Դյուրվիլի նավերը, որոնք ծանծաղուտի էին հանդիպել։ Անգա՛մ «Նաուտիլուսը», որի համար սարսափելի չէին ոչ ծանծաղուտները և ոչ էլ ժայռերը, ստիպված եղավ գործ ունենալ կորալային խութերի հետ։

Թորրեսի նեղուցն ունի մոտավորապես հարյուր երեսունհինգ—հարյուր քառասուն կիլոմետր լայնություն, բայց այնտեղ կան անհամար քանակությամբ մեծ ու փոքր կղզիներ, ժայռեր ու խութեր, որոնք գրեթե անհնարին են դարձնում նավերի երթևեկությունը։

Հաշվի առնելով այդ, նավապետ Նեմոն ձեռնարկեց նախազգուշության բոլոր միջոցները։ «Նաուտիլուս»-ը լողում էր կիսով չափ ջրասույզ եղած և շատ դանդաղ։ Պտուտակի թիակները, ինչպես հոգնած կետ ձկան պոչ, դանդաղ ճեղքում էին ջուրը։

Օգտվելով այդ հանգամանքից, ես ու իմ երկու ընկերները դուրս եկանք միշտ թափուր սախտակամածը և կանգնեցինք

ղեկի խցիկի մոտ։ Հազիվ թե ես սխալվեմ, եթե ասեմ, որ նավապետ Նեմոն անշուշտ գտնվում էր այդ խցիկում և անձամբ կառավարում էր «Նաուտիլուսը»։

Իմ աչքերի առաջ գտնվում էր Թորբեսի նեղուցի հիանալի քարտեզը, որ կազմել էին ինժեներ-ջրագետ Վինցենդան Դյումուլենը և նախկին միջման. այժմ ծովակալ Կուպվան Դյուբոսան, որոնք մասնակցել են Դյումոն Դյուրվիլի ձեռնարկած շուրջերկրյա ճանապարհորդության։ Այս քարտեզը, ինչպես նաև նավապետ Կինգի կազմած քարտեզը, լավագույն կերպով պատկերացնում է Թորբեսի նեղուցը, այդ անանցանելի լաբիրինթոսը։ Ես մեծագույն ուշադրությամբ դիտում էի այդ քարտեզները։

Ծովը խռովահույզ ալեկոծվում էր «Նաուտիլուսի» շուրջը։ Հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք, մեկ ժամում երկու և կես մղոն արագությամբ ընթացող ահարկու հոսանքը խփում էր ստորջրյա ժայռերին, որոնք գրեթե ամեն մի մեծ տարածության վրա դուրս էին ցցվել ջրից։

— Վտանգավոր տեղ է,— ասաց ինձ Նեդ Լենդը։

— Արդարև՛, ավելի վատ տեղ երևակայել անգամ չի կարելի,— պատասխանեցի ես,— վտանգավոր է նույնիսկ «Նաուտիլուս»-ի համար, որը չի վախենում և ոչ մի խոշընդոտից։

— Պետք է ենթադրել, որ այս անիծված նավապետը լավ գիտե իր ճանապարհը, քանի որ հեռվում ես տեսնում եմ կոթալային այնպիսի մի շիլա-փլավ, որին հենց միայն շփվելով, «Նաուտիլուսը» կտոր-կտոր կլինի։

Հիրավի, գրությունը շատ լուրջ էր։ Սակայն «Նաուտիլուսը» կարծես կախարդական զորությամբ օժտված, քարեհաջող անցնում էր ամենաահարկու ժայռերից։ Նա չէր ընթանում «Սատրոլաբիա»-ի և «Ռանդի» ճանապարհով, որտեղ քիչ էր մնացել խորտակվեին Դյումոն Դյուրվիլի այդ նավերը։ Սուզանավն ավելի հյուսիսից էր ընթանում, և երբ անցավ Մյարբեա կղզին, ուղղվեց էլի հարավ-արևմուտք, դեպի Կամբերլենդի անցքը։ Ես կարծում էի, որ հիմա «Նաուտիլուսը» կընթանա հենց այդ անցքով, սակայն նա անապատելիորեն գարձավ դեպի հյուսիս-արևմուտք և անհամար մեծ ու

փոքր կղզիների արանքով ընթացավ դեպի Թաունդա կղզին և վտանգավոր ջրանցքը։

Ես զարմացած հարցնում էի ինքս ինձ,— մի՞թե նավապետ Նեմոն այնքան անզգույշ կլինի, որ իր նավը տանի այդ ջրանցքով, ուր Դյումոն Դյուրվիլի երկու նավերը նստել էին ծանծաղուտին։ Բայց այդ ժամանակ, էլի՛ փոխելով ուղղությունը, «Նաուտիլուս»-ն ընթացավ ուղիղ դեպի արևմուտք, դեպի Գվերոորոար կղզին։

Կեսօրվա ժամի մոտ երեքն էր։ Մակընթացությունը գրեթե հասավ ամենաբարձր աստիճանին և ալեկոծությունը հանդարտվեց։ «Նաուտիլուսը» մոտեցավ Գվերոորոարին։ Մինչև այդ կղզին ընդամենը երկու մղոն տարածություն էր մնում։ Մինչև այժմ էլ կարծես աչքերիս առաջ է այդ գեղաձիծաղ ափը, ուր կանգնած էին արմավենիները։

Հանկարծ մի ուժեղ ցնցում վայր գցեց ինձ տախտակամածի վրա։ «Նաուտիլուսը» խփվեց ստորջրյա ժայռին և կանգ առավ, մի փոքր դեպի աջ թեքված։

Վեր կենալով, ես տեսա, որ նավապետ Նեմոն և իր օգնականը դուրս են եկել տախտակամած։ Նրանք դիտում էին նավը և ինձ անհասկանալի լեզվով կարճ խոսքեր փոխանակում։

Ահա թե ինչպես էր գրությունը։ Նավի աջ կողմում, երկու մղոն հեռավորությամբ երևում էր Գվերոորոար կղզին, որ ձգվել էր հյուսիսից դեպի հարավ, ինչպես մի հսկայական թևեր։ Արևելքում, տեղատվության շնորհիվ, սկսում էին երևալ խութերի ծայրերը։

Մենք ամուր նստել էինք ծանծաղուտին, այն էլ այնպիսի՛ մի տեղում, ուր մակընթացության ժամանակ ջուրը քիչ է բարձրանում։ Այդ ոչ մի լավ բան չէր խոստանում «Նաուտիլուսին»։ Սակայն նավը բոլորովին չվնասվեց ընդհարումից, որովհետև շատ ամուր էր նրա կառուցվածքը։ Իսկ եթե «Նաուտիլուսին» չհաջողվի հեռանալ ծանծաղուտից և ջրասույզ լինել, ապա, որքան էլ ամուր լինի նրա կառուցվածքը, ծովային հոսանքը կտանի ու կխփի ժայռերին և այդ դեպքում մնաս բարո՛վ, նավապետ Նեմո...

Այսպես էի մտածում ես, երբ մոտեցավ նավապետ Նե-

մոն, որ հիանալի կերպով պահպանել էր իր հոգեկան հավասարակշռությունը և ըստ իր սովորության՝ հանգիստ էր ու սառնարյուն։ Նրա դեմքին անկարելի էր կարդալ ոչ ջղայնություն, ոչ էլ հուզում։

— Դժբախտ դե՞պք,— հարցրի ես։

— Ոչ, միայն պատահար է,— պատասխանեց նա։

— Այնուամենայնիվ այդ պատահարը կարող է ձեզ ստիպել վերատին դառնալ այն երկրի բնակիչը, որից դուք փախչում էիք, այնպես չէ՞։

Նավապետ Նեմոն ինչ-որ տարօրինակ ձևով նայեց ինձ ու գլխով բացասական շարժում արավ։ Ըստ երևույթին նա ուզեց ինձ հասկացնել, որ երբեք և ոչինչ չի կարող նրան հարկադրել վերադառնալու երկիրը։

Ապա նա ասաց.

— Ինչպե՞ս թե, պրոֆեսոր, «Նաուտիլուսի» դրությունն այնքան էլ հուսահատական չէ։ Նա դեռ ձեզ կծանոթացնի օվկիանոսի հրաշքներին։ Մեր ճանապարհորդությունը դեռ նոր է սկսվել և ես չեմ ցանկանում այդպես շուտ զրկվել ձեր ուղեկիցը լինելու պատվից։

— Այնուամենայնիվ, նավապետ,— առարկեցի ես, ցույց տալով, որ չեմ նկատում նրա խոսքերում թաքնված հեգնանքը՝ «Նաուտիլուսը» ծանծաղուտին է նստել հենց մակընթացության ժամանակ։ Չմոռանաք, որ խաղաղ օվկիանոսի ջուրը մակընթացության ժամանակ այնքան էլ չի բարձրանում, և եթե դուք չգտնեք նավը թեթևացնելու որևէ միջոց, ապա ես չգիտեմ, թե ձեր նավն էլ ինչպես պիտի լողա ջրում։

— Դուք իրավացի եք, պրոֆեսոր,— պատասխանեց նավապետ Նեմոն,— խաղաղ օվկիանոսի մակընթացության ժամանակ ջուրը քիչ է բարձրանում, բայց և այնպես, Թորբեսի նեղուցում ջրի բարձր և ցածր մակերևույթի տարբերությունը կազմում է մեկ ու կես մետր։ Այսօր հունվարի չորսն է և հինգ օրից հետո լուսինը կլրանա։ Ես շատ կզարմանամ, եթե լուսինը, երկրի այդ հավատարիմ արբանյակը, ծովի ջուրը չբարձրացնի այնքան, որպեսզի ինձ մատուցի այդ ծառայությունը, որ բոլորովին դատարկ բան է իր համար։

Այս խոսքերից հետո նավապետ Նեմոն իր օգնականի ուղեկցությամբ մտավ «Նաուտիլուս»։ Սուլտանալը կանգնած էր անշարժ, կարծես կպել էր տեղն ու տեղը և կորալլային պոլիպներն իրենց ամուր ցեմենտով նրան կպցրել էին ժայռին։

— Հը՛, ի՞նչ կասեք, պարոն պրոֆեսոր,—հարցրեց Նեդ Լենդը, նավապետի հեռանալուց հետո անմիջապես մոտենալով ինձ։

— Ահա թե ինչ, սիրելի Նեդ, մենք հանգիստ կապասենք հունվարի իննի մակընթացությանն։ Դուրս է գալիս, որ լուսինը պետք է սիրալիր կերպով մեզ ազատի ծանծաղուտից։

— Միայն այդքա՞նը։

— Միայն այդքանը։

— Եվ նավապետը խարիսխը չի՞ նետի ավելի հետու, չի՞ օգտագործի մեքենայի ամբողջ կարողությունը, որպեսզի փորձի ազատվել ծանծաղուտից։

— Ինչո՞ւ այդպես անել, քանի որ մենք կազատվենք մակընթացության միջոցով,— պատասխանեց Կոնսելը։

Կանադացին նայեց Կոնսելին և ուսերը թոթվեց։ Հիմա նրա մեջ ծովագնացի վիրավորված զգացմունքն էր խոսում։

— Հիշեցնք իմ խոսքերը, պարոն պրոֆեսոր,— դիմեց նա ինձ,—այս երկաթե տաշտն էլ երբեք չի լողալու ոչ ջրի վրա, ոչ էլ ջրի տակ։ Հիմա նա պետքական է վաճառվելու միայն իբրև ջարդոն։ Ուստի հասել է ժամանակը, որ մենք մնաս բարով ասենք նավապետին։

— Գիտե՞ք ինչ, սիրելի Նեդ,— պատասխանեցի ես,— այս նշանավոր նավի ապագան ինձ այնպես մոայլ չի թվում, ինչպես ձեզ։ Համբերեցեք չորս օր և մենք ճշտությամբ կիմանանք խաղաղ օվկիանոսի մակընթացության ուժը։ Ի դեպ ասած՝ փախչելու խորհուրդը տեղին կլիներ, եթե մոտիկ լիներին Անգլիայի կամ Պրովանսի ափերը։ Սակայն Նոր Գվինեայի ափերի մոտ շարժե շտապել օգտվելու այդ խորհրդից, չէ՞ որ միշտ էլ կարելի է դիմել այդ ծայրահեղության, եթե «Նաուտիլուսը» չազատվի ծանծաղուտից։ Ես պետք է ասեմ ձեզ, որ այդ վերջին միջոցը խիստ անցանկալի է և կարող է լուրջ բարդություններ առաջացնել։

— Բայց չի՞ կարելի արդյոք կարճ ժամանակով դուրս գալ ցամաք,— վրդովված հարցրեց Նեդ Լենդը,— ահա կղզին։ Այդ կղզում ծառեր են աճում։ Սրանց տակ թափառում են ցամաքային արարածներ՝ կենդանի խորովածներ, ռոստբիֆներ ու բիֆշտեքսներ... ինչպիսի՛ հաճույքով ես կփորձեի այդ խորտիկները։

— Հը՛, այստեղ իրավացի է Նեդը,— ասաց Կոնսելը,— ես միանում եմ նրա կարծիքին։ Արդյոք պարոնը չի՞ կարող իր բարեկամ նավապետից թույլտվություն վերցնել, որ մենք դուրս գանք այդ ափը, թեկուզ հենց նրա համար, որ դարձյալ մի անգամ փորձենք քայլել ամուր հողի վրա։

— Ես կարող եմ խնդրել Նավապետից այդ թույլտվությունը, բայց հավատացած եմ, որ կմերժի։

— Այնուամենայնիվ պարոնը թող փորձի,— ասաց Կոնսելը,— գոնե մենք կիմանանք, թե որչափ սիրալիր է նավապետ Նեմոն։

Որքան էլ ինձ համար զարմանալի էր, նավապետ Նեմոն անմիջապես և մեծ հաճույքով տվեց իմ խնդրած թույլտվությունը։ Նա նույնիսկ չպահանջեց, որ ես վերադառնալու խոստում տամ։ Սակայն Նոր Գվինեայի կղզիներում ճանապարհորդելը վտանգավոր է, այնքան վտանգավոր, որ ես Նեդ Լենդին խորհուրդ չէի տա այդպիսի ճանապարհորդություն ձեռնարկել։ Ավելի լավ էր գերի մնալ «Նաուտիլուսում», քան ընկնել բնիկների՝ պապուասների ձեռքը։

Ես չփորձեցի իմանալ, թե արդյոք նավապետ Նեմոն ուղեկցելո՞ւ է մեզ։ Դեռ ավելին, ես հավատացած էի, որ նավաստիներից ոչ ոք չի գա մեզ հետ, և Նեդ Լենդն ինքը կվարի մակույկը։ Ցամաքը դտնվում էր մեզանից ընդամենը երկու մղոնի վրա և կանադացին, լինելով հրաշալի ծովագնաց, առանց դժվարության կտաներ թեթև մակույկը ժայռերի արանքով, որոնք վտանգավոր են միայն մեծ նավերի համար։

Հետևյալ օրը, հունվարի 5-ին, մակույկը հանեցին իր տեղից և իջեցրին ջուրը։

Երկու նավաստի հեշտությամբ կատարեցին այդ աշխատանքը։ Թիակները դրվեցին մակույկի վրա և մեզ մնում էր միայն տեղ բռնել։

Առավոտյան ժամը ութին, հրացաններով ու կացիններով զինված, մենք հեռացանք «Նաուտիլուսից»։

Ծովը բավականաչափ հանգիստ էր։ Ափից թեթև քամի էր փչում։ Ես ու Կոնսելը նստած էինք թիակների վրա։ Մենք եռանդով թիավարում էինք, իսկ Նեդը մակույկին ուղղություն էր տալիս խութերի արանքում եղած նեղ անցքերում։

Մակույկը հրաշալի կերպով ենթարկվում էր մեզ ու սլանում դեպի ցամաքը։

Նեդ Լենդը չէր թաքցնում իր հրճվանքը։ Նա կարծես հենց նոր ազատված կալանավոր լիներ և չէր մտածում, որ շուտով պիտի վերադառնա բանտ։

— Հիմա մենք պետք է մի՛ս ուտենք,— համարյա թե երդում էր նա,— այն էլ ինչպիսի՛ միս, թռչունի իսկական, թարմ միս։ Ափսոս, որ առանց հացի պիտի ուտենք։ Ես հո չե՞մ ասում, որ ձուկը համեղ ուտելիք չէ, բայց ինքներդ դատեցեք, հո չի՞ կարելի շարունակ, ամեն օր ձուկ ուտել։ Կրակի վրա խորոված մի պատառ թարմ միսը շատ և շատ հաճելի կլինի մեզ համար։

— Ի՛նչ բկլիկն է, տո՛,— ասաց Կոնսելը,— բերանիս ջուրը գնում է այս խոսքերից։

— Մնում է միայն իմանալ, թե արդյոք թռչուններ կա՞ն այս անտառներում,— ասացի ես,— և եթե կան, արդյոք այնքան վիթխարի չե՞ն, որ ինքը, որսորդը նրանց համար կերակուր դառնա...

— Դատարկ բան է, պարոն պրոֆեսոր,— առարկեց Նեդ Լենդը, ցույց տալով ատամները, որ սուր էին ինչպես կացնի բերանը,— ես պատրաստ եմ վագր էլ ուտելու, տապակած վագրի մի լավ պատառ, եթե այս կղզում ուրիշ կենդանիներ չլինեն։

— Նեդն ուղղակի վախեցնում է ինձ,— ասաց Կոնսելը։

— Ինչ ցեղի էլ որ պատկանի հենց առաջին անգամ հանդիպող կենդանին, լինի փետրազուրկ շորքոտանի թե փետրավորված երկոտանի, ես պատրաստ եմ նրան ողջունելու հրացանի դիպուկ կրակոցով։

— Հը՛մ,— վրա բերի ես,— պարոն Լենդն էլի սկսում է խելահեղություն ցույց տալ։

— Մի՛ անհանգստացեք, պրոֆեսոր,— առարկեց կանադացին,— համարձակ թիավարեցեք։ Կես ժամ էլ չի անցնի, և ես ձեզ կառաջարկեմ հիանալի կերպով պատրաստված մի խորտիկ։

Ժամը ութ և կեսին «Նաուտիլուսի» մակույկը, հաջողությամբ խույս տալով Գվեբորոար կղզին շրջապատող կորալային օղակից, մոտեցավ ավազոտ ծովափին։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

ՄԻ ՔԱՆԻ ՕՐ ՑԱՄԱՔՈՒՄ

Ես հիշում եմ, որ երբ առաջին անգամ ոտք դրեցի հողի վրա, բավական ուժեղ տպավորություն ստացա։ Նեդ Լենդը ոտքը կամացուկ դրեց գետնին, կարծես փորձելով հողի ամրությունը։ Մինչդեռ երկու ամիս էլ չէր անցել այն օրերից, երբ մենք, ինչպես ասում էր նավապետ Նեմոն, դարձանք «Նաուտիլուսի» ճանապարհորդներ, կամ ավելի ճիշտ՝ այդ սուզանավի գերիներ։

Մի քանի րոպեի ընթացքում մենք ծովափից հեռացանք այնքան, որքան թույլ է տալիս հրացանի գնդակը։ Հողը կազմված էր գրեթե բացառապես կորալային կրից, սակայն դիտելով շորացած առուների հունները, որ ծածկված էին գրանիտե կունձքերով, կարելի էր ենթադրել, որ այդ կղզին գոյություն ունի դեռ նախնադարյան ժամանակներից։

Փարթամ, խիտ անտառը ծածկել էր ամբողջ հորիզոնը։ Վիթխարի ծառերը, որոնցից մի քանիսի բարձրությունը երկու հարյուր ոտնաչափի էր հասնում, մեկմեկու միացել էին լիանաներով, իսկ և իսկ բնական ճոճացանցերով, որոնք օրորվում էին քամուց։

Այնտեղ կային միմոզաներ, ֆիկուսներ, հիբիսկ ծառեր ու անթիվ արմավենիներ։ Ծառերի դալար սաղարթի հովանու տակ ծաղկում էին հսկայական խոլորձները, ընդավոր բույսերն ու ձարխոտերը։

Կանադացին, որ մտածում էր միայն օգտակար բանի՝ ուտելու մասին, աչքաթող էր արել հանելին՝ նոր Գվիննեայի բուսականության այս զմայլելի նմուշները։ Գտնելով կոկոսի մի արմավենի, նա քարով վայր գցեց մի քանի կոկոս, ջարդեց և առաջարկեց մեզ։ Մենք հաճույքով կերանք կոկոսների միջուկը և այդ հաճույքն ուրիշ բան չէր, բայց եթե բողոք «նաուտիլուսի» ուտելիքների միօրինակության դեմ։

— Հրաշալի՛ է, հայտարարեց Նեդ Լենդը։

— Համեղ է,— համաձայնվեց Կոնսելը։

— Ի՞նչ եք կարծում, մի՞թե նավապետ Նեմոն թույլ չի տա, որ մենք որոշ պաշար վերցնենք այս կոկոսներից,— հարցրեց ինձ Կանադացին։

— Չեմ կարծում,— պատասխանեցի ես,— բայց հավատացած եմ, որ նա դրանց ձեռք չի տա։

— Ավելի վատ նրա համար,— ասաց Կոնսելը։

— Ավելի լավ մեզ համար,— վրա բերեց Նեդ Լենդը,— մեր բաժինը շատ կլինի։

— Մի բոպե, սիրելի Նեդ,— ասացի ես Կանադացուն, որ մտադրվում էր հարձակում գործել երկրորդ արմավենու վրա,— կոկոսի ընկույզները հրաշալի են, բայց նախ քան դրանցով մակույկը բեռնելը լավ կլինի պարզել, թե արդյոք կղզում չկա՞ն ուրիշ, ոչ պակաս օգտակար մթերքներ։ Ես կարծում եմ, որ թարմ բանջարեղենը լավ ընդունելություն կգտնի «նաուտիլուսի» խոհանոցում։

— Պարոնն իրավացի է,— ասաց Կոնսելը,— ես առաջարկում եմ մակույկը բաժանել երեք մասի. առաջին մասը տրամադրել պտուղներին, երկրորդը՝ բանջարեղենին, իսկ երրորդը՝ թռչուններին, որոնց, ի դեպ ասած՝ մենք դեռ բոլորովին չենք տեսնում։

— Կոնսել, չպետք է հուսահատվել,— առարկեց Կանադացին։

— Այսպես, ուրեմն, առաջարկում եմ շարունակել մեր արշավը, սակայն միշտ աչալուրջ լինել։ Թեև կղզին անմարդաբնակ է թվում, բայց և այնպես, այստեղ կարող են լինել բնակիչներ, որոնք ուտելիք ընտրելիս այնքան բծախնդիր չեն լինում, որքան մենք...»

— Հը՛մ,— արձագանքեց Նեդ Լենդը և այդ ակնարկը լսելով, ճպճպացրեց շրթունքները։

— Հե՛յ, Նեդ, ի՞նչ պատահեց ձեզ,— հարցրեց Կոնսելը։

— Սգնիվ խոսք,— ասաց կանադացին,— ես սկսում եմ հասկանալ, թե որքան լավ բան է մարդակերությունը։

— Նե՛դ, Նե՛դ, այդ ի՞նչ ասացիք,— բացականչեց Կոնսելը,— ուրեմն դուք մարդակե՞ր եք, ուրեմն ձեզ հետ միասին գտնվելով միևնույն նավասենյակում, ես ամբողջ ժամանակ վտանգի՞ եմ մատնվել։ Ուրեմն մի գեղեցիկ օր դուք կարող եք ուտե՞լ ինձ։

— Կոնսել, բարեկամս, ես ձեզ սիրում եմ, բայց ոչ այնքան, որ ուտեմ ձեզ։

— Չեմ հավատում ձեզ,— պատասխանեց Կոնսելը,— եկեք սկսենք որսը։ Պետք է մի որևէ թռչուն գցել սրան, թե չէ առաջիկա օրերից մեկում տերը իր նախկին սպասավորից միայն ոսկորներ կգտնի։

Այն ժամանակ, երբ Նեդն ու Կոնսելն այսպիսի կատակներ էին փոխանակում, մենք հասանք անտառ։ Երկու ժամվա շափ մենք ծայրեծայր շրջեցինք մթին անտառը։

Մեզ հաջողվեց սննդատու բույսեր գտնել։ Օրինակ՝ մենք գտանք արևադարձային գոտու ամենաօգտակար բույսերից մեկը։ Սա մեզ տվեց այն ուտելիքը, որ «նաուտիլուսում» չէինք գտնում։

Ես խոսում եմ հացի ծառի մասին, որ առատ աճում է Գվեբորոար կղզում։ Մենք շատ շուտով գտանք նրա անսերմ տեսակը, որին մալայացիները «ռիմա» են անվանում։

Հացի ծառը մյուս ծառերից տարբերվում էր իր ուղիղ բնով, որ ուներ քառասուն ոտնաչափ բարձրություն։ Ծառի գեղեցիկ, կլորաձև կատարը, բաղկացած մեծ, երկարաձև տերևներից, իսկույն գրավում է բնագետի ուշադրությունը։ Նիտ տերևների մեջ կախված էին կլոր պտուղները։ Սրանց մաշկն անհարթ էր և ուներ մեկ դեցիմետր հաստություն։ Այս օգտակար ծառը, որ բնությունը պարգևել է հացաբույսերից զուրկ վայրերին, տարվա ութ ամսվա ընթացքում պտուղներ է տալիս և ոչ մի խնամք չի պահանջում։

Նեդ Լենդը լավ գիտեր այդ պտուղները։ Իր բազմաթիվ ճանապարհորդությունների ընթացքում նա արդեն կերել էր դրանցից և գիտեր, թե այդ պտուղներից ինչ ուտելիք կարելի է պատրաստել։

Պտուղները գրգռեցին նրաախորժակը։

— Պարոն պրոֆեսոր,— ասաց Նեդը,— էլ համբերություն չկա, պետք է փորձեմ։

— Փորձեցեք, Նեդ, փորձեցեք։ Չէ՞ որ մենք փորձեր կատարելու համար ենք եկել այստեղ։ Դե՛, մի ամաչեք։

— Դրա համար շատ ժամանակ չի պահանջվում,— ասաց նա։

Զինվելով կիզիչ ապակիով, նա իսկույն շորացած փայտ հավաքեց և խարույկ վառեց։ Կրակը սկսեց ճթճթալ։

Այդ ժամանակ նա ու Կոնսելը հացի ծառ էինք ընտրում։

Այդ ծառերից մի քանիսի պտուղները դեռ բավականաչափ հասունացած չէին և ծածկված էին հաստ մաշկով։ Սակայն կային նաև բազմաթիվ հասունացած, դեղնավուն պտուղներ, որոնք կարծես ուտողների էին սպասում։

Հացի ծառի պտուղների մեջ չկար կորիզ կամ սերմ։ Կոնսելը բերեց տասը պտուղ և տվեց Նեդին։

Կանադացին կտոր-կտոր արավ և դրեց կրակին։ Այդ ժամանակ նա մի քանի անգամ ասաց.

— Դուք հիմա կտեսնեք, պրոֆեսոր, թե որքան համեղ է այս հացը։

— Մանավանդ որ երկու ամիս հաց չենք կերել,— ավելացրեց Կոնսելը։

— Սա նույնիսկ հաց էլ չէ,— շարունակեց կանադացին,— սա ամենահամեղ կարկանդակն է։ Դուք երբեք չե՞ք փորձել, պարոն պրոֆեսոր։

— Երբեք Նեդ։

— Այդ դեպքում պատրաստվեցեք։ Դուք կվայելեք ամենահամեղ մի կերակուր։ Թող ես արժանի չլինեմ եռաժանու վարպետի կոչման, եթե դուք չմնդրեք երկրորդ բաժինը։

Մի քանի րոպեից հետո պտուղները լավ խորովված էին։ Յուրաքանչյուր պատառի մեջտեղից երևաց փափուկ, սպիտակ միջուկը, որ իր հոտով արտիշոկն էր հիշեցնում։

Պետք է խոստովանեմ, որ հայն իսկապես համեղ էր և ես մեծ հաճույքով էի ուտում։

— Ցավոք սրտի,— ասացի ես,— հաղիվ թե այս միջուկը երկար ժամանակ մնա թարմ վիճակում... ուստի ես կարծում եմ, որ չարժե սրանից պաշար վերցնել։

— Ի՞նչ եք ասում, պարոն պրոֆեսոր,— վրդովված բացականչեց Նեդը,— դուք խոսում եք իբրև տեսաբան բնագետ, իսկ ես վարվում եմ ինչպես պրակտիկ հացթուխ։ Կոնսեյլ, այս պտուղներից պաշար հավաքեցեք, հետներս կտանենք նավը։

— Իսկ ինչպե՞ս պիտի պատրաստվի պաշարը։

— Ես պտուղների միջուկից խմոր կհունցեմ։ Եփ գալուց հետո խմորը կմնա երկար ժամանակ, չի փչանա։ Հարկավոր կլինի գործածելուց առաջ այն եփել «նաուտիլուսի» խոհանոցում։ Թեև մի քիչ թթվաշ կլինի, բայց այնպիսի համ կունենա, որ դուք մատներդ էլ հետը կուտեք։

— Նեդ, ես տեսնում եմ, որ շատ հրաշալի է ձեր հացը և մեզ ուրիշ բան հարկավոր չէ...

— Ընդհակառակը, պարոն պրոֆեսոր,— առարկեց Կոնսեյլը,— մենք կարող ենք բանջարեղեն և պտուղներ էլ հավաքել։

— Լա՛վ, եկեք պտուղներ ու բանջարեղեն փնտրենք։

Վերջացնելով հացի ծառի պտուղների հավաքելը, մենք սկսեցինք նոր ուտելիքեն փնտրել, որպեսզի մեր «ցամաքային» ճաշն ավելի բազմազան դարձնենք։

Մեր որոնումներն ապարդյուն չանցան և կեսօրին արդեն բավականաչափ քանակությամբ բանան էինք հավաքել։ Այս հիանալի, քնքուշ, արևադարձային պտուղներն աճում են ամբողջ տարվա ընթացքում։ Մալայացիներն այդ պտուղներն անվանում են «պիզանգ» և ուտում են առանց եփելու։ Բացի բաններից մենք հավաքեցինք մանգո կոչված ծառի համեղ պտուղները և անանասներ, որոնք անհավանական մեծություն ունեին։ Մենք չէինք ցավում, որ շատ երկար ժամանակ կորցրինք պտուղներ հավաքելու համար։

Կոնսեյլը շարունակ հետևում էր Նեդ Լենդին։ Նռաժանու վարպետը գնում էր առջևից, և, անցնելով թփերի կամ ծա-

ռերի մոտից, վատահ կերպով պոկում էր լավագույն պտուղ-
ները, մեր պաշարը լրացնելու համար։

— Հը՛մ, հարգելի Նեդ, հույս ունեմ, որ հիմա դուք բա-
վարարված եք,— ասաց, վերջապես, Կոնսելը։— Դուք
գտա՞ք այն ամենն, ինչ որ ուզում էիք։

— Հը՛մ,— մոմոաց կանադացին։

— Ինչպե՛ս, դուք դեռ դժգո՞հ եք։

— Այս բոլորը ճաշի համար միայն համեմունք է, դե-
սերտ, քաղցրավենիք։ Իսկ ո՞ւր է ապուրը, ո՞ւր է տապակածը։

— Այո, այո, Նեդ,— ասացի ես,— շմոռանաք, խնդրեմ,
որ խոստացել եք խորոված ուտեցնել մեզ։ Բայց այդ խորո-
վածները կարծես թե չեն երևում...

— Պարոն պրոֆեսոր,— պատասխանեց կանադացին,—
որսը ոչ միայն չի վերջացել, այլև դեռ չի էլ սկսվել։ Համբե-
րություն։ Վաղ թե ուշ մենք կտեսնենք մի որևէ վայրի թըռ-
չուն կամ շորքոտանի,— կամ այստեղ, կամ մի ուրիշ տեղ...

— Եվ եթե ո՛չ այսօր, գոնե մի ուրիշ օր,— կանադացու
տոնով վրա բերեց Կոնսելը,— սակայն չարժե մոռնել անտա-
ռի խորքերը։ Ես խորհուրդ եմ տալիս վերադառնալ ծովափ։

— Ինչպե՛ս, արդե՞ն,— աղաղակեց Նեդը։

— Մինչև մթնելը մենք պետք է վերադառնանք նավը,—
ասացի ես։

— Բայց հիմա ո՞ր ժամն է,— դժգոհությամբ հարցրեց
կանադացին։

— Առնվազն երկուսը,— պատասխանեց Կոնսելը։

— Ցամաքում ինչպե՛ս շուտ է անցնում ժամանակը,—
խորը հոգոց հանելով ասաց Նեդ Լենդը։

Մենք վերադառնում էինք ռնտառի միջով։ Ճանապարհին
մենք մեր պաշարը լրացնում էինք կաղամբային արմավենու
տերևներով,— դրա համար բարձրանում էինք մինչև ծառի
գագաթը,— ապա կանաչ բակլայաբույսերով, որ մալայացիք
«աբրուս» են անվանում, և հիանալի որակի ճամով։

Մեր բեռան ծանրությունից հոգնած, մոտեցանք մակույ-
կին։ Նեդ Լենդը, սակայն, գտնում էր, որ քիչ պաշար ենք
հավաքել։ Պետք է ասել, որ բախտը ժպտում էր նրան։ Մա-
կույկ նստելուց հետո նա հանկարծ նկատեց արմավենիների

և սագոյենների ընտանիքին պատկանող մի քանի ծառեր, որոնք քսանհինգ—երեսուն ոտնաչափ բարձրություն ունեն։ Այս ծառերը նույնչափ օգտակար են, որչափ և հացի ծառերը, և իրավամբ համարվում են Մելանեզիայի ամենաթանկագին բույսերից մեկը։

Նեդ Լենդը գիտեր դրանց հետ վարվելու ձևը։

Վերցնելով կացինը, նա մի քանի րոպեում կտրեց երկուերեք ծառ, որոնց բները ծածկված էին սպիտակ փոշիով, որը ծառերի հասունության նշանն էր։

Ես կանադացուն հետևում էի ավելի շուտ իբրև բնագետ, քան իբրև քաղցած մարդ։ Նա յուրաքանչյուր բնից պոկեց մեծ մատի հաստությամբ կեղևը։ Բացվեց թելերի մի ամբողջ ցանց, որ խճճված էր և հանգույցներ էր կազմում։ Հանգույցների միջև կպչուն ալյուր էր երևում։ Ալյուրը հենց այն մթերքն է, որ Մելանեզիայի բնակչության սննդի գլխավոր աղբյուրն է հանդիսանում։

Այս անգամ Նեդ Լենդը բավականացավ նրանով, որ ծառերի բները կտոր-կտոր արավ, ինչպես ջարդում են փայտը, հետաձգեց ալյուրի հավաքումը, որովհետև դրա համար անհրաժեշտ էր, որ բների կտորները չորացվեն արևի տակ։

Վերջապես, երեկոյան ժամը հնգին, պաշարով բեռնված, մենք հեռացանք կղզուց և կես ժամ անց մոտեցանք «Նաուտիլուսին»։ Ոչ ոք չդիմավորեց մեզ։ Վիթխարի երկաթե գլանում կարծես ոչ ոք չկար։ Ազատվելով իմ բեռից, ես մտա սենյակս։ Այստեղ ընթրիքը սպասում էր ինձ։ Ընթրեցի ու պառկեցի քնելու։

Հետևյալ օրը, հունվարի 6-ին, ոչ մի նորություն չկար։ Նավի ներսում ոչ մի ձայն, կյանքի և ոչ մի նշույլ։ Մակույկն օրորվում էր նավի կողքին, այնտեղ, ուր մենք թողել էինք։ Մենք որոշեցինք վերադառնալ Գվերոռոա կղզին։ Նեդ Լենդը հույս ուներ, որ այս անգամ որսն ավելի հաջող կլինի։ Բացի այդ, մենք շատ էինք ուզում այցելել անտառի մյուս մասը։

Արևը ծագեց թե չէ, մենք ճանապարհ ընկանք։ Դեպի ափը վազող ալիքն արագությամբ տարավ մակույկը, և մենք մոտեցանք կղզուն։

Մենք դուրս եկանք ծովափ և վստահանալով Նեդ Լենդի

բնազդին, քայլեցինք նրա հետևից, հետևելով, որ այդ երկայնատ կանադացին շատ չհեռանա մեզանից։

Նեդ Լենդը մեզ տարավ կղզու արևմտյան մասի խորքը։ Անցնելով մի քանի առվակներից, մենք դուրս եկանք մի հարթավայր, որի մի կողմում գտնվում էր հիանալի անտառը։ Առվակի ափին ճախրում էին մի քանի թռչուն, սակայն դրանցից ոչ մեկը թույլ չտվեց մեզ մոտենալու այնքան, որ հնարավոր լիներ խփել հրացանով։ Թռչունների այդ վարմունքն ինձ առիթ տվեց մտածելու, որ նրանք առաջին անգամ չեն հանդիպում երկոտանի արարածների հետ և գիտեն, թե ինչ կարելի է սպասել մարդուց։ Դրանից ես հանգեցի այն եզրակացության, որ եթե կղզին այժմ անմարդաբնակ է, այնուամենայնիվ վերջերս այստեղ մարդիկ են այցելել։

Անցնելով ընդարձակ հարթավայրը, մենք մոտեցանք մի փոքրիկ անտառի, որտեղից լսվում էր բազմաթիվ թռչունների երգը։

— Առայժմ դրանք թռչուններ են միայն,— ասաց Կոնսելը։

— Սակայն դրանց մեջ կան և այնպիսիները, որոնց կարելի է ուտել,— պատասխանեց եռաժանու վարպետը։

— Հաղիվ թե, բարեկամս,— առարկեց Կոնսելը,— իմ կարծիքով դրանք թութակներ են։

— Կոնսել, բարեկամս,— լրջորեն հայտարարեց Կանադացին,— թութակը փասիանի տեղ կարող է ծառայել այն մարդկանց համար, որոնք ուտելու ոչինչ չունեն։

— Իմ կողմից կարող եմ հաստատել,— ասացի ես,— որ կարելի է թութակից բավական համեղ կերակուր պատրաստել։

Արդարև, ծառերի խիտ սաղարթի տակ ճախրում էր թութակների մի ամբողջ երամ, որ պատրաստ էին խոսել մարդկային լեզվով, եթե որևէ մեկը զբաղվեր նրանց դաստիարակությամբ։

Թութակները շաղակրատում էին իրենց գույնզգույն էգերի հետ, թռչում ոստից ոստ և ծառից ծառ։ Այստեղ էին թութակների ենթաջոկատների բոլոր տեսակները. դանդաղաշարժ ու ծանրաբարո կակադուները, որոնք կարծես զբաղված

էին ինչ-որ փիլիսոփայական խնդրի լուծմամբ, պայծառ գունավորված արարները, որոնք թռչելիս նմանվում էին հողմի տարած բաղմագույն կերպասի մի կտորի, խելացի յակոթութակները, որոնք մյուսներից ավելի լավ են յուրացնում մարդկային լեզուն, և այդ չքնաղագեղ, բայց ո՛չ ուտելի թռչունների ուրիշ մի շարք տեսակները։

Սակայն նրանց մեջ չկար այն թռչունը, որ լինում է բացառապես այս երկրներում ու երբեք չի հեռանում Արրու և Նոր Գվինեա կղզիների սահմաններից։ Բայց բախտը ժպտում էր ինձ և հնարավորություն տվեց տեսնելու նաև այդ թռչունը։

Անցնելով ոչ-խիտ, փոքրիկ անտառը, մենք դուրս եկանք թփուտներով ծածկված մի մարգագետին։ Մեր ոտնաձայնն անհանգստացրեց ինչ-որ գեղատեսիլ թռչունների, որոնց փետուրներն այնպիսին են, որ նրանք կարող են թռչել քամուն հանդիպակաց։ Նրանց ալեձև թռիչքը, նազելիությունը, որով օդի մեջ շրջաններ էին գծում, փետուրների խայտաբղետ գույները, այս բոլորը զմայլեցնում էր դիտողին։ Ես առանց դժվարության ճանաչեցի նրանց։

— Դրախտահավեր են,— բացականչեցի։

— Ողնուցակրծքերի բաժին, ճնճղուկակերպների ջոկատ, դրախտահավերի ընտանիք,— անմիջապես ասաց Կոնսելը։

— Գուցե կաքավների՞ ընտանիք, դու չսխալվեցի՞ր, Կոնսել,— հարցրեց Նեդ Լենդը։

— Հարցրու պարոնին, Նեդ,— պատասխանեց Կոնսելը։

— Ոչ, Նեդ,— ասացի ես,— թեպետ դրանք կաքավներ չեն, ես շատ շնորհակալ կլինեմ, եթե դուք իբրև ճարպիկ մարդ, օգնեք ինձ՝ բռնելու այդ չքնաղագեղ արևադարձային թռչուններից մեկին։

— Կփորձեմ, պարոն պրոֆեսոր, թեև ճիշտն ասած՝ ես ավելի շատ սովոր եմ եռաժանուն, քան հրացանին։

Մալայացիները, որ դրախտահավերի աշխույժ առևտուր են անում, գործադրում են դրանց որսալու զանազան ձևեր, որ դժբախտաբար կիրառել մենք չէինք կարող. մերթ թակարդներ են դնում բարձր ծառերի գագաթներին, ուր հաճույքով բույն են հյուսում դրախտահավերը, մերթ սրանց որսում

են հատուկ, խիստ կպչուն սոսնձի միջոցով, մերթ, վերջապես, թունավորում են այն ջրերը, որտեղից այդ թռչունները ջուր են խմում։

Ինչ վերաբերում է մեզ, մնում էր նրանց որսալ հրացաններով, որով այնքան էլ ապահովված չէր հաջողությունը։ Եվ իսկապես, մենք կրակեցինք մեր լիցքերի մի զգալի մասը, բայց ոչ մի թռչուն չսպանեցինք։

Մինչև առավոտյան ժամը տասնմեկը մենք արդեն անցել էինք կղզու կենտրոնում գտնվող առաջին բլրաշարքը, սակայն ոչինչ չէինք որսացել։ Քաղցը տանջում էր մեզ։ Հույս դնելով հաջող որսի վրա, մենք ուտելիք չէինք վերցրել և հիմա դառը զղջում էինք դրա համար։ Սակայն այստեղ Կոնսելին հաջողվեց երկու անգամ կրակելով սպանել մի սպիտակ աղավնի և մի այլ թռչուն։ Այս հաջողությունը շատ ուրախացրեց մեզ և շատ զարմացրեց հենց իրեն՝ Կոնսելին։ Մենք անմիջապես փետրեցինք այդ թռչունները, խորովեցինք շոր փայտից պատրաստված խարույկի վրա։

Այն ժամանակ, երբ սպանված թռչունները խորովվում էին Կոնսելի հսկողության տակ, Նեդ Լենդը պատրաստում էր հացի ծառի պտուղները։

Ինչպես և պետք էր սպասել, խորոված թռչունները մենք կերանք ամբողջովին։ Դրանք բավական համեղ էին։ Մուսկատի ընկույզները, որով նրանք լցվում են, մի առանձին բուրմունք էին տվել նրանց, և մեր խորոված ը դուրս էր եկել իսկապես որ հրաշալի։

— Սրանք նույնչափ համեղ են, որչափ գետնասնկերով շաղացրած հավերը,— ասաց Կոնսելը։

— Հը՛, Նեդ, հիմա ձեզ էլ ի՞նչ է պակաս,— հարցրի ես։

— Չորքոտանի որս, պարոն պրոֆեսոր,— պատասխանեց կանադացին,— այս թռչնիկները միայն ախորժակ են գրգռում, բայց չեն կշտացնում։ Ուստի ես չեմ հանգստանա, մինչև որ չսպանեմ մի իսկական չորքոտանի կենդանի, որից կարելի է խորոված պատրաստել։

— Ես էլ, Նեդ, չեմ հանգստանա, մինչև որ դրախտահավ չբռնեմ։

— Ուրեմն շարունակենք որսը,— ասաց Կոնսելը,— միայն թե վերադառնանք, մոտիկ լինենք ծովին։ Մենք արդեն հասել ենք լեռնաշղթաներին։ Ես կարծում եմ, որ ավելի խելացի կվարվենք, եթե վերադառնանք ծովամերձ անտառը։

Կոնսելն իրավացի էր, և մենք հետևեցինք նրա խորհրդին։ Մի ժամ քայլելուց հետո հասանք անտառ, որ բաղկացած էր գրեթե բացառապես սագո ծառերից։ Մի քանի անգամ հանդիպեցինք օձերի, բայց դրանք թունավոր չէին։ Դրախտահավերը թռչում-հեռանում էին, երբ մենք մոտենում էինք նրանց։ Ես արդեն կորցրել էի նրանցից գոնե մեկին բռնելու հույսը, բայց Կոնսելը, որ առջևից էր գնում, հանկարծ կռացավ և ուրախ բացականչությամբ դարձավ դեպի ինձ։ Նա մի հիանալի դրախտահավ էր բռնել։

— Կեցցե՛ս, Կոնսել,— ասացի ես։

— Պարոնը շատ սիրալիր է,— պատասխանեց նա։

— Ոչ, ոչ, բարեկամս, դու ուղղակի հրաշք գործեցիր։ Դրախտահավ բռնել, այն էլ այդպիսի հեշտությամբ, չտեսնված բան է դա։

— Եթե տերը բարեհաճի նայել այս թռչունին, կհասկանա, որ այնքան էլ մեծ չէ իմ ծառայությունը։

— Ինչո՞ւ Կոնսել։

— Որովհետև այս թռչունը հարբած է, մեռնելու չափ հարբած։

— Հարբա՞ծ է։

— Այո։ Մուսկատի ընկույզներից է, որ նա կերել է մուսկատի ծառի տակ, այնպես որ, սրան բռնելը դատարկ բան էր ինձ համար։ Նայեցեք ուշադրությամբ, Նեդ, ահա անզգուշության ակներև արդյունքը։

— Ինձ թվում է, Կոնսել, որ դուք հիմք չունեք ակնարկելու, որ վերջին երկու ամսում ես օգի եմ խմել,— պատասխանեց կանադացին։

Այդ ժամանակ ես դիտում էի հետաքրքիր թռչունը։ Կոնսելն ինձ չէր խաբում, դրախտահավն իսկապես հարբել էր մուսկատի ընկույզների շշմեցնող հյութից և բոլորովին խղճուկ վիճակում էր գտնվում։ Նա ոչ միայն չէր կարող թռչել, այլև դժվարությամբ էր քայլում։

Կոնսելի բռնած թռչունը պատկանում էր նոր Գվինեայում և հարևան երկրներում ապրող դրախտահավերի ամենագեղեցիկ տեսակին։ Այդ տեսակը կոչվում էր «զմրուխտե» և ամենահազվագյուտն էր։ Թռչունն ուներ երեսուն սանտիմետր երկարություն։ Նրա գլուխը շատ փոքրիկ էր, ինչպես նաև աչքերը, որոնք գտնվում էին հենց կտուցի կողքին։

Թռչունը բազմերանգ էր և նրա գույները մի հրապուրիչ ներդաշնակություն էին կազմում դեղին կտուց, մուգ-դարչնագույն թաթիկներ ու ճանկեր, բաց-դարչնագույն, կարմրածայր թևեր, դեղնավուն փուփլիկ, զմրուխտե-կանաչ պարանոց, շագանակագույն կուրծք և որովայն։ Նրա պոչը զարդարում էին երկու փարթամ, խավոտ, աղեղնաձև փետուրներ, որոնք արտասովոր քնքշություն ու գեղեցկություն ունեին։ Ընդհանրապես թռչունը չափազանց գեղեցիկ էր և միանգամայն արժանի «արևաթռչուն» տեղական անվանը։

Ես շատ էի ուզում այդ թռչունը կենդանի վիճակում հասցնել Փարիզ և նվիրել կենդանաբանական այգուն, ուր կենդանի դրախտահավեր դեռ չկային։

— Իսկապե՞ս դա հազվագյուտ թռչուն է,— հարցրեց Նեդ Լենդն այն որսորդի տոնով, որի համար ոչ-ուտելի վայրի կենդանիները որևէ արժեք չունեն։

— Այո, Նեդ, և, բացի դրանից, շատ դժվար է նրանց կենդանի բռնել։ Սակայն այդ թռչունները շատ բարձր են գնահատվում նույնիսկ մեռած վիճակում։ Այս պատճառով բնիկները սկսել են կեղծել այդ թռչունները, ճիշտ այնպես, ինչպես Եվրոպայում կեղծում են մարգարիտն ու ադամանդները։

— Ինչպե՛ս,— բացականչեց Կոնսելը,— դրանք կեղծում են դրախտի թռչուննե՞ր։

— Այո, Կոնսել։

— Եվ պարոնը գիտե, թե այդ ինչպես են անում բնիկնե՞ր։

— Գիտեմ, Կոնսել։ Դրախտահավերն ամառային քամիների ժամանակ գցում են իրենց պոչերի սքանչելի փետուրները։ Թռչունների «դրամանենգները» հավաքում են այդ փետուրները և ճարպկորեն կպցնում կամ կարում են մի որևէ

խղճուկ թութակի պոչին, որի փետուրներն, իհարկե, վաղո-
րոք պոկում են։ Հետո նրանք ներկում են կարը, «լաքում են»
թռչունը և... Եվրոպայի թանգարաններին կամ սիրողներին
են ուղարկում այդ յուրահատուկ արվեստի արտադրանքը։

— Ի՞նչ կա որ,— դիտեց Նեդ Լենդը,— նրանք գանգատ-
վելու հիմք չունեն։ Չէ՞ որ նրանք փետուրներ են ստանում,
իսկ դա գլխավորն է, եթե թռչունը չի օգտագործվում ուտե-
լու համար։

Այսպիսով իրագործվեց իմ երազը, ես գտա մի դրախտա-
հավ, իսկ Նեդ Լենդի ցանկությունը (խորովածի նկատմամբ)
առայժմ գլուխ չէր գալիս։ Այնուամենայնիվ, ցերեկվա ժամը
երկուսին կանադացին կարողացավ խփել իսկական անտա-
ռային վայրի մի խոզ, այն ցեղից, որ տեղացիները «բա-
ռի-ուտանդ» են անվանում։

Նեդի կրակոցը, որի շնորհիվ մենք կարողացանք իսկա-
կան տապակած ուտել, ուղղակի հիացմունք պատճառեց մեզ։
Նեդ Լենդը հպարտանում էր իր հաջողությամբ։ Էլեկտրական
գնդակը տեղն ու տեղը սպանեց վայրի խոզին։ Կանադացին
արագ վրա վազեց և ընթրիքի համար կտրեց հրաշալի ու
թարմ միսը։ Դրանից հետո վերսկսվեց որսը, որի ժամանակ
Նեդ Լենդն ու Կոնսելը պետք է ցույց տային իրենց վարպե-
տությունը։

Արդարև, անցնելով թփուտները, նրանք հայտնաբերեցին
մեծ թվով կենգուրուներ, որոնք ցատկոտելով փախան։ Բայց
որքան էլ արագ էին փախչում, չազատվեցին էլեկտրական
գնդակներից։

— Ա՛խ, պարոն պրոֆեսոր,— բացականչեց Նեդ Լենդը,
որ հարբել էր որսի հաջողությամբ,—ինչպիսի՜ հրաշալի միս,
մանավանդ, եթե լավ տապակվի։ Ուտելեղենի ինչպիսի՜ պա-
շար «Նաուտիլուսի» համար։ Երկու, երեք, չորս կենգուրու։
Եվ այս ամբողջ միսը մենք պետք է ուտենք, իսկ այն թանձ-
րամիսները նույն իսկ ձեռք էլ չեն տա։

Ես կարծում եմ, որ եթե կանադացին շշաղակրատեր ու-
րախությունից, կսպաներ բոլոր կենգուրուներին։ Սակայն նա
բավականացավ նրանով, որ սպանեց մի դյուժին այդ հե-
տաքրքիր կաթնասուններից, որոնք ինչպես հայտնեց Կոնսե-

լը, պատկանում էին կենգուրուների ընտանիքին, պարկավորների ջոկատին և երկոքրվայնավորների ենթադասին։

Սպանված կենգուրուները փոքր մարմիններ ունեին։ Նրանք պատկանում էին նապաստականման կենգուրուների թվին։ Այդ կենդանիները ցերեկը խորը քնում են, իսկ գիշերն արթուն են անցկացնում։ Կենգուրուների այս տեսակը ոչ միայն չափազանց արագավազ է, այլև ճարպիկ։ Կենգուրուն փոքր մարմին ունի, բայց նրա մորթին բարձր է գնահատվում։

Մենք շատ զոհ էինք որսի արդյունքներից։ Ոգևորված Նեդը ծրագրում էր հետևյալ օրը վերադառնալ այդ սքանչելի կղզին և սպանել այնտեղ ապրող բոլոր շորքոտանիներին։ Սակայն նա չէր նախատեսել, որ դեպքերն այլ ընթացք կստանան։

Երեկոյան ժամը մոտ վեցին մենք մոտեցանք ծովափին։ Մակուլկն այնտեղ էր, ուր թողել էինք «Նաուտիլուսը», որ հեռվից երկար խութի էր նմանվում, մեզանից երկու մղոն հեռավորության վրա պառկել էր ջրի մեջ։

Նեդ Լենդն անմիջապես սկսեց ճաշի պատրաստություն տեսնել։ Նա խոհարարական գործի վարպետ էր։ Նրա տապակած «կոտլետները» շուտով օդը լցրին ամենահաճելի բուրմունքով...

Ինչ վերաբերում է ինձ, պետք է խոստովանեմ, որ ես ես հիացած էի խոզի տապակած մսից։ Թող ընթերցողն ինձ ների այդ, ինչպես ես ներեցի կանադացուն...

Այսպես, ճաշը չափազանց լավ էր։ Երկու մեծ աղավնիներ լրացնում էին ճաշը։ Երկու սագ, հացի ծառի պտուղները, մանգուի մի քանի պտուղները, կես դյուժին անանաս ու կոկոսյան ընկույզի եփած հյութը բավականաչափ բարձրացրին մեր տրամադրությունը։ Ինձ թվում էր, որ իմ արժանավոր ընկերները, ինչպես նաև հս, ծանրացել էինք կշտանալուց։

— Եկեք այս երեկո չվերադառնանք «Նաուտիլուս»,— առաջարկեց Կոնսելը։

— Իսկ ի՞նչ կլինի, եթե առհասարակ չվերադառնանք,— ավելացրեց Նեդ Լենդը։

Այդ վայրկյանին մի քար ընկավ այնտեղ, ուր մենք գտնվում էինք, և դրանով ընդհատվեց եռաժանու վարպետի խոսքը։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ՆԱՎԱՊԵՏ ՆԵՄՈՅԻ ԿԱՅՏԱԿԸ

Առանց վեր կենալու մենք նայեցինք անտառի կողմը։ Իմ ձեռքը քարացավ դեռ պատառը բերանիս չհասցրած, իսկ Նեդ Լենդը կուլ տվեց հերթական պատառը։

— Սովորաբար երկնքից քարեր չեն ընկնում,— ասաց Կոնսելը,— իսկ եթե ընկնում են, դրանք օդաքարեր են կոչվում։

Երկրորդ քարը, որ ավելի հաջող էր նետված, դիպավ Կոնսելի վերցրած մսակտորին ու վայր գցեց այն, հաստատելով նրա դիտողության լրջությունը։

Վեր թռչելով և հրացանները գցելով ուսերիս, մենք պատրաստ էինք դիմավորելու ամեն մի հարձակման։

— Մի՞թե դրանք կապիկներ են,— բացականչեց Նեդ Լենդը։

— Համարյա թե,— պատասխանեց Կոնսելը,— դրանք վայրենիներ են։

— Դեպի մակո՛ւյկը,— հրամայեցի ես ու քայլեցի դեպի ծովը։

Հիրավի, ժամանակն էր նահանջել, որովհետև հարյուր քայլ հեռու, մեր ձախ կողմից հորիզոնը ծածկած անտառի մոտ երևացին քսան հոգի վայրենիներ, որոնք զինված էին մեծ աղեղներով ու պարսատիկներով։

Մակույկը գտնվում էր մեզնից քսան քայլի վրա։

Վայրենիները մոտենում էին առանց շտապելու, բայց ակնհայտ թշնամական դիտավորություններով։ Քարերն ու նետերը թափվում էին կարկտի նման։

Նեդ Լենդը չուզեց թողնել հավաքած մթերապաշարը և, չնայելով մեզ սպառնացող վտանգին, սպանված կենդուրուներն ու խոզերը քարշ տվեց դեպի մակույկը։

Երկու քայլում մենք տեղափոխեցինք պարենը, զենքերը, մակույկը մղեցինք դեպի ջուրը, ամրացրինք թիակները և նստեցինք։ Դեռ երկու կաբելտով էլ չէինք հեռացել, երբ հարյուրավոր վայրենիներ, աղաղակելով ու մոնչալով, մինչև գուկատեղերը մտան ջուրը։ Ես կարծում էի, որ «Նաուտիլուսի» անձնակազմն ուշադրություն կդարձնի նրանց աղմուկի վրա, բայց ո՛չ, սուզանավի տախտակամածում ոչ ոք չկար։

Քսան քայլից հետո մենք մոտեցանք «Նաուտիլուսին»։ Դռնակը բաց էր։ Մակույկը կապելով նավի կողքին, ներս մտանք։

Ես անցա սրահ, որտեղից լսվում էին երգեհոնի հնչյունները։ Նավապետ Նեմոն նվագում էր այնպիսի մի եռանդով, որ նույնիսկ չնկատեց իմ ներս մտնելը։

— Նավապե՛տ,— ասացի ես։

Նա չէր լսում։

— Նավապե՛տ,— կրկնեցի ես, ձեռս հպելով նրա ուսին։

Նա ցնցվեց ու արագ ետ նայեց։

— Ախ, այդ դո՞ւք եք, պարոն պրոֆեսոր,— ասաց նա,— ինչպե՞ս անցավ ձեր որսը, ի՞նչ բույսեր գտաք։

— Շնորհակալություն, նավապետ, շատ լավ անցավ։ Սակայն չեմ թաքցնում մի բան, մեր հետևից եկավ երկոտանիների մի ամբոխ, որն ինձ վտանգավոր է թվում...

— Երկոտանինե՞ր։

— Վայրենիներ։

— Վայրենինե՞ր,— ձայնը հեգնոտ երկարացնելով ասաց նավապետ Նեմոն։— Երևի դուք զարմացաք, պրոֆեսոր, որ դուրս գալով մեր մոլորակի ցամաքներից մեկը, դուք հանդիպել եք վայրենիների։ Որտե՞ղ ասես, որ վայրենիներ չկան... և հետո, մյուսներից ինչո՞վ են վատ այդ մարդիկ, որոնց դուք վայրենիներ եք անվանում։

— Բայց, նավապե՛տ...

— Ինչ վերաբերում է ինձ, ես ամեն տեղ վայրենիների եմ հանդիպել։

— Այնուամենայնիվ,— պատասխանեցի ես,— խորհուրդ

եմ տալիս նախազգուշության միջոցներ ձեռք առնել, եթե չեք ուզում, որ նրանք հարձակվեն «Նաուտիլուսի» վրա։

— Հանգստացեք, չարժե մտածել դրա մասին։

— Բայց այդ վայրենիները խիստ շատ են։

— Որքա՞ն։

— Հարյուրից ոչ պակաս։

— Պարոն Արոնաքս,— ասաց նավապետը, մատները նորից դնելով երգեհոնի ստեղներին,— եթե Նոր Գվինեայի բոլոր բնիկները հավաքվեն այս ծովափում, դարձյալ ոչ մի վտանգ չի սպառնա «Նաուտիլուսին»։

Նավապետը սկսեց նվագել երգեհոնը։ Ես ուշադրություն դարձրի այն հանգամանքի վրա, որ նա խփում է միայն սև ստեղներին, ուստի նվագը մինորային երանգավորում էր ստանում։ Նավապետը շուտով մոռացավ իմ ներկայությունը և ամբողջովին անձնատուր եղավ երաժշտության։ Ես այլևս չհամարձակվեցի խանգարել նրան և կամացուկ դուրս եկա սրահից։

Ես բարձրացա տախտակամածը։ Արդեն իջել էր գիշերը։ Այդ գոտում գիշերը ցերեկվան հաջորդում է միանգամից, առանց մթնշաղի։ Գվեբորոար կղզին հազիվ նշմարվում էր խավարում։ Ծովափում վառված բազմաթիվ խարույկներն ապացուցում էին, որ վայրենիները չեն էլ մտածում այնտեղից հեռանալ։

Երկար ժամերի ընթացքում ես մենակ գտնվում էի տախտակամածի վրա, մերթ հիշում բնիկներին, բայց արդեն առանց որևէ անհանգստության, որովհետև նավապետ Նեմոյի ինքնավստահության շնորհիվ սրտապնդվել էի, մերթ ուղղակի անձնատուր էի լինում արևադարձային այդ գիշերվա հմայքին։ Իմ երազները թռչում էին դեպի Ֆրանսիա, նայում էի երկնքի հյուսիսային մասում շողշողացող աստղերին, որոնք մի քանի ժամից հետո պետք է տեսնեին իմ հայրենիքը։ Լուսինը սկսեց բարձրանալ, համաստեղությունները գունատվում էին։ Ես մտածեցի, որ երկրի այդ հավատարիմ արբանյակը երկու օրից հետո կանցնի նույն երկնային ճանապարհը, որ բարձրացնի ծովի ջուրը և «Նաուտիլուսն» ազատի ծանծաղուտից։ Կեսգիշերվան մոտ էր։ Համոզվելով, որ

մթագնած ջուրը նույնքան հանգիստ է, որքան և ծառերի սավերների տակ նիրհած ծովափը, ես վերադարձա իմ սենյակն ու հանգիստ քնեցի։

Գիշերն անցավ առանց որևէ պատահարի։ Ըստ երևույթին վայրենիները վախեցել էին հենց միայն հրեշի տեսքից, որ պառկած էր ջրում։ Վայրենիները չէին երևում, չնայած, որ դոնակները բաց էին, և նրանք կարող էին ազատ մտնել «Նաուտիլուսի» մեջ։

Հունվարի 8-ին, առավոտյան ժամը վեցին, ես էլի բարձրացա տախտակամածը։ Լույսը նոր էր բացվում։ Շուտով մառախուղի քուլաների միջից երևաց կղզին, սկզբում ծովափը, հետո նաև ծառերի գագաթները։

Բնիկները դեռ այնտեղ էին և ավելի էին շատացել, կլինեին մոտ հինգ—վեց հարյուր հոգի։ Օգտվելով տեղատվությունից, նրանցից ոմանք խութերի վրայով մոտեցան «Նաուտիլուսին» և կանգ առան նավից ընդամենը երկու կաբելտով հեռավորությամբ։

Սովորական աչքով ես լավ տեսնում էի նրանց։ Վայրենիները պապուասներ էին, վիթխարահասակ, հիանալի կազմվածքով, բարձրաճակատ, մեծ, բայց ոչ տափակ քթով, ճերմակ ատամներով։ Կարմիր գույնով ներկված նրանց գանգուր մազերն աչքի էին ընկնում սև, փայլուն մարմինների վրա։ Ականջների բլթակները բաժանված էին երկու մասի և նրանցից ոսկրյա թաղթեներ էին կախված։

Տղամարդկանց մեծ մասը բոլորովին մերկ էր։ Այնտեղ գտնվող մի քանի կանայք հագել էին կանաչներից հյուսած շրջազգեստ ու կապել լիանայից պատրաստած գոտի։ Շրջազգեստը կոնքերից իջնում էր մինչև ծնկները։ Մի քանիսի, ըստ երևույթին, ցեղապետների, պարանոցները զարդարված էին մանյակով, որ պատրաստված էր գունավոր՝ սպիտակ ու կարմիր ապակիներից։ Բոլորը զինված էին աղեղներով, նետերով ու վահաններով։ Շատերի մեջքից կախված էին կլոր քարերով լի ցանցեր։ Այդ քարերը նրանք գնում են պարատիկի մեջ ու նետում մեծագույն վարպետությամբ։

Պարագլուխներից մեկը մյուսներից ավելի մոտեցավ «Նաուտիլուսին» և լարված ուշադրությամբ զննեց այն։ Երե-

մթագնած ջուրը նույնքան հանգիստ է, որքան և ծառերի սավերների տակ նիրհած ծովափը, ես վերադարձա իմ սենյակն ու հանգիստ քնեցի։

Գիշերն անցավ առանց որևէ պատահարի։ Ըստ երևույթին վայրենիները վախեցել էին հենց միայն հրեշի տեսքից, որ պառկած էր ջրում։ Վայրենիները չէին երևում, չնայած, որ դոնակները բաց էին, և նրանք կարող էին ազատ մտնել «Նաուտիլուսի» մեջ։

Հունվարի 8-ին, առավոտյան ժամը վեցին, ես էլի բարձրացա տախտակամածը։ Լույսը նոր էր բացվում։ Շուտով մառախուղի քուլաների միջից երևաց կղզին, սկզբում ծովափը, հետո նաև ծառերի գագաթները։

Բնիկները դեռ այնտեղ էին և ավելի էին շատացել, կլինեին մոտ հինգ—վեց հարյուր հոգի։ Օգտվելով տեղատվությունից, նրանցից ոմանք խութերի վրայով մոտեցան «Նաուտիլուսին» և կանգ առան նավից ընդամենը երկու կաբելտով հեռավորությամբ։

Սովորական աչքով ես լավ տեսնում էի նրանց։ Վայրենիները պապուասներ էին, վիթխարահասակ, հիանալի կազմվածքով, բարձրաճակատ, մեծ, բայց ոչ տափակ քթով, ճերմակ առամներով։ Կարմիր գույնով ներկված նրանց գանգուր մազերն աչքի էին ընկնում սև, փայլուն մարմինների վրա։ Ականջների բլթակները բաժանված էին երկու մասի և նրանցից ոսկրյա թապքեներ էին կախված։

Տղամարդկանց մեծ մասը բոլորովին մերկ էր։ Այնտեղ գտնվող մի քանի կանայք հագել էին կանաչներից հյուսած շրջազգեստ ու կապել լիանայից պատրաստած գոտի։ Շրջազգեստը կոնքերից իջնում էր մինչև ծնկները։ Մի քանիսի, ըստ երևույթին, ցեղապետների, պարանոցները զարդարված էին մանյակով, որ պատրաստված էր գունավոր՝ սպիտակ ու կարմիր ապակիներից։ Բոլորը զինված էին աղեղներով, նետերով ու վահաններով։ Շատերի մեջքից կախված էին կլոր քարերով լի ցանցեր։ Այդ քարերը նրանք գնում են պարատիկի մեջ ու նետում մեծագույն վարպետությամբ։

Պարագլուխներից մեկը մյուսներից ավելի մոտեցավ «Նաուտիլուսին» և լարված ուշադրությամբ զննեց այն։ Երե-

վում էր, որ նա կարևոր անձնավորություն է, քանի որ աչքի էր ընկնում բանանի տերևներից պատրաստված հագուստով։ Այդ հագուստը գույնզգույն էր, և փեշերը զարդարված էին գանազան նախշերով։

Ինձ համար դժվար չէր գնդակահարել վայրենուն, որ շատ մոտիկ էր կանգնած։ Սակայն ես որոշեցի սպասել, մինչև որ նա ինքը ցույց տա իր թշնամական դիտավորությունները։ Երբ եվրոպացին հանդիպում է վայրենուն, պետք է պաշտպանվի և ոչ թե հարձակվի։

Քանի դեռ շարունակվում էր տեղատվությունը, վայրենիները թափառում էին «նաուտիլուսի» շուրջը։ Սակայն նրանք ոչ մի թշնամություն չէին ցույց տալիս։ Ես լսում էի, որ նրանք հաճախ կրկնում են «assai» բառը և նրանց շարժումներից հասկացա, որ ինձ հրավիրում են ծովափ։ Սակայն ես դերադասեցի առայժմ չընդունել այդ հրավերը։

Իհարկե այդ օրը մակույկն այնպես էլ կապված մնաց «նաուտիլուսի» կողքին։ Դա շատ էր վշտացնում Նեդ Լենդին, որը պարենի պաշարը լրացնելու բուռն ցանկություն ուներ։ Հնարամիտ կանադացին առայժմ զբաղված էր նրանով, որ գալիք օրերի համար պատրաստում էր Գվեբորոար կղզուց բերված միան ու «հացը»։

Առավոտյան ժամը մոտ տասնմեկին, հենց որ մակընթացությունը սկսվեց և ալիքները ծածկում էին ժայռերի կատարները, վայրենիները վերադարձան ծովափ։ Այնտեղ, սակայն, նրանց թիվն ավելանում էր շարունակ։ Շատ հավանական էր, որ նրանք այստեղ էին հավաքվում հարևան կղզիներից։ Մյուս կողմից, սակայն, ես դեռ չէի տեսել տեղական ոչ մի ծառակուր (նավակ)։ Չգիտենալով, թե ինչպես անցկացնեմ ժամանակը, ես որոշեցի ուսումնասիրել ծովի հատակը, ուր կային բազմաթիվ խեցիներ, զոոֆիտներ ու ծովային բույսեր։ Ժամանակն էր այդ անելու, մանավանդ որ այսօր մենք վերջին անգամ էինք գտնվում Նոր Գվինեայի ափերում. իհարկե, եթե նավապետ Նեմոյի նախագուշակությունը կատարվեր և մակընթացությունն իսկապես բարձրացներ «Նաուտիլուսը»։

Սա կանչեցի Կոնսելին. նա ինձ բերեց մի ուռկան, որով ասրիններ են որսում։

— Ինչպե՞ս են իրենց պահում վայրենիները,— հարցրեց Կոնսելը,— պարոնի թույլտվությամբ պետք է ասեմ, որ նրանք ինձ վրա շար մարդկանց տպավորություն չեն թողնում։

— Այնուամենայնիվ նրանք մարդակերներ են, բարեկա՛մս։

— Կարելի է մարդակեր և միևնույն ժամանակ լավ մարդ լինել,— ասաց Կոնսելը,— ինչպես և կարելի է լինել շատակեր, բայց կարգին մարդ։ Մեկը մյուսին չի խանգարի։

— Լավ, Կոնսել, ես քեզ զիջում եմ. դրանք ազնիվ մարդակերներ են և իրենց գերիներին ուտելիս պահպանում են քաղաքավարության բոլոր կանոնները։ Բայց և այնպես, ես չեմ ուզում, որ ինձ ուտեն նույնիսկ ազնիվ մարդիկ, և ես պետք է զգույշ լինեմ, որովհետև «Նաուտիլուսի» նավապետը նախազգուշության ոչ մի միջոց ձեռք չի առնում։ Իսկ այժմ պետք է գործի անցնել։

Երկու ժամվա ընթացքում մենք ջուրն էինք մտցնում ուռկանը, սակայն ոչ մի հետաքրքիր բան չորսացինք։ Պատահում էին կալմարներ, սանրաձև կախաններ, ծովային աստղեր, որոնք ամենագեղեցիկներն էին իմ տեսածներից, գոլոտուրներ և փոքրիկ խեցգետիններ։ Մենք որոշեցինք վերջիններս հանձնել խոհանոց։ Եվ ահա այն րոպեին, երբ դա ինձ համար անսպասելի էր, ես հրաշք տեսա... ավելի ճիշտ՝ տեսա արտասովոր, հազվագյուտ այլանդակություն։ Կոնսելը ջրից հանց բազմաթիվ խեցիներ, որոնք ոչ մի հետաքրքրություն չէին ներկայացնում։ Նա չափազանց զարմացավ, տեսնելով, թե ինչպես ես հանկարծ դուրս քաշեցի ուռկանը, հանեցի մի խեցի և արձակեցի այնպիսի արտասովոր մի ճիչ, որ լինում է հազվագյուտ դեպքերում և հատուկ է միայն խխունջաբաններին։

— Ի՞նչ պատահեց պարոնին,— զարմացած հարցրեց Կոնսելը,— տիրոջը որևէ բա՞ն կծեց։

— Ոչ, բարեկամս, բայց այս գյուտի համար ես պատրաստ էի զրկվել իմ մատից։

— Ի՞նչ գյուտ։

— Այս խեցին,— հրճվանքով ասացի ես։

— Բայց չէ՞ որ այդ ամենասովորական մի խեցի է, որ պատկանում է սանրաձև քիմուխասավորների ընտանիքին, վորոտանինների ջոկատին, կակղամորթների դասին...

— Միանգամայն ճիշտ է, Կոնսել, բայց այս խեցին ոլորված է ոչ թե աջից ձախ, ինչպես լինում է սովորաբար, այլ ձախից աջ։

— Մի՞թե այդ հնարավոր է,— զարմացած հարցրեց Կանսելը։

— Այո, սիրելիս։ Սա ձախլիկ խեցի է։

— Ձախլիկ խեցի՞,— կերկերող ձայնով կրկնեց Կոնսելը։

— Նայիր նրա կազմվածքին։

— Թող պարոնն ինձ հավատա, որ ես երբեք այսչափ չեմ հուզվել,— ասաց Կոնսելը, զգուշությամբ վերցնելով խեցին։

Արդարև, հուզվելու բավականաչափ առիթ կար։ Բոլորին հայտնի է, որ բնության մեջ մեծ մասամբ շարժումը տեղի է ունենում աջից ձախ։

Աստղերը և իրենց արբանյակներն աջից ձախ են շարժվում։ Մարդու աջ ձեռքն ավելի է զարգացած, քան ձախը, ուստի բոլոր գործիքները՝ ապարատները, կողպանքները, ժամացույցի զսպանակները հարմարեցրած են այնպես, որ շարժվեն աջից ձախ։ Բնությունը պահպանում է այս օրենքը, եթե դա կարելի է օրենք անվանել. պահպանում է նաև կակղամորթների նկատմամբ։ Սրանք բոլորը ոլորված են աջից ձախ, իսկ երբ հազվագյուտ դեպքերում պատահում են ձախլիկ խեցիներ, սիրողները պատրաստ են ձեռք բերել դրանց, ինչ գնով էլ որ լինի։

Ես ու Կոնսելը հափշտակված դիտում էինք մեր գյուտը։ Ես արդեն նրազում էի, թե ինչպես այն կնվիրեմ Փարիզի բնագիտական թանգարանին, երբ հանկարծ վայրենու ձեռքով նետված քարը ջարդեց այդ թանկարժեք խեցին, որ գտնվում էր Կոնսելի ձեռքում։

Ես հուսահատորեն ճչացի։ Կոնսելը վերցրեց իմ հրացանը և նշան բռնեց վայրենու վրա, որ մեզանից տասը մետր հեռավորությամբ թափահարում էր պարսատիկը։ Ես ուզում էի կապել Կոնսելին, բայց չկարողացա։ Նա կրակեց, և գնդա-

կը ջարդ ու փշուր արավ վայրենու ենթադատակը զարդարող համայիլը։

— Կոնսե՛լ,— կշտամբանքով աղաղակեցի ես,— Կոնսել։

— Ի՞նչ։ Մի՞թե պարոնը չի տեսնում, որ այդ մարդակերն առաջինը հարձակվեց մեզ վրա։

— Մարդու կյանքն ավելի թանկ է, քան ամեն մի խեցի, Կոնսել։

— Ախ, արիկա... Ես կգերադասեի, որ նա խփեր ինձ և ոչ թե խեցուն,— բացականչեց Կոնսելը։

Նա խոսում էր բոլորովին անկեղծ, բայց ինձ չհամոզեց, որ իրավացի է։

Մինչ այս մինչ այն, վերջին րոպեներին, երբ մենք զբաղված էինք ձախլիկ խեցին դիտելով, դրությունը փոխվեց։ Տեղացիների մոտ քսան ծառակուրներ շրջապատեցին «Նաուտիլուսը»։ Այդ ծառակուրները, որ պատրաստված են ծառերի բներից, նեղ են, երկար և հարմարեցրած են արագ լողալու համար, ջրի վրա իրենց հավասարակշռությունը պահպանում են բամբուկից պատրաստված ինչ-որ հարմարանքի շնորհիվ։

Այդ հարձակումն անհանգստացրեց ինձ։

Ակներև էր, որ պապուասներն առաջ հանդիպել են եվրոպացիներին, տեսել նրանց նավերը։ Սակայն նրանք ի՞նչ կարող էին մտածել սիգարաձև նավի մասին, որ կառուցված էր երկաթից, չուներ ոչ կայմ, ոչ ծխնելույզ և չնչին չափով էր երևում ջրի վրա։ Ըստ երևույթին ոչ մի լավ բան չէին մտածում, որովհետև երկար ժամանակ չէին համարձակվում մոտենալ։ Սակայն, համոզվելով, որ մենք ոչ մի հարձակողական տրամադրություն չունենք, նրանք հետզհետե ընտելացան նավին, ավելի համարձակ դարձան և որոշեցին ավելի մոտիկից ծանոթանալ նավի հետ։ Սակայն հենց այդ էր, որ չպետք էր թույլ տալ։ Մեր հրացանները, որ կրակում էին առանց աղմուկի, չէին կարող ուժեղ տպավորություն գործել վայրենիների վրա, որոնց դուր էր գալիս միայն թնդանոթների ուժեղ որոտը։ Այդպես էլ կայծակը, որին չի հետևում որոտը, չի վախեցնում մարդկանց, թեպետ հանրահայտ է, որ վտանգավորը կայծակն է և ոչ թե որոտը։

Այդ բոպեին մի քանի ծառակուր մոտեցան «Նաուտիլուսին», և նետերը սկսեցին տեղալ ասխտակամածի վրա։

— Գրո՛ղը տանի,— բացականչեց Կոնսելը,— կարկուտի նման թափվում են նետերը, այն էլ, ով գիտե, թունավորվա՞ծ են...

— Պետք է նախազգուշացնել նավապետ Նեմոյին,— ասացի ես ու քայլեցի դեպի դռնակը։

Մտա սրահ, բայց այնտեղ ոչ ոք չկար։ Թակեցի նավապետ Նեմոյի սենյակի դուռը։

— Մտեք,— պատասխանեցին ներսից։

Նավապետ Նեմոն ինչ-որ բարդ հաշիվներ էր անում։ Նրա առջև կուտակված թղթերի վրա հանրահաշվական նշաններ էին երևում։

— Ես ձեզ անհանգստացրի՞,— քաղաքավարության համար հարցրի ես։

— Իսկապես որ, պարոն պրոֆեսոր,— պատասխանեց նավապետը,— սակայն ինչպես երևում է, դուք լուրջ հիմքեր ունեք ինձ անմիջապես տեսնելու։

— Շատ լուրջ։ Մեզ շրջապատել են բնիկների ծառակուրները և հավանորեն ոչ ուշ, քան մի քանի բոպեից հետո հարյուրավոր վայրենիներ կհարձակվեն մեզ վրա։

— Հը՛մ, նրանք ծառակուրներո՞վ են եկել,— բոլորովին հանգիստ ասաց նավապետը։

— Այո, նավապետ։

— Այդ դեպքում բավական է փակել դռնակը։

— Ես էլ հենց այդպիսի խորհուրդ էի ուզում տալ ձեզ։

— Դրանից էլ հասարակ բա՞ն,— պատասխանեց նավապետ Նեմոն։

Եվ սեղմելով էլեկտրական զանգի կոճակը, նա համապատասխան հրաման տվեց անձնակազմին։

— Ուրիշ ոչինչ,— բոպեական լռությունից հետո ասաց նա,— մակույկը դրված է իր տեղը և փակված է անցքը։ Հույս ունեմ, որ դուք չեք վախենա, թե վայրենիները կկտրեն նավը, որի դեմ անզոր էին «Աբրահամ Լինկոլնի» արկերը։

— Ոչ, չեմ վախենում։ Սակայն մի վտանգ էլ կա, նավապետ։

— Ի՞նչ վտանգ, պրոֆեսոր։

— Վաղը, այս ժամին, հարկավոր կլինի բաց անել անցքերը, «Նաուտիլուսի» օդի պաշարը լրացնելու համար։

— Միանգամայն ճիշտ է, պրոֆեսոր, քանի որ իմ նավը շնչում է այնպես, ինչպես կետ ձկները։

— Իսկ եթե այդ ժամանակ պապուասները լինեն նավի տախտակամածի վրա, կարող են ներխուժել, և ես չգիտեմ, թե դուք ինչով պիտի դրա առաջն առնեք։

— Ուրեմն, պրոֆեսոր, դուք հավատացած եք, որ նրանք կմտնեն «Նաուտիլուսի» մե՞ջ։

— Միանգամայն հավատացած եմ։

— Ի՞նչ կա որ, թող մտնեն։ Ոչ մի հիմք չունեմ նրանց խանգարելու։ Չէ՞ որ նրանք խեղճ ու կրակ վայրենիներ են։ Ես բոլորովին չեմ ցանկանում, որ այդ դժբախտներից մեկն ու մեկը զրկվի կյանքից, միայն այն պատճառով, որ ես այցելել եմ Գվեբորոար կղզին։

Ես ուզում էի գլուխ տալ և հեռանալ, սակայն նավապետ Նեմոն հրավիրեց նստել իր կողքին։ Նա հետաքրքրությամբ հարցեր էր տալիս ինձ մեր արշավների և որսի մասին։ Նավապետն այնպես էր ցույց տալիս, որ իբր թե չի հասկանում, թե ինչու կանադացին այնպես կարոտել է մին։ Այնուհետև խոսակցության նյութը փոխվեց։ Նավապետ Նեմոն դարձյալ սակավախոս էր, բայց իրեն պահում էր վերին աստիճանի սիրալիր։

Ի միջի այլոց խոսեցինք «Նաուտիլուսի» մասին, որը ծանծաղուտին է նստել այն նեղուցում, ուր քիչ էր մնացել խորտակվեին Դյումոն Դյուրվիլի նավերը։

Այս առթիվ նավապետ Նեմոն ասաց.

— Դյուրվիլն ամենամեծ ծովագնացներից մեկն էր, ինչպես նաև Ֆրանսիայի ամենակիրթ մարդկանցից մեկը։ Այդ ֆրանսիական նավապետ Կուկն էր։ Խե՛ղճ գիտնական։ Պայքարել Հարավային բևեռի սառույցների դեմ, Օվկիանոսի կորալների, խաղաղ օվկիանոսի կղզիներում բնակվող մարդակերների դեմ և վերջ ի վերջո մեռնե՛լ քաղաքամերձ երկաթու-

ղու գնացքի խորտակման ժամանա՞կ։ Եթե այդ արիասիրտ մարդն իր կյանքի վերջին րոպեներին մտածելու հնարավորություն է ունեցել, ապա կարո՞ղ եք երևակայել, թե ինչպես է մտածել։

Այս ասելիս նավապետ Նեմոն հուզված էր թվում։ Այդ հուզումը պատիվ էր բերում նրան։

Այնուհետև քարտեզի օգնությամբ մենք ուսումնասիրեցինք ֆրանսիական մեծ ծովագնացի բոլոր աշխատանքները, նրա բոլոր շուրջերկրյա ճանապարհորդությունները, Հարավային բևեռը հայտնագործելու նրա երկու փորձերը, որոնք անհաջող էին վերջացել, բայց որոնց շնորհիվ հայտնաբերվել էին Ադելի և Լուի Ֆիլիպի երկրները։

Վերջապես, մենք հիշեցինք, թե նա ջրագիտական ինչպիսի հետազոտություններ է կատարել խաղաղ օվկիանոսի խոշորագույն կղզիների շուրջը։

— Այն, ինչ ձեր Դյուրվիլն արել է օվկիանոսի վրա, ես կրկնում եմ նույնը օվկիանոսի խորքերում, բայց ավելի հիմնավոր ու ճշգրիտ կերպով և ավելի քիչ աշխատանք ու ճիգ գործադրելով։

Դյումոն Դյուրվիլի «Աստրոլաբիա» և «Զոանդ» նավերը, որ այնքան երկար ժամանակ անցնում էին մրրկահույզ ծովերով, իհարկե չեն կարող համեմատվել «Նաուտիլուսի», իսկական ստորջրյա տան հետ, որի անդորր առանձնասենյակներում ոչինչ չի խանգարում աշխատանքին։

— Այնուամենայնիվ, նավապետ, մի տեսակետից «Նաուտիլուսի» բախտը նման է «Աստրոլաբիայի» և «Զոանդի» բախտին,— ասացի ես։

— Ո՞ր տեսակետից, պարոն պրոֆեսոր։

— «Նաուտիլուսը», ինչպես և այդ նավերը, միևնույն տեղում նստեց ծանծաղուտին։

— «Նաուտիլուսը» չի նստել ծանծաղուտին,— սառը պատասխանեց նավապետ Նեմոն,— «Նաուտիլուսը» ստեղծված է նրա համար, որպեսզի հանգստանա ծովի հատակում։ Ես այնպիսի տանջալից ջանքեր չեմ թափելու, ինչպես այդ արեց Դյումոն Դյուրվիլն իր նավերը ծանծաղուտից ազատելու համար։ «Աստրոլաբիան» ու «Զոանդը» հազիվ փրկվեցին,

մինչդեռ «նաուտիլուսը» ենթակա չէ որևէ վտանգի։ Վաղը, իմ նշանակած օրը, իմ նշանակած ժամին մակընթացությունը կբարձրացնի «նաուտիլուսը», որը և կվերսկսի լողալ ծովերում։

— Նավապետ,— սկսեցի ես,— չեմ կասկածում, որ

— Վաղը,— ընդհատեց ինձ նավապետ Նեմոն, վեր կենալով աթոռից,— ցերեկվա ժամը երկուսն անց քառասուն րոպե «նաուտիլուսը» կազատվի ծանծաղուտից և առանց որևէ վնասվածքի դուրս կգա Թորրեսի նեղուցից։

Շեշտելով այս խոսքերը, նավապետ Նեմոն թեթևակի գլուխ տվեց։ Այդ նշանակում էր, որ նա զրույցը վերջացած է համարում։ Ինձ միայն մնում էր հեռանալ, ու ես այդպես էլ արի։

Վերադառնալով իմ սենյակը, ես այնտեղ գտա Կոնսելին, որը ցանկանում էր իմանալ իմ և նավապետի բանակցությունների արդյունքը։

— Բարեկամս,— ասացի ես Կոնսելին,— նավապետը ծիծաղեց ինձ վրա, երբ ասացի, թե քնիկները սպառնում են «նաուտիլուսին»։ Պետք է քեզ ասեմ, որ նավապետը միանգամայն հուսալի մարդ է։ Կարող ես հանգիստ քնել։

— Իմ ծառայությունն այժմ հարկավոր չէ՞ պարոնին։

— Ո՛չ, բարեկամս, շնորհակալ եմ։ Ի՞նչ է անում Նեդ Լենդը։

— Պարոնի թույլտվությամբ կասեմ, որ Նեդ Լենդը ներկայումս կենգուրուից շափազանց համեղ պաշտեստ է պատրաստում։

Սենյակում մնալով մենակ, ես մտա անկողին, բայց խիստ վատ քնեցի։

Գլխիս վերևից, տախտակամածից շարունակ լսվում էին վայրենիների ոտնաձայները և նրանց բարձրաձայն աղաղակները։

Գիշերը հանգիստ անցավ։ Անձնակազմը դարձյալ մատնված էր անգործության։ Ըստ երևույթին նրան այնքան էր անհանգստացնում տախտակամածի վրա վայրենիների գտնվելը, որքան մի որևէ ամրության մեջ գտնվող զինվորներին մրջյունների վազվզոցը։

Ես վեր կացա առավոտյան ժամը վեցին։ Դռնակները դեռ չէին բացված։ Ուրեմն երեկվանից օդը չէր փոխված։ Ասենք դա չէր զգացվում, որովհետև նավի պահամաններն իր ժամանակին մի քանի խորանարդ մետր թթվածին էին վերցրել։

Մինչև կեսօր ես աշխատում էի իմ սենյակում և այդ ժամանակ բոլորովին չտեսա Նավապետին։ Մեկնելու համար ոչ մի պատրաստություն չէր տեսնվում։

Ես մի քիչ էլ սպասեցի, հետո մտա դահլիճ։ Ժամի երկուսն անց էր կես։ Տասը րոպեից հետո մակընթացությունը պետք է հասներ ամենաբարձր կետին, և եթե Նավապետ Նեմոն չէր սխալվում, «Նաուտիլուսը» պետք է բարձրանար ջրի երեսը։ Եթե այդպես չլիներ, պետք է անցներ մի քանի ամիս, որպեսզի նավը կարողանար թողնել իր կորալլային մահիճը։

Շուտով նավը սկսեց ցնցվել։ Ես լսում էի, թե ինչպիսի ձայներ էին հանում նավի ստորին մասերը, դիպչելով կորալլային անհարթ հատակին։

Ժամը երկուսից երեսունհինգ րոպե անց Նավապետ Նեմոն մտավ սրահ։

— Հիմա մենք կճանապարհվենք,— ասաց նա։

— Հը՛մ,— մոմոացի ես։

— Ես հրամայեցի բանալ դռնակները։

— Իսկ պապուասնե՞րը։

— Պապուասնե՞րը,— Նավապետ Նեմոն թոթվեց ուսերը։

— Չէ՞ որ նրանք կմտնեն «Նաուտիլուսի» մեջ։

— Ինչպե՞ս կմտնեն։

— Այն դռնակով, որ դուք հրամայել եք բաց անել։

— Պրոֆեսոր,— հանգիստ պատասխանեց Նավապետ Նեմոն,— միշտ չէ, որ հնարավոր է անցնել «Նաուտիլուսի» դռնակով, նույնիսկ այն ժամանակ, երբ դռնակը բաց է լինում։

Ես նայեցի Նավապետին։

— Չե՞ք հասկանում,— հարցրեց նա։

— Ոչինչ չեմ հասկանում։

— Այդ դեպքում հետևեցեք ինձ։ Կտեսնեք։

Մենք քայլեցինք դեպի այն սանդուղքը, որ վերջանում էր դռնակով։ Արդեն այնտեղ էին Նեդ Լենդն ու Կոնսելը, որոնք

մեծագույն հետաքրքրությամբ դիտում էին մի քանի նավաստիների աշխատանքը։ Վերջիններս բաց էին անում դռնակը, իսկ տախտակամածից կատաղի աղաղակ ու ճիչ էր լսվում։

Դռնակի փեղկերը բացվելուն պես, երևացին քսան հոգի, որոնք թունդ զայրացած էին։

Սակայն վայրենիներից հենց առաջինը ձեռքը դնելով սանդուղքի բազրիքին, ինչ-որ անհայտ ուժով ետ շպրտվեց և ցատկոտելով ու հուսահատական ճիչեր արձակելով, փախավ։

Նրա տասը ընկերները հետևեցին իր օրինակին։ Նույն կերպ նահանջեցին նաև մնացած տասը հոգին։

Կոնսելը հրճվում էր։ Նեդ Լենդը, իբրև ռազմատենչ մարդ, ուզում էր հարձակվել նահանջող թշնամու վրա, բայց հենց որ փորձեց ձեռք տալ բազրիքին, իր հերթին նույնպես ետ շպրտվեց։

— Գրողը տանի,— գոռաց նա,— կայծակը խփեց ինձ։

Այդ խոսքերն ինձ համար պարզեցին ամեն ինչ։ Սանդուղքի բազրիքի մեջ բարձր լարվածության էլեկտրական հոսանք էր թողնված։ Ով դիպչում էր բազրիքին, սարսափելի ցնցումով ետ էր մղվում։ Այդ ցնցումը մահացու կլիներ, եթե նավապետ Նեմոն բազրիքի մեջ թողներ իր բոլոր մարտկոցների հոսանքը։ Սակայն նավապետը սահմանափակվեց նրանով, որ անանցելի պատնեշ ստեղծեց հարձակվողների և իր նավի ներքին մասի միջև։

Մինչ այս մինչ այն, մահացու երկյուղով բռնված պապուասները շտապեցին նահանջել։ Մենք, թաքցնելով մեր ժպիտները, հանգստացնում ու մխիթարում էինք Նեդ Լենդին, որը խելագարի նման հայհոյանքներ էր թափում։

Այդ րոպեին «Նաուտիլուսը» մակընթացության շնորհիվ բարձրացավ օվկիանոսի երեսը։ Ժամը երկուսից անց էր ուղիղ քառասուն րոպե՝ այն ժամկետը, որ նշանակել էր նավապետ Նեմոն։

Նավը սկսեց վեհորեն ու դանդաղ ճեղքել ջուրը։ Սակայն արագությունը հետզհետե ավելացավ և բոլորովին անվնաս «Նաուտիլուսը» դուրս եկավ Թորրեսի նեղուցի վտանգավոր ջրերից։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ԱՆԲԱՑԱՏՐԵԼԻ ՔՆԿՈՏՈՒԹՅՈՒՆ

Հետևյալ օրը, հունվարի 10-ին, «Նաուտիլուսը» կրկին լողում էր անեզր օվկիանոսում։ Այս անգամ նավն ընթանում էր չափազանց արագ, առնվազն մի ժամում երեսունհինգ մղոն։ Պտուտակն այնքան արագ էր պտտվում, որ ես չէի կարողանում հետևել նրա շարժման, հաշվել պտույտների քանակը։

Երբ ես մտածում էի, որ այդ հրաշալի ուժը՝ էլեկտրականությունը՝ ոչ միայն շարժում է «Նաուտիլուսը», այլև լուսավորում, տաքացնում է այն, պաշտպանում արտաքին հարձակումից, ստեղծելով այնպիսի մի խոշընդոտ, որը ոչ ոք չէր կարող անցնել, մինչև չենթարկվեր տեղն ու տեղը սպանվելու վտանգին, երբ ես մտածում էի այս բոլորի մասին, իմ հիացմունքն անսահման էր դառնում։ Ես հիանում էի ոչ միայն մեքենաներով, այլև նրանց ստեղծող ինժեներով։

Մենք ընթանում էինք ուղիղ դեպի արևմուտք։ Հունվարի 11-ին անցանք Վեսսել հրվանդանը, որ գտնվում է 135° երկարության և 10° հյուսիսային լայնության տակ, Կարպենտարյան ծովածոցի մոտ։ Այստեղ քիչ չէին ստորջրյա ժայռերը, բայց դրանք բավականաչափ հեռու էին մեկմեկուց և մեծ ճշտությամբ նշանակված էին քարտեզի վրա։

«Նաուտիլուսը» հեշտությամբ անցավ ձախ կողմում գտնվող Մոնե կոչված խութերի և աջ կողմում գտնվող Վիկտորիա ժայռերի արանքով։ Դրանք գտնվում են 130° երկարության տակ, այն զուգահեռականի վրա, որի ուղղությամբ մենք լողում էինք։

Հունվարի տասներեքին մենք մտանք Թիմոր ծովը և մոտեցանք համանուն կղզուն, որ գտնվում է 122° երկարության տակ։ Կղզին ունի հազար վեց հարյուր քառանհինգ քառակուսի լյո տարածություն։ Կղզին կառավարում են մի քանի ռաջաներ։ Այս իշխանավորներն իրենց անվանում են կոկորդիլոսի որդիներ, այսինքն, իրենց ասելով, ամենաազնվազարմ մարդիկն են աշխարհում։ Ռաջաների գիշակեր «նախորդները»

մեծ քանակությամբ ապրում են կղզու գետերում և բնակչությունը երկյուղածությամբ պաշտում է նրանց, միապետների աղդակիցներին։ Նրանց խնամում են, շողոքորթում, որպես կերակուր ջահել աղջիկներ են տալիս նրանց, և վա՛յ այն ստարերկրացուն, որը կհամարձակվի ձեռք բարձրացնել այդ սրբազան սողուններից որևէ մեկի վրա։

«Նաուտիլուսն», իհարկե, ոչ մի գործ չուներ այդ զզվելի կենդանիների հետ։ Թիմոր կղզին մենք տեսանք ընդամենը մի քանի րոպե, կեսօրին, երբ նավապետի օգնականը հերթական դիտողություններ էր կատարում։ Նա հարևանցի կերպով տեսա նաև Ռոտի կոչված փոքրիկ կղզին, որ նույն խմբին է պատկանում։ Այս կղզու կանայք հայտնի են իրենց գեղեցկությամբ և բարձր է գնահատվում մալայական ստրուկների շուկայում։

«Նաուտիլուսն» այստեղից դարձավ դեպի հարավ-արևմուտք, դեպի Հնդկական օվկիանոսը։ Ո՞ւր է մեզ տանում նավապետ Նեմոյի քմահաճույքը։ Արդյոք մենք կմոտենա՞նք Ասիայի ափերին, Եվրոպայի մայր ցամաքին։ Այն առեղծությունը, որ նավապետ Նեմոն տածում էր դեպի մարդաբնակ ցամաքները, հիմք չէր տալիս այդպիսի ենթադրություններ անելու։ Ուրեմն մենք դեպի հարա՞վ ենք գնալու։ Գուցե «Նաուտիլուսը» կանցնի Բարեհուսո և Հորն հրվանդանները և կհասնի մինչև Հարավային բևե՞ռ։ Ի՞նչ ճանապարհով ենք վերադառնալու խաղաղ օվկիանոս, ուր այնքան լայն է սուղանավի ճանապարհը։ Միայն ապագան կարող էր պատասխաններ տալ այդ հարցերին։

Անցնելով Քարտյեի, Հիբերնիի, Սերինգապատամի ու Սկոտոի սարջրյա խութերից, ցամաքի վերջին հենարաններից, որոնք գտնվում են ջրային տարրերքի խորքերում, մենք հունվարի 14-ին դուրս եկանք բաց ծով, ցամաքից հեռու։ «Նաուտիլուսը» սկսեց դանդաղեցնել իր ընթացքը։ Այդ քմահաճ և տարօրինակ նավը մերթ ընթանում էր օվկիանոսի խորքերում, մերթ երկար ժամանակ չէր իջնում ջրի մակերեվույթից։

Այդ ընթացքում նավապետ Նեմոն հետաքրքիր ուսումնասիրություններ էր կատարում, թե ծովի ջուրն այս կամ այն

խորությամբ ինչպիսի ջերմաստիճան ունի։ Սովորական պայմաններում նման ուսումնասիրությունները կատարվում են բավական բարդ գործիքների միջոցով։ Սակայն այդ գործիքների տվյալները միշտ վստահելի չեն, լինեն դրանք ջերմաչափական ղոնղեր, որոնց ապակիները հաճախ չեն դիմանում բարձր ճնշման, թե այնպիսի գործիքներ, որոնց գործողությունները հիմնվում են զանազան մետաղների ոչ միատեսակ էլեկտրական դիմադրողության վրա։ Բացի դրանից, դժվար է ստուգել այս ճանապարհով ստացվող արդյունքները։

Իսկ ներկա դեպքում նավապետ Նեմոն ինքն էր իջնում մինչև հարկավոր խորություն և ջրի տարբեր շերտերում ջերմաչափը միանգամայն ճիշտ ու անվիճելի արդյունքներ էր տալիս։

Այսպիսով, ջրասույզ լինելով մերթ լիքը պահամանների և մերթ թեքվող ղեկի շնորհիվ, նավապետ Նեմոն հեռզհետե հասնում էր երեք, չորս, հինգ, յոթ, ինը և տասը հազար մետր խորության։ Վերջնականապես նա եկավ այն եզրակացության, որ բոլոր լայնությունների տակ, հազար մետրից ավելի խորը ջրի բարեխառնությունը միշտ կազմում է չորս և կես աստիճան ըստ Ցելսիուսի։

Ես մեծագույն հետաքրքրությամբ հետևում էի այդ ուսումնասիրություններին։ Հաճախ ինքս ինձ հարց էի տալիս, թե նավապետ Նեմոյի ինչի՞ն են պետք այդ գիտական հետազոտությունները։ Մի՞թե նա կարծում է, որ իր նմանները կարող են օգուտ տալ մարդկությանը։ Դա այնքան էլ հավանական չէր, քանի որ, վաղ թե ուշ, նրա աշխատանքներն իր հետ միասին պետք է ընկղմվեին որևէ հեռավոր ծովի խորքերը։ Գուցե նա ուզում էր իր գիտողությունների արդյունքները հանձնել ի՞նձ։ Այդ դեպքում պետք էր ենթադրել, որ նա մտադրվում է որևէ չափով սահմանափակել «Նաուտիլուսում» իմ գտնվելու ժամկետը։

Դժբախտաբար առայժմ հիմք չկար այդպես մտածելու։

Այսպես թե այնպես, նավապետ Նեմոն ինձ հաղորդեց այն արդյունքները, որ նա ստացել է երկրագնդի կարևորագույն ծովերում ջրի խտությունն ուսումնասիրելուց։ Նրա

սաածներից ես եկա որոշ եզրակացության, որը ոչ մի կերպ և ոչնչով կապված չէ գիտության հետ։

Այդ տեղի ունեցավ Հունվարի 15-ի առավոտյան։ Ես ու Նավապետ Նեմոն քայլում էինք «Նաուտիլուսի» տախտակամածի վրա, և նա անսպասելի հարցրեց ինձ, թե արդյոք գիտե՞մ, որ ծովի ջուրը զանազան տեղերում զանազան խտություն ունի։ Ես պատասխանեցի, թե չգիտեմ, ապա ավելացրի, որ այդ հարցի նկատմամբ գիտությունը ստուգված տվյալներ չունի։

— Այդ ուղղությամբ ես ինքս եմ հետազոտություն կատարել,— ասաց Նավապետ Նեմոն,— և երաշխավորում եմ դրա ճշտությունը։

— Շատ գեղեցիկ,— պատասխանեցի ես,— սակայն «Նաուտիլուսը» մի առանձնացած, փոքրիկ աշխարհ է և նրա գիտնականների հայտնագործությունները երբեք չեն հասնի երկրագնդի բնակիչներին։

— Դուք իրավացի եք, պրոֆեսոր,— մի փոքր մտածելուց հետո ասաց Նավապետ Նեմոն,— իսկապես որ «Նաուտիլուսը» մի առանձնացած, փոքրիկ աշխարհ է։ Նա նույնքան հեռու է երկրից, որքան այն մոլորակները, որ երկրի հետ միասին պտտվում են արևի շուրջը։ Եվ ինչպես երկրում չեն իմանա Սատուրնի կամ Յուպիտերի գիտնականների աշխատանքի մասին, այնպես էլ անհայտ կմնան «Նաուտիլուսի» գիտնականների աշխատությունները։ Բայց ես կարող եմ իմ դիտողությունների արդյունքը հաղորդել ձեզ, քանի որ ձեր բախտը պատահմամբ կապվեց «Նաուտիլուսի» բախտի հետ։

— Ես ուշադրությամբ լսում եմ ձեզ, Նավապետ։

— Իհարկե ձեզ հայտնի է, պարոն պրոֆեսոր, որ ծովի ջուրը շատ ավելի խիտ է, քան գետերի, լճակների և այլ ջրերը։ Սակայն այդ խտությունը միատեսակ չէ։ Արդարև, եթե ոչ-աղի ջրի խտությունն ընդունենք մեկ միավոր, ապա Ատլանտյան օվկիանոսի ջրերինը կլինի մեկ ամբողջ քսանվեց հաղարերորդական։ Միջերկրական ծովի ջրերի խտությունը հավասար է...

«Հը՛մ,— մտածեցի ես,— նա եղել է նաև Միջերկրական ծովում»։

— ...մեկ ամբողջ երեսունմեկ հազարերորդականի, Հունիական ծովի ջրերի խտությունը՝ մեկ ամբողջ տասնութ հազարերորդականի և Ադրիատիկ ծովի խտությունը՝ մեկ ամբողջ քսանինը հազարերորդականի։

Պարզ է, որ «Նաուտիլուսը» եղել է երկրագնդի ամենաբանուկ ծովերում։ Սրանից ես եկա այն եզրակացության, որ երբևէ, գուցե և շուտով, նա կմոտենա ավելի քաղաքակիրթ երկրներին։ Սա մտածեցի, որ այս նորությունը կուրախացնի Նեդին։

Հաջորդ օրերի ընթացքում մենք միասին կատարեցինք մի շարք հետազոտություններ, որոնց նպատակն էր պարզել, թե զանազան խորություններում ջուրը որչափ աղ է պարունակում, որչա՞փ է անցկացնում էլեկտրականությունը, ի՞նչ գույնի է լինում, որքա՞ն է թափանցիկ և այլն։ Այդ ամբողջ ժամանակ ինձ ապշեցնում էր նավապետ Նեմոյի զարմանալի հնարամտությունը, որի հետ կարող էր մրցել միայն նրա քաղաքավարի վերաբերմունքը դեպի ինձ։ Հետազոտությունները կատարելուց հետո նա կրկին անհետացավ, ու ես դարձյալ մենակ մնացի ստորջրյա նավում։

Հունվարի տասնվեցին «Նաուտիլուսը» կարծես քնեց ծովի մակերևույթից մի քանի մետր ներքև։ Էլեկտրական մեքենաները կանգ առան, և այնուհետև նավը շարժվում էր միայն ջրի հոսանքի ուղղությամբ։ Ես ենթադրում էի, որ մեքենաները կանգ են առել ընթացիկ մանր վերանորոգման համար, որի անհրաժեշտությունը բխում էր վերջերս կատարված երկարատև ճանապարհորդությունից, մանավանդ որ այդ ճանապարհորդությունը գգալի արագությամբ էր կատարվել։

Այդ օրը ես ու իմ ընկերներն ականատես եղանք մի հետաքրքիր երևույթի։ Սրահի լուսամուտների փեղկերը բացվեցին, և որովհետև «Նաուտիլուսի» լուսարձակը չէր գործում, իսկ թանձր, փոթորկաբեր ամպերով ծածկված երկնքից քիչ լույս էր անցնում ջրի ստորին շերտերը, ուստի մենք շրջապատված էինք կիսախավարով։

Ես դիտում էի տարօրինակ տեսք առած ծովը։ Հանկարծ «Նաուտիլուսի» շուրջը պայծառ լույս տարածվեց։ Սկզբում ես կարծեցի, թե էլեկտրական լուսարձակն է գործում։ Սա-

կայն իմ ենթադրությունը սխալ էր, ինչպես այդ ցույց տվեց իմ ուշադիր դիտողությունը։

Մովի հոսանքը «Նաուտիլուսը» տարել էր ջրի ֆոսֆորացնող շերտը, որի արձակած լույսը շրջակա խավարի հանդեպ շափազանց պայծառ էր թվում։ Այդ լուսարձակումն առաջ էր եկել անթիվ ու անհամար մանրագույն, լուսավառվող կենդանիներից, որոնց արձակած լույսն է՛լ ավելի էր ուժեղանում արտացոլվելով սատրջրյա նավի մետաղյա արտաքինի վրա։ Շողշողուն ծովում ես նկատեցի լույսի անակնկալ բռնկումներ, որոնք հիշեցնում էին թեժ վառարանում հալված արճիճի փայլը։ Այդ բռնկումների շնորհիվ ֆոսֆորացած շերտերի մի մասը խավար էր թվում։ Ոչ, այդ լույսը բոլորովին նման չէր մեր լուսարձակի անդորր ճառագայթման։ Այդ լույսի մեջ ուժ և շարժում էր զգացվում։ Իսկույն կարելի էր նկատել նրա առանձնահատկությունը։

Հիրավի, դա ուրիշ բան չէր, եթե ոչ անհամար քանակությամբ ծովային ինֆուզորիաների կուտակում, որոնք նման էին թատրանցիկ դոնդողի գնդակներին և թելանման շոշափուկներ ունեին։ Երեսուն խորանարդ սանտիմետր ջրի մեջ այդ մանրագույն, ամենապարզ էակներից գտնվում է առնվազն քսանհինգ հազար հատ։ Նրանց լուսատվությունն ավելի է սաստկանում շնորհիվ այն փայլի, որ արձակում են medուզաները, սատրիաները, աուրելիաները և այլ ֆոսֆորացնող զոոֆիտները, որոնք ներծծում են ծովի ջրում փտող օրգանական նյութերի, գուցե և ձկների արտաթորած լորձունքը։

Մի քանի ժամ «Նաուտիլուսը» լողում էր այդ շողշողուն ջրերում։ Մենք է՛լ ավելի հիացանք, տեսնելով, թե ինչպես սալամանդրների պես այդ լույսերում վազվզում են ծովային մեծ կենդանիները։ Այդ սառը կրակներում ես տեսա անխոնջ լարախաղաց-դելֆիններ ու երեք մետր երկարությամբ սուսերակիրներ, որոնց հսկայական սրերը մի քանի անգամ դիպան սրտիս լուսամուտին։ Հետո երևացին ավելի մանր ձկներ, պանապան տեսակ թիկնեղջյուրներ, թյունիկներ և հարյուրավոր այլ կենդանիներ։

Ինչպիսի՜ արտառոց հմայք ուներ այդ տեսարանը։ Հնարավոր է, որ մթնոլորտային պայմաններն ավելի էին ուժե-

զացնում ինֆուզորիաների տարածած լույսը։ Գուցե ծովի վրա փոթորի՞կ կար։ Բայց մի քանի մետր խորության տակ, ուր լողում էր «նաուտիլուսը», փոթորիկն անզոր էր, և մենք լողում էինք անդորր ջրերում։

Այսպես մենք հազիվ նկատելի շարժվում էինք նորանոր հրաշքներով շրջապատված։ Կոնսելը դիտում էր մեծագույն ուշադրությամբ և անվերջ դասակարգում նորանոր զոոֆիտները, հոդվածոտանիները, կակղամորթներն ու ձկները։ Օրերն անցնում էին արագ, ու ես էլ չէի պահում՝ դրանց հաշիվը։ Հետևելով իր սովորություններին, Նեդն աշխատում էր բազմապան ուտելիքներ մատակարարել մեզ։

Մենք, ինչպես խխունջներ, չէինք հեռանում մեր խեցիներից։ Անձնական փորձից ես համոզվեցի, որ այնքան էլ դժվար չէ խխունջ լինելը։

Այսպես ուրեմն, մենք ընտելացանք մեր ապրելակերպին, մեր կյանքը համարում էինք թեթև ու հաճելի և ուղղակի մոռացել էինք, որ երկրագնդի վրա կյանքը բոլորովին այլ կերպ է ընթանում։ Սակայն անսպասելի մի դեպք մեզ ստիպեց գիտակցել իրականությունը։

Հունվարի տասնութին «նաուտիլուսը» գտնվում էր 105° երկարության և 15° հարավային լայնության տակ։ Եղանակը փոթորկաբեր էր, լեռնանում էին ծովի ալիքները։ Արևելքից փչում էր սաստիկ, գրեթե մրրկի չափ ուժեղ քամի։ Մանրաչափը, որ մի քանի օր շարունակ ճնշման ցածրաստիճաններ էր ցույց տալիս, մոտալուտ փոթորիկ էր գուշակում։

Ես տախտակամած բարձրացա այն րոպեին, երբ նավապետի օգնականը դիտողություններ էր կատարում։ Ես սպասում էի, որ նա ըստ սովորության կարտասանի իր խորհրդավոր ֆրազը։ Սակայն այդ օրը նա արտասանեց բոլորովին մի ուրիշ, նույնքան անհասկանալի ֆրազ։ Դրանից անմիջապես հետո նավապետ Նեմոն դուրս եկավ տախտակամած և հեռադիտակը դնելով աչքերին սկսեց դիտել հորիզոնը։

Մի քանի րոպե նավապետը կանգնած էր անշարժ, հեռադիտակն ուղղած հորիզոնի ինչ-որ մի կետի։ Հետո իջեցրեց հեռադիտակն ու ինձ համար անհասկանալի մի քանի խոսք փոխանակեց օգնականի հետ։

Վերջինս ինչ-որ պատճառով անհանգստացած էր ու դժվարությամբ էր թաքցնում իր հուզումը։ Նավապետ Նեմոն ավելի լավ էր տիրապետում ինքն իրեն և սառնասրտություն էր պահպանում։ Ինձ թվաց, թե նա նկատողություն արավ օգնականին, իսկ վերջինս հուզված՝ ինչ-որ բան հայտարարեց կամ խոստում տվեց։

Ես գոնե այդպիսի տպավորություն ստացա նրանց ձայնից ու շարժումներից։

Ես մեծագույն ուշադրությամբ դիտում էի հորիզոնի այն կետը, ուր նայում էին նավապետ Նեմոն և իր օգնականը, բայց ոչինչ չէի տեսնում։ Հեռվում ծովն ու երկինքը միացած էին և կազմել էին աղեղնաձև մի գիծ, ուր ոչինչ չէր երևում։

Այդ ժամանակ նավապետ Նեմոն քայլում էր տախտակամածի մի ծայրից մյուսը, առանց ինձ նայելու, կամ գուցե և չնկատելով ինձ։ Նա քայլում էր ինքնավստահ, գուցե և սովորականից մի քիչ ավելի անհամաչափ։

Երբեմն նա կանգ էր առնում և ձեռները կրծքին խաչած՝ դիտում ծովը։

Ի՞նչ էր տեսնում նա չքոյին վիթխարի անապատում։ «Նաուտիլուսը» գտնվում էր մոտակա ցամաքից ընդամենը մի քանի մղոն հեռավորության վրա։

Նավապետի օգնականը նորից հեռադիտակը դրեց աչքերին և դիտեց միևնույն ուղղությամբ։ Հետո նա սկսեց ետ ու առաջ քայլել տախտակամածում։ Հանկարծակի կանգ էր առնում, ուրը խփում էր տախտակամածին ու վերստին ետ ու առաջ քայլում։ Նրա հուզմունքն է՛լ ավելի աչքի էր ընկնում, երբ ես տեսնում էի նավապետի սառնասրտությունը։

Այդ րոպեին օգնականը նորից ձայն տվեց իր պետին։ Վերջինս կանգ առավ և հեռադիտակն ուղղեց դեպի նույն կետը։ Բավական երկար ժամանակ դիտում էր նա։ Միշտ սառնասիրտ այդ մարդկանց վարմունքը ինձ ստիպեց մտնել սրահ և վերցնել մի հեռադիտակ, որով միշտ օգտվում էի։ Այնուհետև, վերստին դուրս գալով տախտակամածից, ես նստեցի այնտեղ, ուր զետեղված էր լուսարձակը, և սկսեցի հեռադիտակով դիտել հորիզոնը։ Սակայն հենց այդ րոպեին հեռադիտակը խլեցին ինձնից։

Անմիջապես ետ նայեցի։ Իմ առջև կանգնած էր նավապետ Նեմոն, որը դարձել էր ոնճանաշելի։ Նրա դեմքը փոխվել էր։ Նրա աչքերը փայլուն էին, բայց մռայլ։ Բերանը կիսաբաց էր, երևում էին ատամները։ Նրա լարված դրությունը, սեղմված բռունցքները, ամբողջ կերպարանքը, այս ամենը ցույց էր տալիս, որ նա ամբողջովին համակված է մեծագույն ատելությամբ ու ցասումով։ Նավապետը չէր շարժվում։ Իմ ձեռքից խլած հեռադիտակն ընկած էր նրա ոտների տակ։

Մի՞թե ես էի այդ բարկության պատճառը։ Գուցե այդ անհասկանալի մարդը երևակայում էր, որ ես մի ինչ-որ գաղտնիք եմ բաց արել, մի գաղտնիք, որը չպետք է իմանար «Նաուտիլուսի» դերին։

Բայց ո՛չ, ես չէի նրա այդ ցասման պատճառը։ Նավապետը նույնիսկ չէր նայում ինձ։ Նրա հայացքը մեխվել էր հորիզոնի նույն կետին։

Սակայն նավապետ Նեմոն վերատին տիրապետեց իր զգացումներին։ Նրա այլայլված դեմքը հանգստացավ, և այդ դեմքի վրա արտահայտվեց սովորական սառնասրտությունը։ Անհասկանալի լեզվով նա մի քանի խոսք ասաց իր օգնականին և ապա դարձավ ինձ.

— Պարոն պրոֆեսոր,— ասաց նա հաստատուն տոնով,— ես պետք է պահանջեմ, որ դուք կատարեք մեր պայմանագրի կետերից մեկը։

— Այսի՞նքն, նավապետ։

— Դուք և ձեր ուղեկիցները պետք է փակված մնաք այնքան, մինչև որ ես հնարավոր համարեմ վերատին ազատ թողնել ձեզ։

— Ես ստիպված եմ ենթարկվել ձեր հրամանին,— պատասխանեցի ես, աչքերս հառած նրա վրա,— սակայն թույլ տվեք մի հարց...

— Ո՛չ, թույլ չեմ տալիս։

Վիճելուց օգուտ չկար, քանի որ ես անզոր էի դիմադրել նավապետին։

Ստիպված եղա ենթարկվել։

Մտա Նեդ Լենդի և Կոնսելի զբաղեցրած նավասենյակը և նրանց հաղորդեցի նավապետի հրամանը։

Բոլոր ընթերցողն ինքը պատի, թե իմ հաղորդած լուրն ինչպիսի ապալորություն թողեց կանադացու վրա։ Սակայն մեզ երկար ժամանակ չէր մնում խոսելու։ Զորս նավաստի արդեն մեզ սպասում էին դուռն մոտ և տարան հենց այն նավասենյակը, ուր մենք բանտարկվել էինք «Նաուտիլուսում» գտնվելու առաջին օրը։ Նեդ Լենդը փորձեց բողոքել, սակայն պատասխանի փոխարեն հենց նրա քթի առաջ փակվեց դուռը։

— Արդյոք պարոնը չի՞ ասի մեզ, թե այս բոլորն ինչ է նշանակում,— հարցրեց Կոնսելը։

Ես ընկերներիս պատմեցի այն ամենն, ինչ որ տեղի էր ունեցել տախտակամածում։ Նրանք նույնքան զարմացան, որքան և ես, բայց ես չկարողացա ավելի պարզ տեղեկություններ հաղորդել։

Ես ընկա ծանր մտորումների մեջ։ Նավապետ Նեմոյի դեմքի տարօրինակ արտահայտությունը չէր հեռանում աչքերիցս։ Ես այնպիսի զրույցի հասա, որ չէի կարողանում կապակցել երկու միտք, ամենաանհիմն ենթադրություններ էի անում։ Հանկարծ Նեդ Լենդի բացականչությունը սթափեցրեց ինձ։

— Նայեցեք, նախաճաշը դրված է սեղանին։

Իսկապես, կերակուրներն արդեն սեղանի վրա էին։ Պարզ էր, որ այդ մասին կարգադրություն էր արել նավապետ Նեմոն, միևնույն ժամանակ հրամայելով արագացնել «Նաուտիլուսի» ընթացքը։

— Արդյոք պարոնը թույլ կտա՞, որ ես մի խորհուրդ տամ նրան։— հարցրեց Կոնսելը։

— Իհարկե, բարեկամս,— պատասխանեցի ես։

— Ես պարոնին խորհուրդ եմ տալիս նախաճաշել։ Զգուշությունն էլ հենց այդ է պահանջում։ Չէ՞ որ հայտնի չէ, թե ինչ է լինելու։

— Դու իրավացի ես, Կոնսել։

— Ավա՜ղ,— հառաչեց Նեդ Լենդը,— մեզ մատուցել են միայն ձկնեղեն, իսկ մեր մթերապաշարից ոչինչ չկա...

— Լավ, Նեդ, հապա ի՞նչ կասեիք, եթե մեզ ուտելու ոչինչ չտային։

Կանադացին չիմացավ ինչ պատասխանի։

Մենք սեղան նստեցինք։ Լուռ նախաճաշում էինք։ Ես քիչ կերա։ Կոնսելն աշխատում էր շատ ուտել, իսկ Նեդ Լենդը, շնայելով իր դժգոհության, կուլ էր տալիս այն ամենն, ինչ որ դրված էր իր առաջ։ Նախաճաշից հետո մեղանից ամեն մեկը նստեց մի անկյունում։

Այդ բոպեին լույսը հանգավ, և մենք մնացինք անթափանցելի խավարում։ Նեդ Լենդն անմիջապես սկսեց խոմփացնել։ Ինձ զարմացրեց այն, որ շուտով Կոնսելն էլ հետևեց նրա օրինակին։ Ինքս ինձ հարց էի տալիս, թե այդ ինչի՞ց էր, որ իմ ընկերները հանկարծ այդպես քնեցին, բայց զգացի, որ քունն ինձ էլ է հաղթահարում։ Աշխատում էի չփակել աչքերս, բայց նրանք փակվեցին անկախ իմ կամքից։ Կես քուն էի, կես արթուն և աչքերիս ինչ-որ տեսարաններ էին երևում։ Պարզ էր, որ մեզ մատուցած ուտելիքներին ինչ-որ քնաբեր նյութեր էին խառնված։

Դուրս էր գալիս, որ նավապետ Նեմոն չէր բավականացել մեզ խավար զնդանում բանտարկելով, այլ նրան հարկավոր էր, որ մենք քնեինք, որպեսզի դրանով մեզանից թաքցներ իր գործողությունները...

Կես քուն կես արթուն ես լսեցի փակվող դռնակների ձայնը։ Նավն օրորվում էր ծովի վրա տեղի ունեցող թեթև աղմկոծությունից, բայց այդ շուտով դադարեց։ Ըստ երևույթին «Նաուտիլուսը» խորասուզվեց օվկիանոսի հավերժ հանգիստ խորքերը։

Այնուամենայնիվ հնարավորին չափ ես աշխատում էի չքնել։ Սակայն դա անկարելի էր։ Իմ շնչառությունը թուլացավ, և ես զգում էի, որ մահացու մի սարսուռ իմ ձեռքերից ու ոտքերից անցնում է դեպի սիրտս։ Այլևս անկարող էի բանալ աչքերս։ Ծանր մղձավանջներով լի քունը հաղթահարեց ինձ։ Ապա տեսիլքները չքացան, և ես կորցրի գիտակցությունս։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ

ԿՈՐԱԼՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԸ

Հետևյալ օրը, երբ վեր կացա, գլուխս սարսափելի ծանր էր։ Մեծ զարմանքով տեսա, որ գանվում եմ իմ սենյակում։

պարզ էր, որ ընկերներիս նույնպես քնած ժամանակ տարել են իրենց սենյակը։ Հետևապես նրանք ինձնից ավելի շատ բան չեն իմանա նախորդ գիշերվա դեպքերի մասին, և ինձ մնում էր միայն հուսալ, որ հետագայում մի կերպ կպարզվի գաղտնիքը։

Ես ուզում էի դուրս գալ իմ սենյակից։ Արդյոք վերատին ազա՞տ էի ես, թե՞ դարձյալ պետք է ինձ գերի համարեի։ Բանից դուրս եկավ, որ բոլորովին ազատ եմ։ Դուռը բաց արեցի և քայլեցի դեպի տախտակամածը տանող սանդուղքը։ Նախորդ օրը փակված դռնակը կրնկի վրա բաց էր։

Ես դուրս եկա տախտակամած։

Նեդ Լենդն ու Կոնսելն այնտեղ ինձ էին սպասում։ Ես նրանց հարց ու փորձ արի։ Ոչինչ չգիտեին։ Երեկ քնել էին ծանր քնով, երբեք էլ չէին տեսել և զարթնել էին միայն այսօր, իրենց սենյակում։

«Նաուտիլուսը» պահպանում էր իր սովորական անդորրությունն ու սովորական խորհրդավորությունը։ Նա լողում էր ծովի վրա, շտապելու արագությամբ։ Կարծես թե նավում ոչինչ չէր փոխվել։

Նեդ Լենդը գլուխս էր հորիզոնը։ Ծովի վրա ոչինչ չէր երևում, նույնիսկ կանադացու սուր աչքերը հեռվում չէին տեսնում ոչ առագաստ, ոչ շոգենավի ծխնելույզ, ոչ էլ ցամաք։ Արևմուտքից փչող ուժեղ քամին ալեկոծում էր ծովը։ «Նաուտիլուսը» զգալիորեն օրորվում էր։

Օդի պաշար վերցնելով, «Նաուտիլուսը» ջրասույզ եղավ տասնհինգ մետրի չափ, ըստ երևույթին այն հաշվով, որ հարկավոր դեպքում կրկին բարձրանա ծովի երեսը։ Օգոստոսի 19-ին այդ կրկնվեց մի քանի անգամ։ Նավապետի օգնականն ամեն անգամ բարձրանում էր տախտակամած և այնտեղ ասում իր սովորական ֆրազը։

Նավապետ Նեմոն չէր երևում։ Նավորդներից ես տեսա միայն սպասավորին, որ պահպանում էր իր սովորական հանդարտությունը, լուռ և ճշտապահությամբ ուտելիք մատուցում ինձ։

Կեսօրվա ժամը մոտ երկուսին նավապետ Նեմոն մտավ դահլիճ, ուր ես կարգի էի բերում իմ գրանցումները։ Ես բա-

ընեցի նրան։ Նավապետն ինձ պատասխանեց գլխի հազիվ նկատելի շարժումով և ոչ մի բառ չասաց։ Ես շարունակեցի իմ աշխատանքը, հույս ունենալով, որ նա որևէ բան կպատմի երեկվա դեպքերի մասին։ Սակայն նա այդպես չարեց։

Ես գաղտագողի նայեցի նրան։ Նա հոգնած մարդու տպավորություն էր թողնում։ Աչքերը կարմրել էին, կարծես անքնությունից։ Դեմքն արտահայտում էր խոր տխրություն, նույնիսկ ցավ։

Նա քայլում էր սենյակում, նստում բազմոցին, նորից վեր կենում, վերցնում հենց առաջին պատահած գիրքը և մի կողմ գցում, մոտենում էր պարագաներին ու դիտում, սակայն չէր կատարում սովորական գրանցումները։ Թվում էր, որ նա մի վայրկյան անգամ չի կարող հանգիստ նստել տեղում։

Վերջապես, նա մոտեցավ ինձ և հարցրեց.

— Արդյոք դուք բժիշկ չե՞ք, պարոն Արոնաքս։

Ես այնքան քիչ էի նախապատրաստված այդ հարցին, որ զարմացած նայեցի նավապետին, առանց պատասխանելու։

— Ես հարցնում եմ, դուք բժիշկ չե՞ք։ Չէ՞ որ ձեր ընկերակից բնագետները բժշկական կրթություն են ստացել...

— Ես իսկապես որ եղել եմ կլինիկայի բժիշկ և հրահանգիչ, մինչև թանգարան մտնելս երկար տարիներ զբաղվել եմ բժշկական պրակտիկայով,— ասացի ես։

— Հրաշալի է,— ասաց նավապետը։

Ըստ երևույթին իմ պատասխանն իրոք ուրախացրեց նրան։ Սակայն ես դեռ չգիտեի, թե նա ինչ է ուզում ինձանից և սպասում էի նոր հարցերի։ Որոշեցի պատասխանել այդ հարցերին, հաշվի առնելով դրանց բնույթը։

— Պարոն պրոֆեսոր,— կարճատև լռությունից հետո շարունակեց նավապետը,— արդյոք դուք չե՞ք համաձայնվի բժշկական օգնություն ցույց տալ իմ նավաստիներից մեկին։

— Մի՞թե այստեղ հիվանդ կա։

— Այո։

— Ես պատրաստ եմ հետևել ձեզ։

— Գնանք։

Խոստովանում եմ, որ սիրտս արագ խփում էր հուզմունքից։ Չգիտեմ ինչու, բայց իսկույն ենթադրեցի այն

միտքը, թե ինչ-որ մի կապ կա այդ նավաստու հիվանդության ու անցյալ գիշերվա դեպքերի միջև, և այդ գաղտնիքն ինձ ավելի շատ էր հետաքրքրում, քան հիվանդը։

Նավապետ Նեմոն ինձ առաջնորդեց «Նաուտիլուսի» նավախելը և բացեց նավաստիների սենյակի մոտ գտնվող մի դուռ։

Մենք մտանք մի սենյակ, որտեղ, մահճակալի վրա պառկած էր առնական դեմքով մի մարդ, իսկական անգլո-սաքս։

Ես թեքվեցի դեպի այդ մարդը։ Նա վիրավոր էր և ոչ թե հիվանդ։

Նրա գլուխը փաթաթված էր արյունոտ վիրակապով։ Գլխի տակ երկու բարձ էր դրված։

Ես քանդեցի վիրակապը։ Վիրավորը լայն բացված աչքերով նայում էր ինձ, բայց չէր խանգարում վերքը բանալիս և նույնիսկ ոչ մի անգամ չհառաչեց։

Վերքը սարսափելի էր։ Գանգը խոցվել էր մի ինչ-որ բութ գործիքով, և երևում էր ուղեղը։ Ուղեղի հյուսվածքները լրջորեն վնասվել էին։ Ուղեղի մոխրագույն զանգվածի վրա չորացած արյան կաթիլները սիռոցի վրա թափված գինու հետքերն էին հիշեցնում։ Այսպես ուրեմն, հիվանդի թե ուղեղն էր ցնցվել և թե ներքին արյունահոսություն էր եղել։ Դժբախտը հաղիվ էր շնչում։ Երբեմն նրա դեմքը ցնցվում էր ջղաձգաբար։ Իմ առջև ուղեղի բորբոքման և շարժման կենտրոնների կսմթվածի տիպիկ մի դեպք էր։

Հիվանդի զարկերակն ընդմիջումներով էր խփում։ Ձեռքերն ու ոտքերն արդեն սկսել էին սառչել։ Ես տեսնում էի, որ մահը մոտենում է և նրա դեմ ոչինչ չի կարելի անել։

Ես վերստին կապեցի վերքը և դիմեցի նավապետ Նեմոյին։

— Ինչի՞ց է վիրավորվել այս մարդը,— հարցրի։

— Մի՞թե այդ էական է,— խուսափողական պատասխան տվեց նա,— «Նաուտիլուսը» ցնցվեց, որից մեքենայի լծակը ջարդվեց և ընկավ այդ մարդու գլխին։ Սակայն ասացեք, ի՞նչ կարծիք ունեք նրա դրության մասին։

Ես տատանվեցի։

— Կարող եք խոսել,— ասաց նավապետ Նեմոն, այս մարդը ֆրանսերեն չգիտի։

Ես մի անգամ էլ նայեցի հիվանդին և ասացի։

— Այս մարդը երկու ժամից ավել չի ապրի։

— Ոչինչ չի՞ կարող նրան փրկել։

— Ոչինչ։

Նավապետ Նեմոն չղաձգաբար սեղմեց բռունցքը։ Նրա աչքերից հոսեցին արցունքները։ Ինձ այնպես թվաց, թե դրանք լացի համար չեն ստեղծված։

Մի քանի րոպե ես անընդհատ նայում էի հիվանդին։ Նկատվում էր, որ նա շուտով պետք է մեռնի։ Էլեկտրական պաղ լույսն ավելի պարզ էր դարձնում նրա գունատությունը։ Ես դիտում էի նրա խելացի դեմքը, որ ակոսված էր վաղաժամ կնճիռներով։ Այդ կնճիռներն աղքատության և դժբախտ կյանքի անխուսափելի հետևանքն էին։ Ես ուզում էի այդ կյանքի գաղտնիքն իմանալ վերջին բառերից, որ արտասանելու էին սառչող շրթունքները։ Սակայն նավապետ Նեմոն ինձ ասաց.

— Դուք ազատ եք, պարոն պրոֆեսոր։

Ստիպված էի հեռանալ։

Նավապետին թողի մեռնողի մահճի մոտ և այդ դեպքից ցնցված, վերադարձա իմ սենյակը։ Ամբողջ օրվա ընթացքում ծանր զգացումները ճնշում էին ինձ։ Գիշերը վատ քնեցի։ Քնիս մեջ կարծես լսում էի հեռավոր լացի և ազոտ մեղեդիների ձայնը։

Հետևյալ առավոտյան արշալույսին ես բարձրացա տախտակամածը։ Այդ օրը նավապետ Նեմոն կանխեց ինձ. նա արդեն այնտեղ էր։ Ինձ տեսավ թե չէ, մոտեցավ ու ասաց.

— Պարոն պրոֆեսոր, ուզո՞ւմ եք այսօր մասնակցել ստորջրյա զբոսանքին։

— Իմ ընկերները նույնպե՞ս կարող են մասնակցել։

— Այո, եթե ցանկանան։

— Շնորհակալությամբ ընդունում եմ ձեր առաջարկը։

— Այդ դեպքում հագեք զրահազգեստը։

Մեռնողի կամ մեռածի մասին—ոչ մի խոսք։ Ես մոտ նեդ Լենդի և Կոնսելի մոտ և հայտնեցի նրանց նավապետ

Նեմոյի հրավերը։ Կոնսելն ուրախությամբ համաձայնվեց, կանադացին նույնպես դեմ չէր այս անգամ ստորջրյա զբոսանքի գնալու։

Առավոտյան ժամը ինների կեսին մենք հագանք զրահազգեստները, զինվեցինք շնչառության համար անհրաժեշտ պահամաններով և էլեկտրական լապտերներով։ Երկու դռները հերթով բացվեցին, և մենք նավապետ Նեմոյի ու տասներկու նավաստիների ուղեկցությամբ իջանք տասը մետր խորությամբ հատակը, ուր հանգստանում էր «Նաուտիլուսը»։

Սկզբում հատակը խորանում էր աստիճանաբար, հետո հասանք մի կետի, որտեղից սկսվում էր երեսուն մետրի չափ թեք զառիվայր։ Մենք իջանք մի հովիտ, որի հատակը խիստ տարբերվում էր խաղաղ օվկիանոսում մեր տեսած հատակից։ Այստեղ չկային ոչ վարդագույն ավազ, ոչ ստորջրյա փոքրիկ մարգագետիններ և ոչ էլ ծովային անտառներ։ Ես իսկույն նկատեցի այն վայրերի առանձնահատկությունները, ուր մեզ տանում էր նավապետ Նեմոն։ Այդ կորալների աշխարհն էր։

Զոոֆիտների բաժնում, ալցոնիարիաների դասում գոյություն ունի գորգոնների ջոկատը, որը բաղկացած է երեք ընտանիքներից՝ գորգոններից, իզիաներից ու կորալներից։ Վերջին ընտանիքին են պատկանում կորալները, բնության ստեղծած այդ հետաքրքիր երևույթները, որ գիտնականները վերագրել են բնության երեք թագավորություններին՝ հանքային, բուսական ու կենդանական աշխարհին։ Հնագարյան մրջկանց այդ դեղը և ժամանակակից կանանց թանկագին զարդարանքը միայն 1694 թվականին մարսելցի Պեյսոնելի կողմից վերջնականապես վերագրել են կենդանական աշխարհին։ Կորալը մանրագույն կենդանիների գաղութ է, որոնք պոլիպների քարքարոտ, փխրուն զանգված են կազմում։ Այդ պոլիպներն ունեցել են մի ընդհանուր նախնի, որ նրանց առաջ է բերել բողբոջման միջոցով։ Ապրելով ընդհանուր կյանքով, գաղութի յուրաքանչյուր անդամ միևնույն ժամանակ ունի իր մասնավոր կյանքը։

Ես կարդացել էի այդ հետաքրքիր զոոֆիտների վերաբերյալ վերջին աշխատությունները և ինձ համար չափազանց

հետաքրքիր էր այցելել քարացած կորալլե ծառերի այդ անտառներից մեկը, այն ծառերի, որ բնությունն աճեցրել է օվկիանոսի խորքում։

Մենք դործի դրեցինք Ռումկորֆի ապարատները և քայլեցինք կորալլների նոր կառուցած պատի երկարությամբ։ Ժամանակի ընթացքում այդ պատը պետք է խաղաղ օվկիանոսը բաժանի Հնդկական օվկիանոսից։ Ճանապարհին մենք տեսնում էինք կորալլային ծառերի անտառներ։ Միայն թե ծառերի նմանվող այդ բույսերը ցամաքային ծառերից տարբերվում էին նրանով, որ աճում էին վերևից ներքև, կպչելով ժայռերին։

Մեր լապտերների լույսը, ընկնելով դույնզդույն ոստերի վրա, ապշեցուցիչ պատկերներ էր առաջացնում։ Երբեմն ինձ թվում էր, որ այդ քարացած նյութերն օրորվում են ջրի շարժումից։ Ես ուզում էի պոկել քնքուշ, նուրբ շոշափուկներ ունեցող թարմ պսակները, որ բացված էին վարթամ ծաղկի նման կամ նոր էին սկսում բացվել։ Թեթև, շափաղանց արագաշարժ ձկնիկները սլանում էին այս ու այն կողմ, ինչպես թռչունների երամներ և դիպչում այդ պսակներին։ Բավական էր, որ ես ձեռքս պարզեի դեպի այդ կենդանի ծաղիկները, և արդեն անհանգստանում էր ամբողջ գաղութը։ Սպիտակ պսակներն արագությամբ թաքնվում էին իրենց կարմիր պատյաններում, մեր աչքերի առաջ թառամում էին ծաղիկները և ամբողջ գաղութը կարծես շորանում էր, քարացած դրություն ընդունում։

Ես առիթ ունեցա հանդիպելու ամենահաղվագյուտ զոոֆիտների մացառուտներին։ Կորալլային այս ծառաստանն իր գեղեցկությամբ չէր զիջում այն կորալլներին, որ հանվում են Միջերկրական ծովից, ֆրանսիական, իտալական ու աֆրիկյան ափերի մոտ։ Կորալլների գույնն արդարացնում է այն բանաստեղծական անունները, որ ակնագործները տալիս են նրանցից լավագույններին՝ «ալ-կարմիր ծաղիկ», «ալ-կարմիր փրփուր»։

Թվուտը հետզհետև խտանում էր և ավելի բարձր ծառեր էին հանդիպում։ Մեր առաջ ֆանտաստիկ ճարտարապետական կառուցվածք ունեցող երկար միջանցքներ էին բացվում։

նավապետ Նեմոն մեզ առաջնորդեց մի խավար, թեք միջանցքով, և մենք հետզհետե հասանք հարյուր մետր խորության։ Մեր լապտերների լույսն ուղղակի մոգական պատկերներ էր առաջացնում, ընկնելով այդ բնական կամարների ատամնաձև ցցվածքներին, կամ կարմիր բոցեր վառելով կամարների կախված մասերում, որոնք իրենց տեսքով կարծես ջահեր լինեին։

Այստեղ, կորալե ծառերի մեջ ես նկատեցի պոլիպների նաև ուրիշ, ոչ պակաս հետաքրքիր տեսակներ, որոնք ունեին հոդավոր ճյուղավորում, ապա կանաչ ու կարմիր կորալների մի քանի թփեր, արտաքուստ իսկական ջրիմուռներ, թեպետ սրանց կրացած հյուսվածքները բոլորովին քարացած էին։ Սակայն, ինչպես ասել է մի գիտնական, «կորալները թերևս այն սահմանն են, ուր կյանքը սկսում է արթնանալ իր քարացած նիրհից, բայց դեռ զուրկ է շարժունակությունից»։

Վերջապես, երկու ժամ քայլելուց հետո մենք հասանք մոտավորապես երեք հարյուր մետր խորության, այսինքն այն սահմանը, ուր վերջանում են կորալային գոյացումները։ Այնտեղ, սակայն, չկային կորալե ծառերի առանձին խմբեր և նոսր պուրակներ։ Դա մի խիտ անտառ էր, բաղկացած վիթխարի, քարացած ծառերից, որոնք մեկմեկու կապված էին պլյումարների, այդ գույնզգույն ծովային լիանաների նուրբ ծաղկեշղթաներով։ Մենք առանց կռանալու անցնում էինք նրանց կամարների տակից, որոնք կորչում էին խավարում, իսկ մեր ոտների տակ փռված էին տուբիպորների, աստղածաղիկների, մեանդրիններ, ֆունգիաների ու կարիոֆիլների փարթամ գորգերը։

Ինչպիսի՜ դյութիչ տեսարան։ Ափսոս, որ մենք անկարող էինք մեկմեկու հաղորդել մեր տպավորությունները։ Որքա՜ն ցավալի էր այդ անմոռանալի րոպեներին զգալ, որ գլուխդ գերի է ապակյա և մետաղյա սաղավարտում։ Ինչո՞ւ մենք չենք կարող ապրել ջրում, ինչպես այդ ձկները, որ նետի պես սլանում են մեր շուրջը, կամ ավելի լավ է ասել, երկկենցաղները, որոնք երկար ժամանակ կարող են լինել ջրի մեջ և ցամաքում, իրենց հավասարապես լավ զգալով թե օդում և թե ջրում։

Մինչ այս մինչ այն, նավապետ Նեմոն կանգ առավ։ Իմ ընկերները ու ես հետևեցինք նրա օրինակին։ Ես տեսա, թե ինչպես «Նաուտիլուսի» նավաստիները կիսաշրջանաձև շարք կազմեցին իրենց պետից մի քիչ դեպի ետ։ Ավելի մոտիկից նայելով, ես նկատեցի, որ նրանցից շորսի ուսերի վրա ինչ-որ երկարաձև առարկա էր դրված։

Մենք գտնվում էինք մի ընդարձակ մարգագետնի կենտրոնում։ Մարգագետինը բոլոր կողմերից շրջապատված էր կորալլների բարձր անտառով։ Մեր լապտերները երերուն, գունատ լույս էին սփռում հատակին, որտեղ այդ լույսից հակայական ստվերներ էին գոյանում։

Մարգագետնի շուրջը թանձր խավար էր տիրում և միայն տեղ-տեղ բռնկվում ու իսկույն հանգչում էին կարմրավառ կրակները։ Դրանք լապտերների ճառագայթներն էին, որ արտացոլվում էին կորալլներում։

Նեդ Լենդն ու Կոնսելը կանգնած էին իմ կողքին։ Մենք բոլորս նոր գլխի ընկանք, որ մեր ստորջրյա զբոսանքն ինչ-որ նպատակով է կատարվում։ Դիտելով հատակը, ես նկատեցի, որ տեղ-տեղ շարեշար թմբեր են երևում։ Թմբերի այդ շարքերի կանոնավորությունը ցույց էր տալիս, որ այնտեղ մարդկային աշխատանք է կատարված։

Նավապետ Նեմոն նշան արավ, և նավաստիներից մեկն անցավ առաջ, գոտուց հանեց քլունգը և սկսեց փոս փորել։

Այստեղ ես ամեն ինչ հասկացա։

Այդ մարգագետինը գերեզմանոց էր, նավաստու փորած փոսը՝ գերեզման, իսկ մյուս նավաստիների բերած երկարաձև առարկան՝ գիշերը մեռած մարդու մարմինը։

Նավապետ Նեմոն և նրա նավաստիները եկել էին այստեղ, որպեսզի իրենց ընկերոջը թաղեն այս եղբայրական գերեզմանոցում, օվկիանոսի անմատչելի և խորը հատակում։

Ես երբեք այդչափ չէի հուզվել։ Երբեք և ոչ մի տեսարան այդչափ չէր ցնցել ինձ։

Ես ուզում էի տեսնել, թե ինչ է կատարվում իմ առաջ և ոչ մի վայրկյան չէի կարողանում հայացքս հեռացնել այդ տեսարանից։

Փոսը հեռվից մեծանում էր, այն փորվում էր կորալլի

հատակում։ Քլունդի հարվածներից վախեցած ձկները այս ու այն կողմ էին վազում։ Ես լսեցի մի խուլ հարված և տեսա մի քանի կայծեր այն պահին, երբ քլունդը խփեց հատակում գտնվող կայծքարին։

Փոսը հետզհետե երկարանում էր ու լայնանում, մինչև որ բավականաչափ մեծացավ դիակը տեղավորելու համար։

Այդ ժամանակ մոտեցան դիակը բերողները։ Սպիտակ գործվածքով պատանած մարմինը դրին ջրով լցված գերեզմանը։ Նավապետ Նեմոն և իր նավաստիները, ձեռքերը կրծքերին խաչած՝ շրջապատել էին գերեզմանը։

Ես ու իմ ընկերները, այդ տեսարանից խորապես ցնցված, մի քայլ ետ գնացինք, որպեսզի չխանգարենք նրանց վիշտը։

Գերեզմանը ծածկեցին փոսից հանած կորալների բեկորներով և թմբին ուղիղ ձև տվին։

Երբ այդ արված էր, նավապետ Նեմոն և նրա բոլոր ուղեկիցները չոքեցին մի ծնկի վրա և բարձրացրին ձեռները, որպես վերջին հրաժեշտի նշան...

Սպա սգերթը ետ ճանապարհվեց դեպի «Նաուտիլուսը»։ Մենք կրկին անցանք կորալային անտառից, հետզհետե դեպի վեր բարձրացանք։

Վերջապես, հեռվում երևացին «Նաուտիլուսի» լույսերը։ Մենք քայլեցինք դեպի այնտեղ և ցերեկվա ժամը մեկին վերադարձանք նավը։

Փոխելով հագուստս, ես շտապեցի դեպի տախտակամածը, ամբողջովին անձնատուր եղած ծանր մտքերին, որոնք կապված էին իմ տեսած տխուր ծեսի հետ։

Շուտով տախտակամածը դուրս եկավ նաև նավապետ Նեմոն։ Ես հարցրի.

— Ուրեմն գիշերը մեռե՞լ էր այդ մարդը, ինչպես նախատեսել էի ես։

— Այո, պարոն պրոֆեսոր,— պատասխանեց նավապետը։

— Եվ հիմա նա քնել է վերջին քնով, իր շատ ընկերների մոտ, կորալային ստորջրյա գերեզմանոցում։

— Այո, նա քնել է այնտեղ, մոտացված լինելով բոլորից, բայց ո՛չ մեզանից...

Ու ձեռքերով դեմքը ծածկած, նավապետ Նեմոն փորձում էր խեղդել հեկեկանքը, բայց ապարդյուն։

Երկար լռելուց հետո նա ասաց.

— Այնտեղ, ջրի տակ, մի քանի հարյուր մետր խորությամբ սեղմվորված է մեր խաղաղ դերեզմանոցը...

— Եվ այնտեղ հանգիստ քնած են ձեր մեռելները, որոնք անմատչելի են շնաձկներին...

— Այո՛,— խուլ ձայնով պատասխանեց նավապետ Նեմոն,— անմատչելի են շնաձկներին և մարդկանց։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՆԴԿԱԿԱՆ ՕՎԿԻԱՆՈՍԸ

Այստեղ սկսվում է մեր ստորջրյա ճանապարհորդության երկրորդ շրջանի պատմությունը։ Առաջին շրջանն ավարտվեց կորալլային գերեզմանոցում եղած սրտաշարժ տեսարանով, որ այնքա՛ն ուժեղ տպավորություն թողեց ինձ վրա։

Օվկիանոսի անծայրածիր տարածություններում անցնում էր նավապետ Նեմոյի կյանքը, և նույն օվկիանոսը պատրաստել էր իր ամենախորը գաղտնարանները, որպեսզի ընդուներ նավապետի մարմինը, երբ նրա մեջ սառչեր կյանքի ջերմությունը։

Այնտե՛ղ, ջրերի խորքերում, ծովային ոչ մի հրեշ չէր կարող վրդովել «Նաուտիլուսի» բնակիչների, հանելուկային նավապետի բարեկամների և ընկերների հավերժական հանգիստը։ Մահվան գրկում նրանք սերտ կապված են մեկմեկու, այնպես, ինչպես եղել են կյանքում... Այնտեղ քնած են նրանք, անմատչելի են ծովային հրեշներին, «նաև մարդկանց», ինչպես ասաց նավապետ Նեմոն։

Միշտ նույն անփոփո՛խ, համառ անվստահությունը դեպի մարդկային հասարակությունը։

Ինձ այլևս չէին բավարարում այն ենթադրությունները, որոնցով բավականանում էր Կոնսելը։

Այդ հրաշալի մարդը պնդում էր, որ նավապետ Նեմոն դեռևս չճանաչված մի գիտնական է, որը դեպի իրեն ցույց

տրված անտարբերության հետևանքով ատելություն է տածում դեպի մարդկությունը։ Կոնսելը երբեմն ասում էր, թե «նաուտիլուսի» հրամանատարը մի հանճար է, որին ծաղրել են գիտնականները, թե հասարակության բթության ու անտարբերության դեմ պայքարելուց հոգնած, նավապետն առանձնացել է մարդկանց համար անմատչելի այդ միջավայրում, որ ազատ ապրի։ Սակայն, իմ կարծիքով, այս ենթադրությունը ևս շատ քիչ բան էր բացատրում նավապետ Նեմոյի մասին։

Արդարև, այն գիշերվա հանելուկը, երբ մեզ արգելափակեցին խավար խցիկում և նույնիսկ քնեցրին, այն շտապողականությունը, որով նավապետ Նեմոն խլեց իմ ձեռներից հեռադիտակը, նախքան ես կդիտեի հորիզոնը, նավաստիներից մեկի մահացու վիրավորվելը, որ հետևանք էր «նաուտիլուսի» անբացատրելի ընդհարման, այս բոլոր հանգամանքներն ինձ ստիպում էին մտածել միայն հետևյալը. ո՛չ, նավապետ Նեմոն չէր սահմանափակվում միայն նրանով, որ փախչում էր մարդկանցից։ Նրա հանճարեղ գյուտը՝ սուզանավը ծառայում էր նրան ոչ միայն իբրև ապաստարան, ուր նավապետը լիակատար ազատություն էր վայելում, այլև իբրև վրիժառության զենք։

Սակայն առայժմ դրա մասին ես չունեի ոչ մի ապացույց։ Ինձ շրջապատող անիրազեկության թանձր խավարում այդ ենթադրությունը կարող էր ծառայել միայն իբրև ուղեցույց մի ճրագ։

Ուստի այսպես ասած՝ դեպքերի թելադրանքով պետք է շարունակեմ գրանցումներս...

Ասենք՝ մեզ ոչինչ չի կապում նավապետ Նեմոյի հետ։ Նա գիտե, որ անկարելի է փախչել «նաուտիլուսից»։ Ահա թե ինչու նա նույնիսկ չստիպեց մեզ խոսք տալ, որ չենք փախչի։ Մենք ոչ մի պարտավորություն չենք վերցրել։ Մենք միայն սովորական գերիներ ենք, որոնց, քաղաքավարության համար, հյուրեր են անվանում։

Բայց և այնպես, Նեդ Լենդը չհրաժարվեց ազատվելու հույսից։ Նա հավատացած է, որ կկարողանա օգտվել հենց առաջին հարմար առիթից։ Ակներև է, որ ես էլ կհետևեմ նրա

օրինակին։ Այնուամենայնիվ ես առանց ցավելու չեմ բաժանվի ստորջրյա հրաշքներից, որոնց հետ ծանոթանալն ինձ համար հնարավոր դարձավ նավապետ Նեմոյի մեծահոգության շնորհիվ։

Ինձ համար այժմ էլ պարզ չէ, թե արդյոք ես պետք է խոնարհվե՞մ այդ մարդու առաջ, թե՞ ատեմ նրան։ Արդյոք նա զո՞հ է, թե՞ դահիճ։ Ես ազնվությամբ խոստովանում եմ, որ նախքան «Նաուտիլուսից» ընդմիշտ բաժանվելը, կուզեի մինչև վերջ կատարել այդ ստորջրյա աշխարհաշուրջ ճանապարհորդությունը, որի սկիզբն այնքա՛ն հրաշալի էր։ Ես ուզում էի տեսնել ծովերում թաքնված բոլոր հրաշքները։ Ես ուզում էի տեսնել այն ամենը, ինչ որ ինձնից առաջ չէր տեսել ոչ մի մարդ, եթե նույնիսկ գիտության այդ անհագ ծարավն իմ մահվան պատճառ դառնար։

Ի՞նչ էի իմացել մինչև հիմա։ Ոչինչ, կամ համարյա ոչինչ, որովհետև մենք ընդամենը վեց հազար լյո էինք անցել խաղաղ օվկիանոսում։

Մինչդեռ «Նաուտիլուսը» մոտենում է մարդաբնակ երկրներին, և ես շատ լավ գիտեմ, որ եթե մենք փախչելու որևէ հնարավորություն ունենանք, իմ կողմից աններելի դաժանություն կլինի իմ գիտության ծարավը հագեցնելու համար դավաճանել ընկերներիս շահերին։ Ես պետք է հետևեմ, գուցե և առաջնորդեմ նրանց։ Բայց արդյոք երբևէ կլինի՞ փախչելու հնարավորություն։ Այն մարդը, որ բռնությամբ զրկված է ազատությունից, երազում է այդ հնարավորության մասին, սակայն գիտնականը, հետազոտիչը, վախենում է, որ այդ հնարավորությունը վերջ ի վերջո կլինի...

Այն օրը, հունվարի 21-ին, կեսօրին նավապետի օգնականը սովորական կարգով բարձրացավ տախտակամածը, որպեսզի գիտողություններ անի։ Նրանից հետո ես էլ բարձրացա և սիգար ծխելով սկսեցի դիտել։ Ես այլևս չէի կասկածում, որ այդ մարդը ֆրանսերեն չի խոսում, որովհետև հաճախ դիտմամբ բառեր էի արտասանում, որոնք, եթե նրան հասկանալի լինեին, պետք է որ արժանանային նրա որևէ ուշադրության։ Սակայն նա միշտ լինում էր հանգիստ ու լռակյաց։

Այն ժամանակ, երբ նավապետի օգնականը սեքստանտը

աչքերին դրած, որոշում էր արևի բարձրությունը, տախտակամած բարձրացավ «Նաուտիլուսի» նավաստիներից մեկը, հենց այն վիթխարին, որ մեզ ուղեկցում էր Կրեսպո կղզու անտառները որսի գնալիս։ Նա զբաղվեց լուսարձակի ապակին մաքրելով։ Սա հետաքրքրությամբ դիտում էի այդ գործիքը, որի լույսի ուժը հարյուր անգամ ավելանում էր շնորհիվ ոսպնյակային ապակիների օղակաձև դիրքի, իսկ այդ ապակիները խտացնում էին լույսի աղբյուրից տարածվող ճառագայթները։ Այդ աղբյուրը կառուցված էր այնպես, որ նրա լուսատար ուժը հասցրած էր առավելագույնին, էլեկտրական աղեղը լուսավառվում էր անօդ տարածության մեջ, որով ապահովվում էր կեծացման մշտականությունը և միևնույն ժամանակ պահպանում գրաֆիտե սայրերը, որոնց միջև առաջանում էր աղեղը։ Վերջին հանգամանքն առանձնապես կարևոր էր նավապետ Նեմոյի համար, որը հավանորեն այնքան էլ հեշտությամբ չէր կարող լրացնել գրաֆիտի պաշարը։ Սակայն այդ ծայրերը շափազանց դանդաղ էին մաշվում օդազուրկ տարածության մեջ։

Երբ «Նաուտիլուսը» սկսեց պատրաստվել ջրասույզ լինելու, ես վերադարձա սրահ։ Ջրասուզվելուց հետո մենք լողացինք ուղիղ դեպի արևմուտք։ Այժմ մենք ակոսում էինք Հընդկական օվկիանոսը, ջրային անծայրածիր հարթությունը, որ հինգ հարյուր հիսուն միլիոն հեկտար տարածություն է բռնում։ Այդ օվկիանոսի ջուրն այնքան թափանցիկ է, որ եթե թուլակազմ մարդը նավի տախտակամածից ներքև նայի, նրա գլուխը կպտտվի։

«Նաուտիլուսը» սովորաբար լողում էր հարյուրից մինչև երկու հարյուր մետր խորությամբ։ Այդպես շարունակվեց մի քանի օր։ Եթե իմ տեղը մեկ ուրիշը լիներ, հավանորեն կըգանգատվեր այդ ճանապարհորդության միօրինակության ու ձանձրույթի դեմ։ Սակայն ամենօրյա, առավոտյան զբոսանքները տախտակամածում, այնտեղ փչող, աղով հագեցված, հով քամին, սրահի լուսամուտներից օվկիանոսի հրաշքները դիտելը, նավապետ Նեմոյի գրադարանի գրքերի ընթերցումը, օրագրում գրանցումներ անելը, այս ամենն ինձ զբա-

ղեցնում էր ամբողջ օրերով, և ես ոչ մի բոպե չէի ձանձրանում, չէի հոգնում։

Թե Նեդ Լենդը, թե Կոնսելը և թե ես բոլորովին առողջ էինք։ «Նաուտիլուսում» եղած սնունդն ընդհանրապես բավարարում էր մեզ, և եթե ես չվախենայի վշտացնել կանադացուն, հաճույքով կհրաժարվեի ընդհանուր ճաշասեղանը լրացնող այն «ցամաքային» մթերքներից, որ կանադացին կարողանում էր մի կերպ գտնել։ Ջերմաստիճանը փոփոխական չէր, այնպես որ անկարելի էր հիվանդանալ նույնիսկ հարբուխով, իսկ եթե այդ պատահեր, ապա կարելի էր օգտագործել «Նաուտիլուսի» դեղատանը եղած մադրեպորից պատրաստվող dendraphulez դեղափոշին, որ Պրովանսում հայտնի է «ծովասամիթ» անունով և հիանալի դեղ է հազի և հարբուխի դեմ։

Մի քանի օրվա ընթացքում, առավոտները դուրս գալով տախտակամած, ես ապշում էի ծովային թռչունների, մանավանդ օրորների առատությունից։ «Նաուտիլուսի» նավաստիները որսում էին այդ թռչունները և սրանցից պատրաստված կերակուրները շատ համեղ էին լինում։ Կային խոշոր թքուչուններ, որոնք ծովափերից հեռու էին թռչում և հոգնածությունից հանգստանում ալիքների վրա։ Սրանց մեջ ուշագրավ էին փողակավորների ջոկատին պատկանող, գեղեցիկ մրկահավերը, որոնց ձայնը հեռվից հիշեցնում էր էշի զռոցը։ Մաշկոտնյանների ընտանիքի ներկայացուցիչներն այստեղ ապրագ թռչող ճղլակներն էին, որոնք որսում էին ծովի մակերևույթին մոտիկ լողացող ձկները. նույն ընտանիքի ներկայացուցիչներն էին աղավնու մեծությամբ բազմաթիվ հարդատուտները, որոնց սպիտակ փետրափնջերն ավելի ևս նկատելի էին դարձնում թևերի բոլորովին սև գույնը։ Փետրափնջերի ծայրերը մի քիչ վարդագույն էին։

Ամեն օր «Նաուտիլուսի» ուղևորը դուրս էր բերում ծովային կրիաների նոր տեսակներ։ Այստեղ ես կհիշեմ մասնավորապես կարետա կամ մյուրիկեն կոչված հետաքրքիր կրիան, որ ունի կիսակլոր, վեր ցցված «վահան», որը շատ թանկ է, ծախվում։ Այդ կրիաներն ընդունակ են երկար ժամանակ մնալ ջրի տակ, փակելով քթի խոռոչի մոտ գտնվող մսոտ կափույ-

բը։ Մյուրիկեններից մի քանիսը բռնվեցին այն ժամանակ, երբ քնել էին, ծածկվել վահանով՝ ծովային կենդանիներից պաշտպանվելու համար։ Այդ կենդանիների միսը համեղ չէ, սակայն նրանց ձվերը հիանալի ուտելիք են համարվում։

Ինչ վերաբերում է ձկներին, մենք աքանչանում էինք դիտելով նրանց սրահի ապակյա լուսամուտներից։ Ես տեսա ձկների մի քանի տեսակներ, որ մինչ այդ բոլորովին չէի տեսել։

Ամենից առաջ հիշեմ կողովիկներ կոչված ձկների մասին, որոնք ապրում են բացառապես տաք ծովերում, մանավանդ Կարմիր ծովում, Հնդկական օվկիանոսում և Կենտրոնական Ամերիկայի ափերի մոտ։ Այդ ձկները, ինչպես նաև կրիաները, խեցգետնին նմանվող ու ծովային ողնիները պաշտպանվում են ոչ թե կայծքարային կամ կրային, այլ պինդ, ոսկրյա վահանով, որ կազմված է իրար միացած թիթեղներից։ Այդպիսի վահան ունեցող ձկան մարմինն ունի եռակողմ, քառակողմ կամ հնգակողմ տուփի ձև, ունի ամուր պատեր և բոլորովին զուրկ է ճկունությունից։ Շարժվել կարող է միայն դրանց պոչի ծայրը, նաև դունչը, որոնք ծածկված են փափուկ մաշկով։ Սակայն այդ շարժումներն էլ աչքի չեն ընկնում մի առանձին ճկունությամբ և կարող են կատարվել ո՞չ դեպի բոլոր կողմերը։ Մենք տեսնում էինք եռանկյունաձև ձկներ, որոնց միսը խիստ քնքուշ է, նաև եղջյուրավոր ձկներ, իրենց քառակողմ վահանով։ Դրանք եղջյուրավոր են կոչվում, որովհետև մեծ, կլոր աչքերի վերևում ունեն եղջյուրների նմանվող երկար փշեր։

Հիշեմ նաև փշոտ կատվաձկներին, որոնք ունեին շատ երկար, մտրակի նման պոչ։ Պոչի վրա կան սուր փշեր։ Կատվաձուկը կարող է իր այդ պոչով սարսափելի հարվածներ հասցնել, որոնք վտանգավոր են նույնիսկ մարդու համար։

Կոնսելի օրագրում մատնանշված են ձկան մի քանի այլ տեսակներ՝ ասղաորովայններ, որ մենք արդեն տեսել էինք խաղաղ օվկիանոսում. երկարաքիթ կատվաձկներ, որոնց միսն ընդհանրապես համեղ չէ, սակայն հայտնի չէ ինչու Անգլիայում լավ ուտելիք է համարվում և շատերը սիրում են այդ միսը։ «Էլեկտրական» կատվաձկներ՝ կլոր, մերկ կեն-

գանիներ, որոնք զուրկ են խավից ու փշերից. մեկ ու կես մետր երկարություն և մեկ մետր լայնություն ունեցող մարմարե, «էլեկտրական» կատվաձկներ, որոնք կինամոնագույն են, բայց մեջքի վրա ունեն ավելի բաց, մարմարե երանգ։

Մյուս տեսակների ներկայացուցիչներից պետք է հիշել ծովաձև ձկներին, որոնք թուխ-կինամոնագույն են, համարյա սև, սպիտակ խավով, առանց պոչի. երկու ատամ ունեցող, խոզուկներին նմանվող ձկներին, որոնք կարող են ուռչել և դառնալ բոլոր կողմերից փշերով շրջապատված գունդ. ծովային ձիուկներին, որոնք նույնն են, ինչ որ մյուս օվկիանոսներում. պեգաս-ձկներին, դեպի առաջ ցցված դնչով և կրծքի լայն, հորիզոնական դիրք ունեցող լողաթևերով, որոնք ֆանտաստիկ տեսք են տալիս այդ ձկներին. քնարաձկներին, որոնք դեղնավուն են և շափյուղա-կապույտ շերտերով ու բծերով ծածկված։ Դրանց միսը սպիտակ է ու համեղ։

Մենք տեսանք նաև վեց մետր երկարություն ունեցող առագաստավոր ձկներ, որոնք կարող են իրենց հսկայական, ուժեղ լողաթևը բարձրացնել մինչև մեկ ու կես մետր և օգտվել դրանով, ինչպես առագաստով. սովորական մաղապոչավորներ՝ իրենց շատ երկար ու բարակ, ժապավենաձև մարմնով արուներն ունեն արծաթավուն-սպիտակ գույն ու գորշ դեղնավուն լողաթև. վերջապես, օվկիանոսային ճանճորսներ, իրենց «հրացանով», որ նույնիսկ Ռեմինգտոնը և զենքի մյուս գործարանատերերը երազում անգամ չեն տեսել։ Այս կենդանիներն իրենց այդ «հրացանով» սպանում են միջատներին, իսկ «հրացանի» լիցքը բաղկացած է լինում... մի կաթիլ ջրից։

Հունվարի 21-ից մինչև 23-ը «Նաուտիլուսն» օրական անցնում էր հինգ հարյուր քառասուն մղոն։ Ուրիշ խոսքով, մենք գնում էինք մեկ ժամում քսաներկու և կես մղոն արագությամբ։ Եթե մեզ հաջողվում էր այդպիսի արագ ընթացքի ժամանակ տեսնել մի քանի ձկներ, ապա այդ նշանակում էր, որ նրանք, գրավվելով լուսարձակի լույսից, ձգտում էին ուղեկցել մեզ։ Սակայն նրանց մեծ մասը համարյա անմիջապես հետ էր մնում և միայն քչերն էին շատ թե քիչ երկար ժամանակ լողում նավի հետ միասին։

Քանչորսի առավոտյան մենք տեսանք Կիլլինգա կղզին, որ գտնվում է 12°5′ հարավային լայնության և 94°33′ երկարության տակ։ Դա կորալլային կղզի չէ, ծածկված հիանալի կոկոսի արմավենիներով։ Իր ժամանակին կղզին այցելել են Չարլզ Դարվինը և նավապետ Ֆից-Ռոյը։ «Նաուտիլուսն» անցավ այդ անմարդաբնակ կղզու մոտից։ Մենք որսացինք բազմաթիվ ու բազմատեսակ պուլիպներ, սրանց թվում՝ դելֆինների մի քանի հետաքրքիր տեսակներ, որոնք այնուհետև տեղ բռնեցին նավապետ Նեմոյի հավաքածոյում։

Շուտով Կիլլինգա կղզին չքացավ և «Նաուտիլուսն» ուղևորվեց դեպի հյուսիս-արևմուտք, դեպի Հնդկական թերակղզու հարավային ծայրը։

— Մենք մոտենում ենք քաղաքակիրթ երկրներին,— այդ օրն ինձ ասաց Նեդ Լենդը,— դա ավելի լավ է, քան նոր Գվինեան, որտեղ վայրենիներն ավելի շատ են, քան այծյամները։ Հնդկաստանում, պարոն պրոֆեսոր, կան խճուղիներ, երկաթուղիներ և քաղաքներ՝ անգլիական, ֆրանսիական, հընդկական։ Այնտեղ ամեն քայլափոխում կարելի է, հայրենակցի հանդիպել։ Ի՞նչ եք կարծում, արդյոք ժամանակը չէ՞ հրաժեշտ տալ Նավապետ Նեմոյին։

— Ո՛չ, ո՛չ,— վճռականապես պատասխանեցի ես կանադացուն,— շտապելուց բան չի դուրս գա։ Հիմա «Նաուտիլուսը» մոտենում է. բնակելի երկրներին։ Նավն ուղևորվում է դեպի Եվրոպա։ Թող նա մեզ այնտեղ տանի։ Երբ մենք կմոտենանք եվրոպական ափերին, միայն այդ ժամանակ կվարվենք այնպես, ինչպես կթելադրի զգուշությունը։ Ի դեպ ասած՝ ես չեմ հավատում, որ նավապետ Նեմոն նույնպիսի հեշտությամբ թույլ տա մեզ որսի գնալ Մալաբարյան կամ Կորոմանդելյան ափը, ինչպես այդ եղավ Գվեռբորար կղզին՝ գնալիս։

— Ի՞նչ արած, պարոն պրոֆեսոր, այդ դեպքում մենք ըստիպված կլինենք չօգտվել նրա թույլտվությունից։

Ես չպատասխանեցի կանադացուն։ Չէի ուզում նրա հետ վիճել։

Սակայն հոգուս խորքում ես հաստատապես որոշել էի

մինչև վերջ օգտագործել այն հնարավորությունները, որ բխում էին ստորջրյա նավի մեջ գտնվելուց։

Կիլինգ կղզին անցնելուց հետո «նաուտիլուսը» բավական դանդաղեցրեց ընթացքը։ Հիմա մենք իջեցման ղեկերի օգնությամբ հաճախ իջնում էինք օվկիանոսի խորքերը։ Խորասուզվում էինք երկու, երբեմն երեք կիլոմետր, սակայն ոչ մի անգամ չհետազոտեցինք Հնդկական օվկիանոսի խորությունը, որտեղ տասներեք կիլոմետր իջեցրած զոնդը չի հասնում հատակին։ Ջրի ստորին շերտերի բարեխառնությունն այստեղ նույնն էր, ինչպես և խաղաղ օվկիանոսում՝ չորս աստիճան զրոյից բարձր։ Ես ուշադրություն դարձրի միայն մի հանգամանքի վրա՝ ոչ խորը տեղերում ջրի մակերեսային շերտերի բարեխառնությունը միշտ ավելի ցածր է, քան խորը շերտերում։

Հունվարի քսանհինգին օվկիանոսի հեռուներում չէր երևում ոչ մի կղզի և «նաուտիլուսն» ամբողջ օրը լողում էր ջրի վրայով, ուժեղ թափով ճեղքում ալիքները և դեպի վեր շպրտում ջուրը։ Զարմանալի չէ, որ հեռվից «նաուտիլուսը» տեսնող նավերը նրան կետի տեղ էին ընդունում։

Օրվա երեք քառորդ մասը ես անցկացրի տախտակամածում և դիտում էի ծովը։ Հորիզոնում ոչինչ չէր երևում։ Միայն ցերեկվա ժամը մոտ չորսին հեռվում երևաց մի շոգենավ, որ դեպի արևմուտք էր գնում։ Մի քանի րոպեի ընթացքում շոգենավի կայմերը պարզ ուրվագծվում էին հորիզոնում, սակայն այնտեղից անկարելի էր նկատել «նաուտիլուսը», որ հազիվ դուրս էր եկել ջրից։

Ես մտածեցի, որ այդ շոգենավը պատկանում է «Փենինսուլար էնդ Օրիենթալ Քոմփընի» ընկերությանը՝ որ սպասարկում է Ցեյլոն—Սիդնեյ գիծը, անցնելով Մելբուռնից և Գեվորգ թագավորի հրվանդանից։

Երեկոյան ժամը հինգին, արևադարձային կարճատև մթնշաղից հետո ես ու Կոնսելը դիտեցինք սքանչելի մի տեսարան։

Գոյություն ունի մի չքնաղ կակղամորթ, որին հանդիպելը, հնադարյան մարդկանց կարծիքով, երջանկության նշան է։ Արիստոտելը, Աթենեոսն ու Պլինիուսն ուսումնասի-

բել են նրա սովորությունները, ճաշակը, և նրան նկարագրելու համար չեն խնայել հին Հունաստանի և Հռոմի բանաստեղծական ամբողջ գինանոցը։ Այս կակղամորթը ժամանակակից գիտությանը հայտնի է արգոնավտ անունով։

Եթե որևէ մեկը դիմեր Կոնսելին, կիմանար, որ կակղամորթների բաժինը բաղկացած է հինգ դասից, որ գլխոտանիներ անվանվող առաջին դասին պատկանում է միայն երկու ընտանիք, երկու և չորս քիմուխտավորները, որոնք տարբերվում են քիմուխտների քանակությամբ, որ երկքիմուխտավորների ընտանիքը բաղկանում է երեք տեսակներից՝ արգոնավտներ, կալմարներ և թանաքաձկներ, մինչդեռ չորս քիմուխտավորների ընտանիքի մեջ մտնում է միայն մի տեսակ՝ «նավակները»։

Եվ եթե անուշադիր ընթերցողը, ծանոթանալով այդ անվանացանկի հետ, ծծուկներ ունեցող արգոնավտին շփոթի շոշափուկներ ունեցող «նավակի» հետ, ապա դա նրան չի ներվի։

Մենք տեսանք արգոնավտների մի ամբողջ վտառ, որ լողում էր օվկիանոսում։ Դրանք մի քանի հարյուր հատ էին։ Այդ գեղատեսիլ կակղամորթները շարժվում էին դեպի ետ, իրենց «ձագարների» օգնությամբ, որոնց միջով նրանք դուրս են մղում շնչելու ժամանակ ներս քաշած ջուրը։ Դրանց ութ ծծուկներից վեցը, որ բարակ ու երկար են, լողում էին ջրի մակերեսին, մինչդեռ մնացած երկու ծծուկները, այսպես կոչված՝ տեկտոկոտիլները, ավելի պինդ են և ճկվող աղեղի նման կանգնած էին քամու դեմ ինչպես առագաստներ։

Ջրի մեջ ես պարզ տեսա դրանց պարուրաձև խեցիները, որ Կյուվեն իրավամբ համեմատում է գեղեցիկ նավակի հետ։ Իսկապես դրանք հիշեցնում են նավակը։ Արգոնավտն ինքն է կրային աղերի շերտերից «կառուցել» այդ նավակը և միշտ գտնվում է նրա վրա, թեև չի միակցվում նավակին։

— Արգոնավտը միշտ կարող է հեռանալ իր նավակից, սակայն երբեք այդպես չի անում,— ասացի ես Կոնսելին։

— Ինչպես նաև նավապետ Նեմոն,— պատասխանեց Կոնսելը,— ուստի լավ կլիներ, եթե նա իր նավն անվաներ «Արգոնավտ»։

բել են նրա սովորությունները, ճաշակը, և նրան նկարագրելու համար չեն խնայել հին Հունաստանի և Հռոմի բանաստեղծական ամբողջ զինանոցը։ Այս կակղամորթը ժամանակակից գիտությանը հայտնի է արգոնավտ անունով։

Եթե որևէ մեկը դիմեր Կոնսելին, կիմանար, որ կակղամորթների բաժինը բաղկացած է հինգ դասից, որ գլխոտանիներ անվանվող առաջին դասին պատկանում է միայն երկու ընտանիք, երկու և չորս քիմուխտավորները, որոնք տարբերվում են քիմուխտների քանակությամբ, որ երկքիմուխտավորների ընտանիքը բաղկանում է երեք տեսակներից՝ արգոնավտներ, կալմարներ և թանաքաձկներ, մինչդեռ չորս քիմուխտավորների ընտանիքի մեջ մտնում է միայն մի տեսակ՝ «նավակները»։

Եվ եթե անուշադիր ընթերցողը, ծանոթանալով այդ անվանացանկի հետ, ծծուկներ ունեցող արգոնավտին շփոթի շոշափուկներ ունեցող «նավակի» հետ, ապա դա նրան չի ներվի։

Մենք տեսանք արգոնավտների մի ամբողջ վտառ, որ լողում էր օվկիանոսում։ Դրանք մի քանի հարյուր հատ էին։ Այդ դեղատեսիլ կակղամորթները շարժվում էին դեպի ետ, իրենց «ձագարների» օգնությամբ, որոնց միջով նրանք դուրս են մղում շնչելու ժամանակ ներս քաշած ջուրը։ Դրանց ութ ծծուկներից վեցը, որ բարակ ու երկար են, լողում էին ջրի մակերեսին, մինչդեռ մնացած երկու ծծուկները, այսպես կոչված՝ տեկտոկոտիլները, ավելի պինդ են և ճկվող աղեղի նման կանգնած էին քամու դեմ ինչպես առագաստներ։

Ջրի մեջ ես պարզ տեսա դրանց պարուրաձև խեցիները, որ Կյուվեն իրավամբ համեմատում է գեղեցիկ նավակի հետ։ Իսկապես դրանք հիշեցնում են նավակը։ Արգոնավտն ինքն է կրային աղերի շերտերից «կառուցել» այդ նավակը և միշտ գտնվում է նրա վրա, թեև չի միակցվում նավակին։

— Արգոնավտը միշտ կարող է հեռանալ իր նավակից, սակայն երբեք այդպես չի անում,— ասացի ես Կոնսելին։

— Ինչպես նաև նավապետ Նեմոն,— պատասխանեց Կոնսելը,— ուստի լավ կլիներ, եթե նա իր նավն անվաներ «Արգոնավտ»։

Գրեթե մի ամբողջ ժամվա ընթացքում «Նաուտիլուսը» լողում էր այդ կակղամորթների ուղեկցությամբ։ Սակայն չդիտեմ ինչու հանկարծ նրանք սարսափահար եղան։ Բոլոր «առագաստները» միանգամից իջան, դեպի առաջ ցցված շոշափուկները ներս քաշվեցին, մարմինները կծկվեցին, «նավակները» տեղափոխեցին իրենց ծանրության կենտրոնը, և ամբողջ «նավատորմը» մի ակնթարթում չքացավ ջրի տակ։

Երբեք և ոչ մի նավախումբ այդպիսի ճշտությամբ չի կատարել այդչափ բարդ զորախաղ։

Արևը մայր մտավ, և գրեթե բոպնապես իջավ գիշերը։ Թեթև հողմից ալեկոծվող ծովը կամացուկ օրորում էր լողացող «Նաուտիլուսը»։

Հետևյալ օրը, հունվարի 26-ին, մենք ութսուներկուերորդ միջօրեականի տակ անցանք հասարակածը և մտանք հյուսիսային կիսագնդի ջրերը։

Այդ օրը մեզ ուղեկցում էր շնաձկների, այդ սարսափելի կենդանիների հսկայական վտառը։ Դրանք վխտում են ծովերում և վտանգավոր են դարձնում նավերի երթևեկությունը։ Դրանք «թիկնոցավոր» շնաձկներ էին, թուխ մեջքով և սպիտակ որովայնով, զինված էին տասնմեկ շարք ատամներով։ Կային շնաձկներ, որոնք ուսերի վրա ունեին մեծ, սև, ըսպիտակ եզրով շրջապատված և աչքի նման մի բիծ։ Կային նաև շնաձկներ, որոնց դնչերը կլոր էին և սև կետերով ծածկված։ Այդ վիթխարի գիշակերները մի քանի անգամ սարսափելի կատաղությամբ հարձակվում էին սրահի լուսամուտների վրա։ Այդ բոպեներին նեղ լենդն ուղղակի կատաղում էր։ Նա ուզում էր լինել ջրում ու որսալ այդ հրեշներին, մանավանդ վագրանման շնաձկներին, որոնք մի առանձին կատաղությամբ էին հարձակվում սրահի լուսամուտների վրա։ Սրանց երախներում ատամները շարված էին խճաղարդի նման։

«Նաուտիլուսն» արագացրեց իր ընթացքը և նույնիսկ ամենաարագաշարժ շնաձկները հետ մնացին նավից։

Հունվարի քսանյոթին Բենգալյան ծոցի մոտ մենք մի քանի անգամ նկատեցինք դիակներ, որոնք ընկած էին ջրի երեսին։ Ինչպիսի՛ սարսափելի տեսարան։ Դրանք հնդկական քա-

ղաքների մեռած բնակիչներն էին, որոնց Հնդկաստանի միակ գերեզմանափորները՝ ուրուրները, դեռ չէին կարողացել կըտցել։ Գանդեսի ալիքները դրանց տարել էին բաց օվկիանոս, և այն ինչ որ չէին արել ուրուրները, արագությամբ արեցին շնաձկները...

Երեկոյան ժամը մոտ յոթին «Նաուտիլուսը» բարձրացավ ծովի վրա և լողում էր կաթնավուն-սպիտակ ալիքներում։ Օվկիանոսի ամբողջ տեսանելի մասը կաթնագույն էր թվում։ Արդյոք դա լուսնի լույսի անդրադարձումն էր։ Ոչ, որովհետև ընդամենը երկու օր էր, որ նորել էր լուսինը, այդ գիշեր դեռ չէր ծագել. երկինքը, որ լուսավորված էր հենց նոր մայր մըտած արևի ճառագայթների ցոլքով, ջրի սպիտակության հանդեպ սև էր թվում։

Դիտելով այդ ապշեցուցիչ տեսարանը, Կոնսելը չէր հավատում իր աչքերին։ Նա ինձ հարցրեց, թե արդյոք գիտե՞մ դրա պատճառը։

Բարեբախտաբար ես ի վիճակի էի նրան բացատրություն տալու։

— Դա այսպես կոչված կաթնային ծովն է,— ասացի ես,— ջրի այդ կաթնային-սպիտակ գույնը հաճախակի երևույթ է Հնդկաստանի ափերի մոտ։

— Սակայն պարոնն արդյոք չի՞ ասի ինձ, թե ինչ պատճառով է ջուրն այդպես սպիտակում,— հարցրեց Կոնսելը,— ծովի ջուրը հո կաթ չի՞ դարձել։

— Իհարկե ոչ, բարեկամս։ Ջրի այդ գույնը, որ զարմացնում է քեզ, առաջ է գալիս անթիվ ու անհամար ինֆուզորիաներից՝ լորձունքային անգույն, լուսավառվող մանրէներից, որոնք ունեն մազի հաստություն և մոտավորապես մեկ հինգերորդ միլիմետր երկարություն։ Այդ ինֆուզորիաները միանում են ու կազմում համատարած դաշտեր, որոնք երբեմն մի քանի կիլոմետր տարածություն են բռնում։

— Մի քանի կիլոմե՞տր,— զարմացավ Կոնսելը։

— Այո, բարեկամս։ Այդպիսի «ծովերում» եղած ինֆուզորիաների քանակը հաշվելու փորձ չանես։ Միևնույն է, այդ քեզ չի հաջողվի, որովհետև, եթե չեմ սխալվում, մի քանի

ծովագնացներ հաղորդել են, թե քառասուն և ավելի մղոն տարածության կաթնային ծովեր են տեսել։

Զնայելով իմ խորհրդին, Կոնսելը սկսեց մտքում հաշվել, թե քառասուն քառակուսի մղոն տարածության վրա որչափ infուզորիաներ կտեղավորվեն, եթե յուրաքանչյուր infուզորիա մզից հաստ չէ և երկար չէ մեկ հինգերորդ միլիմետրից։

Թողնելով, որ Կոնսելը զբաղվի իր հաշիվներով, ես շարունակեցի դիտել բնության այդ հետաքրքիր երևույթը։

Մի քանի ժամ «Նաուտիլուսն» իր սուր ծայրով ճեղքում էր կաթնային ծովի սպիտակավուն ջրերը, և ես ուշադրություն դարձրի այն հանգամանքի վրա, որ նավը շարժվում է անձայն, կարծես թանձր սապնափրփուրի միջով է անցնում։

Մոտավորապես կեսգիշերին մեր առջև ծովն անսպասելիորեն սովորական գույն ստացավ, բայց մեր անցած ճանապարհին երկինքը, արտացոլելով ջրերի սպիտակությունը, կարծես հյուսիսափայլով էր լուսավորված։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱՎԱՊԵՏ ՆԵՄՈՅԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Հունվարի քսանութին, կեսօրին, 9°4′ հյուսիսային լայնության տակ դուրս գալով ջրի երեսը, մենք նկատեցինք մի ինչ-որ ցամաք, որ գտնվում էր ութ մղոն դեպի արևմուտք։ Ամենից առաջ աչքովս ընկան բավական բարձր լեռնախմբերը, որոնց լանջերը քմահաճ ու տարօրինակ ձևեր ունեին։ Մի քանի լեռների բարձրությունն ավելի քան երկու հազար ոտնաչափի էր հասնում։ Դիտողությունները վերջացնելուց հետո ես մոտ սրահ և նայելով քարտեզը, տեսա, որ մենք գտնվում ենք Ցեյլոն կղզու՝ Հնդկաստանի մարգարտի ափերի մոտ։

Ես գնացի գրադարան, որպեսզի գրքեր գտնեմ աշխարհիս այդ ամենաարգավանդ կղզու մասին, և գտա Սիրրայի աշխատությունը՝ «Ցեյլոնը և սինգալեզները» վերնագրով։

Սրահում ընթերցանությամբ զբաղվելիս ես ամենից առաջ նշեցի այդ կղզու աշխարհագրական կոորդինատները՝ հյուսիսային լայնության 5°55′-ից մինչև 9°49′ և արևելյան երկարության 79°42′-ից մինչև 82°4′ (Գրինվիչից)։ Կղզու երկարությունը երկու հարյուր յոթանասուն հինգ մղոն է, ամենամեծ լայնությունը—հարյուր հիսուն մղոն, առավելագույն երկարությունը —ինը հարյուր հիսուն մղոն, վերջապես, մակերեսը՝ քսանչորս հազար չորս հարյուր քառասունութ մղոն, այսինքն կղզին մի քիչ փոքր է Իռլանդիայից։

Այդ ժամանակ սրահ մտան նավապետ Նեմոն և նրա օգնականը։

Նավապետը նայեց քարտեզին։ Այլա դառնալով դեպի ինձ, ասաց.

— Ցեյլոն կղզին հայտնի է մարգարիտներով։ Արդյոք չե՞ք ցանկանում, պարոն պրոֆեսոր, լինել այնտեղ, ուր մարգարիտ են հավաքում։

— Հաճույքով, նավապետ։

— Հրաշալի։ Դա շատ հեշտ է։ Ճիշտ է, մենք կտեսնենք միայն հավաքելու վայրը և ոչ թե հավաքողներին, որովհետև սեզոնը դեռ չի սկսվել։ Սակայն այդ կարևոր չէ։ Ես հիմա կհրամայեմ ուղևորվել դեպի Մանաարյան ծոցը։ Գիշերով մենք կհասնենք այնտեղ։

Նավապետն ինձ անհայտ լեզվով մի քանի խոսք ասաց իր օգնականին, որ շտապ դուրս եկավ սրահից։ «Նաուտիլուսը» անմիջապես ջրասույզ եղավ։ Խտաշավիը ցույց էր տալիս երեսուն ոտնաչափ խորություն։

Վերցնելով քարտեզը, ես որոնեցի Մանաարյան ծոցը և գտա համանուն կղզու մոտ, 9° հյուսիսային լայնության տակ, Ցեյլոնի հյուսիս-արևմտյան ափում։ Մանաարյան ծոցը հասնելու համար մենք պետք է անցնենք կղզու ամբողջ արևմտյան ափի երկայնքով։

Նավապետ Նեմոն վերսկսեց խոսակցությունը։

— Պարոն պրոֆեսոր,—ասաց նա,—մարգարիտները հավաքվում են Բենգալյան ծոցում, Հնդկական ծովում, Չինական և Ճապոնական ծովերում, Ամերիկայի հարավում գտնվող ծովերում, Պանամայի ծոցում, Կալիֆոռնիայի ծոցում։

Սակայն լավագույն արդյունքը ստացվում է Ցեյլոնում։ Ցավոք սրտի, մենք շատ շուտ եկանք այստեղ։ Մարգարիտ հավաքողները Մանաարյան ծոցն են գալիս մարտի կեսից ոչ շուտ։ Այդ ժամանակ այստեղ է գալիս մինչև երեք հարյուր նավ, որոնք երեսուն օր զբաղվում են այդ ամենաեկամտաբեր գործով։ Յուրաքանչյուր նավ ունի տասը թիավարող և տասը սուզակ։ Վերջիններս բաժանվում են երկու մասի և հերթով իջնում են ջրի տակ։ Նրանք իջնում են մինչև տասներկու մետր, վերցնելով մի ծանր քար, որը սեղմում են ոտների միջև, ու հասնելով հարկավոր խորության, բաց են թողնում։ Հետո այդ քարը, որ պարանով կապված է նավին, թիավարները հանում են ջրից ու սեղավորում նավի վրա։

— Ուրեմն դեռ գործադրվո՞ւմ են այդ բարբարոսական միջոցները։

— Այո, այստեղ ոչինչ չի փոխվել,— պատասխանեց Նեմոն,— չնայելով, որ մարգարիտների այդ վայրերը պատկանում են աշխարհիս ամենաինդուստրիալ երկրին՝ Անգլիային, որին հանձնված են 1802 թվականի Ամենյան համաձայնությամբ։

— Սակայն ինձ թվում է, որ այնպիսի մի զրահազգեստ, ինչպիսին ձերն է, էական օգուտ կբերեր այդ գործում։

— Իհարկե, չէ՞ որ այդ խեղճ մարդիկ, որոնք ջրասույզ են լինում, երկար ժամանակ չեն կարող մնալ ջրի տակ։ Անգլիացի Պերսիվալը, նկարագրելով դեպի Ցեյլոն կատարած իր ճանապարհորդությունը, պատմում է, թե ինչպես մի կաֆր կարողանում էր ամբողջ հինգ րոպե մնալ ջրի տակ, սակայն այդ ինձ միշտ կասկածելի էր թվում։ Գիտեմ, կան լողորդներ, որոնք ջրի տակ մնում են համարյա մի րոպե, հիսունյոթ վայրկյան, իսկ մի քանիսներն էլ, ամենաուժեղները, նույնիսկ ութսունյոթ վայրկյան, համարյա մեկ ու կես րոպե։ Սակայն դրանց թիվը շատ քիչ է, այն էլ ջրից դուրս գալուց հետո այդ թշվառների ականջներից ու քթերից արյունով ներկված ջուր է հոսում։ Ինձ թվում է, որ սուզակները ջրի տակ կարող են գտնվել միջին հաշվով երեսուն վայրկյանից ոչ ավելի, և այդքան կարճ ժամանակամիջոցում նրանք մարգարտի խեցիները պետք է գտնեն, պոկեն ու նետեն

ցանցի մեջ։ Մասնագետ սուզակները հազվագյուտ դեպքերում են հասնում միջին տարիքի. նրանց մեծամասնությունը մեռնում է ջահել հասակում. նրանց տեսողությունն արագ թուլանում է, աչքերը թարախակալվում են, ամբողջ մարմինը ծածկվում է գարշելի վերքերով։ Հաճախ նրանք սրտի պայթյունից հանկարծամահ են լինում ջրի տակ։

— Այո,— ասացի ես,— դա ծանր մասնագիտություն է... Եվ որքա՜ն մարդու կյանք, որքա՜ն ուժեր են զոհաբերվում կանանց քմահաճույքների համար... Սակայն ասացեք, նավապետ, մեկ նավն այդ ձևով քանի՞ խեցի է որսում։

— Մեկ բանվորական օրում քառասունից մինչև հիսուն հազար հատ։ Ասում են, թե 1814 թվականին անգլիական կառավարությունը պետության համար մարգարիտ էր հավաքել, և աշխատողները քսան օրվա ընթացքում ծովից դուրս էին բերել յոթանասունվեց միլիոն խեցի։

— Նրանց աշխատանքը լա՞վ է վարձատրվում։

— Ընդհակառակը, բոլորովին վատ։ Պանամայում նրանք վաստակում են օրական մեկ դոլարից ոչ ավելի։ Շատ հաճախ նրանք մեկ սու արժողությամբ պղնձադրամ են աշխատում մարգարիտ պարունակող յուրաքանչյուր խեցիի համար։ Բայց նրանք որքա՜ն խեցիներ են հավաքում, որոնք մարգարիտ չեն պարունակում։

— Մեկական սու մարգարտի համար, որը հարստացնում է ձեռնարկուի՞ն։ Դա վրդովեցուցիչ է։

— Այսպես ուրեմն, պարոն պրոֆեսոր,— ասաց նավապետ Նեմոն,— թե՛ ձեզ և թե՛ ձեր ուղեկիցներին կհաջողվի դիտել Մանաարյան ծոցի մարգարտյա հատակը։ Եթե այդ ժամանակ այնտեղ պատահմամբ լինի մարգարիտ հավաքող որևէ մեկը, դուք կծանոթանաք նաև այդ գործի տեխնիկայի հետ։

— Դա շատ հետաքրքիր կլինի։

— Ի դեպ, պրոֆեսոր, դուք չե՞ք վախենում շնաձկներից։

— Շնաձկնե՞րից,— զարմացա ես։

Այդ հարցը, մեղմ արտահայտված, պարապ հարց էր։

— Ուրեմն ինչպե՞ս,— համառեց նավապետ Նեմոն։

— Պետք է անկեղծորեն խոստովանեմ, նավապետ,— ասացի ես,— որ ես դեռ բավականաչափ չեմ ընտելացել այդ ձկներին։

— Իսկ մենք այնքան ենք ընտելացել, որ արդեն անտարբեր ենք դեպի նրանց. շուտով դուք էլ նույն կերպ կվերաբերվեք,— պատասխանեց ինձ նավապետը,— մենք լավ զինված կլինենք և ճանապարհին որևէ շնաձուկ կորսանք։ Այդ որսը հետաքրքիր է։ Այսպես ուրեմն, պրոֆեսոր, ցտեսություն։ Վաղ առավոտյան մենք կմեկնենք։

Ամենաանհոգ տոնով ասելով այդ, նավապետ Նեմոն դուրս գնաց սրահից։

Եթե ձեզ հրավիրեին արջ որսալու Շվեյցարիայի լեռներում, դուք հավանորեն կպատասխանեիք.— «Լավ, վաղը կգնանք արջ որսալու»։ Եթե ձեզ հրավիրեին առյուծ որսալու Ատլասի հարթավայրերում կամ վագր որսալու Հնդկաստանի մթին անտառներում, դուք երևի կմտածեիք, «Ինչ կա որ, գնանք վագրեր կամ առյուծներ որսալու, դա հետաքրքրքիր է»։ Սակայն երբ ձեզ հրավիրում են շնաձկներ որսալ ոչ թե նավի տախտակամածի վրա գտնվելով, այլ նրանց սեփական, հարազատ միջավայրվում՝ դուք հավանորեն նախքան այդպիսի հրավեր ընդունելը լրջորեն կխորհրդածեիք։

Խոստովանում եմ, որ երբ նավապետ Նեմոն դուրս գնաց սալոնից, ես ճակատիցս սրբեցի սառը քրտինքը։

«Լավ մտածիր,— ասացի ինքս ինձ,— շտապելու կարիք չկա։ Այլ բան է ջրասամույրներ որսալը Կրեսպո կղզու ստորջրյա անտառներում, դա միայն հաճելի ժամանց է։ Սակայն այլ բան է թափառել ծովի հատակում, երբ հաստատ հավատացած ես, որ անխուսափելիորեն հանդիպելու ես շնաձկների։ Ես գիտեմ, որ մի քանի տեղերում, մասնավորապես Անդամանյան կղզիներում, նեգրերն առանց վախենալու, մեկ ձեռքում բռնած դաշույնը, մյուսում պարանը, հարձակվում են շնաձկների վրա։ Սակայն ես նաև գիտեմ, որ այդ վիթխարի գիշատիչների հետ չափվող խիզախներից շատերը կենդանի չեն վերադառնում։ Բացի դրանից, չէ՞ որ ես նեգր չեմ, իսկ եթե նեգր էլ լինեի, այս դեպքում ևս իմ տատանումները որոշ չափով կարդարանային»։

Մոքիս հանդեպ սլանում էին շնաձկների վտառները. ես տեսնում էի հսկայական երախներ, զինված մի քանի շարք ատամներով, որոնք կարող էին մարդուն երկու կես անել։ Ես զգում էի, թե ինչպես այդ ատամները խրվում էին կողերիս մեջ...

Բացի դրանից, ինձ համար անհասկանալի էր այն անհոգությունը, որով նավապետն ինձ արավ այդ առաջարկը։ Կարծես թե նա ինձ կանչում էր անտառ, մի որևէ խղճուկ աղվես որսալու։

«Հավանորեն Կոնսելը կհրաժարվի,— մտածեցի ես,— դա ինձ հնարավորություն կտա մերժել նավապետ Նեմոյի առաջարկը»։

Ինչ վերաբերում է Նեդ Լենդին, խոստովանում եմ, որ ես այնքան էլ չէի հավատում նրա խելոքության։ Վտանգը, որքան էլ մեծ լիներ, միշտ գրավում էր այդ ռազմասեր մարդուն։

Ես կրկին վերցրի Սիրրի գիրքը, որ ակայն թերթում էի սոսկ մեքենաբար։ Գրքի էջերից ինձ էին նայում շնաձկների հրեշավոր, լայն բացված երախները։

Այդ րոպեին Նեդ Լենդը և Կոնսելը մոտ սրահ։ Երկուսն էլ լավ տրամադրություն ունեին և նույնիսկ ուրախ էին։ Նրանք չգիտեին, թե իրենց ինչ է սպասում։

— Ազնիվ խոսք,— սկսեց Լենդը, տեսնելով ինձ,— ձեր նավապետ Նեմոն, գրողը տանի նրան, քիչ առաջ մեզ բավական սիրալիր առաջարկ արավ...

— Հը՛մ,— ասացի ես,— դուք արդեն գիտե՞ք...

— Պարոնի թույլտվությամբ, կասեմ,— պատասխանեց Կոնսելը,— որ «Նաուտիլուսի» հրամանատարը մեզ հրավիրեց այցելել ծեյլոն կղզու նշանավոր մարգարտահանքերը։ Նա մեզ հետ շափազանց սիրալիր էր, և իրեն պահում էր իբրև իսկական ջենտլմեն։

— Նա ձեզ ուրիշ ոչինչ չասա՞ց։

— Ոչինչ,— պատասխանեց կանադացին,— եթե չհաշվենք այն, որ նա մեզ հաղորդեց, որ ձեզ էլ է հրավիրել մասնակցելու այդ ստորջրյա փոքրիկ զբոսանքին։

— Իսկապես,— ասացի ես,— ձեզ որևէ մանրամասնություն չի՞ հաղորդել այն մասին, որ...

— Ոչ մի մանրամասնություն, պարոն պրոֆեսոր։ Իհարկե, դուցե կգաք մեզ հետ, այնպես չէ՞։

— Ես... անշուշտ։ Տեսնում եմ, որ դուք ճաշակել եք սառցշրջյա զբոսանքների համը, միստեր Լենդ։

— Այո, դա հետաքրքիր է, շատ հետաքրքիր։

— Բայց դուցե և վտանգավո՞ր է,— իբր թե պատահմամբ ասացի ես։

— Ի՞նչ վտանգավոր բան կարող է լինել մարգարտի ծանծաղուտներում մի հասարակ զբոսանք կատարելու մեջ,— ասաց Լենդը։

Պարզ էր, որ նավապետ Նեմոն հարկավոր չէր համարել շնաձկներով վախեցնել իմ ընկերներին։ Ես հուզմունքով նայում էի նրանց, կարծես թե նրանք կորցրել էին իրենց թևերը կամ ոտները։ Արդյոք ես նրանց պետք է նախազգուշացնեի՞ վտանգի մասին։ Իհարկե։ Սակայն ես չգիտեի ինչպես սկսել այդ։

— Արդյոք պարոնը չի՞ համաձայնի մեզ որևէ բան պատմել մարգարիտ հավաքելու մասին,— ասաց Կոնսելը։

— Մարգարիտ հավաքելո՞ւ, թե՞ դրա հետ կապված վտանգի մասին,— իմ հերթին հարցրի ես, տեսնելով, որ հնարավոր է ցանկալի ուղղություն տալ խոսակցությանը։

— Հավաքելու մասին,— պատասխանեց կանադացին,— պետք է միշտ ամեն ինչ գիտենալ այն ճանապարհի մասին, որով հարկավոր է գնալ։

— Այդ դեպքում մոտիկ նստեցեք, բարեկամներս, և ես մարգարիտ հավաքելու վերաբերմամբ կպատմեմ այն ամենը, ինչ որ կարդացել եմ Միրրի գրքում։

Նեդը և Կոնսելը նստեցին ինձ մոտ, բազկաթոռին։ Կանադացին ամենից առաջ ինձ հարց տվեց.

— Պարոն պրոֆեսոր, ի՞նչ բան է մարգարիտը։

— Ի՛մ քարեկամ Նեդ,— սկսեցի ես,— բանաստեղծի համար մարգարիտը ծովի արցունքն է, արևելյան ժողովուրդների համար՝ կարծրացած ցող, կանանց համար՝ թանկագին, ձվաձև ու փայլուն քար է, որ իբրև զարդարանք կարելի է

կրել մատների, պարանոցի վրա կամ իբրև ականջի օղ՝ քիմիկոսի համար՝ ֆոսֆորաթթու աղերի, ածխաթթու կալցիումի և քիչ քանակությամբ ժելատինի բաղադրություն, վերջապես, բնագետի համար՝ մի քանի երկփեղկ խեցիների հիվանդոտ մակաճ...

— Այն խեցիների, որոնք պատկանում են կակղամորթների բաժնին, թիթեղանման քիմուխտ ունեցող կենդանիների դասին,— վրա բերեց Կոնսելը։

— Միանգամայն ճիշտ է, իմ ուսումնական բարեկամ։ Մարգարիտ կարող են արտադրել այն բոլոր կակղամորթները, որոնք առաջացնում են գաղտակուր, այսինքն կապույտ, կապտավուն, մանիշակագույն կամ սպիտակ նյութ, որով ծածկվում է նրանց խեցիների ներքին մասը։

— Ուտելի խեցիները նույնպե՞ս — հարցրեց կանադացին։

— Այո, նաև ուտելի խեցիները, որոնք գտնվում են Շոտլանդիայի, Ուելսի, Իռլանդիայի, Սաքսոնիայի, Բոհեմիայի և Ֆրանսիայի ջրերում։

— Այդպես,— ասաց կանադացին,— դա կընդունենք ի գիտություն։ Երբևէ պետք կգա։

— Սակայն մարգարտի գլխավոր մատակարարը մարգարտաբեր խեցին է։ Մարգարիտն ուրիշ բան չէ, բայց եթե գաղտակուրի մակաճ, որ ընդունում է ոլորտային ձև։ Մարգարիտը կամ կպչում է խեցիի ներքին մասերին, կամ լինում է կակղամորթի մարմնի ծալքերում։ Անկախ նրանից, թե որտեղ է առաջացել մարգարիտը, խեցիի ներքին մասերում թե կակղամորթի մարմնի վրա, նա միշտ ունենում է կորիզ, որի շուրջը տարեցտարի բարակ շերտերով նստում են գաղտակուրի նյութերը։ Որպես կորիզ կարող է ծառայել մեռած ձվիկը կամ խեցիի ներսը պատահմամբ ընկած ավազահատիկը։

— Մեկ խեցիում կարո՞ղ է լինել մի քանի մարգարիտ,— հարցրեց Կոնսելը։

— Այդպես էլ է լինում։ Մի քանի խեցիներ ամբողջ մարգարտյա մանյակներ են գոյացնում։ Երբ մենք մեկնելու էինք Ֆրանսիայից, մամուլում գրվեց մի խեցու մասին, որի

մեջ գտնվել էր հարյուր հիսուն շնաձուկ,— թեպետ ես դրան այնքան էլ չեմ հավատում։

— Հարյուր հիսուն շնաձո՞ւկ,— ապշեց Նեդ Լենդը։

— Մի՞թե ես ասացի «շնաձուկ»,— շփոթված բացականչեցի ես,— ուզում էի ասել մարգարիտ։ Շնաձկների մասին ասածս անհեթեթություն էր։

— Իհարկե,— ասաց Կոնսելը— բայց արդյոք չի՞ ասի պարոնը, թե մարգարիտներն ինչպես են դուրս բերվում խեցիներից։

— Դրա համար կան զանազան եղանակներ։ Եթե մարգարիտը կպած է լինում խեցիի ներքին մասին, դուրս են բերում փոքրիկ ունելիով։ Սակայն շատ հաճախ հավաքված խեցիները հենց տեղն ու տեղը, ծովափում դարսվում են և այդպես պահվում մաքուր օդում։ Տասն օրից հետո, երբ կակղամորթներն սկսում են նեխվել, դրանք լցվում են ավազանի մեջ, ուր ծովի ջուր է հավաքված, հետո խեցիները բացվում են ու լվացվում։ Այստեղ սկսվում է տեսակավորողների աշխատանքը։ Նրանք սկզբում հավաքում են խեցիի ներքին մասերին կպած մարգարիտները, հետո գաղտակուրի թիթեղները, որոնք առանձին են ծախվում, վերջապես, կակղամորթների պարենխիմը[1] եռացնում են այնքան, մինչև որ բոլորովին լուծվի և հեղուկից քամում են բոլոր մարգարիտները։

— Մարգարտի արժեքը միայն նրա մեծությունի՞ց է կախված,— հարցրեց Կոնսելը։

— Ո՛չ միայն մեծությունից,— պատասխանեցի ես,— այլև ձևից, գույնից, փայլից, լույսի այն գունախաղից, որ մարգարիտն այնքան հաճելի է դարձնում դիտողի համար։ Ամենախոշոր մարգարիտներն առաջ են գալիս կակղամորթի մարմնի ծալքերում։ Դրանք սպիտակ գույն ունեն, մեծ մասամբ թափանցիկ չեն, թեպետ պատահում են նաև արևակնային-թափանցիկ մարգարիտներ։ Դրանք լինում են գլխավորապես ոլորտանման կամ տանձի ձևով։ Ոլորտանման մարգարիտները գործ են ածվում ապարանջանների համար,

---

1 Պարենխիմա կոչվում է ստորին կենդանիների հյուսվածքը, որով լցված են լինում նրանց օրգանների միջև եղած մասերը։

տանձաձև մարգարիտները՝ գինդերի համար, կամ իբրև կախովի զարդարանք։ Թե՛ մեկ և թե՛ մյուս մարգարիտները հատով են ծախվում։ Խեցիի ներքին մասերին կպած մարգարիտներն ավելի անկանոն ձև ունեն, ուստի ավելի պակաս են գնահատվում և քաշով են վաճառվում։ Վերջապես, մանր մարգարիտները կազմում են երրորդ տեսակը։ Դրանք վաճառվում են չափելով և օգտագործվում են գլխավորապես ասեղնագործության, մանավանդ եկեղեցական զգեստների համար։

— Ինչպես երևում է, մարգարիտներն ըստ մեծության չոկելը երկարատև և բավական դժվար աշխատանք է,— ասաց կանադացին։

— Ո՛չ, բարեկամս, դա այնքան էլ բարդ գործ չէ։ Աշխատանքը կատարվում է տասնմեկ մաղերով։ Այն մարգարիտները, որ չեն մաղվում քսանից մինչև ութսուն անցք ունեցող մաղերով, պատկանում են առաջին տեսակին, հարյուրից մինչև ութ հարյուր անցք ունեցող մաղերով չմաղվող մարգարիտները—երկրորդ տեսակին, վերջապես, երրորդ տեսակին են պատկանում այն մարգարիտները, որոնք մաղվում են ութ հարյուրից մինչև հազար անցք ունեցող մաղերով։

— Այդ հետաքրքիր է,— ասաց Կոնսելը,— ես տեսնում եմ, որ տեսակավորողի աշխատանքը մեքենայացված է... Արդյոք պարոնը չի՞ կարող ասել, թե ինչքան եկամուտ է տալիս մարգարտավայրերի շահագործումը։

— Եթե հավատանք Սիրրի հաղորդած տեղեկություններին,— պատասխանեցի ես,— ապա Ցեյլոնի մարգարտի ծանծաղուտները վարձով են տրվում տարեկան երեք միլիոն շնաձկնով։

— Ֆրանկո՛վ,— ուղղեց ինձ Կոնսելը։

— Իհարկե ֆրանկով, երեք միլիոն ֆրանկով,—կրկնեցի ես,—սակայն ինձ թվում է, որ հիմա այդ ծանծաղուտները չեն տալիս այնպիսի եկամուտ, ինչպես առաջ։ Նույնը պետք է ասել նաև ամերիկյան ծանծաղուտների մասին։ Կարլոս Հինգերորդի ժամանակ դրանք ամեն տարի տալիս էին չորս միլիոն ֆրանկի մարգարիտ, իսկ այժմ այդ արտադրանքը

պակասել է երկու երրորդ մասով։ Աշխարհիս բոլոր մարգարտահանքերը տարեկան տալիս են մոտավորապես ինը միլիոն ֆրանկի մարգարիտ։

— Սակայն ես լսել եմ, որ կան առանձին մարգարիտներ, որոնք ծախվում են հսկայական գումարներով,— ասաց Կոնսելը։

— Այո՛, բարեկամս։ Պատմությունն ասում է, թե Հուլիոս Կեսարը Սերվիլիոսին նվիրել է մեր դրամով հարյուր քսան հազար ֆրանկ արժողությամբ մի մարգարիտ։

— Իսկ ես լսել եմ,— ասաց կանադացին,— որ հին ժամանակ ինչ-որ մի կին մարգարիտը լուծում էր քացախի մեջ և խմում։

— Այդ Կլեոպատրան է,— բացականչեց Կոնսելը։

— Երևի դա համեղ չէր լինի,— դիտեց Նեդ Լենդը։

— Դա զզվելի բան է եղել, Նեդ,— պատասխանեց Կոնսելը,— սակայն իմացեք, որ այդպիսի քացախի մի բաժակն արժեր հարյուր հիսուն հազար ֆրանկ։

— Ափսոս որ այդ կինն իմ կինը չի եղել,— ասաց կանադացին, նայելով իր ծանր բռունցքներին։

— Նեդ Լենդը Կլեոպատրայի ամուսի՞ն,— բարձր ծիծաղեց Կոնսելը։

— Ես պատրաստվում էի ամուսնանալ, Կոնսել,— հանգիստ պատասխանեց կանադացին,— բայց ես մեղավոր չեմ, եթե գործը գլուխ չեկավ։ Ես նույնիսկ մարգարտամանյակ գնեցի իմ հարսնացու քեթ Թենտերի համար, բայց նա չդիտեմ ինչու ամուսնացավ ուրիշի հետ։ Այդ մանյակն ինձ վրա նստեց մեկուկես դոլար, թեև, հավատացեք խոսքիս, պարոն պրոֆեսոր, այդ մանյակի քարերից ոչ մեկը չէր անցնի նույնիսկ քսան անցք ունեցող մաղի միջով։

— Իմ սիրելի Նեդ,— ծիծաղեցի ես,— այդ մանյակը եղել է արհեստական մարգարտից, սովորական ապակյա գնդակներից, որոնք լցված են լինում մարգարտի բնահյութով։

— Այնուամենայնիվ այդ բնահյութն էժան չի կարող լինել,— առարկեց կանադացին։

— Դա ոչինչ չարժե։ Դա մանր ձկան, ճերմակաձկան

թեփուկ է, որ լուծված է ազոտային թթվուտում։ Այդ բնահյութի արժեքը շատ չնչին է։

— Հիմա ես հասկանում եմ, թե ինչու Քեթ Թենտերն ուրիշի հետ է ամուսնացել,— փիլիսոփայի հանգստությամբ ասաց Նեդ Լենդը։

— Սակայն վերադառնանք թանկարժեք մարգարիտներին վերաբերող խոսակցության,— ասացի ես,— համոզված եմ, որ աշխարհումս և ոչ մի միապետ չի ունենա այնպիսի թանկարժեք մարգարիտ, ինչպիսին ունի նավապետ Նեմոն։

— Սա՞,— հարցրեց Կոնսելը, ցույց տալով թանկարժեք մի զարդ, որ դրված էր սև թավիշի վրա, ցուցափեղկի ապակու տակ։

— Այո, հենց դա։ Կարծում եմ, որ չեմ սխալվի, եթե այդ զարդարանքը գնահատեմ երկու միլիոն...

— Ֆրանկ, ֆրանկ...— արագ ավելացրեց Կոնսելը։

— Բոլորովին ճիշտ է, երկու միլիոն ֆրանկ։ Եվ դա ձեռք բերելու համար բավական էր, որ նավապետ Նեմոն կռանար...

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք,— գոչեց Նեդ Լենդը,— ո՞վ գիտե, գուցե վաղվա զբոսանքի ժամանակ մենք գտնենք այդպիսին։

— Հը՛մ,— ասաց Կոնսելը։

— Եվ ինչո՞ւ չենք կարող գտնել։

— Մեր ինչի՞ն են պետք միլիոնները, երբ գտնվում ենք «Նաուտիլուսում»։

— Այստեղ իհարկե դրանք պետք չեն, սակայն... ուրիշ տեղերում...

— Ուրիշ տեղերում...— Կոնսելն օրորեց գլուխը։

— Նեդ Լենդն իրավացի է,— ասացի ես,— եթե մենք մի քանի միլիոն արժողությամբ մարգարիտը տանենք Եվրոպա կամ Ամերիկա, այդ խիստ արժեքավոր կղարձնի մեր ստորջրյա արկածներին վերաբերող պատմությունները և վստահություն կստեղծի դեպի այդ արկածները։

— Հասկանալի է,— համաձայնեց կանադացին։

— Սակայն ասացեք,— կրկին սկսեց Կոնսելը, որին ավելի շատ հետաքրքրում էր հարցի գիտական կողմը, քան նյու-

թականը,— արդյոք մարդարիտ փնտրելը չի՞ կապված որևէ վտանգի հետ։

— Ո՛չ,— իսկույն պատասխանեցի ես,— մանավանդ եթե նախազգուշության մի քանի միջոցներ ձեռք առնվեն։

— Իսկ այդ զբաղմունքի մեջ ի՞նչ վտանգ կարող է լինել,— հարցրեց Նեդ Լենդը,— բացի նրանից, որ կարելի է մի ավելորդ կում ջուր կուլ տալ։

— Հը՛մ, բանը միայն այդ չէ, Նեդ։ Ի դեպ,— ավելացրի ես, աշխատելով խոսել նույնչափ անհոգ, որչափ նավապետ Նեմոն— դուք չե՞ք վախենում շնաձկներից, Նեդ։

— Ե՞ս,— բացականչեց Նեդը,— ես, պրոֆեսիոնալ եռաժանատրս, վախենա՞մ շնաձկներից։ Թքել եմ նրանց վրա։

— Խոսքն այն մասին չէ, որ կարելի է կեռով բռնել շնաձուկը հանել տախտակամածի վրա, այնտեղ կացնով կտրել նրա պոչը, փորը պատռել, պոկել սիրտը և ծով նետել...

— Ուրեմն դուք հարցնում էիք, թե...

— Այո՛, այո՛։

— Ջրի մե՞ջ։

— Եթե լավ եռաժանի ունենալ... Գիտե՞ք, պարոն պրոֆեսոր, դրանք ընդհանրապես անճոռնի կենդանիներ են։ Ձեզ կուլ տալու համար նրանք անպայման պետք է շուռ գան որովայնի վրա, իսկ մինչ այդ դուք անպայման կկարողանաք եռաժանիով խոցել նրանց սիրտը։

Նեդ Լենդն ընդունակություն ուներ «կուլ տալ» բառն արտասանել այնպես, որ ձեր մարմնով սարսուռ էր անցնում։

— Իսկ դու, Կոնսել, ի՞նչ կարծիք ունես այդ շնաձկների մասին,— հարցրի ես։

— Ես միանգամայն անկեղծ կլինեմ պարոնի հետ,— սկսեց Կոնսելը։

«Հաջողություն եմ ցանկանում»,— մտածեցի ես։

— Եթե պարոնը որոշել է անտարբեր լինել դեպի շնաձկները, ապա ինչո՞ւ ես, նրա հավատարիմ սպասավորը, պիտի վախենամ նրանց հանդիպելուց։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՏԱՍԸ ՄԻԼԻՈՆ ԱՐԺՈՒԼՈՒԹՅԱՄԲ ՄԱՐԳԱՐԻՏԸ

Վրա հասավ գիշերը։ Ես պառկեցի անկողնում, սակայն լավ չքնեցի։ Երազումս շարունակ շնաձկներ էի տեսնում, հաճախ արթնանում էի և վրաս սառը քրտինք էր գալիս։

Հետևյալ առավոտ, ժամը չորսին ինձ արթնացրեց սպասավորը, որ նավապետ Նեմոյի կողմից ուղարկված էր ինձ սպասարկելու համար։ Ես արագությամբ վեր կացա, հագնվեցի և մտա սրահ։

Այնտեղ նավապետ Նեմոն արդեն սպասում էր ինձ։

— Պատրա՞ստ եք ուղևորվելու, պրոֆեսոր,— հարցրեց նա։

— Միանգամայն պատրաստ եմ, նավապետ։

— Այդ դեպքում խնդրեմ հետևել ինձ։

— Իսկ իմ ուղեկիցնե՞րը, նավապետ։

— Նրանց արդեն նախազգուշացրել եմ, և նրանք սպասում են մեզ։

— Հիմա մենք զրահազգե՞ստ ենք հագնելու։

— Առայժմ ոչ։ «Նաուտիլուսը» չի կարող շատ մոտենալ ափին, ուստի ես նավը կանգնեցրել եմ Մանաարյան ծոցի մարգարտաբեր ծանծաղուտներից բավական հեռու։ Ես կարգադրել եմ պատրաստել մի նավակ, որը մեզ կհասցնի ուղղակի ծանծաղուտը և այդպիսով կազատի մեզ ավելորդ հոգնածությունից։ Զրահազգեստները գտնվում են նավակում և մենք դրանք կհագնենք ջրասույզ լինելուց անմիջապես առաջ։

Նավապետ Նեմոն հրավիրեց ինձ հետևել իրեն։ Մենք բարձրացանք տախտակամածը։ Այնտեղ մեզ արդեն սպասում էին Նեդ Լենդը և Կոնսելը, որոնք զոհ էին «հաճելի զբոսանքի» հեռանկարից։ Նավակը կապված էր «Նաուտիլուսին» և իջեցրած էր ջուրը։ Թիավարելու համար նստել էին հինգ նավաստի։

Լույսը դեռ չէր բացվել, և գիշերը բոլորովին խավար էր։ Երկինքը պատած էր խիտ ամպերով։ Ամպերի միջև տեղ-տեղ

ասողներ էին երևում։ Ես նայեցի ցամաքի կողմը, բայց տեսա միայն անթափանց խավար, որ ծածկել էր հորիզոնի երեք քառորդ մասը։ «Նաուտիլուսը», որ գիշերով անցել էր Ցեյլոն կղզու արևմտյան ափերով, այժմ գտնվում էր ծովածոցի մուտքում, կամ այն ծովախորշում, որ գտնվում է Ցեյլոնի և Մանաար կղզու ափերի մեջ։ Մթին ջրերում գտնվում էր աշխարհիս ամենախոշոր, մարգարտաբեր ծանծաղուտներից մեկը, այդ անապատ գանձարանը, որի տարածությունը գրեթե քսան մղոնի էր հասնում։

Նավապետ Նեմոն, Նեդ Լենդը, Կոնսելն ու ես տեղ բռնեցինք նավակի հետին մասում։ Նավաստիներից մեկը մոտեցավ ղեկին։ Մնացածները վերցրին թիակները, և հենց որ կապն արձակվեց, մենք ճանապարհ ընկանք։

Նավակն ուղևորվեց դեպի հարավ։ Թիավարները չէին շտապում։ Ես նկատեցի, որ նրանք յուրաքանչյուր տասը վայրկյանը մեկ անգամ թիակներն ուժեղ թափով իջեցնում էին ջուրը, ինչպես այդ արվում է ռազմա-ծովային նավատորմիղներում։ Այն ժամանակ, երբ նավակը գնում էր իներցիայով, լսվում էր բարձրացվող թիակներից ալիքների վրա թափվող ջրի կաթիլների թեթև շրթ-շրթոցը։ Ծովը մեղմ ալեկոծվում էր և օրորում նավակը, որի սուր ծայրը ճեղքում էր ծփուն ալիքները։

Մենք լուռ էինք։ Ինչի՞ մասին էր մտածում նավապետ Նեմոն։ Գուցե այդ ցամաքի մասին, այն մասին, որ մենք մոտենում ենք եզերքին։ Հավանորեն Նեդ Լենդը նույնպես մտածում էր ցամաքի մասին, սակայն, նրա կարծիքով, մենք այնուամենայնիվ դեռ շատ հեռու էինք եզերքից։ Ինչ վերաբերում է Կոնսելին, նա կարծես թե ոչնչի մասին չէր մտածում, այլ միայն անհամբերությամբ սպասում էր խոստացված հաճույքին։

Ժամը հինգն անց կեսին արշալույսի առաջին շողերը հորիզոնի վրա ավելի պարզ գծագրեցին լեռները։ Արևելյան կողմում կղզին ցածրադիր էր, հարավային կողմում՝ լեռնոտ։ Մինչև կղզին մնում էր հինգ մղոն։

Ծովի վրա ոչինչ չէր երևում։ Ոչ մի նավակ, ոչ մի սու-

զակ։ Այստեղ, ուր հանդիպում են մարգարիտ հավաքողները, տիրում էր խորին լռություն։

Նավապետ Նեմոն իրավացի էր. մենք շատ վաղ ժամանեցինք այնտեղ։

Առավոտյան ժամը վեցին բացվեց ցերեկն այնպես հանկարծակի, ինչպես այդ հատուկ է արևադարձային երկրներին, ուր ոչ առավոտյան արշալույս է լինում, ոչ էլ երեկոյան մթնշաղ։ Արևի ճառագայթներն անցնում էին հորիզոնը վարագուրած ամպերից, և ցերեկվա լուսատուն բարձրանում էր երկնքում։

Հիմա ես պարզ տեսնում էի ցամաքը և նույնիսկ ծովափին բուսած մենավոր ծառերը։

Նավակը դարձավ դեպի Մանաար կղզին, որի եզերքը հարավային կողմում կլոր ձև ուներ։ Նավապետ Նեմոն վեր կացավ նստարանից և դիտեց ծովը։

Նրա տված նշանով նավակը կանգ առավ, և խարիսխը նետվեց ջուրը։ Սակայն խարիսխի շղթան իջավ ընդամենը մեկ մետր, այնքան չնչին էր ջրի խորությունը մարգարտաբեր ծանծաղուտում։ Տեղատվության պատճառով նավակը տեղահան եղավ ու դնաց դեպի բաց ծով, որքան այդ թույլ էր տալիս խարիսխի շղթան։

— Մենք արդեն տեղ հասանք, պրոֆեսոր,— ասաց նավապետ Նեմոն։— Տեսնո՞ւմ եք այս ծովախորշը։ Մի ամսից հետո այստեղ կհավաքվեն հարյուրավոր նավեր և հազարավոր խիզախ սուզակներ կսուզվեն այս ջրերի մեջ։ Ծովախորշը շատ հարմար է մարգարիտ հավաքելու համար. ամենաուժեղ քամիներից պաշտպանված է լեռներով և այստեղ երբեք չի լինում սաստիկ ալեկոծություն, երկու հանգամանք, որ չափազանց կարևոր են սուզակների աշխատանքի համար։ Հիմա մենք կհագնենք զրահազգեստները և կսկսենք մեր զբոսանքը։

Ես ոչինչ չպատասխանեցի և շարունակելով դիտել խորհրդավոր ջուրը, նավաստիներից մեկի օգնությամբ սկսեցի հագնել ծանր զրահազգեստը։ Նավապետ Նեմոն և իմ երկու ընկերները նույնպես հագան զրահազգեստները։ Պարզվեց,

որ այդ զբոսանքի ժամանակ «Նաուտիլուսի» նավաստիներից ոչ մեկը չի ուղեկցելու մեզ։

Շուտով մենք մինչև պարանոցներս հագանք կաուչուկի հագուստը և մեջքներիցս կախեցինք խտացրած օդով լի պահամանները։ Ռումկորֆի ապարատներ և էլեկտրական լապտերներ նավակում չկային։ Այդ մասին ես ասացի նավապետ Նեմոյին, նախքան մետաղյա սաղավարտը կդնեի գլխիս։

— Դրանք մեզ հարկավոր չեն լինի,— պատասխանեց նավապետը,— մենք խորը տեղեր չենք գնա, իսկ ծանծաղ տեղերում մեզ արևի լույսն էլ բավական է։ Բացի դրանից, այստեղ էլեկտրական լապտեր վառելն աններեի անզգուշություն կլիներ, որովհետև լապտերների լույսը կգրավեր վտանգավոր գիշակերների՝ ուշադրությունը։

Նավապետ Նեմոյի այս խոսքերի վրա ես նայեցի Նեդ Լենդին և Կոնսելին։ Սակայն այդ անբաժան ընկերներն արդեն գլուխներին էին դրել մետաղյա սաղավարտները և ոչինչ չէին կարող լսել։

Ինձ մնում էր միայն վերջին հարցը տալ նավապետ Նեմոյին։

— Հապա ո՞ւր են հրացանները,— հարցրի ես,— մի՞թե մենք պիտի գնանք առանց զինվելու։

— Հրացաննե՞ր։ Մեր ինչի՞ն են պետք,— առարկեց նավապետ Նեմոն։— Մի՞թե ձեր լեռնցիները երբևէ հրացանով են գնում արջի դեմ։ Դաշույնը լավ է ամեն մի դնդակից։ Ահա ձեզ մի հրաշալի դաշույն։ Անցկացրեք գոտու տակ և գնանք։

Ես նայեցի մեր ուղեկիցներին։ Նրանք ևս զինված էին այնպես, ինչպես մենք, և բացի դրանից Նեդ Լենդի ձեռքում կար մի մեծ եռաժանի, որ նա իր հետ վերցրել էր «Նաուտիլուսից»։ Ինձ մնում էր միայն գլխիս վրա անցկացնել պղնձե ծանր սաղավարտը, թույլ տալ, որ այն պտուտակեն, ապա բաց անել խտացրած օդով լի պահամանի ծորակը։

Մի րոպեից հետո նավաստիները մեզ մեկ-մեկ իջեցրին ջուրը, և մենք մեկ ու կես մետրից ոչ ավելի խորությամբ ոտներով շոշափեցինք ավազոտ հատակը։

Նավապետ Նեմոն ձեռքով մեզ նշան արավ, մենք հետևեցինք նրան և թեք հատակով իջանք ավելի խորը տեղ։

ինձ ճնշող նախազգացումները հանկարծակի չքացան։ Ես բոլորովին հանգստացա։ Զրահազգեստն ինձ չէր խանգարում հեշտությամբ շարժումներ անել և դա ավելի բարձրացրեց տրամադրությունս։ Ես ամբողջովին անձնատուր եղա ստորջրյա կյանքի հրաշալի տեսարաններին։

Արևը բավականաչափ պայծառ լուսավորում էր հատակը։ Պարզ երևում էին նույնիսկ ամենամանր առարկաները։ Տասը քայլելուց հետո մենք խորացանք մինչև հինգ մետր։ Այստեղ հատակը տափարակ էր և հարթ։

Մենք վախեցրինք միափետրանիների ջոկատին պատկանող հետաքրքիր ձկների վտառներին։ Այդ ձկների միակ լողաթևը գտնվում է պոչի վրա։ Ես տեսա շերտավոր օձաձուկ-խանիներ, որոնք ունեն գրեթե մեկ մետր երկարություն, դեղնավուն գորշ մեջք, նույնպիսի որովայն և իրենց մեծությամբ ու բաց գույնով տարբերվում են չինական օձաձկանիներից։ Այնուհետև մեզ հանդիպեցին վառ գույնի առաջատավոր ձկներ, որոնց մեջքի լողաթևն օձիքի է նման։ Դրանք ուտելու ձկներ են, շորացրած ու թթու դրած վիճակում լավ ուտելիք են համարվում տեղական բնակչության համար։ Վերջապես, ես ուշադրություն դարձրի ժիժեռնաձկների ընտանիքին պատկանող ատալրիդ ձկան վրա, որի մարմինը ծածկված է շատ մանր թեփով, մեջքը կապտավուն-գորշ է, որովայնը՝ արծաթավուն։ Երկարությունը երեսուն սանտիմետրից ավելի չէ։

Մագող արևն ավելի և ավելի պայծառ էր լուսավորում ջուրը։ Հատակի բնույթը կամաց-կամաց փոխվում էր։ Մանր, երկար ժամանակ մնացած և պինդ ավազը տեղի էր տալիս խճուղու նմանվող հատակին, որ կարծես սալարկված էր ժայռերի կոր բեկորներով և ծածկված էր զոոֆիտներից ու կակղամորթներից առաջացած գորգով։

Այդ բաժինների ներկայացուցիչների մեջ ես տեսա պլացեններն իրենց խեցիի անհավասար, բարակ փեղկերով։ Դրանք պատկանում են ոստրեների ընտանիքին և լինում են միայն Կարմիր ծովում ու Հնդկական օվկիանոսում։ Նարնջագույն լյուցիններն իրենց կլոր խեցիով. մի քանի պարսկական ծիրանագույն խեցիներ, որոնք հիանալի ներկ

են մատակարարում «նատուրալուին», անատիններ՝ ուտելի խեցիներ, որոնք վաճառվում են Հնդկաստանի շուկաներում, և վերջապես, սկուլիններ, որոնց չքնաղագեղ հովհարներն անշուշտ ներկայացնում են օվկիանոսային կենդանական աշխարհի ամենագեղեցիկ տեսարանը։

Այդ ֆենդանի-բույսերի մեջ վխտում էին հոդվածոտոնքների, մասնավորապես բաղմածունկների խմբերն իրենց կլոր մարմիններով, որոնք մի կողմից վերջանում են փոքրիկ կընճիթով, իսկ մյուս կողմից՝ որովայնով, նաև յոթ զույգ վերջավորություններով. պալեոստրակներ, գրեթե չքացած տեսակ, ոչ զուրկ է բերանի առջևի վերջավորություններից. հսկայական խեցգետիններ, որոնց դիտել է նաև Չարլզ Դարվինը. բնությունը դրանց հսկայական ուժ է տվել. դրանք բարձրանում են առափնյա ծառերը, պոկում կոկոսները, որոնք ջարդվում են ընկնելուց հետո, ապա այդ խեցգետինները իրենց ուժեղ ճանկերով բաց են անում կոկոսները։ Այստեղ, պայծառ լուսավորված այս ջրերում խեցգետինները մի տեղից մի այլ տեղ են շարժվում զարմանալի ճկունությամբ, հակառակ մալաբարյան խեցգետինների, որոնք հաղիվհաղ սողում են ժայռերի միջև։

Առավոտյան ժամը մոտ յոթին մենք, վերջապես, հասանք մարգարտի ծանծաղուտը, ուր ցրված են միլիոնավոր խեցիները։ Այդ թանկարժեք կակղամորթներն իրենց արտադրած լորձունքային հեղուկի միջոցով կպչում են ժայռերին ու այլևս չեն շարժվում, դրանով տարբերվելով ուտելի խեցիներից, որոնք չեն կորցնում շարժվելու ունակությունը։

Այն խեցին, որտեղ մարգարիտ է առաջանում, ունի մոտավորապես կլոր ձև, գրեթե միատեսակ, շատ հաստ փեղկեր, որոնք արտաքին կողմից խորդուբորդ են։ Խեցիներից մի քանիսն ակոսված էին կանաչավուն շերտերով և ճառագայթներով, որոնք նրանց կատարներից տարածվում էին դեպի բոլոր կողմերը։ Դրանք նոր խեցիներ էին։ Մյուս, հին խեցիները, որոնց տարիքը տասնից բարձր էր, թուխ էին, համարյա սև և ունեին մինչ տասնհինգ սանտիմետր լայնություն։

Նավապետ Նեմոն ձեռքով ինձ ցույց տվեց անհամար քանակությամբ խեցիներ, և ես հասկացա, որ այդ հանքն խ-

կապես անսպառ է, քանի որ բնությունն այնուամենայնիվ միշտ ավելի է տեղծում քան ավերում է մարդը։ Նեղ լենդը, հավատարիմ լինելով ավերածության մարդկային բնազդին, շտապեց կողքից կախված ցանցը լցնել լավագույն կակղամորթներով։

Սակայն մենք չէինք կարող կանգ առնել։ Հարկավոր էր, ետ չմնալ նավապետից, որ վստահությամբ առաջ էր գնում իրեն ծանոթ շավիղներով։ Մի քանի անգամ մենք եղանք այնպիսի տեղերում, որ ձեռքս հասնում էր ծովի մակերևույթին։ Հետո դարձյալ խորը տեղ էինք ընկնում։ Հաճախ անցնում էինք բարձր, բրգաձև ժայռերի մոտից։ Դրանց ճեղքերում ու ծերպերում գտնվում էին խոշոր, խեցգետնանման խեցիներ։ Կանգնած լինելով իրենց բարձր ոտների վրա, որոնք նման էին ինչ-որ ֆանտաստիկ ռազմական մեքենաների, նրանք անթարթ նայում էին մեզ։

Վերջապես, մենք հասանք մի քարանձավ, որ բացված էր մի նկարագեղ, տարօրինակ ձև ունեցող ժայռի մեջ։ Ժայռը ծածկված էր ամենագեղեցիկ ծովային բուսականությամբ։ Սկզբում ինձ թվաց, որ քարանձավում անթափանցելի խավար է տիրում և արևի ճառագայթները հանգչում են այդ քարանձավի մուտքի մոտ. սակայն պարզվեց, որ անձավի մեջ լցված ջուրը լուսավորված է իր կլանած ճառագայթների ինչ-որ պայծառ և անորոշ գույն ունեցող լույսով։

Նավապետ Նեմոն մտավ քարանձավը։ Մենք հետևեցինք նրան։

Շուտով իմ աչքերն ընտելացան քարանձավում տիրող խավարին։ Ես նկատեցի քարանձավի խորդուբորդ կամարները, որ տեղ-տեղ հենված էին գրանիտե լայն հիմքեր ունեցող, տոսկանյան ճարտարապետության ծանրադիր սյուներին նմանվող բնական սյուներ։

Ինչո՞ւ մեր տարօրինակ ուղեկիցը մեզ տարավ այդ ստորջրյա քարանձավի խորքը։

Շուտով ես այդ իմացա։

Իջնելով թեք հատակով, մենք մտանք կլոր մի փոս։ Այստեղ նավապետ Նեմոն կանգ առավ և մեզ ցույց տվեց մի առարկա, որ մենք դեռ չէինք տեսել։

Դա հսկայական մեծություն ունեցող մի տրիդակնա էր, երկու մետր շառավիղով, մի ամբողջ ավազան, ուր կարող էին լողանալ մի քանի չափահաս մարդ, և ավելի մեծ էր, քան «նաուտիլուսի» սրահում գտնվող տրիդակնան։

Ես մոտեցա այդ զարմանալի կակղամորթին։ Նա կպել էր գրանիտե հարթակին, միայնակ և առանձնացած աճել քարանձավի ջրում։

Ես այդ կակղամորթի քաշը որոշեցի երեք հարյուր կիլոգրամ։ Այդպիսի «ոստրեն» առնվազն տասնհինգ կիլոգրամ «միս» է պարունակում։

Նավապետ Նեմոն ըստ երևույթին վաղուց գիտեր այդ կակղամորթի գոյության մասին։ Առաջին անգամը չէր, որ նավապետն այցելում էր նրան։ Ես մտածեցի, որ նավապետը մեզ այստեղ է բերել բնության այդ հրաշքը ցույց տալու համար։

Սակայն ես սխալվեցի։ Նավապետ Նեմոն ինքն էլ պետք է ծանոթանար խեցիի դրության հետ։

Խեցիի հսկայական փեղկերը կիսաբաց էին։ Նավապետը դաշույնը դրեց փեղկերի մեջ, որպեսզի դրանք չփակվեն։ Հետո նա ձեռներով բարձրացրեց կակղամորթի ատամնաձև ծայրը։

Այնտեղ, կակղամորթի մարմնի ծալքերի միջև ես տեսա կոկոսի ընկույզի մեծությամբ մի մարգարիտ։ Ոլորտային կանոնավոր ձևը, ապշեցուցիչ մաքրությունը և աննկարագրելի գեղեցկություն ունեցող լուսախաղը ցույց էին տալիս, թե ինչպիսի հսկայական արժեք ունի այս մարգարիտը։ Հետաքրքրությամբ համակված, ես պարզեցի ձեռքս, որպեսզի շոշափեմ այն, իմանամ ծանրությունը, մոտիկից զմայլվեմ մարգարիտով։ Սակայն նավապետ Նեմոն ետ մղեց ձեռքս, արագությամբ դուրս քաշեց դաշույնը փեղկերի միջից, որոնք իսկույն փակվեցին։

Ես հասկացա նավապետի դիտավորությունը. նա մարգարիտը թողնում էր կակղամորթի փեղկերում, որպեսզի ավելի աճի։ Ամեն տարի կակղամորթի արտադրած նյութերը նոր շերտ էին ավելացնում մարգարտի վրա։ Միայն նավապետ Նեմոն գիտեր այդ քարանձավը, ուր հասունանում էր

հրաշալի պտուղը։ Նավապետն աճեցնում էր մարգարիտը, որ մի գեղեցիկ օր տեղափոխի իր թանգարանը։ Գուցե նա արհեստականորեն էր աճեցնում այդ մարգարիտը, ինչպես անում են չինացիք և հնդիկները, կակղամորթի մեջ դնելով ուլունք կամ մետաղյա գնդակ, որը հետզհետե ծածկվում է գաղտակուրի շերտով։ Այսպես թե այնպես, համեմատելով այդ մարգարիտը գոյություն ունեցող կամ «նատուրլուսի» թանգարանում եղած մարգարիտների հետ, ես այն գնահատեցի առնվազն տասը միլիոն ֆրանկ։ Դա նույնիսկ թանկագին զարդ էլ չէր, որովհետև աշխարհում չկա մի կին, որի ականջը դիմանա այդպիսի գինդի ծանրության. դա բնության ապշեցուցիչ խաղ էր։

Մենք արդեն դիտել էինք հրաշալի խեցին։ Նավապետ Նեմոն դուրս եկավ քարանձավից, և մենք դարձյալ թեք հատակով բարձրացանք մարգարտի ծանծաղուտը։

Մենք գնում էինք ցրված, կարծես զբոսնում էինք դաշտում։ Մեզանից յուրաքանչյուրը որտեղ ուզում այնտեղ էլ կանգ էր առնում, ետ մնալով մյուսներից։

Պետք է ասել, որ ես բոլորովին մոռացա մեր ստորջրյա զբոսանքի վտանգը, որ նախորդ օրն այնքան ճնշում էր ինձ։

Մենք հետզհետե հասանք ծանծաղ տեղեր և վերջապես, այնտեղ, ուր ջրի խորությունը մեկ մետրից ավելի չէր։ Իմ գլուխը դուրս եկավ ջրից։ Կոնսելը հասավ ինձ և իր սաղավարտի ապակին հպելով իմ սաղավարտի ապակուն, հայացքով բարեկամաբար ողջունեց ինձ։ Սակայն այդ ծանծաղ տեղը բռնում էր ընդամենը մի քանի տասնյակ մետր տարածություն. մենք նորից մտանք խորը տեղեր՝ մեր տարերքի մեջ։ Ինձ թվում է, որ հիմա ես իրավացի եմ այդպես անվանելու օվկիանոսը։

Անցավ մոտ տասը րոպե։ Հանկարծ Նավապետ Նեմոն կանգ առավ։ Ինձ թվաց, թե նա կանգ առավ այն պատճառով, որ շեղվեց ճանապարհից, և մենք հիմա պետք է ետդառնանք։ Բայց ո՛չ, ստորջրյա ժայռի բավական լայն ճեղքվածքից նա մեզ նշան արավ, որ մոտենանք իրեն։ Հետո նա ձեռքը մեկնեց դեպի ինչ-որ մի կետ, և ես ուշադրությամբ նայեցի այդ կողմը։

Ինձանից հինգ մետր հեռու երևաց ինչ-որ մի ստվեր։ Ես անհանգստությամբ մտածեցի շնաձկների մասին։ Սակայն իզուր էր այդ. այս անգամ խնդիրը բոլորովին չէր վերաբերում այդ օվկիանոսային գիշակերներին։

Դա, էի մարդ էր, կենդանի մարդ, հնդիկ-ձկնորս։ Խեղճը երևի ջրասույզ էր եղել մարգարտի խեցի գտնելու համար։ Ես տեսա նրա մակույկը, որ գտնվում էր նրա գլխավերևում։ Նա ջրասույզ էր լինում և իսկույն դուրս էր գալիս ջրի երեսը։ Իջնելով ջուրը, նա ոտներով բռնում էր մի մեծ կոպիճ, որ պարանով կապված էր մակույկի ծայրին։ Այդպիսով նա կարողանում էր ավելի արագ հասնել հատակին։ Մոտավորապես հինգ մետր խորությամբ նա բաց էր թողնում քարը, արագությամբ ծունկ էր շոքում և գոտուց կախված ցանցն շտապ լցնում էր հենց առաջին հանդիպած խեցիներով։ Հետո դուրս էր գալիս ջրից, խեցիները լցնում մակույկը, ջրից դուրս էր քաշում քարը և դարձյալ կրկնում նույն գործողությունը։ Յուրաքանչյուր անգամ նա ջրի տակ մնում էր ոչ ավելի, քան երեսուն վայրկյան։

Սուզակը չէր նկատում մեզ։ Ժայռի ստվերը մեզ թաքցնում էր նրանից։ Եվ ինչպե՞ս կարող էր խեղճ հնդիկի մըտքովն անցնել, որ իր կողքին, ջրի տակ գտնվում են մարդիկ, իր նման արարածներ, և հետևում են նրա յուրաքանչյուր շարժման։

Շատ անգամ էր նա ջրասույզ լինում և նորից բարձրանում ջրի երեսը։

Ամեն անգամ նա կարողանում էր հավաքել ընդամենը տասը խեցի, որովհետև ստիպված էր պոկել հատակին կպած այդ խեցիները։ Եվ քանի՞-քանի՞ դատարկ խեցիներ էին լինում, որոնց համար նա վտանգի էր ենթարկում իր կյանքը։

Ես մեծ ուշադրությամբ հետևում էի նրան։ Նա ջրասույզ էր լինում և ջրից դուրս էր գալիս ճշտորեն որոշված ժամանակում։ Կես ժամվա ընթացքում ոչինչ չէր խանգարում նրա աշխատանքը։ Ես շատ զբաղվեցի այդ հետաքրքիր տեսարանով և բոլորովին մոռացա մարգարիտ որսողներին սպառնող վտանգը։ Այն վայրկյաններին, երբ հնդիկը ծունկ էր շոքել և խեցիներ էր հավաքում, ես տեսա, որ նա անսպասելի կեր-

պով մի կողմ նետվեց սարսափից ոտքի ելավ և հապճեպ պոկվեց հատակից, որպեսզի վեր բարձրանա։

Ես հասկացա նրա երկյուղի պատճառը։ Դժբախտ սուզակի վրա երևաց վիթխարի մի ստվեր։ Դա մի հսկայական շնաձուկ էր, որ երախը բացած, աչքերը կրակով լի, լողում էր դեպի հնդիկը։

Ես սարսափից քարացա, անզոր լինելով որևէ, չնչին շարժում կատարելու։

Ագահ գիշակերը հարձակվեց ուղղակի խեղճ հնդիկի վրա։ Վերջինս մի կողմ թռավ և ազատվեց շնաձկան երախից, սակայն գիշակերը պոչով սարսափելի հարված հասցրեց հընդիկին, որը վայր ընկավ։

Այդ բոլորը կատարվեց մի քանի վայրկյանում։ Շնաձուկը հետ դարձավ և շուռ գալով մեջքի վրա, պատրաստվեց երկու կես անել հնդիկին, երբ հանկարծ ես տեսա, թե ինչպես նավապետ Նեմոն, որ կանգնած էր իմ կողքին, վճռականապես քայլեց դեպի հրեշը, ձեռքում պահելով դաշույնը։

Նա ուզում էր մենամարտ սկսել սարսափելի գիշակերի հետ։

Շնաձուկն արդեն պատրաստվում էր կուլ տալ խեղճ սուզակին, երբ տեսավ նոր հակառակորդին։ Վայրկենապես դառնալով փորի վրա, նա լողաց դեպի նավապետ Նեմոն։

Ես հիմա էլ պարզ հիշում եմ այդ սարսափելի պայքարի բոլոր մանրամասնությունները։ Նավապետ Նեմոն հանկարծակի կանգ առավ և ապշեցուցիչ սառնասրտությամբ սպասեց վիթխարի շնաձկան մոտենալուն։ Երբ շնաձուկը հարձակվեց նավապետի վրա, վերջինս արտասովոր ճարպկությամբ մի կողմ ցատկեց և դաշույնը մինչև դաստակը խոթեց շնաձկան որովայնի մեջ։

Սակայն բանը դրանով չվերջացավ։ Միայն այստեղ ընկրկվեց պայքարը։

Շնաձուկը, պատկերավոր կերպով ասած, վայնասուն բարձրացրեց։ Արյունը հեղեղի պես թափվում էր նրա վերքից։ Մեր շուրջը ջուրն այնպես ներկվեց արյունով, որ ես այլևս ոչինչ չէի տեսնում։

Միայն մի քանի վայրկյանից հետո, երբ ջուրը մաքրվեց արյունից, ես տեսա, որ խիզախ նավապետը, շնաձկան լողաթևից բռնած, քաջաբար կռվում է նրա դեմ, դաշույնով թարս խփելով որովայնին, սակայն հնարավորություն չունենալով վերջին վճռական հարվածը տալու՝ արտին խփելու։ Շնաձուկը կատաղաբար գալարվում էր, ջուրն ալեկոծում այնպիսի ուժով, որ ես հազիվ էի ոտքի վրա կանգնում։

Ես ուզում էի օգնություն հասնել նավապետին, բայց սարսափից տեղումս քարացած, ոչ մի քայլ չէի կարողանում անել։

Վշտացած ու ցավելով տեսնում էի, թե ինչպես փոխվում է կռվողների դրությունը։ Նավապետն ընկավ հատակին, ճզմըվելով իր վրա ընկած վիթխարի կենդանու տակ։ Բացվեց շնաձկան ահագին, սարսափելի երախը, և մի վայրկյանից հետո նավապետը կմաքրեր իր բոլոր հաշիվները կյանքի հետ, եթե չմիջամտեր Նեդ Լենդը։

Արագ, ինչպես միտքը, կանադացին հարձակվեց շնաձկան վրա և իր եռաժանու սուր ծայրով սոսկալի հարված հասցրեց նրան։

Ջուրը կրկին ներկվեց արյան նոր հեղեղներով և ալեկոծվում էր շնաձկան պոչի կատաղի հարվածներից։ Սակայն Նեդ Լենդը չվրիպեց։ Նրա եռաժանին խոցեց շնաձկան սիրտը։ Դա մահվան տագնապ էր։ Ալեկոծությունը, որ առաջ էր գալիս հրեշի ջղաձգական շարժումներից, այնքան ուժեղ էր, որ ես ու Կոնսելը վայր ընկանք։

Մինչ այս մինչ այն, Նեդ Լենդն օգնեց նավապետին ոտքի կանգնելու։ Կռվի ժամանակ բոլորովին վնասված չլինելով, նավապետը ոտքի կանգնեց, անմիջապես մոտեցավ հնդիկին, արագությամբ կտրեց պարանը, որով քարը կապված էր հընդիկին, բռնեց վերջինիս և մղելով դեպի վեր, դուրս տարավ ջրի երեսը։

Մենք երեքով հետևեցինք նրան և այդպես հրաշալի կերպով ազատվելուց մի քանի վայրկյան հետո հասանք ղժբախտ սուզակի մակույկին։

Նավապետ Նեմոյի առաջին հոգսն էր ուշքի բերել սուզակին։ Ես վախենում էի, որ այդ չի հաջողվի, սակայն դա

անհուսալի չէի համարում, որովհետև հնդիկն այնքան էլ երկար չէր մնացել ջրի տակ։ Մյուս կողմից, սակայն, շնաձկան պոչի հարվածը կարող էր տեղն ու տեղը սպանել նրան։

Բարեբախտաբար այդպես չեղավ. Կոնսելն ու Նավապետ Նեմոն եռանդով շփեցին ջրահեղձի մարմինը և սա հետզհետե ուշքի եկավ։ Նա բացեց աչքերը։ Որքա՜ն մեծ պետք է լիներ նրա զարմանքը և նույնիսկ սարսափը, երբ տեսավ դեպի իրեն թեքված չորս մեծ պղնձե գլուխ։

Ի՞նչ պետք է մտածեր նա, երբ Նավապետ Նեմոն գոտուց հանեց ցանցը և մարգարտի հետ միասին տվեց նրան։ Յելոնի խեղճ հնդիկը հուզված, զողդոջուն ձեռքով ընդունեց ջրակյաց մարդու այդ փառահեղ ընծան։ Հնդիկի դեմքին արտահայտված երկյուղն ու զարմանքը բառերից ավելի պերճախոս կերպով ասում էին, որ նա չգիտե, թե ինչ գերբնական արարածների է պարտական իր կյանքի փրկությամբ և հանկարծակի ձեռք բերված հարստությամբ։

Նավապետ Նեմոյի նշանով մենք դուրս եկանք նավակից, վերադարձանք մարգարտի ծանծաղուտի հատակը և կես ժամ քայլելուց հետո մոտեցանք խարխին, որի վրա կանգնած էր «Նաուտիլուսի» նավակը։

Նստելով նավակը, մենք նավաստիների օգնությամբ ազատվեցինք մետուղյա ծանր սաղավարտներից։

Նավապետ Նեմոյի առաջին խոսքն ուղղված էր Նեդ Լենդին.

— Շնորհակալություն, միստեր Լենդ,— ասաց նա։

— Չարժե, նավապետ,— պատասխանեց կանադացին,— ես միայն վերադարձրի ձեզ իմ պարտքը։

Գիշատ ժպիտը սահեց նավապետի դեմքով և դրանով վերջացավ ամեն ինչ։

— Դեպի «Նաուտիլուս»,— հրամայեց նավապետը։

Նավակը նետի արագությամբ սլացավ ալիքների միջով։ Մի քանի րոպեից հետո մենք անցանք ջրի երեսը, ելած շնաձկան դիակի մոտից։ Սուր դնչից, երկար, մանգաղաձև, մեծ լողաթևերից, որ հասնում էին մինչև մեջքի ողաթևը, վերջապես, մեջքի հերձաքարային գույնից և որովայնի սպիտակությունից ես ճանաչեցի կապույտ շնաձկանը, որ իսկա-

կան շնաձկների ընտանիքի ամենավտանգավոր ներկայացուցիչներից մեկն է։

Կոնսելը շնաձկանը դիտում էր զուտ գիտական հետաքրքրությամբ, և ես հավատացած եմ, որ այդ բոպեին նա իր մտքում շնաձկանը դասում էր կոճկաձկների ենթադասի, իսկական շնաձկների ընտանիքի և կապույտ շնաձկների տեսակի շարքը։ Նա միանգամայն իրավացի էր։

Այն ժամանակ, երբ ես նայում էի անշարժ ընկած կենդանուն, հանկարծ մակույկի մոտ երևացին նրա վեց անկըշռում ցեղակիցները։ Սակայն բոլորովին ուշադրություն չդարձնելով մեզ վրա, նրանք հարձակվեցին ու սկսեցին մեկմեկուց խլել կապույտ շնաձկան դիակի կտորները։

Ութն անց կեսին մենք վերադարձանք «Նաուտիլուս»։

Գտնվելով իմ սենյակում, ես վերհիշեցի այդ օրվա առավոտյան դեպքերը։ Սրանցից կարելի էր հանգել երկու եզրակացության։ Առաջին՝ նավապետ Նեմոն իր համարձակությամբ մրցակից չուներ, երկրորդ, չնայելով, որ նա ատում էր մարդկությանը, որից փախչում էր մինչև ծովի հատակը, նա իրեն անհայտ մի խեղճ մարդու կյանքը փրկելու համար պատրաստ էր վտանգի ենթարկել իր կյանքը։ Ինչ էլ որ իր մասին ասեր այդ տարօրինակ մարդը, այնուամենայնիվ երևում էր, որ նրան չի հաջողվել իր սրտում մինչև վերջ խեղդել մարդասիրական զգացումները։

Երբ ես այդ ասացի նավապետին, նա նկատելի հուզումով պատասխանեց ինձ.

— Դա հնդիկ էր, պրոֆեսոր, ճնշված երկրի բնակիչ։ Մինչև վերջին շունչս ես կլինեմ ճնշվածների կողմը, և յուրաքանչյուր ճնշված մարդ եղել է և կլինի իմ եղբայրը։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԿԱՐՄԻՐ ԾՈՎԸ

Հունվարի քսաներեքին, ցերեկով, Ցեյլոն կղզին չքացավ հորիզոնում և «Նաուտիլուսը» մի ժամում անցնելով քսան մղոն, ուղևորվեց դեպի այն նեղուցները, որ Մալդիկյան կըղ-

գինները բաժանում են Լակկադինյան կղզիներից։ Նավն անցավ Կիտոանի՝ կորալային կղզու մոտից, որ 1499 թվականին գտել էր Վասկո դե Գամանն։ Դա Լակկադինյան արշիպելագի տասնինը խոշորագույն կղզիներից մեկն է և գտնվում է 10° և 14°30′ հյուսիսային լայնության և 69° ու 50°72′ արևելյան երկարության տակ։

Ճապոնական ծովից մեկնելուց մինչև հիմա մենք անցել ենք տասնվեց հազար երկու հարյուր քսան մղոն, կամ յոթ հազար հինգ հարյուր լյո։

Հետևյալ օրը, հունվարի 30-ին, երբ «Նաուտիլուսը» բարձրացավ ջրի երեսը, ոչ մի ցամաք չէր երևում։ Հիմա նավն ընթանում էր դեպի հյուսիս-հյուսիս-արևմուտք, դեպի Օման ծոցը, որ գտնվում է Արաբիայի և Հնդկական թերակղզու միջև և ներկայանում է Պարսկական ծոցի մուտքը։

Ո՞ր էր մեզ տանում նավապետ Նեմոն։ Ես այդ չգիտեի և չէի կարող պատասխանել Նեդ Լենդին, որն ինձ տվեց այդ հարցը։

— Իմ բարեկամ Նեդ, մենք գնում ենք այնտեղ, ուր ցանկանում է նավապետ Նեմոն,— պատասխանեցի ես։

— Վախենում եմ, որ դա մեզ համար լավ հետևանք չունենա,— ասաց կանադացին։— Պարսկական ծոցը միայն մի մուտք ունի, որը նաև ծառայում է իբրև ելք, և եթե մենք մտնենք այդ ծոցը, անխուսափելիորեն պետք է ետ դառնանք։

— Ի՞նչ արած, Նեդ, ետ կդառնանք։ Իսկ եթե Պարսկական ծոցում գտնվելուց հետո նավապետ Նեմոն ցանկանա այցելել Կարմիր ծովը, Բաբ-ել-Մանդեբի նեղուցը միշտ պատրաստ է ճանապարհ տալու նրա նավին։

— Պարոն պրոֆեսոր, դուք ինձանից ավելի լավ գիտեք, որ Կարմիր ծովը նույնպիսի փակ ծով է, ինչպես և Պարսկական ծոցը,— առարկեց Նեդ Լենդը,— որովհետև Սուեզի ջրանցքը դեռ չի փորված, և նույնիսկ այնպիսի մի նավ, ինչպիսին «Նաուտիլուսն» է, չի կարող անցնել այդ ջրանցքի ապագա ջրարգելակների պեղանների միջով։ Այսպիսով Կարմիր ծովը ոչ մի կերպ չի կարող մեզ մոտեցնել Եվրոպային։

— Ես ձեզ չեմ ասել, թե մենք մոտենում ենք Եվրոպային։

— Ապա դուք ի՞նչ եք ենթադրում։

— Իմ կարծիքով «Նաուտիլուսը», այցելելով Արաբիայի ու Եգիպտոսի մոտ եղած ծովերը, կվերադառնա Հնդկական օվկիանոսը, կամ Մոզամբիկյան նեղուցով, կամ Մասկարենյան կղզիների մոտով, ապա կհասնի Բարեհուսո հրվանդանին։

— Ենթադրենք, թե այդպես էլ կլինի,— շարունակեց հարցաքննել Նեդ Լենդն իրեն ոչ հատուկ հաստատակամությամբ,— լավ, իսկ ե՞րբ մենք կհասնենք Բարեհուսո հրվանդանին։

— «Նաուտիլուսը» կանցնի հրվանդանի մոտից և դուրս կգա հենց այն Ատլանտյան օվկիանոսը, ուր մենք դեռ չենք եղել։ Իմ բարեկամ Նեդ, ճիշտ ասացեք, մի՞թե ձեզ հոգնեցրել է այս ստորջրյա ճանապարհորդությունը։ Մի՞թե ձեզ ձանձրացրել է ստորջրյա տեսարանների այս անվերջ բազմազանությունը։ Ինչ վերաբերում է ինձ, ճիշտն ասած, ես անկեղծորեն ցավելով իմանում եմ, որ վերջանում է այս զարմանալի ճանապարհորդությունը, որի մասին ոչ մի մարդ երազել անգամ չի կարող։

— Մի՞թե դուք մոռացել եք, պարոն պրոֆեսոր,— առարկեց Կանադացին,— որ երեք ամիս մենք գերի ենք այս ստորջրյա նավում։

— Ես այդ չեմ հիշում, Նեդ, և չեմ էլ ուզում հիշել։ «Նաուտիլուսում» գտնվելու ոչ ժամերն եմ հիշում, ոչ էլ օրերը։

— Այս բոլորն ինչո՞վ կվերջանա։

— Վերջը կգա իր ժամանակին։ Մենք ոչ մի կերպ չենք կարող արագացնել նրա գալուստը և իզուր ենք վիճում։ Եթե դուք, քաջ Նեդ, գայիք և ասեիք ինձ՝ «եկել է, փախչելու հարմար առիթը», ապա ես հաճույքով ձեզ հետ միասին կքննարկեի մեր փրկության հնարավորությունը։ Սակայն այդպիսի առիթ դեռևս չկա և անկեղծորեն ասած՝ ես այնքան էլ չեմ հավատում, որ նավապետ Նեմոն համարձակվի երբևէ մտնել Եվրոպական ծովերը։

Այս կարճ խոսակցությունից երևում է, որ ես դարձել եմ

«Նաուտիլուսի» և նրա հանելուկային նավապետի մոլեռանդ երկրպագուն։

Ինչ վերաբերում է Նեդ Լենդին, նա խոսակցությունը վերջացրեց հետևյալով.

— Այդ բոլորը ճիշտ է, սակայն իմ կարծիքով այնտեղ, ուր կա հարկադրանք, չի կարող վայելք լինել։

Հետևյալ չորս օրերի ընթացքում մինչև փետրվարի 3-ը «Նաուտիլուսը» տարբեր արագությամբ և տարբեր խորությամբ լողում էր Օման ծոցում։ Թվում էր, որ նավը հաջողությամբ է լողում, կարծես դեռևս չի ընտրել վերջնական ուղին, բայց այդ օրերում մենք ոչ մի անգամ չանցանք խեցգետնի արևադարձը։

Նախքան այդ ծովից հեռանալը մենք մի քանի րոպե դիտեցինք Օմանի գլխավոր քաղաքը՝ Մասկատը։ Ես սքանչացա այդ քաղաքի գեղեցիկ տեսքով. ժայռերի սև ֆոնի վրա սպիտակ տները և ամրություններն իսկապես որ հազվագյուտ տեսարան էին ներկայացնում։ Ես զմայլվում էի մզկիթների կլոր գմբեթներով, մինարեների սուր դաղաթներով, դարավանդների թարմ կանաչով։ Սակայն այդ տեսիլքը երկար չշարունակվեց, «Նաուտիլուսը» կրկին սուզվեց մթին ջրերի խորքը։

Այնուհետև մեր նավը սկսեց լողալ ցամաքից վեց մղոն հեռու, Արաբիայի ափերի երկարությամբ, անցնելով Հադրամաուտը, անցնելով ոչ-բարձր լեռների ալեձև շղթան, ուր տեղ-տեղ հնամյա ավերակներ էին երևում։ Փետրվարի հինգին մենք վերջապես մտանք Ադենյան ծոցը, որ ձաղարի ձևով միանում է Բաբ-ել-Մանդեբի նեղուցին։ Հնդկական օվկիանոսի ջրերը այդ ծոցի վրայով լցվում են Կարմիր ծովը։

Փետրվարի վեցին «Նաուտիլուսը» դուրս եկավ ջրի երեսը, և մենք նկատեցինք Ադեն քաղաքը, որ գտնվում է նեղլիկ պարանոցով մայր ցամաքին միացած, համանուն հրվանդանի վրա։ Ադենը, որ բնական պայմաններով իրենից ներկայացնում է իսկական արաբական Ջիբրալթար, 1839 թվականին գրավված է անգլիացիների կողմից և հիմա դարձել է բոլորովին անմատչելի մի բերդ։ Հեռվում ես տեսա այդ քաղաքի ութկողմանի մինարեները։ Պատմաբան Էդրիզիսի ա-

սելով՝ մի ժամանակ այդ քաղաքն ամենաշխույժ ու հարուստ առևտրական կետ է եղել ամբողջ ծովափում։

Ես հավատացած էի, որ նավապետ Նեմոյի կարգադրությամբ «Նաուտիլուսը» ետ կդառնա Ադենից։ Սակայն պարզվեց, որ ես սխալվում եմ։

Հետևյալ օրը, փետրվարի 7-ին, մենք մտանք Բաբ-ել-Մանդեբի նեղուցը։ Նեղուցի անունն արաբերեն է և նշանակում է «արցունքների դուռ»։ Նեղուցի երկարությունն ընդամենը հիսուներկու կիլոմետր է, և «Նաուտիլուսը», որ սլանում էր իր ամբողջ արագությամբ, այդ տարածությունն անցնելու համար մի ժամ էլ չկորցրեց։ Սակայն ինձ չհաջողվեց որևէ բան տեսնել, չտեսա նույնիսկ Պերիմ կղզու ափերը, որ անգլիացիները գրավել էին ծովի վրա Ադենի տիրապետությունն ամրապնդելու համար։ Անգլիական ու ֆրանսիական բազմաթիվ նավեր, որոնք կապ են պահում Սուեզի պարանոցի, Բոմբեյի, Կալկաթայի, Մելբուռնի և Ս. Մավրիկիոսի կղզու միջև, երթևեկում էին նեղուցում, այնպես որ «Նաուտիլուսը» այնտեղ չէր կարող լողալ ջրի երեսին։ Այս պատճառով մենք շարունակ գտնվում էինք ջրի տակ։

Վերջապես, կեսօրին մենք մտանք Կարմիր ծովը։

Կարմիր ծովը։ Այստեղ երբեք անձրև չի գալիս։ Երկինքը երբեք չի ծածկվում ամպերով։ Ոչ մի աչքի ընկնող գետ չի թափվում այս ծովը։ Թեժ արևը հսկայական չափով գոլորշիացնում է նրա ջուրը, որի մակերևույթն ամեն տարի իջնում է, մեկ և կես մետրով։

Եթե այդ տարօրինակ ծովածոցը կտրվեր օվկիանոսից և լիճ դառնար, հավանորեն արդեն չորացած կլիներ։ Կարմիր ծովի մակերևույթն ավելի ցածր է, քան բոլոր կողմերից փակված Կասպից ծովի մակերևույթը, որտեղ գոլորշիացող ջրի քանակը ճշտությամբ հավասարակշռվում է մթնոլորտային տեղումների հետ։

Կարմիր ծովն ունի երկու հազար վեց հարյուր կիլոմետր երկարություն և երկու հարյուր քառասուն կիլոմետր միջին լայնություն։ Պտղոմեոսի և Հռոմի կայսրության ժամանակ դա եղել է աշխարհում մեծագույն առևտրական զարկերա-

կը։ Սուեզի ջրանցքի բացումով այս ծովը վերստին կստանա իր երբեմնի նշանակությունը։

Ես նույնիսկ չէի փորձում հասկանալ, թե նավապետ Նեմոյին ինչ քմահաճույք է բերել այս ծովածոցը։ Սակայն ես անսահման չափով ուրախ էի, որ «Նաուտիլուսը» հասավ այստեղ։ Հիմա մենք ընթանում էինք չափավոր արագությամբ, մերթ դուրս գալով ջրի երեսը և մերթ ջրասույզ լինելով, որպեսզի չընդհարվենք հանդիպակաց նավին։ Այսպիսով ես ծանոթացա այս հետաքրքիր ծովի արտաքինի ու ներքինի հետ։

Փետրվարի ութին, առավոտը բացվելուն պես, մենք տեսանք Մոկան, ավերակների այդ քաղաքը, որի խարխուլ պատերը քանդվում են նույնիսկ թնդանոթային որոտից։ Ավերակների միջև փյունիկյան արմավենիներ են աճել և ծածկվել հաճելի սաղարթով։ Մի ժամանակ Մոկան եղել է առևտրական խոշոր կենտրոն, ունեցել է վեց շուկա, քսանվեց մզկիթ և տասնչորս ամրոց, որոնք երեք կիլոմետր երկարությամբ շրջապատել են քաղաքը։

«Նաուտիլուսը» մոտեցավ Աֆրիկայի ափերին։ Այստեղ ծովն ավելի խոր էր։ Իջնելով ջրի տակ, մենք զմայլվում էինք ալ-կարմիր կորալլների սքանչագեղ թփուտներով, ստորջրյա ժայռերին փռված ջրիմուռների և ծովասեզների խիտ, կանաչ գորգով։ Ինչպիսի՜ աննկարագրելի տեսարան էին ներկայացնում այդ ստորջրյա խութերն ու կղզյակները, որ գտնվում էին Լիբիական ափերի մոտ։ Սակայն ստորջրյա տեսարանները մի առանձին գեղեցկություն և բազմազանություն ունեին արևելյան ափերին մոտ, որոնց շուտով մոտեցավ «Նաուտիլուսը»։ Տեխամայի մոտ, զոոֆիտներն աճել էին ոչ միայն ջրի տակ, այլև ծովի մակերևույթին, ուր մի քանի մետր տարածությամբ աչքի էին ընկնում իրենց գեղանկար հյուսվածքներով։ Ճիշտ է, ջրի վրա աճած զոոֆիտներն ավելի դժգույն էին, քան ջրի տակ աճածները, որոնք շարունակ թարմանում են հոսանուտ ջրով։

Որքա՜ն հրաշալի ժամեր անցկացրի ես, նստած լինելով սրահի լուսամուտի մոտ։ Ստորջրյա բուսական և կենդանական աշխարհի քանի՜-քանի՜ նոր նմուշներ տեսա էլեկտրական

լուսարձակի տակ՝ ապենդիկուլյարներ, սալմեր, թերթաքարի գույնի ակտինիաներ, որոնց թվում նաև tlialazziatleur azter, որոնք նման են սրնգափողին և կարծես սպասում են Պան աստծո շնչին, անհամար խխունջներ, որ աճում են գաղութներով, վերջապես, պոլիպի հազարավոր տեսակներ, որ մինչև հիմա ես ոչ մի տեղ չէի հանդիպել՝ սպունգաղգիներ։

Սպունգաղգիների դասը, որ առաջին տեղն է բռնում պոլիպների բաժնում, ամբողջովին բաղկացած է այդ օգտավետ և հետաքրքիր էակներից։ Սպունգաղգին բույս չէ, ինչպես դեռ մինչև հիմա կարծում են մի շարք բնագետներ այլ ամենաստորին կենդանի. դա պոլիպ է, որ նույնիսկ կորալներից ավելի ցածր զարգացման աստիճանի վրա է գտնվում։ Որ ըսպունգաղգիները պատկանում են կենդանական աշխարհին, դրանում ոչ մի կասկած չկա և իհարկե խոսք էլ չի կարող լինել այն մասին, թե կարելի է նրանց վերագրել կենդանիների և բույսերի ինչ-որ միջանկյալ աշխարհի, ինչպես այդ անում էին հնադարյան մարդիկ։ Ես պետք է ասեմ, որ բնագետները մինչև այժմ տարբեր կարծիք ունեն սպունգաղգիների կազմվածքի մասին։ Մի քանիսների կարծիքով դրանք պոլիպներ են, մանր կենդանիների մի ամբողջ գաղութ, ոմանք էլ, նաև Միլն Էդվարդսը, կարծում են, որ յուրաքանչյուր սպունգաղգի առանձին կենդանի է։

Սպունգաղգիների դասն ունի մոտ երեք հարյուր տեսակ։ Նրանք լինում են շատ ծովերում, նաև մի քանի գետերում։ Բայց սպունգաղգիներն ավելի հաճախ լինում են Միջերկրական ծովում, Հունական արշիպելագի ծովերում, Սիրիայի ափերի մոտ և Կարմիր ծովում։ Գլխավորապես այստեղ են լինում ամենանուրբ, փափուկ սպունգաղգիները, սիրիական սպիտակ տեսակը և տրիպոլիականը, որոնց մեկ հատը վաճառվում է հարյուր հիսուն ֆրանկով։

Հույս չունենալով մի անգամ ևս տեսնել սպունգաղգիները Մերձավոր Արևելքի երկրներում, որոնցից մեզ բաժանում էր Սուեզի պարանոցի անանցանելի պատնեշը, ես մեծ ջանասիրությամբ զբաղվեցի Կարմիր ծովի սպունգաղգիների ուսումնասիրությամբ։

Ես կանչեցի Կոնսելին, և մենք միասին սկսեցինք նայել

լուսամուտից, այն ժամանակ, երբ «նաուտիլուսը» ութ-ինը մետր խորացած, դանդաղ լողում էր արևելյան ժայռոտ ափերի երկարությամբ։

Այստեղ աճել էին բոլոր տեսակի սպունգազգիները, ցողունաձև, տերևաձև, գնդաձև, թաթավոր սպունգազգիները։ Նրանց արտաքին տեսքը միանգամայն արդարացնում էր հեռավոր անունները՝ զամբյուղներ, դալաթներ, ճախարակներ, արծվի թաթեր, սիրամարգի պոչեր, նեպտունի ձեռնոցներ։ Այդ անունները նրանց տվել էին այն մարդիկ, որոնք ավելի շատ հակում են ունեցել դեպի պոեզիան, քան դեպի գիտությունը։ Կիսահեղուկ, դոնդողանման մի նյութ, որ ներծծված է նրանց թել-թել հյուսվածքի մեջ, կենսաբեր շիթերով, անդադար սնունդ է մատակարարում յուրաքանչյուր առանձին բջիջին։ Ստանալով սնունդ, բջիջը սեղմվում է և իր միջից դուրս մղում ավելորդ ջուրը։ Այդ դոնդողանման նյութը չքանում է պոլիպի մեռնելուց հետո, քայքայվելիս արտադրում է ամիակ, և կենդանուց մնում է միայն թել-թել հյուսվածք, որը աստիճանաբար դառնում է ծղոտապույն և գործադրվում է զանազան նպատակների համար, նայած իր առաձգականության չրաթափանցելիության և ամրության աստիճանին։

Սպունգազգիները կպչում են ժայռերին, կակղամորթների խեցիների և նույնիսկ զոոֆիտների ցողուններին։ Նրանք լցնում են ամենափոքրիկ ճեղքերը, ժայռերի յուրաքանչյուր խոռոչը, մերթ փռվելով աջ ու ձախ, մերթ աճելով դեպի վեր, մերթ կախվելով ներքև, ինչպես կորալլային պոլիպները։

Ես Կոնսելին պատմեցի, որ սպունգազգիներին որսում են ուռկանով կամ ձեռքով։ Վերջին եղանակը լավագույնն է համարվում, քանի որ սուզակները զգուշությամբ են պոկում սպունգազգիները, առանց վնասելու սրանց հյուսվածքը, մի բան, որ անխուսափելի է ուռկանով որսալու ժամանակ։

Սպունգազգիների շուրջը գտնվող մյուս զոոֆիտների մեծ մասը մեդուզաներ էին, որոնք աչքի էին ընկնում խիստ գեղեցիկ ձևերով։ Կակղամորթներից այստեղ կային կալմարներ, իսկ սողուններից՝ ծովային կրիաներ և մասնավորապես այսպես կոչված՝ ապուրի կամ կանաչ կրիան, որի միսը մենք հաճույքով կերանք նույն օրը։

Ձկներն ապշեցնում էին իրենց առատությամբ։ Ահա թե «Նաուտիլուսի» ուղևորն ինչ էր որսում այդ օրերին, կատվաձկներ, որոնց թվում արծվային կատվաձուկ կամ ծովային արծիվ, որն ունի մեկ ու կես մետր լայնություն և կշռում է մոտ տասներկու կիլոգրամ, մեջքը թուխ-կինամոնագույն է, իսկ որովայնը սպիտակավուն. եղջյուրավոր կողովիկներ, ոսկորներից բաղկացած քառակողմ վահանով և աչքերի վրա՝ երկար, եղջյուրանման փշերով, փողոշներ, օձաձկների ընտանիքին պատկանող գիշակեր ձկներ, իրենց տարօրինակ գույնի մարմնով, որի առջևի մասը բաց-դեղին է, հետին մասը՝ թուխ, իսկ ամբողջ մարմնի վերին մասը զարդարված է թուխ-մարմարագույն նկարով. ծիծեռնակաձկների ընտանիքին պատկանող եղջյուրավոր զանկիներ, որոնք դեղնավուն են և ծածկված սև ու կինամոնագույն շերտերով. երկարամարմին գայլաձկների ընտանիքին պատկանող ծծուկներ, որոնք ունեն որդան-կարմիր գույն, թուխ շերտեր, այս ձկներն ունեն կպչող ապարատ, որ կազմված է կոճիկային ուռուցքից. նրանք շատ պինդ կպչում են քարերին կամ խնցիներին և շարժվում են միայն նրա համար, որպեսզի հարձակվեն որսի վրա կամ փախչեն թշնամուց։ Բացի դրանից, ուռկանը դուրս էր բերում ուրիշ շատ ձկներ, որոնց մենք հանդիպել էինք ուրիշ ծովերում։

Փետրվարի իններին «Նաուտիլուսը» լողում էր կարմիր ծովի հենց այն լայն մասում, որի արևմտյան կողմում գտնվում է Սուակինը, իսկ արևելյան կողմում՝ Սմենը։

Կեսօրին, երբ նավապետի օգնականը վերջացրել էր իր դիտումները, նավապետ Նեմոն տախտակամածում մոտեցավ ինձ։

Ես որոշեցի բաց չթողնել նրան, մինչև որ իմանամ, թե ուր է տանում «Նաուտիլուսը»։

Նավապետ Նեմոն ինձ տեսավ թե չէ, ինքը մոտեցավ, սիգար առաջարկեց և ասաց.

— Կարմիր ծովը դուր եկա՞վ ձեզ, պրոֆեսոր։ Արդյոք բավականաչափ զմայլվեցի՞ք այդ ծովի ձկներով, սպունգազգիներով, զոոֆիտներով և կորալային անտառներով։ Տեսա՞ք արդյոք նրա ափերին գտնվող քաղաքները։

— Շնորհակալ եմ ձեզնից, նավապետ, ես սքանչացել եմ այդ բոլորով։ «Նաուտիլուսն» ինձ տվել է այդ հնարավորությունը։ Ի՞նչ հրաշալի նավ է։

— Այո, պրոֆեսոր, հրաշալի, խիզախ և անխոցելի է այս նավը։ Նա չի վախենում ոչ Կարմիր ծովի սարսափելի փոթորիկներից, ոչ նրա հոսանքներից և խութերից։

— Իսկապես,— ասացի ես,— այս ծովն ամենավտանգավոր ծովերից մեկն է համարվում. եթե չեմ սխալվում, նավատորմը հաճախ է ունեցել դեռ հնադարյան ժամանակներում։

— Հիրավի, նա վաղուց անտանելի համբավ ունի, պարոն պրոֆեսոր։ Հունական, ինչպես նաև հռոմեական պատմաբանները շատ վատ բաներ են ասում այդ ծովի մասին։ Ստրաբոնն ասում է, թե նա անհյուրընկալ է անձրևների և հյուսիսային քամիների ժամանակ։ Արաբական պատմաբան Էդրիզիոսը այդ ծովն անվանում է Կոլզումյան ծոց, պատմում է, թե բազմաթիվ նավեր խորտակվում էին ծովի ավազոտ ծանծաղուտներում, և որ գիշերները ոչ ոք չի համարձակվում լողալ այնտեղ։ Էդրիզիսի ասելով, Կարմիր ծովը հայտնի է իր սարսափելի փոթորիկներով, անհյուրընկալ կղզիներով և «չունի որևէ հրապուրիչ բան ոչ մակերևույթի վրա, ոչ էլ խորքերում»։ Այս կարծիքին համամիտ են նաև Արրիանոսը, Ահատարխիդն ու Արտեմիդորը...

— Երևում է, որ այդ պատմաբաններին վիճակված չի եղել «Նաուտիլուսով» ճանապարհորդելը,— ասացի ես։

— Միանգամայն ճիշտ է,— ժպտաց նավապետ Նեմոն,— սակայն այդ տեսակետից ժամանակակից պատմաբանների դրությունը հնադարյան պատմաբանների դրությունից ավելի լավ չէ։ Շատ դարեր պիտի անցնեին, մինչև որ հայտնաբերվեր շոգու մեխանիկական ուժը։ Ո՞վ գիտե, արդյոք աշխարհը թեկուզ հարյուր տարուց հետո կտեսնի՞ մի երկրորդ «Նաուտիլուս»։ Տեխնիկական առաջադիմությունը, պարոն պրոֆեսոր այնքան էլ արագ չի լինում։

— Ճիշտ է,— ասացի ես,— ձեր նավը մի ամբողջ դար, եթե ոչ ամբողջ դարեր, առաջ է անցել իր ժամանակաշրջանից։ Ինչպիսի դժբախտություն է, որ այդ նավի գաղտնիքը կմեռնի նրա գյուտարարի հետ միասին։

Նավապետ Նեմոն ինձ չպատասխանեց։

Մի քանի րոպե լռելուց հետո նա կրկին շարունակեց.

— Կարծեմ մենք խոսում էինք այն մասին, թե հնադարյան պատմաբաններն ինչ կարծիքներ են ունեցել Կարմիր ծովում ճանապարհորդելու վտանգի շուրջը։

— Այո,— ասացի ես,— արդյոք դուք չե՞ք գտնում, որ սրանց սաածները չափազանցրած են։

— Ե՛վ այո և՛ ոչ, պարոն պրոֆեսոր,— պատասխանեց ինձ նավապետ Նեմոն, որ ըստ երևույթին հիմնովին ուսումնասիրել էր Կարմիր ծովը։— Այն, ինչ որ բոլորովին վտանգավոր չէ ամուր կառուցված, լավ սարքավորված, իր կամքին հնազանդ գոլորշու շնորհիվ ազատ կերպով իր ճանապարհն ընտրող նավի համար, այն հնադարյան ծովագնացների նավերի համար լի է եղել ամեն տեսակ անակնկալներով։ Հարկավոր է պատկերացնել այդ տախտակյա, խղճուկ նավերը, որ ամրացվում էին արմավենու ճյուղերով, խծբծվում կուպրով և դելֆինի ճարպով։ Դրանք ոչ մի գործիք չունեին ընթացքի ուղղությունը որոշելու համար և լողում էին ենթադրաբար, իրենց անծանոթ հոսանքների միջով։ Այս պայմաններում նավաբեկությունները սովորական երևույթ էին և չէին կարող այդպես չլինել։ Սակայն մեր օրերում Սուեզի պարանոցից մինչև հարավային կիսագնդի ծովերը երթևեկող նավերը չեն վախենում Կարմիր ծովի փոթորիկներից և հանդիպակաց մուսոններից։ Այդ նավերի պետերը, անձնակազմը և ճանապարհորդները կարիք չունեն ճանապարհվելուց առաջ քավության զոհ մատուցելու, և վերադառնալուց հետո նրանք դարձյալ կարիք չունեն զարդարվելու ծաղկեշղթաներով և գնալու մոտակա տաճարը՝ աստվածներին գոհություն հայտնելու նրանց ողորմածության համար....

— Այո, ծովագնացների սրտերում շոգին մեռցրել է երախտագիտությունը,— կատակով ասացի ես,— ի դեպ, նավապետ, դուք այնքան խորն եք ուսումնասիրել այդ ծովի պատմությունը, որ գուցե ինձ բացատրեք, թե ինչու է նա Կարմիր ծով կոչվում։

— Հնադարյան մարդիկ այդ անունը տվել են այն պատ-

ճառով, որ ծովի մի քանի մասերը տարօրինակ գույն ունեն,— պատասխանեց նավապետ Նեմոն։

— Սակայն մինչև այժմ մեր տեսած ջուրը բոլորովին թափանցիկ է և ոչ թե գունավոր։

— Ճիշտ է, բայց երբ մենք կմոտենանք ծովածոցի վերջավորության, դուք կհամոզվեք, որ այնտեղ ջուրը կարմրավուն գույն ունի։ Ես հիշում եմ, որ մի անգամ Տոր ծովախորշում տեսել եմ բոլորովին կարմիր ջուր, կարծես արյան մի ամբողջ լիճ։

— Ինչո՞վ է բացատրվում այդ գույնը։ Որևէ մանրագույն ջրիմուռներո՞վ։

— Այո։ Դա տրիխոդոսմիա կոչված մանրագույն բույսերի լորձունքային արտաթորումն է, որոնց քառասուն հազարը տեղավորվում է մեկ քառակուսի միլիմետրի վրա։ Երբ մենք այցելենք Տոր ծովախորշը, հնարավոր է, որ ձեզ ևս հաջողվի դիտել այդ արտասավոր երևույթը։

— Նշանակում է առաջին անգամը չէ՞, որ դուք «նաուտիլուսով» այցելում եք կարմիր ծովը, նավապետ։

— Առաջին անգամը չէ։ Ես այստեղ եմ եղել, երբ դեռ նոր էին սկսվել Սուեզի ջրանցքի փորման աշխատանքները։

— Այդ ջրանցքը բոլորովին անօգտակար է մի այնպիսի նավի համար, ինչպիսին «նաուտիլուսն» է,— ասացի ես։

— Սակայն ջրանցքն օգտակար է ամբողջ աշխարհի համար,— պատասխանեց նավապետ Նեմոն,— հնադարյան մարդիկ շատ լավ էին հասկանում, թե առևտրի համար ինչպիսի հսկայական շահավետություն ունի ուղղակի հաղորդակցությունը Միջերկրական և Կարմիր ծովերի միջև։ Սակայն նրանք չէին էլ մտածում, որ կարելի է ուղղակի ջրանցք փորել մեկ ծովից մինչև մյուսը, և ընտրեցին ավելի երկար ճանապարհ, Նեղոս գետից ջրային ճանապարհ բացին մինչև Կարմիր ծովը։ Մի քանի տվյալների համաձայն, Նեղոսի այդ ջրանցքի կառուցումն սկսվեց Սեզոստրես փարավոնի ժամանակ։ Համենայն դեպս հայտնի է, որ մեր թվագրությունից առաջ, 615 թվականին Նեխո փարավոնը ձեռնարկեց ջրանցքի կառուցումը։ Ջրանցքն անցնելու էր եգիպտական այն դաշտավայրից, որը մոտիկ է Արաբիային։ Նեղոսից մինչև Կարմիր ծով այդ ջրանց-

քով նավերը պիտի անցնեին չորս օր, իսկ ջրանցքի լայնությունը պետք է լիներ այնքան, որ երկու տրիրեմներ (հռոմեական հին նավեր) լողային իրար կողքի։ Ջրանցքի շինարարությունը շարունակվեց Հիսուսպոսի որդի Դարեհի ժամանակ, և ավարտվեց ըստ երևույթին միայն Պտղոմեոս երկրորդի օրոք։ Ստրաբոնը տեսավ արդեն պատրաստի ջրանցքը։ Սակայն ջրանցքի ոչ բավականաչափ խորության պատճառով նավարկությունը հնարավոր էր միայն գարնանային ամիսներին, երբ վարարում էր Նեղոս գետը։ Ջրանցքն օտագործվեց մինչև Անտոնիններին դարը, որից հետո անկման հասավ, ծանծաղացավ և դարձավ աննավարկելի։ Օմար խալիֆի հրամանով այն վերականգնվեց, սակայն մեր թվագրության 761 կամ 762 թվականին վերջնականապես հողով լցվեց Ալ-Մանզոր խալիֆի հրամանով։ Վերջինս ցանկանում էր այդ կերպ խանգարել պարենի հայթայթումը իր դեմ ապրատամբած Մոհամեդ-բեն Աբդուլլահին։ Գեներալ Բոնապարտը Եգիպտոսում կատարած արշավանքի ժամանակ այդ ջրանցքի հետքը գտավ Սուեզի մոտ եղած անապատում և հազիվ կարողացավ փրկվել ծովի մակընթացությունից։

— Ի՞նչ արած, նավապետ, այն, ինչ չհաջողվեց հնադարյան մարդկանց՝ երկու ծովերի միացումը, որով ինը հազար կիլոմետրով կկրճատվեր Կադիքսից մինչև Հնդկաստան տանող ճանապարհը, այդ կանի Լեսեպսը։ Ամենամոտիկ ապագայում նա աֆրիկյան մայր ցամաքը կդարձնի հսկայական մի կղզի, Սուեզի ջրանցքով այդ մայր ցամաքը կկտրի Ասիայից։

— Այո, պարոն Արոնաքս, դուք իրավամբ կարող եք հպարտանալ ձեր հայրենակցով։ Այդ մարդն ավելի մեծ պատիվ է բերում իր հայրենիքին, քան ամենապանծալի զորավարը։ Նա հաղթահարեց իր ճանապարհին եղած անհամար խոչընդոտները և հաղթանակեց, որովհետև նրա մեջ միացած են հանճարեղությունը և ուժեղ կամքը։ Ցավալի է մտածել, որ այդ ստեղծագործությունը, որ պետք է դառնար միջազգային գործ, կատաղի դիմադրության հանդիպեց և հաղթանակեց միայն մեկ մարդու հսկայական եռանդի շնորհիվ։ Փառք ու պատիվ Ֆերդինանդ Լեսեպսին։

— Այո, փառք ու պատիվ այդ մեծ քաղաքացուն,— բացականչեցի ես, ներքուստ զարմանալով նավապետ Նեմոյի անակնկալ ոգևորության վրա։

— Իհարկե ցավալի է, որ ես չեմ կարող ձեզ ցույց տալ Սուեզի ջրանցքը,— շարունակեց նավապետ Նեմոն,— սակայն վաղը չէ մյուս օրը, երբ մենք կմտնենք Միջերկրական ծով, դուք կտեսնեք Պորտ-Սաիդի առափնյա երկար կառուցվածքները։

— Միջերկրական ծո՞վը, գոչեցի ես։

— Այո, պարոն պրոֆեսոր։ Ինչո՞ւ այդպես զարմացաք։

— Ինձ զարմացրին ձեր այն խոսքերը, թե մենք այնտեղ կլինենք վաղը չէ մյուս օրը։

— Իսկապե՞ս։

— Այո, նավապետ, թեպետ վաղուց ժամանակ է, որ ես սովորեմ ոչ մի բանի վրա չզարմանալ, քանի դեռ գտնվում եմ «Նաուտիլուսում»։

— Այնուամենայնիվ, ինչո՞ւ այդ լուրն այդքան զարմացրեց ձեզ։

— «Նաուտիլուսը» պետք է հակայական արագություն վերցնի, որպեսզի վաղը չէ մյուս օրը մեզ հասցնի Միջերկրական ծով։ Չէ՞ որ նավը պետք է պտույտ տա ամբողջ Աֆրիկայի շուրջը, անցնելով Բարեհուսո հրվանդանի մոտից։

— Բայց ո՞վ ձեզ ասաց, թե «Նաուտիլուսը» պետք է պտույտ գա Աֆրիկայի շուրջը։ Ո՞վ ասաց, թե նա կանցնի Բարեհուսո հրվանդանի մոտից։

— Այնուամենայնիվ... եթե միայն «Նաուտիլուսը» չանցնի ցամաքով կամ օդի միջով... Սուեզի պարանոցի վրայով...

— Իսկ ինչո՞ւ չի կարող անցնել պարանոցի տակից, պարոն պրոֆեսոր։

— Պարանոցի տակի՞ց։

— Իհա՛րկե,— հանդիստ պատասխանեց նավապետ Նեմոն,— բնությունը ցամաքի այդ նեղ շերտի տակ վաղուց արել է այն, ինչ մարդիկ մեծ դժվարությամբ անում են ցամաքի վրա։

— Ինչպես։ Մի՞թե այնտեղ անցք կա։

— Այո, ստորջրյա անցք, որ ես անվանել եմ Արաբական

թունել։ Անցքն սկսվում է Սուեզի տակից և վերջանում Պորտ-Սաիդի մոտ։

— Բայց չէ՞ որ Սուեզի պարանոցը բաղկացած է փխրուն ավազից։

— Միայն մինչև որոշ սահման։ Հիսուն մետր խորությամբ արդեն սկսվում է գրանիտե ամուր շերտը։

— Ուրեմն դուք պատահաբա՞ր եք հայտնաբերել այդ թունելը,—հարցրի ես։

— Պատահաբար և միևնույն ժամանակ ոչ պատահաբար։ Այդ հայտնագործության մեջ դատողության բաժինն ավելի մեծ է եղել, քան պատահականության առկայությունը։

— Նավապետ, ես ձեզ լսում եմ լարված ուշադրությամբ, սակայն միտքս հրաժարվում է հավատալ ականջներիս։

— Ախ, պարոն պրոֆեսոր, ականջներ ունենալ և չլսել, այդ հատուկ է բոլոր ժամանակներին։ Այդ անցքը ոչ միայն իրականում գոյություն ունի, այլև ես մի քանի անգամ անցել եմ այնտեղից։ Եթե այն չլիներ, ես չէի մտնի այս փակուղին, Կարմիր ծովը։

— Արդյոք անհամեստություն չի՞ լինի, եթե ձեզ հարցնեմ, թե ինչպես եք հայտնագործել այդ թունելը։

— Ի՞նչ գաղտնիքներ կարող են իրարից պահել այն մարդիկ, որոնց վիճակված է երբեք չբաժանվել,—պատասխանեց նավապետ Նեմոն։

Ես այնպես ցույց տվի թե ուշադրություն չեմ դարձնում այդ ֆրազի երկիմաստ լինելու վրա, և պատրաստվեցի լսել նավապետ Նեմոյի բացատրությունները։

— Հասարակ տրամաբանությունը, վառ հետաքրքրություն ունեցող բնագետի դատողությունն ինձ մղեցին դեպի այն միտքը, որ այդ թունելը գոյություն ունի և այդ մասին ես գիտեմ։ Ես ուշադրություն դարձրի այն հանգամանքի վրա, որ Կարմիր և Միջերկրական ծովերում լինում են որոշ քանակությամբ բոլորովին միատեսակ ձկներ, թռչող տառեխ, պերկես, շերտավոր ստևատամնավոր և այլն։ Համոզվելով դրանում, ես ինձ հարց տվի, թե արդյոք դա չի՞ ապացուցում, որ այդ ծովերը միացած են։ Եթե դրանք միացած են, ապա ատլանտիկյան հոսանքն անպայման պետք է ուղղված լինի

Կարմիր ծովից դեպի Միջերկրականը, որովհետև Կարմիր ծովի ջրի մակերևույթն ավելի բարձր է, քան Միջերկրական ծովինը։ Այդ հարցը պարզելու համար ես շատ ձուկ որսացի Սուեզի շրջակայքում, յուրաքանչյուր ձկան պոչին կապեցի պղնձե մի օղակ և նետեցի ջուրը։ Մի քանի ամսից հետո Սիրիայի ափերի մոտ ես որսացի մի քանի ձուկ, որոնց պոչերի վրա գտա իմ կապած օղակները։ Այսպիսով ինձ համար կասկածից դուրս էր երկու ծովերի միջև ստորերկրյա անցքի գոյությունը։ Ես իմ «նաուտիլուսով» սկսեցի փնտրել այդ անցքը, գտա, կարողացա մտնել այնտեղ։ Եվ ահա, պարոն պրոֆեսոր, մեկ-երկու օրից հետո դուք էլ կանցնեք Արաբական թունելի միջով։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՐԱԲԱԿԱՆ ԹՈՒՆԵԼԸ

Նույն օրը ես Կոնսելին և Նեդ Լենդին հայտնեցի նավապետ Նեմոյի հետ ունեցած խոսակցության այն մասը, որ անմիջականորեն հետաքրքրում էր նրանց։ Երբ ես նրանց ասացի, որ երկու օրից հետո մենք պետք է լինենք Միջերկրական ծովում, Կոնսելը ծափահարեց ուրախությունից, իսկ Նեդ Լենդը թոթվեց ուսերը։

— Սուրբջրյա թունե՞լ,— բացականչեց նա,— երկու ծովերը միացած են իրա՞ր։ Ո՞վ է երբևէ լսել այդ մասին։

— Սիրելի Նեդ,— պատասխանեց նրան Կոնսելը,— դուք երբևէ լսե՞լ եք «նաուտիլուսի» մասին։ Ոչ։ Բայց և այնպես նա գոյություն ունի։ Ուրեմն այդպիսի անվստահությամբ մի թոթվեք ձեր ուսերը և փաստերը մի ժխտեք այն պատրվակով, թե դրանց մասին դուք ոչինչ չեք լսել։

— Տեսնենք ով իրավացի կլինի,— գլուխը շարժելով ասաց Նեդ Լենդը,— վերջին հաշվով ես միայն ուրախությամբ կհավատայի այդ թունելի գոյության, որպեսզի շուտ հասնենք Միջերկրական ծով։

Այդ նույն երեկոյան «նաուտիլուսը», որ լողում էր ծովի

մակերևույթին, 21°30′ հյուսիսային լայնության տակ, մոտեցավ արաբական ափին։ Ես տեսա Ջիդդան, մի կարևոր առևտրական կետ, որ աշխույժ առևտուր է անում Եգիպտոսի, Սիրիայի, Թուրքիայի և Հնդկաստանի հետ։ Հեռավոր տարածության վրա ես բավական պարզ տեսնում էի քաղաքի շենքերը, նավերը, որոնք պարանով կապված էին ծովեզրին և կանգնած էին խարսխակայանում, որովհետև ջրում խորը նստելու պատճառով չէին կարող ընդհուպ մոտենալ ափին։ Դեպի մայրամուտը թեքվող արևը լուսավորել էր քաղաքի ըստիտակ շենքերը, որոնք պայծառ փայլում էին։ Քաղաքից քիչ հեռու գտնվում էին նստակյաց բեդվինների գյուղի փայտյա ու եղեգնյա խրճիթները։

Սակայն շուտով Ջիդդան չքացավ դիշերվա մթնում և «նաուտիլուսն ընկղմվեց ֆոսֆորափայլ ջուրը։

Հետևյալ օրը, փետրվարի 10-ին, դուրս գալով ծովի մակերևույթը, մենք հեռվում տեսանք շատ նավեր, և «նաուտիլուսը» շտապեց ջրասույզ լինել։ Բայց կեսօրին, սովորական դիտողությունները կատարելու ժամանակ, ծովի վրա ոչինչ չէր երևում, և «նաուտիլուսը» կարող էր կրկին դուրս գալ ծովի մակերևույթը։

Ես Նեդ Լենդի և Կոնսելի ուղեկցությամբ բարձրացա տախտակամածը։ Արևելքում, բարակ մշուշում հազիվ երևում էր ցածրադիր ափի ուրվագիծը։

Հենվելով մակույկին, մենք խոսում էինք զանազան նյութերի շուրջը։ Հանկարծ Նեդը պարզեց ձեռքը և, ցույց տալով ինչ-որ մի կետ, հարցրեց ինձ.

— Տեսնո՞ւմ եք այնտեղ որևէ բան, պարոն պրոֆեսոր։

— Ոչ, Նեդ,—պատասխանեցի ես,—դուք գիտեք, որ ես ձեր չափ սրատես չեմ։

— Նայեցեք ուշադրությամբ,— պնդում էր Նեդը,—այնտեղ, աջ կողմում մի՞թե չեք տեսնում ինչ-որ շարժվող զանգված։

— Իսկապես,—ասացի ես, ավելի ուշադրությամբ նայելով,—ծովի մակերևույթին ես տեսնում եմ ինչ-որ մի երկար ու սև մարմին։

— Էլի մի «նաուտիլո՞ս»,—հարցրեց Կոնսելը։

— Ո՞չ,— պատասխանեց կանադացին,— սակայն ես հաստատ չեմ սխալվում, եթե ասեմ, որ դա ինչ-որ մի ծովային կենդանի է։

— Մի՞թե կարմիր ծովում կետեր են լինում,— հարցրեց Կոնսելը։

— Լինում են հազվագյուտ դեպքերում,— պատասխանեցի ես։

Հիրավի, երկարավուն ու սև մի մարմին գտնվում էր մեզանից ընդամենը մեկ մղոն տարածության վրա։ Հեռվից նա թողնում էր ծովից դուրս եկած մեծ ժայռի տպավորություն։ Բայց թե ի՞նչ էր դա, ես առայժմ չէի կարող որոշել։

— Ոչ, այդ կետ չէ,— դիտեց Նեդ Լենդը, որ մի վայրկյան անգամ աչքը չէր հեռացնում կենդանուց,— կետերն իմ հին ծանոթներն են, ես լավ գիտեմ նրանց բոլոր սովորությունները։

— Սպասենք,— առաջարկեց Կոնսելը,— «նաուտիլուսն» ընթանում է այն կողմը, և մենք մի քանի րոպեից հետո կիմանանք, թե ինչ է դա։

— Հը՛մ, նա շարժվում է... ջրասույզ է լինում,— բացականչեց Նեդ Լենդը,— սատանան տանի, այդ ի՞նչ կարող է լինել։ Նա չունի երկակի պոչ, ինչպես կետերը կամ վիշապաձկները։ Նրա լողաթևերը նման են վերջավորությունների կտրոնքին։

— Բայց...— սկսեցի ես։

— Նայեցեք,— ընդհատեց ինձ կանադացին,— նա դառնում է մեջքի վրա, կուրծքը դեպի վեր։

— Դա ուղղակի հրապուրող-ծովահարս է,— ծիծաղեց Կոնսելը։

Վերջինիս այդ խոսքերը միանգամից ճիշտ ուղղություն տվին իմ մտքերին։ Ես հասկացա, որ մենք տեսնում ենք ծովահարսների կամ ծովակովերի ջոկատի ներկայացուցչին, որոնց մասին ստեղծվել է այն առասպելը, թե նրանք կեսկին են, կես-ձուկ։

— Ո՛չ,— ասացի ես Կոնսելին,— դա ծովահարս չէ, այլ նույն ջոկատին պատկանող մի այլ, հազվագյուտ կենդանի։ Դա դյուգոն է։

— Դյուգոն, դյուգոնների ընտանիք, ծովակովերի ենթաջոկատ, կճղակավորների ջոկատ, միաորովայնների ենթադաս, կաթնասունների դաս, ողնաշարավորների բաժին,— անմիջապես ասաց Կոնսելը։

Երբ Կոնսելը դասակարգում էր, մնում էր միայն լռել և համաձայնել նրա հետ։

Այդ ժամանակ Նեդ Լենդը շարունակում էր դիտել։ Տեսնելով կենդանուն, նրա աչքերը փայլում էին ագահությունից։ Կարելի էր կարծել, որ նա միայն առիթի է սպասում ծովը նետվելու համար, որպեսզի հարձակվի կենդանու վրա, վերջինիս հարազատ տարերքում։

— Ա՛խ, պարոն պրոֆեսոր,—բացականչեց նա հուզմունքից դողացող ձայնով,— ես այսպիսիներին դեռ երբեք չեմ որսացել։

Այդ խոսքերն արտահայտում էին Նեդ Լենդի ամբողջ բընավորությունը։

Նավապետ Նեմոն դուրս եկավ տախտակամած։ Նա տեսավ դյուգոնը և նայելով կանադացուն, հասկացավ նրան այրող ցանկությունը։

Նա դիմեց Նեդ Լենդին։

— Եթե հիմա ձեզ մոտ եռաժանի լիներ, միտոր Լենդ, դուք կգործադրեիք, այնպես չէ՞։

— Միանգամայն ճիշտ է, նավապետ։

— Դուք չէիք հրաժարվի մեկ օր զբաղվել ձեր եռաժանիով և մի հաղթանակ էլ ավելացնել ձեր որսորդական հաջողություններին։

— Հաճույքով կանեմ այդ։

— Դե՛հ, գործի անցեք։

— Շնորհակալություն, նավապետ,— ասաց Նեդ Լենդը։ Նրա աչքերը փայլեցին։

— Միայն մի պայման. խփել առանց վրիպելու։ Նախազգուշացնում եմ, որ այդ են պահանջում ձեր շահերը։

— Մի՞թե դյուգոնն այդպիսի վտանգավոր կենդանի է,— հարցրի ես։

Կանադացին արհամարհանքով թափահարեց ձեռքը։

— Այո, երբեմն,— պատասխանեց նավապետը։— Պատահում է, որ այդ կենդանին հարձակվում է որսորդների վրա և շուռ է տալիս նրանց մակույկը։ Սակայն միստր Լենդի համար սարսափելի չէ այդ վտանգը։ Նա ունի սուր աչք և անվրեպ ձեռք։ Ես նրան խորհուրդ տվի չվրիպել ոչ այնքան վտանգի պատճառով, որքան այն պատճառով, որ դյուգոնի միսը խիստ համեղ է, իսկ միստեր Լենդը, որքան ես գիտեմ, դեմ չէ համեղ բան ուտելուն։

— Օհո՛,— բացականչեց կանադացին,— ուրեմն այդ կենդանին նաև համեղ մի՞ս ունի։

— Այո՛, միստր Լենդ։ Նրա միսն իր համով բոլորովին չի տարբերվում տավարի մսից և Մելանեզիայում շարունակ զարդարում է թագավորների սեղանները։ Վերջերս այնպիսի եռանդով են որսում այդ կենդանուն, որ նա արագ չքանում է, ինչպես չքացել է իր ցեղակից լամանտինը։

— Այդ դեպքում, նավապետ,— լրջորեն ասաց Կոնսելը,— գուցե չպե՞տք է որսալ այդ կենդանուն։ Գուցե դա վերջին նմուշն է աշխարհում։ Ուրեմն գիտության շահերի տեսակետից պետք է պահպանել նրան։

— Հնարավոր է, որ այդպես լինի,— առարկեց կանադացին,— սակայն խոհարարական տեսակետից պետք է որսալ նրան։

— Դեհ, սկսեք, միստր Լենդ,— ասաց նավապետ Նեմոն։

Այդ րոպեին «Նաուտիլուսի» անձնակազմից յոթ հոգի բարձրացան տախտակամած։ Նրանք սովորականի պես լուռ էին ու հանդիստ։ Նրանցից մեկը բերեց եռաժանին և պարանը, որ գործ են ածվում կետ որսացող նավերի վրա։

Մակույկն իջեցրին ջուրը, վեց թիավարողներ տեղ գրավեցին և ղեկավարն էլ վերցրեց ղեկը։ Նեդ Լենդը, Կոնսելը և ես նստեցինք մակույկի ետին մասում։

— Մի՞թե դուք մեզ հետ չեք գնա, նավապետ,— հարցրի ես։

— Ոչ, պրոֆեսոր։ Հաջողություն եմ ցանկանում ձեզ։

Մակույկն հեռացավ նավից։ Վեց հոգի ուժեղ թիավարում էին, մղելով մակույկը դեպի դյուգոնը, որ լողում էր «Նաուտիլուսից» երկու կիլոմետր հեռու։

Մի քանի կաբելտով մոտենալով կենդանուն, թիավարողները զանգաղեցրին մակույկի ընթացքը և թիերն առանց որևէ աղմուկի իջեցրին ջուրը։ Նեդ Լենդը զինվեց եռաժանիով և կանգնեց մակույկի առջևում։

Սովորաբար կետ որսալու եռաժանին կապված է լինում մի շատ երկար և ամուր պարանի, որը հեշտությամբ արձակվում է, երբ վիրավորված կենդանին ձգում է այդ պարանը։ Սակայն այս անգամ պարանը բոլորովին կարճ էր, ընդամենը քսան մետր և մի ծայրը կապված էր դատարկ տակառին, որը պետք է ցույց տար, թե ջրի մեջ վիրավորված կենդանին ինչ ուղղությամբ է լողում։

Ես ոտքի կանգնեցի և սկսեցի դիտել կանադացու հակառակորդին։ Դյուգոնը շատ նման էր լամանտինին։ Նրա երկարաձև մարմինը վերջանում էր երկար պոչով, իսկ կողքի լողաթևերը՝ իսկական մատներով։ Լամանտինից տարբերվում է նրանով, որ նրա վերին ծնոտն ունի երկու երկար և սուր ժանիք։

Դյուգոնը, որին պետք է որսար Նեդ Լենդը, հսկայական կենդանի էր, առնվազն յոթ մետր երկարությամբ։ Նա չէր շարժվում և կարծես քնել էր ջրի վրա։ Այդ հանգամանքը նպաստավոր էր կանադացու համար և հեշտացնում էր նրա անելիքը։

Մակույկը կամացուկ մոտեցավ կենդանուն մինչև հինգվեց մետր։ Նավաստիները շորացրին թիակները։ Ես հուզմունքից կրկին ոտքի կանգնեցի։

Նեդ Լենդը թեքվեց դեպի ետ և բարձրացնելով ձեռքը, նետեց եռաժանին։

Հանկարծ սուլոց լսվեց և դյուգոնը չքացավ։ Ակներև էր, որ ուժեղ թափով նետված եռաժանին վրիպել էր։

— Գրողը տանի,— զայրույթով մռնչաց կանադացին,— ես վրիպեցի՞։

— Ոչ,— պատասխանեցի ես,— կենդանին վիրավորված է։ Ահա արյան հետքերը։ Սակայն եռաժանին չի մնացել նրա մարմնի վրա։

— Իմ եռաժանի՞ն,— բացականչեց Նեդ Լենդը,— իմ եռաժանի՞ն։

Նավաստիները դարձյալ թիակներն իջեցրին ջուրը, և մակույկն ուղղվեց դեպի լողացող տակառը, որ դուրս էր եկել ջրի վրա։ Հանելով եռաժանին, մենք սկսեցինք հետապնդել վիրավորված կենդանուն։ Վերջինս երբեմն դուրս էր գալիս ջրի երեսը, շնչելու համար։ Վերքն ըստ երևույթին չէր թուլացրել նրան, քանի որ նա մեծ արագությամբ էր լողում։ Տասներկու ջլուտ ձեռքերով կառավարվող մակույկը ոչ թե ընթանում էր, այլ թռչում։ Մի քանի անգամ նա հասավ կենդանուն և, վերջապես, Նեդը պատրաստվեց երկրորդ հարվածը հասցնելու, սակայն կենդանին ամեն անգամ արագությամբ ջրասույզ էր լինում և ազատվում վտանգից։

Կարելի էր երևակայել Նեդ Լենդի բարկությունն ու անհամբերությունը։ Նա իրեն ծանոթ անգլիական բոլոր անեծքները թափում էր դժբախտ կենդանու վրա։ Ինչ վերաբերում է ինձ, ես էլ էի դժգոհում, որ դյուգոնը խորտակում է մեր բոլոր ծրագրերը։

Համարյա մի ժամվա չափ մենք հետևում էինք կենդանուն և, վերջապես, Նեդը պատրաստվեց երկրորդ հարվածը կենդանին մտադրվեց իրեն հալածելու համար վրեժ առնել մեզանից և լողաց դեպի մակույկը, որպեսզի իր հերթին հարձակվի մեզ վրա։

Կանադացին նկատեց այդ։

— Ուշադրությո՛ւն,— գոռաց նա։

Մակույկավարն իր տարօրինակ լեզվով մի քանի բառ ասաց։ Պարզ էր, որ նա անձնակազմին առաջարկում է աշխուրջ լինել։

Դյուգոնը մոտեցավ մակույկին մինչև քսան ոտնաչափ, հանկարծ կանգ առավ, դնչի ոչ թե ծայրում, այլ վերին մասում գտնվող պինչերով մեծ քանակությամբ օդ ներշնչեց և հարձակվեց մեզ վրա։

Մակույկին չհաջողվեց խուսափել ցնցումից։ Սակայն շնորհիվ այն հանգամանքի, որ մակույկավարը կարողացավ ճարպկությամբ խուսափել ճակատային հարվածից, մակույկը միայն օրորվեց։

Նեդ Լենդը, որ կանգնած էր մակույկի առջևում, եռաժա-

նու հարվածներ էր տեղում վիթխարի կենդանու վրա, որ ատամներով բռնել էր մակույկը և փորձում էր այն բարձրացնել ջրից, ինչպես առյուծը բարձրացնում է այծյամին։

Մենք բոլորս ընկնում էինք մեկմեկու վրա և հայտնի չէ ինչով կվերջանար այդ արկածը, եթե կանադացին, որ կատաղել էր կենդանու հարձակումից, ճարպկությամբ չհարվածեր ուղիղ նրա սրտին։

Լսվեց կենդանու ատամների կրճտոցը և նա իջավ դեպի հատակը, տանելով իր հետ եռաժանին։

Սակայն շուտով տակառը կրկին դուրս եկավ ջրի երեսը, ապա նաև դյուգոնի դիակը, որ շուռ էր եկել մեջքի վրա։ Մակույկը նրան բուքսիրի առավ և քարշ տվեց դեպի «Նաուտիլուսը»։

Սպանված կենդանուն նավի վրա բարձրացնելու համար հարկավոր եղավ ամբարձիչ կռունկ դնել։ Կենդանին կշռում էր ավելի քան հինգ հազար կիլոգրամ։ Դիակը կտրատվեց Նեդ Լենդի անմիջական ղեկավարությամբ. նա չուզեց որևէ մեկին վստահել այդ գործը։ Նույն երեկոյան սպասավորն ինձ մատուցեց դյուգոնի մսից եփած ճաշ, որ հրաշալի կերպով պատրաստել էր նավի խոհարարը։ Այդ միսն ինձ ավելի դուր եկավ, քան տավարի միսը։

Հետևյալ օրը, փետրվարի 11-ին, «Նաուտիլուսի» մառանը լցվեց մսի մի նոր պաշարով։ Ծիծեռնակների մի փոքրիկ երամ նստեց ստորջրյա նավի տախտակամածին։ Դրանք նեղոսյան ծիծեռնակներ էին, որոնք լինում են միայն Եգիպտոսում, ունեն սև կտուց, սրածայր, գորշ գլուխ, սպիտակ թևերով շրջապատված աչքեր, մոխրագույն մեջք, թեվեր և պոչ, սպիտակ կուրծք ու փոր և կարմիր թաթիկներ։ Մենք բռնեցինք նաև մի քանի դյուժին նեղոսյան բադեր, վայրի թռչուններ սպիտակ գլխով ու պարանոցով, որ սև բծերով է ծածկված։ Դրանց միսը նույնպես շատ հաճելի համ ուներ։

Այդ օրը «Նաուտիլուսն» ընթանում էր չափավոր արագությամբ։ Կարծես ոչ մի տեղ չէր շտապում։ Ես նկատեցի, որ Կարմիր ծովի ջուրը կորցնում էր իր աղիությունն այն չափով, ինչ չափով մենք մոտենում էինք Սուեզին։

Կեսօրից հետո, ժամը մոտ հինգին հյուսիսում մենք տեսանք Ռաս-Մոհամմեդ հրվանդանը։

Ռաս-Մոհամմեդ հրվանդանը քարքարոտ Արաբիայի ծայրն է և գտնվում է Սուեզի և Ակաբի ծովածոցերի միջև։

«Նաուտիլուսը» մոտավ Սուեզի ծոցը։ Ես պարզ նկատեցի մի բարձր սար, որ գտնվում էր Ռաս-Մոհամմեդ հրվանդանի վրա։ Դա Օրեբ սարն էր։

Երեկոյան ժամը վեցին «Նաուտիլուսը», մերթ ջրասույզ լինելով և մերթ դուրս գալով ջրի երեսը, անցավ Տորից ոչ հեռու, որ գտնվում էր ծովախորշի ծայրում։ Այդ ծովախորշի ջուրը, ինչպես ինձ արդեն ասել էր նավապետ Նեմոն, իսկապես կարմիր երանգ ուներ։

Գիշերը վրա հասավ հանկարծակի, շուրջը տիրում էր ծանր լռություն, որը խախտվում էր միայն հավալուանների և ինչ-որ գիշերային թռչունների ձայներով, խութերի վրա փշրվող մակընթացության աղմուկով և շոգենավերի հեռավոր շչակներով։

Երեկոյան ժամը ութից մինչև ինը «Նաուտիլուսը» մի քանի մետր իջավ ջրի տակ։ Իմ հաշվով մենք պետք է լինեինք Սուեզին շատ մոտիկ։ Սրահի լուսամուտից ես տեսնում էի առափնյա ժայռերի հիմքերը, որ պարզ լուսավորված էին էլեկտրական լուսարձակի լույսով։ Ես այնպիսի տպավորություն էի ստանում, թե նեղուցն ավելի և ավելի է նեղանում։

Ժամը 9-ից 15 րոպե անց նավը կրկին դուրս եկավ ջրի երեսը։

Ես անհամբերությամբ ուզում էի տեսնել նավապետ Նեմոյի Արաբական թունելը։ Նավի մեջ ինձ անհանգիստ զգալով, ես բարձրացա տախտակամածը։

Շուտով հեռվում, մեզանից մոտավորապես մեկ և կես մղոն տարածության վրա, ես տեսա երեկոյան մշուշով շղարշված լույս։

— Դա լողացող փարոս է,— ասաց մեկը, որ կանգնած էր իմ կողքին։

Ես ցնցվեցի անակնկալից և ետ դառնալով, տեսա նավապետ Նեմոյին։

— Դա Սուեզի լողացող փարոսն է,— կրկնեց նա,— մենք շուտով կմոտենանք թունելի անցքին։

— Պետք է կարծել, որ այնքան էլ հասարակ բան չէ այնտեղ մտնելը, այնպես չէ՞,— հարցրի ես։

— Այո, դա բավական վտանգավոր տեղ է։ Այս պատճառով թունելը մտնելիս ես վերցնում եմ ղեկն և անձամբ վարում նավը։ Իսկ այժմ, պարոն պրոֆեսոր, եթե ձեզ հաճելի կլինի իջնել ներքև, «նաուտիլուսը» շրասույզ կլինի և ջրից դուրս կգա արդեն Միջերկրական ծովում, անցնելով Արաբական թունելը։

Ես հետևեցի նավապետ Նեմոյին։ Դռնակը փակվեց, պահամանները լցվեցին ջրով և նավը կրկին շրասույզ եղավ տասը մետր խորությամբ։

Այն րոպեին, երբ ես պատրաստվում էի վերադառնալու իմ սենյակը, նավապետ Նեմոն դիմեց ինձ.

— Պարոն պրոֆեսոր,— ասաց նա,— արդյոք չե՞ք ցանկանում ինձ հետ միասին գտնվել ղեկանիվի մոտ։

— Ես չհամարձակվեցի այդ մասին խնդրել ձեզ, նավապետ,— պատասխանեցի ես։

— Այդ դեպքում գնանք։ Այնտեղից դուք կտեսնեք այն ամենն ինչ որ կարելի է տեսնել այս ստորերկրյա և միաժամանակ ստորջրյա ճանապարհորդության ժամանակ։

Մենք կիսով չափ բարձրացանք դեպի տախտակամած տանող սանդուղքը։ Այստեղ նավապետ Նեմոն բացեց դուռը, և մենք մտանք մի նեղ ու ցածլիկ միջանցք, որի ծայրում գտնվում էր ղեկանիվի խցիկը։ Ինչպես հայտնի է, նավի առջևի ծայրում բարձրանում է այդ խցիկը։

Այդ մի նավասենյակ էր, որ ուներ վեց քառակուսի ոտնաչափ տարածություն, այսինքն այնքան, որքան լինում է Միսսիսիպիի և Հուդզոն-Ռիվերի վրա լողացող նավերում։ Մեջտեղում գտնվում էր ղեկանիվը, որ ճոպաններով միացած էր նավի ետնամասում գտնվող ղեկին։ Նավասենյակի չորս պատերում չորս լուսացույցներ, որոնք պատած էին ոսպնյակաձև ապակիներով, ղեկավարին հնարավորություն էին տալիս նայելու բոլոր կողմերը։

Խցիկում մութ էր. սակայն շուտով իմ աչքերն ընտելա-

ցան խավարին, և ես տեսա ղեկավարին, հաղթանդամ մի մարդու, որ երկու ձեռքերով բռնել էր ղեկանիվը։ Խցիկում տիրում էր խավարը, իսկ ծովը, որտեղ թափանցում էին լուսարձակի ճառագայթները, կարծես հեղեղված էր լույսով։

— Հիմա,— ասաց նավապետ Նեմոն,— փնտրենք թունելի մուտքը։

Էլեկտրալարերը ղեկանիվի խցիկը միացնում էին մեքենայական բաժնին, և նավապետը մի շարք պայմանական ազդանշանների միջոցով կարող էր առանց ղեկանիվից հեռանալու հրամայել ավելացնել կամ պակասեցնել նավի շարժման արագությունը։

Նավապետ Նեմոն սեղմեց մետաղյա կոճակը, և նույն րոպեին երկու անգամ պակասեց մեքենայի պտույտների թիվը։

Ես լուռ դիտում էի գրանիտե սեպաձև պատը, ցամաքի անսասան ստորոտը, որի երկայնքով, մի քանի մետր հեռու մենք գնում էինք գրեթե մի ժամվա ընթացքում։

Նավապետ Նեմոն անընդհատ նայում էր կողմնացույցին, նրա ցուցումներով ղեկավարն այս ու այն կողմ էր դարձնում ղեկանիվը, շարունակ փոխելով նավի ուղղությունը։

Ժամը 10-ից 15 րոպե անց նավապետ Նեմոն ինքը սկսեց վարել ղեկանիվը։ Մեր առաջ բացվեց մի լայն և խորը ստորանցքի մուտքը։ «Նաուտիլուսը» համարձակ մտավ այնտեղ։

Նավի երկաթե արտաքինն արտասովոր կերպով դղրդում էր։ Դա Կարմիր ծովից թեք ուղղությամբ Միջերկրական ծովը թափվող ջրի աղմուկն էր։ Ջրի հոսանքը նետի արագությամբ տանում էր «Նաուտիլուսը», չնայած, որ շարժումը դանդաղեցնելու համար մեքենան հակառակ կողմ էր պտտեցնում պտուտակը, որ ամենամեծ թվով պտույտներ էր կատարում։

Այդ գլխապտույտ արագության ժամանակ թունելի պատերի վրա կարելի էր նկատել միայն լույսի առկայծող շերտերը, որ առաջանում էին էլեկտրական լուսարձակից։ Սիրտս ուժեղ խփում էր, և ձեռքս դրել էի սրտիս, որ շտիավորեմ բաբախումը։

Ժամը 10-ից 35 րոպե անց նավապետ Նեմոն ղեկանիվը հանձնեց ղեկավարին և դառնալով դեպի ինձ, ասաց.

— Մենք Միջերկրական ծովումն ենք։

«Նաուտիլուսը» հոսանքի ուժի շնորհիվ քսան րոպեից էլ պակաս ժամկետում գետնի տակից անցավ Սուեզի պարանոցը։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀՈՒՆԱԿԱՆ ԱՐՇԻՊԵԼԱԳԸ

Հետևյալ օրը, փետրվարի 12-ին, լուսաբացին «Նաուտիլուսը» դուրս եկավ ջրի երեսը։ Ես շտապեցի դեպի տախտակամածը։ Մեզանից երեք մղոն դեպի հարավ, առավոտյան մշուշում աղոտ կերպով ուրվագծվել էր հնադարյան Պելուզիումը, որի ավերակների վրա կառուցված է այժմյան Պորտ-Սաիդը։

Արագահոս հեղեղը մի քանի րոպեում մեզ տարավ մի ծովից մյուսը։ Սակայն այդ թունելը, որով հեշտությամբ կարելի էր իջնել, հակառակ ուղղությամբ՝ Միջերկրականից դեպի Կարմիր ծովը պետք է որ լիներ բոլորովին անանցանելի։

Առավոտյան ժամը մոտ յոթին Նեդ Լենդը և Կոնսելը միացան ինձ։ Այդ անբաժան բարեկամները հանգիստ քնել էին, ամենևին չհետաքրքրվելով «Նաուտիլուսի» դիշերային սխրագործություններով։

— Հապա՛, պարոն պրոֆեսոր, ո՞ւր է մեզ խոստացված Միջերկրական ծովը։

— Մենք լողում ենք հենց այդ ծովում, սիրելի Նեդ,— պատասխանեցի ես։

— Ինչպե՞ս,— բացականչեց Կոնսելը,— ուրեմն այս դիշեր...

— Միանգամայն ճիշտ է, այս դիշեր քսան րոպեի ընթացքում մենք անցանք այդ անանցանելի պարանոցի տակից։

— Չեմ հավատում,— ասաց Նեդ Լենդը։

— Իզուր, միստր Լենդ,— պատասխանեցի ես,— ցածրադիր ափը, որ դուք տեսնում եք հարավում, դա Եգիպտոսի ափն է։

— Ինձ դժվար է խաբել, պարոն պրոֆեսոր,— հակաճառեց համառ կանադացին,— այդ հեքիաթները պատմեցեք ավելի դյուրահավատ մարդկանց։

— Քանի որ պարոնը պնդում է դա, պետք է հավատալ պարոնին,— ասաց նրան Կոնսելը։

— Ի դեպ ասած, Նեդ,— շարունակեցի ես,— նավապետ Նեմոն անձամբ ցույց տվեց ինձ իր թունելը։ Ես նրա կողքին կանգնած էի ղեկի մոտ, այն ժամանակ, երբ նա ինքն էր վարում «Նաուտիլուսը» նեղ անցքի միջով։

— Լսո՞ւմ եք, Նեդ,— հարցրեց Կոնսելը։

— Դուք այնպիսի հիանալի տեսողություն ունեք, Նեդ,— ավելացրի ես,— որ կարող եք համոզվել, թե ես ձեզ չեմ խաբում։ Նայեցեք, այնտեղ պետք է որ երևա Պորտ-Սաիդի նավահանգիստը։

Կանադացին նայեց մատնանշված կողմը։

— Իսկապես, պարոն պրոֆեսոր, դուք իրավացի եք,— ասաց նա,— և ձեր նավապետն իր գործի վարպետն է։ Մենք Միջերկրական ծովում ենք։ Լա՛վ։ Եկեք մի քիչ խոսենք մեր գործերի մասին, բայց միայն այնպես, որ ոչ ոք չկարողանա մեզ լսել։

Ես շատ լավ հասկացա, թե ինչ է ուզում կանադացին։

«Համենայն դեպս,— մտածեցի ես,— քանի որ Նեդ Լենդը պնդում է, անհրաժեշտ է խոսել այդ մասին»։

Մենք երեքով գնացինք լուսարձակի մոտ և նստեցինք այնտեղ։

— Հիմա մենք ձեզ լսում ենք, Նեդ,— ասացի ես,— ի՞նչ էիք ուզում հաղորդել մեզ։

— Իմ ասելիքը շատ կարճ կլինի,— պատասխանեց կանադացին,— մենք մոտենում ենք Եվրոպային և նախքան նավապետ Նեմոյի խելքին կփշի մեզ քարշ տալ բևեռային ծովերի հատակը կամ Օվկիանիա, ես առաջարկում եմ բաժանվել «Նաուտիլուսից»։

Խոստովանում եմ, որ ինձ համար անհաճելի էր այդ թեմայի շուրջը վիճել կանադացու հետ։ Ես ոչ մի կերպ չէի ուզում խանգարել իմ ընկերների ազատությունը, սակայն մյուս կողմից ես ցանկություն չունեի այդպես շուտ բաժան-

վել նավապետ Նեմոյից։ Նրա շնորհիվ, նրա զարմանալի նավի շնորհիվ, ես յուրաքանչյուր օր հարստացնում էի իմ գիտելիքները, նորից գրեցի իմ գիրքը ծովի հատակում եղած կյանքի մասին, գտնվելով, այսպես ասած, այդ կյանքի ծաղկման հենց կենտրոնում։ Էլ որտե՞ղ կարող եմ ես հնարավորություն գտնել այսպես լիակատար չափով ուսումնասիրելու օվկիանոսի հրաշալիքները։ Իհարկե ոչ մի տեղ։ Ահա թե ինչու ես չէի ուզում հեռանալ ատորչրյա նավից, մինչև որ ավարտվի մեր շուրջերկրյա հետազոտական գիտարշավը։

— Իմ բարեկամ Նեդ,— ասացի ես,— պատասխանեցեք ինձ առանց որևէ բան թաքցնելու, մի՞թե դուք ձանձրանում եք այս նավում։ Մի՞թե դուք անիծում եք բախտը, որ մեզ այստեղ է բերել։

Կանադացին միանգամից չպատասխանեց։ Հետո, ձեռները դնելով կրծքին, ասաց.

— Ճիշտն ասած, ես չեմ ցավում, որ կատարել եմ այս ատորչրյա ճանապարհորդությունը։ Երբևէ ես հաճույքով կհիշեմ այս մասին։ Բայց որպեսզի այդ լինի, հարկավոր է, որ մեր ճանապարհորդությունը վերջանա։ Ահա թե այս առթիվ ես ինչ եմ մտածում։

— Այս ճանապարհորդությունը կվերջանա, Նեդ։

— Որտե՞ղ, ե՞րբ։

— Որտե՞ղ։ Չգիտեմ։ Ե՞րբ։ Չեմ կարող ձեզ ճշտությամբ ասել, բայց կարծում եմ, որ կվերջանա այն ժամանակ, երբ ծովը մեր առջև բաց կանի իր վերջին գաղտնիքը։ Այս աշխարհում յուրաքանչյուր սկիզբ վաղ թե ուշ պետք է ունենա իր վերջը։

— Ես միանգամայն համաձայն եմ պարոնի հետ,— վրա բերեց Կոնսելը,— իմ կարծիքով շատ հավանական է, որ նավապետ Նեմոն, մեզ հետ շրջելով բոլոր ծովերն ու օվկիանոսները, ուզղակի մեզ դուրս կշպրտի։

— Դո՞ւրս կշպրտի,— վիրավորվեց կանադացին,— դուք ասացիք, որ նա մեզ դո՞ւրս կշպրտի։

— Բառերի նկատմամբ բծախնդիր մի լինեք, Նեդ Լենդ,— միջամտեցի ես,— մենք կարիք չունենք վախենալու նավապետ Նեմոյից, այստեղ ես համաձայն չեմ Կոնսելի հետ։

Սակայն մյուս կողմից չպետք է հույս դնել, որ նա կամավոր կերպով համաձայնի ազատ թողնել մեզ։ Մենք գիտենք «Նաուտիլուսի» բոլոր գաղտնիքները և հազիվ թե նա թույլ տա, որ այդ գաղտնիքները մեզ հետ ճանապարհորդեն ամբողջ աշխարհում։

— Այդ դեպքում դուք ինչի՞ վրա եք հույս դնում,— հարցրեց կանադացին։

— Հանգամանքների վրա, որոնք վաղ թե ուշ կդասավորվեն այնպես, որ մենք կկարողանանք օգտվել նրանցից։ Դա կարող է պատահել վեց ամիս հետո, ճիշտ այնպես, ինչպես և հիմա։

— Հը՛մ,— ասաց Նեդ Լենդը,— ասացեք խնդրեմ, պարոն բնագետ, արդյոք կարո՞ղ եք նախագուշակել, թե մենք վեց ամիս հետո որտեղ կլինենք։

— Գուցե դարձյալ այստեղ, գուցե և Չինաստանում։ Դուք գիտեք, որ «Նաուտիլուսը» շափազանց արագընթաց նավ է։ Օվկիանոսներում նա սլանում է նույնպիսի արագությամբ, ինչպես, ծիծեռնակն օդում, կամ ճեպընթաց գնացքը ցամաքում։ Նա չի վախենում այն ծովերից, ուր աշխույժ երթևեկություն կա, մենք արդեն համոզվեցինք դրանում։ Ո՞վ կարող է ասել, թե վեց ամսից հետո նա չի վերադառնա Ֆրանսիայի կամ Անգլիայի ափերը և փախչելու պայմաններն ավելի նպաստավոր չեն լինի, քան այսօր։

— Պարոն պրոֆեսոր,— ասաց կանադացին,— ձեր փաստարկումները թույլ են։ Դուք խոսում եք շարունակ ապառնի ժամանակով։ «Մենք այստեղ կլինենք, մենք այնտեղ կլինենք»։ Իսկ ես խոսում եմ ներկա ժամանակով. «Մենք այստեղ ենք, հարկավոր է օգտվել դրանից»։

Ես առարկելու ոչինչ չունեի Նեդ Լենդի տրամաբանական դիտողության դեմ, և ես ինձ պարտված զգացի այդ վեճի ժամանակ։ Ես այլևս փաստարկումներ չունեի իմ առաջարկը պաշտպանելու համար։

— Պարոն պրոֆեսոր,— շարունակեց Նեդը,— մի՞ թե ենթադրենք անկարելին, որ նավապետ Նեմոն ինքը մեզ ազատություն կառաջարկի։ Արդյոք դուք կընդունե՞ք այդ ազատությունը։

— Չգիտեմ։

— Իսկ եթե նա ավելացնի, որ այդ առաջարկն այլևս երբեք չի կրկնելու, այդ դեպքում դուք ի՞նչ կասեք։

Ես լուռ էի։

— Ի՞նչ է մտածում այդ մասին Կոնսելը,— հարցրեց Կանադացին։

— Կոնսելն այդ մասին բոլորովին ոչինչ չունի ասելու,— հանգիստ պատասխանեց սքանչելի մարդը,— նա բոլորովին շահագրգռված չի այդ հարցի այս կամ այն լուծմամբ։ Նա ամուրի է, ինչպես և նրա պարոնը, ինչպես և նրա բարեկամ Նեդ Լենդը։ Հայրենիքում նրան չեն սպասում ոչ կինը, ոչ երեխաները, ոչ էլ հարազատները։ Նա ծառայում է իր պարոնի մոտ և մտադիր չէ թողնել այդ ծառայությունը։ Նա պետք է ցավելով հայտնի, որ մտադիր չէ մասնակցել այդ հարցի քվեարկման և իր ձայնով գերակշռություն տալ այս կամ այն կողմին։ Մենամարտին մասնակցում են միայն երկու հոգի՝ մի կողմից պարոնը և մյուս կողմից Նեդ Լենդը։ Կոնսելը լռում է և սկսում հաշվել հարվածները։

Լսելով Կոնսելի խոսքերը, ես չէի կարողանում պահել ժպիտս։ Կանադացին իր հոգու խորքում հավանորեն գոհ էր, որ Կոնսելն իրեն դեմ չէ։

— Եթե Կոնսելը չի մասնակցում վեճին,— ասաց ինձ Նեդ Լենդը,— ուրեմն մնում է, որ մենք իրար մեջ լուծենք խնդիրը։ Ես իմն ասացի։ Դուք լսեցիք ինձ։ Ի՞նչ կարող եք պատասխանել։

Հարկավոր էր մի որևէ վճիռ ընդունել։ Խուսափելն ինձ համար զզվելի էր։

— Ահա իմ պատասխանը, սիրելի Նեդ,— ասացի ես,— դուք վեճի մեջ հաղթեցիք ինձ, և ես չեմ կարող լուրջ առարկություններ անել փաստարկումների դեմ։ Ավելորդ է հուսալ, որ նավապետ Նեմոն մեզ բաց կթողնի։ Ամենատարրական նախազգուշությունը նրան թույլ չի տա այդ անելու։ Սակայն նույն նախազգուշությունը պահանջում է, որ մենք օգտագործենք «Նաուտիլուսից» հեռանալու հենց առաջին հարմար առիթը։

— Հրաշալի է, պարոն պրոֆեսոր։ Ա՛յ, հիմա դուք խելք եք դատում։

— Սակայն ես մի դիտողություն ևս ունեմ,— ասացի ես,— հարկավոր է, որ այդ առիթն իսկապես հարմար լինի։ Հարկավոր է, որ մեր փախչելու հենց առաջին փորձը պսակվի լիակատար հաջողությամբ։ Հարկավ, եթե այդ փորձն անհաջող անցնի, մենք այլևս երբեք հարմար առիթ չենք ունենա, և նավապետ Նեմոն երբեք չի ների մեզ։

— Այդ ճիշտ է,— ասաց Նեդ Լենդը,— սակայն ձեր դիտողությունը միևնույն չափով վերաբերում է թե՛ այսօր փախչելու փորձին և թե՛ այն փորձերին, որ մենք առաջարկում ենք կատարել երկու տարուց հետո։ Այստեղից հետևում է անժխտելի մի եզրակացություն, հենց որ փախչելու առիթ լինի, անհապաղ օգտվել այդ առիթից։

— Համաձայն եմ։ Իսկ այժմ ասացեք, Նեդ, ի՞նչն եք դուք անվանում «հարմար առիթ»։

— Մթին գիշերը, երբ «Նաուտիլուսը» մոտիկ կլինի ելբոպական որևէ ծովեզրին։

— Եվ դուք մտածում եք փախչել լողալո՞վ։

— Այն դեպքում, եթե «Նաուտիլուսը» կլողա ծովի վրա, և ափը բավականաչափ մոտ կլինի։ Իսկ եթե նավը՝ կլողա ջրի տակ և ափն ավելի հեռու կլինի, ապա...

— Ապա այդ դեպքում ի՞նչ անել...

— Պետք է աշխատել գրավել մակույկը։ Ես գիտեմ, թե ինչպես կարելի է այդ անել։ Մենք կնստանք մակույկը և արձակելով հեղույսները, այնպե՛ս դուրս կգանք ջրի երեսը, որ նույնիսկ դեկանիվի խցիկում գտնվող մեքենավարը չի նկատի մեր փախուստը։

— Լավ, Նեդ։ Հետևեցեք ուրեմն հարմար առիթին։ Միայն թե հիշեցեք, որ անհաջողությունը կորստյան կմատնի մեզ։

— Չեմ մոռանա, պարոն պրոֆեսոր։

— Իսկ այժմ, երբ մենք ամեն ինչի մասին պայմանավորվեցինք, ուզո՞ւմ եք իմանալ, Նեդ Լենդ, թե ես ինչ եմ մտածում ձեր նախագծի մասին։

— Իհարկե, պարոն պրոֆեսոր։

— Ես կարծում եմ, շեշտում եմ այդ, ես կարծում եմ և

ոչ թե հույս տածում, որ այդ հարմար առիթը շուտ չի լինի։

— Ինչո՞ւ։

— Որովհետև նավապետ Նեմոն հավանորեն լավ է հասկանում, որ մենք չենք հրաժարվել մեր ազատությունը վերադարձնելու մտքից, ուստի երբ մենք մոտիկ լինենք եվրոպական ափերին, նա պետք է շարունակ զգուշություն պահպանի։

— Ես համաձայն եմ պարոնի կարծիքի հետ,— ասաց Կոնսելը։

— Կապրենք, կտեսնենք,— պատասխանեց Նեդ Լենդը, համառորեն օրորելով գլուխը։

— Դեհ, բավական է,— ասացի ես,— այդ մասին այլևս շարժե խոսել։ Այն օրը, երբ դուք փախչելու կլինեք, նախազգուշացրեք մեզ, և մենք առանց որևէ հարց տալու կհետևենք ձեզ։ Մենք կուրորեն հավատում ենք ձեզ, Նեդ։

Այսպես ուրեմն վերջացավ մեր խոսակցությունը, որ պետք է խիստ կարևոր հետևանքներ ունենար։

Միանգամից ասեմ, որ դեպքերը հաստատեցին իմ ենթադրությունների ճշտությունը և այդ մեծ ցավ պատճառեց կանադացուն։ Կամ նավապետ Նեմոն մեզ չէր վստահում այդ բանուկ ծովերում կամ ուզում էր խուսափել բոլոր ազգերի բազմաթիվ նավերին հանդիպելուց, որոնք երթևեկում էին Միջերկրական ծովում, մենք համարյա շարունակ ընթանում էինք ջրի տակ և ափերից բավական հեռու։ «Նաուտիլուսը» ծովի մակերևույթն էր բարձրանում այնքան, որ միայն ղեկանիվի խցիկն էր դուրս գալիս ջրից, կամ թե ծովի խորքերն էր մտնում։ Ի դեպ ասած՝ Հունական արշիպելագի և Փոքր Ասիայի միջև մենք խորացանք երկու հազար մետր, սակայն չհասանք ծովի հատակին։

Ես միայն նավապետ Նեմոյից իմացա, որ մենք անցել ենք Դոդեկանեզ խմբին պատկանող Կարպաթոս կղզու մոտից։ Նավապետ Նեմոն քարտեզի վրա ինձ ցույց տվեց այս կղզին։

Հետևյալ օրը, փետրվարի 14-ին, ես որոշեցի մի քանի ժամ նվիրել Հունական արշիպելագի ձկների ուսումնասիրությանը։ Սակայն ինձ անհայտ պատճառներով նավասենյակի

լուսամուտների փեղկերն ամբողջ օրը փակ մնացին։ Քարտեզի վրա գտնելով «Նաուտիլուսի» ճանապարհը, ես տեսա, որ նավը գնում էր դեպի Կրետե կղզին։ Այն ժամանակ, երբ ես նստում էի «Աբրահամ Լինկոլնը», այդ կղզին ապստամբվեց Թուրքիայի դեմ։ Ես չգիտի, թե ինչ պատահեց կղզու ապստամբների հետ և իհարկե նավապետ Նեմոն, որ կտրել էր ամեն մի կապ մարդաբնակ աշխարհի հետ, այդ մասին ոչ մի նորություն չէր կարող հաղորդել ինձ։

Երեկոյան, երբ սրահում հանդիպեցի նրան, այդ դեպքի մասին ոչ մի ակնարկ չարեցի։ Պետք է ասել, որ նավապետն ինձ թվաց մռայլ և մտահոգված։ Հակառակ իր սովորության, նա անսպասելիորեն կարգադրեց բաց անել սրահի լուսամուտների երկու փեղկերը և անցնելով մեկ լուսամուտից մյուսը, ուշադրությամբ դիտում էր ջուրը։ Ի՞նչ էր ուզում տեսնել։ Ես այդ ըմբռնել չէի կարող, ուստի սկսեցի դիտել ձկները, որ լողում էին աչքերիս առաջ։

Ձկների մեջ ես նկատեցի ծովային կոլքներ, որ հասարակ լեզվով կոչվում են արջառներ։ Այս ձկները հաճախ պատահում են Նեղոսի գետաբերանի մոտ, աղի ջրերում։

Այնուհետև ես տեսա ֆոսֆորափայլ պագրերը, որ պատկանում են զուգավորների ընտանիքին։ Եգիպտացիք այս ձկները սրբազան էին համարում. երբ այս ձկները մտնում էին Նեղոսի ջրերը, տեղի էին ունենում կրոնական ճոխ ծիսակատարություններ, որովհետև դա գետի վարարման, այսինքը լավ բերքի նշան էր։

Այնուհետև մեր առջևից անցավ հեյլիննների մի վտառ։ Դրանք ոսկրաշատ ձկներ են, ունեն երեսուն սանտիմետր երկարություն, կապտավուն գույնի թափանցիկ թեփ, որ տեղ-տեղ ծածկված է կարմիր բծերով։ Այս ձկները սնվում են միայն ծովային ջրիմուռներով, որ բացառիկ համ է տալիս նրանց մսին։ Դեռևս հին Հռոմում հեյլիննները համեղ ուտելիք էին համարվում և պատրաստվում էին փողոշ ձկան սերմնագեղձերի, սիրամարգի ուղեղի ու ծիծեռնակի լեղվի համեմունքով։

Այդ ծովերի մի բնակիչ ևս ինձ հիշեցնում էր հին Հռոմի ժամանակները։ Այդ լոցման կոչված ձկնիկն էր, որ միշտ

ուղեկցում է շնաձկներին։ Հնադարյան մարդկանց հավատալիքների համաձայն, այս փոքրիկ ձկնիկը, կպչելով նավի հետին մասին, կարող է կանգնեցնել այն։

Պահպանվել է նաև այն առասպելը, որ իբր թե այդպիսի մի ձկնիկ Ակցիումի ճակատամարտի ժամանակ կանգնեցրել է Անտոնիոսի նավը և հենց դրանով վճռել է ճակատամարտի բախտը հօգուտ Ավգուստոսի։

Ահա թե երբեմն ինչից է կախված լինում ժողովուրդների բախտը։

Ես նկատեցի նաև չքնաղագեղ anthiaz՝ հին Հունաստանի սրբազան ձկները, որոնք ըստ ավանդության ընդունակ էին իրենց տեղերից վտարել հրեշներին։ Նրանց անունը նշանակում է «ծաղիկ», և նրանք դա միանգամայն արդարացնում են իրենց գույների ելևէջներով, ունենում են կարմիր գույնի բոլոր տեսակները, բաց վարդագույնից մինչև սուտակի գույնը։

Ես զմայլված դիտում էի այդ ծովային հրաշքը։ Հանկարծ ինձ ապշեցրեց անակնկալ մի տեսարան. ջրի տակ երևաց մի մարդ՝ սուզակ, որի գոտուց կաշվե պայուսակ էր կախված։ Այդ կենդանի մարդ էր։ Մի քանի անգամ նա բարձրանում էր ծովի մակերևույթը և նորից ջրասույզ լինում։

Ես դարձա դեպի նավապետ Նեմոն և հուզված բացականչեցի.

— Մարդը ջրասույզ է լինում։ Ինչ կերպ էլ լինի, հարկավոր է փրկել նրան։

Նավապետ Նեմոն առանց ինձ պատասխանելու շտապ մոտեցավ լուսամուտին։ Լողորդը նորից ջրասույզ եղավ և աչքերը մոտեցնելով ապակուն, նայում էր մեզ։

Նավապետ Նեմոն ինչ-որ նշան արեց նրան և այդ խիստ զարմացրեց ինձ։ Սուզակը գլխով արեց, անմիջապես բարձրացավ ծովի մակերևույթն ու այլևս չերևաց։

— Մի վախենաք նրա համար,— ասաց ինձ նավապետ Նեմոն,— դա Մառապան Հրվանդանի բնակիչ Նիկոլան է, որ ստացել է «Ձուկ» մականունը։ Ցիկլադյան բոլոր կղզիներում ճանաչում են նրան։ Հրաշքի լողորդ է։ Ջուրը նրա տարերքն է, և նա ջրում ավելի շատ ժամանակ է անցկացնում, քան

ցամաքում, մեկ կողքից անդադար լողալով դեպի մյուսը, երբեմն էլ նույնիսկ դուրս գալով կրեատ։

— Դուք ճանաչո՞ւմ եք նրան, նավապետ Նեմո։

— Ինչո՞ւ չպիտի ճանաչեմ,— պարոն Արոնաքս։

Այս ասելով, նավապետը մոտեցավ այն պահարանին, որ կառուցված էր սրահի պատի մեջ։ Պահարանի կողքին գտնվում էր երկաթապատ մի սնդուկ, որի վրա կար պղնձե մի թիթեղ։ Թիթեղի վրա փորագրված էր «Նաուտիլուսի» նշանաբանը. «Mobilis in modile»։

Այլևս ուշադրություն չդարձնելով ինձ վրա, նավապետ Նեմոն բացեց պահարանը, որտեղ կային մետաղյա բազմաթիվ ձուլածոներ։

Դրանք ոսկու ձուլեր էին։

Որտեղի՞ց էր «Նաուտիլուս» բերվել այդքան մեծ քանակությամբ ոսկի։ Նավապետ Նեմոն որտե՞ղ էր ոսկի գտնում և հիմա ի՞նչ պիտի աներ այդ մետաղը։

Ես ոչ մի բառ չարտասանեցի։ Ես նայում էի։ Նավապետ Նեմոն պահարանից հանում էր ոսկու կտորները և մեկ-մեկ տեղավորում փոքրիկ սնդուկում, մինչև որ սնդուկը լցվեց։

Ես հաշվեցի, որ նա սնդուկում տեղավորեց առնվազն հազար կիլոգրամ ոսկի, որ արժե համարյա հինգ միլիոն ֆրանկ։

Նավապետը ծածկեց սնդուկի կափարիչը և վրան գրեց մի հասցե, ըստ երևույթին նոր հունական լեզվով։

Ավարտելով այդ, նա սեղմեց զանգի կոճակը, որով կարելի էր զանգահարել անձնակազմի սենյակը։ Անմիջապես եկան ութ նավաստի և առանց դժվարության սնդուկը դուրս տարան սրահից։

Ես լսում էի, թե ինչպես նրանք ճախարակի օգնությամբ սնդուկը հանում էին տախտակամածը։

Այդ րոպեին նավապետ Նեմոն դարձավ դեպի ինձ։

— Այսպես ուրեմն, պարոն պրոֆեսոր, դուք ասում էիք թե...

— Ես ոչինչ չէի ասում,— պատասխանեցի ես։

— Այդ դեպքում թույլ տվեք բարի գիշեր ասել ձեզ։

Եվ այդ ասելով, նա դուրս եկավ սալոնից։

Ես իմ նավասենյակը վերադարձա չափազանց հուզված։ Իզուր փորձեցի քնել։ Ինձ տանջում էր այն, ոչ մի կերպ չէի կարողանում սրամաբանական կապ գտնել լողորդի երևվալու, և սնդուկը ոսկու կտորներով լցնելու մեջ։ Շուտով նավը սկսեց թեթև օրորվել, և ես գլխի ընկա, որ «Նաուտիլուսը» բարձրանում էր ծովի մակերևույթը։

Այնուհետև ես ոտնաձայն լսեցի տախտակամածից։ Ես հասկացա, որ մակույկը հանում են իր տեղից և իջեցնում ջուրը։ Մի անգամ մակույկը դիպավ «Նաուտիլուսին» և ապա աղմուկը լռեց։

Երկու ժամից հետո աղմուկը վերսկսվեց։ Մակույկը ջրից դուրս հանեցին և կրկին ամրացրեցին իր տեղում։ Ապա «Նաուտիլուսը» ջրասույզ եղավ։

Ուրեմն միլիոններն ուղարկվեցին ինչ-որ հացեով։ Սակայն մայր ցամաքի ո՞ւր կետը։ Ո՞վ էր նավապետ Նեմոյի սուրհանդակը։

Հետևյալ օրը ես Կոնսելին և Նեդ Լենդին պատմեցի անցած գիշերվա դեպքերի մասին, որոնք վերին աստիճանի զբաղեցրել էին իմ հետաքրքրությունը։

Իմ ընկերներն ինձնից ոչ պակաս զարմացան այն ամենով, ինչ որ տեղի էր ունեցել։

— Բայց որտեղի՞ց է նա վերցնում այդ միլիոնները,— հարցրեց Նեդ Լենդը։

Ես չէի կարող պատասխանել այդ հարցին։

Նախաճաշից հետո ես անցա սալոն և այնտեղ սկսեցի աշխատել։

Մինչև երեկոյան ժամը հինգը ես գրում էի իմ օրագիրը։ Սակայն չգիտեմ ինչու սաստիկ շոգ զգացի։

Ես ստիպված էի հանել վերնազգեստս։

Այդ անբացատրելի էր. մենք հեռու էինք արևադարձից և բացի դրանից, միևնույն է, ջրասույզ եղած «Նաուտիլուսը» չպետք է ենթարկվեր օդի բարեխառնության։ Ես նայեցի խտաչափի սլաքին. մենք գնում էինք վաթսուն ոտնաչափ խորությամբ, ուր երկրի ջերմությունը ոչ մի կերպ չէր կարող թափանցել։

Ես փորձեցի շարունակել աշխատանքս, բայց շոգն ավելի էր սաստկանում և անտանելի դառնում։

«Գուցե նավի վրա հրդեհ է»,— մտածեցի ես։

Ես արդեն ուզում էի դուրս գնալ սրահից, երբ հանկարծ ներս մտավ նավապետ Նեմոն։

Նա քայլեց ուղիղ դեպի ջերմաչափը, դիտեց անդիկի բարձրությունը և դառնալով դեպի ինձ, ասաց.

— Քառասուն երկու աստիճան է։

— Ես այդ զգում եմ, նավապետ,— ասացի ես,— եթե ջերմությունն ավելի բարձրանա, մենք անկարող կլինենք տանել այն։

— Օ՛, պարոն պրոֆեսոր, ջերմությունն ավելի կբարձրանա միայն այն դեպքում, եթե մենք այդ ցանկանանք։

— Հետևաբար դուք կարող եք ձեր ցանկությամբ ավելացնել կամ շափավորել ջերմությունը, այո՞։

— Ոչ, բայց ես կարող եմ հեռու կամ մոտ լինել այն տեղին, որ բարձրացնում է ջերմությունը։

— Ուրեմն այդ տեղը «Նաուտիլուսից» դո՞ւրս է գտնվում։

— Իհարկե, մենք լողում ենք, եռացող ջրի շերտում։

— Մի՞թե այդ կարելի է,— բացականչեցի ես։

— Ինքներդ դատեցեք։

Փեղկերը բացվեցին, և ես տեսա, որ «Նաուտիլուսի» շուրջը ջուրը բոլորովին ապիտակ էր։ Ծծմբային գոլորշին փռվում էր ջրի մեջ, և ջուրը եռում էր ինչպես կաթսայում։

Ես ձեռքով շոշափեցի ապակին, որը, սակայն, այնքան տաք էր, որ ստիպված էի ձեռքս անմիջապես ետ քաշել։

— Որտե՞ղ ենք գտնվում,— հարցրի ես։

— Սանտորին կղզու մոտ, պարոն պրոֆեսոր,— պատասխանեց նավապետը,— եթե ուզում եք ավելի ճիշտ իմանալ, Նեա-Կամենին Պալեա-Կամենիից բաժանող նեղուցում։ Ես ուզում էի ձեզ ցույց տալ այս հազվադյուտ երևույթը, ստորջրյա հրաբխի ժայթքումը։

— Իսկ ես կարծում էի,— պատասխանեցի ես,— թե նոր կղզիներ այլևս չեն կազմվում...

— Հրաբխային վայրերում ոչ մի պրոցես ավարտված համարել չի կարելի,— պատասխանեց նավապետ Նեմոն,— չէ՞

որ երկրագնդի ներսն առաջվա պես լիքն է կրակով։ Եթե հավատանք պատմաբաններ Կասիոդորոսին և Պլինիոսին, մեր թվագրությամբ տասնինը թվականին հենց այն տեղում, որտեղ առաջ են եկել այդ կղզիները, կազմվել է մի նոր կղզի, Թեա անունով։ Այնուհետև դա անցել էր ջրի տակ, վաթսունինը թվականին դարձյալ երևան է եկել և դարձյալ վերջնականապես չքացել։ Այդ ժամանակից սկսած մինչև մեր օրերը դադարել է հրաբխային գործունեությունը։ Սակայն 1866 թվականի փետրվարի երեքին Նեա-Կամենիի մոտ, ծծմբային շոգու ամպերի միջև ջրից անսպասելիորեն դուրս է եկել մի նոր կղզի։ Դա անվանել են Գեորգի կղզի։ Փետրվարի վեցին դա միացել է Նեա-Կամենիի հետ։ Դրանից յոթ օր հետո, փետրվարի 13-ին, ջրից դուրս է եկել էլի մի նոր կղզի՝ Աֆրոեսա, որ Նեա-Կամենիից բաժանված է ընդամենը տասը մետր լայնությամբ նեղուցով։ Երբ տեղի ունեցավ այդ հազվագյուտ երևույթը, ես պատահմամբ գտնվում էի այդ ջրերում և դիտում էի տեղի ունեցածը։ Աֆրոեսա կղզին, որ համարյա կլոր է, ուներ երեք հարյուր ոտնաչափ շառավիղ և երեսուն ոտնաչափ բարձրություն։ Նա կազմված էր սև, ապակու տեսք ունեցող լավայից, որի մեջ գտնվում էին դաշտային սպաթի կտորներ։ Վերջապես, մարտի տասին Նեա-Կամենիի մոտ ծովից դուրս եկավ Ռեկա կոչված մի երրորդ, ավելի փոքր կղզի, և երեք կղզին էլ միացան։

Իսկ հիմա մենք ի՞նչ նեղուցում ենք գտնվում,— հարցրի ես։

— Ահա, նայեցեք,— պատասխանեց նավապետ Նեմոն, ցույց տալով մի նեղուց Հունական արշիպելագի քարտեզի վրա,— տեսնո՞ւմ եք, նոր կղզիները ես արդեն նշանակել եմ քարտեզի վրա։

— Այս նեղուցի հատակը հավանորեն երբեք նույնպես կբարձրանա ջրից։

— Միանգամայն հնարավոր է, պարոն պրոֆեսոր, որովհետև 1866 թվից ս. Նիկողայոսի նավահանգստի դիմաց, Պալեա-Կամենիում առաջ են եկել ութ նոր կղզիներ։ Այստեղից պարզ է, որ մոտիկ ապագայում Նեա-Կամենին և Պալեա-Կամենին կմիանան։ Խաղաղ օվկիանոսում նոր կղզի-

ներն ինֆուզորիաներն են առաջացնում։ Այս ջրերում նոր կղզիները հրաբխային գործունեության արդյունք են։ Տեսնո՞ւմ եք, պարոն պրոֆեսոր, թե ջրի տակ ինչպես է եռում կյանքը, առանց մի ակնթարթ անգամ դադարելու։

Ես նորից մոտեցա լուսամուտին։ «Նաուտիլուսը» չէր շարժվում։ Շոգն անտանելի դարձավ։ Երկաթի ադի ինչ-որ խառնուրդի շնորհիվ սպիտակ ջուրը կարմիր գույն էր ստանում։ Զնայելով, որ ապակիները հերմետիկորեն միացած էին նավի պատերին, ծծմբի հեղձուցիչ հոտը թափանցում էր սալոնը։ Ջրի մեջ ես նկատեցի կարմիր լույսի օջախները, այնքան պայծառ, որ մեր լուսարձակի ճառագայթները կորչում էին այդ լույսերում։

Ես քրտնել էի և շնչասպառ էի լինում։ Զգում էի, որ էլի մի քանի րոպե, և ես անկարող կլինեմ շնչել։

— Անկարելի է, այլևս մնալ այս եռացող ջրում,— ասացի ես նավապետին։

— Այո, մնալն անզգուշություն կլինի,— հանգիստ պատասխանեց նա։

Նավապետը հրաման տվեց։ «Նաուտիլուսը» շարժվեց և արագ հեռացավ այդ դժոխքից, որտեղ գտնվելը մեզ մահ էր սպառնում։ Քառորդ ժամից հետո ծովի վրա մենք ազատությամբ կլանում էինք մաքուր օդը։

Ես մտածեցի, որ եթե Նեդ Լենդը փախչելու համար ընտրեր այդ տեղը, մենք կենդանի կայրվեինք եռացող ջրում...»

Հետևյալ օրը, փետրվարի 16-ին «Նաուտիլուսը» անցնելով Մատապան հրվանդանը, հրաժեշտ տվեց Հունական արշիպելագին։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՔԱՌԱՍՈՒՆՈՒԹ ԺԱՄՈՒՄ ԱՆՑԱՆՔ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԸ

Միջերկրական կապույտ ծովը, հին հրեաների «Մեծ ծովը», հին հույների «Ծովը», հին հռոմեացիների «mare nostrum»[1] որ շրջապատված է բարձր լեռներով, նարնջենիների,

1 Մեր ծովը (լատ.)։

հալվենիների, կակտուսների, ծովային սոճիների ծաղկուն այգիներով և հայտնի է մրտենիների բուրմունքով լի մաքուր օդով, այդ Միջերկրական ծովը հրի և ջրի միջև մղվող մշտական պայքարի բեմ է։ Պլուտոնն ու Նեպտունն այստեղ պայքարում են աշխարհին տիրապետելու համար։

«Այս ծովի ափերում ու ջրերում,— գրում էր Միշլեն,— աշխարհում լավագույն կլիմա ունեցող այդ վայրերում մարդը ձեռք է բերում նոր ուժեր և առողջություն»։ Սակայն ինձ հաջողվեց միայն հարևանցի կերպով տեսնել իր գեղեցկությամբ հռչակավոր այդ ջրային ավազանը, որ ունի երկու միլիոն հարյուր հազար քառակուսի կիլոմետր տարածություն։

Ես չէի կարող իմ թռուցիկ տպավորությունները լրացնել նույնիսկ նավապետ Նեմոյին հարց ու փորձ անելով, որովհետև այդ հանելուկային մարդն ամբողջ Միջերկրական ծովով անցնելիս ոչ մի անգամ չերևաց։ Ի դեպ ասած՝ մենք ընթանում էինք բավական զգալի արագությամբ. «Նաուտիլուսը» երկու օրվա ընթացքում ջրի տակով անցավ վեցհարյուր լյու։ Փետրվարի 16-ին դուրս գալով Հունական արշիպելագից, փետրվարի 18-ի լուսաբացին մենք արդեն անցնում էինք Ջիբրալտարի նեղուցը։

Ինձ համար պարզ էր, որ նավապետ Նեմոն չի սիրում այդ ծովը, որ բոլոր կողմերից շրջապատված է այնպիսի երկրներով, որոնցից փախչում է նա։ Թերևս ալիքներն ու հողմերը դառը հիշողություններ էին բերում, կամ, որ ավելի վատ է, նրա մեջ ցավ էին արթնացնում անվերադարձ կորստի համար։ Գուցե և նրան ջղայնացնում էր այն, որ այստեղ չէր կարելի այնպես ազատ ու անկախ ճանապարհորդել, ինչպես օվկիանոսներում, և «Նաուտիլուսն» ուղղակի ճնշվում էր Եվրոպայի ու Աֆրիկայի՝ իրարից ոչ հեռու ափերի միջև։

Այսպես, թե այնպես, մենք ընթանում էինք մեկ ժամում տասներկու լյո արագությամբ։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ Նեդ Լենդն ստիպված էր բոլորովին հրաժարվել փախչելու մտքից, որքան էլ դա ցավալի էր նրա համար։ Մեկ վայրկյանում տասներկու-տասներեք մետր անցնելիս նա չէր կարող օգտագործել նավակը։ Այդ միևնույն էր, եթե թռչեիր նույն արագությամբ ընթացող գնացքի վագոնից, մի թռիչք,

որ այնքան էլ հաճելի հեռանք չի ունենա։ Բացի դրանից «Նաուտիլուսն» օդի պաշարը լրացնելու համար այժմ միայն ուշ գիշերով էր բարձրանում ծովի մակերևույթը, իսկ մնացած ամբողջ ժամանակ ընթանում էր՝ ղեկավարվելով միայն կողմնացույցի ու արագաչափի տվյալներով։

Այս պատճառով Միջերկրական ծովում ես տեսա այն, ինչ որ ճեպընթաց գնացքի ճանապարհորդը տեսնում է իր խցիկի լուսամուտից, հեռավոր հորիզոններ և ոչ թե ճանապարհին ամենամոտ տեղեր, որոնք կայծակի արագությամբ թռչում են նրա առջևից։

Այնուամենայնիվ Կոնսելին և ինձ հաջողվեց տեսնել Միջերկրական ծովի մի քանի ձկներ, որոնք լողաթևերի զորեղության շնորհիվ կարող էին իրենց արագությամբ որոշ ժամանակ մրցել «Նաուտիլուսի» հետ։ Մենք ամբողջ ժամերով կանգնում էինք սրահի լուսամուտների առաջ, և այդ ժամանակ արված թռուցիկ դիտողություններն ինձ հնարավորություն են տալիս ընդհանուր գծերով տալ այդ ծովի ձկնաբանական պատկերը։

Միջերկրական ծովում բնակվող բազմաթիվ ձկներից ոմանց ես համեմատաբար երկար դիտեցի, ոմանց տեսա հարևանցիորեն, ոմանց էլ մեր ընթացքի արագության պատճառով բոլորովին չտեսա։

Թող թույլ տրվի ինձ նկարագրել նրանց այդ ֆանտաստիկ դասակարգման համապատասխան, որով ավելի ճիշտ կտրվեն իմ թռուցիկ տպավորությունները։

Էլեկտրականությամբ պայծառ լուսավորված ջրերում գալարվում էին բարակ, մեկ մետր երկարությամբ օձաձկները, որոնք լինում են համարյա բոլոր ծովերում։ Փշոտ կատվաձկները, որ ունենում են մինչև չորս մետր երկարություն և երկու-երեք մետր լայնություն, անհարթ մաշկ, սպիտակ փոր, սպիտակավուն բծերով ծածկված մեջք, չփչփում էին ջրի մեջ, կարծես լինեին ծովի հոսանքով տարված մեծ թաշկինակներ։ Մատղաշ կատվաձկների մաշկը ծածկված էր բարակ, իսկ մեծերի մաշկը՝ խոշոր և սուր փշերով։ Կատվաձկների մյուս տեսակները երևում էին մեզ և չքանում այնպիսի արագությամբ, որ ես չկարողացա ստուգել, արդյոք նրանք արժանի՞

են հին հույների տված «ծովային արծիվների» մականունին, թե՞ նրանց ավելի հարմար են «առնետ», «դոդոշ» և «շղջիկ» արհամարհական մականունները, որ նրանց տալիս են ժամանակակից ծովագնացները։ Տառեխանման շնաձկները, որ պատկանում են դելֆինանման շնաձկների ընտանիքին, որոնք առանձնապես վտանգավոր են ձկնորսների համար, իրենց արագաշարժությամբ մրցում էին մեր նավի հետ։ Մենք տեսանք նաև ծովային աղվես կոչված ձկներին, որոնք պատկանում են շնաձկների ջոկատին, ունեն չորս և ավելի մեծ երկարություն և ամենախորամանկ ծովային կենդանիներն են։ Նրանց մեջքերն ու կողերը մուգ-կապույտ են, մարմնի ստորին մասը սպիտակ-բծավոր։

Այնուհետև մեզ հանդիպում էին զուգավոր ձկների ընտանիքին պատկանող ոսկեծածանները։ Սրանցից մի քանիսը հարյուր երեսուն սանտիմետր երկարություն ունեին։ Ոսկեծածանները փայլում էին իրենց արծաթավուն-կապույտ գույնով, դեղնավուն լողաթևերով։ Այս արժեքավոր ձկները, որ ապրում են թե՛ գետերում ու լճերում և թե՛ ծովերում ու օվկիանոսներում, ընտելացած են բոլոր կլիմաներին, տանում են ամեն տեսակ բարեխառնություն։ Նրանք առաջացել են երկրիս առաջին կենդանի արարածներից, երկրաբանական մեծ պրոցեսների ժամանակակիցներից և պահպանել են իրենց ամբողջ նախնադարյան գեղեցկությունը։

Ինը-տասը մետր երկարություն ունեցող հրաշալի թառափները նայում էին սրահի լուսամուտին, և չկարողանալով արագաշարժությամբ մրցել մեզ հետ, ետ էին մնում, ցույց տալով փոքրիկ, կինամոնագույն բծերով ծածկված կապտավուն մեջքերը։ Թառափները նման են շնաձկներին, բայց նրանց չափ ուժեղ չեն։ Իրենց կյանքի մեծ մասը նրանք անց են կացնում ծովում, իսկ գարնանն անցնում են գետերը, պայքարելով Վոլգայի, Դանուբի, Պոյի, Հռենոսի, Լուարայի և Օդերի հոսանքի դեմ։ Նրանք սնվում են թյունիկներով, տառեխներով և ուրիշ փոքրիկ ձկներով։

Հին ժամանակներում թառափը հանդիսավոր կերպով մատուցում էին Լուկուլլոսի սեղանին։

Սակայն Միջերկրական ծովի բոլոր կենդանիներից ամենից լավ ես ծանոթացա թյուննոսների հետ, որոնց մեջքը սև-կապտավուն է, կրծքի վահանը՝ կապույտ, իսկ կողերն ու որովայնը՝ գորշ և արծաթավուն-սպիտակ բծերով։ Այդ ձկների մասին պատմում են, որ նրանք լողում են նավերի կողքից և նրանց ստվերում պաշտպանվում են արևադարձային արևի այրող ճառագայթներից։ Արդարև, նրանք ուղեկցում էին «Նաուտիլուսը», ինչպես մի ժամանակ ուղեկցել էին Լապլանդի նավերը։ Երկար ժամանակ նրանք մի սանտիմետր անգամ ետ չէին մնում «Նաուտիլուսից»։

Ես զմայլվում էի այդ ձկներով, որոնց բնությունը կարծես ստեղծել էր արագության մրցություններին մասնակցելու համար։ Նրանց գլուխները փոքր էին ու նեղ, մարմինը իլիկաձև, երեք և նույնիսկ չորս մետր երկարությամբ, կրծքի ուժեղ լողաթևերով, պոչերի լողաթևերը երկու մասի բաժանված։ Նրանք լողում էին կանոնավոր եռանկյունիներ կազմած, ինչպես մի քանի չվող թռչունների երամները։ Այդ ձևով լողալու պատճառով հնադարյան մարդիկ կարծում էին, որ իբր թե թյուննոսները գիտեն երկրաչափությունը և ռազմագիտության տարրերը։

Սակայն «ուսումնական» լինելը թյուննոսներին չի փրկում Պրոլանսի ձկնորսներից, որոնք նրանց նույնքան բարձր են գնահատում, որքան և հին Պրոպոնդիտի և Իսպանիայի բնակիչները, և այդ հրաշալի ձկները հարյուր հազարներով ամեն օր որսվում են մարսելյան ուռկաններով։

Ի միջի այլոց հիշեմ Միջերկրական ծովի այն ձկները, որոնց ոչ ինձ, ոչ էլ Կոնսելին չհաջողվեց տեսնել։ Դրանք են՝ էլեկտրական և իսկական օձաձկները, որ ուրվականների նման անցնում էին մեր կողքից. ձողաձկները, որոնց լյարդն արժեքավոր դեղանյութ է տալիս. ծիծեռնակաձկները, որոնց բանաստեղծներն անվանում են քնար-ձկներ, իսկ ծովագնացները՝ սուզող ձկներ և որոնց մուրթների վրա կան եռանկյունաձև, հնադարյան երգիչ Հոմերոսի գործիքը հիշեցնող շերտեր. այլ տեսակի ծիծեռնակաձկներ, որոնք լողում են այդ թռչունների արագությամբ. քիմեռներ, հարթ մաշկով, որը երանգավորված է ոսկեգույն-դեղին, կինամոնագույն և սպի-

տակ գույներով։ Հրաշալի տափակաձկները, այդ ծովային փասիանները, որոնց դեղին լողաթևերը ծածկված են սև կետերով. լողաթևերի վերին ձախ կողմը ծածկված է դարչնագույն-դեղին և մարմարագույն բծերով. վերջապես, ոսկեհուր արքայաձկները, իսկական ծովային դրախտահավերը, որոնց համար հռոմեացիք տասը հազարական սեստերց էին վճարում, որպեսզի սեղանի շուրջը դիտեին նրանց մարմնի գույնի փոփոխությունները, կարմիր-սուտակի՝ կյանքի գույնից մինչև գունատ-սպիտակը՝ մահվան գույնը։

Եթե ինձ չհաջողվեց տեսնել թիկնեղջյուրները, ծովաձիները, լուսնյակ-ձուկը, տառեխները, արջառները, ծովային աքերինները, ծածանազգինները, սուսերակիրները, ֆերինը, ասեղնաձուկը, անցրուկը և հարյուրավոր տեսակ այլ ձկներ, որոնք լինում են Միջերկրական ծովում, ապա դրա համար պետք է մեղադրել ոչ թե ինձ, այլ «Նաուտիլուսին», որ սլանում էր գլխապտույտ արագությամբ։

Ինչ վերաբերում է ծովային կաթնասուններին, ինձ թվաց, որ Ադրիատիկ ծովի մոտից անցնելիս տեսա երկու վիշապաձուկ, ապա մի քանի դելֆին և, վերջապես, վեց հատ փոկ, որոնք կոչվում են վարդապետներ և իսկապես նման են դոմինիկյան վարդապետներին, միայն թե երեք մետր հասակ ունեն։

Իր հերթին Կոնսելին հաջողվեց տեսնել մի հսկայական կրիա՝ վեց ոտնաչափ լայնությամբ։ Կրիայի վահանի վրա նա նկատեց յոթ երկարաձև ուռուցքներ կամ կողեր։ Ես շատ ցավեցի, որ չտեսա այդ կրիան, որովհետև դա ըստ երևույթին հատ մաշկ ունեցող կրիա էր, իսկ կրիաների այդ տեսակը հիմա չքանում է։

Մի քանի վայրկյանի ընթացքում զոոֆիտներից ես տեսա գալեոլյարների հիանալի մի տեսակը, որ կոչել էր արտհի լուսամուտի ապակուն։ Դա ճյուղավորված, թափանցիկ մանրաթելի հյուսվածք էր, որի չափազանց բարակ ճյուղերը միահյուսվում ու կազմում էին զմայլելի մի պատկեր, որի հետ նրբության տեսակետից չէր կարող մրցել Ֆլանդրիայի և ոչ մի ժանյակագործուհի։ Դժբախտաբար ես չէի կարող որսալ այդ ապշեցուցիչ կենդանին։

Հնարավոր է, որ ես Միջերկրական ծովում այլևս ոչ մի զոոֆիտ չտեսնեի, եթե այդ օրվա երեկոյան, փետրվարի 16-ին, «Նաուտիլուսը» հանկարծ չդանդաղեցներ իր ընթացքը։ Ահա թե այդ ինչպիսի հանգամանքներում կատարվեց։

Մենք անցնում էինք Սիցիլիայի և Թունիսի միջով։ Այս նեղ տեղում ծովի հատակը միանգամից բարձրանում է։ Այստեղից անցնում են ստորջրյա լեռնաշղթայի գագաթները, որոնց վրա ջրի խորությունն ընդամենը տասնյոթ մետրի է հասնում, մինչդեռ այդտեղի երկու կողմերում ծովի խորությունը մոտավորապես յոթանասուն մետր է։ «Նաուտիլուսն» ստիպված էր զգուշությամբ շարժվել, որպեսզի չնստի այդ ստորջրյա խոչընդոտին։

Ես Կոնսելին քարտեզի վրա ցույց տվեցի ստորջրյա ժայռերի այդ շղթան։

— Պարոնի թույլտվությամբ կասեմ, որ այդ շղթան ինձ թվում է այն պարանոցը, որ Եվրոպան միացնում է Աֆրիկային,— ասաց նա։

— Դու իրավացի ես, բարեկամս,— պատասխանեցի ես,— այն միջնորմել է Սիցիլիայի ամբողջ նեղուցը։ Սմիթի հետազոտությունները ցույց են տվել, որ մի ժամանակ Ադդար հրվանդանի և Մարսալայի միջև այդ մայր ցամաքները միացած են եղել կայուն հողի մի բարակ շերտով։

— Եթե մի գեղեցիկ օր,— սկսեց Կոնսելը,— հրաբխային ցնցումը ջրից կրկին բարձրացնի այդ պարանոցները...

— Դա այնքան էլ հավանական չի, Կոնսել,— ընդհատեցի ես նրան։

— Պարոնի թույլտվությամբ ես կլրացնեմ միտքս. եթե այնուամենայնիվ դա պատահի, ապա ես կցավեմ խեղճ Լեսեպսի համար, որ այնքան աշխատանք է թափել Սուեզի ջրանցքը փորելու վրա։

— Իհարկե, Կոնսել, սակայն դու կարող ես չհուզվել, դա տեղի չի ունենա։ Ստորերկրյա կրակի ուժը հետզհետե պակասում է։ Հրաբուխները, որ այնքան բազմաթիվ են եղել երկրիս գոյության սկզբնական ժամանակներում, մեկը մյուսի հետևից հանգչում են։ Ստորերկրյա ջերմությունը թուլանում է։ Երկրի ստորին շերտերի ջերմությունը դարերի ընթացքում

իջնում է և այդ դժվարություն է մեր մոլորակի համար, քանի որ այդ ջերմությունը կյանքի աղբյուր է...

— Սակայն արևը...

— Միայն արևը բավական չէ, Կոնսել։ Արդյոք նա կարո՞ղ է ջերմությունը վերադարձնել դիակին։

— Որքան ինձ հայտնի է, ո՛չ։

— Եվ ահա, բարեկամս, մի շաբաթաթիկ օր երկիրը կդառնա սառած մի դիակ։ Նա կլինի անբնակ, նույնպես անբնակ, ինչպես և լուսինը, որ վաղուց կորցրել է իր կենսական ջերմությունը։

— Քանի՞ դար հետո այդ կլինի,— հարցրեց Կոնսելը։

— Մի քանի հարյուր հազար տարուց հետո,— պատասխանեցի ես։

— Այդ դեպքում մենք կկարողանանք ավարտել մեր ստորջրյա ճանապարհորդությունը, եթե միայն Նեդ Լենդի խելքին չփչի ժամկետից առաջ ընդհատել այդ ճանապարհորդությունը։

Եվ հանգստանալով երկրի ապագայի նկատմամբ, Կոնսելը կրկին սկսեց դիտել ստորջրյա կյանքը, օգտվելով այն հանգամանքից, որ «Նաուտիլուսն» այժմ չափավոր արագությամբ էր ընթանում...

Այնտեղ, հրաբխային ծագում ունեցող ժայռերի վրա փարթամ աճել էին կենդանի բույսերի պարտեզները՝ Բուգենվիլի մեղուպանները, կունիները, սպունգազգիները, գոլոտուրները, ծովային վարունգները, որոնք փայլում էին ծիածանի բոլոր գույներով, արտացոլում արևի ճառագայթները։ Ապա այնտեղ աճել էին մեկ մետր լայնությամբ շրջիկ կոմատուլներ, որոնց ծիրանի գույնը կարմիր ցոլք էր տալիս իրենց շրջապատող ջրին, երկարացողուն ջրակտինիաները, ուտելի միդիաների բազմաթիվ տեսակներ, կանաչ ակտինիաները՝ գորշ ցողուններով և սկավառակով, որ ձիթենագույն շոշափուկների խիտ փնջերով էր ծածկված։

Կոնսելն զբաղվեց կակղամորթները դիտելով և հաշվեց սպոնդիլների բազմաթիվ նեկայացուցիչները, որոնք կուտակված էին մեկ-մեկու վրա։ Դրանցից աչքի էին ընկնում մի քանիսն իրենց դեղին լողաթևերով և թափանցիկ խեցիներով,

որոնք համապատասխանում են «ծովային թիթեռներ» իրենց մականունին, խխունջներն իրենց կանաչ պիսակներով՝ խեցիներով, ապլիզիումները, որոնք Հայտնի են ծովային նապաստակներ անունով, մսոտ, ուռելի սրտախեցիները, ծովային կանթերը, որոնց խեցիները ծածկված էին թանկարժեք գաղտակուրով, միդիաները, որոնք Լանգեդոկում ավելի համեղ ուտելիք են համարվում, քան ոստրեները, սանրաձև կախանները, ծովային փյունիկները, զոլիդները, փայտուտիճները, կոճերը, ցիներարները և այլն։

Անցնելով Սիցիլիայի նեղուցի սորջրյա լեռնաշղթան և նորից մտնելով ծովի խորը տեղերը, «Նաուտիլուսը» սլացավ նախորդ արագությամբ։ Կակղամորթները, գոֆիտներն ու հոդվածոտունքները դարձյալ երևում էին միաձուլված ու անորոշ և նրանց մեջ մի ակնթարթ մենք տեսնում էինք առանձին, խոշոր ձկների ուրվագծերը։

Փետրվարի 16-ից 17-ի գիշերը մենք հասանք Միջերկրական ծովի երկրորդ ավազանը, որի ամենամեծ խորությունը երեք հազար մետրից ավելի չէ։ Այստեղ «Նաուտիլուսը», թեքելով խորության ղեկերը, ամբողջ արագությամբ լողալ մինչև հատակը։

Այստեղ բնության հրաշալիքների փոխարեն մեզ սպասում էին սրտաշարժ ու զարհուրելի տեսարաններ։ Արդարև, մենք այժմ գտնվում էինք Միջերկրական ծովի այն մասում, ուր այնքան վթարներ և նավերի խորտակումներ էին եղել։

Քանի՞-քանի՞ նավ է խորտակվել և անհայտ կորել Ալժիրի և Պրովանսի ափերի միջև։ Խաղաղ օվկիանոսի անծայրածիր տարածությունների համեմատությամբ Միջերկրական ծովը մի լիճ է, սակայն այդ լիճը քմահաճ է և կամայական, նրա ջրերը խաբող են ու անհաստատ. այսօր նրանք օրորում ու փայփայում են փոքրիկ մի նավ, որ լողում է կուրացուցիչ-կապույտ ջրերում, կուրացուցիչ-կապույտ երկնքի տակ, իսկ վաղը ծառս լինելով, մռայլ ու կատաղի, նա իր ալիքների հատու և արագ հարվածներով ջարդ ու փշուր է անում ամենամեծ նավը։

Ծովի խորքերում արագ լողալիս քանի՞-քանի՞ խորտակված նավեր երևացին իմ աչքերին։ Դրանցից մի քանիսը, որ

արդեն երկար ժամանակ հանգչում էին հատակում, ծածկվել էին կորալլային շերտերով, մի քանիսն էլ, որ ոչ վաղուց խորտակված նավերի մնացորդներ էին, միայն ժանգոտել էին։

Մեր ամբողջ ճանապարհին հատակի վրա թափված էին խարիսխներ, թնդանոթներ, թիակավոր գլաններ, մեքենաների մասեր, ջարդված գլաններ, պայթած կաթսաներ։ Ջրի մեջ տեղ-տեղ, հատակին չհասած, կախվել էին ամբողջ նավեր, մի քանիսը հետին մասով դեպի ներքև, մի քանիսն էլ շուռ եկած։

Այդ նավերի մի մասը խորտակվել էր ընդհարման պատճառով, մյուս մասը՝ խփվել էր ստորջրյա ժայռերին։ Ես տեսնում էի նաև այնպիսի նավեր, որոնք ջրասույզ էին եղել ուղղահայաց դիրքով, պահպանել էին նավասարքը...։ Դրանք կարծես բաց խաբսխակայանում խարիսխ էին ձգել, սպասելով մեկնելու հրամանին։

Երբ «Նաուտիլուսն» անցնում էր դրանց մոտից և իր լուսարձակով լուսավորում շուրջը, թվում էր, թե նավախելի դրոշակաձողի վրա ահա պետք է ծածանվի դրոշակը, ողջունելով հանդիպակաց նավը և բարի ճանապարհ մաղթելով նրան...

Սակայն դրոշակ չէր ծածանվում։ Մահը և քար լռությունը թագավորում էին ծովային այդ գերեզմանոցում...

Ես նկատեցի, որ ինչքան մենք մոտենում էինք Ջիբրալտարի նեղուցին, այնքան շատ էին նավաբեկումների այդ տխուր մնացորդները։ Որքան մոտ են լինում Եվրոպայի և Աֆրիկայի ափերը, այնքան հաճախ են ընդհարվում նավերը։ Այստեղ ես տեսա բազմաթիվ երկաթե նավիրաններ, շոգենավերի այլանդակված մնացորդներ, որոնք կանգնած էին ուղիղ կամ կողքի վրա էին ընկել, և նման էին ֆանտաստիկ կենդանիների։ Առանձնապես ծանր տպավորություն թողեց մի անիվավոր շոգենավ. նա կարծես ճեղքվել էր, ծխնելույզները ծռվել էին, անիվներից մնացել էր միայն երկաթե փչացած մասը, ղեկը պոկվել էր նավախելից և կախվել երկաթե շղթայից, ամբողջովին ծածկվել էր ժանգով... Քանի՞ մարդ էր մեռել, քանի՞ան էին կենդանի մնացել, որպեսզի պատ-

մեին այդ սարսափելի վթարի մասին։ Կամ գուցե ալիքները խանդոտությամբ պահում էին իրենց գաղտնիքը... Ես հղացա այն միտքը, թե այդ շոգենավը հենց այն «Ատլանն» է, որի խորհրդավոր անհայտացումը քսան տարի առաջ երկար ժամանակ հուզում էր աշխարհը։ Ինչպիսի՞ սարսափելի գիրք կարելի էր գրել Միջերկրական ծովի հատակի գաղտնիքների մասին, այդ վիթխարի գերեզմանոցի մասին, ուր այնքան հարստություն է թաղված, ուր այնքա՞ն մարդիկ գտել են իրենց վերջին հանգիստը։

Մինչ այս մինչ այն, ամեն ինչին անտարբեր «Նաուտիլուսը» շարունակում էր իր ստորջրյա արագ վազքը։ Փետրվարի 18-ին, գիշերվա ժամը մոտ երեքին նա արդեն հասել էր Ջիբրալտարի նեղուցին։

Այնտեղ գոյություն ունի երկու հոսանք, վաղուց հայտնի վերին հոսանքը, որ Ատլանտյան օվկիանոսի ջրերը տանում է դեպի Միջերկրական ծովը, և հանդիպակաց, ստորին հոսանք, որի գոյությունն ապացուցվել էր տրամաբանական ճանապարհով։ Հիրավի, Միջերկրական ծովի ջրի մակերևույթը պետք է որ տարեցտարի բարձրանար, եթե նկատի ունենանք մշտական հոսանքն Ատլանտյան օվկիանոսից և այդ ծովի մեջ թափվող գետերի ջուրը, մանավանդ որ պարզված է, թե միմիայն գոլորշիացումը բավական չէ ծովի հավասարակշռությունը պահպանելու համար։ Մինչդեռ Միջերկրական ծովի մակարդակը չի բարձրանում, հետևապես պետք է լինի մի երկրորդ հոսանք, որն անցնում է Ջիբրալտարի նեղուցի հատակի վրայով և Միջերկրական ծովի ավելորդ ջուրը տանում է Ատլանտյան օվկիանոսը։

Իրականում այդպես էլ եղավ։ «Նաուտիլուսն» օգտվեց այդ նպաստավոր հոսանքով և արագ սլացավ փոքրիկ նեղուցից։ Մի վայրկյան ես տեսա Հերկուլեսի նշանավոր տաճարի ավերակները, իսկ այդ տաճարը, Պլինիոսի ասելով, ծովի հատակն էր իջել այն կղզու հետ միասին, որի վրա կառուցված էր։ Մի քանի րոպեից հետո մենք բարձրացանք ջրի երեսը՝ արդեն Ատլանտյան օվկիանոսում։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՎԻԳՈ ԾՈՎԱԽՈՐՇԸ

Ատլանտյան օվկիանո՛ս, ջրային վիթխարի հարթավա՛յր, որի տարածությունը կազմում է քսանհինգ միլիոն քառակուսի մղոն, մի հարթավայր, որի երկարությունը գրեթե ինը հարյուր մղոն է, միջին լայնությունը՝ երկու հազար յոթ հարյուր մղոն։ Հին դարերում այս հսկայական ծովը համարյա անհայտ է եղել։ Գուցե միայն կարթագենացիք, հին դարերի այդ հոլանդացիները, իրենց առևտրական նավագնացության ժամանակ անցել են Եվրոպայի և Աֆրիկայի արևմտյան ափերով։ Այդ օվկիանոսի ոլորապտույտ ափերը ձգվել են վիթխարի տարածությամբ և կտրված են աշխարհիս ամենամեծ գետերի՝ Ս. Լավրենտիոսի, Միսիսիպիի, Ամազոնի, Լա-Պլատայի, Օրինոկոյի, Նիգերի, Էլբայի, Լուարայի, Հռենոսի գետաբերաններով՝ գետեր, որոնք թափվում են այդ օվկիանոսը և ոռոգում աշխարհիս ամենակուլտուրական և ամենավայրենի երկրները։ Ջրի վեհապանծ հարթությունը, որ բոլոր ուղղություններով ճեղքում են բոլոր երկրների ու ժողովուրդների նավերը, վերջանում է ծովագնացներին երկյուղ ներշնչող երկու հրվանդաններով, Հորն և Բարեհուսո հրվանդաններով...

«Նաուտիլուսն» իր սուր ցռուկով ճեղքում էր Ատլանտյան օվկիանոսի ջրերը։ Մինչ այդ նա երեք և կես ամսվա ընթացքում անցել էր ավելի քան տասը հազար լյո, որ գրեթե հավասար է երկրի հասարակածի երկարության։ Հիմա նա ո՞ւր էր գնում, մեզ ի՞նչ անակնկալներ են սպասում ապագայում։

Դուրս գալով Ջիբրալտարյան նեղուցից, «Նաուտիլուսն» ուղևորվեց դեպի բաց օվկիանոսը։ Նավը կրկին դուրս եկավ ջրի երեսը, և մենք դարձյալ հնարավորություն ունեցանք ամեն օր զբոսնել թարմ օդում։

Հենց որ մենք առաջին անգամ դուրս եկանք ջրից, ես շտապեցի Նեդ Լենդի և Կոնսելի ուղեկցությամբ բարձրանալ տախտակամածը։

Մեզանից քսան մղոն հեռու, հորիզոնում հազիվ երևում

էր ս. Վինցենտի հրվանդանը, որ գտնվում է Իսպանական թերակղզու հարավ-արևմուտքում։ Փչում էր բավական ուժեղ հարավային քամի, ալեկոծելով անհամբույր ծովը։

«Նաուտիլուսը» սաստիկ օրորվում էր։ Անկարելի էր երկար մնալ տախտակամածում, որի վրա ամեն րոպե թափվում էին աղի ջրի հեղեղները։ Մի քիչ մաքուր օդ ծծելով, մենք շտապեցինք իջնել նավի ներսը։

Ես վերադարձա իմ սենյակը։ Կոնսելն էլ գնաց իր տեղը, իսկ կանադացին, որ մտահոգված էր ինչ-որ պատճառով, հետևեց ինձ։ Միջերկրական ծովով անսպասելի արագությամբ անցնելը նրան թույլ չտվեց իրագործելու իր պլանը, և նա նույնիսկ չէր փորձում թաքցնել իր դժգոհությունը։

Երբ ես ծածկեցի նավասենյակի դուռը, նա նստեց աթոռի վրա և լուռ նայեց ինձ։

— Ես ձեզ հասկանում եմ, սիրելի Նեդ,— ասացի ես,— սակայն հանգստացեք, դուք կարիք չունեք ձեզ կշտամբելու։ Մեր վերջին ճանապարհորդության պայմաններում խենթություն կլիներ մտածել փախչելու մասին։

Նեդ Լենդը չէր պատասխանում։ Նրա խոժոռված դեմքը և պինդ սեղմված շրթունքները ցույց էին տալիս, որ նա ամբողջովին գտնվում է միևնույն դաղափարի ազդեցության տակ։

— Լսեցե՛ք,— շարունակեցի ես,— եղեք խոհեմ։ Ոչինչ չի կորած։ Մենք հիմա Փորթուգալիայի ափերի երկարությամբ դեպի հյուսիս ենք ընթանում։ Մենք կանցնենք Ֆրանսիայի և Անգլիայի մոտով, ուր նույնպես հեշտ է ապաստան գտնել։ Եթե «Նաուտիլուսը», դուրս գալով Ջիբրալտարի նեղուցից, ուղևորվեր դեպի հարավ, այն մարդերը, ուր գրեթե ցամաք չկա, ես էլ ձեզ նման անհանգիստ կլինեի։ Սակայն այժմ մենք գիտենք, որ նավապետ Նեմոն չի խուսափում բանուկ ծովերից, իսկ այս պայմաններում ես չեմ կասկածում, որ մի քանի օրից հետո դուք կարող եք բոլորովին անվտանգ փախուստ նախապատրաստել։

Նեդ Լենդն ինձ նայեց է՛լ ավելի սևեռուն հայացքով և, վերջապես, բանալով շրթունքները, ասաց.

— Մենք կփախչենք այսօր երեկոյա՛ն։

Ես խայթվածի պես վեր թռա տեղիցս։ Խոստովանում եմ, որ բոլորովին անպատրաստ էի այդ լուրը լսելուն։ Ես ուզում էի առարկել կանադացուն, բայց հարկավոր խոսքեր չէի գտնում։

— Մենք պայմանավորվել էինք հարմար առիթի սպասել,— շարունակեց Նեդ Լենդը,— այդ առիթը եկել է։ Այսօր երեկոյան մենք կլինենք իսպանական ափերից ընդամենը մի քանի մղոնի վրա։ Հիմա գիշերները խավար են, լուսին չի մնում։ Սաստիկ քամի է փչում։ Դուք ինձ խոսք եք տվել, պրոֆեսոր, ես էլ հույս ձեզ վրա եմ դրել։

Որովհետև ես շարունակում էի լռել, կանադացին վեր կացավ և ավելի մոտեցավ ինձ։

— Այսօր ժամը իններին,— ասաց նա,— ես նախազգուշացրել եմ Կոնսելին։ Այդ ժամին նավապետ Նեմոն հավանորեն կփակվի իր սենյակում, դուցե և կպառկի քնելու։ Մեզ չեն կարող տեսնել ոչ մեխանիկը, ոչ էլ նավաստիները։ Ես ու Կոնսելը կթաքնվենք դեպի տախտակամածը տանող սանդուղքի տակ։ Դուք, պարոն պրոֆեսոր, զրադարանում կսպասեք իմ ազդանշանին։ Թիակները, կայմերը, առագաստը գտնվում են մակույկում։ Ինձ հաջողվեց նույնիսկ մի քիչ պարեն տանել այնտեղ։ Ես գտել եմ անգլիական մի բանալի, որպեսզի բանամ այն պտուտակները, որ մակույկը պահում են «Նաուտիլուսի» տախտակամածի վրա։ Այսպիսով ամեն ինչ նախապատրաստված է։ Ցտեսություն մինչև երեկո։

— Ծովը խիստ փոթորկալից է,— ասացի ես։

— Համաձայն եմ ձեզ հետ,— պատասխանեց կանադացին,— սակայն մնում է դրա վրա ուշադրություն չդարձնել։ Մի փոքր վտանգի կենթարկվենք ու կազատվենք։ Սակայն «Նաուտիլուսի» մակույկն ամուր է, իսկ քամին բարեհաջող, այնպես որ, նույնիսկ այսպիսի եղանակին մի քանի մղոն անցնելը դատարկ բան է։ Ո՞վ գիտե, դուցե վաղը մենք կլինենք ծովափից հարյուրավոր մղոն հեռու։ Եթե հանգամանքները մեզ համար նպաստավոր լինեն, ապա երեկոյան ժամը տասից մինչև տասնմեկը մենք արդեն դուրս կգանք ցամաք, իսպանական ափի մի որևէ կետը։ Իսկ եթե ոչ, մենք

այդ ժամանակ մեռած կլինենք։ Այդպես ուրեմն, մինչև երեկո՛։

Այս խոսքերից հետո կանադացին դուրս եկավ նավասենյակից, թողնելով ինձ կատարյալ շփոթության մեջ։ Չգիտեմ ինչու ես կարծում էի, որ երբ հասնի փախուստի ժամը, կարելի կլինի ամեն ինչ մանրամասն քննարկել և մի փոքր վիճել Նեդ Լենդի հետ։ Սակայն կամակոր կանադացին ինձ թույլ չավեց նույնիսկ մի խոսք ասելու։ Ասենք, ես նրան ի՞նչ կարող էի առարկել։ Նեդ Լենդը միանգամայն իրավացի էր։ Եկել էր շատ թե քիչ հարմար առիթը, և նա որոշել էր օգտվել այդ առիթից։

Արդյոք ես իրավունք ունե՞ի ետ վերցնել խոսքս և անձնական շահերիս համար իմ ընկերների բախտը վտանգի մատնել։ Մի՞թե նավապետ Նեմոն չի կարող վաղը մեզ տանել ջրային անապատները, որոնք հեռու են բոլոր ցամաքներից։

Այդ ժամանակ ուժեղ սուլոց լսվեց։ Ես հասկացա, որ «Նաուտիլուսն» իր պահամանները լցնում է ջրով, որպեսզի իջնի օվկիանոսի խորքը։

Ես մնացի իմ նավասենյակում, որպեսզի չհանդիպեմ նավապետ Նեմոյին, որը կարող էր դեմքիս վրա կարդալ իմ հուզումը։ Ինչպիսի՜ տաղտկալի օր անցկացրի ես, գտնվելով անորոշ վիճակում, մի կողմից ուզում էի վերադարձնել ազատությունս, մյուս կողմից ցավում էի, որ պետք է բաժանվեմ հրաշալի նավից, առանց ավարտելու իմ ստորջրյա հետազոտությունները։

Այդպես հանկարծակի հեռանալ այդ օվկիանոսից, «իմ Ատլանտիկայից», ինչպես ասում էի ինքս ինձ, առանց այնպիսի գաղտնիքներ իմանալու, ինչպիսին իմ առաջ բացին խաղաղ և Հնդկական օվկիանոսները։ Կարդալ աշխարհումս ամենահրապուրիչ այդ գրքի միայն երկու հատորը և կամավոր կերպով հրաժարվել մնացած հատորների ընթերցումի՛ց։ Ինչպիսի՜ տխուր ժամեր անցկացրի ես իմ նավասենյակում, մերթ ինձ պատկերացնելով ազատ, ինչպես օդը, ցամաքում, ընկերներով շրջապատված, մերթ երազելով, որ մի որևէ չնախատեսված հանգամանք կխանգարի Նեդ Լենդի պլանների կատարմանը։

Երկու անգամ ես մտա սրահ։ Ես ուզում էի նայել կողմնացույցին և պարզել, թե ուր է գնում «Նաուտիլուսը»՝ դեպի ցամաք, թե՞ ընդհակառակը։

Հը՛մ, «Նաուտիլուսը» շարունակ ընթանում էր Փորթուգալիայից ոչ հեռու։ Նա ուղղություն էր բռնել ճիշտ դեպի հյուսիս, այդ երկրի ծովափի երկարությամբ։

Ի՞նչ արած, մնում էր պատրաստվել փախչելու։

Իմ բեռը շատ թեթև էր, մի հիշատակարան և ուրիշ ոչինչ։ Ինքս ինձ հարց էի տալիս, թե նավապետ Նեմոն ինչպե՞ս կվերաբերվի դեպի մեր փախուստը, ինչպիսի՞ տագնապ կլինի, ի՞նչ վնաս կհասնի նրան, և նա ինչպե՞ս կվարվի փախուստը հաջող կամ անհաջող լինելու դեպքում։

Ոչ մի կասկած չի կարող լինել այն մասին, որ ես հիմք չունեի նրանից գանգատվելու։ Ընդհակառա՛կը։ Դժվար է պատկերացնել մի այլ, ավելի լիակատար և ավելի սրտաբաց հյուրընկալություն։ Սակայն մյուս կողմից նա էլ հիմք չուներ իմ կողմից ապերախտություն համարելու այդ փախուստը։ Ես նրան ոչ մի խոստում չէի տվել այն մասին, թե փախչելու փորձ չեմ անի։ Մենք ազնիվ խոսքով ազատ թողնված գերիներ չէինք, եթե մեզ փակված չէին պահում, ապա դա բացատրվում էր միայն այն վստահությամբ, որ «Նաուտիլուսից» փախչել հնարավոր չէ։ Բացի դրանից, նավապետի արած այն հայտարարությունները, թե մենք մեր ամբողջ կյանքում չենք կարող հեռանալ նրա նավից, արդարացնում էին մեր ամեն մի փորձը։

Սանտորին կղզու ափերի մոտ մեր ունեցած խոսակցությունից հետո ես չէի հանդիպել նավապետին։ Մի՞թե մենք առիթ կունենանք հանդիպելու իմ փախուստի նախօրեին։ Այդ ինձ համար միաժամանակ թե ցանկալի էր և թե երկյուղալի։

Ես ականջ դրի, թե արդյոք նա չի՞ քայլում իր սենյակում, որ կից էր իմ սենյակին։ Սակայն ես ոչ մի ձայն ու շշուկ չլսեցի։ Սենյակում հավանորեն ոչ ոք չկար։

Ես սկսեցի ինքս ինձ հարց տալ, թե արդյոք այդ հանելուկային մարդն իսկապես գտնվո՞ւմ է «Նաուտիլուսում»։ Այն անմոռանալի գիշերվանից սկսած, երբ մակույկը հեռացավ «Նաուտիլուսից», կատարելով ինչ-որ խորհրդավոր հանձնա-

բարությունները, ես նավապետ Նեմոյի մասին մի քիչ փոխե-
ցի հայացքս։ Ես եկա այն եզրակացության, որ, չնայելով նրա
բոլոր հավատալիությունների, այնուամենայնիվ նա ինչ-որ
կապեր էր պահում ցամաքի հետ։ Արդյո՞ք նա իրոք երբեք չէր
հեռացել «Նաուտիլուսից»։ Չէ՞ որ պատահում էր այնպես,
որ ես ամբողջ շաբաթներով չէի հանդիպում նրան։ Այդ ժա-
մանակ նա ի՞նչ էր անում։ Առաջ ես կարծում էի, թե նա պար-
բերաբար ունենում է մարդատյացության մոլուցքներ, իսկ
հիմա գլխումս ծագում էր այն միտքը, որ այդ ժամանակ նա
ցամաքում ինչ-որ գործ էր կատարում, որի բնույթի մասին
ես ոչ մի հասկացողություն չունեի։

Այդ և հազարավոր ուրիշ մտքեր պաշարել էին ինձ և
հանգիստ չէին տալիս։ Մենք այնպիսի մի տարօրինակ դրու-
թյան մեջ էինք գտնվում, որ բնականաբար կարելի էր ան-
համար քանակությամբ և բոլորովին չհիմնավորված ենթա-
դրություններ անել։ Ես անտանելի տանջանքներ էի կրում։
Այդ սպասողական դրությունն ինձ անվերջ էր թվում։ Ժամերն
անցնում էին չափից դուրս դանդաղ։

Ինչպես միշտ, ճաշն ինձ մատուցեցին նավասենյակում։
Ես ախորժակով չէի ուտում, որովհետև մտահոգված էի ա-
պագա գեպքերով։ Ժամը յոթին վեր կացա սեղանից։ Հարյուր
քսան րոպե՞, իսկ ես հաշվում էի յուրաքանչյուր վայրկյանը,
որ դեռ մնում էր, մինչև որ ես միանայի Նեդ Լենդին։ Իմ հու-
զումն ավելի և ավելի էր ուժգնանում։ Սիրտս խփում էր
արագությամբ։ Ես չէի կարողանում մի տեղ նստած մնալ։
Սենյակում ետ ու առաջ էի քայլում, հույս ունենալով այդ
կերպ հանգստացնել հուզված ջղերս։ Այն միտքը, թե մենք
կարող ենք կորչել այդ հանդուգն փորձը կատարելիս, ինձ
ամենից քիչ էր անհանգստացնում։ Սակայն այն երկյուղը,
թե մեր պլանը կհայտնաբերվի նախքան «Նաուտիլուսից» մեր
հեռանալը, այն վախը, թե մենք կկանգնենք կատաղած և որ
ավելի վատ է, այդ դավաճանությամբ վրդովված նավապետ
Նեմոյի առաջ, ճնշում էր ինձ և դրանից հուսահատորեն խփում
էր սիրտս։

Ես ցանկացա վերջին անգամ դիտել սրահը։ Նեղ միջանցքով ես անցա այդ նշանավոր թանգարանը, ուր այնքան հա-

ճելի և օգտակար ժամեր էի անցկացրել։ Ես դիտում էի այնտեղ հավաքված գանձերը, որպես մի մարդ, որը դատապարտված է մշտական աքսորի և գիտե, որ շուտով պիտի հեռանա ու երբեք չվերադառնա։ Արդարև, ես էլ պետք է ընդմիշտ բաժանվեի արվեստի այդ սքանչելի գործերից, բնության այդ հրաշալիքներից, որոնց միջև անցել են իմ կյանքի վերջին ամիսները։ Ես ուզեցի սրահի լուսամուտից վերջին անգամ նայել Ատլանտյան օվկիանոսի ջրերին։ Սակայն փեղկերը ամուր փակված էին և նավի երկաթե պատերը թաքցնում էին ինձանից օվկիանոսի գաղտնիքները։

Սրահում անցուդարձ անելով, ես մոտեցա այն դռանը, որ տանում էր նավապետ Նեմոյի սենյակը։ Ես խորապես զարմացա, որ այդ դուռը կիսաբաց էր։ Ես իսկույն դեպի ետ գնացի. եթե նավապետ Նեմոն սենյակում էր, կարող էր տեսնել ինձ։ Սակայն, ոչ մի ձայն չլսելով, ես նորից մոտեցա։ Սենյակում ոչ ոք չկար։ Ես դուռը բաց արի և ներս մտա։ Այնտեղ ոչինչ չէր փոխվել։ Կահավորությունը նույն պարզությունն ուներ։

Իմ ուշադրությունը գրավեցին ժանտաքրով կատարված մի քանի փորագրություններ, որոնք փակցված էին պատերին։ Անցյալներում այս սենյակն այցելելիս ես դրանք չէի տեսել։ Դրանք այն պատմական գործիչների նկարներն էին, որոնք իրենց կյանքը նվիրել էին որևէ մեծ գաղափարի։ Ահա այդ գործիչները. Լեհաստանի ազատագրության համար պայքարող Կոստյուշկոն, Բոցարիսը՝ ժամանակակից Հունաստանի Լեոնիդեսը, Օ'Կոնելը՝ անկախ Իռլանդիայի պաշտպանը, Գեորգ Վաշինգտոնը՝ Հյուսիս-Ամերիկական միության հիմնադիրը, Լինկոլնը, որ ընկավ մոլեռանդ-ստրկատիրոջ գնդակով, վերջապես, նեգրերին ստրկությունից ազատագրելու գործի նահատակը՝ Ջոն Բրոունը, որ կախաղան էր բարձրացվել, ծանր ու տարօրինակ մի ուրվանկար, որ մատիտով նկարել էր Վիկտոր Հյուգոն։

Ինչո՞ւ նավապետ Նեմոն այդ նկարները փակցրել էր իր ննջարանում։ Ի՞նչ կապ գոյություն ուներ այդ հերոսների և նրա միջև։ Գուցե այդ նկարների հավաքածոն կօգնի ինձ լուծելու նրա կյանքի հանելուկը։ Արդյոք նա եղե՞լ է ճնշված ժո-

ղովրդի առաջնորդ, սարուկների ազատարար։ Արդյոք մասնակցե՞լ է վերջին ժամանակների քաղաքական կամ սոցիալական որևէ շարժման։ Գուցե նա եղել է հյուսիսային և հարավային նահանգների միջև եղած արյունոտ և ընդմիշտ անմոռանալի քաղաքացիական պատերազմի մասնակի՞ց։

Հանկարծ ժամացույցը խփեց ժամի ութը։ Հենց առաջին զարկն ինձ արթնացրեց երազներից։

Ես ցնցվեցի, կարծես անտեսանելի մի աչք նկատեց իմ խոհերի գաղտնիքը, և շտապ դուրս գնացի սենյակից։

Սրահում ես առաջին հերթին նայեցի կողմնացույցին։ Սլաքը ցույց էր տալիս, որ մենք դարձյալ շարունակում ենք դեպի հյուսիս ընթանալ։ Արագությունը չափելու գործիքը ցույց էր տալիս չափավոր արագություն, խտաչափը՝ մոտավորապես վաթսուն մետր խորություն։ Այսպիսով հանգամանքները միանգամայն նպաստավոր էին Նեդ Լենդի պլանն իրագործելու համար։

Ես վերադարձա իմ նավասենյակը և հագա տաք զգեստ, ծովային բարձրաճիտ կոշիկներ, մորթե գդակ, տաք բաճկոն, որ պատած էր փոկի մաշկով։ Ես պատրաստ էի։ Մնում էր սպասել։

«Նաուտիլուսում» թագավորող խորը լռությունը խախտում էր միայն պտտվող անիվի աղմուկը։ Լարելով լսողությունս, ես կանգնել էի դռան մոտ, վախենալով լսել հանկարծակի մարդկային ձայներ, որոնք պետք է ցույց տային թե Նեդ Լենդը բռնվել է իր «հանցագործ» պլանն իրագործելու մոմենտին։ Ինձ տիրեց խելահեղ մի տագնապ... Իզուր էի աշխատում վերադարձնել հանգստությունս։

Ժամը իններից մի քանի րոպե պակաս ես ականջս մոտեցրի այն միջապատին, որով բաժանված էին իմ և նավապետի սենյակները։ Ոչ մի ձայն։ Ես դուրս եկա նավասենյակից ու մտա սրահ։ Սրահը կիսով չափ լուսավորված էր և այնտեղ ոչ ոք չկար։

Ես բաց արի դեպի գրադարանը տանող դուռը։ Այստեղ ևս նույն կիսախավարն ու դատարկությունը։ Ես քայլեցի դեպի սանդուղքը տանող դուռը, որպեսզի այնտեղ սպասեմ Նեդ Լենդի ազդանշանին։

Այդ բոպեին մեքենայի պտույտի աղմուկը բավական պակասեց, հետո էլ բոլորովին դադարեց։ Ինչո՞ւ հանկարծ «նաուտիլուսը» կանգ առավ։ Արդյոք դա նպաստո՞ւմ էր Նեդ Լենդի պլանն իրագործելուն, թե՞ խանգարում էր։ Ես այդ չգիտեի։ Հիմա լռությունը խախտվում էր միայն իմ սրտի ուժեղ բաբախումով։

Հանկարծ լսեց թեթև ցնցում։ Ես հասկացա, որ «նաուտիլուսն» իջել է ծովի հատակը։ Ես ավելի շատ հուզվեցի։ Կանադացին ազդանշան չէր տալիս։ Ես ուզում էի գնալ Նեդ Լենդի մոտ և համոզել նրան, որ հետաձգվի փախուստը։ Ես զգում էի, որ այդ երեկո մեր ճանապարհորդությունն արտասովոր պայմաններում է կատարվում։

Այդ ժամանակ դրադարանի շեմքում երևաց նավապետ Նեմոն։ Նկատելով ինձ, նա առանց բարևելու, բայց շատ սիրալիր տոնով ասաց.

— Հը՛, պարոն պրոֆեսոր, ես ձեզ փնտրում էի։ Արդյոք դուք գիտե՞ք իսպանական պատմությունը։

Եթե նա ինձ հարցներ, գիտե՞մ արդյոք իմ հայրենիքի պատմությունը, միևնույն է, ծայրահեղ շփոթության ու անհանգստության իմ այժմյան վիճակում ես ոչինչ չէի կարող պատասխանել նրան։

— Դուք լսեցի՞ք իմ հարցը,— հարցրեց նավապետ Նեմոն,— գիտե՞ք արդյոք իսպանական պատմությունը։

— Շատ վատ,— վերջապես, ես իմ մեջ ուժ գտա պատասխանելու։

— Օ՜, այդ գիտնականնե՛րը,— ասաց նավապետը,— բացի իրենց մասնագիտությունից, նրանք ոչինչ չգիտեն։ Ընտեցե՛ք,— ավելացրեց նա,— ես ձեզ մի հետաքրքիր էպիզոդ կպատմեմ այդ պատմությունից։

Նավապետը հարմար դիրք-վ նստեց բազմոցին։ Ես հետևվեցի նրա օրինակին, ընտրելով մի խավար անկյուն։

— Պարոն պրոֆեսոր,— ասաց նա,— ուշադրությամբ լսեցեք ինձ։ Իմ պատմածը կհետաքրքրի ձեզ, քանի որ այն անուղղակի կերպով կպատասխանի մի հարցի, որ դուք անպայման տված կլինեք ձեզ և չէիք կարող լուծել։

— Ես ձեզ լսում եմ, նավապետ,— պատասխանեցի ես, անհանգստանալով այդ նախաբանից։

Ես չգիտեի, թե նավապետն ինչ է ասելու և ինքս ինձ հարցնում էի, թե արդյոք նրա պատմությունը կապվա՞ծ է մեր փախուստի անհաջող փորձի հետ։

— Եթե թույլ կտաք, պարոն պրոֆեսոր,— շարունակեց նավապետը,— մենք կսկսենք 1702 թվականից։ Թերևս դուք հիշում եք, որ այն ժամանակաշրջանում ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս տասնվեցերորդը, որ երևակայում էր, թե բավական է մատը շարժի և Պիրենեյը գետնի տակ կանցնի, իսպանական գահին նստեցրեց իր թոռին, հերցոգ Անժուացուն։ Այդ բավական անշնորհք գահաժառանգը, որ թագավորում էր Ֆիլիպ հինգերորդի անունով, ստիպված եղավ ընդհարվել ուժեղ արտաքին թշնամիների հետ։

Արդարև, մի տարի առաջ, 1701 թվականին հոլանդական, ավստրիական և անգլիական թագավորները Հաագայում կնքեցին դաշինք, որի նպատակն էր Ֆիլիպ հինգերորդի գլխից պոկել իսպանական թագը և դնել մի ոմն էրցհերցոգի գլխին, որին նրանք ժամանակից առաջ անվանում էին Կարլ երրորդ։

Իսպանիան պետք է պայքարեր այդ կոալիցիայի դեմ։ Սակայն Իսպանիան չուներ ոչ զինվորներ, ոչ էլ նավատիներ, թեպետ փողի պակասություն չէր զգում, եթե իհարկե ոսկով ու արծաթով բեռնված ամերիկյան նավերը կարողանային անարգել մտնել նրա նավահանգիստները։ Հենց 1702 թվականի վերջին՝ Իսպանիան հարուստ փոխադրություն էր սպասում Ամերիկայից, իսկ այդ փոխադրությունն ուղեկցում էր քսաներեք նավերից բաղկացած ֆրանսիական մի նավախումբ՝ ծովակալ Շատո-Ռենոյի հրամանատարությամբ։ Այդ ուղեկցությունն անհրաժեշտ էր, որովհետև Իսպանիայի թշնամիների միացյալ նավատորմիղը լողում էր Ատլանտյան օվկիանոսում։

Փոխադրանավերի խումբը գնում էր Կադիկս, սակայն ծովակալն իմացավ, որ Կադիկսի ջրերում գտնվում է անգլիական մի նավախումբ, և որոշեց մտնել մի որևէ ֆրանսիական նավահանգիստ։

Բայց իսպանական նավապետները բողոքեցին այդ որոշ-

ման դեմ։ Նրանք պահանջեցին անպայման հասնել իսպանական նավահանգիստ, և քանի որ անկարելի էր ուղևորվել դեպի Կադիկս, առաջարկեցին գնալ Վիգո ծովախորշը, որ անգլիացիների կողմից պաշարված չէր։

Ծովակալ Շատո-Ռենոն թույլություն ունեցավ համաձայնվելու այդ պահանջի հետ, և նավերը մտան Վիգո ծովախորշը։

Դժբախտաբար այդ ծովախորշը բաց է ծովի կողմից, և անկարելի էր փակել նրա մուտքը։ Այս պատճառով հարկավոր էր մինչև թշնամի կոալիցիայի նավատորմիղի երևալն շտապեցնել նավերի բեռնաթափումը։ Դրա համար բավականաչափ ժամանակ կար և ամեն ինչ բարեհաջող կվերջանար, եթե հանկարծ չծագեր արտոնությունները խախտելու ամենահիմար մի գործ...

— Դուք ուշադրությամբ հետևո՞ւմ եք իմ պատմածին,— հանկարծ ինքն իրեն ընդհատեց նավապետ Նեմոն։

— Մեծ ուշադրությամբ,— պատասխանեցի ես, զարմանալով, թե ինչ նպատակով է նա ինձ համար կարդում պատմական այդ դասախոսությունը։

— Այսպես ուրեմն, ես շարունակում եմ։ Ահա թե ինչ կատարվեց։ Կադիկսի վաճառականներն օգտվում էին այն արտոնությամբ, որով Արևմտյան Հնդկաստանից (այն ժամանակ այդպես էին անվանում Ամերիկան) ժամանող բոլոր նավերը պետք է բեռնաթափվեին Կադիկսում։ Այսպիսով Վիգո ծովախորշում ոսկով բեռնված նավերի բեռնաթափումը խախտում էր այդ վաճառականների արտոնությունը։ Վերջիններս բողոք ուղարկեցին Մադրիդ և թուլական Ֆիլիպ հինգերորդը կարգադրեց, որ ժամանած փոխադրությունը չպիտի բեռնաթափվի ու Վիգո ծովախորշում պետք է մնա այնքան, մինչև որ դաշնակիցների նավատորմիղը վերացնի Կադիկսի պաշարումը։

Սակայն քանի դեռ Մադրիդում ընդունվում էր այդ որոշումը, 1702 թվականի հոկտեմբերի քսաներկուսին, անգլիական նավերը մտան Վիգո ծովախորշը։ Չնայելով հակառակորդի պարզապես գերազանց ուժերին, ծովակալ Շատո-Ռենոն քաջաբար ճակատամարտում էր։ Տեսնելով, սակայն, որ ոսկու փոխադրությունը անխուսափելիորեն ընկնելու է թշն-

նամինների ձեռքը, նա հրդեհից ու ջրասույզ արեց իր նավերը, որոնք իրենց թանկարժեք բեռան հետ միասին իջան ծովի հատակը։

Նավապետ Նեմոն լռեց։ Խոստովանում եմ, որ ես դեռ չէի հասկանում, թե այդ պատմությունն ինչով պիտի հետաքրքրեր ինձ։

— Հետո՞,— հարցրի ես։

— Հետո՞։ Հետո այն, որ մենք այժմ գտնվում ենք հենց այդ վիգո ծովախորշի հատակում, և միայն մեզանից է կախված նրա գաղտնիքը բանալը։

Նավապետը վեր կացավ և ինձ հրավիրեց հետևել իրեն։

Ես արդեն ուշքի էի եկել շփոթվածությունից և անկաշկանդ հետևեցի նրան։

Սրահում խավար էր։ Լուսամուտների փեղկերը բաց էին և երևում էր հեռվում առկայծող ծովի ջուրը։ Ես մոտեցա լուսամուտին։

Լուսարձակը կես մղոն տարածությամբ պայծառ լուսավորել էլ ջուրը։ Նրա լույսն այնքան ուժեղ էր, որ կարելի էր տեսնել ամեն մի ավազահատիկ։

«Նաուտիլուսի» անձնակազմին պատկանող նավաստինները, որ զրահազգեստ էին հագել, հատակում շուռումուռ էին անում կիսով չափ փտած տակառներ, ջարդված արկղներ, դրանք դուրս քաշելով ուրիշ փլատակների տակից։ Այդ արկղներից ու տակառներից թափվում էր ոսկին, արծաթը, թանկագին քարերը։ Ամբողջ ավազը ծածկված էր դրանցով։ Շալակելով արկղները կամ տակառները, նավաստինները գնում էին դեպի նավը, դարսում էին թանկարժեք բեռը և նոր պաշար վերցնելու համար վերադառնում էին այն անսպառ գանձարանը։

Հիմա ես հասկացա։ Դա եղել էր ծովային ճակատամարտի թատերաբեմ։ 1702 թվականի հոկտեմբերի 22-ին այստեղ ջրասույզ էին եղել այն նավերը, որոնք ոսկի էին տանում իսպանական թագավորի համար։ Նավապետ Նեմոն այնտեղից ոսկի էր վերցնում, երբ այդ նրան հարկավոր էր լինում։ Այդ տակառները, այդ արկղները պատկանում էին նրան, միմիայն նրան։ Նա ուղղակի և միակ ժառանգն էր այդ բոլորը

հարստությունների, որ Ֆերդինանդ Կորտեսը գրավել էր ինկերից։

— Արդյոք դուք գիտե՞ք, պարոն պրոֆեսոր, որ ծովն այդպիսի հարստություն է պարունակում,— ժպտալով հարցրեց նավապետ Նեմոն։

— Ես գիտեի միայն այն, որ ծովի ջրում լուծված վիճակում գտնվում է մոտ երկու միլիոն տոնն արծաթ։

— Այդ ճիշտ է, սակայն այդ արծաթը ջրից հանելու համար հարկավոր կլիներ ավելի շատ ծախսեր անել, քան շահ ստանալ։ Մինչդեռ այստեղ հարկավոր է միայն նեղություն քաշել կռանալ, որպեսզի բարձրացնել այն, ինչ որ կորցրել են մարդիկ։ Միայն Վիգո ծովախորշը չէ, որ իբրև գանձարան է ծառայում ինձ համար. կան նաև նավերի խորտակման հազարավոր ուրիշ, ոչ պակաս հարուստ տեղեր, որոնք նշված են իմ ստորջրյա քարտեզի վրա։ Հիմա դուք հասկանո՞ւմ եք, որ իմ հարստությունը միլիարդներով է չափվում։

— Շատ լավ եմ հասկանում, նավապետ։ Թույլ տվեք ասել ձեզ, որ այս Վիգո ծովախորշից ոսկի հանելով, դուք առաջ եք անցել մի առևտրական ընկերությունից, որը կարող էր մրցել ձեզ հետ։

— Ի՞նչ ընկերություն։

— Մի ընկերություն, որ իսպանական կառավարությունից արտոնություն է ստացել ջրասույզ եղած նավերի որոնման աշխատանքներ կատարելու համար։ Այդ ընկերության բաժնետերերը քնած են և երազում տեսնում են այդ հինգ հարյուր միլիոնը՝ ջրասույզ նավերի բեռան արժեքը որոշված էր այդ գումարի չափով։

— Հինգ հարյուր միլիո՞ն,— կրկնեց նավապետ Նեմոն,— այդ միլիոններն այստեղ եղել են, բայց հիմա այլևս չկան։

— Հասկանում եմ,— ասացի ես,— այս պատճառով տրվյալ գործի մասնակիցներին նախազգուշացման մի քանի խոսքեր ասելը բոլորովին ավելորդ չէր լինի։ Սակայն ո՞վ գիտե, թե ինչպես կընդունվի այդ նախազգուշացումը։ Դուք գիտեք, որ խաղամոլներն ավելի շատ ցավում են իրենց խելահեղ հույսերի խորտակման, քան թե փողերը կորցնելու համար։ Հը՛մ, այդ սպեկուլյանտների համար չէ, որ ես պիտի ցա-

վեմ։ Ես ավելի շատ ցավում եմ այն պատճառով, որ այդ փողերը երբեք չեն հասնի հարյուր հազարավոր աղքատներին, որոնց կարիքը կարող էին թեթևացնել...

Ես դեռ չէի վերջացրել նախադասությունը, երբ զգացի, որ դա վիրավորեց նավապետ Նեմոյին։

— Երբեք չե՞ն հասնի աղքատներին,— բացականչեց նավապետը,— ուրեմն դուք գտնում եք, որ եթե ես եմ վերցրել այդ փողերը, ուրեմն դրանք կորա՞ծ են։ Մի՞թե դուք կարծում եք, որ ես ինձ համար եմ հավաքում այդ գանձերը։ Ո՞վ ասաց ձեզ, որ ես այդ փողերով բարի գործեր չեմ անում։ Ես գիտեմ, որ աշխարհում գոյություն ունի անհուն վիշտ, կան ճնշված ժողովուրդներ, դժբախտություններ, որոնք օգնություն են պահանջում, կան զոհեր, որոնք վրեժի կոչ են անում։ Մի՞թե դուք չեք հասկանում, որ...

Այստեղ նավապետ Նեմոն հանկարծ լռեց։ Գուցե նա զղջաց, որ հուզմունքի ազդեցության տակ ավելորդ բան է ասել։ Սակայն ես առանց այն էլ ամեն ինչ հասկացա։ Ինչպիսի պատճառներ էլ որ լինեին, որոնք նրան ստիպում էին անկախություն որոնել ջրի տակ, այնուամենայնիվ նաև այդ ամենից առաջ մնում էր իբրև մարդ։ Մարդկության տառապանքների գիտակցությունը ճմլում էր նրա սիրտը, և նա առատաձեռնությամբ օգնություն էր հասցնում ճնշված ժողովուրդներին և անհատ մարդկանց։

Հիմա ես հասկացա, թե ում համար էին այն միլիոնները, որ նավապետ Նեմոն ուղարկեց մի օր, երբ «Նաուտիլուսը» գտնվում էր ապստամբված Կրետե կղզու մոտ։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԿՈՐԱԾ ՄԱՅՐ ՑԱՄԱՔԸ

Հետևյալ առավոտյան, փետրվարի 19-ին, ինձ մոտ մտավ կանադացին։ Ես սպասում էի այդ այցելության։

Նեդ Լենդը խիստ ընկճված տեսք ուներ։

— Ի՞նչ կասեք, պարոն պրոֆեսոր,— սկսեց նա։

— Ի՞նչ կարելի է ասել, Նեդ,— պատասխանեցի ես,— պատահականությունը դավաճանեց մեզ։

— Այո... Կարծես թե այդ անիծված նավապետն իր նավը պիտի կանգնեցներ հենց այն րոպեին, երբ մենք պատրաստվում էինք փախչելու։

— Ի՞նչ արած, Նեդ, նա պետք է այցելեր իր բանկիրին։

— Բանկիրի՞ն։

Նեդը զարմացած չուեց աչքերը։

— Ավելի ճիշտ՝ իր բանկի դրամարկղը։ Ես նկատի ունեմ օվկիանոսի հատակը, ուր հարստությունն ավելի ապահով է պահվում, քան որևէ պետական պահեստարանում։

Եվ ես Նեդ Լենդին պատմեցի նախընթաց երեկոյան դեպքերը, գաղտնաբար հուսալով, որ իմ պատմածը նրան կհաշտեցնի նավապետի հետ և կստիպի հրաժարվել փախչելու մտքից։

Սակայն միակ արդյունքը եղավ Նեդ Լենդի այն դառն ափսոսանքը, որ իրեն չի հաջողվել անձամբ զբոսնել Վիգոյի մոտ եղած ճակատամարտի տեղում և այնտեղից իրական հիշողություններ տանել այդ զբոսանքի մասին։

— Այնուամենայնիվ,— ասաց նա, վերադառնալով իրեն զբաղեցնող մտքին,— դեռևս ոչինչ չի կորած։ Այն, ինչ որ չհաջողվեց երեկ երեկոյան, կարող է հաջողվել այսօր...

— Ո՞ւր է գնում «Նաուտիլուսը»,— ընդհատեցի ես Նեդ Լենդին։

— Չգիտեմ։

— Կեսօրին կդիտենք քարտեզը։

Կանադացին վերադարձավ Կոնսելի մոտ։ Ես հագնվեցի և շտապեցի սրահ։

Կողմնացույցի տվյալներն անմխիթարական էին։ «Նաուտիլուսը» ընթանում էր դեպի հարավ-արևմուտք։ Մենք մեջքերով դարձանք դեպի Եվրոպա։

Ես անհամբերությամբ սպասում էի կեսօրվա դիտողություններին, որոնց արդյունքն անմիջապես նշվում է քարտեզի վրա։

Տասնմեկն անց կեսին պոմպերը դատարկեցին պահեստները, և «Նաուտիլուսը» դուրս եկավ օվկիանոսի մակերևույթը։

Ես բարձրացա տախտակամածը։ Նեդ Լենդն ինձանից առաջ անցավ։

Ոչ մի ցամաք չէր երևում։ Շուրջը ծովն էր անծայրածիր։ Մի քանի առագաստանավեր երևում էին հորիզոնում, հավանորեն բարեհաջող քամու էին սպասում, որպեսզի անցնեն Բարեհուսո հրվանդանը և հասնեն մինչև ս. Ռոկի հրվանդանը։ Երկինքը պատած էր ամպերով։ Ըստ երևույթին փոթորիկ էր լինելու։

Հուսալքված Նեդ Լենդն աշխատում էր մանրազնին դիտել ամպամած հորիզոնը. նա հույս ուներ, որ մառախուղում կը-տեսնի բաղձալի ցամաքը։

Կեսօրին կարճ ժամանակով երևաց արևը։ Նավապետի օգնականն օգտվեց դրանից, որպեսզի դիտողություններ կատարի։ Ծովը սկսեց սաստիկ ալեկոծվել, և այս պատճառով «Նաուտիլուսն» անմիջապես վերատին ջրասույզ եղավ։

Մի ժամից հետո, երբ նավի դրությունը նշվեց քարտեզի վրա, ես տեսա, որ մենք գտնվում ենք ամենամոտ ցամաքից վեց հարյուր կիլոմետր տարածության վրա, 16°17′ երկարության և 33°22′ լայնության տակ։ Այս պայմաններում բոլորովին ավելորդ էր մտածել փախչելու մասին։

Դժվար չէ պատկերացնել, թե որքան վշտացավ Կանադացին, երբ իմացավ այդ լուրը։

Ինչ վերաբերում է ինձ, ես այնքան էլ չէի ցավում։ Ընդհակառակը, կարծես սիրտս ազատվեց ինչ-որ ծանրությունից, և ես մեծագույն հաճույքով վերսկսեցի իմ ընթացիկ աշխատանքները։

Ուշ երեկոյան, ժամը մոտ տասնմեկին նավապետ Նեմոն անակնկալ կերպով եկավ ինձ մոտ։ Նա շատ սիրալիր կերպով հարցրեց ինձ, թե արդյոք չե՞մ հոգնել երեկ երկար ժամանակ արթուն մնալուց։ Ես պատասխանեցի, թե բոլորովին չեմ հոգնել։

— Այդ դեպքում, պարոն պրոֆեսոր, ես ձեզ առաջարկում եմ մասնակցել մի շատ հետաքրքիր արշավի,— ասաց նա։

— Խնդրեմ, նավապետ։

— Մինչև այժմ դուք ծովի հատակն էիք այցելում միայն

ցերեկը, արևի լույսի տակ։ Ուզո՞ւմ եք այն տեսնել մթին գիշերով։

— Մեծ հաճույքով։

— Նախազգուշացնում եմ ձեզ, որ զբոսանքը հոգնեցուցիչ կլինի։ Հարկավոր կլինի շատ քայլել և բարձրանալ սարը։ Ինչպես ձեզ հայտնի է, այստեղ ճանապարհներն անհուսալի վիճակում են։

— Դուք միայն գրգռեցիք իմ հետաքրքրությունը, նավապետ։ Ես պատրաստ եմ հետևելու ձեզ։

— Այդ դեպքում գնանք հանդերձարան, պարոն պրոֆեսոր։ Հարկավոր է հագնել զրահազգեստները։

Հանդերձարանում ես տեսա, որ ոչ «Նաուտիլուսի» անձնակազմին պատկանող նավաստիները, ոչ էլ իմ ընկերները մեզ չէին ուղեկցելու այդ զբոսանքի ժամանակ։ Նավապետ Նեմոն նույնիսկ չառաջարկեց ինձ հրավիրել Նեդ Լենդին և Կոնսելին։

Մենք արագ հագանք զրահազգեստները։ Մեր մեջքին կապեցին օդի մեծ պաշարով լցված պահամաններ։ Սակայն Ռումկորֆի ապարատներ և էլեկտրական լամպեր մենք չվերցրինք։

Ես նավապետի ուշադրությունը հրավիրեցի այդ հանգամանքի վրա։

— Դրանք մեզ հարկավոր չեն լինի,—պատասխանեց նա։

Ինձ թվաց, որ ես լավ չլսեցի, բայց իմ դիտողությունը կրկնել չկարողացա, որովհետև նավապետն արդեն սաղավարտով ծածկեց գլուխն ու դեմքը։ Ես հետևեցի նրա օրինակին։ Ինձ տվին երկաթով պատած մի ձեռնափայտ և մի քանի րոպեից հետո մենք Ատլանտյան օվկիանոսի հատակում էինք, երեք հարյուր մետր խորության տակ։

Մոտենում էր կեսգիշերը։ Ջրի մեջ բոլորովին մութն էր, սակայն նավապետ Նեմոն ինձ ցույց տվեց ինչ-որ մի կարմիր կետ, որ «Նաուտիլուսից» երկու մղոնի վրա առկայծում էր խարույկի նման։ Ես չէի կարողանում հասկանալ, թե ի՞նչ կրակ էր դա, ի՞նչպես և ինչո՞ւ էր վառվում ջրի տակ։ Ինչևիցե, այդ կրակը թեպետև թույլ չափով, այնուամենայնիվ

լուսավորում էր մեր ճանապարհը, այնպես որ Ռումկորֆի ապարատների կարիքը չէր զգացվում։

Նավապետ Նեմոյի հետ միասին ես քայլում էի ուղիղ դեպի այդ կրակը։ Սկզբում հատակը հարթ էր, հետո նկատելի կերպով բարձրանում էր։

Մենք գնում էինք լայն քայլերով, հենվելով ձեռնափայտերին, սակայն, չնայելով դրան, մեր ընթացքը բավական դանդաղ էր, որովհետև ոտներս հաճախ թաղվում էին տիղմի մեջ։

Ամբողջ ճանապարհին վերևից ինչ-որ թրխկոց էր լսվում։ Երբեմն թրխկոցն ուժեղանում էր, հիշեցնելով թմբուկի զարկը։ Շուտով ես գլխի ընկա, թե ինչն էր այդ աղմուկի պատճառը։ Օվկիանոսի վրա անձրև էր գալիս և խոշոր կաթիլներն անընդհատ խփում էին ափքներին։ Սկզբում ես վախեցա, թե կթրջվեմ, բայց իսկույն ծիծաղեցի այդ մտքի անհեթեթությունից։ Գոնվելով ջրի տակ և վախենալ անձրևի՞ց։ Սակայն բանն այն է, որ զրահազգեստի մեջ չես զգում, որ գոնվում ես ջրում՝ և միայն նկատում ես, որ քո շրջապատն օդից ավելի թանձր է։

Կես ժամ քայլելուց հետո մենք հասանք քարքարոտ տեղեր։ Հատակը լուսավորված էր մեղուզաների, մանրիկ խեցգետնանմանների ֆոսֆորային աղոտ փայլով։ Տեղ-տեղ քարերը ծածկված էին զոոֆիտներով կամ ջրիմուռներով։ Ես մի քանի անգամ սայթաքեցի տղմոտ գորգի վրա, և եթե ձեռնափայտս չլիներ, անկասկած, մի քանի անգամ կընկնեի։ Ես հետ նայեցի ու տեսա «Նաուտիլուսի» լուսարձակը, որ հեռվից գունատվում էր հեռվում։

Օվկիանոսի հատակում քարերը կուտակված էին կարծես ոչ պատահաբար, այլ որոշ կանոնավորությամբ։

Ես տեսնում էի ինչ-որ ուղիղ փոսեր կամ ակոսներ, որոնք կորչում էին հեռվում, խավարում։ Տեսնում էի նաև ինչ-որ տարօրինակ երևույթներ, որոնք ինձ համար մնում էին անբացատրելի։ Ինձ թվում էր, որ իմ ծանր, արճիճով պատած կոշիկներով քայլում եմ ոսկորների վրա, որոնք ճզմվում են և ճաքճքում։ Ի՞նչ տարօրինակ տեղ էր այդ ընդարձակ հովիտը, ուր մենք քայլում էինք։ Ես ուզում էի հարց տալ նավա-

պետին, սակայն չդիտեմ այն զարմանահիաց նշանները, որոնցով նա խոսում էր իր նավատիների հետ, երբ վերջինները ուղեկցում էին նրան ստորջրյա էքսկուրսիաների ժամանակ։

Մինչ այս մինչ այն, կարմրավուն լույսը, որ մեզ համար իբրև ուղեցույց առաջ էր ծառայում, ուժեղանում էր ու լուսավորում ամբողջ հորիզոնը։ Ջրի տակ վառվող այդ կրակը ծայրահեղորեն գրավեց իմ հետաքրքրությունը։ Արդյոք էլեկտրականության՞ց էր այդ լույսը, թե դա մի որևէ արտաքին աղբյուր էր, որն անծանոթ էր գիտնականներին։ Գուցե, իմ մեջ նաև այսպիսի միտք ծագեց, այդ կրակը մարդու միջոցո՞վ էր վառվում։ Գուցե այստեղ, ջրի այս խորը շերտերում ես կհանդիպեմ նավապետ Նեմոյի բարեկամներին և համախոհներին, որոնք նրա պես տարօրինակ կյանք են վարում։ Մի՞թե այստեղ ես կգտնեմ աքսորականների մի ամբողջ գաղութ, որոնք հոգնել են մարդկային անարդարությունից և օվկիանոսի հատակում իրենց հՃամար անկախ ու անդորր ապաստան են գտել։

Այս անիմաստ, խելահեղ ցնորքներն ամբողջ ժամանակ գրաղեցրել էին ինձ։ Եվ այդ զարմանալի չէ։ Մշտական հուզմունքի այն վիճակում, որի մեջ ես գտնվում էի նորանոր հրաշքներ տեսնելու շնորհիվ, ես նույնիսկ չէի զարմանա, եթե ծովի խորքում տեսնեի ստորջրյա այն քաղաքներից մեկը, որոնց մասին երազում էր նավապետ Նեմոն։

Մեր ճանապարհը հետզհետե ավելի պայծառ էր լուսավորվում։ Լույսի աղբյուրը գտնվում էր հատակից մոտ ութսուն ոտնաչափ բարձր մի սարի գագաթին։ Իմ շուրջը տարածված լույսն այդ աղբյուրի ճառագայթների բեկումն էր ջրի մեջ, իսկ ինքը, լույսի աղբյուրն առաջվա պես անտեսանելի էր մնում։

Նավապետ Նեմոն առանց տատանվելու քայլում էր հատակի քարե լաբիրինթոսով։ Նա լավ գիտեր այդ մթին ճանապարհը։ Պարզ է, որ նա այնքան հաճախ էր անցել այդ ճանապարհով, որ չէի վախենում շեղվելուց։ Ես, վստահությամբ հետևելով, հետևում էի նրան։ Նավապետն իրեն ներում էր ոչպես մի գերբնական էակ, ստորջրյա հանճար, և ես զմայլվում էի նրա բարձր հասակով, որի մթին ուրվագիծը ընդգծվում էր հորիզոնի պայծառ ֆոնի վրա։

Արդեն գիշերվա ժամը մեկն էր։ Մենք մոտեցանք լեռան ստորոտին։ Սակայն հնարավոր չէր ուղիղ ճանապարհով բարձրանալ այդ սարը, և մենք սկսեցինք մագլցել խիտ անտառում գտնվող նեղ կածաններով։

Այո, դա անտառ էր, թեև բաղկացած էր մեռած, սաղարթազուրկ, աղի ջրում ածխացած ծառերից, այնուամենայնիվ իսկական անտառ էր։ Այստեղ ու այնտեղ բարձրանում էին վիթխարի նոճիները։ Դա քարածուխ էր, որ դեռ չէր շերտավորվել, դեռ կանգնած էր ուղղահայաց վիճակում, մեռած արմատներով հատակին կառչելով։ Քարացած ծառերի ճյուղերը դեռ թեքված էին բոլոր կողմերը և լուսավորված ջրում աչքի էին ընկնում իրենց թափանցիկ սևությամբ։ Կածանները ծածկված էին ջրիմուռներով, որոնց մեջ վխտում էին հազարավոր խեցգետնանմաններ։ Ես բարձրանում էի ժայռերի վրա, ցատկում էի փոթորիկներից ընկած ծառաբների վրայով, պոկում էի ճանապարհը փակող ծովային լիանաների ոստայնը, քայլելիս վախեցնում էի ձկներին, որոնք կարծես ոտից ոտ էին թռչում։

Այդ ամենով գերված, ես հոգնածություն չէի զգում։ Ես չէի մնում իմ ուղեկցից, որ ըստ երևույթին նույնպես հոգնածություն չէր զգում։

Ինչպիսի՜ անմոռանալի տեսարան։ Ինչպե՞ս դա նկարագրել խոսքերով։ Ինչպիսի՞ գույներով պատկերել ջրում եղած ծառերն ու ժայռերը, նրանց ստորին մռայլ մասերն և կարմիր գագաթները, որ առկայծում էին ու ծիածանվում բեկված ճառագայթների համատարած լույսերում։

Մենք ցատկում էինք ժայռից ժայռ և լսում, թե ինչպես քիչ առաջ մեր թողած ժայռերը ներքև են գլորվում ընկնող ձյունակույտերի խուլ դղրդյունով։ Աջ և ձախ, դեպի հեռուն էին ձգվում մռայլ ծառուղիները և մեր հայացքը կորչում էր նրանց խորքում։ Մենք տեսնում էինք լայնատարած մարգագետիններ, որոնք կարծես մաքրված էին մարդու ձեռքով, և ես ակամա հարց էի տալիս ինքս ինձ, ի՞նչ կլինի, եթե հանկարծ մեր առաջ երևա այդ ստորջրյա երկրի բնակիչներից մեկն ու մեկը։

Նավապետ Նեմոն շարունակ առաջ էր գնում։ Ես չէի ուզ

զում ետ մնալ և քաջաբար հետևում էի նրան։ Զեռնափայտն էական օգնություն էր հասցնում ինձ։ Միայն մի անզգույշ քայլը կործանարար կլիներ այդ նեղ, անդնդի եզրից անցնող կածաններում։ Սակայն ես վստահությամբ առաջ էի շարժվում, առանց ամենաչնչին գլխապտույտ զգալու։ Ես թռչում էի խորխորատների վրայով, որոնց խորությունը, եթե դրանց ես հանդիպեի երկրի սառցադաշտերում, ինձ կստիպեր ետ փախչել։ Ես խիզախությամբ անցնում էի անդունդները, որպես կամուրջ օգտագործելով այն ծառերի տատանվող բները, որոնք ընկած էին այդ անդունդների վրա. ոչ մի անգամ չէի նայում, թե ինչ կա ոտներիս տակ, և շարունակ զմայլվում էի իմ առջև եղած տեսարանների արտասովոր գեղեցկությամբ։ Վեհապանծ ժայռերը, որ թեքվել էին իրենց բազմաձև ստորոտների վրա, կարծես հերքում էին հավասարակշռության բոլոր օրենքները։ Նույն տեղում լայն, բնության հրզկած աշտարակներն արահետների վրա կախված էին այնպիսի դիրքով, որ ձգողության օրենքները թույլ չէին տա ցամաքում։

Ես ինքս էլ մեծ չափով զգում էի ջրային միջավայրի թանձրությունը. չնայելով իմ ծանր հագուստին, պղնձե սաղավարտին և կոշիկներիս արճճապատ ներբաններին, ես պիրենեյան այծյամի թեթևությամբ բարձրանում էի գրեթե ուղղահայաց ժայռերը։

Ես ինքս զգում էի, թե որչափ անհավանական է թվում իմ պատմածի այս մասը։ Ես պետք է նկարագրեմ այնպիսի երևույթներ, որոնք առաջին հայացքից թվում են անհավանական, անհնարին, բայց որոնք միևնույն ժամանակ իրոք գոյություն ունեն։ Ես չէի զառանցում, չէի երազում։ Այդ ամենը ես տեսնում էի և զգում։

«Նաուտիլուսից» հեռանալուց երկու ժամ հետո մենք անցանք անտառների գիծը, և հիմա սարի գագաթը գտնվում էր մեզնից ընդամենը հարյուր ոտնաչափ տարածության վրա։

Այստեղ երևում էին միայն նոսր թփուտներ, որոնք նման էին ինչ-որ տարօրինակ նախշերի։ Մեր ոտների տակից դուրս էին պրծնում բազմաթիվ ձկներ, ինչպես վախեցած թռչունները՝ փարթամ կանաչների միջից։

ժայռոտ զանգվածը կտրատված էր անանցանելի ճեղքվածքներով, խորն անձավներով, անհատակ անդունդներով, որոնց խորքում, ինչպես ինձ թվում էր, սարսափելի բաներ կային։ Սիրտս ուժգին բաբախում էր, երբ ճանապարհին տեսնում էի կենդանիների վիթխարի շոշափուկները կամ սարսափելի չանչերը, որոնք մի կողմ էին անցնում, երբ մենք մոտենում էինք։ Հաղարավոր պայծառ կետեր փայլում էին խավարում։ Դրանք աչքեր էին հսկայական խաչփառների, որոնք թաքնվել էին իենց որջերում, վիթխարի օմարների, որոնք շարժում էին կրկնատեղ զենքերի նմանվող իրենց թաթերը, զարհուրելի ութոտնիկների, որոնց ահագին շոշափուկները գալարվում էին, ինչպես իրար վրա կուտակված օձեր։

Ինձ դեռևս անծանոթ հրեշների աշխարհն էր դա։ Ի՞նչ տեսակների են պատկանում այդ հոդվածոտանիները, որոնց համար ժայռերը ծառայում էին իբրև մի երկրորդ վահան։ Ինչպե՞ս կարող էր բնությունը պահպանել նրանց գոյության գաղտնիքը։ Քանի՞ դար նրանք ապրում են օվկիանոսի այդ խորքերում։

Սակայն ես կանգ առնելու և դրանց լավ դիտելու հնարավորություն չունեի։ Նավապետ Նեմոն, որ վաղուց ընտելացել էր այդ սարսափելի արարածներին, անցնում էր առանց ուշադրություն դարձնելու։

Մենք բարձրացանք լեռան առաջին հարթակը և այստեղ ես տեսա մարդու ձեռքով կառուցված երբեմնի բնակավայրերի ավերակները։ Դրանք հսկայական քարակույտեր էին, որոնց մեջ կարելի էր նկատել պալատների, տաճարների, տների ավերակները։ Այդ բոլորը հիմա ծածկված էր զոոֆիտների դալար այգիներով ու պատած ջրիմուռների կանաչ բաղեղով։

Սակայն դա ցամաքի ո՞ր մասն էր եղել և ի՞նչ վթարի հետևանքով էր անցել ջրի տակ։ Որտե՞ղ էի գտնվում ես։ Ո՞ւր էր ինձ հասցրել նավապետ Նեմոյի երևակայությունը։

Ես ուզում էի նրան հարցուփորձ անել։ Հնարավորություն չունենալով կանչելու, ես բռնեցի նրա թևից։ Սակայն նա օգորեց սաղավարտի մեջ գտնվող գլուխը և ձեռքով ցույց տվեց լեռան գագաթը, կարծես ասելով ինձ։

— Քայլիր առաջ, քայլիր առա՛ջ։

Հավաքելով վերջին ուժերս, ես հետևեցի նրան և մի քանի րոպեում բարձրացա լեռան գագաթը, որ քսան մետրի չափ բարձր էր ժայռոտ ղանգվածից։

Ես նայեցի այն լանջին, որով մենք բարձրացել էինք։ Այս կողմից սարը հովիտից բարձր էր ոչ ավելի, քան յոթ հարյուր կամ ութ հարյուր ոտնաչափ։ Սակայն հակադիր կողմի բարձրությունը կլիներ առնվազն հազար հինգ հարյուր ոտնաչափ։ Ես ապշած դիտում էի իմ առջև բացված վիթխարի, պայծառ լուսավորված հարթավայրը։ Մեզանից հիսուն ոտնաչափ դեպի ներքև գտնվում էր մի լայն խառնարան։ Լավայի հեղեղները հրեղեն ջրվեժների նման հոսում էին խառնարանի լանջից։

Այդ հրաբուխը, որպես վիթխարի մի ջահ, պայծառ լույսով լուսավորում էր ներքևում փռված հարթավայրը, որը տարածվել էր մինչև տեսանելի հորիզոնի վերջին սահմանը։

Հրաբուխը լավա էր ժայթքում, ոչ բոց, որովհետև բոցի համար հարկավոր է օդում եղած թթվածինը և կրակը չի կարող վառվել ջրի տակ։ Սակայն երկրի խորքերում շիկացած լավան, լցվելով ջրի մեջ, կարող է երկար ժամանակ և հաջողությամբ մաքառել ջրի հետ, գոլորշիացնել այն, մինչև որ ինքն էլ սառչի։ Բարեխառնությունների տարբերության հետևանքով առաջացած արագ հոսանքը մի կողմ էր տանում ջրի գոլորշին, իսկ հրեղեն լավայի հեղեղներն իջնում էին մինչև լեռան ստորոտը։

Իմ աչքերի առջև փռված էր մեռած քաղաքը, ավերակների կույտը փլված կտուրներով, քանդված պատերով, տաճարների շուռ եկած կամարներով, գետնին ընկած սյուներով։ Հեռվում, հարթավայրում երևում էին վիթխարի ջրմուղի ավերակները, ավելի մոտիկ, լեռան ստորոտում՝ վեհապանծ Ակրոպոլի մնացորդները, որի ձևերը մասամբ հիշեցնում էին Աթենքի Պարթենոնը։ Այնտեղ էին առափնյա փողոցի դեռևս մնացած առանձին մասերը, անտիկ նավակայանի անկյունները՝ չքացած մայր ցամաքի ափերում, որ իբրև ապաստան էր ծառայում առևտրական նավերի, ինչպես նաև ռազմանա-

վերի համար։ Ավելի հեռու երևում էին քանդված պատերի երկար գծերը՝ նախկին փողոցների հետքերը։

Այդ նոր Պոմպեյն էր, որ նավապետ Նեմոյի շնորհիվ հարություն առավ իմ աչքերի առաջ։

Որտե՞ղ էի գտնվում ես։ Ուզում էի այդ իմանալ ինչ կերպ էլ լինի։ Ես այդ մասին ուզում էի հարցնել նավապետ Նեմոյին, թեկուզ դրա համար հարկավոր լիներ հանել պղնձի սաղավարտը, որի մեջ գերի էր մնացել իմ գլուխը։

Սակայն նավապետ Նեմոն ինքը մոտեցավ ինձ։ Կռանալով ու վերցնելով մի կտոր կավիճ, նա մոտեցավ բազալտի սև ժայռին և մակագրեց միայն մի բառ.

ԱՏԼԱՆՏԻԴԱ։

Ուղեղիս միջով կարծես կայծակ անցավ։ Պլատոնի Ատլանտիդա՛ն, Ատլանտիդա՛ն, որի գոյությունը ժխտում էին՝ Օրիգենը, Պորֆիրիուսը, դ'Անվիլը, Մայլեբրենը, Հումբոդտը, կարծելով, որ այդ չքացած մայր ցամաքն ուրիշ բան չէ, բայց եթե մի գեղեցիկ առասպել։ Ատլանտիդան, որի գոյությունն ընդունում էին՝ Պլինիուսը, Ամիան, Մարցելլինը, Տերտուլիանոսը, Էնգելը, Շիրերը, Թուրնեֆորը, Բյուֆոնը, դ'Ավերդակը, այդ Ատլանտիդան փռված էր իմ աչքերի առաջ, պահպանելով իրեն վիճակված աղետի հետքերը։ Եվ այսպես, ահա թե ուր էր այդ ջրասույզ երկիրը, որի մասին գիտեին միայն այն, որ նա գտնվում է Եվրոպայից դուրս, Ասիայից ու Լիբիայից դուրս, Հերկուլեսյան սյուներից այն կողմ, և որ այդ երկրում բնակվում էր ատլանտների հզոր ցեղը, ատլանտներին, որոնց դեմ հնադարյան հույները ձեռնարկում էին իրենց առաջին պատերազմները։

Պլատոնի տարեգրություններում պահպանվել է այն հերոսական ժամանակվա մեծ գործերի նկարագրությունը։ Ահա թե Ատլանտիդայի մասին ինչ է ասված Տիմեոսի և Կրիտիասի խոսակցության մեջ.

Մի անգամ Սոլոնը զրույց էր անում Սաիսի մի քանի իմաստուն ծերունիների հետ։ Սաիսը քաղաք էր, որ դեռ այն ժամանակ ութ հարյուր տարվա անցյալ ուներ, իսկ այդ ապացուցվում էր նրա տաճարի սրբազան պատի վրա եղած փորագրություններով։ Այդ ծերունիներից մեկը Սոլոնին

պատմեց մի ուրիշ, Սախից ավելի հին քաղաքի պատմությունը։ Այդ քաղաքը, որ ինը դարի ընթացքում գոյություն է ունեցել, գրավվել և մասամբ ավերվել է ատլանտների ձեռքով։

— Ատլանտները,— պատմում էր ծերունին,— ապրում էին մի հսկայական ցամաքում, որ ավելի մեծ էր, քան Ասիան և Աֆրիկան միասին վերցրած, և գրավում էր հյուսիսային լայնության տասներկուերորդ և քառասուներորդ աստիճանների միջև ընկած տարածությունը։ Ատլանտների իշխանությունը տարածվում էր նույնիսկ Եգիպտոսի վրա։ Նրանք ուզում էին իրենց ենթարկել նաև Հելլադան, սակայն ստիպված եղան նահանջել քաջաբար դիմադրող հելլենների առաջ։

Սակայն տեղի ունեցավ աղետը՝ հեղեղումն ու երկրաշարժը։

Բավական էր մի օր և մի գիշեր, որ երկրի երեսից չքանար Ատլանտիդան, և միայն նրա ամենաբարձր գագաթները՝ Մադերան, Ազորյան կղզիները, Կանարյան կղզիները, Կանաչ հրվանդանի կղզիները մնացին օվկիանոսի մակերևույթին...

Ահա այն պատմական հիշողությունները, որ ուղեղիս մեջ արթնացրեց նավապետ Նեմոյի գրած բառը։ Այսպես ուրեմն, բախտն ինձ այսօր նետեց այդ չքացած ցամաքի լեռներից մեկի գագաթը, թույլ տվեց ձեռքով շոշափել բազմահազար տարիներ գոյություն ունեցած շենքերի ավերակները։ Ես քայլում էի այն հողի վրա, ուր քայլել էին երկրի առաջին բնակիչնե՛ը։ Իմ կոշիկները արճճապատ ներբաններին տակ շրխկում էին այն կենդանիների կմախքները, որոնք ամենահին, հեռավոր ժամանակներում ապրել էին այդ ծառերի հովանու տակ, ծառեր, որոնք արդեն հազարամյակների ընթացքում քնած էին քարե քնով։

Ա՛խ, ափսո՞ս, որ ես ժամանակ չունեի, թե չէ կիջնեի լեռան սեպ լանջով և ծայրեծար կանցնեի այդ հսկայական մայր ցամաքը, որ հավանորեն մի ժամանակ միացնում էր Աֆրիկան և Ամերիկան։ Ես կայցելեի նրա բոլոր քաղաքները, որոնք գոյություն են ունեցել ջրհեղեղից առաջ, կառուց-

վել էին հարյուրամյակներ ապրող հսկաների ձեռքով, որոնք այնպիսի վիթխարի ուժ են ունեցել, որ նրանց կառուցած շենքերը բազմահազար տարիներ դիմադրում են ջրի ավերիչ ներգործության... Գուցե կգա մի օր, երբ տեկտոնիկ պրոցեսը նորից ջրի երեսը կբարձրացնի ծովի հատակում թաղված այդ ավերակները։ Չէ՞ որ մեզ հայտնի են օվկիանոսի այդ մասում գործող մի ամբողջ շարք հրաբուխները։ Քիչ չեն այն ծովագնացները, որոնք նշել են այդ անհանգիստ ջրերում իրենց նավերը ցնցող ուժեղ երկրաշարժերը։ Ոմանք լսել են գայթացած տարերքի պայթարի խուլ աղմուկը, մյուսները՝ նկատել են ջրի վրա լողացող հրաբխային մոխիրն ու փոշին։ Մեր մոլորակի այդ ամբողջ մասը, մինչև հատակը, հրաբխային ուժեղ գործունեության բնագավառ է։ Ո՞վ գիտե, գուցե և իսկապես հեռավոր ապագայում լավայի շերտերը, որ հաճախակի ժայթքումների հետևանքով մեկմեկու վրա են կուտակվում, հրաբխային լեռների գագաթները նորից դուրս կբերեն օվկիանոսի երեսը։

Այն ժամանակ, երբ ես անձնատուր էի եղել այդ ցնորքներին, միաժամանակ աշխատելով հիշողության մեջ տպավորել այդ հոյակապ տեսարանի բոլոր մանրամասնությունները, նավապետ Նեմոն ինքնամոռացման մեջ, լուռ կանգնել էր ու հենվել ջրիմուռներով ծածկված այանը։ Արդյոք նա չքացած սերունդների մասի՞ն էր մտածում։ Արդյոք ինքն իրեն հարց տալի՞ս էր ապագա սերունդների բախտի մասին։ Թե՞ այդ տարօրինակ մարդը, որ առում էր ժամանակակից աշխարհը, այստեղ էր գալիս, որպեսզի ապրի հնադարյան մարդկանց կյանքով։ Ի՞նչ ասես չէի տա, որպեսզի իմանայի նրա մտքերը։

Մի ժամվա չափ մենք մնացինք այնտեղ, դիտելով ընդարձակ հարթավայրը, որ լավայի ժայթքող հեղեղներով լուսավորված էր այնպես պայծառ, ինչպես երկիրը լուսավորվում է արևով։ Լեռան լանջերը երբեմն ցնցվում էին դեռևի տակ լավայի եռալուց։ Ջրի միջից պարզ լսվում էր ահեղ ու վեհապանծ մի խուլ աղմուկ։

Այդ բոլոր լուսնի ճառագայթները թափանցեցին ջրի շերտերը և մի պահ լուսավորեցին ցամաքը։ Անկա-

բելի է խոսքերով արտահայտել այդ տեսարանի ցնցող տպավորությունը։ Նավապետ Նեմոն հանկարծ հեռացավ այնտեղից։ վերջին անգամ դիտեց անծայրածիր հարթավայրը և ապա ինձ նշան արեց, որպեսզի հետևեմ իրեն։

Մենք արագ իջանք սարից։ Հենց որ դուրս եկանք ածխացած անտառից, հեռվում ես տեսա «Նաուտիլուսի» լուսարձակը, որ շողշողում էր ասեղի նման։

Նավապետը քայլեց ուղիղ դեպի լուսարձակը։ Մենք վերադարձանք նավն այն ժամանակ, երբ արշալույսի առաջին ճառագայթները լուսավորեցին հորիզոնը։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՍՏՈՐՋՐՅԱ ԱԾԽԱՀԱՆՔՆԵՐ

Հետևյալ օրը, փետրվարի 20-ին, ես շատ ուշ արթնացա։ Գիշերային զբոսանքն այնպես էր հոգնեցրել ինձ, որ քնեցի մինչև ժամը տասնմեկը։ Ես արագ հագնվեցի և մտա սրահ։ Ես անհամբերությամբ ուզում էի իմանալ «Նաուտիլուսի» ընթացքի ուղղությունը։

Համապատասխան պարագաներն ինձ ցույց տվեցին, որ նավը շարունակում է ընթանալ դեպի հարավ, մեկ ժամում քսան մղոն արագությամբ և հաղար մետր խորությամբ։

Կոնսելը մտավ սրահ։ Ես նրան պատմեցի մեր գիշերային զբոսանքի մասին։ Այդ ժամանակ բացվեցին լուսամուտների փեղկերը, և նա կարողացավ տեսնել ջրասույզ ցամաքի մի մասը։

«Նաուտիլուսն» ընթանում էր Ատլանտիդայի «հողից» ընդամենը տասը մետր բարձրության վրա։ Նավը սլանում էր ինչպես օդապարիկ, որին երկրի վրայով տանում է քամին։ Սակայն ավելի ճիշտ կլիներ մեր տպավորությունները համեմատել ճեպընթաց գնացքի այն ճանապարհորդների տպավորությունների հետ, որոնք վագոնի լուսամուտից դիտում են իրենց առջևից անցնող տեսարանները։

Մենք տեսնում էինք ժայռերի, անտառների, թփուտների ֆանտաստիկ ուրվագծերը։ Դրանք բուսական աշխարհից դարձել էին հանքային աշխարհ։ Մենք տեսնում էինք քարակույտեր և շենքերի փլատակներ, որոնք ծածկված էին ասֆոտիանների, անեմոնների, ջրմուռների գորգերով. վերջապես, տեսնում էինք լավայի կոշտեր, որ ստորերկրյա կրակի գործունեության համր վկաներն էին։

Այն ժամանակ, երբ մենք տեսնում էինք այդ տարօրինակ պատկերները, որոնք լուսավորվում էին «Նաուտիլուսի» լուսարձակների ճառագայթներով, ես Կոնսելին պատմեցի առլանտների և Ատլանտիդայի մասին, որի գոյությունն այժմ բոլորովին անվիճելի էր ինձ համար։ Սակայն Կոնսելի ուշադրությունը կենտրոնացած էր ինչ-որ մի այլ բանի վրա. նա ինձ լսում էր առանց հետաքրքրության։ Շուտով ես հասկացա, թե ինչով է բացատրվում նրա անտարբերությունը դեպի պատմական այս մեծ առեղծվածը։ Հիրավի, մեր առջևից սլանում էին ձկները, իսկ երբ Կոնսելը ձկներ էր տեսնում, ամբողջ էությամբ անձնատուր էր լինում դասակարգման և մնացած ամբողջ աշխարհը նրան այլևս չէր հետաքրքրում։ Ինձ այլևս ոչինչ չէր մնում անել, քան դադարեցնել պատմությունս։

Սակայն Ատլանտյան օվկիանոսի ձկներն այնքան էլ չէին տարբերվում մյուս օվկիանոսներում մեր տեսած ձկներից։ Դրանք հսկայական կատվաձկներ էին, որոնք հինգ մետր երկարություն և մկանունքների այնպիսի ուժ ունեն, որ կարող են դուրս թռչել ջրից. շնաձկների զանազան տեսակները, որոնց թվում կանաչագույն և կապույտ երանգավորումով մի շնաձուկ, որ տասնհինգ ոտնաչափ երկարություն ունի և սուր, եռանկյունաձև ատամներ։ Շնորհիվ իր գույնի, որ նման է ծովի ջրի գույնին, նա գրեթե անտեսանելի է ալիքների մեջ։ Այստեղ կային նաև մուգ-դարչնագույն ձկներ. զուգավոր ձրկների ցեղից, թառափներ, որ նման էին Միջերկրական ծովում մեր տեսած թառափներին, ասղաձկներ՝ երկար ու փոքրաձև դնչով, բաց-կինամոնագույն մարմնով և մուգ-կինամոնագույն, լայնակի շերտերով։ Այս ձկները իսկական օձերի նման գալարվում էին ջրում։

Ոսկրաշատ ձկների թվում Կոնսելը նկատեց ծովային վիշապները, որոնք կոչվում են նաև ծովային կարիճներ և թունավոր ձկներ են համարվում։ Իսկապես, վիշապի մեջքի ու գլխի վրա գտնվող փշերն ունեն երկուական ակոսիկ. երբ փշերը խրվում են թշնամու մարմնի մեջ, թունավոր լորձունքն այդ ակոսիկներով լցվում է վերքի մեջ։ Վիշապների մեջքը կինամոնագույն է, որովայնը՝ սպիտակավուն, իսկ մարմնի մնացած մասերը՝ գորշ-կարմիր։ Վիշապի ամբողջ մարմինը ծածկված է թուխ, անորոշ բծերով։ Այնուհետև Կոնսելը տեսավ հիանալի ոսկեգույն մակրելներ՝ կապույտ երանգավորումով, գեղեցիկ թյունիկներ, լուսնաձկներ կամ լամպրեդներ, որոնք նման են սկավառակների և զարմանալի գեղեցիկ գույն ունեն. վերին կողմը կապույտ է, կողքերը՝ մանիշակագույն, որովայնը՝ վարդագույն, իսկ լողաթևերը՝ կորալլայինկարմիր գույնի։

Սակայն, նայելով ծովային կենդանիների այդ զանազան ներկայացուցիչներին, ես միևնույն ժամանակ զմայլվում էի Ատլանտիդայի հարթավայրերով։ Երբեմն ծովի հատակի քմահաճ անհարթությունը «Նաուտիլուսին» ստիպում էր շափահաճ վրել իր արագությունը։ Այդ դեպքում նավը իսկական ձկան ճարպկությամբ անցնում էր ստորջրյա նրբանցքներով։ Եթե բլուրների լաբիրինթոսն անանցանելի էր լինում, նավը, օդապարիկի պես բարձրանում էր ջրի վերին շերտերը, և ցատկելով խոչընդոտի վրայից, կրկին շարունակում էր իր արագ վազքը, մնալով հատակից մի քանի մետր բարձրության վրա։ Այս անգամ մեր ճանապարհորդությունը մի հաճելի զբոսանք էր և նման էր օդապարիկով կատարվող զբոսանքին, սակայն վերջինից տարբերվում էր նրանով, որ մեր «օդապարիկը» ենթարկվում էր ղեկավարի ձեռքի յուրաքանչյուր շարժմանը։

Կեսօրից հետո, ժամը մոտ չորսին, հետզհետե սկսեց փոխվել հատակը, որ ծածկված էր տիղմով և քարացած ոստերով։ Այնուհետև հատակը մեծ մասամբ քարքարոտ էր, ծածկված շեղջաքարով, հրաբխային տուֆով, սառած լավայով և օբսիդաքարով։ Ես մտածեցի, որ ըստ երևույթին հարթավայրը վերջանում է և այստեղից սկսվում են լեռնոտ վայրերը։

Արդարև, շուտով հարավում ես տեսա մի բարձր լեռնաշղթա, որ ըստ երևույթին բոլորովին անանցանելի էր, քանի որ լեռների գագաթները հավանորեն բարձր էին օվկիանոսի մակերևույթից։ Այդ կամ ցամաքի ափն էր, կամ մի որևէ կղզի, գուցե Կանաչ հրվանդանի կամ Կանարյան կղզիներից մեկի ափը։ Որովհետև վերջին օրերում աստղաբաշխական դիտողությունները չէին նշանակվում քարտեզի վրա, հնարավոր է, որ այդ դիտմամբ էր արվում, ես չէի պատկերացնում, թե մենք որտեղ ենք գտնվում։ Այսպես թե այնպես, ես կարծում էի, որ ատլանտների մայր ցամաքը վերջանում է այդ գրանիտե պարապով, իսկ մենք տեսանք մայր ցամաքի միայն մի փոքր մասը։

Ես իմ դիտողությունները շարունակեցի նաև գիշերը։ Կոնսելը գնաց իր սենյակում քնելու և ես սրահում մենակ մնացի։ Դանդաղեցնելով իր վազքը, «Նաուտիլուսը» լողում էր հազիվ երևացող զանգվածների վրա, երբեմն քիչ էր մնում դիպչեր նրանց, կարծես պատրաստվելով կանգ առնել, երբեմն էլ դուրս էր գալիս օվկիանոսի մակերևույթը։ Այդ բոպեներին ջրի բարակ շերտի միջից ես տեսնում էի մի քանի պայծառ համաստեղություններ և մասնավորապես այն հինգ կամ վեց աստղերը, որոնք փայլում են Օրիոնի ծայրում։

Ես դեռ երկար ժամեր կանգկացնեի լուսամուտի մոտ և կզմայլվեի ծովի ու երկնքի գեղեցկություններով, եթե հանկարծ փեղկերը չփակվեին։ Հենց այդ բոպեին «Նաուտիլուսը» մտնում էր ուղղաբերձ պարապին։ Թե նավն ինչպես էր անցնելու այնտեղից, ես այդ չէի կարողանում պատկերացնել։ Հարկավոր եղավ վերադառնալ սենյակս։ «Նաուտիլուսը» չէր շարժվում։ Ես քնեցի, հաստատ որոշելով շուտ վեր կենալ։

Սակայն հետևյալ առավոտը ես արթնացա միայն ժամը մոտ ութին։ Անմիջապես մտա սրահ։ Խտաչափը ցույց էր տալիս, որ «Նաուտիլուսը» լողում է օվկիանոսի վրայով։ Սակայն այդ մասին ես կարող էի գլխի ընկնել նաև տախտակամածից լսվող ոտնաձայներից։ Մյուս կողմից պետք է ասել, որ նավը բոլորովին չէր օրորվում, մի բան, որ անխուսափելի է օվկիանոսի վրա լողալու ժամանակ։

Ես մոտեցա դռնակին։ Դռնակը բաց էր։ Բայց ցերեկվա պայծառ լույսի փոխարեն, որ ես սպասում էի, ինձ շրջապատում էր թանձր խավարը։ Ո՞րտեղ էինք մենք։ Մի՞թե ես ամբողջ քսանչորս ժամ քնել էի և հիմա գիշեր էր։ Ոչ, երկնակամարում ոչ մի աստղ չէր փայլում և առհասարակ գիշերը երբեք այդչափ խավար չի լինում։

Ես չգիտի ինչպես հասկանալ այդ բոլորը։ Հանկարծ խավարից ինձ կանչեց մի ձայն։

— Այդ դո՞ւք եք, պարոն պրոֆեսոր։

— Այո՛, նավապետ Նեմո, որտե՞ղ ենք մենք գտնվում։

— Գետնի տակ, պարոն պրոֆեսոր։

— Գետնի տա՞կ,— գոչեցի ես,— և «Նաուտիլուսը» շարունակում է լողա՞լ։

— Նա միշտ լողում է։

— Բայց... ես ոչինչ չեմ հասկանում...

— Մի քանի րոպե համբերեցեք։ Հիմա լուսարձակը կվառվի և դուք ամեն ինչ կհասկանաք։

Ես նստեցի լուսարձակի աշտարակին և սկսեցի սպասել համբերությամբ։ Խավարն այնքան թանձր էր, որ ես չէի տեսնում նույնիսկ նավապետ Նեմոյին։ Սակայն, դեպի վեր նայելով, ես տեսա ինչ-որ աղոտ մի ցոլք, ինչ-որ կիսալույս, որ թափանցում էր մի կլոր անցքի միջով։ Այդ րոպեին վառվեց լուսարձակը, և կիսալույսը չքացավ նրա կուրացուցիչ լույսի մեջ։

Երբ աչքերս ընտելացան լույսին, ես սկսեցի դիտել շուրջս։

«Նաուտիլուսն» անշարժ կանգնած էր ծովափի մոտ, որ հիշեցնում էր մի որևէ նավահանգստի առափնյա մասը։ Ստորջրյա նավը գտնվում էր մի լճի վրա, որ բոլոր կողմերից շրջապատված էր քարե պատով։ Լճի շառավիղը հավասար էր մոտավորապես երկու մղոնի, հետևաբար շրջագիծը պետք է լիներ վեց մղոն։ Լճի մակարդակը նույն բարձրությունն ուներ, ինչ որ օվկիանոսի մակարդակը, քանի որ այդ լիճն անպայման պետք է միացած լիներ օվկիանոսին։ Ասենք դա հաստատվում էր նաև խտաչափի ցուցմունքներով։ Բարձր ժայռերը կախված էին լճի վրա և վերևում, հինգ հարյուր կամ վեց հարյուր մետր բարձրությամբ կազմում էին մի հսկայա-

կան գմբեթ։ Այդ գմբեթի ամենաբարձր կետում բացված էր հենց այն անցքը, որտեղից անցնում էր աղոտ լույսը, ըստ երևույթին արևի ճառագայթների ցոլքը։

Նախքան ես կսկսեի ուշադրությամբ դիտել այդ հսկայական քարանձավի ներսը, նույնիսկ նախքան կզբաղվեի այն հարցով, թե արդյոք բնակա՞ն էր այդ քարանձավը, թե՞ մարդկային ձեռքերով արհեստականորեն ստեղծված, մոտեցա նավապետ Նեմոյին և հարցրի.

— Որտե՞ղ ենք գտնվում։

— Հանգած հրաբուխի հենց կենտրոնում, որը ինչ-որ ստորերկրյա ցնցման շնորհիվ լցվել է ջրով,— պատասխանեց նավապետը։— Այն ժամանակ, երբ դուք քնած էիք, պարոն պրոֆեսոր, «Նաուտիլուսն» այս ծովալճակը մտավ մի բնական ջրանցքով, որ անցնում է օվկիանոսի մակերևույթից տասը մետր խորության տակ։ Սա «Նաուտիլուսի» նավահանգիստներից մեկն է, որ հաստատուն է, հուսալի, անհամեստ աչքերից հեռու և պաշտպանված է բոլոր կողմերի քամիներից։ Մեր մայր ցամաքներում և կղզիներում ցույց տվեք թեկուզ մի նավահանգիստ, որը կարողանար նալն այնպես հուսալի կերպով պաշտպանել փոթորկի կատաղությունից, ինչպես քարանձավը։

— Արդարև,— ասացի ես,— դուք այստեղ բոլորովին կերծ եք վտանգներից, նավապետ Նեմո։ Ի՞նչը կարող է ձեզ սպառնալ այստեղ, հանգած հրաբուխի ընդերքում։ Սակայն ասացեք, ինձ միայն թվա՞ց, թե՞ իրոք տեսա մի անցք քարանձավի կամարում։

— Այո, դա հրաբուխի երբեմնի խառնարանն է, որտեղից դուրս են ժայթքել լավան, ծծմբի գոլորշիները և բոցի այուները։ Իսկ այժմ այդ անցքը նրա համար է, որ իմ նավահանգըստին մատակարարի այն թարմ, կենարար օդը, որով մենք շնչում ենք։

— Սա ի՞նչ հրաբուխ է։

— Այս հրաբուխը գտնվում է օվկիանոսի այս մասի անհամար կղզիներից մեկի վրա։ Անցնող նավերի համար սա միայն ծովից դուրս ցցված մի ժայռ է, իսկ մեզ համար՝ աշխարհումս ամենաապահով նավահանգիստը։ Ես պատահ-

մամբ եմ հայտնաբերել այն և այդ պատահականությունը մեծ ծառայություն է մատուցել ինձ։

— Մի՞թե չի կարելի այստեղ իջնել խառնարանի անցքով։

— Այդ անկարելի է ճիշտ այնպես, ինչպես ինձ համար անկարելի է այստեղից բարձրանալ խառնարանը։ Մոտավորապես հարյուր ոտնաչափ դեպի վեր կարելի է բարձրանալ պատերի վրայով, իսկ ավելի վերև պատերը թեքվում են ու կամար կազմում, այնպես որ այլևս բարձրանալ բոլորովին անկարելի է։

— Ես տեսնում եմ, նավապետ, որ բնությունն ամենուրեք օգնության է գալիս ձեզ։ Այս ստորերկրյա լճում դուք ապահով եք ամեն մի վտանգից և ոչ ոքի անհամեստ այցելությունը չի վախեցնի ձեզ։ Սակայն ձեր ինչի՞ն է պետք այս ապաստարանը։ Չէ՞ որ «Նաուտիլուսը» նավահանգստի կարիք չի զգում։

— Ոչ, պարոն պրոֆեսոր, բայց «Նաուտիլուսին» հարկավոր է էլեկտրականություն, որ շարժվի, մարտկոցներ, որ էլեկտրական էներգիա արտադրվի, նատրիում, որ սնվեն այդ մարտկոցները, ածուխ, որ նատրիում ստացվի, հանքեր, որ քարածուխ հանվի։ Այստեղ ծովը կլանել է ամբողջ անտառներ, որոնք աճել են երկրաբանական անհիշելի ժամանակներում, քարացել են, դարձել քարածուխ և ինձ համար հանդիսանում են վառելիքի անսպառ պահեստ։

— Հետևաբար ձեր նավաստիներն այստեղ հանքափորնե՞ր են դառնում։

— Միանգամայն ճիշտ է։ Այս հանքերը գտնվում են ջրի տակ, ինչպես և Նյուքեսթլի ածխահորերը։ Զրահազգեստներ հագած, քլունգը և բահը ձեռքերին, իմ նավաստիներն այստեղ ածուխ են հանում, ազատելով ինձ այդ ածուխը ցամաքի հանքերից ստանալու անհրաժեշտությունից։ Երբ ես նատրիում ստանալու համար վառում եմ քարածուխը, խառնարանից բարձրացող ծուխն այս սարին գործող հրաբուխի տեսք է տալիս։

— Արդյոք ես կտեսնե՞մ, թե ձեր նավաստիներն ինչպես են ածուխ հանում։

— Ոչ, այս անգամ չեք տեսնի, որովհետև ես շտապում եմ շարունակել մեր ստորջրյա աշխարհաշուրջ ճանապարհորդությունը։ Ես կսահմանափակվեմ նրանով, որ կվերցնեմ այստեղ պահված պատրաստի նատրիումի պաշարը։ Հենց որ մենք վերցնենք այդ պաշարը, այսինքն ոչ ուշ, քան մեկ օր հետո, դարձյալ ճանապարհ կբկնենք։ Այս պատճառով, եթե դուք ուզում եք ծանոթանալ այս քարանձավի հետ և պտտել ծովային լճի շուրջը, ապա օգտվեցեք այստեղ մեր կանգառնելուց, պարոն պրոֆեսոր։

Շնորհակալություն հայտնելով նավապետին, ես գնացի վերցնելու ընկերներիս, որոնք դեռ դուրս չէին եկել իրենց սենյակից։ Ես նրանց առաջարկեցի հետևել ինձ, առանց ասելու, թե որտեղ ենք գտնվում։

Նրանք բարձրացան տախտակամած։ Կոնսելը, որ սովորաբար ոչնչի վրա չէր զարմանում, միանգամայն բնական գտավ, որ քնել էր ջրի տակ և արթնացել ստորերկրյա վայրում։ Ինչ վերաբերում է Նեդ Լենդին, նա հետաքրքրվեց միայն մի բանով՝ արդյոք չի՞ կարելի որևէ ելք գտնել այս քարանձավից դուրս գալու համար։

Նախաճաշից հետո, առավոտյան ժամը մոտ տասին մենք իջանք ափը։

— Ահա մենք կրկին ցամաքի վրա ենք,— ասաց Կոնսելը։

— Սա ի՞նչ ցամաք է որ,— առարկեց կանադացին,— բացի դրանից, մենք ոչ թե ցամաքի վրա ենք, այլ ցամաքի տակ։

Լճի և քարանձավի պատի միջև գտնվում էր ավազոտ եզերքը, որի ամենալայն տեղը կլիներ հինգ հարյուր ոտնաչափից ոչ ավելի։ Այդ ավազոտ եզերքով հեշտությամբ կարելի էր պտտել ամբողջ լճի շուրջը։

Քարանձավի պատի ստորոտում քառասային վիճակում թափված էին հրաբխային կոշտեր, ժայռերի փլվածքներ և պեմզայի հսկայական կտորներ։

Ստորերկրյա կրակից հալված և ապա սառած այդ քարերը գույնզգույն փայլ էին արձակում «Նautիլուսի» լուսարձակի լույսի տակ։ Փայլարի փոշին, որ բարձրանում էր մեր քայլե-

րից, անթիվ ու անհամար լուսատիկների ձևով թռչում էր դեպի բոլոր կողմերը։

Լճի եզերքը բարձրանում էր աստիճանաձև, հիշեցնելով ամֆիթատրոնի աստիճանները, սակայն մենք քայլում էինք մեծ զգուշությամբ, որովհետև քարերը ոչնչով կպած չէին մեկ-մեկու և շարժվում էին մեր ոտների տակ։

Այդ վիթխարի քարանձավի հրաբխային ծագումը հաստատվում էր ուղղակի ամեն մի քայլափոխում։

Ես դրա վրա հրավիրեցի իմ ուղեկիցների ուշադրությունը։

— Արդյոք դուք պատկերացնո՞ւմ եք, թե այս քարանձավի ներսն ինչպիսի տեսք ուներ այն ժամանակ, երբ լիքն էր եռացող լավայով, երբ այդ հրեղեն հեղուկի մակարդակը հասնում էր մինչև լեռան խառնարանը, ինչպես հալված մետաղը՝ հնոցում։

— Շատ լավ եմ պատկերացնում այդ,— պատասխանեց Կոնսելը,— սակայն արդյոք պարոնը չի՞ ասի մեզ, թե ինչու է դադարել հալման պրոցեսը և ինչպես է պատահել, որ հրաբուխի շիկացած խառնարանում այժմ հանգիստ ծփում է ջուրը։

— Ամենից հավանականն այն է, Կոնսել,— ասացի ես,— որ դրության այդ փոփոխությունը տեղի է ունեցել երկրաշարժի ազդեցության տակ, որի հետևանքով լեռան լանջում առաջացել է ճեղքվածք, հենց այն ճեղքվածքը, որի միջով «Նաուտիլուսն» անցավ այս քարանձավը։ Նույն ճեղքվածքի միջով Ատլանտյան օվկիանոսի ջուրը հոսել է հրաբուխի կենտրոնական տեղը։ Այստեղ կրակի ու ջրի միջև պետք է որ տեղի ունեցած սարսափելի գոտեմարտ, որը վերջացավ ջրի հաղթությամբ։ Այն ժամանակից երևի շատ դարեր են անցել, և հեղեղված հրաբուխը դարձել է ստորերկրյա խաղաղ լիճ։

— Հրաշալի,— հայտարարեց Նեդ Լենդը,— ես ընդունում եմ ձեր բացատրությունը, բայց անկեղծորեն ցավում եմ, որ այդ անցքը, որի մասին քիչ առաջ դուք խոսում էիք, պարոն պրոֆեսոր, գտնվում է ծովի մակերևույթից ցածր և ոչ թե բարձր։ Մեզ համար ձեռնտու է, եթե հակառակը լիներ։

— Դուք մոռանում եք Նեդ,— առարկեց Կոնսելը,— որ եթե այս ջրանցքը ստորերկրյա չլիներ, «Նաուտիլուսը» չէր

կարողանա մտնել այստեղ, և այդ դեպքում ջրանցքից մենք ոչ մի օգուտ չէինք ունենա։

— Էլ չխոսելով այն մասին, որ այդ դեպքում հրաբուխն էլ գործելիս կլիներ,— ավելացրի ես,— ձեր ափսոսանքն իզուր է, Նեդ Լենդ։

Մենք շարունակում էինք բարձրանալ։ Արահետը դառնում էր ավելի զառիթափ և նեղ։ Խորը ճեղքվածքները խոչընդոտ էին հանդիսանում մեր ճանապարհին, և մենք ստիպված էինք թռչել դրանց վրայով։

Երբեմն արահետի վրա փլված էր լինում որևէ ուղղաբերձ ժայռի մի մասը, և մենք փոխում էինք մեր ճանապարհը, անցնում փորի վրա սողալով, շրջելով։ Սակայն Կոնսելի ճարպկության և Նեդ Լենդի ուժի շնորհիվ մենք հաղթահարում էինք բոլոր խոչընդոտները։

Մոտավորապես երեսուն մետր բարձրության վրա հողի բնույթը փոխվեց, բայց քայլելու համար այն դարձյալ անհարմար էր։ Այստեղ փրփրաքարերը և հրաբխային շեղջաքարերը փոխվեցին սև բազալտի, որ մերթ փռված էր հարթ մակերևույթով և մի քիչ խորդուբորդ էր լավայի սառած կտորների շնորհիվ, մերթ բարձրանում էր կանոնավոր պրիզմաների ձևով, որ պահում էին այնտեղ ցածր կախված կամարը որպես բնական սյուներ, բնության ճարտարապետական արվեստի սքանչելի նմուշներ։ Բազալտե ժայռերի միջև օձանում էին լավայի սառած հոսանքները, որոնց վրա գտնվում էին կուպրային հերձաքարերի շերտերը և ծծմբի լայն, անկանոն ձևի մակահոսումները։ Յերեկվա լույսի համատարած և գունատ ճառագայթները, որ այստեղ թափանցում էին խառնարանի անցքից, դժգույն լուսավորում էին այդ ժայթքած հանքանյութերը, որոնք առմիշտ թաղված էին հանգած հրաբուխի ընդերքում։

Մոտ երկու հարյուր հիսուն ոտնաչափ բարձրության վրա մեր վերելքի շարունակմանը խանգարեց անհաղթահարելի մի խոչընդոտ. այնտեղ քարանձավի պատերը շատ էին թեքված դեպի ներս, այնպես որ, հարկավոր եղավ հրաժարվել ավելի վեր բարձրանալուց, և մենք շարժվեցինք ցածր կախված կամարի երկարությամբ։

Այստեղ բուսական թագավորությունը դեռ իր գենքը վայր չէր դրել մեռյալ բնության թագավորության առջև։ Մի քանի թփեր և նույնիսկ մենավոր ծառեր աճել էին քարերի արանքներում կամ արմատներ էին գցել պատերի ճեղքվածքներում ու խորշերում։

Այստեղ ես տեսա սինձի թփեր, որոնք արտադրում են իրենց կծու հյութը, մի քանի վտիտ, բուրմունքից զուրկ հելիոտրոպներ, որոնք, ի դեպ ասած, բոլորովին չեն արդարացնում հունական այդ անունը, որ նշանակում է արևաբույս, քանի որ արևի ճառագայթները երբեք չէին հասնում նրանց։ Ոսկեծաղիկներն աճել էին հիվանդատ տեսք ունեցող հելլենների տակ։ Վերջապես, լավայի սառած հոսանքների միջև ծաղկել էին մանուշակները, որոնք այստեղ ևս պահպանել էին իրենց քնքուշ բուրմունքը, որը, խոստովանում եմ, ես շնչում էի մեծագույն հաճույքով։ Բուրմունքը ծաղկի հոգին է, իսկ ծովային ծաղիկները, արտաքուստ այնքա՛ն գեղեցիկ այդ ջրաբույսերը հոգի չունեն...

Մենք մոտեցանք մի խումբ վիշապածառերի, որոնք ուժեղ արմատներ էին գցել ժայռերի միջև։ Հանկարծ Նեդ Լենդը բացականչեց.

— Նայեցեք, նայեցեք, փեթակը։

— Փեթա՞կ,— անվստահությամբ կրկնեցի ես,— չի կարող պատահել։

— Հապա նայեցե՛ք,— պնդում էր կանադացին,— իսկական փեթակ է իսկական մեղուներով։

Ես ավելի մոտեցա։ Ծառերից մեկի փչակում իսկապես որ տեղավորված էր մեղվանոցը, որտեղ բզզում էին այդ ջանասեր և հնարագետ, թվով մի քանի հազար միջատները, որ այնքան շատ են Կանարյան կղզիներում։

Միանգամայն բնական է, որ կանադացին անմիջապես ցանկացավ մեղրի պաշար վերցնել և բացի նրան օգնելուց, ինձ ուրիշ ոչինչ չէր մնում անել։

Մենք շոր տերևներ հավաքեցինք, սրանց ծծումը խառնեցինք և այդ խառնուրդը վառեցինք Նեդ Լենդի հրահանի միջոցով։

Մեղուներն արագությամբ հեռացան ծխից, և երբ հեռվում

լռեց նրանց բզզոցը, նեղ լենդն իր ճանապարհորդական պայուսակը լցրեց մի քանի կիլոգրամ հրաշալի ու թարմ մեղրով։

— Ես այս մեղրը կխառնեմ հացենուց ստացվող ալյուրի հետ և ձեզ համար այնպիսի գաթա կպատրաստեմ, որ մատներդ հետը կուտեք,— հայտարարեց կանադացին։

— Ինչպե՞ս թե գաթա,— առարկեց Կոնսելը,— դա ուղղակի կլինի մեղրով կարկանդակ։

— Թող լինի մեղրով կարկանդակ,— միջամտեցի ես,— շարժե վիճել։ Ավելի լավ է եկեք շարունակենք մեր հետաքրքիր զբոսանքը։

Այն արահետի մի քանի կետերից, որով մենք գնում էինք, երևում էր ամբողջ լիճը։ «Նաուտիլուսի» լուսարձակը պայծառ լուսավորում էր լիճը, որի հայելանման մակերևույթի անդորրությունը չէին խախտում ոչ ալիքները, ոչ էլ քամու շունչը։ «Նաուտիլուսը» բոլորովին անշարժ էր։ Նավի տախտակամածի վրա և եղերքում վխտում էին նավաստիները, որոնց սև կերպարանքները պարզ ուրվագծվում էին լուսարձակի պայծառ լույսի տակ։

Այդ ժամանակ մենք հասանք քարանձավի շուրջը եղած ժայռերի ամենաբարձր մասերի տեղը։ Ես համոզվեցի, որ այդ հանգած հրաբուխի ներսում մեղուները կենդանական աշխարհի միակ ներկայացուցիչները չէին։

Մի քանի գիշակեր թռչուններ ճախրում էին օդում, կամ նստած էին իրենց բներում, որոնք գտնվում էին ժայռերի ցցվածքներին, անմատչելի տեղերում։ Դրանք սպիտակ կուրծք ունեցող բազեներ և աղմկարար ուրուրներ էին։

Ուղղաբերձ լանջի վրա ետ ու առաջ էին սլանում հրաշալի և չաղ արոսները։ Դժվար չէ պատկերացնել, թե կանադացին ինչպիսի ագահությամբ էր նայում համեղ միս ունեցող այդ կենդանիներին և որքան էր ցավում, որ հրացանը չի վերցրել։ Նա փորձեց արճիճը փոխարինել քարերով և բազմաթիվ անհաջող փորձերից հետո կարողացավ խփել մի խոշոր արոս։ Առանց չափազանցության կարելի է ասել, որ կանադացու կյանքը մի քան անգամ մահից էր կախված լինում, մինչև որ նա բռնեց վիրավորված թռչունը։ Ինչևիցե, այդ թռչունը

բարեհաջող կերպով տեղ գտավ կանգացու ճանապարհորդական պայուսակում, մեղրի հետ միասին։

Շուտով մենք սահեցված եղանք ափ իջնել, որովհետև այլևս անկարելի էր անցնել ժայռերը։ Մեր վերևում երևում էր խառնարանի անցքը, որ ներքևից ջրհորի լայն բացվածք էր թվում։ Այնտեղ, ուր մենք գտնվում էինք, կարելի էր տեսնել կապույտ երկնքի մի կտոր և ամպերը, որոնց տանում էր արևմտյան հով քամին։ Ամպերը երբեմն կանգ էին առնում խառնարանի վերևում, այնպես որ կարծես խառնարանից մշուշանման ծուխ էր դուրս գալիս։ Այստեղից կարելի էր վստահությամբ հանգել այն եզրակացության, որ ամպերն այնքան էլ բարձր չեն, քանի որ լեռան գագաթը օվկիանոսի մակերևույթից բարձր էր ոչ ավելի, քան ութ հարյուր ոտնաչափ։

Լճի ավազոտ ափը վերադառնալուց հետո ես սկսեցի ծանոթանալ բուսական ու կենդանական աշխարհի հետ։ Առաջինի ներկայացուցիչը գորգի նման փռված սամիթն էր, հովանոցավոր փոքրիկ մի բույս, որ հրաշալի համեմունք է կերակրի համար։ Կոնսելը դրանից մի քանի փունջ հավաքեց։ Ինչ վերաբերում է կենդանական աշխարհին, այստեղ կային հազարավոր բազմատեսակ խեցգետիններ, խաչփառներ, օմարներ և բոլոր տեսակի ու մեծության կակղամորթներ։

Այստեղ մենք գտանք մի հիանալի քարանձավ, որի հատակին փափուկ ավազի մի հաստ շերտ էր փռված։ Ժայռերի վրա մագլցելուց հոգնած՝ ես ու իմ ընկերները հաճույքով մեկնվեցինք ավազի վրա։ Ստորերկրյա կրակը հղկել էր քարանձավի պատերը և սրանց վրա թողել փայլարի փոշի, որ փայլում էր ադամանդի պես։

Նեդ Լենդը սկսեց թխկթխկացնել պատերը, ցանկանալով իմանալ դրանց հաստությունը։ Տեսնելով նրա այդ իզուր ջանքերը, ես չկարողացա զսպել ժպիտս։ Խոսակցությունն իհարկե նորից պտտվում էր փախչելու շուրջը։ Ես հարկավոր համարեցի հույս տալ Նեդ Լենդին և ասացի նրան, թե նավապետ Նեմոն դեպի հարավ է ուղևորվել միայն նատրիումի պաշարը լրացնելու համար և այդ անելուց հետո նա անշուշտ կրկին կդառնա դեպի հյուսիս, դեպի եվրոպական ու ամե-

րիկյան ափերը։ Այդ դեպքում կանադացին կարող է մեծ հաջողությամբ կրկնել փախչելու փորձը։

Մենք արդեն մոտ մի ժամ էինք անցկացրել գեղեցիկ քարանձավում։ Մեր զրույցը, որ սկզբում շատ աշխույժ էր, հիմա գրեթե դադարեց։ Մեզ տիրեց ինչ-որ քնկոտ վիճակ։ Կարիք չզգալով շտապել դեպի նավը, ես անձնատուր եղա քնին։ Երազում տեսա, չէ՞ որ երազները լինում են մեր կամքից ու ցանկությունից անկախ, որ ես վարում եմ ամենահասարակ կակղամորթի բուսական կյանք և իմ երկփեղկ խեցին գտնվում է այդ քարանձավում։ Կոնսելի ձայնը հանկարծ զարթեցրեց ինձ։

— Վե՛ր կացեք, շուտ վեր կացեք,— գոչում էր նա։

— Ի՞նչ է պատահել,— հարցրի ես, նստելով ավազի վրա։

— Այստեղ ջուր է լցվում։

Ես վայրկենապես ոտքի ելա։ Ծովի ջուրն առատությամբ լցվում էր մեր քարանձավը, և քանի որ մենք կակղամորթներ չէինք, անհրաժեշտ էր ազատվել։

Մի քանի րոպեում մենք բարձրացանք քարանձավի կատարը, որտեղ ջուրը չէր կարող հասնել։

— Ի՞նչ է կատարվում այստեղ,— հարցրեց Կոնսելը,— բնության որևէ նոր հրա՞շք։

— Ոչ, բարեկամս,— պատասխանեցի ես,— սա ուղղակի մակընթացություն է, սովորական մակընթացություն, որ քիչ մնաց ծածկեր մեզ, ինչպես Վալտեր Սկոտի վեպի հերոսներին։ Մակընթացության այս ժամին, քարանձավից դենը բարձրացավ ջրի մակերևույթը, և այն անդրդվելի օրենքի հետևանքով, որ իրար միացած երկու անոթներում հեղուկի մակարդակը հավասար է լինում, բարձրացավ նաև լճի ջուրը։ Մենք կարող ենք շնորհակալ լինել, որ միայն մի քիչ թրջվեցինք։ Իսկ այժմ վերադառնանք «Նաուտիլուս»։ Պետք է փոխել հագուստները։

Երեք քառորդ ժամից հետո, պտտվելով լճի շուրջը, մենք մոտեցանք «Նաուտիլուսին»։

Նավաստիներն ավարտում էին նատրիումի բեռնումը և «Նաուտիլուսը» կարող էր իսկույն շարունակել իր ճանապարհը։

Սակայն նավապետ Նեմոն մեկնելու հրաման չէր տալիս։ Արդյոք նա ուզում էր սպասել զիշերվա՞ն, որպեսզի աննկատելի դուրս գա ստորջրյա անցքից։ Միանգամայն հնարավոր է։

Հետևյալ առավոտ «Նաուտիլուսն» արդեն դուրս էր եկել իր գաղտնի նավահանգստից և լողում էր ցամաքից հեռու, Ատլանտյան օվկիանոսի մակերևույթից մի քանի մետր ցած։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՍԱՐԳԱՍՅԱՆ ԾՈՎԸ

Սակայն «Նաուտիլուսը» շարունակում էր հեռանալ Եվրոպայից։ Ստիպված էինք ժամանակավորապես հրաժարվել եվրոպական ափերը դիտելուց։ Նավապետ Նեմոն ուղղությունը պահում էր դեպի հարավ։ Ո՞ւր էր տանում նա իր նավը։ Ես չէի կարողանում այդ հասկանալ։

Այդ օրը «Նաուտիլուսը» լողում էր Ատլանտյան օվկիանոսի մի շատ հետաքրքիր մասում։ Բոլորին հայտնի է Գոլֆստրիմի՝ օվկիանոսային այդ տաք հոսանքի գոյությունը։ Ֆլորիդայի ափերից դա ուղղվում է դեպի Շպիցբերգեն։ Սակայն նախքան Մեքսիկայի ծոցը հասնելը, հյուսիսային լայնության քառասունչորսերորդ աստիճանի մոտ այդ հոսանքը բաժանվում է երկու մասի։ Սրանցից մեծն անցնում է Իռլանդիայի ու Նորվեգիայի ափերի մոտից, մինչդեռ փոքր հոսանքը դառնում է դեպի հարավ, դեպի Ազորյան կղզիները, հետո թեքվում է դեպի Աֆրիկայի ափերը և լայն կիսապտույտ գործելով, վերադառնում է դեպի Անթիլյան կղզիները։

Այս երկրորդ մասը, ավելի ճիշտ կլիներ ասել օղակը, տաք ջրի շերտով շրջապատում է Ատլանտյան օվկիանոսի այն մասը, որ կոչվում է Սարգասյան ծով և որը սառն է, անդորր ու հանգիստ։ Այսպիսով Սարգասյան ծովը մի իսկական լիճ է Ատլանտյան օվկիանոսում։ Այդ ծովի մեծությունն այնքան է, որ Գոլֆստրիմը նրա շուրջը պտտվում է երեք տարում։

Ճիշտն ասած, Սարգասյան ծովը տարածվում է Ատլանտիդայի այն ամբողջ մասի վրա, որ ջրասույզ է եղել։ Մի քանի հեղինակներ նույնիսկ այն կարծիքն էին հայտնում, թե ծովի վրա լողացող խոտերն աճել են այդ չքացած մայր ցամաքի տափաստաններում։ Սակայն այդ ենթադրությունն այնքան էլ հավանական չէ։ Ամենից հավանականն այն է, որ նույն Գոլֆստրիմն այդ ջրիմուռներն ու խոտերը Եվրոպայի ու Ամերիկայի ափերից բերում է Սարգասյան ծովը։

Այդ և մի շարք ուրիշ հանգամանքներ ստիպել են Կոլումբոսին ենթադրել, որ գոյություն ունի Նոր Աշխարհը։ Երբ այդ խիզախ հետազոտիչն անցնում էր Սարգասյան ծովից ջրիմուռներն ու խոտերը դանդաղեցնում էին նրա նավերի ընթացքը, մեծ երկյուղ պատճառելով նավորդներին, և այստեղ ճանապարհորդությունն ամբողջ երեք շաբաթ տևեց։

Ահա ինչպիսին էր այդ ծովը, ուր այժմ գտնվում էր «նաուտիլուսը»։ Այդ մի իսկական մարգագետին էր, ջրիմուռների գորգով ծածկված, այնքան խիտ, այնքան ամուր, որ նավի առջևի ծայրը դժվարությամբ էր ճեղքում այն։ Այս պատճառով նավապետ Նեմոն, շղանկանալով այդ անանցանելի տեղերում մեքենայի չարդվելու կամ վնասվելու վտանգին ենթարկվել, Սարգասյան ծովն անցնելիս նավը շարունակ պահում էր մի քանի տասնյակ մետր ջրի տակ։

«Սարգասյան ծով» անունը ծագում է իսպանական «sargazo» բառից, որ նշանակում է ջրիմուռ։ Ջրիմուռները, գլխավորապես լողացող ջրիմուռները, կազմում են այդ հսկայական ավազանի բուսեղեն ծածկոցը։ Թե ինչու ջրիմուռներն այդչափ քանակությամբ հավաքվել են Ատլանտյան օվկիանոսի այդ խաղաղ անկյունում, այդ մասին բացատրություն է տալիս Մորին։ «Երկրագնդի ֆիզիկական աշխարհագրության» հեղինակը։

«Այդ երևույթի բացատրությունը,— ասում է նա իր գրքում,— բխում է հանրահայտնի փորձից։ Եթե մի բաժակ ջրում տեղավորենք խցանի կտորներ, փոքրիկ տաշեղներ կամ այլ թեթև մարմիններ, ապա պտտենք բաժակը, շուտով կարելի կլինի նկատել, թե ինչպես առանձին-առանձին կտորները հավաքվում են բաժակի կենտրոնում, այսինքն՝ ամենից

քիչ շարժվող տեղում։ Մեզ հետաքրքրող հարցի նկատմամբ բաժակի տեղ է ծառայում Ատլանտյան օվկիանոսը, Գոլֆստրիմը շրջապտույտ հոսանքն է, իսկ Սարգասյան ծովը բաժակի կենտրոնական կետը, ուր հավաքվում են բոլոր թեթև մարմինները»։

Ես միանգամայն համաձայն եմ Մորիի բացատրության հետ։ Ինձ հաջողվել է այդ երևույթն ուսումնասիրել ջրի տակ, այսինքն՝ այնպիսի պայմաններում, որոնք անմատչելի են մյուս գիտնականներին։ Մեր նավի վերևում լողում էին բազմատեսակ առարկաներ, որոնք պատած էին կինամոնագույն ջրիմուռներով, ծառաբներ, որ փոթորիկը պոկել էր Անդերում ու ծայռոտ լեռներում, իսկ Ամազոնի կամ Միսսիսիպիի հոսանքը քշել-բերել էր օվկիանոս. խորտակված նավերի բազմաթիվ կտորներ՝ կայմասարքեր, ողնուցներ, նավի արտաքին մասեր, որոնք այնքան էին ծանրացել իրենց կպած խեցիների շերտից, որ չէին ելնում ջրի երեսը։

Ես չեմ կասկածում, որ ժամանակի ընթացքում կհաստատվի Մորիի մի այլ կարծիքը, թե այդ բոլոր նյութերը, որոնք երկարուձիգ դարերի ընթացքում կուտակվում են Սարգասյան ծովում, ջրի ներգործությամբ վերածվում են հանքանյութերի և դառնում քարածուխի անսպառ պաշար։ Դրանք կլինեն վառելիքի պահեստներ, որ կանխատես բնությունը պատրաստում է օգտագործելու այն ժամանակ, երբ մարդը սպառի ցամաքում գտնվող ամբողջ ածուխը։

Խոտերի ու ջրիմուռների այդ քաոսում ես նկատեցի ակտինիաներ, որոնց վրա ծածանվում էր նուրբ շոշափուկներից բաղկացած փարթամ պսակը, բազմաթիվ կանաչ, կարմիր, կապույտ մեդուզաներ, սրանց թվում նաև Կյուվեի մեդուզան՝ կապտավուն հովհար, որ եզերված էր մանիշակագույն բոլորքով։

Փետրվարի 22-ի ամբողջ օրը մենք անցկացրինք Սարգասյան ծովի խորքերում, որտեղ ծովային խոտերով անվող ձկներն առատ կերակուր են գտնում։ Սակայն հետևյալ օրն օվկիանոսն արդեն ընդունեց իր սովորական տեսքը։

Հետևյալ տասնինը օրերում, փետրվարի 23-ից մինչև մարտի 12-ը, «Նաուտիլուսն» օրական անցնում էր չորս հար-

յուր կիլոմետր, ընթանալով դարձյալ դեպի հարավ։ Նավապետ Նեմոն ըստ երևույթին անշեղորեն իրագործում էր ջրի տակ աշխարհաշուրջ ճանապարհորդություն կատարելու իր պլանը, և ես չէի կասկածում, որ անցնելով Հորն հրվանդանը, «Նաուտիլուսը» կվերադառնա խաղաղ օվկիանոսի հարավային մասը։

Այսպես ուրեմն, իզուր չէր Նեդ Լենդի երկյուղը։ Ջրային այս անծայրածիր անապատներում, ուր հազվագյուտ են կղզիները, փախչելու մասին երազել անգամ չէր կարելի։

Սակայն մյուս կողմից մենք ոչ մի հնարավորություն չունեինք խանգարելու նավապետ Նեմոյի պլանի իրագործումը։

Միակ բանը, որ մեզ մնում էր անել, այդ այն էր, որ պետք է հնազանդվեինք մեր բախտին։

Բայց եթե խորամանկությամբ կամ բռնությամբ ազատություն ձեռք բերելու ճանապարհը փակված էր մեզ համար, ապա կարելի էր այդ անել համոզելու միջոցով։ Ես հույս ունեի, որ աշխարհաշուրջ ճանապարհորդությունը վերջանալուց հետո ինձ կհաջողվի համոզել նավապետ Նեմոյին, որ մեզ ազատ թողնի, իսկ մենք կերդվենք երբեք չհրապարակել նրա գաղտնիքը։ Մենք այդ պատվո պարտականությունը կկատարեինք, և նրա գաղտնիքը կմեռներ մեզ հետ միասին։ Սակայն դեռևս պետք էր պարզել, թե նավապետ Նեմոն ինչպե՞ս կվերաբերվի դեպի այդ առաջարկը։ Չէ՞ որ հենց սկզբից նա վրճռականորեն հայտարարել էր, թե իր գաղտնիքը պահպանելու համար նա ընդմիշտ մեզ գերի է պահելու «Նաուտիլուսում»։ Այն հանդամանքը, որ ես շորս ամսվա ընթացքում երբեք չվերադարձա այդ հարցին, նա կարող էր համարել իբրև լռելյայն համաձայնություն իրերի այդպիսի դրության հետ։ Հիմա այդ մասին խոսակցություն բանալ նրա հետ, նշանակում էր նրա մեջ առաջ բերել կասկած, որը կարող էր խանգարել մեր փախչելու ծրագիրը, եթե ժամանակի ընթացքում փախչելու համար կրկին հարմար առիթ գտնվեր։

Այս բոլոր փաստարկումներն ու նկատառումները պաշարել էին ինձ։ Ես այդ մասին խոսեցի Կոնսելի հետ, որը ոչ պակաս շփոթության մեջ ընկավ, քան ես ինքս։ Ընդհանրապես թեև ես հեշտությամբ չեմ ենթարկվում հուսալքման,

բայց հասկանում էի, որ օրը օրին պակասում են երբևէ մարդկային հասարակություն վերադառնալու մեր հնարավորությունները, պակասում են հատկապես հիմա, երբ նավապետ Նեմոն խելահեղ համառությամբ նավը տանում է Ատլանտյան օվկիանոսի հարավային կողմերը։

Տասնինն օրվա ընթացքում մեր ճանապարհորդությունն աչքի չընկավ որևէ նշանավոր երևույթով։

Ես ուշ-ուշ էի տեսնվում նավապետ Նեմոյի հետ։ Նա շատ էր աշխատում։ Ես հաճախ գրադարանում գտնում էի բացված գրքեր, որ թողնում էր նա, գլխավորապես բնապատմության վերաբերյալ։ Ծովի հատակի գաղտնիքներին նվիրված իմ գրքի լուսանցքներում նա բազմաթիվ նշումներ էր անում, որոնք հաճախ հերքում էին իմ տեսությունները ու մտքերը։ Սակայն նավապետ Նեմոն բավականանում էր նրանով, որ նշում էր իմ սխալները, առանց ինձ հետ վեճի բռնվելու։

Երբեմն ես լսում էի, թե ինչպես նա երգեհոն է նվագում։ Նա նվագում էր մեծ զգացումով ու վարպետությամբ, սակայն բացառապես գիշերները, երբ շուրջն անթափանցելի խավար էր տիրում, և «Նաուտիլուսը» խորը քնած էր լինում ամայի օվկիանոսում։

Այդ բոլոր օրերին նավը մեծ մասամբ լողում էր օվկիանոսի վրա։ Կարծես բոլորը լքել էին օվկիանոսը։ Հազվագյուտ դեպքերում մենք հեռվում տեսնում էինք որևէ առագաստանավ, որն շտապում էր դեպի Հնդկաստան կամ ընթանում դեպի Բարեհուսո հրվանդանը։

Մի անգամ մեր հետևից ընկավ կետորսական մի նավ, որ ըստ երևույթին մեզ մի հսկայական կետի տեղ էր ընդունել։ Սակայն նավապետ Նեմոն չցանկացավ, որ խեղճ ծովագնացներն իզուր աշխատանք ու ժամանակ վատնեն, և ջրասույզ անելով նավը, վերջ տվեց այդ հետապնդման։ Այս դեպքը վառ հետաքրքրություն զարթեցրեց Նեդ Լենդի մեջ։ Կարծում եմ, որ չեմ սխալվի, եթե ասեմ, թե կանադացին ներքուստ ցավում էր, որ մեր մետաղյա կետը հնարավոր չէ մահացու վիրավորել եռաժանիով։

Իմ և Կոնսելի տեսած ձկները քիչ էին տարբերվում այն ձկներից, որ մենք հանդիպել էինք հյուսիսային լայնություն-

ների տակ։ Հաճախ մեզ պատահում էին շնաձկներ։ Օրինակ, մենք տեսանք սանրաձև ատամներով շնաձուկը, որ մյուս բոլոր շնաձկներին գերազանցում էր քիմուխտային անցքերի քանակությամբ, ունենալով յոթ այդպիսի անցք։ Այդ շնաձկների ատամները սանրաձև են կոչվում այն պատճառով, որ նրանց ստորին ծնոտի ատամները դասավորված են սանրի ձևով և քանի հեռանում են կենտրոնից, այնքան վոքրանում են։ Այդ շատ խոշոր մի կենդանի է։ Մենք տեսնում էինք դրանցից այնպիսիները, որոնք մինչև ութ մետր երկարություն ունեն։

Մեր կողքից լողում-անցնում էին նաև ծովային շները՝ խոշոր ձկներ, որոնք, ձկնորսների ասելով, աչքի են ընկնում իրենց շատակերությամբ։

Աշխույժ դելֆիններն ամբողջ օրերով ուղեկցում էին մեզ։ Նրանք լողում էին խմբերով, որոնցից յուրաքանչյուրում լինում էր հինգ-վեց կենդանի։ Որս էին անում նույնպես խմբերով, ինչպես գայլերը՝ ձմռանը։ Դելֆինները ոչ պակաս շատակեր են, քան ծովային շները։

Դելֆինների ընտանիքն ունի տասը տեսակ։ Մեր հանդիպածները պատկանում էին սովորական դելֆինների տեսակին։ Դրանք ունեն փոքր գլուխ, որոնց առջևի մասը նեղ է, և կտուցի նման սուր դունչ։ Այդ դելֆինների մարմնի երկարությունը մոտավորապես երկու մետր է։

Մատնանշեմ նաև այդ ջրերում հանդիպող՝ փշափետրավորների ընտանիքի հետաքրքիր ներկայացուցիչները՝ սապատավորները կամ սև սցիեններ։ Մի քանի հեղինակներ, ավելի շուտ բանաստեղծներ, քան գիտնականներ, կարծում են, որ այդ ձկները երգել գիտեն և դրանց վտառը կարող է տալ այնպիսի մի համերգ, որը կնսեմացնի երգիչների լավագույն խումբը։ Չեմ համարձակվում պնդել, որ այդ ճիշտ չէ, սակայն ճանապարհին մեզ հանդիպող սցիեններ չէին երգում։ Եվ այդ շատ ցավալի էր։

Վերջապես, հիշեմ մեծ քանակությամբ թռչող ձկները։ Չկա մի ավելի հետաքրքիր բան, քան այն տեսարանը, երբ դելֆինները թռչող ձկներ են որսում։ Դելֆիններն այդ անում են մաթեմատիկական ճշտությամբ։ Որքան էլ հեռու թռչեն այդ

ձկները, այնպիսինները ճակատագրական անխուսափելիությամբ ընկնում են դելֆինների բացված երախը։

Մեր տեսած ձկները մեծ մասամբ պատկանում էին ծիծեռնաձկների տեսակին։ Գիշերները նրանց թռիչքից առաջանում էին լուսավոր կորագծեր, որոնք ընկնող աստղերի պես ջրասույզ էին լինում։

Մեր ճանապարհորդության սկզբից մենք անցել էինք տասներեք հազար լյո կամ հիսուներկու հազար կիլոմետր։ Հիմա մենք գտնվում էինք 45°37′ հարավային լայնության և 37°53′ արևմտյան երկարության տակ։

Այստեղ «Հերոլդի» նավապետ Դենգեմի իջեցրած զոնդը տասնչորս հազար մետր խորանալով, չէր հասել հատակին։ Նույն տեղում ամերիկյան «Կոնդրես» մարտանավի լեյտենանտ Պարկերը հատակը չէր գտել նաև տասնհինգ հազար հարյուր քառասուն մետր խորության տակ։

Նավապետ Նեմոն որոշեց այդ չափումներն ստուգելու համար «Նաուտիլուսն» իջեցնել մինչև օվկիանոսի հատակը։

Սրահի լուսամուտների փեղկերը բացվեցին ու ես նստեցի լուսամուտի մոտ, որպեսզի գլի առնեմ համապատասխան պարագաների տվյալները և դիտողություններ կատարեմ։

«Նաուտիլուսը» պատրաստվեց իջնել այդ հսկայական անդունդը։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ խոսք չէր կարող լինել այն մասին, թե կարելի է այդչափ խորանալ պահամանները ջրով լցնելու միջոցով։ Մի կողմ թողնելով այն, որ ոչ մի լրացուցիչ բեռ չէր բավականանա տվյալ նպատակին հասնելու համար, հարկավոր էր նախատեսել նաև այն, որ օվկիանոսի մակերևույթը բարձրանալու համար հատակում պահամաններից պետք է դուրս մղվեր ջուրը, իսկ դրա համար, հսկայական արտաքին ճնշման պայմաններում չէր բավականանա նույնիսկ «Նաուտիլուսի» պոմպերի ուժը։

Նավապետ Նեմոն որոշեց հատակին հասնել թեք գծով, օգտագործելով նավի ամբողջ ուժը։ Խորության ղեկերին տրվեց 45° թեքում և ապա մեքենան գործարկվեց ամենամեծ արագությամբ։ Մեքենայի թիակների բերանները հսկայական ուժով ճեղքեցին ջուրը։ Ամբողջ նավը ցնցվեց և անմիջապես սկսեց իջնել։ Նավապետ Նեմոն եկավ ինձ մոտ և մենք միա-

սին հետևում էինք, թե խտաշափի սլաքն ինչպիսի արագությամբ էր շարժվում դեպի ներքև։ Շուտով «նաուտիլուսն» անցավ օվկիանոսի այն մասը, ուր ապրում է ձկների մեծամասնությունը։ Եթե ձկների առանձին տեսակները կարող են ապրել միայն օվկիանոսի կամ դեռերի մակերևույթին մոտիկ, ապա կան նաև այնպիսի ձկներ, որոնք ապրում են ջրի խորը շերտերում։ Այնտեղ ես նկատեցի սանրաձև առամներ ունեցող շնաձկան մի տեսակը, որ ունի վեց քիմուխտային անցք, «հեռադիտակներն» իրենց ահագին աչքերով և վերջապես գրենդերները, որոնք ապրում են հազար երկու հարյուր մետր խորության տակ, ուր ճնշումը հավասար է հարյուր քսան մթնոլորտի։

Ես հարցրի նավապետ Նեմոյին, թե արդյոք նա ձկներ տեսե՞լ է ծովի խորը տեղերում։

— Ձկնե՞ր,— հարցը կրկնեց նա,— խորը տեղերում դրանք հազվագյուտ են լինում։ Իսկ ի՞նչ է ասում այդ մասին ժամանակակից գիտությունը։

— Մենք գիտենք միայն հետևյալը. ջրի ստորին շերտերում բուսական կյանքն ավելի շատ է քչանում, քան կենդանականը։ Մենք գիտենք, որ այնտեղ, ուր դեռ կարելի է կենդանի արարածների հանդիպել, ոչ մի բույս չի լինում։ Մեզ հայտնի է, որ ոստրեներն ու այլ խեցիներն ապրում են նաև ծովի մակերևույթից երկու հազար մետր ներքև, որ Մակ Կլինտոկը, բևեռային ծովերի այդ հերոսը, մի անգամ երկու հազար հինգ հարյուր մետր խորության տակ բռնել է մի կենդանի ծովային աստղ։ Վերջապես, հայտնի է, որ անգլիական «Բուլդոգ» մարտանավի անձնակազմը չորս հազար մետր խորանալով, նույնպես բռնել է մի կենդանի ծովային աստղ։ Ահա այն ամենն, ինչ որ մենք գիտենք։ Սակայն դուք, նավապետ Նեմո, հավանորեն կասեք, որ մեր գիտությանը ոչինչ հայտնի չէ։

— Ոչ, պարոն պրոֆեսոր, այդ իմ կողմից հանդգնություն կլինի։ Թույլ տվեք նաև հարցնել ձեզ, թե ինչո՞վ է բացատրվում, որ կենդանի արարածները կարողանում են ապրել այդչափ խորը տեղերում։

— Այդ բացատրվում է երկու պատճառով,— պատասխանեցի ես,— նախ և առաջ նրանով, որ ուղղահայաց հոսանքները, որոնք պայմանավորվում են տարբեր խորություններում ջրի տարբեր խտությամբ և աղով հագեցված լինելու ատոճանով, առաջացնում են ջրի շարժում այն չափով, որ բավական է ամենահասարակ ապամորթների և ծովային ասուլների կյանքը պահպանելու համար...

— Ճիշտ է,— ասաց նավապետը։

— Երկրորդ, նրանով, որ ջրի մեջ լուծված, կյանքի համար անհրաժեշտ թթվածնի քանակությունը խորը տեղերում չի պակասում, այլ ավելանում է և որ այդպիսի տեղերում բարձր ճնշումը նպաստում է թթվածնի կուտակմանը։

— Հը՛մ, դուք այդ է՞լ գիտեք,— բացականչեց նավապետ Նեմոն, չթաքցնելով իր զարմանքը,— ես ուրախ եմ, որ դա հայտնի է ձեզ, որովհետև այդ անվիճելի փաստ է։ Ես միայն կավելացնեմ, որ ոչ խորը տեղերում բռնված ձկների լողափամփուշտներում ազոտն ավելի շատ է, քան թթվածինը, մինչդեռ խորը տեղերում բռնված նույն ձկների լողափամփուշտներում թթվածինը միշտ ավելի շատ է լինում, քան ազոտը։ Այդ ապացուցում է ձեր ենթադրության ճշտությունը։ Սակայն եկեք շարունակենք մեր դիտողությունները։

Ես նորից նայեցի խտաչափին։ Սլաքը ցույց էր տալիս վեց հազար մետր խորություն։ Մենք արդեն մի ժամ լողում էինք, և թեք գծով ընթացող «Նաուտիլուսը» դեռևս շարունակում էր ներքև իջնել։ Ամայի ջրերն աչքի էին ընկնում ապշեցուցիչ թափանցիկությամբ, որ կարելի էր համեմատել միայն լեռնային բարձունքների օդի թափանցիկության հետ։

Եվս մի ժամ, և մենք արդեն խորացել էինք տասներեք հազար մետր, իսկ օվկիանոսի հատակի հետքն անգամ չէր երևում։

Սակայն երբ մենք իջանք տասնչորս հազար մետր, ես հեռվում տեսա լեռների սև գագաթները, որոնք աչքի էին ընկնում ջրի մեջ։ Սակայն դրանք կարող էին լինել նույնքան բարձր լեռնագագաթներ, որքան Հիմալայն է կամ Մոնբլանը, գուցե և ավելի բարձր, այնպես որ մենք դարձյալ չէինք կարող որոշել ջրային այդ անդունդի խորությունը։

Մենք շարունակում էինք իջնել, չնայած այն հսկայական ճնշման, որին ենթարկվում էր «Նաուտիլուսը»։ Ես զգում էի, թե ինչպես ցնցվում են ստորջրյա նավի արտաքին միացուցիչ մասերը, ինչպես ծռվում են նրա անջատիչ ձողերը, ինչպես են դողդողում միջնորմները, ինչպես են սրահի լուսամուտները ջրի ճնշման տակ դեպի ներս թեքվում։ Եթե մեր նավը չունենար ամբողջական, ձուլված մարմնի ամրություն, մի վայրկյանում կճզմվեր սարսափելի ճնշումից։

Երբ մենք անցնում էինք ջրի մեջ սևին տվող լեռնալանջերի մոտով, ես դրանց վրա տեսա մի քանի խեցի և զանազան ծովային աստղեր։ Սակայն շուտով կենդանական աշխարհի այդ վերջին ներկայացուցիչներն էլ չքացան և «Նաուտիլուսն» անցավ կյանքի տարածման սահմանը, ինչպես այն օդապարիկը, որ բարձրանում է այնպիսի տեղեր, ուր այլևս անկարելի է շնչել։

Հիմա մենք գտնվում էինք տասնվեց հազար մետր խորության տակ, և «Նաուտիլուսի» վրա եղած ճնշումը հավասարվում էր հազար վեց հարյուր մթնոլորտի, կամ այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր քառակուսի սանտիմետրի վրա հազար վեց հարյուր կիլոգրամ ճնշում։

— Որքա՛ն տարօրինակ է, լինել այնպիսի խորքերում, ուր երբեք կյանք չի եղել,— բացականչեցի ես,— նայեցեք, Նավապետ, նայեցեք այդ վեհապանծ ժայռերին, այդ անբնակ լեռներին, օվկիանոսի այդ վերջին սահմաններին, ուր կյանքի նշույլ անգամ չի կարող լինել։ Ինչպիսի՛ զարմանալի տեսարան։ Եվ որքան ցավալի է, որ մեր մեջ միայն աղոտ հիշողություններ կմնան դրանց մասին։

— Այդ հիշողությունները կարող են և աղոտ չլինել,— ասաց Նավապետը։

— Ի՞նչ եք ուզում ասել,— հարցրի ես,— ես ձեզ չեմ հասկանում։

— Ես ուզում եմ ասել, որ չկա մի ավելի հասարակ բան, քան այս ստորջրյա տեսարանը լուսանկարելը։

Ես դեռ չէի հայտնել իմ զարմանքը, որ Նավապետ Նեմոյի այդ նոր առաջարկի արդյունքն էր, երբ մի նավաստի լուսանկարչական ապարատը բերեց սրահ։

Մեր առջև փռված տեսարանը, որ լուսավորված էր էլեկտրական լուսարձակով, ուրվագծվել էր զարմանալի պարզությամբ։ Ջրի թափանցիկությունը և լիակատար անշարժությունը իդեալական պայմաններ էին ստեղծել լուսանկարելու համար, պայմաններ, որոնք ավելի լավ էին, քան արևի լույսի տակ լուսանկարելու պայմանները։ «Նաուտիլուսը» կանգ առավ, մենք ապարատի օբյեկտիվն ուղղեցինք դեպի ստորջրյա սարը և մի քանի վայրկյանում հիանալի նեգատիվ ստացանք։

Լուսանկարի վրա պարզ պատկերացել էին նախնադարյան ժայռերը, որոնք երբեք չեն տեսել ցերեկվա լույսը, երկրի մակերևույթի գրանիտե սյունները, խորը քարանձավները, որ բացված էին ժայռերում և վերջապես, լեռնագագաթների զարմանալի պարզ ուրվագիծը, որ երևում էր ջրի ֆոնի վրա և կարծես նկարված էր նկարչի ձեռքով։

Սակայն լուսանկարը չէր տալիս այն ուժեղ տպավորությունը, որ թողնում էր որևէ կյանքի լիակատար բացակայությունն այդ սև, կոկիկ, կարծես հղկված ժայռերի վրա, որոնք միևնույն գույնն ունեին, առանց որևէ բծի, ամուր կանգնած էին լուսարձակի ճառագայթների տակ փայլող ավազե հատակին։

Վերջացնելով նկարահանումը, նավապետ Նեմոն դիմեց ինձ.

— Մնում է բարձրանալ, պարոն պրոֆեսոր։ Ցպետք է «Նաուտիլուսը» չափից դուրս երկար ժամանակ ենթարկել այսպիսի ճնշման։

— Ես համաձայն եմ ձեզ հետ, նավապետ։

— Պահեցեք ձեզ,— ասաց նա։

Ես դեռ նավապետին չէի հարցրել, թե ինչպես պիտի հասկանալ նրա խորհուրդը և ինչու պետք է ես ինձ պահեմ, երբ հանկարծ ընկա հատակին։

Նավապետ Նեմոյի հրամանով «Նաուտիլուսի» մեքենան կանգ էր առել և խորության ղեկերին ուղղահայաց դիրք էր տրվել։ Նույն վայրկյանին «Նաուտիլուսը» սլացավ դեպի վեր օդապարիկի պես։ Նավն իսկապես որ բարձրանում էր զըլխապտույտ արագությամբ։ Նա խուլ շառաչ արձակելով, ճեղքում էր ջուրը։ Շուրջը ոչինչ չէր կարելի տեսնել, չորս բո-

պեռամ նավը բարձրացավ տասնվեց հազար մետր և թռչող ձկան պես դուրս ցատկելով ջրից, դարձյալ ջրասույզ եղավ, հսկայական բարձրությամբ դեպի վերև նետելով ջրացայտերի մի վիթխարի շատրվան։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ՎԻՇԱՊԱՁԿՆԵՐ ԵՎ ԿՆՏԵՐ

Մարտի 13-ից 14-ի գիշերը «Նաուտիլուսը» կրկին դարձավ դեպի հարավ։ Ես կարծում էի, թե Հորն հրվանդանի լայնության տակ մենք շուտ կգանք դեպի արևմուտք, դեպի խաղաղ օվկիանոսը, և այդպիսով կավարտենք մեր շուրջերկրյա ճանապարհորդությունը։ Սակայն ես սխալվեցի։ «Նաուտիլուսը» շարունակում էր ընթանալ ուղիղ դեպի հարավ։

Ո՞ւր էր գնում նավը։ Դեպի բևե՞ռը։ Դա անհեթեթություն էր։

Ես եկա այն եզրակացության, որ նավապետ Նեմոյի խելահեղությունն իսկապես արդարացնում էր Նեդ Լենդի մռայլ նախազգացումները։

Կանադացին որոշ ժամանակ ինձ հետ այլևս չէր խոսում փախչելու պլանների մասին։ Նա դարձավ ավելի սակավախոս, պարփակվեց ինքն իր մեջ։ Ես տեսնում էի, որ նրա համար ծանր է մեր երկարատև բանտարկությունը։ Ես զգում էի, որ նրա մեջ սաստկանում է ատելությունը։ Նավապետ Նեմոյի հետ հանդիպելիս նրա աչքերը վառվում էին մռայլ կրակով, և ես միշտ վախենում էի, որ բնածին տաքարյունությունը նրան կստիպի որևէ անմիտ քայլ անել։

Այն օրը, մարտի 14-ին, Կոնսելը և Նեդ Լինդը եկան իմ նավասենյակը։ Ես հարցրի, թե ինչն է նրանց բերել ինձ մոտ։

— Միայն մի հարց, պրոֆեսոր,— պատասխանեց ինձ կանադացին։

— Ես ձեզ լսում եմ, Նեդ։

— Ձեր կարծիքով քանի՞ հոգուց է բաղկացած «Նաուտիլուսի» անձնակազմը։

— Չգիտեմ, բարեկամս։

— Ինձ թվում է,— շարունակեց Նեդ Լենդը,— որ այս նավը վարելու համար մեծ թվով անձնակազմ չի պահանջվում։

— Արդարև,— պատասխանեցի ես,— մեքենաների կատարելագործվածության շնորհիվ տասը հոգուց բաղկացած անձնակազմը լիովին կապահովի նավի բոլոր կարիքները։

— Այդ դեպքում հազիվ թե նավապետ Նեմոն մեծ անձնակազմ վերցրած լինի,— ասաց Նեդ Լենդը։

— Չեմ կարծում,— առարկեցի ես։

— Ինչո՞ւ։

Ես խորազնին նայեցի Նեդ Լենդին։ Դժվար չէր հասկանալ նրա դիտավորությունները։

— Եթե ճիշտ է այն գաղափարը,— ասացի ես,— որ ես կազմել եմ նավապետ Նեմոյի գոյության մասին, ապա «Նաուտիլուսը» սոսկ նավ չէ, այլ միաժամանակ ապաստարան է այն բոլոր մարդկանց համար, որոնք, ինչպես և ինքը, նավապետը, խզել են իրենց կապը երկրի հետ։

— Հնարավոր է, որ պարոնն իրավացի լինի,— պատասխանեց մինչ այդ լուռ Կոնսելը,— բայց և այնպես, «Նաուտիլուսը» կարող է տեղավորել միայն սահմանափակ թվով մարդկանց։ Արդյոք պարոնը չի՞ ասի մեզ, թե ամենաշատն ինչքան մարդ կլինի այս նավում։

— Ես այդ ինչպե՞ս կարող եմ գիտենալ, Կոնսել։

— Հասարակ հաշվարկման միջոցով։ Պարոնին հայտնի է նավի ծավալը, հետևաբար նրա մեջ պարունակվող օդի ծավալը։ Մյուս կողմից գիտենալով, թե մարդու շնչառության համար որքան օդ է հարկավոր, նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Նաուտիլուսը» պետք է յուրաքանչյուր քսան չորս ժամը մեկ անգամ օդի նոր պաշար վերցնի։

Ես ընդհատեցի Կոնսելի անվերջ ֆրազը, որովհետև հասկացա, թե նա ինչ է ուզում ասել։

— Հասկանում եմ, հասկանում եմ,— ասացի ես,— այդ հաշիվը դժվար չէ անել, բայց հետևանքը շատ անորոշ կլինի։

— Թող անորոշ լինի,— կտրուկ ասաց Նեդ Լենդը։

— Ահա այդ հաշիվը։ Մարդու շնչառության համար յուրաքանչյուր ժամում անհրաժեշտ է այնքան թթվածին, որքան

գտնվում է հարյուր լիտր օդում, կամ թե քանչորս ժամում նրա շնչառության համար անհրաժեշտ է երկու հազար չորս հարյուր լիտր օդ։ Հետևաբար մեր ոտնած թիվը գտնելու համար պետք է «նատուիլուսի» տարողությունը բաժանել երկու հազար չորս հարյուրի վրա։

— Միանգամայն ճիշտ է,— ասաց Կոնսելը։

— Եվ քանի որ «նատուիլուսի» տարողությունը հազար հինգ հարյուր տոնն է,— շարունակեցի ես,— իսկ յուրաքանչյուր տոնը պարունակում է հազար լիտր, ուրեմն նավի ընդհանուր տարողությունը մեկ ու կես միլիոն լիտր օդ է, և այդ տարողությունը բաժանած երկու հազար չորս հարյուրի վրա...— ես թղթի վրա արագությամբ կատարեցի հաշիվը,— ...կստացվի ճիշտ վեց հարյուր քսանհինգ։ Այլ կերպ ասած՝ «նատուիլուսում» պարունակվող օդը քսանչորս ժամվա ընթացքում կբավականանա վեց հարյուր քսանհինգ մարդու շնչառության համար։

— Վեց հարյուր քսանհի՞նգ,— բացականչեց Նեդ Լենդը։

— Սակայն ես կարող եմ ձեզ հավատացնել, որ մենք բոլորս, նավաստիները, ճանապարհորդներն ու հրամանատարությունը, այդ թվի մեկ տասներորդ մասն էլ չենք կազմում։

— Այդ էլ շատ է երեք հոգու համար,— շշնջաց Կոնսելը։

— Ասի, ի՛մ խելոք Նեդ, կարող եմ ձեզ միայն համբերությամբ զինվելու խորհուրդ տալ։

— Եվ ոչ միայն համբերությամբ զինվել,— ավելացրեց Կոնսելը,— այլև հաշտվել ամեն ինչի հետ։

Կոնսելը գտավ տեղին խոսքը։

— Վերջ ի վերջո,— շարունակեց նա,— նավապետ Նեմոն հո չի կարող շարունակ ընթանալ դեպի հարավ։ Չէ՞ որ նա կանգ կառնի մի որևէ տեղ, օրինակ, թեկուզ սառցե գաշտերի առաջ։ Կգա այն ժամը, երբ նա ստիպված կլինի վերադառնալ այն ծովերը, որոնք գտնվում են քաղաքակրթված երկրների մոտ։ Այն ժամանակ հնարավոր կլինի դարձյալ մտածել փախչելու մասին։

Կանադացին օրորեց գլուխը, ձեռքով շփեց ճակատը և ոչ մի պատասխան չտալով, դուրս եկավ նավասենյակից։

— Պարոնի թույլտվությամբ ես մի դիտողություն կա-

նեմ,— ասաց Կոնսելը,— խեղճ նեղը շարունակ մտածում է անկարելի բաների մասին։ Նա անընդհատ հիշում է անցյալ երջանիկ օրերը։ Նրան սիրելի է թվում այն ամենն, ինչ որ մեզ համար անհասանելի է։ Նրան ճնշում է հիշողությունների բեռը, և նա տխրում է ամբողջ օրերով։ Հարկավոր է հասկանալ նրան։ Ինչո՞վ նա կարող է զբաղվել այստեղ։ Ոչնչով։ Նա պարոնի նման գիտնական չէ, ստորջրյա աշխարհի հրաշալիքները չեն կարող նրան ուրախացնել այնքան, որքան մեզ։ Նեդ Լենդը պատրաստ է զոհել ամեն ինչ, որպեսզի հնարավորություն ունենա վերադառնալու իր հայրենիքում գտնվող որևէ գինետուն։

Միանգամայն բնական է, որ «Նաուտիլուսում» տիրող միապաղաղ կյանքը պետք է անտանելի թվար գործունյա և ազատ կյանքի ընտելացած կանադացուն։ Այն դեպքերը, որոնք նրա մեջ հետաքրքրություն էին առաջ բերում, չափազանց հազվադյուտ էին։ Սակայն հենց այդ օրը տեղի ունեցավ մի դեպք, որը նրան պետք է հիշեցներ իր ազատության երջանիկ օրերը։

Առավոտյան ժամը մոտ տասնմեկին օվկիանոսի վրա լողացող «Նաուտիլուսը» հանդիպեց մի խումբ կետերի։ Այդ հանդիպումն ինձ չզարմացրեց։ Ես գիտեի, որ այդ կաթնասունները, որոնց մարդիկ որսում են հաճույքով ու համառությամբ, ապաստարան են փնտրում բարձր լայնությունների տակ, ուր կետորս նավերը սակավ են լինում։

Կետերը միշտ կարևոր դեր են խաղացել ծովային գործում և աշխարհագրական հայտնագործությունների վրա նրանց ազդեցությունը շատ զգալի է եղել։ Կետերը դեպի իրենց են գրավել բոլոր ժամանակների և բոլոր ժողովուրդների որսորդներին, սկզբում բասկերին, հետո ատորիներին, անգլիացիներին և հոլանդացիներին։ Կետերը նրանց կոչել են օվկիանոսային ճանապարհորդության վտանգների դեմ մղվող պայքարում, սովորեցրել են առանց վախենալու ծայրեծայր շափել օվկիանոսները։ Կետերը սիրում են այցելել թե հյուսիսի և թե հարավի բևեռային ծովերը։ Հին ավանդություններն ասում են, թե մի անգամ կետերին հետապնդող որսորդներն այնքան են գնացել դեպի հյուսիս, որ մինչև բևեռն ընդամենը

մնացել է յոթ լյու։ Եթե այս ավանդությունը մտացածին է, ապա երբևէ այն իրականություն կդառնա և ամենից հավանականն այն է, որ մարդիկ երկրի այդ անհայտ տեղերը կհասնեն հենց կետեր որսալու շնորհիվ։

Մենք գտնվում էինք տախտակամածում։ Ծովը հանգիստ էր. այս լայնություններում հոկտեմբեր ամսին հրաշալի եղանակ է լինում։

Կանադացին առաջինն էր, որ արևելյան կողմում, հորիզոնի վրա նկատեց կետ և չխլալվեց։

Ուշադրությամբ դիտելով մատնանշված տեղը, ես էլ տեսա մի ինչ-որ սև բիծ, որ գտնվում էր «Նաուտիլուսից» հինգ մղոն հեռու, մերթ դուրս էր գալիս ջրի երեսը, մերթ ջրասույզ լինում։

— Ա՜խ,— գոչեց Նեդ Լենդը,— եթե հիմա ես լինեի կետորս նավում, ինչքա՛ն ուրախալի կլիներ ինձ համար այդ հանդիպումը։ Դա մի հսկայական կենդանի է։ Նայեցեք, թե որքան բարձր է նետում ջրի սյունները։ Սատանան տանի։ Որքա՛ն զայրացուցիչ է, որ ես շղթայված եմ այս տաշտակին։

— Ես տեսնում եմ, Նեդ, որ դուք դեռևս ձեզ եռաժանավոր եք զգում,— ասացի ես։

— Մի՞թե կետորսը երբևէ կարող է մոռանալ իր մասնագիտությունը։ Մի՞թե երբևէ կարելի է հագենալ այդ որսի ժամանակ ունեցած ապրումներից։

— Իսկ դուք այս ծովերում երբեք որս չե՞ք արել, Նեդ։

— Երբե՛ք, պարոն պրոֆեսոր։ Ես միշտ աշխատել եմ հյուսիսային ծովերում, հասել եմ մինչև Բերինգյան նեղուցը, մինչև Դևիսի նեղուցը...

— Ուրեմն դուք չգիտեք հարավային կետերը։ Դուք ներկա դեպքում չեք էլ կարող դրանց գիտենալ, որովհետև բևեռային կետերը երբեք չեն համարձակվում անցնել հասարակածի տաք ջրերից։

— Ի՞նչ եք ասում, պարոն պրոֆեսոր։ Ինչե՞ր եք հնարում,— անվստահությամբ առարկեց կանադացին։

— Ես ոչինչ չեմ հնարում, ես ասում եմ այն, ինչ որ կա։

— Ինչպե՛ս չէ։ Վաթսունհինգ թվականին, այսինքն ընդամենը երկու և կես տարի առաջ, Գրենլանդիայի ափերի մոտ ես

անձամբ խփեցի մի կետ, որի մեջ դեռ ցցված էր Բերինգյան նեղուցից անցած նավի դրոշմը կրող եռաժանին։ Թույլ տվեք հարցնել, ձեզ, այդ ինչպե՞ս էր պատահել, որ Ամերիկայի արևմուտքում վիրավորված կենդանին եռաժանու հարվածներ էր ստացել արևելքում, եթե նա նախապես չէր անցել Հորն կամ Բարեհուսո հրվանդանները, այսինքն եթե չէր անցել հասարակածի մուտից։

— Ես համաձայն եմ իմ բարեկամ Նեդի փաստարկման հետ և անհամբերությամբ սպասում եմ պարոնի պատասխանին,— ասաց Կոնսելը։

— Պարոնը ձեզ կպատասխանի, բարեկամներս, որ կետերի տարբեր տեսակներն ապրում են տարբեր ծովերում, որտեղից երբեք չեն հեռանում։ Եթե կետերից մեկը Բերինգյան նեղուցից անցել է Դեվիսի նեղուցը, այդ միայն նշանակում է, որ այդ ծովերի միջև ինչ-որ մի անցք կա, կամ ամերիկյան, կամ ասիական ափում։

— Եվ ես պետք է հավատա՞մ դրան,— աչքերը կկոցելով հարցրեց կանադացին։

— Պարոնին պետք է հավատալ,— պատասխանեց Կոնսելը։

— Հետևաբար դուք պնդում եք, որ եթե ես երբեք որս չեմ արել այս ջրերում, ուրեմն չգիտե՞մ այստեղի կետերին,— շարունակեց կանադացին։

— Միանգամայն ճիշտ է։

— Ի՞նչ արած, Նեդ, ուրեմն պետք է որ դրանց հետ ծանոթանալն ավելի ցանկալի լինի,— ասաց Կոնսելը։

— Նայեցեք, նայեցեք,— գոչեց կանադացին,— կետը մոտենում է։ Նա ուղիղ դեպի մեզ է գալիս։ Նա ծաղրում է ինձ, հասկանալով, որ ես նրան ոչինչ չեմ կարող անել։

Նեդը ատրը խփեց հատակին։

Կետորսի բռունցքը սեղմվում էր, կարծես նա եռաժանի էր բռնել։

— Եվ այդ կետերը,— շարունակեց նա,— նույն մեծությունն ունեն, ինչ որ հյուսիսային կետե՞րը։

— Համարյա նույն մեծությունը, Նեդ։

— Ես այդ հարցնում եմ, պարոն պրոֆեսոր, որովհետև ես առիթ եմ ունեցել տեսնելու խոշոր կետեր, որոնց երկարությունը հարյուր ոտնաչափի է հասնում։ Հին կետորսներն ինձ պատմում էին, թե Ալեուտյան կղզիների մոտ եղած կետերը նույնիսկ հարյուր հիսուն ոտնաչափ երկարություն են ունենում։

— Իմ կարծիքով այդ չափազանցություն է, Նեդ,— առարկեցի ես,— բնության մեջ այդպիսի կետեր չկան, իսկ վիշապաձկները կետերից ավելի փոքր են։

— Ա՛խ,— գոչեց կանադացին, որ շարունակում էր դիտել օվկիանոսը,— կետը մոտենում է։ Շուտով նա կանցնի «Նաուտիլուսի» կողքից։

Եվ շարունակելով մեր զրույցը, նա դիմեց ինձ.

— Դուք վիշապաձկների մասին խոսում եք ինչպես փոքրիկ ձկների մասին։ Մինչդեռ գոյություն ունեն իրոք որ հսկայական վիշապաձկներ։ Գիտե՞ք, դրանք խելացի կենդանիներ են։ Դրանցից մի քանիսը, ինչպես պատմել են ինձ, մտնում են ջրիմուռների մեջ և այդպես դուրս են գալիս ջրի երեսը։ Նրանց կղզիների տեղ են ընդունում։ Նավերը մոտենում են նրանց, մարդիկ դուրս են գալիս, կրակ են վառում...

— Տներ, ավաններ են կառուցում,— հեգնեց Կոնսելը։

— Այո, հանաքշի,— պատասխանեց Նեդ Լենդը,— հետո մի գեղեցիկ օր վիշապաձուկը ջրասույզ է լինում և իր հետ օվկիանոսի հատակն է տանում իր բոլոր բնակիչներին...

— Ճիշտ այնպես, ինչպես Սինդբադ անունով ծովագնացի արկածները,— ծիծաղեցի ես,— սակայն, միստր Լենդ, ես չգիտեի, որ դուք այդպիսի վարպետ եք հեքիաթներ հորինելու մեջ։ Հույս ունեմ, որ դուք ինքներդ չեք հավատում այդպիսի վիշապաձկների գոյության։

— Պարոն գիտնական,— լուրջ պատասխանեց կանադացին,— կետերից կարելի է ամեն ինչ ապասել։ Սակայն նայեցեք, թե նա ինչպիսի արագությամբ է լողում։ Ինչպե՞ս է ջրասույզ լինում։ Ասում են, թե այդ կենդանիները տասնհինգ օրվա ընթացքում կարող են լողալ աշխարհի շուրջը։

— Այդ հնարավոր է, Նեդ, չեմ վիճի։

— Գրաղ կգամ, պարոն պրոֆեսոր, որ դուք չգիտեք, թե

աշխարհիս գոյության սկզբում առաջին կետն ավելի արագ էր լողում, քան այժմյան կետերը։

— Իսկապե՞ս, Նեդ։ Ես իրոք որ այդ չգիտեի։ Իսկ ինչո՞ւ։

— Որովհետև սկզբում նրա պոչը եղել է ուղղահայաց, ինչպես ձկներինը, և նա չրին խփել է ձախից աջ և աջից ձախ։ Բայց հետո առաջին կետն անզգուշաբար շուռ է տվել իր պոչը, և այն ժամանակից սկսած բոլոր կետերի պոչերը հորիզոնական դիրք ունեն և չրին խփում են վերևից ներքև ու ներքևից վերև, իսկ այդ իհարկե մեծ չափով պակասեցնում է արագությունը։

— Եվ ես պետք է հավատա՞մ դրան,— հեգնելով Նեդի սասածը, հարցրի ես։

— Պարտադիր չէ,— պատասխանեց կանադացին,— և դա ավելի չէ, քան եթե ես ձեզ ասեի, որ տեսել եմ երեք հարյուր ոտնաչափ երկարությամբ և հինգ հարյուր հազար կիլոգրամ ծանրությամբ կետեր։

— Դուք արդեն չափազանցնում եք,— պատասխանեցի ես,— սակայն մի քանի կետանմաններ իսկապես որ հսկայական մեծություն են ունենում։ Ասում են, թե որևէ այդպիսի կենդանուց հարյուր քսանից մինչև հարյուր երեսուն տոնն ճարպ է ստացվում։

— Այդ ես տեսել եմ սեփական աչքերով,— ասաց կանադացին։

— Սիրով հավատում եմ ձեզ, Նեդ, ինչպես նաև հավատում եմ, որ մի քանի կետեր իրենց մեծությամբ հավասար են հարյուր փղի։ Երևակայեցեք, թե ամբողջ արագությամբ սլացող այդպիսի զանգվածն ինչ գործողություններ կարող է կատարել։

— Արդյոք ճի՞շտ է,— հարցրեց Կոնսելը,— որ կետը կարող է խորտակել նավը։

— Ես դրան չեմ հավատում,— պատասխանեցի ես,— սակայն պատմում են, որ հենց այս հարավային լայնություններում 1820 թվականին կետը հարձակվել է «Էսեքս» մարտանավի վրա և սկսել է այն հետ մղել մեկ վայրկյանում շորս մետր արագությամբ։ Ջուրը լցվել է նավի հետին մասը, և նավը գրեթե անմիջապես ջրասույզ է եղել։

— Ինչ վերաբերում է ինձ,— ասաց Նեդը,— մի անգամ կետը պոչով խփեց ինձ, այսինքն իհարկե ոչ թե ինձ, այլ իմ նավակին։ Ես ու իմ ուղեկիցները վեց մետր դեպի վեր թռանք։ Սակայն այս կետը, համեմատած այն կետի հետ, որի մասին քիչ առաջ պատմեց պարոն պրոֆեսորը,— միմիայն ձագ է, ծծկեր երեխայի չափ փոքր։

— Արդյոք երկա՞ր են ապրում այդ կենդանիները,— հարցրեց Կոնսելը։

— Հազար տարի,— առանց տատանվելու պատասխանեց կանադացին։

— Դուք այդ որտեղի՞ց գիտեք, Նեդ։

— Այդպես են ասում։

— Իսկ ինչո՞ւ են այդպես ասում։

— Որովհետև ամեն ոք գիտե այդ։

— Ոչ, Նեդ, դա ոչ ոք չգիտե, այլ միայն ենթադրում են, որ այդպես է։ Ահա թե ինչ դատողության վրա է հիմնված այդ ենթադրությունը. շորս հարյուր տարի առաջ, երբ առաջին անգամ սկսվեց կետերի որսը, այդ կենդանիները շատ ավելի խոշոր էին այժմյան կետերից։ Այս պատճառով բնականաբար կարելի էր ենթադրել, որ ժամանակակից կետերի փոքր ծավալը բացատրվում է նրանով, որ նրանք դեռևս լիովին չեն զարգացել։ Հենց այդ էլ ստիպել է Բյուֆֆոնին հայտարարելու, թե կետերը կարող են և պետք է որ ապրեն հազար տարի։ Հասկանալի՞ է։

Սակայն Նեդ Լենդը չէր լսում և չլսեց ինձ։ Կետը մոտենում էր և Նեդն աչքերը չռել էր կենդանու վրա։

— Ա՛խ,— հանկարծ գոչեց նա,— դա մի կետ չէ։ Տասը... քսան հատ կլինեն... Մի ամբողջ վտառ։ Իսկ մենք ոչինչ չենք կարող անել։ Այսպիսի լոպեին մարդուս ձեռները մի՞թե պիտի կապված լինեն...

— Սակայն Նեդ, բարեկամս, ինչո՞ւ նավապետ Նեմոյից թույլտվություն չեք խնդրում դրանց որսալու համար,— հարցրեց Կոնսելը։

Վերջինը դեռ չէր վերջացրել նախադասությունը, երբ Նեդը գլխապատառ ներքև վազեց նավապետին գտնելու համար։

Մի քանի րոպեից հետո նրանք միասին տախտակամածում էին։

Նավապետ Նեմոն սկսեց դիտել կետերի վտառը, որ խաղում էր ջրի երեսին, «Նաուտիլուսից» ընդամենը մեկ մղոն հեռու։

— Դրանք հարավի կետեր են,— ասաց նա,— այդ վտառը բավական կլիներ կետ որսող մի ամբողջ նավատորմիղ հարստացնելու համար։

— Հը՛, ինչպե՞ս, նավապետ, թույլ չե՞ք տա, որ ես մի քիչ որսամ դրանց, թեկուզ նրա համար, որ շմոռանամ եռաժանի բանեցնելու իմ արհեստը։

— Ինչո՞ւ իզուր սպանել կենդանիներին,— առարկեց նավապետը,— նրանց ճարպը բոլորովին հարկավոր չէ մեզ։

— Այնուամենայնիվ, նավապետ, Կարմիր ծովում դուք ինձ թույլ տվիք որսալ դյուգոնը,— պնդում էր կանադացին։

— Դյուգոնը պետք է թարմ մսի պաշար տար մեր խոհանոցին։ Իսկ այժմ դուք թույլտվություն եք խնդրում սպանել միայն սպանելու համար։ Ես շատ լավ գիտեմ, որ այդ հատուկ է մարդկային բնությանը, սակայն չեմ ուզում խրախուսել այդ բարբարոսական ժամանցը։ Ոչնչացնելով հարավային կետին, այդ անմեղ ու բարի կենդանուն, դուք, միստր Լենդ, ձեր համախոհների հետ միասին սև գործ եք կատարում... Նրանք արդեն Բաֆֆինյան ծոցում ոչնչացրել են բոլոր կենդանիներին, իսկ այժմ ուզում են բոլորովին ոչնչացնել նաև այս օգտակար կենդանիներին։ Այդ դժբախտ կետերին հանգիստ թողեք։ Դրանք առանց այդ էլ ունեն բավականաչափ բնական թշնամիներ՝ վիշապաձկներ և սուսերակիրներ։

Կարելի է պատկերացնել, թե կանադացու դեմքն ինչպիսի արտահայտություն ուներ այս անապատելի բարոյախոսության ժամանակ։ Այդպիսի դասախոսություն կարդալ պրոֆեսիոնալ որսորդին, նշանակում էր իզուր տեղը բառեր շռայլել։

Նեդ Լենդը նայում էր նավապետ Նեմոյին և ըստ երևույթին ուղղակի չէր հասկանում, թե նա ինչի մասին է խոսում։

Սակայն նավապետն իրավացի էր։ Կետորսների անխոհեմ գիշատչությունը շուտով այնտեղ կհասցնի, որ օվկիանոսից կչքանան վերջին կետերը։

Նեդ Լենդը սուլեց «Յանկի դուդլ»[1] մոտիվը և դեմքը շուռ տվեց մեզանից։

Այդ ժամանակ նավապետ Նեմոն, որ շարունակում էր դիտել կետերի վտառը, ասաց ինձ.

— Ես իրավացի էի, երբ քիչ առաջ ասում էի, որ կետերը, բացի մարդուց, ուրիշ շատ բնական թշնամիներ ունեն։ Ահա այդ վտառն այժմ ընդհարվելու է ուժեղ հակառակորդի հետ։ Տեսնո՞ւմ եք արդյոք, պարոն պրոֆեսոր, այնտեղ, ութ մղոն հեռու շարժվող սև բծերը։

— Տեսնում եմ, նավապետ,— պատասխանեցի ես։

— Դրանք վիշապաձկներ են, սարսափելի կենդանիներ... Ես առիթ եմ ունեցել տեսնելու դրանց մի ամբողջ վտառը, երկու-երեք հարյուր հա՛ռ։ Այ, հենց այդ դաժան ու վնասակար կենդանիներին իսկապես որ արժե ոչնչացնել։

Այս խոսքերի վրա Կանադացին անմիջապես ետ նայեց։

— Ի՞նչ արած, նավապետ,— ասացի ես,— իրոք որ կետերի շահերի համար միստր Լենդին կարելի է թույլ տալ...

— Չարժե վտանգի ենթարկվել,— ընդհատեց ինձ նավապետը,— «Նաուտիլուսն» ինքը կցրի վիշապաձկներին։ Նավը զինված է պողպատե ժանիքով, որն իհարկե ոչ պակաս ուժեղ է, քան միստեր Լենդի եռաժանին։

Կանադացին առանց քաշվելու թոթվեց ուսերը։ Նրա տեսքը պարզ ասում էր.— «Ո՞վ է լսել, որ նավի ժանիքով վիշապաձկներ որսան»։

— Սպասեցեք, պարոն պրոֆեսոր,— ասաց նավապետը,— մենք ձեզ ցույց կտանք այնպիսի մի որս, որ դուք երբեք չեք տեսել։ Ո՛չ մի կաթիլ ցավակցություն դեպի այդ գիշակերները, որոնք երախից ու ատամներից բացի ուրիշ ոչինչ չունեն։

Ամբողջովին ատամներով զինված երա՛խ։ դժվար էր մի այլ, ավելի լավ բնորոշում տալ մեծագլուխ վիշապաձկներին, որոնց երկարությունը երբեմն քսանհինգ մետրի է հասնում։ Այդ կետանման կենդանու հսկայական գլուխը կազմում է

---

1 «Յանկի դուդլը» Հյուսիսային Ամերիկայի հայրենասիրական երգն է, որ երգվում էր Անգլիայի իշխանությունից ազատագրման պայքարի ժամանակաշրջանում։

մարմնի մեկ երրորդից ավելին։ Տարբերվելով կետերի նրա-խից, որ ունի միայն եղջերաշերտեր, վիշապածկան երախը զինված է երեսունիններից հիսուներկու սուր առամներով, որոնցից յուրաքանչյուրը երկու ֆունտ է կշռում։ Վիշապածկան գանգի ետին մասում կան իրար միացած երկու խցիկներ, որոնք լցված են երեք հարյուրից չորս հարյուր կիլոգրամ յուղախառն հեղուկով՝ սպերմացետով, որը շատ թանկ է վաճառվում։ Անշուշտ վիշապածուկն աշխարհիս ամենաանճոռնի և այլանդակ արարածն է։ Հինգ մետր երկարություն և երեք մետր բարձրություն ունեցող հսկայական գլուխն ապշեցնում է իր անկանոն մասերով։ Այսպես, քթի երկու կեսից կա միայն մեկը, իսկ ձախ աչքը շատ փոքր է աջից, իսկ դա անցյալում որսորդներին հարմարություն էր տալիս վիշապածկան վրա հարձակվել միշտ ձախ կողմից։

Գիշատիչների վտառն արդեն մոտենում էր։ Նրանք արդեն նկատեցին կետերին և պատրաստվում էին վերջիններիվրա հարձակվելու։

Կարելի էր վաղօրոք գլխի ընկնել, որ այդ անհավասար պայքարում կետերը կհաղթվեն, և ոչ միայն այն պատճառով, որ վիշապածկները կետերից ուժեղ են և ավելի լավ են զինված, այլև այն պատճառով, որ նրանք կարող են ջրի տակ ավելի երկար մնալ, քան կետերը, շնչելու համար դուրս չգալով ջրի երեսը։

Ժամանակն էր օգնության հասնելու կետերին։ «Նաուտիլուսը» ջրասույզ եղավ։ Կոնսելը, Նեդ Լենդն ու ես տեղ բռնեցինք սրահի լուսամուտների առաջ։ Նավապետ Նեմոն անցավ ղեկի խցիկը, որպեսզի անձամբ կառավարի նավը, որ հիմա ոչնչացման գործիքի դեր էր կատարելու։

Մեքենան սկսեց ավելի արագ աշխատել, և «Նաուտիլուսը» սլացավ ամբողջ թափով։

Երբ «Նաուտիլուսը» վրա հասավ, վիշապածկների ու կետերի միջև արդեն սկսվել էր ճակատամարտը։ Նավապետ Նեմոն իր նավը վարում էր այն հաշվով, որ վիշապածկների վտառը երկու մասի բաժանի։ Սկզբում վիշապածկներին այնքան էլ չանհանգստացրեց նոր թշնամու երևան գալը, բայց շուտով նրանք հասկացան իրենց սխալը։

Ինչպիսի՜ տեսարան էր մեր աչքերի առաջ։ Նույնիսկ Նեդ Լենդն հիացավ և սկսեց բուռն կերպով ծափահարել։

«Նաուտիլուսը» դարձավ մի վիթխարի եռաժանի, հլու մի զենք՝ իր նավապետի ձեռքում։ Նավը հարձակվում էր վիշապաձկների մսոտ մարմինների վրա և կտոր-կտոր անում, իր հետևից թողնելով կենդանու երկու այլանդակված, արյունահոս մասերը։ Նավի համար զգալի չէին վիշապաձկների պոչերի դաժան հարվածները, նրանց կատաղի ցնցումները։ Սպանելով մեկ վիշապաձուկ, նավն անցնում էր մյուսին, դառնալով իր առանցքի շուրջը, որպեսզի ժամանակ չկորցնի և բաց չթողնի իր զոհին։ Նավն առաջ էր սլանում, ետ դառնում, ջրասույզ էր լինում այն ժամանակ, երբ վիշապաձուկն էլ ազատվելու համար ջրասույզ էր լինում. դուրս էր գալիս ջրի երեսը, եթե վիշապաձուկն էլ նույնն էր անում. գրոհում էր կողքերից, ճակատից, թիկունքից և կտոր-կտոր էր անում՝ ինչ արագությամբ էլ որ ընթանար և որտեղից էլ որ հասներ հարվածը։

Ինչպիսի սպանդանո՜ց։ Ինչպիսի որոտ ջրի մակերևույթին։ Վախեցած վիշապաձկների շնչառության ինչպիսի՛ սուլոց։ Նրանց ահագին պոչերի հարվածներից ալեկոծվում էին նույնիսկ ջրի ստորին շերտերը, որոնք միշտ հանգիստ են լինում...

Մեկ ժամից ավելի շարունակվում էր այդ համատարած կոտորածը, որից չազատվեց և ոչ մի վիշապաձուկ։ Մի քանի անգամ, կազմելով տասը-տասներկու կենդանուց բաղկացած ջոկատներ, վիշապաձկները հարձակման էին անցնում, փորձելով խորտակել «Նաուտիլուսը»։ Սրահի լուսամուտից երևվում էին նրանց բաց երախները, զարհուրելի ատամներն ու կատաղությունից փայլող աչքերը։

Նեդ Լենդը, չկարողանալով ինքն իրեն զսպել, անիծում և բռունցքներով սպառնում էր վիշապաձկներին։ Վերջիններս ատամներով կծում էին ստորջրյա նավի կողքերը, ինչպես շները կծում են անտառում բռնված գազանի կոկորդը։

Սակայն «Նաուտիլուսը», ավելացնելով արագությունը, չէր զգում վիշապաձկների ահագին ծանրությունը և նրանց հուսահատական ճիգերը, նրանց իր հետ տանում էր օվկիանոսի

խորքը կամ դուրս էր բերում ջրի երեսը, ոչ մի վայրկյան չդադարեցնելով հերթական զոհի հետապնդումը։

Վերջապես, վիշապաձկների վտառը նոսրացավ։ Իրարանցումը դադարեց։ «Նաուտիլուսը» բարձրացավ ջրի երեսը։ Դռնակը բացվեց, և մենք շտապեցինք դեպի տախտակամած։

Ծովի վրա թափթփված էին վիշապաձկների այլանդակված դիակները։ Եթե ջրում, վիշապաձկների վտառի մեջ պայթեր հսկայական, ավերիչ ուժ ունեցող մի արկ, այդ կենդանիներն այդպես պատառոտված, բզկտված, կտոր-կտոր չէին լինի։ Մի քանի մղոնի վրա ջուրը կարմիր գույն էր ստացել, և «Նաուտիլուսը» լողում էր կարծես արյան օվկիանոսում։

Նավապետ Նեմոն մոտեցավ մեզ։

— Հը՛, միստր Լենդ, ի՞նչ կասեք,— դիմեց նա կանադացուն։

— Ես ասելիք չունեմ, նավապետ,— պատասխանեց կանադացին, որի ոգևորությունն արդեն սառել էր,— դուք մեզ ցույց տվիք սարսափելի մի տեսարան, այդ անվիճելի է։ Սակայն ես մսագործ չեմ, այլ որսորդ եմ, իսկ դուք մեզ սպանդանոց ցույց տվիք...

— Այդ շար և գիշատիչ կենդանիների ոչնչացում էր,— առարկեց նավապետ Նեմոն,— «Նաուտիլուսն» էլ մսագործի դանակ չէ։

— Այնուամենայնիվ ես գերադասում եմ իմ եռաժանին,— ասաց կանադացին։

— Ամեն ոք իր զենքն ունի,— պատասխանեց նավապետը, աչքերը սևեռելով Նեդ Լենդի վրա։

Ես վախեցա, որ վերջինս հանդգնություններ կասի նավապետին, այդ կարող էր տխուր հետևանք ունենալ մեր բոլորիս համար, սակայն բարեբախտաբար կանադացու ուշադրությունը դարձավ մի կետի վրա, որին այդ ժամանակ մոտենում էր «Նաուտիլուսը»։

Այս կենդանին չէր կարողացել ազատվել վիշապաձկների հարձակումից։ Ես նկատեցի, որ դա հարավային կետ էր, բոլորովին սև, ներս ընկած գլխով։ Իր կազմվածքով նա սովորական կետերից տարբերվում էր նրանով, որ այս կետի պա-

բանոցի յոթ ողները միացած են՝ և նրա կողերը երկուսով ավելի են հյուսիսային կետերի կողերից։

Դժբախտ կետը պառկած էր կողքի վրա, վիշապաձկները մի քանի տեղ կծել էին նրա որովայնը։ Կետը մեռած էր։ Նրա այլանդակված լողաթևի տակ ապաստանել էր ձագը, որին նա չէր կարողացել պաշտպանել։ Սպանված կետի բաց երախից ջուր էր հոսում, առվակի պես կարկաչում «կետի բեղի» շերտերում։

Նավապետ Նեմոն հրամայեց «Նաուտիլուսը» մոտեցնել սպանված կետին։ Երկու նավաստի բարձրացան կենդանու կողքի վրա, և ես զարմանքով տեսա, որ նրանք կետի կրծքի դեղձերից կաթ են քամում։ Այս կերպ նրանք երկու թե երեք տակառ կաթ քամեցին։

Նավապետն ինձ առաջարկեց մի բաժակ խմել այդ դեռևս տաք կաթից։ Այդ առաջարկը լսելով, ես չկարողացա թաքցնել իմ նողկանքը։ Սակայն նա ինձ հավատացրեց, որ կետի կաթը հիանալի համ ունի և ոչնչով չի տարբերվում կովի կաթից։

Ես փորձեցի և գտա, որ միանգամայն իրավացի է նավապետ Նեմոն։ Այդ երեք տակառ կաթը մի արժեքավոր գյուտ էր մեզ համար, որովհետև դրանից ստացվող յուղն ու պանիրը պետք է հաճելի բազմազանություն մտցնեին մեր կերակուրների մեջ։

Այդ օրվանից ես դառնությամբ նկատում էի, որ Նեդ Լենդն ավելի ու ավելի թշնամաբար է վերաբերում նավապետ Նեմոյին։ Ես որոշեցի աչալուրջ հետևել, որ կանազատին մի որևէ վայրենի քայլ չանի։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՍԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ

«Նաուտիլուսը» շարունակում էր անշեղ ընթանալ դեպի հարավ։ Զգալի արագությամբ նա սլանում էր հիսուներորդ միջօրեականի երկայնքով։ Մի՞թե նա ուզում էր բևեռին հասնել։ Ես դրան չէի հավատում, որովհետև հարավի բևեռային

երկրներում մարտ ամիսը համապատասխանում է հյուսիսային երկրների սեպտեմբեր ամսին, այսինքն աշնան սկզբին։

Մարտի 14-ին 55° երկարության տակ ես առաջին անգամ լողացող սառույցներ տեսա։ Դրանք սառույցի փոքր կտորներ էին, կապտավուն գույնի, քսան-քսանհինգ ոտնաչափ երկարությամբ։ Ծովի ալիքներն աղմուկով փշրվում էին դրանց վրա։

«Նաուտիլուսն» ընթանում էր օվկիանոսի վրա։ Նեդ Լենդը, որ հաճախ ճանապարհորդել էր բևեռային ծովերում, առաջ էլ բազմիցս տեսել էր լողուն սառույցներ։ Կոնսելն ու ես առաջին անգամ էինք զմայլվում այդ տեսարանով։

Երկնակամարում, հորիզոնի վրա ձգված էր կուրացուցիչ մի լուսաշերտ։ Անգլիական կետորսներն այն անվանում են iceblink[1] որքան էլ խիտ լինեն ամպերը, չեն կարող ծածկել այդ լույսը։ Այդ լուսաշերտը ցույց է տալիս սառցե դաշտի մոտիկությունը։

Արդարև, շուտով երևացին ավելի խոշոր սառցակոշտեր, որոնք մերթ պայծառ փայլում էին ու մերթ գունատվում, նայած մթնոլորտի դրության։ Մի քանի լողացող սառցալեռների կողերը ծածկված էին կանաչ շերտերով, որ կարծես ծծմբաթթվուտային պղնձի հանքաշերտեր լինեին։ Ուրիշ սառցակոշտեր ամբողջովին փայլում էին թանկագին քարերի պես։ Մի քանիսն էլ իրենց բյուրեղներով արտացոլում էին արևի ճառագայթները։ Վերջապես, մի քանիսն էլ, որ ձյան խավով էին պատած, թվում էին մարմարի հսկայական կտորներ, որոնք բավական էին մի ամբողջ քաղաք կառուցելու համար։

Որքան մենք գնում էինք դեպի հարավ, այնքան շատ էին լողացող սառցակոշտերը, այնքան խոշորանում էին առանձին կտորներն ու սառցալեռները։ Արկտիկական թռչունները հազարավոր բույներ էին հյուսել դրանց վրա։ Այդ թռչուններից էին հյուսիսային և այլ մրրկահավերը, պուֆինները, որոնք խլացնում էին մեզ իրենց կռինչով։ Մի քանիսները «Նաուտիլուսը» կետի տեղ էին ընդունում, և նստելով տախտակամածին, սկսում էին կտցահարել զրնգուն երկաթը։

---

1 Բևեռային սառույցների արտացոլում (անգլ.)։

Սառույցների միջով անցնելիս նավապետ Նեմոն հաճախ ու երկար ժամանակ լինում էր տախտակամածում։ Նա մեծագույն ուշադրությամբ դիտում էր այդ ամայի տեղերը։ Նա տեսնում էի, թե ինչպես երբեմն վառվում էր նրա սովորաբար սառը հայացքը։ Գուցե այդ ժամանակ նա մտածում էր, որ նա միակ իշխողն է բևեռային այս ջրերի վրա, որոնք անմատչելի են մարդուն։ Հնարավոր է։ Սակայն նա չէր խոսում այդ մասին։ Ժամերով կանգնում էր անշարժ և կարծես քնից արթնանում էր այն ժամանակ, երբ «Նաուտիլուսը» լինում էր սառույցների օղակում և հարկավոր էր դուրս գալ այդ թակարդից։

Այդ ժամանակ նա ինքն էր կանգնում ղեկի մոտ և ապշեցուցիչ վարպետությամբ վարում էր «Նաուտիլուսը», խուսափելով սառցադաշտերի ու սառցալեռների հետ ընդհարվելուց, որոնցից մի քանիսն ունեին մի քանի մղոն երկարություն և ջրի մակերևույթից յոթանասուն—ութսուն մետր բարձրություն։

Հաճախ թվում էր, որ «Նաուտիլուսի» ճանապարհը փակված է համատարած սառցե պարսպով։ Լայնության վաթսուներորդ աստիճանում սառույցը համատարած զանգված էր արդեն։ Սակայն նավապետ Նեմոն արագությամբ գտնում էր մի որևէ նեղ անցք և համարձակորեն անցնում էր այնտեղից, թեև գիտեր, որ անցնելուց հետո իսկույն պետք է փակվի այդ անցքը։

Այսպես, իր նավապետի հմուտ ղեկավարությամբ «Նաուտիլուսը» ընթանում էր հավերժական սառույցների միջով։

Կոնսելին դուր եկավ այն, որ գոյություն ունի սառույցների ճիշտ դասակարգում ըստ նրանց ձևի և մեծության, և նա արագ յուրացրեց այդ դասակարգումը. սառցալեռներ, սառցադաշտեր, լողացող սառցակղզիներ և սառցե զանգված։

Օդի բարեխառնությունը բավական ցածր էր, սնդիկը զրոյից բարձրանում էր ոչ ավելի, քան երկու-երեք աստիճան։ Սակայն մենք ցուրտ չէինք զգում, որովհետև փոկի մաշկից կամ սպիտակ արջի մորթուց կարված մուշտակներ էինք հագել։ Բացի դրանից, «Նաուտիլուսի» ներսում շարունակ միևնույն ջերմաստիճանն էր լինում, որը կախված չէր օդի բա-

բեխառնությունից և պահպանվում էր էլեկտրական վառարանների միջոցով։ Սակայն, եթե հանկարծ վառարանները շաշխատեին, բավական է, որ «նաուտիլուսը» մի քանի մետր իջներ ջրի տակ, որպեսզի կրկին բարեխառնության տանելի պայմաններում գտնվեր։

Եթե մենք այդ վայրերը ժամանեինք մեկ ամիս առաջ, կտեսնեինք, որ արևը մայր չի մտնում։ Սակայն մենք ուշացանք, և գիշերն արդեն մեզանից երեք-չորս ժամ էր խլում, ամեն օր երկարում, որպեսզի հետո վեց ամիս խավարով ծածկի այս բևեռային վայրերը։

Մարտի տասնհինգին մենք անցանք այն զուգահեռականը, որի վրա գտնվում են Նոր Շոտլանդիան և Հարավ Օրկնեյան կղզիները։ Նավապետ Նեմոն ինձ պատմեց, որ դեռ վերջերս այդ հողերն իբրև հանգրվան էին ծառայում փոկերի անթիվ հոտերի համար, սակայն անգլիացի և ամերիկացի կետորսները, կուրորեն ընկնելով հարստանալու ետևից, ոչնչացրին և՛ արուներին, և՛ էգերին ու ձագերին։ Հիմա այստեղ մահվան անխախտելի լռություն է տիրում։

Մարտի տասնվեցին, առավոտյան ժամը մոտ ութին, «նաուտիլուսն» անցավ հարավային բևեռային շրջանը, ընթանալով հիսունհինգերորդ միջօրեականի երկարությամբ։ Սառույցները բոլոր կողմերից շրջապատել էին մեզ ու ծածկել հորիզոնը։ Այնուամենայնիվ նավապետ Նեմոն սառույցների միջև անցքեր էր փնտրում, գտնում էր ու շարունակում դեպի հարավ ընթանալ։

— Ո՞ւր է նա մեզ տանում,— մի անգամ ես ինքս ինձ բարձր ձայնով տվի այդ հարցը։

— Ուր որ պատահի,— պատասխանեց ինձ Կոնսելը,— երբ այլևս ճանապարհ չի լինի առաջ գնալու, նա հետ կըդառնա։

— Ես այդ չեմ երաշխավորում,— ասացի ես։

Բոլորովին անկեղծ լինելու համար խոստովանում եմ, որ այդ անմիտ ճանապարհորդությունը նույնիսկ դուր էր գալիս ինձ։ Չեմ կարող նկարագրել, թե ինչպիսի զմայլելի տեսարան էին ներկայացնում այդ սառցե դաժան անապատները։ Այստեղ սառույցները բոլորովին անսպասելի ձևեր էին ըն-

դունում։ Սառցե դաշտը թվում էր արնելյան մի մեծ քաղաք՝ անհամար մզկիթներով, սրածայր մինարեներով։ Այստեղ կարծես գտնվում էին երկրաշարժից քանդված քաղաքի ավերակները։ Սակայն բավական էր, որ արևը թեքվեր հորիզոնի վրա և ուղղահայաց ճառագայթների փոխարեն թեք ճառագայթներ արձակեր, և իսկույն կարծես մի կախարդական զորությամբ սառցե տեսարանն անճանաչելի էր դառնում։ Այդ ֆանտաստիկ ներկայացման դեկորացիաները է՛լ ավելի արագ էին փոխվում, երբ արևը ծածկվում էր ամպերի տակ և սառուցյանների վրա մշուշն էր իջնում, կամ երբ երկու սառցակոշտեր ընդհարվում էին այնպիսի դղրդյունով, որ կարծես դա հազարավոր թնդանոթների համազարկ լիներ։

Եթե այդպիսի ընդհարման պահին «նաուտիլուսը» գտնըվում էր ջրի տակ, ապա աղմուկն ավելի սաստիկ էր լինում, իսկ վիթխարի սառցակոշտերի խորտակումն ալեկոծում էր ջուրը, վտանգավոր ջրապտույտներ առաջացնում։ Այդպիսի դեպքերում ալիքներն օրորում և այս ու այն կողմ էին նետում «նաուտիլուսը», ինչպես ջրի վրա լողացող սովորական մի նավ սաստիկ փոթորկի ժամանակ։

Հաճախ լինում էր այնպես, որ սառցակոշտերի մեջ ոչ մի անցք չտեսնելով, ես կարծում էի, թե մենք վերջնականապես փակված ենք սառույցներում։ Սակայն նավապետ Նեմոն, զեկավարվելով իր անսխալ բնազդով, նորանոր անցքեր էր գտնում։ Նրան օգնում էին սառցալեռների լանջերով հոսող կապտավուն ջրի փոքրիկ կոհակները, կամ ուրիշ, անփորձ աչքի համար ավելի սակավ նկատելի նշանները։ Այս պատճառով ես գտա, որ նա առաջին անգամ չի լողում հայտնվածյին սառույցներում։

Այնուամենայնիվ մարտի 16-ին, օրվա վերջում, սառույցները վերջնականապես փակեցին մեր ճանապարհը։ Դրանք դեռևս հավերժական սառցադաշտերը չէին, բայց թվում էր, որ սառցադաշտն ամուր նստել է այնտեղ։ Արգելքը չիանգարեց նավապետ Նեմոյին։ Ուժեղ թափ առնելով, նա հսկայական ուժով հարձակվեց սառցե պարսպի վրա։ «Նաուտիլուսը» սեպի նման խրվեց փխրուն զանգվածի մեջ, և սարսափելի դղրդոց արձակելով, այն ըաժանեց երկու մասի։ Դա բաբա-

նի հնադարյան սկզբունքի կիրառումն էր, միայն թե հիմա այդ բաբանն առաջ էր մղվում անսահման ուժով։ Դեպի վեր թռած սառցակտորները կարկուտի նման թափվում էին մեր շուրջը։ Ցնցումն այնքան ուժեղ էր լինում, որ նավի առջև իսկույն անցք էր բացվում։ Երբեմն, թափ առնելու իներցիայով մղված, «նաուտիլուսը» բարձրանում էր սառցե դաշտի վրա և իր ծանրությամբ թեքում էր այն։ Ստացվում էր միևնույն հեռանքը, սառույցը երկու մասի էր բաժանվում, և մենք բացված նեղուցով առաջ էինք ընթանում։

Այդ օրերին մեր շուրջը սաստիկ փոթորիկներ էին լինում։ Երբեմն սառույցների վրա իջնում էր մշուշը, այնքան թանձր, որ տախտակամածի մի ծայրից մյուս ծայրը չէր երևում։ Քամին այս ու այն կողմ էր արշավում։ Գիշերն եկած ձյունը առավոտյան այնքան էր պնդանում, որ մենք այն քլունգներով էինք մաքրում, թիակներով հնարավոր չէր։ Հենց որ օդի բարեխառնությունն իջնում էր մինչև հինգ աստիճան զրոյից ցած, «նաուտիլուսի» տախտակամածը ծածկվում էր սառույցի հաստ շերտով։ Առագաստավոր նավն այստեղ չէր կարող գործել, որովհետև նրա բոլոր ճախարակներն ու լիսեռնաթոկերը կծածկվեին սառույցով։ Այդպիսի բարձր լայնություններում կարող էր լողալ միայն այն նավը, որ գործում էր էլեկտրականությամբ, հետևապես ածխի կարիք չէր զգում։

Ամբողջ ժամանակ ծանրաչափը ցույց էր տալիս ցածր ճնշում, որը կարող էր է՛լ ավելի իջնել։ Կողմնացույցի տրվյալները հիմա ոչ մի վստահություն չէին ներշնչում։

Կողմնացույցի սլաքը ցույց էր տալիս ամենաֆանտաստիկ ուղղություններ, այն չափով, ինչ չափով մենք մոտենում էինք հարավի մագնիսային բևեռին, որը չի զուգադրվում երկրագնդի բևեռի հետ։ Արդարև, ըստ Հանստենի, հարավի մագնիսային բևեռը գտնվում է 70° լայնության և 130 աստիճան երկարության տակ։ Դյուպերեն հաշվել է մի փոքր տարբեր կոորդինատներ՝ 70°30′ լայնություն և 135 աստիճան երկարություն։ Ուղղությունը որոշելու համար այժմ հարկավոր էր լինում կողմնացույցը տեղափոխել նավի զանազան մասերը, մի քանի դիտողություններ կատարել և ստացված միջին թիվը համարել ճիշտ։

Առաջնապատ օրերին, երբ աստղաբաշխական դիտողություններ կատարելը հնարավոր չէր, նավի ուր գտնվելը քարտեզի վրա նշվում էր ուղղությունը որոշող գործիքի տվյալների հիման վրա։ Իհարկե այս եղանակը սակավ վստահելի արդյունքներ էր տալիս, որովհետև մանվածապատ անցքերում հարկավոր էր լինում ամեն րոպե փոխել նավի ուղղությունը։

Մարտի տասնութին, իր համար ճանապարհ բանալու մի քանի անհաջող փորձերից հետո, «Նաուտիլուսը» վերջնականապես դեմ առավ սառույցներին։ Այդ արդեն սառցային քաոս չէր, լողացող սառցակտորներ և նույնիսկ սառցե դաշտեր չէին, այլ իրար միացած սառցալեռների մի անշարժ ու անխորտակելի պատնեշ։

— Համատարած սառույցներ են,— ասաց ինձ Կանադացին։

Ես հասկացա, որ Նեդ Լենդը, ինչպես նաև բոլոր բևեռային ծովագնացները, այդ խոչընդոտն անհաղթահարելի էր համարում։ Կեսօրին մի քանի րոպեով երևաց արևը, և նավապետ Նեմոն ճիշտ հաշվարկումներ կատարեց։ Մենք գտնվում էինք 51°30′ երկարության և 67°39′ հարավային լայնության տակ։ Ինչպես տեսնում ենք, «Նաուտիլուսը» գնացել էր բավական հեռու, մտնելով Անտարկտիկայի խորքը։

Ոչ առջևում, ոչ էլ ետևում մենք զուտ ջուր չէինք տեսնում։ «Նաուտիլուսը» գտնվում էր սառցե կարկառներով ծածկված մի լայնարձակ հարթավայրում, ուր ցրված էին անձև սառցակոշտեր այնպիսի քաոսային վիճակում, որ լինում է գետերի վրա, սառույցները հալչելիս, իսկ այստեղ այդ պատկերը հսկայական մասշտաբի էր։ Տեղ-տեղ երևում էին սառցաբլուրների սրածայր գագաթները, որոնց բարձրությունը երկու հարյուր և ավելի ոտնաչափի էր հասնում։ Ավելի հեռու կանգնած էին ուղղաբերձ ժայռերի շարքերը, որոնք գորշ մառախուղով էին պատած։ Այդ տխուր վայրերում տիրում էր մեռյալ լռություն, որ խախտվում էր միայն մրրկահավերի թևերի շաչյունով և նրանց հատու կռինչներով։ Այստեղ մեռել էր ամեն ինչ, նույնիսկ ձայները...

Ահա թե «Նաուտիլուսը» որտեղ դադարեցրեց իր համարձակ վազքը։

— Գիտե՞ք, պարոն պրոֆեսոր,— այդ օրն ասաց ինձ Նեդ Լենդը,— եթե մեր նավապետին հաջողվի ավելի հեռու գնալ...

— Այդ դեպքում ի՞նչ կլինի, Նեդ։

— Նա շատ քաջ մարդ կլինի։

— Ինչո՞ւ։

— Որովհետև ոչ ոք չի կարող հաղթահարել համատարած սառույցը։ Չեմ վիճում, ձեր նավապետն ուժեղ է։ Սակայն, գրողը տանի, նա հո բնությունից ավելի ուժեղ չէ՞։ Եվ եթե բնությունն այստեղ անհաղթահարելի խոչընդոտ է կառուցել, ապա նավապետը պետք է կամա թե ակամա կանգ առնի։

— Դուք կարծեմ իրավացի եք, միստր Լենդ, բայց և այնպես ես շատ կուզեի իմանալ, թե ինչ կա այս սառույցներից այն կողմ։ Ինձ էլ է զղայնացնում այս պարիսպը։

— Պարոնն իրավացի է,— ասաց Կոնսելը,— պարիսպները հատկապես նրա համար են ստեղծված, որ զղայնացնեն գիտնականներին։ Ես քարուքանդ կանեի աշխարհում եղած բոլոր պարիսպները, եթե այդ կախված լիներ իմ կամքից։

— Դատարկ բան է,— պատասխանեց կանադացին,— ես շատ լավ գիտեմ, թե ինչ է թաքնված այս պարսպից այն կողմ։

— Ի՞նչ,— հարցրի ես։

— Սառույց, միայն սառույց,— պատասխանեց կանադացին։

— Դուք հավատացա՞ծ եք, Նեդ,— առարկեցի ես,— բայց ես կասկածում եմ և ահա թե ինչու ուզում եմ շարունակել ճանապարհս դեպի հարավ։

— Ավելի վատ, պարոն պրոֆեսոր,— պատասխանեց Նեդ Լենդը,— դուք ստիպված կլինեք հրաժարվել այդ մտքից։ Դուք հասել եք համատարած սառույցների սահմանը, այդ արդեն բավական է։ Ավելի հեռու ոչ մի քայլ անել չի հաջողվի ոչ ձեզ, ոչ ձեր նավապետ Նեմոյին, ոչ էլ նրա «Նաուտիլուսին»։ Արդյոք նա կցանկանա թե ոչ, միևնույն է, մենք կվերադառնանք դեպի հյուսիս, այսինքն այն վայրերը, որ այրում են բոլոր կարգին մարդիկ։

Ես պետք է ընդունեի, որ Նեդ Լենդն իրավացի է մի տեսակետից։ Մինչև այն ժամանակ, երբ նավերը կսավորեն

շարժվել սառցադաշտերում, նրանք ստիպված կլինեն կանգ առնել համատարած սառույցների սահմանի մոտ։

Հիրավի, չնայելով իր բոլոր ջանքերին, չնայելով սառույցը ջարդելու հուսահատական փորձերին, «նաուտիլուսն» անշարժ էր մնում։ Սովորաբար երբ նավը չի կարող առաջ շարժվել, ետ է դառնում։ Սակայն այստեղ հետ դառնալն անկարելի էր ճիշտ այնպես, ինչպես և առաջ շարժվելը, որովհետև մեր հետևում փակվում էին բոլոր անցքերը։ Եվ եթե մեր նավը որոշ ժամանակ էլի անշարժ մնար, անպայման կկպչեր սառույցներին։

Ցերեկվա ժամը մոտ երկուսին սկսեցին երևալ այդ վատագի նշանները. այն չսառած տեղը, ուր կանգնած էր «նաուտիլուսը», սկսեց արագությամբ սառչել։ Պետք է խոստովանեմ, որ հիմա նավապետ Նեմոյի վարմունքն ինձ չափազանց անզգույշ էր թվում։

Այդ ժամանակ ես գտնվում էի տախտակամածում։ Նավապետը, որ արդեն մի քանի րոպե դիտում էր ջրի սառչելը, դիմեց ինձ և հարցրեց.

— Ի՞նչ եք մտածում մեր դրության մասին, պարոն պրոֆեսոր։

— Կարծում եմ, որ մենք կարգին խրվել ենք, նավապետ։

— Խրվե՞լ ենք, այդ ինչպե՞ս հասկանալ։

— Ուզում եմ ասել, որ մենք չենք կարող շարժվել ոչ առաջ, ոչ ետ, ոչ էլ աջ ու ձախ։ Գոնե քաղաքակիրթ երկրներում այս դրությունը բնորոշվում է «խրվել» բառով։

— Հետևաբար դուք կարծում եք, պարոն պրոֆեսոր, որ «նաուտիլուսը» չի՞ կարող դուրս գալ այստեղից։

— Ես այնքան էլ չեմ հավատում դրան, նավապետ։ Բանն այն է, որ տարվա այս եղանակին, անտարկտիկական ձմռան շեմին հազիվ թե սառույցները շարժվեն իրենց տեղերից։

— Ա՛խ, պարոն պրոֆեսոր, դուք հավատարիմ եք ձեզ,— հեգնանքով ասաց նավապետ Նեմոն։— Դուք շարունակ իրաշընդատներ ու անջրպետներ եք երևակայում։ Թույլ տվեք հայտարարելու ձեզ, որ «նաուտիլուսը» ոչ միայն կարողանալի սառույցների օղակից, այլև ավելի հեռու կգնա։

— Ավելի հեռո՞ւ, դեպի հարա՞վ,— ասացի ես, ուղիղ նայելով նավապետ Նեմոյին։

— Այո, պարոն պրոֆեսոր, նա կհասնի մինչև բևեռը։

— Մինչև բևե՞ռը,— գոչեցի ես, անկարող լինելով թաքցնել անվստահությունս։

— Այո,— սառը տոնով պնդեց նավապետը,— մինչև հարավային բևեռը, այդ հանելուկային տեղը, ուր միանում են երկրագնդի բոլոր միջօրեականները։ Չէ՞ որ դուք գիտեք, որ ես կարող եմ ստիպել «Նաուտիլուսին» անել այն, ինչ ցանկանամ։

Այո, ես գիտեի։ Ես գիտեի նաև, որ այդ մարդը քաջարի է խելահեղության չափ։ Այնուամենայնիվ միայն խելացնորը կհամարձակվեր պայքար սկսել հարավային բևեռի ճանապարհը փակող բազմաթիվ խոչընդոտների դեմ, իսկ այդ բևեռն ավելի անմատչելի է, քան հյուսիսային բևեռը։

Ամենահամարձակ, ամենափորձված ծովագնացներն ապարդյուն փորձեր են արել հարավային բևեռին հասնելու և հաղթվել ու նահանջել են, կամ կորել։ Ոչ, ուղղակի հրեշավոր էր այդ միտքը, որ կարող էր ծագել միայն խելահեղ մարդու գլխում։

Ես նավապետ Նեմոյին հարց տվի, թե արդյոք նա մինչև այժմ չի՞ հայտնաբերել այդ բևեռը, ուր մարդը դեռ երբեք ոտք չի դրել։

— Ոչ, պարոն պրոֆեսոր,— պատասխանեց նա,— այդ հայտնագործությունը մենք միասին կանենք։ Այն, ինչ որ չի հաջողվել մյուսներին, կհաջողվի ինձ։ Ես դեռ «Նաուտիլուսով» երբեք չեմ գնացել այսքան հեռու դեպի հարավ։ Սակայն կըրկնում եմ, մենք կգնանք ավելի հեռու, մինչև բևեռը։

— Ես ուզում եմ ձեզ հավատալ, նավապետ,— հեգնական տոնով պատասխանեցի ես,— և հավատում եմ ձեզ։ Դեպի առա՛ջ։ Մեզ համար խոչընդոտներ չկան։ Ջարդե՛նք այս համառարած սառույցը։ Փորփրե՛նք այն, իսկ եթե նա դիմադրի, թևեր տանք «Նաուտիլուսին», որպեսզի թռչի սառույցի վրայից։

— Սառույցի վրայի՞ց, պարոն պրոֆեսոր,— հանգիստ

պատասխանեց ինձ նավապետ Նեմոն,— ոչ, ինչո՞ւ, ավելի լավ է, որ մենք անցնենք սառույցի տակից։

— Սառույցի տակի՞ց,— գոչեցի ես։

Հանկարծ կարծես պայծառացավ միտքս։ Ես հասկացա, թե ինչի վրա էր հույս դրել նավապետ Նեմոն։ «Նաուտիլուսի» հրաշալի հատկությունները պետք է մի անգամ ևս ծառայություն մատուցեին նավապետ Նեմոյին, նրա այս անհավանական գիտավորությունն իրագործելիս։

— Տեսնում եմ, որ մենք սկսում ենք հասկանալ մեկմեկու,— ժպտալով ասաց նավապետը,— կարծեմ դուք պատրաստ եք հավատալու, որ այդպիսի փորձը հնարավոր է։ Իսկ ես միանգամայն վստահ եմ, որ հաջողություն կունենանք։ Այն, ինչ որ անիրագործելի է սովորական նավի համար, հեշտությամբ հաջողվում է «Նաուտիլուսին»։ Եթե նա բևեռի մոտ ցամաքի հանդիպի, կանգ կառնի։ Բայց եթե, ընդհակառակը, բևեռը ծածկված է օվկիանոսի ջրով, մենք կհասնենք հենց այդ բևեռին։

— Իսկապես,— պատասխանեցի ես, զրավվելով նավապետի տրամաբանական դատողությամբ,— եթե ծովի մակերևույթը սառույցով է ծածկված, ապա նրա ստորին շերտերը չեն կարող սառչել և հեղուկ վիճակում են մնում բնության այն օրենքի հիման վրա, որ ջուրը մաքսիմալ պնդություն է ստանում սառեցման կետից բարձր ջերմաստիճանի դեպքում։ Եվ եթե չեմ սխալվում, սառույցի ջրասույզ եղած մասը ջրից դուրս մնացած մասին հարաբերում է ինչպես չորսը մեկին։

— Այո, պարոն պրոֆեսոր, հարաբերությունը զրեթե այդպես է։ Ջրից դուրս մնացած սառցալեռան յուրաքանչյուր ոտնաչափին ընկնում է ջրասույզ եղած մասից երեք ոտնաչափ։ Այսպիսով, քանի որ այդ սառցալեռներն օվկիանոսի մակերևույթից դուրս են լինում ոչ ավելի, քան հարյուր մետր, ուրեմն պետք է որ ջրասույզ լինեն երեք հարյուր մետրի չափ։ Իսկ «Նաուտիլուսի» համար ի՞նչ է երեք հարյուր մետր ջրասուզվելը։

— Ոչի՛նչ, նավապետ։

— Ավելին։ Մենք կարող ենք ավելի խորն իջնել, ջրի հենց այն շերտերը, ուր բարեխառնությունը միատեսակ է բոլոր

լայնություններում, և այնտեղ անպատիժ կերպով կծաղրենք երեսուն—քառասուն աստիճան սառնամանիքները, որոնք լինում են բացօթյա տեղերում։

— Դուք իրավացի եք, նավապետ, դուք բոլորովին իրավացի եք,— բացականչեցի ես։

— Միակ դժվարությունը, որ մենք պետք է հաղթահարենք,— շարունակեց նավապետ Նեմոն,— այդ մի քանի օր ջրի տակ գտնվելն է ամանց օդի պաշարը լրացնելու։

— Միայն այդքա՞նը,— առարկեցի ես,— «Նաուտիլուսում» բավականաչափ տարողությամբ պահեստներ կան։ Մենք կլցնենք դրանք, որոնք մեզ անհրաժեշտ քանակությամբ թթվածին կմատակարարեն։

— Հրաշալի է, պարոն պրոֆեսոր,— կրկին ժպտաց նավապետը։— Թույլ տվեք հայտնել ձեզ մի կասկած ևս,— ես չէի ցանկանա, որ դուք հետո ինձ մեղադրեք անխոհեմության համար։

— Էլ ի՞նչ կասկած ունեք,— հարցրի ես նավապետ Նեմոյին։

— Հնարավոր է, որ բևեռի մոտ ծովը, եթե դա գոյություն ունի, ամբողջովին սառած է, հետևաբար մենք չպիտի կարողանանք դուրս գալ ծովի երեսը։

— Ի՞նչ եք ասում, նավապետ։ Մի՞թե դուք մոռացել եք, որ «Նաուտիլուսը» զինված է ժանիքով։ Դուք կարող եք այդ ժանիքը թեք դիրքով ուղղել սառցե առաստաղին, և այն հեշտությամբ կբանա դուրս գալու ճանապարհը։

— Սակայն, պարոն պրոֆեսոր, այսօր դուք բոլորովին այլ լեզվով եք խոսում։

— Ասենք, նավապետ,— շարունակեցի ես ավելի և ավելի ոգևորվելով,— ինչո՞ւ մենք չսառած ծով չպիտի գտնենք հարավային բևեռում։ Ցրտի բևեռները չեն զուգադիպում երկրիս բևեռների հետ թե՛ հարավային և թե՛ հյուսիսային կիսագնդում։ Այս պատճառով, մինչև որ հակառակը չապացուցվի, մենք իրավունք ունենք ենթադրելու, որ երկրագնդի այդ երկու հակադիր կետերում գոյություն ունեն չսառած ծովեր կամ ցամաք։

— Ես էլ եմ այդպես կարծում, պարոն պրոֆեսոր,— պատասխանեց նավապետ Նեմոն,— ուշադրություն դարձրեք այն հանգամանքի վրա, որ իմ նախագծի դեմ այնքան առարկելուց հետո դուք հիմա ապացույցներ է, որ թափում եք հօգուտ այդ նախագծի։

Նավապետ Նեմոն իրավացի էր։ Հիմա ես համաձայնության մեջ մրցում էի նրա հետ։ Հիմա ես նրան համոզում էի շարունակել ճանապարհը դեպի բևեռ։ Ես նույնիսկ որոշեցի այդ ճանապարհը...

Բայց ո՛չ, ողորմելի խե՛նթ։ Նավապետ Նեմոն վաղուց արդեն կշռադատել էր բոլոր «թեր» և «դեմ» կարծիքները և հիմա զվարճանում էր, տեսնելով, թե ինչպես ես մեկ ծայրահեղությունից անցնում եմ մյուսին, ինչպես անզսպելիորեն անձնատուր եմ լինում ցնորքներին։

Մինչ այս մինչ այն, նավապետ Նեմոն ժամանակ չէր կորցնում։ Նա իր օգնականին կանչեց տախտակամած։ Նրանք խոսեցին իրենց անհասկանալի լեզվով։ Արդյոք օգնականին առաջ նախազգուշացրե՞լ էին նավապետի պլանների մասին, թե՞ օգնականն այդ պլանների մեջ անիրագործելի ոչինչ չէր տեսնում, չգիտեմ, միայն թե նրա դեմքը որևէ զարմանք չարտահայտեց։

Սակայն, որքան էլ նա սառնասիրտ էր, այնուամենայնիվ դրանով նա չգերազանցեց Կոնսելին, երբ ես այս հրաշալի մարդուն հայտնեցի նավապետ Նեմոյի որոշումը՝ դեպի բևեռ գնալու մասին։ Հանգիստ տոնով ասված «ինչպես որ պարոնը կամենա»-ն այդ քաջի միակ պատասխանը եղավ, և ես չկարողացա նրանից մի այլ պատասխան ստանալ։

Ուրիշ բան է Նեդ Լենդը. հաղիվ թե կարելի լիներ ավելի շատ թոթվել ուսերը, քան այդ արեց կանադացին, լսելով իմ պատմածը։

— Գիտե՞ք, պարոն պրոֆեսոր,— ասաց նա,— դուք և ձեր նավապետ Նեմոն զարհուրելի բան եք ներշնչում ինձ։

— Բայց հասկացեք, Նեդ, որ մենք հասնելու ենք բևեռը, այո, բևեռը։

— Հնարավոր է, որ դուք հասնեք այնտեղ, բայց չգիտի կարողանաք վերադառնալ։

Եվ այդ ասելուց հետո Նեդ Լենդը գնաց իր նավասենյակը, «որպեսզի փորձանք չառաջացնի», ասաց նա դուռը փակելով։

Այդ ժամանակ «Նաուտիլուսն» սկսեց պատրաստվել իր խիզախ արշավին։ Հզոր պոմպերը, որ գործում էին մեքենաների ուժով, բարձր ճնշման տակ օդ էին հավաքում պահամանների մեջ։ Կեսօրից հետո ժամը մոտ չորսին նավապետ Նեմոն ինձ ասաց, որ հիմա դռնակը պետք է փակվի։ Ես վերջին անգամ դիտեցի մեր ճանապարհը խափանող համատարած սառույցները։ Եղանակը պայծառ էր, երկինքը մաքրվել էր ամպերից։ Ցուրտը բավական զգալի էր, 12° զրոյից ներքև, սակայն քամի չկար և այդ սառնամանիքն այնքան էլ սաստիկ չէր թվում։

Տասը նավաստի քլունգները ձեռքերին դուրս եկան տախտակամած և սկսեցին ջարդել «Նաուտիլուսի» շուրջը եղած սառույցը։

Նավաստիները կարողացան արագ կատարել այդ գործը, որովհետև սառույցը դեռ բարակ էր։ Այդ ժամանակ մենք բոլորս մտանք նավի մեջ, դռնակը փակեցին, և «Նաուտիլուսը» դանդաղ ջրասույզ եղավ։

Ես Կոնսելի ուղեկցությամբ մտա սալոն։ Մենք նստեցինք բաց լուսամուտի առաջ և սկսեցինք դիտել Հարավային Սառուցյալ օվկիանոսի ջրի ստորին շերտերը։ Ջերմաչափի սլաքը, որ շափում էր արտաքին միջավայրի բարեխառնությունը, արագ բարձրանում էր, խտաչափի սլաքը շարժվում էր թվատախտակի աջ կողմը։

Երբ հարյուր մետր խորությամբ, ինչպես նախատեսել էր նավապետ Նեմոն, ջուրն արդեն ազատ էր սառույցներից, և մենք կարող էինք համատարած սառցե ծածկոցի տակ շարունակել մեր ճանապարհը։ Սակայն «Նաուտիլուսը» շարունակեց իջնել, մինչև որ հասավ ութ հարյուր մետր խորության։ Այստեղ ջրի բարեխառնությունը երկու աստիճանով բարձր էր վերին շերտերի բարեխառնությունից։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ «Նաուտիլուսի» ներսում եղած բարեխառնությունը, որ պահպանվում էր էլեկտրական վառարանների միջոցով, բոլորովին կախված չէր արտաքին բարեխառնությունից և միշտ գտնվում էր նորմալ վիճակում։

«Նաուտիլուսը» բոլոր փորձաշարժերը կատարում էր արտասովոր ճշտությամբ ու հնազանդությամբ։

— Պարոնի թույլտվությամբ կասեմ, որ իմ կարծիքով մենք ճանապարհը կանցնենք հաջողությամբ,— ասաց Կոնսելը։

— Հուսով եմ,— պատասխանեցի ես խորը վստահության տոնով։

Սառույցներից ազատ այս ջրային շերտերում «Նաուտիլուսն» ուղևորվեց դեպի բևեռը, ընթանալով հիսուներկուերորդ միջօրեականի երկարությամբ։ 67°30′-ից մինչև 90° պետք էր անցներ քսաներկու և կես աստիճան, կամ երկու հազար կիլոմետրից մի քիչ ավելի։ «Նաուտիլուսը» լողում էր միջին արագությամբ, մոտավորապես մեկ ժամում հիսուն կիլոմետր, այսինքն ճեպընթաց գնացքի արագությամբ։ Եթե ճանապարհին ոչ մի արգելք չլիներ, ապա քառասունից մի քիչ ավելի ժամի ընթացքում նավը պետք է հասներ բևեռը։

Տեսարանների նորությունն ինձ և Կոնսելին գիշերվա մի քանի ժամերի ընթացքում պահում էր լուսամուտի մոտ։ Էլեկտրական լուսարձակը պայծառ լուսավորել էր ջուրը։ Սակայն ծովը բոլորովին թափուր էր։ Այս սառցապատ ջրերում ձկներ չեն ապրում։

«Նաուտիլուսի» ընթացքի արագությունն զգացվում էր միայն նրա անընդհատ երերումից։

Գիշերվա ժամը մոտ երկուսին ես որոշեցի գնալ իմ նավասենյակը, որպեսզի մի քանի ժամ քնեմ։ Կոնսելը հետևեց իմ օրինակին։ Միջանցքով քայլելիս ես չհանդիպեցի նավապետ Նեմոյին։ Ես ենթադրեցի, որ նա հերթապահություն է անում ղեկի խցիկում։

Հետևյալ առավոտ, մարտի 19-ին, ես կրկին տեղ գրավեցի սրահի լուսամուտի մոտ, որ շարունակեմ դիտողություններս։ Նավի արագությունը չափող էլեկտրական գործիքը ցույց տվեց, որ «Նաուտիլուսն» ընթանում է պակաս արագությամբ։ Հիմա նավը բարձրանում էր դեպի ծովի մակերևույթը, բայց ոչ միանգամից, այլ աստիճանաբար, հետզհետե դատարկելով իր պահամանները։

Սիրտս արագ խփել սկսեց։ Արդյոք մեզ կհաջողվի՞ դուրս

գալ չրից։ Արդյոք մենք կհանդիպե՞նք սառույցներից ազատ տարածության։

Բայց ո՛չ։ Ցնցումն ինձ հասկանալ տվեց, որ «Նաուտիլուսը» հասել է համատարած սառույցի տորին շերտին և, դատելով ցնցման խուլ տոնից, այդ շերտը շատ հաստ է։ Արդարև, խտաչափի տվյալները հաստատեցին այդ ենթադրությունը. մենք գտնվում էինք հազար հինգ հարյուր ոտնաչափ խորության տակ։ Նշանակում է մեր վերևում գտնվում էր երկու հազար ոտնաչափ հաստությամբ սառցե շերտը, որից հինգ հարյուր ոտնաչափը դուրս էր եկել չրից։ Հետևաբար այդտեղ համատարած սառույցն ավելի հաստ էր, քան այնտեղ, ուր մենք իջանք չրի տակ։ Դրանում ոչ մի մխիթարական բան չկար։

Օրվա ընթացքում «Նաուտիլուսը» մի քանի անգամ փորձեց դուրս գալ մակերևույթ, բայց միշտ հանդիպում էր հաստ սառույցի առաստաղին։ Տեղ-տեղ այդ «առաստաղի» հաստությունը հասնում էր ինը հարյուր մետրի, այսինքն սառցաշերտերի հաստությունը հավասար էր հազար երկու հարյուր մետրի, որից երեք հարյուր մետրը գտնվում էր չրից դուրս։ Այդ արդեն երեք անգամ ավելի էր, քան սառցալեռների ամենամեծ բարձրությունը մեր չրասույզ լինելու տեղում։

Ես ուշադրությամբ նշում էի սառցալեռների չրասույզ եղած մասերը և այդ կերպ կազմեցի ատորչրյա լեռնաշղթայի պարզունակ քարտեզը։

Մինչև երեկո մեր դրությունը չփոխվեց։ Ատորչրյա սառույցի հաստությունը կլիներ չորս հարյուրից մինչև հինգ հարյուր մետր։ Այսպիսով սառցե ծածկոցը մի փոքր բարակել էր, բայց և այնպես ահագին հաստությամբ սառույցը դեռ մեզ բաժանում էր բաց ծովից։

Արդեն երեկոյան ժամի մոտ վեցն էր։ Սահմանված կարգի համաձայն, «Նաուտիլուսը» պետք է դեռ չորս ժամ առաջ օդի նոր պաշար վերցներ։ Սակայն շնչելիս ես ոչ մի ճնշում չէի զգում, թեպետ նավապետ Նեմոն պահեստի պահամաններից դեռ ոչ մի լիտր թթվածին բաց չէր թողել։

Այդ գիշեր ես վատ քնեցի։ Հույսն ու տագնապը միաժամանակ հուզում էին ինձ։ Մի քանի անգամ ես վեր էի կենում

անկողնից։ Առավոտյան ժամը մոտ երեքին ես մտա սրահ և նայելով խաչափին, տեսա, որ սառցե ծածկոցի ստորջրյա մասի հաստությունն այժմ ընդամենը հիսուն մետր է։ Համատարած սառույցը հեռվեռե սառցադաշտի էր վերածվում։ Ստորջրյա լեռներից հետո սկսվում էր հարթավայրը։

Ես անընդհատ նայում էի խաչափին։ Մենք շարունակ բարձրանում էինք, անցնելով սառույցի թեք մակարդակով, որը շողշողում էր մեր լուսարձակի լույսի տակ։

Ամեն մի կիլոմետր անցնելիս համատարած սառույցի շերտն ավելի ու ավելի էր բարակում։

Վերջապես, այն հիշատակելի օրը, մարտի 19-ին, ժամը վեցին, սրահի դուռը բացվեց և շեմքին երևաց նավապետ Նեմոն, ասելով։

— Ծովն ազատ է սառույցներից։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԲԵՎԵՌԸ

Ես շտապեցի դեպի տախտակամածը։

Այո՛, ծովը սառած չէր։ Միայն տեղ-տեղ լողում էին առանձին սառցակոշտեր և սառցալեռներ։ Ավելի հեռու, հարավային կողմում սառույց բոլորովին չկար։ Հազարավոր թռչուններ ճախրում էին օդում, ամեն զույնի անթիվ ու անհամար ձկներ՝ մուգ կապույտներից սկսած մինչև ձիթենագույնները, խաղում էին ալիքներում։ Ցելսիուսի ջերմաչափը ցույց էր տալիս երեք աստիճան զրոյից վերև։ Համատարած սառույցներում մեր կրած ցրտից հետո այդ զրեթե գարնանային բարեխառնություն էր։

— Որտե՞ղ ենք գտնվում,— հարցրի ես նավապետին։ Սիրտս ուժգին խփում էր։— Բևեռո՞ւմ։

— Ես ինքս էլ չգիտեմ,— պատասխանեց նավապետը։— Կեսօրին, արևի բարձրությամբ կորոշեմ, թե որտեղ ենք գտնվում։

— Բայց արդյոք արևը կերևա՞ այս մառախուղում,—

հարցրի ես, անվստահությամբ նայելով ամպամած երկնքին։

— Եթե նույնիսկ կես րոպով երևա, այդ էլ բավական է,— պատասխանեց նավապետը։

«Նաուտիլուսից» տասը մղոն դեպի հարավ երևում էր առանձին մի կղզի, որ երկու հարյուր մետր բարձր էր ծովի մակերևույթից։ Մենք ուղևորվեցինք դեպի այդ կղզին, սակայն շատ դանդաղ էինք ընթանում, որովհետև ծովում կարող էին ստորջրյա ժայռեր լինել։

Մեկ ժամից հետո մենք մոտեցանք կղզուն։ Այնուհետև երկու ժամվա ընթացքում պտտեցինք կղզու շուրջը։ Առափնյա գիծը չորս—հինգ մղոն երկարություն ուներ։ Կղզին մի փոքրիկ նեղուցով բաժանված էր ինչ-որ ցամաքից, գուցե և մայր ցամաքից, որովհետև դրա սահմանները չէին երևում։ Այդ ցամաքի գոյությունը կարծես թե հաստատում էր Մորիի հիպոթեզը։ Այդ սրամիտ ամերիկացին ուշադրություն էր դարձրել այն հանգամանքի վրա, որ հարավային բևեռի և վաթսունորդ զուգահեռականի միջև ծովը ծածկված է հսկայական մեծության լողուն սառցակղզիներով, որոնց նմանները երբեք չեն լինում հյուսիսային կիսագնդում։ Այդ դիտողությունից նա եզրակացրեց, որ հարավային բևեռային շրջանի սահմաններում պետք է որ գոյություն ունենա մի ինչ-որ մայր ցամաք, քանի որ սառցալեռները կարող են կազմվել ոչ թե ծովում, այլ ցամաքում։ Ըստ նրա հաշվարկումների, հարավային բևեռը շրջապատող սառցե վանդվածը կազմում է մի լայն օղակ, չորս հազար կիլոմետր շառավիղով։

Մինչ այս մինչ այն, «Նաուտիլուսը», վախենալով ծանծաղուտին նստելուց, կանգ առավ ափից երեք կաբելտով հեռու։ Ցամաքի վրա վեհորեն կանգնած էին վիթխարի ժայռերը։ Մակույկն իջեցրին ջուրը։ Նավապետը, գործիքներով բեռնված երկու նավաստի, Կոնսելն ու ես նստեցինք մակույկ։ Առավոտյան ժամը մոտ վեցն էր։

Այդ առավոտ ես դեռ չէի տեսել Նեդ Լենդին։ Կանադացին, տեսնելով հարավային բևեռը, հավանորեն չէր ուզում իրեն հաղթված համարել։

Թիակների մի քանի շարժում, և մակույկը մոտեցավ ավազոտ ափին ու կանգ առավ։

Կոնսելն ուզում էր ափ իջնել, բայց ես չթողեցի։

— Նավապետ Նեմո,— ասացի ես,— այս հողն առաջինը ոտք դնելու պատիվը պետք է պատկանի ձեզ։

— Այո, պարոն պրոֆեսոր,— պատասխանեց նավապետը,— ես այդ կանեմ, առանց տատանվելու, որովհետև հավատացած եմ, որ ինձանից առաջ մարդը երբեք ոտք չի դրել այս հողը։

Այս խոսքերից հետո նա հեշտությամբ թռավ ավազի վրա։ Նրա սիրտն ըստ երևույթին ուժեղ խփում էր ամենախորը հուզումից։ Նա բարձրացավ ժայռը և այնտեղ, ձեռքերը կրծքին խաչած, անշարժ, լուռ, բոցավառ հայացքը սևեռած, կարծես ստանձնեց բևեռային այս երկրների իշխանությունը։ Մի քանի րոպե այսպես հափշտակված կանգնելով, նա դարձավ դեպի մեզ և գոչեց.

— Խնդրեմ, պարոններ, ափ իջեք։

Ես իսկույն թռա ավազի վրա։ Կոնսելը հետևեց ինձ։ Նավաստիները մնացին մակույկում։

Հողը, որքան կտրում էր աչքդ, բաղկացած էր կարմիր տուֆից, կարծես այնտեղ մանրած աղյուս էին ցանել։ Խառամը, սառած լավայի հոսանքները, պեմզայի կտորները ծածկում էին այն։ Կղզին անպայման հրաբխային ծագում ուներ։ Մի քանի տեղերում գետնի տակից բարձրանում էին ծխի քուլաներ, որոնք ծծմբային սուր հոտ ունեին։ Այդ ցույց էր տալիս, որ ստորերկրյա կրակն ամբողջովին պահպանել էր իր ուժը։

Սակայն, նավապետ Նեմոյի օրինակով բարձրանալով ժայռը, ես տեսանելի հորիզոնում չնկատեցի ոչ մի հրաբուխ։ Այս կողմից հայտնի է, որ Ջեյմս Ռոսսն անտարկտիկական ջրերում, 167° երկարության և 77 աստիճան 32′ լայնության տակ հայտնաբերել է երկու գործող հրաբուխ, որոնց անվանել է Տերոր և Էրեբուս։

Կղզու բուսականությունը շատ աղքատ էր։ Մի քանի քարաքոսներ ժայռերի վրա և ծովից ափը նետված ջրիմուռներ։ Ահա կղզու ամբողջ բուսականությունը։ Կենդանական աշխարհը ներկայացնում էին կակղամորթները, զոոֆիտները, մասնավորապես կորալային պոլիպները և ծովաստղերը,

բայց գլխավորապես թռչունները։ Վերջիններիս թիվն այստեղ բավական շատ էր։ Նրանք հազարներով ճախրում էին օդում, իրենց աղմուկով խլացնում մեզ։ Հազարներով նստել էին ժայռերին, առանց վախենալու նայում էին մեզ, թռչկոտում մեր ոտների տակ։ Դրանք պինգվիններ էին, արագ ու ճարպիկ թռչկոտում էին ջրի վրա, այնպես որ, նրանց կարելի էր ձկների տեղ ընդունել, իսկ ցամաքի վրա՝ ծանրաշարժ էին և անճոռնի։ Դրանք հավաքվում էին իրար գլխի, քիչ էին շարժվում, բայց շատ աղմկում, ուղղակի խլացնում մեզ։

Թռչունների մեջ ես տեսա սպիտակ դաշտակոցարները, որ պատկանում են համանուն ընտանիքին, ունեն աղավնու մեծություն, սպիտակ փետուրներ, կարճ, կոնաձև կտուց և կարմիր օղակով շրջապատված աչքեր։

Կոնսելն սպանեց այդ թռչուններից մի քանիսին, որոնք հմտությամբ եփվելու դեպքում շատ համեղ են լինում։

Օդում սավառնում էին խոշոր ալբատրոսները, որոնց թևերը բացվում են մինչև չորս մետր և որոնք իրավամբ կոչվում են օվկիանոսային ուրուրներ. հսկայական մրրկահավերը՝ փոկերի վտանգավոր թշնամիները. ծովահավը՝ բադի մի տեսակը և վերջապես հյուսիսային մրրկահավերի մի ամբողջ երամ։ Դրանք լինում են սպիտակ, թևերի շուրջն ունենում են դարչնագույն շերտեր. լինում են նաև կապույտ մրրկահավեր, որոնք ապրում են միայն Անտարկտիկայում։

— Այդ վերջիններն այնքան յուղալի են, որ Ֆարենյան կղզիների բնակիչները հենց նոր սպանված թռչունի մեջ պատրույգ են դնում և ստացվում է պատրաստի ճրագ,— ասացի ես Կոնսելին։

— Եթե բնությունը մի քիչ էլ ջանք թափեր,— պատասխանեց Կոնսելը,— այդ կլիներ իդեալական լապտեր։ Ափսոս, որ դրանց վրա պատրաստի պատրույգ չկա։

Մեր ափ իջնելու տեղից կես մղոն տարածության վրա գետինն ամբողջովին ծածկված էր պինգվինների բներով, որոնք որջերի էին նման։ Հեռո նավապետ Նեմոն իր նավաստիներին հրամայեց այդ թռչուններից որսալ մի քանի հարյուր հատ, որովհետև նրանց թուխ միսը շատ համեղ է։ Նրանց կռինչը նման է էշի զռոցին։ Այս թռչունները, որ կլինեն սա-

գի չափ, ունեն սև փետուրներ, կրծքի վրա սպիտակ բծեր և պարանոցների վրա դեղին շերտ, թույլ էին տալիս իրենց սպանել քարերով և չէին էլ մտածում փախչել։

Մշուշը չէր ցրվում, և ժամը տասնմեկին արևը դեռ չէր երևում։ Դա շատ էր հուզում ինձ։ Առանց արևի մենք չէինք կարող դիտողություններ անել։ Իսկ առանց դիտողություններ անելու ինչպե՞ս կարող էինք իմանալ, թե հասել ենք բևեռին։

Երբ ես մոտեցա նավապետ Նեմոյին, նա կանգնել էր ժայռին հենված և լուռ նայում էր ծովին։ Նա դժգոհ էր երևում ու երբեմն անհամբերությամբ դիտում էր երկինքը։ Սակայն ի՞նչ արած։ Այդ քաջարի և ուժեղ մարդը չէր կարող երկնքի վրա իշխել այնպես, ինչպես իշխում էր ծովի վրա։

Վրա հասավ կեսօրը, իսկ արևը մի վայրկյան անգամ չերևաց։ Ամբողջ երկինքը ծածկված էր ամպերով և նույնիսկ չէր երևում, թե որտեղ է գտնվում ցերեկվա լուսատուն։

— Մնում է հետաձգել վաղվան,— հանգիստ ասաց նավապետը։ Այնուհետև սկսվեց ձյան մրրիկ, և մենք վերադարձանք «Նաուտիլուս»։

Այն ժամանակ, երբ մենք գտնվում էինք կղզում, «Նաուտիլուսի» նավաստիները կարողացան ջուրը նետել և հանել ուռկանը։ Ես հետաքրքրությամբ դիտում էի բռնված ձկները։ Անտարկտիկական ծովն ապաստան է ծառայում մեծ քանակությամբ ձկների համար, որոնք ավելի ցածր լայնությունների փոթորիկներից փախչում են այստեղ, որպեսզի... ընկնեն, ծովացուլերի և փոկերի ճանկը։ Ես տեսա մի քանի կոճիկային ձկներ, որոնք ունեն քսան սանտիմետր երկարություն, արծաթավուն, թուխ բծերով ծածկված թեփուկ։ Տեսա նաև անտարկտիկական քիմեռներ, երեք ոտնաչափ երկարությամբ, իլիկաձև, ալկուն ու կոկիկ մարմնով, որը երանգավորված է ոսկեգույն-դեղին, թուխ և սպիտակ գույներով, ունի կոնի նման դեպի առաջ ցցված դունչ և երկար թելանման պոչ։ Դրանց միսը ինձ դուր չեկավ, այնինչ Կոնսելին բավական համեղ թվաց։

Ձյան փոթորիկը շարունակվեց մինչև հետևյալ առավոտը։ Անկարելի էր նույնիսկ մի քայլ բարձրանալ տախտակամած։ Նստած լինելով սրահում և օրագրիս մեջ գրանցելով

վերջին օրերի դեպքերը, ես բաց դռնակից լսում էի հյուսիսային և այլ մրրկահալերի կռինչը, որոնք ճախրում էին օդում, չնայած փոթորկին։ «Նաուտիլուսը» ընթանալով ափի երկարությամբ, անցավ էլի մի տասնյակ մղոն դեպի հարավ։ Արևը, որ արդեն իջել էր հորիզոնի վրա, դալուկ կիսալույս էր սփռում։

Հետևյալ օրը, մարտի 20-ին, փոթորիկը դադարեց։ Ցուրտը մի փոքր սաստկացավ։ Ջերմաչափը ցույց էր տալիս երկու աստիճան զրոյից ներքև։ Մշուշը ցրվեց և ես հուսով էի, որ այդ օրը մեզ կհաջողվի աստղագիտական դիտողություններ կատարել։ Նավապետ Նեմոն դեռ չէր գալիս։ «Նաուտիլուսի» մակույկը Կոնսելին և ինձ տարավ անհայտ ցամաքի ափը։ Այստեղ ևս հողը պարզապես հրաբխային ծագումներ։ Ամենուրեք երևում էին լավայի, խարամի, բազալտի հետքեր, բայց ես ոչ մի տեղ չկարողացա գտնել խառնարանը։ Այստեղ ևս, ինչպես նախորդ կղզում, հազարավոր թռչուններ կային։ Բացի թռչուններից, այստեղ կենդանական աշխարհը ներկայացնում էին ծովային կաթնասունների մեծ հոտերը։ Այդ կաթնասունները հեզ աչքերով մեզ էին նայում, երբ մենք անցնում էինք նրանց կողքից։ Դրանք փոկեր էին։ Մի քանիսը պառկած էին ափում, մյուսները փռվել էին սառցակղզիների վրա, մի քանիսն էլ լողում էին ափի մոտ կամ ափ էին դուրս գալիս։ Նրանք չէին վախենում մեր մոտենալուց, որովհետև ըստ երևույթին առաջին անգամ էին տեսնում մարդուն։ Հոտն այնքան մեծ էր, որ բավական կլիներ մի քանի հարյուր որսորդական նավերի համար։

— Ազնիվ խոսք,— ասաց Կոնսելը,— ես չափազանց ուրախ եմ, որ Նեդ Լենդը չի ուղեկցում մեզ։

— Ինչո՞ւ, Կոնսել։

— Որովհետև այդ մոլի որսորդը կկոտորեր բոլոր փոկերին։

— Բոլորին չէր կարող սպանել, ձեռքերը կարճ են։ Բայց որ այդ հեզաբարո կենդանիներից մի քանիսի բանը բուրդ կլիներ, այդ կասկածից դուրս է։ Իսկ այդ դուր չէր գա նավապետ Նեմոյին, որը չի սիրում իզուր թափել անմեղ կենդանիների արյունը։

— Եվ նա բոլորովին իրավացի է։

— Իհարկե, Կոնսել։ Սակայն ասա, դու դեռ չէ՞ս դասակարգել ծովային կենդանիների այդ հիանալի ներկայացուցիչներին։

— Չէ՞ որ պարոնը գիտե, որ ես գործնական բնագետ չեմ։ Եթե պարոնը նեղություն քաշեր ասելու այդ կենդանիների անունները...

— Դրանք փոկեր և ծովացուլեր են։[1]

— Երկու տեսակ, որոնք պատկանում են կաթնասունների դասին, միաորովայնների ենթադասին, մաշկոտների ջոկատին,— շտապեց ասել Կոնսելը։

— Ճիշտ է, Կոնսել,— պատասխանեցի ես,— բայց այդ տեսակները նույնպես տարբեր այլատեսակություններ ունեն, և եթե ես չեմ սխալվում, մենք այստեղ հնարավորություն կունենանք դրանց ղիտելու։ Գնանք։

Առավոտյան ժամի մոտ ութն էր։ Մինչև կեսօր, ասողագիտական դիտողությունների մոմենտը, մեր տրամադրության տակ կար մոտ չորս ժամ։ Ես Կոնսելին առաջարկեցի գնալ ընդարձակ ծովախորշի եզերքով, այն ծովախորշի, որ մխրճվել էր գրանիտե ափերի մեջ։ Այնտեղ ինչքան աչքդ կտրեր, այդ կարելի էր ասել առանց որևէ չափազանցության, հողը, առափնյա սառցակոշտերը և ջրի շերտերը լիքն էին հազարավոր ծովային կաթնասուններով։ Ես աչքերով ակամա որոնում էի Պրոթեոսին, ծովի ասված Նեպտունի այդ հսկայական հոտերի առասպելական հովվին։ Այստեղ կային գլխավորապես փոկեր։ Դրանք տեղավորվում էին ընտանիքներով՝ արուն, ընտանիքի գլուխն ու պաշտպանը և նրա հովանավորության տակ գտնվող էգը, որ կերակրում էր ձագերին։ Արդեն ուժեղացած, մատղաշ արուները խաղում էին առանձին, հեռվում։

Փոկերը ցամաքի վրա շարժվում են մեծ դժվարությամբ, անճոռնի ցատկումներով։ Նրանք սկզբում կանգնում են հեռին ոտների վրա և առաջ են նետվում ամբողջ իրանով,

---

1 Հարավային կիսագնդում ծովացուլեր չեն բնակվում։ (Ծանոթ. խմբ.)։

ապա ծալում են առջևի թաթերը, պառկում կրծքերի վրա, ծռում մեջքերը և այդպիսով առաջ շարժում իրանի հետին մասը։ Կատարելով այդ, նրանք կրկին կանգնում են հետին ոտների վրա, և ապա կրկնվում է ամբողջ այդ գործողությունը։ Սակայն, անճոռնի լինելով ցամաքում, փոկերը շափազանց ճարպիկ են ջրում, շնորհիվ իրենց ճկուն ողնաշարի, խիտ ու կարճ մազերի և թաղանթավոր թաթերի։ Հանգըստանալով ջրի վրա և եզերքին, այդ կենդանիները շատ նըրբագեղ պոզաներ էին ընդունում։ Իզուր չէ, որ հնադարյան մարդիկ, դիտելով նրանց գեղեցիկ շարժումները, չքնաղ աչքերի արտահայտիչ հայացքը, դնչի հեզաբարո տեսքը, բանաստեղծացնում էին այդ կենդանիներին, իրենց լեգենդներում արուներին դարձնելով տրիտոններ, իսկ էգերին՝ ծովահարներ։

Ես Կոնսելի ուշադրությունը հրավիրեցի այդ խելացի կենդանիների խիստ զարդացած, բարձր ճակատների վրա։ Բացի մարդուց, ոչ մի կաթնասուն չունի այնքան քանակությամբ ուղեղային նյութ, որքան փոկերը։ Հենց այս պատճառով փոկերը հեշտությամբ են ենթարկվում վարժեցման։ Նրանք արագությամբ դառնում են ընտելացրած կենդանիներ և ես համաձայն եմ այն մի շարք բնագետների հետ, որոնք ասում են, թե համապատասխան դաստիարակություն ստանալով, նրանք կարող են դդալի օգուտ տալ մարդուն, ձկնորսության և ծովային որսի ժամանակ փոխարինելով շներին։

Երբ մենք անցնում էինք, փոկերի մեծամասությունը քընած էր։ Ավազի և առափնյա ժայռերի վրա ես տեսա սովորական փոկեր դնչից մինչև պոչի ծայրը մեկուկես—երկու մետր երկարությամբ, վերին հաստ շրթունքով, ոլոր-մոլոր կոշտ բեղերով։ Դրանց արտաքին ականջները գրեթե աննկատելի էին, երևում էին միայն փոքրիկ, եռանկյունաձև բարձրություններ։

Այստեղ կային նաև հարավի ծովային փղեր, որոնց կընճիթը կլոր է և համարյա կես մետրի չափ դեպի առաջ է ցցված։ Հինգից մինչև յոթ մետրի չափ երկարություն ունեցող այդ վիթխարի կենդանիները մեզ վրա ոչ մի ուշադրություն չէին դարձնում։

— Արդյոք այդ կենդանիները վնասակար չե՞ն,— հարցրեց Կոնսելը։

— Ոչ,— պատասխանեցի ես,— եթե իհարկե դրանց հանգիստ թողնես։ Բայց երբ հարձակվում են դրանց վրա, մանավանդ, երբ հարձակվում են ձագերի վրա, փոկերը սարսափելի կատաղում են, և քիչ չեն այն դեպքերը, երբ նրանք ջարդուփշուր են անում որսորդների մակույկները։

— Այդպես վարվելով, նրանք բոլորովին իրավացի են,— ասաց Կոնսելը։

— Չեմ վիճում։

Մեզանից երկու մղոն հեռու գտնվում էր ծովի խորքը մտած մի հրվանդան, որ ծովախորշը պաշտպանում էր հարավային քամիներից։ Հրվանդանի ժայռերն ուղղահայաց դիրքով իջնում էին ջուրը։ Ալիքները խփում էին այդ ժայռերի ստորոտներին ու փրփրում։

Այստեղ մենք հանկարծ լսեցինք բարձրաձայն բառաչ, կարծես մոտիկում արածում էր որոճող կենդանիների նախիրը։

— Այստեղ հո եզներ չկա՞ն,— հարցրեց Կոնսելը։

— Դրանք եզներ չեն, այլ ծովացուլեր,— պատասխանեցի ես։

— Կռվո՞ւմ են։

— Կռվում են կամ խաղում։

— Պարոնի թույլտվությամբ ես կուզեի տեսնել այդ։

— Գնանք տեսնենք, Կոնսել։

Եվ ահա մենք սկսեցինք քայլել սև, բազալտե ժայռերի երկայնքով։ Մենք մագլցում էինք ժայռերի վրա, երբ անապատելիորեն մեր ճանապարհը փակվում էր ներքև թափվող հողով, սահում էինք կոկիկ, սառույցներից հղկված քարերի վրա։ Մի քանի անգամ ես սայթաքեցի և ընկա, ստանալով վնասվածքներ։

Կոնսելը, որ ավելի զգույշ էր և ավելի շրջահայաց, ոչ մի անգամ չընկավ և բարձրացնելով ինձ, շարունակ ասում էր.

— Եթե պարոնն աշխատեր ավելի լայն քայլեր անել, նրա համար հեշտ կլիներ պահպանել հավասարակշռությունը։

Բարձրանալով հրվանդանը, մենք տեսանք մի ընդարձակ, ձյունապատ հարթություն, ուր ցրված էին ծովացուլերը։

Կենդանիները խաղում էին միմյանց հետ։ Մեզ հասած աղմուկը զվարճության և ոչ թե կատաղության աղմուկ էր։

Ծովացուլերը թե՛ իրենց մարմնի ձևով և թե՛ մարմնի անդամների դասավորությամբ նման են փոկերին։ Սակայն նրանց ստորին ծնոտների վրա չկան ժանիքներ ու կտրիչներ, իսկ վերին ծնոտն ունի ութսուն սանտիմետր երկարությամբ և երեսուն երեք սանտիմետր հաստությամբ երկու ժանիք։ Ծովացուլի ժանիքները բաղկացած են կոկիկ, հղկված ոսկորից, որ ամուր է և շուտ չի դեղնում ինչպես փղոսկրը, ուստի շատ թանկ է գնահատվում շուկաներում։ Այս պատճառով ծովացուլերն անխնա ոչնչացվում են և հեռու չէ այն ժամանակը, երբ նրանք բոլորովին կկոտորվեն, որովհետև որսորդները սպանում են թե՛ արուներին, թե՛ էգերին ու ձագերին։

Անցնելով այդ հետաքրքիր կենդանիների մոտից, որոնք մեզանից չէին վախենում, ես լավ դիտեցի նրանց։-Այդ կենդանիների կաշին հաստ է ու կոշտ, ունի թուխ-շեկ գույն և ծածկված է ոչ խիտ ու կարճ բրդով։ Մի քանի արուներ ունեն մինչև չորս մետր երկարություն։ Հարավային ծովացուլերը, որ ավելի հանդիստ են և ավելի քիչ երկչոտ, քան իրենց հյուսիսային ցեղակիցները, իրենց պառկելու տեղերում պահակներ չեն կանգնեցնում։

Դիտելով նրանց պառկելու տեղերը, ես որոշեցի վերադառնալ։ Արդեն առավոտյան ժամի մոտ տասնմեկն էր, և ես ուզում էի ներկա գտնվել տեղի լայնությունը որոշելիս, եթե եղանակը նավատետ նեմոյին թույլ տար դիտողություններ կատարել։

Ճիշտ է, դրա համար շատ քիչ հույս կար։ Արևը թաքնված էր ամպերում, որոնք ծածկել էին ամբողջ երկինքը։ Թվում էր, թե ցերեկվա նախանձոտ լուսատուն դիտմամբ թաքնվել է ամպերի տակ, որպեսզի մարդկանցից ծածկի երկրագնդի այդ անմատչելի անկյունը։

Մենք գնացինք մի նեղ կածանով, որ ձգվում էր ժայռերի շուրջը։ Տասներկուսի կեսին մենք մոտեցանք այն տեղին, որտեղ ափ էինք իջել։ Մակույկը, որ դուրս էր քաշված ավա-

դի վրա, արդեն ափ էր հասցրել նավապետ Նեմոյին։ Նա կանգնած էր բազալտե ժայռի գագաթին։ Նրա մոտ գտնվում էին աստղագիտական պարագաներ։ Նրա հայացքը շարունակ ուղղված էր դեպի հյուսիս, հորիզոնի այն կետը, ուր այժմ պետք է գտնվեր ամպերում թաքնված արևը։

Ես կանգնեցի նավապետի կողքին և լուռ սպասում էի։ Վրա հասավ կեսօրը, սակայն արևը չէր երևում, ինչպես և նախընթաց օրը։

Դիտողությունները, դարձյալ ձախողվեցին։ Եթե հետևյալ օրն էլ արևը չերևա, ստիպված կլինենք հրաժարվելու բևեռի տեղը ճիշտ որոշելու փորձից։

Արդարև, մարտի 20-ն էր։ Վաղը, մարտի 21-ին, լինելու է գիշերահավասար և եթե հաշվի չառնենք ճառագայթների բեկումը, ապա արդեն վաղն արևը կշքանա հորիզոնի հետևում և կսկսվի բևեռային երկար, վեց ամիս տևող գիշերը... Սեպտեմբերյան գիշերահավասարից հետո հյուսիսային հորիզոնում ծագած արևը մինչև դեկտեմբերի 21-ն ավելի ու ավելի երկարացող պարուրներով բարձրանում էր երկնքի վրա։ Ամառային արևադարձի այդ օրը հարավային կիսագնդում նա կրկին իջնել սկսեց, օրեցօր ավելի և ավելի ցածրացավ և, վերջապես, վաղն իր վերջին ճառագայթներն էր արձակելու այս ցամաքի վրա։

Իմ այս մտքերը ես հաղորդեցի նավապետ Նեմոյին։

— Դուք իրավացի եք, պարոն պրոֆեսոր,— պատասխանեց նա,— եթե վաղը, մարտի քսանմեկին, ինձ չհաջողվի որոշել հորիզոնի վրա արևի թեքման բարձրությունը, ապա ընտիպված կլինեմ վեց ամսով հետաձգել այդ։ Բայց եթե վաղն արևը երևա թեկուզ մեկ րոպեով, ինձ համար առանձնապես հեշտ կլինի որոշել նրա բարձրությունը հորիզոնից, շնորհիվ այն բանի, որ դեպքերի բերմամբ մենք այստեղ հասել ենք գիշերահավասարի նախօրյակին։

— Ինչո՞ւ, նավապետ։

— Որովհետև երբ արևը երկնքում պարուրաձև շրջան է կատարում, շատ դժվար է որոշել, թե որչափ բարձր է հորիզոնից։ Այսպիսի դեպքերում գործիքների տվյալները հաճախ սխալ են լինում։

— Իսկ վաղն ի՞նչ փոփոխություն կլինի։

— Վաղը ես կկարողանամ ճշգրիտ դիտողություններ կատարել առանց գործիքների, միմիայն ժամանակաչափի օգնությամբ։ Եթե վաղը, մարտի քսանմեկին, կեսօրին արևի ընկավառակը, հաշվի առնելով, իհարկե, բեկումը, լինի հյուսիսային հորիզոնի ճիշտ մեջտեղում, այդ կնշանակի, որ մենք գտնվում ենք հենց բևեռի վրա։

— Իսկապես,— ասացի ես,— սակայն մյուս կողմից այդ մաթեմատիկորեն ճիշտ չի լինի, որովհետև գիշերահավասարի մոմենտը չի զուգադիպում կեսօրվան։

— Ես այդ գիտեմ, պարոն պրոֆեսոր, սակայն այդ անճշտությունը նշանակություն չունի իմ նպատակների համար, այն կարող է լինել հարյուր մետրի սահմաններում, որ ինձ չի հետաքրքրում։ Այդպես ուրեմն, մինչև վաղը։

Նավապետ Նեմոն վերադարձավ «Նաուտիլուս»։ Ես ոչ կոնսելը մինչև ժամը հինգը մնացինք ափում։ Մենք թափառում էինք ավազոտ եզերքին, ուսումնասիրում ու դիտում բուսական ու կենդանական աշխարհը, սակայն ոչ մի հետաքրքիր բան չգտանք, եթե չհաշվենք պինգվինի մի ձուն, որ հետաքրքիր էր իր մեծությամբ ու գույնով։ Ունենալով կապույտ գույն և նախշված լինելով բևեռադրների նմանվող ինչոր շերտիկներով ու կետերով, այն մի զվարճալի առարկա էր, որի համար սիրողը չէր խնայի նույնիսկ հազար ֆրանկ։ Ես այդ ձուն հանձնեցի Կոնսելին։ Իմ զգույշ օգնականը տարավ այն ինչպես թանկագին ճենապակի և բարեհաջող կերպով հասցրեց «Նաուտիլուս», որտեղ, թանգարանի ցուցափեղկերից մեկում, այդ ձուն իր համար ապաստան գտավ։

Ճաշի ժամանակ ես մեծ ախորժակով կերա փոկի լյարդի մի պատառ, որ իր համով հիշեցնում էր խոզի միսը։ Հետո պառկեցի քնելու, չմոռանալով, ինչպես արևապաշտ հնդիկները, ցերեկվա լուսատուին կոչ անել, որ վաղը կեսօրին ողորմածաբար մեզ նայի։

Հետևյալ օրը, մարտի 21-ին, առավոտյան ժամը հինգերբ ես բարձրացա տախտակամած, նավապետ Նեմոն արդեն այնտեղ էր գտնվում։

— Եղանակը կարծես պարզվում է,— ասաց նա ինձ,—

ես սկսում եմ հուսալ։ Նախաճաշից հետո մենք կգնանք ծովափ և այնտեղ հարմար դիտակետ կընտրենք։

Պայմանավորվելով նավապետի հետ, ես գնացի Նեդ Լենդի մոտ։ Ես ուզում էի նրան հրավիրել ծովափ։ Սակայն կամակոր կանադացին կտրականապես հրաժարվեց։ Ես նկատում էի, որ նա օրը օրին դառնում է ավելի ու ավելի մռայլ ու ջղագրգիռ։ Սակայն այս անգամ նրա կամակորությունն ինձ տհաճություն չպատճառեց. ծովափում խիստ շատ էին փոկերը, և այս չզջացած մեղապարտին չպետք էր իզուր գայթակղեցնել։

Նախաճաշից հետո ես գնացի ծովափ։ Գիշերը «Նաուտիլուսն» էլի մի քանի մղոն դեպի հարավ էր շարժվել։ Հիմա նավը կանգնած էր բաց ծովում, ափից չորս կիլոմետր հեռու։ Ծովափից բարձրանում էր չորս հարյուր-հինգ հարյուր մետր բարձրությամբ մի գագաթ։ Մակույկում, բացի ինձանից, գտնվում էին նավապետ Նեմոն և «Նաուտիլուսի» անձնակազմից երկու նավաստի։ Նավապետն իր հետ վերցրել էր դիտողությունների հետևյալ ոչ-բարդ գործիքները—ժամանակաչափը, հեռադիտակն ու ծանրաչափը։

Նավից մինչև եզերք անցնելիս մենք տեսանք մի քանի կետեր։ Վիթխարի կաթնասուններն, ամբողջ վտառներով խայտում էին այդ ծովի անդորր ջրերում, և ես հասկացա, որ մարդուն անմատչելի այդ հարավային բևեռային ավազանը ապաստարան էր ծառայում անխնա ոչնչացվող կետերի համար։

Ժամը իններին մենք հասանք ցամաք։ Երկինքը պարզվեց։ Ամպերը չվում էին դեպի հյուսիս։ Մշուշը հետզհետե ցրվում էր։ Նավապետ Նեմոն քայլեց ուղիղ դեպի բլուրը, որի վրա ըստ երևույթին ուզում էր դիտակետ ընտրել։ Սլկուն, սառցապատ ժայռերով բարձրանալը շատ դժվար էր։ Նավապետը բարձրանում էր ուղղաբերձ լանջերով, այնպիսի ճարպկությամբ, որը նախանձելի էր պիրենեյան այծյամի որսորդի համար։ Ես դժվարությամբ էի հասնում նավապետի հետևից, զարմանալով նրա արագաշարժության վրա, որ անապատելի էր մանավանդ այն պատճառով, որ նավապետը երկար ժամանակ չէր եղել ցամաքում։

Գագաթը բարձրանալու համար մենք կորցրինք համարյա երկու ժամ։ Գագաթից մեր առջև բացվեց ծովային մի հիանալի տեսարան։ Հյուսիսային կողմում պարզ երևում էր համատարած սառույցների մի մասը։ Բլուրի ստորոտում փռվել էր սպիտակափառ, ձյունապատ հարթությունը։ Մեր վերևում երկինքը դժգույն-կապույտ էր։ Ջրից դուրս էր եկել արևի հրե սկավառակի մի փոքրիկ ծայրը, որ կարծես ներքևից կտրված էր հորիզոնի գծով։ Կետ ձկների նետած հարյուրավոր ջրասյունները բարձրանում էին շատրվանի նման ու թափվում ծովի վրա։ Հեռվում, բաց ծովում երևում էր «նաուտիլուսը», որ զարմանալի կերպով նման էր քնած կետի։ Դեպի արևմուտք, դեպի արևելք, որքան տեսներ աչքդ, փռված էր ցամաքը, ուր քառասային վիճակում երևում էին ապառաժներն ու ժայռերը։

Ելնելով բլուրի գագաթը, նավապետ Նեմոն առաջին հերթին որոշեց բլուրի բարձրությունը ծովի մակերևույթից, որպեսզի հետո ուղղումներ մտցնի իր դիտողությունների մեջ։

Տասներկուսից քառորդ պակաս արևի սկավառակը, որ մինչ այդ երևում էր ճառագայթների բեկման հետևանքով, դուրս եկավ հորիզոնից և իր կարմրավառ ճառագայթներով լուսավորեց տխուր, ամայի ցամաքն ու ծովը, ուր մեզանից առաջ ոչ մի մարդ չէր եղել։

Նավապետ Նեմոն, զինվելով հեռադիտակով, որի հայելին ճառագայթների բեկման շնորհիվ ճշտում էր տեսողության պատրանքը, սկսեց հետևել ցերեկվա լուսատուին, որ շատ երկար կորագծով սահում էր հենց հորիզոնի վրա։ Ես ձեռքումս բռնել էի ժամանակաչափը և հետևում էի թվատախտակի վրա դանդաղ սողացող սլաքներին։ Սիրտս արագ խփում էր։ Եթե արևի սկավառակի կեսը հորիզոնում չքանար ուղիղ կեսօրին, ուրեմն մենք բևեռի վրա չէինք։

— Կեսօր է,— գոչեցի ես։

— Հարավային բևեռն է,— հուզված ձայնով պատասխանեց ինձ նավապետ Նեմոն։ Նա ինձ մեկնեց հեռադիտակը, որը ես դրի աչքերիս ու համոզվեցի, որ արևի սկավառակը հորիզոնի գծով երկու բոլորովին հավասար մասի է բաժանված։

Արևի վերջին շողերը դեռ լուսավորում էին բլրագագաթը, մինչդեռ բլուրի լանջերով արագությամբ դեպի վեր էին սողում վեցամսյա բևեռային գիշերի սուլերները։

Ձեռքը դնելով ուսիս, նավապետ Նեմոն սկսեց խոսել։

— Պարոն պրոֆեսոր,— ասաց նա,— 1600 թվականին հոլանդացի Հերիկը, մրրիկներով ու հոսանքներով տարված, իր նավով հասավ 84° լայնության և հայտնագործեց Հարավ-Շետլանդյան կղզիները։ 1773 թվականի նոյեմբերի տասնյոթին հռչակավոր նավապետ Կուկը, լողալով երեսունութերորդ միջօրեականի երկարությամբ, հասավ մինչև 67°37′ հարավային լայնության, իսկ հետևյալ։ 1774 թվականին, հունվարի երեսունին, նա ինքը, շարժվելով հարյուր իններորդ միջօրեականի երկարությամբ, հասավ 71°15′ հարավային լայնության։ 1819 թվականին ռուս հետազոտիչ Բելլինսհաուզենը եղավ վաթսուներորդ զուգահեռականի վրա, իսկ երկու տարուց հետո, 1821 թվականին՝ վաթսունվեցերորդ զուգահեռականի վրա 111° արևմտյան երկարության տակ։ 1820 թվականին անգլիացի Բրանսֆիլդը 65° տակ կանգ առավ սառույցների առաջ։ Նույն թվականին ամերիկացի Մորելը, որի պնդումներն ի դեպ ասած, այնքան էլ արժանի չեն վստահության, ընթանալով քառասուներկուերորդ միջօրեականի երկարությամբ, 70°14′ տակ տեսավ բաց ծովը։ 1825 թվականին անգլիացի Պոուելին սառույցները խանգարեցին 62°-ից ավելի հեռու գնալ։ Սակայն նույն թվականին փոկերի հասարակ մի որսորդ, անգլիացի Վեդելը, հասավ մինչև 72° 14′ լայնության, 35° երկարության տակ և մինչև 74° 15՝ լայնության, 36° երկարության տակ։ 1829 թվականին անգլիացի Ֆերստերը, «Շանտեկլյոր» նավի պետը, 63° 26′ լայնության և 66°26′ երկարության տակ հայտնագործեց «անտարկտիկական ցամաքը»։ 1831 թվականին, փետրվարի մեկին, անգլիացի Բիսկոեն 36°50′ տակ հայտնագործեց Էնդերբի երկիրը, իսկ մի տարուց հետո, 1832 թվականի փետրվարի հինգին՝ Ադելաիդա կոչված ցամաքը 67° լայնության տակ և վերջապես, փետրվարի քսանմեկին՝ Գրահամ ցամաքը՝ 64°45′ լայնության տակ։ 1838 թվականին ֆրանսիացի Դյումոն Դյուրվիլը, որ համատարած սառույցնե-

րի պատճառով կանգ էր առել 62°57′ լայնության տակ, հայտնագործեց Լուի-Ֆիլիպի երկիրը։ Երկու տարուց հետո, 1840 թվականի հունվարի քսանմեկին 66°30′ լայնության տակ նա գտավ Ադելի կղզին, այնուհետև, ութ օրից հետո 64°40′ տակ—Կլարենս կղզին։ 1838 թվականին անգլիացի Ուիլկսը, ընթանալով հարյուրերորդ միջօրեականի երկարությամբ, հասավ 69° լայնության։ 1839 թվականին անգլիացի Բալլենին հայտնագործեց իր անունը կրող կղզիները։ 1842 թվականի հունվարի տասներկուսին անգլիացի Ջեմս Ռոսը, գլխավորելով «Էրեբուսի» և «Տեռորի» գիտարշավը 76°56′ լայնության 171°7′ արևելյան երկարության տակ գտավ Վիկտորիա ցամաքը։ Նույն ամսի քսաներեքին նա հասավ յոթանասունչորսերորդ զուգահեռականին, ավելի շատ գնալով դեպի հարավ, քան իր նախորդներից որևէ մեկը։ Հունվարի քսանյոթին նա հասավ 76°8′, քսանութին—77°32′, փետրվարի երկուսին—77°4′։ 1842 թվականին Ռոսը վերադարձավ Անտարկտիդա, բայց չկարողացավ 71° ավելի վեր բարձրանալ։ Վերջապես, ես, նավապետ Նեմոս, 1868 թվականի մարտի քսանմեկին հասա հարավային բևեռը, կամ 90° հարավային լայնության և ստանձնում եմ երկրագնդի այդ մասի տիրապետությունը։

— Ո՞ւմ անունից եք ստանձնում այս ցամաքի տիրապետությունը, նավապետ։

— Իմ սեփական անունից, պարոն պրոֆեսոր։

Այս խոսքերի վրա նա բացեց մի մեծ, սև դրոշակ, որի վրա ասեղնագործած էր «N» տառը, և երեսը դարձնելով դեպի ցերեկվա լուսատուն, որի վերջին շողերը դեռ լուսավորել էին հորիզոնը, բացականչեց.

— Մնաս բարով, արև։ Չքացիր, շողշողուն լուսատու։ Սուզվիր այս ազատ ծովը և վեց ամիս գիշերային խավարով ծածկի՛ր իմ նոր սեփականությունը։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ԴԺԲԱԽՏ ԴԵՊՔ ԿԱՄ ՁՆՁԻՆ ՊԱՏԱՀԱՐ

Հետևյալ օրը, մարտի 22-ին, առավոտյան ժամը վեցին «Նաուտիլուսում» սկսեցին պատրաստվել վերադառնալու։ Մթնշաղի վերջին լույսերը կորան գիշերային խավարում։ Ցուրտը բավական զգալի էր։ Համաստեղությունները ապշեցուցիչ պայծառությամբ էին փայլում երկնքում։ Երկնակամարում շողում էր կուրացուցիչ Հարավային խաչը, որի աստղերից մեկը հարավային կիսագնդում խաղում էր բևեռային աստղի դերը։

Ջերմաչափ անդիկը իջավ մինչև 12° զրոյից ներքև։ Պաղ քամին խփում էր դեմքներիս։ Բաց ծովը եզերքի մոտ ծածկվում էր բարակ սառույցով և կարելի էր սպասել, որ շուտով ամբողջ ծովը կսառչի։ Ակներև էր, որ վեց ամիս տևող գիշերվա ընթացքում հարավային բևեռամերձ ավազանը բոլորովին անմատչելի է դառնում։ Այդ ժամանակ ի՞նչ էին անում կետերը։ Ամենից հավանականն այն է, որ նրանք սառույցի տակ լողում էին դեպի հյուսիս՝ չսառչող ծովերը։ Իսկ փոկերն ու ծովացուլերը, որոնք ընտելացած են սառուցի սառնամանիքներին, մնում են այդ սառցապատ երկրներում։ Այդ կենդանիները կարողանում են անցքեր բանալ սառցադաշտերում և չեն թողնում, որ այդ անցքերը ծածկվեն սառույցով։ Նրանք շնչում են այդ անցքերի միջով։ Երբ ցրտից հալածված թռչունները թռչում են դեպի հյուսիս, ավելի տաք երկրներ, ծովացուլերն ու փոկերը մնում են բևեռային ցամաքի միակ տերերը։

Մինչ այս մինչ այն, «Նաուտիլուսը» ջուր լցրեց պահամանները և սկսեց ջրասույզ լինել։ Հազար մետր խորանալով նավը դադարեցրեց ջրասույզ լինելը, մեքենան սկսեց աշխատել, և նավը մեկ ժամում տասնհինգ մղոն արագությամբ սկսեց լողալ դեպի հյուսիս։ Երեկոյան մենք արդեն գտնվում էինք համատարած սառույցների ահագին հաստություն ունեցող կամարի տակ։

«Նաուտիլուսը» կարող էր անապասելի կերպով ընդհար-

վել որևէ լողացող սառցակոշտի հետ, այս պատճառով, զգուշության համար, սրահի լուսամուտների փեղկերն ամուր փակվեցին։ Այդ օրը ես նվիրեցի իմ գրանցումները կարգի բերելուն։ Ես ամբողջովին խորասուզվեցի բևեռի վերաբերյալ հիշողությունների մեջ։

Երկրագնդի այդ ամենաանմատչելի կետին մենք հասանք առանց հոգնածության, լիակատար հարմարություններով, կարծես մեր լողացող վագոնն այնտեղ հասել էր երկաթուղու ռելսերով։

Հիմա մենք նույն հարմարություններով վերադառնում էինք։ Արդյոք այդ ճանապարհին նոր հրաշքներ չէի՞ն սպասում մեզ։ Ես դրանում գրեթե հավատացած էի, այնքան անսպառ է ծովի գանձարանը։

Հինգ և կես ամսվա ընթացքում, ստորջրյա նավին հանդիպելու մոմենտից սկսած՝ մենք անցել էինք տասնչորս հազար լյո և որքա՞ն հրաշալի, անակնկալ ու սարսափելի արկածներ էինք ունեցել այդ ճանապարհին, որ գրեթե մեկուկես անգամ ավելի է երկրի հասարակածի երկարությունից։

Ամբողջ գիշերն ինձ պաշարել էին «Նաուտիլուսում» ապրած կյանքի տեսիլները, ոչ մի վայրկյան թույլ չտալով, որ փակեմ հոգնած աչքերս։ Ես հիշում էի Կրեսպո կղզու մոտ գտնվող ստորջրյա անտառներում մեր որսը, հարկադիր կանգառնելը Թորրեսի նեղուցում, կորալային դերեզմանոցը օվկիանոսի հատակում, Ցեյլոնի մարգարտաբեր ծանծաղուտները, Արաբական թունելը, Վիգո ծովախորշի ոսկին, Ատլանտիդան, Հարավային բևեռը...

Առավոտյան ժամը երեքին ես երազներից արթնացա մի ուժեղ ցնցման պատճառով։ Ես նստեցի անկողնիս վրա և սկսեցի լարված ականջ դնել։ Հանկարծ «Նաուտիլուսը» թեքվեց, և ես անկողնից ընկա հատակին, նավասենյակի մեջտեղը։

Պատերից բռնելով ես հասա սրահ։ Այստեղի ամբողջ կահկարասին տեղահան էր եղել և թափվել հատակին։ Բոլոր բեբախտաբար թանկագին ցուցափեղկերն ամուր փակված էին և հավաքածոները չէին վնասվել։ Աջակողմի պատից կախված պատկերները կարծես կպել էին պատերին,

մինչդեռ հակադիր կողմում նրանց ստորին ծայրը մի ամբողջ տոնաչափ բաժանված էր պաստառներից։ «Նաուտիլուսը» թեքվել էր աջ կողմը և կանգնել էր բոլորովին անշարժ։

Միջանցքներից լսվեց ոտների դոփյուն և ձայների խուլ դժոց։ Սակայն նավապետ Նեմոն չէր երևում։ Այն րոպեին երբ ես պատրաստվում էի դուրս գալ սրահից, ներս մտան Նեդ Լենդը և Կոնսելը։

— Ի՞նչ է պատահել,— անմիջապես հարցրի ես։

— Ես եկա այդ մասին հարցնելու պարոնին,— պատասխանեց Կոնսելը։

— Գրողը տանի,— բացականչեց կանադացին,— ես գիտեմ ինչ է պատահել։ «Նաուտիլուսը» նստել է ծանծաղուտին և, դատելով նրա թեքվածքից, ավելի ամուր է նստել, քան անցյալ անգամ, Թորրեսի նեղուցում։ Այս անգամ այնքան էլ հեշտ չի լինի ազատվել ծանծաղուտից։

— Չգիտե՞ք արդյոք, մենք բարձրացե՞լ ենք օվկիանոսի երեսը,— հարցրեց Կոնսելը։

— Չգիտեմ,— պատասխանեց կանադացին։

— Դրանում հեշտ է համոզվել,— ասացի ես։

Ես մոտեցա խտաչափին։ Որքա՞ն զարմացա, տեսնելով, որ սլաքը ցույց է տալիս երեք հարյուր վաթսուն մետր խորություն։

— Այս ի՞նչ է նշանակում,—հարցրի ես։

— Պետք է հարցնել նավապետ Նեմոյին,— ասաց Կոնսելը։

— Բայց որտե՞ղ գտնենք նրան,— առարկեց Նեդ Լենդը։

— Հետևեցեք ինձ,— ասացի ես ընկերներիս։

Մենք դուրս եկանք սրահից։ Գրադարանում ոչ ոք չկար։ Դեպի դռնակը տանող սանդուղքի վրա նույնպես ոչ ոք չկար։ Ես մտածեցի, որ նավապետ Նեմոն գտնվում է ղեկի խցիկում։ Անհարմար էր նրան այնտեղ անհանգստացնել, այս պատճառով մենք բոլորս վերադարձանք սրահ։

Չեմ պատմի Նեդ Լենդի գանգատների ու տրտունջների մասին։ Այս անգամ նա լիակատար հիմք ուներ ջղայնանալու։ Ես նրան չէի խանգարում իր վատ տրամադրությունն արտահայտելիս, բայց նաև չէի պատասխանում։

Այսպես մենք նստեցինք քսան րոպե, լսելով «Նաուտի-

լուսի» միջանցքների ամենաշնչին աղմուկը։ Հանկարծ նավապետ Նեմոն մտավ սրահ։ Թվում էր, թե նա մեզ չնկատեց։ Սովորաբար անխռով նրա դեմքն այս անգամ սաստիկ հուզում էր արտահայտում։ Նա լուռ մոտեցավ կողմնացույցին, խտաչափին, վերջապես, կանգ առավ քարտեզի առաջ և մատը դրեց մի կետի, այն մասում, ուր գտնվում էր Հարավային օվկիանոսը։

Ես չէի ուզում խանգարել նրա մտքերը։ Սակայն մի քանի րոպեից հետո, երբ նա դարձավ դեպի ինձ, ես նրան հարցրի.

— Արդյոք մի որևէ շնչին պատահա՞ր է եղել, նավապետ։

— Ոչ, պարոն պրոֆեսոր,— պատասխանեց նա,— այս անգամ դժբախտ դեպք է պատահել։

— Լո՞ւրջ է այդ դեպքը։

— Գուցե և լուրջ։

— Մեզ անմիջական վտա՞նգ է սպառնում։

— Ոչ։

— «Նաուտիլուսը» նստել է ծանծաղուտի՞ն։

— Այո։

— Այդ ինչպե՞ս պատահեց։

— Բնության մի ինչ-որ անբացատրելի խաղ, որի մեջ մեղավոր չէ ղեկավարը։ «Նաուտիլուսը» վարելիս նա ոչ մի սխալ չի կատարել... Սակայն մենք անզոր ենք խանգարելու ձգողության օրենքը, որ իր ներգործությունն է կատարում... Կարելի է խուսափել մարդու սահմանած օրենքներից, սակայն բնության օրենքներից՝ երբե՛ք։

Նավապետ Նեմոն փիլիսոփայություններ անելու համար այնքան էլ հաջող մոմենտ չընտրեց։ Ըստ էության ասած՝ նա իր պատասխանով ոչինչ չհաղորդեց ինձ։

— Արդյոք կարո՞ղ եք ինձ ասել, նավապետ, թե ինչն է այս պատահարի պատճառը,—հարցրի ես։

— Շուտ է եկել մի հսկայական սառցակոշտ, մի ամբողջ սառցալեռ... Երբ սառցալեռների հիմքերը հալչում են տաք հոսանքներից, նրանց ծանրության կենտրոնը տեղափոխվում է և նրանք շուռ են գալիս։ Այդպիսի մի սառցալեռ ընդհարվեց «Նաուտիլուսին», երբ վերջինս լողում էր ջրի տակ։ Շուռ

եկող սառցալեռան ստորին մասը վերցրեց «Նաուտիլուսը», բարձրացրեց և շուռ տվեց կողքի։

— Բայց մի՞թե չի կարելի «Նաուտիլուսը» հանել ծանծաղուտից, դատարկելով նրա պահամաններն և այդ կերպ պակասեցնելով ծանրությունը։

— Հիմա մենք այդպես էլ անում ենք, պարոն պրոֆեսոր։ Սկանջ դրեք, այնտեղ աշխատում են պոմպերը, ջուրը դուրս են մղում։ Նայեցեք խոտաչափի սլաքին՝ «Նաուտիլուսը» վեր է բարձրանում, բայց նրա հետ բարձրանում է նաև սառցալեռը։ Դրությունը չի փոխվի այնքան, մինչև որ մի որևէ խոշընդոտ կանգնեցնի այդ շարժումը։

Հիրավի, «Նաուտիլուսը» շարունակում էր թեքվել աջ կողմի վրա։ Անկասկած, նավն ուղիղ դիրք կստանա, հենց որ սառցալեռն այլևս չպտտվի իր նոր ծանրության կենտրոնի շուրջը։ Սակայն ո՞վ գիտե արդյոք չի՞ պատահի այնպես, որ սառցալեռան պտույտը կանգ առնի համատարած սառույցների ստորին մակերևույթի միջոցով, և արդյոք մենք հրակայական ուժով չե՞նք սեղմվի, գուցե և ճզմվի երկու սառցե զանգվածների միջև։

Մինչև ես կխորհեի «Նաուտիլուսի» հետ պատահած դժբախտ դեպքի բոլոր հնարավոր հետևանքների մասին, նավապետ Նեմոն շարունակ նայում էր խոտաչափի սլաքին։ Սառցալեռան հետ ընդհարվելուց հետո «Նաուտիլուսն» արդեն հարյուր հիսուն ոտնաչափ դեպի վեր էր բարձրացել, բայց աջակողմի թեքման անկյունը նույնն էր մնացել։

Հանկարծ ստորջրյա նավը ցնցվեց։ «Նաուտիլուսն» սկսեց ուղիղ դիրք ստանալ։ Սրահի աջ պատին փակցված պատկերները փոխեցին իրենց դիրքը, պատերը նույնպես նկատելիորեն մոտենում էին ուղղահայաց գծին։ Մենք բոլորս մտազբաղ էինք և լուռ։ Շունչներս պահած հետևում էինք, թե ինչպես դանդաղ, հետզհետե ուղղվում է նավը։ Սրահի հատակը հորիզոնական դիրք ստացավ։

— Վերջապես մենք շտկվեցինք,— բացականչեցի ես։

— Այո, վերջապես,— ասաց նավապետ Նեմոն, քայլելով դեպի դուռը։

— Բայց հիմա մենք դուրս գալի՞ս ենք ջրի տակից,— հարցրի ես։

— Իհարկե,— պատասխանեց նա,— չէ՞ որ պահամաններն ամբողջովին չեն դատարկված, և հենց որ պոմպերը նրանց միջից դուրս մղեն ամբողջ ջուրը, «Նաուտիլուսը» դուրս կգա ջրի երեսը։

Նավապետը դուրս գնաց և նրա հրամանով իսկույն դադարեց պոմպերի աշխատանքը, հետևապես նաև «Նաուտիլուսի» շարժումը դեպի վեր։ Արդարև, եթե մենք շարունակեինք բարձրանալ, կարող էինք ընդհարվել համատարած սառույցների ստորին մակերևույթին, այնպես որ ավելի լավ էր մնալ խորության այդ մակարդակի վրա։

— Հը՛, կարծեմ մենք լավ պրծանք,— ասաց Կոնսելը։

— Այո, այդ սառցալեռները հեշտությամբ կարող էին ճզմել մեզ, կամ լավագույն դեպքում գերի պահել։ Իսկ այդ դեպքում, հնարավորություն չունենալով օդի նոր պաշար վերցնել... Այո, մենք լավ պրծանք։

— Եթե միայն իրոք որ ազատվեցինք,— կամացուկ ասաց Նեդ Լենդը։

Ես չցանկացա ապարդյուն վեճի բռնվել կանադացու հետ և ոչինչ չպատասխանեցի նրա դիտողության։ Բացի դրանից, այդ րոպեին բացվեցին սալոնի փեղկերը, և մենք նետվեցինք դեպի լուսամուտը։

Լուսարձակի փայլը լուսավորել էր ջուրը։ Ինչպես ես արդեն ասացի, նավն ազատ լողում էր ջրում։ Սակայն մեզանից տասը մետրի վրա երևում էին սառցե պսպղուն պատերը։ Վերևից ու ներքևից՝ նույնպիսի պատեր։ Վերևինը համատարած սառույցի ստորին մակերևույթն էր, որ վիթխարի առաստաղի նման կախվել էր մեր գլխին։ Ներքևում հատակի տեղ էր ծառայում շուռ եկած սառցալեռը, որ հենակետեր էր գտել իր կողքի պատերում և ամուր մնացել այդ դիրքում։

Այսպիսով «Նաուտիլուսը» գտնվում էր քսան մետր լայնությամբ և անշարժ ջրով լեցուն մի իսկական սառցե թունելում։ Հետևաբար մենք կարող էինք անարգել դուրս գալ այնտեղից, ընթանալով կամ դեպի առաջ կամ ետ, և ապա

իջնելով մի քանի հարյուր մետր, անցնել համատարած սառույցների գոտին։

Չնայած, որ առաստաղի լապտերները չէին վառվում, սրահը հեղեղված էր պայծառ լույսով։ Այդ «նատուրիլուսի» լուսարձակի լույսի արտացոլումն էր սառցե պատերից։

Ես չեմ կարող նկարագրել այդ լուսավորության կախարդական էֆեկտը, որովհետև սառցակոշտերի ամեն մի կտրվածք, ամեն մի անկյուն, ամեն մի աստիճան տարբեր գույնի ճառագայթ էր արտացոլում, նայած իր բյուրեղային կառուցվածքին։

Կարծես այնտեղ փռված լինեին թանկագին քարեր, գեմաքարեր, շափյուղաներ, զմրուխտներ, որոնք արտացոլում էին կանաչ, երկնագույն և կապույտ գույնի ճառագայթներ։ Լուսարձակի լույսն ուժեղանում էր հարյուր անգամ, ինչպես ուժեղանում է փարոսի հաստ ոսպնապակիների մեջ գտնվող լույսը։

— Որքա՜ն գեղեցիկ է, ինչպիսի զմայլելի գեղեցկություն,— հիանում էր Կոնսելը։

— Այո,— ասացի ես,— սա անմոռանալի տեսարան է, այնպես չէ՞, Նեդ։

— Այո, գրողը տանի, ճշմարիտ է,— խոստովանեց կանադացին,— ինձ կատաղեցնում է այն, որ ստիպված եմ համաձայնվել դրա հետ։ Ես երբեք այդպիսի բան չեմ տեսել։ Միայն թե վախենում եմ, որ մեզ վրա թանկ կնստի այդ տեսարանը։ Բնությունը չի սիրում, երբ մարդը թափանցում է նրա ամենանվիրական գաղտնիքների մեջ։

Նեդ Լենդն իրավացի էր։ Այդ տեսարանը շափից դուրս գեղեցիկ էր մարդու համար։

Հանկարծ Կոնսելի ճիչն ինձ ստիպեց ետ նայել։

— Ի՞նչ պատահեց,— հարցրի ես։

— Թող պարոնը փակի աչքերը, թող պարոնը չնայի։

Ասելով այդ, Կոնսելը ձեռքը տարավ դեպի իր աչքերը։

— Ի՞նչ պատահեց քեզ, բարեկամս։

— Ես կուրացած եմ։

Ես ակամա դարձա դեպի լուսամուտը, բայց իսկույն փակեցի աչքերս, անկարող լինելով տանել կուրացուցիչ փայլը։

Ես հասկացա, թե ինչ էր պատահել։ «Նաուտիլուսն» ամբողջ արագությամբ առաջ շարժվեց։ Լուսարձակի ցոլքերը, որոնք տարածված էին մեր շուրջը, պայծառ շերտեր կազմեցին։ Միլիարդավոր ադամանդների լուսո ճառագայթները կազմեցին մի ընդհանուր խարտ, և «Նաուտիլուսը» պտտում էր շողշողուն փայլակների ծովում։

Այստեղ արահի փեղկերը ծածկվեցին։ Չկարողանալով նայել, մենք ձեռքերով ծածկում էինք աչքերս, որոնց առջև բռնկվում էին համակենտրոն, լուսավառվող օղակներ, ինչպես այն օղակները, որոնք երևում են ցանցաթաղանթի առջև, երբ խիստ երկար ես նայում արևին։ Բավական շատ ժամանակ անցավ, մինչև որ մեր տեսողությունը հասավ նորմալ զրության։

Վերջապես, մենք այլևս ձեռներով չէինք ծածկում մեր աչքերը։

— Աղնիվ խոսք,— ասաց Կոնսելը,— չէի հավատա, եթե ինձ պատմեին այդ տեսարանի մասին։

— Իսկ ես հիմա էլ չեմ հավատում,— հայտարարեց Կանադացին։

— Երբ մենք կվերադառնանք ցամաք,— շարունակեց Կոնսելը,— հոգեցած լինելով բնության այդքան հրաշքներ տեսնելուց, որքա՛ն խղճուկ կթվան մեզ բնակելի երկրները և մարդկային ձեռքով ստեղծված առարկաները։ Ո՛չ, այդ ցամաքն արժանի չէ մեզ։

Դժվար չէ պատկերացնել մեր ոգևորությունը, երբ Կոնսելը, այդ ամենահանգիստ Ֆլամանդցին խոսում էր. այդպիսի լեզվով։

Սակայն Կանադացին առիթը բաց չէր թողնում սառը ջուր լցնելու մեր ոգևորության կրակի վրա։

— Բնակելի երկրնե՞ր,— զլուխն օրորելով կրկնեց նա,— մի անհանգստանաք, սիրելի Կոնսել։ Մենք երբեք չենք տեսնի այդ երկրները։

Առավոտյան ժամի մոտ հինգն էր, երբ զգացվեց մի նոր ցնցում, այս անգամ առջևից։ Ես հասկացա, որ «Նաուտիլու-

սիս ժանիքը ընդհարվել է սառցակոշտին։ Ակներև էր, որ ղեկավարն անհաջող մանյովրներ էր կատարել այս թունելում, որը լի էր սառցակոշտերով և որտեղ այնքան էլ հեշտ չէր վարել նավը։ Ես կարծում էի, թե նավապետ Նեմոն մի կողմ կթողնի այդ արգելքը և մենք, փոխելով ուղղությունը, նորից առաջ կշարժվենք ծուռումուռ թունելով։ Սակայն, հակառակ իմ սպասելիքների, «Նաուտիլուսը» ետ գնաց։

— Մենք ե՞տ ենք վերադառնում,— հարցրեց Կոնսելը։

— Այո,— պատասխանեցի ես,— պետք է կարծել, որ այս կողմից թունելը ելք չունի։

— Հետևապես...

— Հետևապես մենք հետ կդառնանք և դուրս կգանք թունելի հարավային անցքից։ Դա շատ հասարակ բան է։

Ես աշխատում էի վստահություն ներշնչել իմ բարեկամներին, ինքս չունենալով այդ վստահությունը։

Մինչ այս մինչ այն, «Նաուտիլուսն» ավելի և ավելի արագ էր շարժվում դեպի ետ, և հիմա նավը պլանում էր լիակատար արագությամբ։

— Սա տհաճ ուշացում է,— նկատեց Նեդ Լենդը։

— Է՛հ, մեզ համար ի՞նչ է մի քանի ավելորդ ժամը, քանի որ մենք այնուամենայնիվ դուրս կգանք այստեղից,— ասաց Կոնսելը։

— Այո,— պատասխանեց Նեդ Լենդը,— եթե միայն մենք իսկապես դուրս կգանք, այս ուշացումը սարսափելի չէ։

Ես սկսեցի քայլել սրահից գրադարան և գրադարանից սրահ։ Իմ ընկերները հանգիստ նստել էին բազմոցի վրա։ Շուտով ես էլ նստեցի բազմոցին և վերցնելով մի գիրք, փորձեցի կարդալ, բայց կարդալուց բան չէր դուրս գալիս։

Քառորդ ժամից հետո Կոնսելը մոտեցավ ինձ և հարցրեց։

— Արդյոք հետաքրքի՞ր է պարոնի կարդացած գիրքը։

— Շատ հետաքրքիր է,— պատասխանեցի ես։

— Ես չէի էլ կասկածում։ Չէ՞ որ պարոնն իր սեփական գիրքն է կարդում։

— Իմ գի՞րքը։

Արդարև, ես վերցրել էի իմ «Ծովի հատակի գաղտնիքները», բոլորովին չիմանալով այդ։ Ես ծալեցի գիրքը և սկսեցի դարձյալ քայլել սրահում։ Նեդը և Կոնսելը, ցանկանալով չխանգարել ինձ, վեր կացան բազմոցից և քայլեցին դեպի դուռը։

— Մի հեռանաք, բարեկամներս,— ասացի ես նրանց,— միասին լինենք այնքան, մինչև որ դուրս գանք այս թունելից։

— Ինչպես որ պարոնը կամենա,— ասաց Կոնսելը, վերջատին նստելով բազմոցի վրա։

Այդպես անցավ մի քանի ժամ։ Ես հաճախ նայում էի սրահի պատից կախված պարագաներին։ Խտաչափի սլաքը ցույց էր տալիս, որ մենք շարունակ գտնվում ենք երեք հարյուր մետր խորության տակ։ Կողմնացույցի տվյալների համաձայն, մենք ընթանում էինք դեպի հարավ, իսկ արագությունը չափող գործիքը ցույց էր տալիս, որ մի ժամում անցնում ենք քսան մղոն, որ չափազանց արագ էր այդպիսի նեղ տարածության մեջ։ Սակայն նավապետ Նեմոն հասկանում էր, որ այդ պայմաններում ոչ մի շտապողականություն չի կարող ավելորդ լինել, որ այստեղ րոպեները թանկ էին տարիներից։

Ժամը ութից քսանհինգ րոպե անց զգացվեց երկրորդ ցնցումը։ Այս անգամ հարվածը հետին կողմից էր։ Ես գունատվեցի։ Ընկերներս վեր թռան իրենց տեղերից և մոտեցան ինձ։ Ես սեղմեցի Կոնսելի ձեռքը։ Մենք հայացքներով հարցեր էինք տալիս մեկմեկու և այդ անբարբառ խոսակցությունն ավելի ըմբռնելի էր, քան ամեն մի այլ խոսակցություն։

Այդ րոպեին սրահ մտավ նավապետ Նեմոն։

Ես վազելով մոտեցա նրան։

— Ճանապարհը փակ է նաև հարավի՞ց,— հարցրի։

— Այո, պարոն պրոֆեսոր։ Սառցալեռը շուռ եկավ և փակեց մեր ճանապարհը։

— Մենք թակարդո՞ւմ ենք։

— Այո։

ՕԴԻ ՊԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով «Նաուտիլուսը» բոլոր կողմերից, վերևից ու ներքևից շրջապատված էր անթափանցիկի ասուցե պատերով։ Մենք համատարած ասուլյցների գերիներն էինք։

Կանադացին ահագին քառունցքը խփում էր սեղանին։ Կոնսելը լուռ էր։ Ես անթարթ նայում էի Նավապետին։ Վերջինիս դեմքը նորից հանգստություն էր արտահայտում։ Ձեռքերը կրծքին խաչած, նա մտածում էր։

«Նաուտիլուսը» կանգնել էր անշարժ։

Նավապետ Նեմոն սկսեց խոսել.

— Պարոններ,— ասաց նա բոլորովին հանգիստ,— մեր այժմյան դրության մեջ կա կյանքին հրաժեշտ տալու երկու միջոց։

Այդ հանելուկային մարդը մեր առաջ ճառ էր ասում մաթեմատիկայի պրոֆեսորի պես, որը դասախոսություն է կարդում ուսանողների համար։

— Առաջինը՝ այդ սառցակոշտերի տակ ճղմվելն է։ Երկրորդը՝ շնչահեղձությունից մեռնելը։ Ես բոլորովին անկարելի եմ համարում սովից մեռնելու վտանգը, որովհետև «Նաուտիլուսում» եղած ուտեստի պաշարն անպայման կբավականանա։ Այսպես ուրեմն, կշռադատենք այն, թե ինչ հնարավորություններ ունենք մահվան այս կամ այն տեսակն ընդունելու։

— Ես կարծում եմ, որ մենք չպետք է վախենանք շնչահեղձ լինելուց, նավապետ,— ասացի ես,— քանի որ «Նաուտիլուսի» պահամանները լիքն են խտացրած օդով։

— Այդ ճիշտ է,— պատասխանեց նավապետը,— բայց դրանք ապահովում են օդի միայն երկու օրվա նորմալ ծախսը։ Բայց չէ՞ որ մենք արդեն երեսունվեց ժամ գտնվում ենք ջրի տակ, և նավում եղած օդը պետք է լրացնել։ Քառասուն ութ ժամից հետո օդի պաշարը կսպառվի։

— Դրանից հետևում է, նավապետ, որ մենք պետք է այստեղից ազատվենք մինչև քառասուն ութ ժամը լրանալը։

— Մենք կփորձենք այդպես անել։ Փորձենք ծակել սառցե պատը։

— Ո՞ր կողմից,— հարցրի ես։

— Այդ մեզ ցույց կտա դոնդը։ Ես հիմա «նաուտիլուսը» կնատեցնեմ մեր սառցե վանդակի հատակին և նավաստիները, հագնելով զրահազգեստները, կվորոշեն, թե սառցե պատերից որն է ամենափխրունը։

— Կարելի՞ է բանալ սալոնի փեղկերը։

— Իհարկե, չէ՞ որ մենք հիմա չենք շարժվում։

Նավապետ Նեմոն դուրս եկավ սրահից։ Շուտով լսվեց սուլոց, որ ցույց էր տալիս, թե պահամանները լցվում են ջրով։ «Նաուտիլուսը» դանդաղ իջավ սառցե վանդակի հատակը, որի խորությունը հասնում էր երեք հարյուր հիսուն մետրի։

— Բարեկամներս,— ասաց ես Կոնսելին և Նեդ Լենդին,— մենք ընկանք վտանգավոր դրության մեջ, սակայն ես չեմ կասկածում, որ դուք չեք կորցնի ձեզ հատուկ ոգու արիությունն ու եռանդը։

— Պարոն պրոֆեսորը կարող է հավատացած լինել, որ այստեղի ոչինչ ես նրան չեմ անհանգստացնի, գանգատներով ու ողբով,— ասաց Կանադացին,— ես պատրաստ եմ անել այն ամենն, ինչ որ հարկավոր է ընդհանուրի փրկության համար։

— Լավ ասացիք, Նեդ,— պատասխանեցի ես, սեղմելով Կանադացու ձեռքը։

— Սիրելացնում եմ,— ասաց նա,— որ ես քլունգը թանեցնում եմ նույնքան լավ, որքան և եռաժանին, և եթե ես կարող եմ օգտակար լինել նավապետ Նեմոյին, նա կարող է օգտագործել ինձ։

Ես կանադացու հետ միասին մտա հանդերձարանը, ուր «Նաուտիլուսի» նավաստիները զրահազգեստներ էին հագնում։ Կանադացու առաջարկը ես հայտնեցի նավապետ Նեմոյին, որն իսկույն ընդունեց այն։ Նեդ Լենդը բոլոր նավաստիների հետ միասին հագավ զրահազգեստը։ Նրանցից յուրաքանչյուրը ոտի վրա կապեց Թուկեյրոլի ապարատը, ոտ լցված էր պահամանների թարմ օդով։ Դա պակասեցնում էր

«Նաուտիլուսում» եղած օդի ընդհանուր պաշարը, բայց այդ ծախսն ավելորդ համարել չէր կարելի։ Ինչ վերաբերում է Ռումկորֆի լապտերներին, դրանք բոլորովին հարկավոր չէին այդ պայծառ լուսավորված միջավայրում։

Երբ Նեդը հագավ դրահագգեստը, ես վերադարձա սրահ, որի փեղկերն արդեն բաց էին։ Կոնսելի հետ միասին նստեցի լուսամուտի մոտ, ես սկսեցի դիտել «Նաուտիլուսը» շրջապատող սառցե պատերը։

Մի քանի րոպեից հետո մենք տեսանք, թե ինչպես տաններկու սուզակներ իջան սառցե հատակը։ Նրանց մեջ հեշտ էր ճանաչել Նեդ Լենդին, որ աչքի էր ընկնում իր բարձր հասակով։ Նավապետ Նեմոն ևս այդ խմբում էր։

Նախքան սառցահատումն սկսելը նա հրամայեց փորձի համար մի քանի անցք բանալ, որոշելու համար, թե որն է ճանապարհ բանալու ամենաձեռնտու ուղղությունը։ Երկար շաղափները խրվեցին կողքի պատերի մեջ, բայց տասնհինգ մետր շաղափելուց հետո պարզվեց, որ դեռ հեռու է չառած ջուրը։ Բոլորովին անիմաստ էր թունելի առաստաղը ջարդելու փորձ կատարել, որովհետև դա համատարած սառույցի տորին մակերևույթն էր, իսկ այդ սառույցն ուներ առնվազն չորս հարյուր մետր հաստություն։ Նավապետ Նեմոն հրամայեց շաղափել թունելի հատակը։ Պարզվեց, որ այդ ուղղությամբ սառցաշերտի հաստությունը տասը մետրից ավելի չէ։ Հետևաբար այդ սառցադաշտից պետք էր կտրել այնքան տարածություն, որ մի փոքր ավելի լիներ «Նաուտիլուսի» բռնած տարածությունից, այսինքն կտրել մոտավորապես վեց հազար հինգ հարյուր խորանարդ մետր սառույց, այնպես որ «Նաուտիլուսը» կարողանար այդ անցքից իջնել ծովի տորին, չառած շերտերը։

Սուզակներն անհապաղ ձեռնամուխ եղան այդ աշխատանքին։ Նրանք աշխատում էին մեծ եռանդով։ Նավապետ Նեմոն կարգադրեց սառույցը ջարդել ոչ թե անմիջականորեն «Նաուտիլուսի» տակ, որով աշխատանքն զգալիորեն կդժվարանար, այլ նավից ութ մետր դեպի ձախ։ Սուզակները սառույցի վրա գծեցին մի հսկայական ձվածիր և միանգամից մի քանի տեղ աշխատել սկսեցին։ Նրանք ջարդում էին

սառույցը և մեծ սառցակույտեր հանում։ Այդ աշխատանքի մի հետաքրքիր մանրամասնություն. կտրված սառցակոշտերն իրենք իրենց բարձրանում էին մինչև թունելի առաստաղը, որովհետև սառույցի տեսակարար կշիռը պակաս է ջրի տեսակարար կշռից։ Այսպիսով առաստաղն իջնում էր այնքան, որքան և հատակը։ Դա մեզ բոլորովին չէր անհանգստացնում, որովհետև հետզհետե պակասում էր հատակի հաստությունը։

Նեդ Լենդը վերադարձավ սրահ, հոգնած լինելով երկու ժամվա լարված աշխատանքից։ Աշխատողներին փոխարինելու համար դուրս եկավ «Նաուտիլուսի» նավաստիների մի նոր խումբ, որին միացանք նաև ես ու Կոնսելը։ Նավապետի օգնականը ղեկավարում էր մեր աշխատանքը։

Սկզբում սառույցն ինձ շատ պաղ էր թվում, սակայն քլունգով աշխատելիս ես տաքացա։ Չնայելով երեսուն մլթնոլորտ ճնշման, ես բոլորովին ազատ շարժումներ էի անում։

Երկու ժամ աշխատելուց հետո ես վերադարձա «Նաուտիլուս», որպեսզի մի բան ուտեմ և հանգստանամ։ Ես իսկույն զգացի Ռուկեյրոլի ապարատի մաքուր օդի և «Նաուտիլուսի» խտացած, ածխաթթվուտով հագեցված մթնոլորտի միջև եղած տարբերությունը։ Համարյա քառասուն ութ ժամ նավի պարունակած օդը չէր փոխվել և արդեն այնքան էլ պետական չէր շնչառության համար։

Տասներկու ժամ անընդհատ աշխատելով, մենք կարողացանք գծած ճվարդից փորել միայն մեկ մետր հաստությամբ սառույց։ Եթե հետևյալ յուրաքանչյուր մետրը նույնպես տասներկու ժամվա աշխատանք է պահանջում, ապա մեզ հարկավոր կլինի նորից հինգ գիշեր և չորս օր, որպեսզի վերջացնենք աշխատանքը։

— Հինգ գիշեր և չորս օ՛ր,— ասացի ես իմ ընկերներին,— իսկ մեր պահամաններում ընդամենը երկու օրվա օդի պաշար կա։

— Էլ չիսսենք այն մասին,— ավելացրեց Նեդ Լենդը,— որ ազատվելով այս անիծված բանտից, մենք պետք է դեռ որոշ ժամանակ ընթանանք համատարած սառույցի տակ, հնարավորություն չունենալով բարձրանալ ջրի երեսը։

Նեղ լենդի դիտողությունն արդարացի էր։ Եվ իսկապես, հնարավոր չէր որոշել, թե մեզ որքան ժամանակ է հարկավոր, որպեսզի ազատվենք և արդյոք չե՞նք մեռնի շնչահեղձությունից, նախքան «Նաուտիլուսը» կբարձրանա ջրի երեսը։ Գուցե մեզ բոլորիս վիճակված է գերեզման գտնել սառույցներում...

Մեր դրությունն իրոք ողբերգական էր։ Սակայն մենք բոլորս պատրաստ էինք վտանգին դիմավորելու և որոշեցինք մինչև վերջ կատարել մեր պարտքը։

Ինչպես ես նախատեսել էի, գիշերվա ընթացքում մեր փորած փոսը խորացավ ևս մեկ մետրով։ Սակայն առավոտյան, հագնելով զրահազգեստը և դուրս գալով, ես նկատեցի, որ թունելի կողքի պատերը մի փոքր մոտեցել են իրար։ Դրանց տակ գտնվող ջուրը սառել էր։

Այդ մի նոր և ահարկու վտանգ էր, որ զրոյի էր հավասարեցնում մեր փրկության հույսերը։ Ի՞նչպես և ինչո՞վ կարելի էր կանխել ջրի սառչելը և թունելի պատերի իրար մոտենալը, որ սպառնում էր ճզմել «Նաուտիլուսն» ինչպես ապակու մի կտոր։

Այդ նոր վտանգի մասին ես ոչինչ չասացի իմ ընկերներին։ Ինչո՞ւ վհատեցնել նրանց, չէ՞ որ աշխատանք են թափում փրկության համար։ Սակայն, վերադառնալով նավը, ես նավապետ Նեմոյին հայտնեցի այդ լուրջ դրության մասին։

— Ես արդեն նկատել եմ այդ,— ասաց նա իր անվրդով ձայնով, որի մեջ հուզման նշույլ անգամ չկար,— դա մի նոր սպառնալիք է, որը ես անպոր եմ կանխել։ Մեր փրկության միակ հույսն այն է, որ նախքան ջրի սառչելն ազատվենք այս թակարդից։ Ուրիշ ճանապարհ չկա։

Ուրիշ ճանապարհ չկա՛։ Ժամանակն էր, որ ես ընտելանայի նրա խոսելու ձևին...

Օրվա ընթացքում ես մի քանի անգամ դուրս եկա նավից և ջանասիրությամբ աշխատեցի քլունգով։ Այդ աշխատանքը զվարթացնում էր ինձ։ Բացի դրանից, աշխատել, նշանակում էր «Նաուտիլուսից» դուրս գալու հնարավորություն ունենալ և նավի խտացած, թթվածնով աղքատ, հեղձուցիչ

օդի փոխարեն մաքուր օդ շնչել։ Երեկոյան փոսը խորացավ էլի մի մետրով։

Երբ նա վերադարձավ նավը, քիչ մնաց որ շնչահեղձ լինեի ածխաթթվաստով լցված գուրս հագեցված օդում։ Ա՛խ, որքա՛ն ցավալի էր, որ մենք չունեինք քիմիական միջոցներ՝ շնչառության համար վնասակար այդ գազի դեմ։ Թթվածնի պակասություն չէինք զգա։ Մեզ շրջապատող ջրում հսկայական քանակությամբ թթվածին կար, և մենք մեր մարտկոցներից ստացվող էլեկտրական հոսանքի միջոցով տարրալուծելով ջուրը, հեշտությամբ կստանայինք այդ թթվածինը։ Ես մտածեցի այդ մասին, բայց հետո հրաժարվեցի այդ մտքից, որովհետև անլուծելի էր մնում մի խնդիր, հապա ինչպե՞ս կարելի էր ոչնչացնել մեր արտաշնչած ածխաթթուն, որով ծայրեծայր լցված էր նավը։ Ածխաթթուն ոչնչացնելու համար հարկավոր էր մեծ անոթները լցնել կծու նատրիումով և անընդհատ խառնել։

Սակայն «նատուրիումը» չկար կծու նատրիում, և մենք ոչնչով չէինք կարող փոխարինել այն...

Նավապետ Նեմոն ստիպված եղավ երեկոյան բաց անել պահամանների ծորակները և մի քանի խորանարդ մետր օդ հայթայթել նավին։ Եթե նա այդ չաներ, առավոտյան մենք չէինք վեր կենա։

Հետևյալ օրը, մարտի 26-ին, ես նորից սկսեցի աշխատանքը, փորելով փոսի հինգերորդ մետրը։ Թունելի կողքի պատերն ու առաստաղը ավելի և ավելի էին մռայլվում իրար։ Պարզ էր, որ եթե աշխատանքն ընթանար այդպիսի տեմպով, դրանք իրար կմիանային նախքան «նատուրիումի» գալը։ Մի վայրկյան հուսահատությունը տիրեց ինձ։ Քիչ էր մնում քլունգը ձեռից ընկներ։ Էլ ինչո՞ւ ատուցը ջարդել երբ միևնույն է, մենք պետք է մեռնենք շնչահեղձությունից, կամ ճզմվենք քարի պինդ ատուցների միջև, այն էլ այնպիսի տանջանքներով, ինչպիսին ամենադաժան վայրենիները անգամ չեն հնարում իրենց գերիների համար։ Ինձ թվում էր, թե գտնվում եմ ինչ-որ մի ատրապիելի կենդանու ծրնոտների միջև, որոնք իրար են սեղմվում։

Այդ բոպեին իմ կողքից անցավ նավապետ Նեմոն, որ ղեկավարում էր մեր խումբը և ինքն էլ քրտնաջան աշխատում էր քլունգով։ Ես նրան կանգնեցրի և ձեռքով ցույց տվի մեր բանտի պատը։ Գիշերվա ընթացքում, աջ կողմից, այդ պատն առնվազն մետրով մոտեցել էր նավին։

Նավապետ Նեմոն հասկացավ ինձ և ձեռքով նշան արավ, որ հետևեմ իրեն։

Մենք վերադարձանք նավ։

Հանելով զրահազգեստը, ես նրա հետ մտա սրահ։

— Պարոն պրոֆեսոր,— ասաց նա,— մենք պետք է ձեռնարկենք ինչ-որ հերոսական միջոցներ, թե չէ սառույցի մեջ կշաղախվենք ավելի ամուր, քան ցեմենտի մեջ։

— Այո,— պատասխանեցի ես,— բայց ի՞նչ կարող ենք անել։

— Օ՜,— բացականչեց նա,— եթե իմ «Նաուտիլուսն» այնքան ամուր լիներ, որ դիմանար այդ ճնշման և չճզմվեր։

— Այդ դեպքում ի՞նչ կլիներ,— հարցրի ես, չհասկանալով նավապետի միտքը։

— Միթե՞ ձեզ համար պարզ չէ, որ ջրի սառչելը կօգներ մեզ։ Չէ՞ որ սառույց դառնալով, ջուրը պետք է մեծ ծավալ ընդունի և անխուսափելիորեն ճեղքի մեզ գերի պահող սառցադաշտը, ինչպես սառչելիս ճեղքում է ամենապինդ քարերը։ Միթե՞ դուք չեք հասկանում, որ այդ կլիներ մեր փրկությունը և ոչ թե խորտակումը։

— Այո՛, նավապետ, հնարավոր է։ Սակայն որքան էլ ամուր լինի «Նաուտիլուսը», չի կարողանա դիմանալ այդպիսի սարսափելի ճնշման, և սառույցի պատերը բոլորովին կճզմեն նավը։

— Ես էլ գիտեմ այդ, պրոֆեսոր։ Այս պատճառով էլ հույս եմ դնում ոչ թե բնության օգնության, այլ միայն ինձ վրա։ Հարկավոր է ինչ կերպ էլ լինի խանգարել ջրի հետագա սառչելը։ Հարկավոր է դադարեցնել այդ։ Հիմա արդեն իրար են մոտենում ոչ միայն կողքի պատերը, այլև «Նաուտիլուսի» առջևում ու հետևում ջրի տարածությունն իջել է ընդամենը տասնակաև ոտնաչափի։ Մեր սառցե վանդակը նեղանում է ամեն կողմից։

— Որքա՞ն ժամանակ կբավականանա պահամաններում գտնվող օդի պաշարը,— հարցրի ես։

Նավապետը նայեց ուղիղ աչքերիս։

— Վաղը չէ մյուս օրը,— ասաց նա մի փոքր լռելուց հետո,— պահամանները կդատարկվեն։

Սառը քրտինքը պատեց ինձ։ Մինչդեռ ինձ չպետք է զարմացներ այդ պատասխանը. մարտի 22-ին «Նաուտիլուսը» բևեռի մոտ խորասուզվեց բաց ծովի։ Այսօր մարտի 26-ն էր, հետևապես արդեն հինգ օր մենք մեր գոյությունը պահում էինք «Նաուտիլուսում» եղած օդի պաշարով։ Բացի դրանից, շատ օդ էր ծախսվում ստորջրյա աշխատանքների սառույց ջարդելու համար։

Այժմ, երբ ես գրում եմ այս տողերը, իմ ապրած սարսափի վերաբերյալ հիշողությունն այնքան թարմ է իմ մեջ, որ երկյուղից ցնցվում է մարմինս, և ես ագահությամբ կլանում եմ օդը, կարծես թե այն չի բավականանում թոքերիս համար...

Այդ ժամանակ նավապետ Նեմոն, որ ամփոփված էր ինքն իր մեջ և լուռ, ընկավ տարակուսանքների մեջ։ Հանկարծ ես տեսա, թե ինչպես նրա դեմքը փոխվեց գլխում ծագած ինչ-որ մտքից։ Սկզբում կարծես նա վանեց այդ միտքը, ըստ երևույթին դժգոհ լինելով նրանից։ Բայց հետո նա բացականչեց.

— Եռաջո՛ւր, եռաջո՛ւր։

— Եռաջո՞ւր,— գոչեցի ես։

— Այո, պրոֆեսոր։ Մենք փակված ենք շատ նեղ տարածության մեջ։ Ինչո՞ւ եռաջրի հոսանքը, դուրս գալով «Նաուտիլուսի» պոմպերից, չի կարող բարձրացնել մեզ շրջապատող ջրի բարեխառնությունը և դադարեցնել սառչելու պրոցեսը։

— Պետք է փորձել այդ միջոցը,— ասացի ես։

— Փորձենք,— պարոն պրոֆեսոր։

Նավից դուրս բերված ջերմաչափը ցույց տվեց զրոյից յոթ աստիճան ներքև։ Ես նավապետ Նեմոյի հետ մտա խոհանոց, ուր կանգնած էին ահագին եռամանները՝ ծովի ջու-

դրը թիավարելու և պոլոշիացմանն միջոցով ամենաշահավետ ջրի վերածելու համար։

Սուամանները ամբողջովին լցվեցին ջրով և «Նեառատիլուսի» էջենկտրուկան մարտակոցների ամբողջ կայազորամիջոցները դրածի դրվեց պարուրակները տանելու համար, որոնց միջոցով անցնում էր ջուրը։ Մի քանի ընդլայնում ջուրը հասավ ետևացմանն կետին։ Ոմանցներից ջուրը ակնթարթորեն դուրս թափվեց, իսկ այնտեղ ջրի պիտանիությունը կրկին ստացավ ջուրը էր լցվում։ Էջենկտրուկան մարտակոցների ստանձնած առաքելությունն այնքան մեծ էր, որ պատրաստակների մեջ լցվող առաջը ջուրը դեռևս ցամաքից դուրս էր թափվում մինչև հաջորդ ասպիճանն առաքելությամբ։

Երեք ժամ անընդհատ ճառաջուր մզելուց հետո ջերմաշտափի սեղիկը բարձրացավ մեկ աստիճան և հիմա ցույց էր տալիս վերից տասներեքերորդ աստիճանի դրությունը։ Էլի երկու ժամ, և ջերմաստիճանը բարձրացավ մինչև չորս աստիճանի դրությունը։

— Ներդրածեց,— ասացի ես նավապետին, հսկելով ջերմաշտափի տվյալների վրա,— հիմա հաջողությունն ապահովված է։

— Այո,— պատասխանեց նավապետը,— ես էլ եմ այդպես կարծում։ Մենք չենք ճզմվի։ Մնում է աղաղակել միայն մեզ սպառնացող շնչահեղձությունից։

Գիշերվա ընթացքում ջերմաստիճանը բարձրացավ մինչև մեկ աստիճան դրությունը։ Որքան էլ մենք աշխատեցինք ավելի բարձրացնել այն, դա չէր հաջողվում։ Ասենք, այդ հարկավոր էլ չէր, որովհետև ջուրն այլևս չէր աճում։ Հետևյալ առավոտը, մարտի 27-ին, փոսի խորությունը հասավ վեց մետրի։ Այսպիսով մնում էր փորել միայն քսան մետր։ Այդ պահանջում էր ևս քառասունութ ժամվա աշխատանք։

Այդ օրը «Նատատիլուսի» նեղությունում եղած օդը շոգխվեց, որովհետև նավապետ Նեմոն պահանջում էր զանազան օդի շնչին քանակը պահպանում էր ստորգետնյա աշխատանքների համար։ Ժամի ստ ժամի նավի մեջ գծվարանում էր մեր շնչառությունը։

Կարծես մի հանկարծական ծանրություն ճնշում էր կուրծքս։ Ցերեկվա ժամի երեքին տանջանքն անտանելի դարձավ։ Ես անընդհատ հորանջում էի։ Թոքերս չդաձգվեցին։ Ներս էին քաշում օդը, «նատուտիկուսի» խառնված սիգնալորտոսի փրնտ-թելով։ Կենտրոն թթվածնի առոմները, որոնք հեռդհեռե ապա-կառուում էին յուրաքանչյուր ներշնչումից հետո։ Ինձ տիրեց ինչ-որ մի թմրություն, թուլացնելով շարժումներս և ուղեղս։ Ես ապակած էի ուժասպառ, գրեթե կորցնելով գիտակցու-թյունս։ Իմ բարի կոնաները, որ ինձնից ապակա չէր, տատա-պում, ոչ մի վայրկյան չէր հեռանում ինձնից։ Նա բռնում էր ձեռքս, քաջալերում էր ինձ, և լսում էի թե ինչպես շշշե-ցում է նա.

— Ա՛խ, եթե ես կարողանայի շշնչել, որպեսզի օդը խնայեի ապարոնի համար։

Այս խոսքերը լսելիս աչքերս արտասվում էին։

Որքան նավի ներսում դժվարանում էր շնչառությունն, այնքան հրճվանքով էինք մենք հագնում պրահազգեստները, երբ աշխատելու հերթը մեզ էր հասնում։ Քլունգները պրա-գում էին, խրվելով առուցի մեջ։ Ուսերս մեջքս ցավում էին հոգնածությունից, ձեռներիս վրա կոշտուկներ էին գո-յանում, բայց ինչ էին այդ հոգնածությունն ու ցավը, երբ կարելի էր լիաթոք ներշնչել թարմ օդը, երբ կարելի էր շնչել։

Բայց և այնպես ոչ ոք չէր մնում ջրի տակ ավելի, քան պետք էր։ Աշխատելով երկու ժամ, մեզանից յուրաքանչյու-րը շտապում էր նավի հեղձուցիչ մթնոլորտում շնչառապես եղած իր քնքերոջը տալ մաքուր օդով լի փրկարարը, ապահ-ովանը, որը վերջինին դարձյալ կյանք էր տալիս։ Նավապետ Նեմոն առաջինն էր ամենախիստ կարգապահության օրի-նակ ցույց տալիս։ Երբ լրանում էր ջրի տակ աշխատելու ժամանակը, նա հատատատուն քայլերով վերադառնում էր նավ, թունավոր մթնոլորտը։ Երբ դեմքն առաջվա պես հան-գիստ էր և ոչ մի բողոք չէինք լսում նրանից։

Այն օրն աշխատանքն ընթանում էր էլ ավելի մեծ լար-վածությամբ։ Մեկ օրում կտրեցինք երկու մետր առուցց և հիմա մինչև ջուրն ընդամենը երկու մետր էր մնացել։

Սակայն օդի պահամանները բոլորովին դատարկված էին։ Մնում էր միայն օդի այն պաշարը, որը կար Ռուկեյ-բոլի ապարատներում։

Երբ ես վերադարձա նավը և հանեցի զրահազգեստը, քիչ մնաց որ իսկույն շնչասպառ լինեի։ Ինչպիսի՛ գիշեր անցկացրի ես։ Անկարելի է այն նկարագրել, այդպիսի տառապանքները բառերով չի կարելի արտահայտել։ Առավոտյան իմ շնչառությունն ավելի դժվարացավ։ Գլխացավիս միացան հաճախակի գլխապտույտները, որոնց ժամանակ ես օրորվում էի հարբածի նման։ Ուղեկիցներս տառապում էին նույնպես, ինչպես ես։ Նավաստիներից մի քանիսն արդեն խռխռացնում էին։

Մեր գերության այդ վեցերորդ օրը նավապետ Նեմոն տեսավ, որ աշխատանքը քլունգներով շատ դանդաղ է գնում և օդի պաշարն ավելի շուտ կսպառվի, քան կավարտվի աշխատանքը։ Նավապետը որոշեց այլ կերպ ջարդել մեր և ծովի միջև գտնվող սառույցը։ Այդ մարդը պահել էր մտքի ամբողջ պայծառությունը, եռանդն ու սառնասրտությունը։ Լարելով իր կամքը, նա իրեն ստիպում էր չնկատել ֆիզիկական տանջանքները։ Նա մտածում էր, հնարում, գործում։

Նրա հրամանով «Նաուտիլուսի» պահամաններից դուրս մղվեց ավելորդ ջրի մի մասը։ Երբ նավը բարձրացավ հատակից և կախվեց մեր փորած հսկայական ձվաձև փոսի վրա։ Այնուհետև պահամանները նորից լցվեցին, և նավն իջավ փոսի ուղիղ մեջտեղը։

Այդ ժամանակ ամբողջ անձնակազմը վերադարձավ նավը, և կրկնակի դուռը հերմետիկորեն փակվեց։ Հիմա «Նաուտիլուսը» գտնվում էր մեկ մետրից ոչ ավելի հաստությամբ սառույցի վրա, որը, բացի այդ, մի հազար տեղից ծակծկված էր շաղափով։ Այդ ժամանակ ծորակները լայն բացվեցին, և պահամանները նորից լիքը լցվեցին ջրով։ Այդ կերպ «Նաուտիլուսի» ծանրությունն ավելացավ հարյուր հազար կիլոգրամով։

Մենք ականջ դրինք և լարված սպասում էինք, նույնիսկ մոռանալով մեր տանջանքները։ Մեր փրկությունը բախտախաղի էր դրված։

Չնայելով որ ականջներս սաստիկ դժժում էին, ես շուտով լսեցի, թե ինչպես «Նաուտիլուսի» տակ ճքճքում է սառույցը։ Ճքճքոցը հետզհետե ուժեղանում էր։ Մենք պարզապես ներքև էինք իջնում։ Վերջապես, լսվեց ջարդվող սառույցի դղրդոցը, և «Նաուտիլուսը» սկսեց իջնել։

— Մենք անցնում ենք,— ականջիս շշնջաց Կոնսելը։

Ես ուժ չունեի նրան պատասխանելու։ Ես բռնեցի և ջղաձգաբար սեղմեցի նրա ձեռքը։

«Նաուտիլուսն» իր ծանր բեռի ճնշման տակ հանկարծ սկսեց ընկնել հատակին, ինչպես ռումբը դատարկ տարածության մեջ։

Մարտկոցների ամբողջ էներգիան վայրկենապես փոխանցվեց պոմպերին, և ջուրը սկսեց սուլելով դուրս հոսել պահամաններից։ Մի քանի րոպեից հետո մեր անկումը դանդաղեց, ապա բոլորովին դադարեց, և խտաչափի սլաքը ցույց էր տալիս, որ սկսվել է վերելքը։

Այստեղ «Նաուտիլուսի» մեքենան սկսեց աշխատել այնպիսի արագությամբ, որ ամբողջ նավը դողդողում էր, և մենք սլացանք դեպի հյուսիս։

Սակայն ինչքա՞ն ժամանակ էր տևելու սառույցի տակ մինչև բաց ծով լողալը։ Էլի մի օ՞ր։ Այդ դեպքում ես կենդանի չէի մնա մինչև այդ օրվա վերջը...

Ես կիսապառկած էի գրադարանում բազմոցի վրա։ Ես շնչասպառ էի լինում։ Դեմքս կապտել էր, շրթունքներս բոլորովին սևացել էին։ Ես ուժ չունեի անգամ մատս շարժելու։ Ոչինչ չէի տեսնում, ոչինչ չէի լսում, կորցրել էի հասկացողությունս ժամանակի մասին։ Մկաններս կորցրել էին կծկվելու ունակությունը...

Չեմ կարող ասել, թե քանի ժամ պառկեցի այդ վիճակում։ Սակայն գիտակցության հազվագյուտ րոպեներին ես զգում էի, որ հոգեվարքի մեջ եմ։ Հասկանում էի, որ մեռնում եմ...

Հանկարծ ես ուշքի եկա։ Թարմ օդը լցվեց թոքերիս մեջ։ Մի՞թե մենք դուրս ենք եկել ջրի երեսը։ Ինչպե՛ս չեմ նկատել, որ մենք անցել ենք համատարած սառույցների գոտին։

Ո՛չ, մենք դեռևս սառույցի տակ էինք։ Այդ Գոնաթին ոչ նեղը, իմ հավատարիմ բարեկամները, զոհել էին իրենց, որպեսզի փրկեն ինձ։ Թուսկեյրոլի ապարատներից մեկում մի քիչ թարմ օդ էր մնացել։ Նրանք հրաժարվել էին այդ օդը շնչելուց, նվիրել էին ինձ և շնչապուռ վիճակում ինձ կյանք էին նվիրշնչել։ Աչքերս բաց անելով, ես ուզում էի մի կողմ հրել փրկարար ապարատը, սակայն նրանք բռնեցին ձեռներս, և ես մի քանի րոպեի ընթացքում հակայական հաճույքով կլանում էի կենարար գազը։

Ես նայեցի ժամացույցին։ Առավոտյան ժամը տասնմեկն էր։ Արդեն եկավ մարտի 28-ը։ «Նաուտիլուսը» սլանում էր սարսափելի արագությամբ՝ մեկ ժամում քառասուն մղոն։ Նետի պես ճեղքելով ջուրը։

Ուր էր նավապետ Նեմոն։ Արդյոք կենդանի մնա՞ց։ Կենդանի մնացի՞ն նրա ընկերները։

Այդ րոպեին խտաշափի սլաքը ցույց տվեց, որ մենք գտնվում ենք ծովի մակերևույթից ընդամենը քսան ոտնաշափ ներքև։ Ազատ օդից մենք բաժանված էինք միայն սառցի բարակ շերտով։ Մի՞թե չէր կարելի ջարդել այդ սառույցը։

Օ՛չ, կարելի էր։ Համենայն դեպս, «Նաուտիլուսը» պատրաստվում էր կատարել այդ փորձը։ Ես զգացի, որ նավի հետին մասն իջնում է, իսկ առջևի սուր ծայրը բարձրանում։ Բավական էր մի քիչ ջուր լցնել հետնամասի պահամանը, որպեսզի նավն այդպիսի դիրք ընդունի։ Այնուհետև իր հզոր մեքենայի ուժով դեպի վեր բարձրանալով, նավը գրոհեց սառցե դաշտի վրա ինչպես մի վիթխարի բարան։ «Նաուտիլուսը» համառորեն խփվում էր սառույցին, մի քանի անգամ թափ առած հարվածում միևնույն տեղին, մինչև որ սառցաշերտը փշրվեց, և մենք դուրս եկանք ծովից, շարունակելով ջարդել սառույցը։

Գոնաթը բացվեց, ավելի ճիշտ՝ պոկվեց, և թարմ օդն առատորեն հոսեց «Նաուտիլուսի» բոլոր անկյունները...

ՀՈՐՆ ՀՈՍՎԱՆԳԱՆԻՑ ԳԵՊԻ ԱՄԱՋՊԵ

Չեմ հիշում, թե ինչպես բարձրացա տախտակամած։ Հնարավոր է, որ վանադացին էր ինձ այնտեղ տարել։ Ես զնչում էի լիաթոք, հաճույքով թոքերիս մեջ քաշում ծովային քամին, որից ահլի հոտ էր գալիս։ Իմ ընկերները կողքիս հրճվանքով ու կուշտ խմում էին ծովի զով շունչը։ Այն մարդը, որ երկար ժամանակ քարղցած է մնացել, պետք է մեծ շափավորությամբ ուտի իրեն առաջարկած կերակուրը, այլապես կհիվանդանա։ Մեր քանն ուրիշ էր, մենք չպետք է տրեէ կերպ ահմանափակվեինք, և մենք շնչում էինք, շընչում լիաթոք, հարբում էինք օդով, հարբում ժրությամբ, որ յուրաքանչյուր անգամ ներշնչելիս լցվում էր մեր մարմնի մեջ։

— Ա՜խ,—բացականչեց Կոնսելը,— որքա՜ն լավ է թարմ օդը։ Թող պարոնը շնչի ինչքան կամենա՝ այստեղ օդը կըբավականանա բոլորին։

Նեդ Լենդը չէր խոսում, բայց այնքան՝ լայն էր բաց անում բերանը, որ նրան վնասներ նույնիսկ շնածուկը։ Սև ինչպիսի՛ ուժով էր նա ներշնչում օդը։ Կանադացին օդը ծծում էր սուլոցով, ինչպես թեժ վառվող վառարանը։

Մեր ուժերն արագ վերադառնում էին։ Վիրվին գիտակցության գալով և նայելով շուրջս, ես տեսա, որ մենք մենակ ենք տախտակամածում։ Այստեղ «Նաուտիլուսի» նավաստիներից ոչ ոք չկար։ Չէրևաց նաև նավապետ Նեմոն։ Ընտերևոցթին այդ տարօրինակ մարդիկ քավականացան նավի մեջ եղած օդով։ Նրանցից ոչ ոք չեկավ վայելելու ծովային զեփյուռի թարմությունը։

Իմ արտասանած առաջին խոսքերն այն էին, որ ես շնորհակալություն հայտնեցի իմ ուղեկիցներին և հավատարիմ քարեկամներին։ Նեդ Լենդն ու Կոնսելը փրկեցին իմ կյանքը, երբ ակսվել էր իմ հոգեվարքը։ Անկարելի էր բառեր գտնել այդ ծառայության համար շնորհակալություն հայտնելու։

— Բավական է, պարոն պրոֆեսոր,— ընդհատեց իմ զե-

ղումները նեղ լենդը,— այդ մասին չարժե խոսել։ Մենք ոչ մի ծառայություն չենք մատուցել։ Այդ զուտ մաթեմատիկական պրոբլեմ էր, ո՞ւմ կյանքն է ավելի թանկ։ պարզ է, որ ձերը, հետևապես առաջին հերթին պետք էր պահպանել ձեր կյանքը։

— Նեղ, նեղ, իմ կյանքը ձերից թանկ չէ։ Ոչ ոքի կյանքը ավելի արժեքավոր չէ, քան բարի և ազնիվ մարդու կյանքը, իսկ դուք թե՛ բարի եք և թե՛ ազնիվ։

— Լավ, լավ,— շփոթվելով քրթմնջաց կանադացին։

— Իսկ դու, իմ թանկագին Կոնսել, դու շա՞տ տանջվեցիր։

— Ինձ մի քիչ թարմ օդ էր պակասում, բայց ես կարծում եմ, որ շուտով կընտելանայի նաև այդպես շնչելուն։ Բացի դրանից, երբ ես տեսա, թե ինչպես պարոնը տանջվում էր, ես չէի էլ ուզում շնչել։ Ինչպես ասվում է այսպիսի դեպքերում. շունչս կտրվում էր և...

Շփոթված Կոնսելը լռեց, այնպես էլ չվերջացնելով նախադասությունը։

— Բարեկամնե՛րս,— հուզված պատասխանեցի ես,— մեր ապրած ժամերը մեզ կապեցին անխախտ բարեկամությամբ, և դուք իրավունք ունեք ինձանից պահանջելու...

— Եվ կպահանջենք,— ընդհատեց ինձ կանադացին։

— Ի՞նչ,— հարցրեց Կոնսելը։

— Որ պարոն պրոֆեսորը կհետևի մեզ, երբ մենք փախչելու լինենք այս անիծված «Նաուտիլուսից»։

— Ի դեպ, ո՞ւր է գնում «Նաուտիլուսը»։ Արդյոք մենք դեպի հյուսի՞ս ենք գնում,— հարցրեց Կոնսելը։

— Իհարկե,— պատասխանեցի ես,— չէ՞ որ մենք դեպի արևն ենք գնում, իսկ այս տեղերում արև է, ուրեմն գնում ենք դեպի հյուսիս։

— Սակայն այժմ մնում է իմանալ, արդյոք մենք Ատլանտյան օվկիանո՞ւն ենք գնում, թե՞ խաղաղ օվկիանոսը, այսինքն բանո՞ւկ, թե ամայի ծովերը,— ասաց կանադացին։

Ես չկարողացա պատասխան տալ այդ հարցին։ Սակայն ես վախենում էի, որ նավապետ Նեմոն իր նավն ավելի շուտ կտանի այն ընդարձակ օվկիանոսը, որ գտնվում է

Ասիայի ու Ամերիկայի ափերի միջև։ Այսպիսով նա կավարտի իր շուրջերկրյա ճանապարհորդությունը և կվերադառնա աշխարհի այն մասը, ուր «Նաուտիլուսն իրեն ազատ է զգում։

Սակայն ինչպե՞ս իրագործել Նեդ Լենդի պլանները, եթե մենք նորից լինենք խաղաղ օվկիանոսի ամայի ջրերում, բնակելի երկրներից հեռու։

Այդ կարևոր հարցի պատասխանը մենք պետք է ստանայինք ամենակարճ ժամանակամիջոցում։ «Նաուտիլուսը» լողում էր մեծ արագությամբ։ Մենք շուտով անցանք բևեռային շրջանը և ուղևորվեցինք դեպի Հորն հրվանդանը։ Մարտի երեսունմեկին, երեկոյան ժամը մոտ յոթին, մենք արդեն գտնվում էինք ամերիկյան ցամաքի այդ ծայրակետի մոտ։

Այդ ժամանակ մենք արդեն մոռացանք մեր կրած տանջանքները։ Իրենց արությունը կորցրին նաև ատուցներում գերի լինելու վերաբերյալ հիշողությունները։ Մենք մտածում էինք միայն ապագայի մասին։ Նավապետ Նեմոն չէր երևում ոչ սրահում, ոչ էլ տախտակամածում։

Նավապետի օգնականն ամեն օր նշումներ էր անում քարտեզի վրա, և այդ նշումներից ես իմանում էի նավի ուղղությունը։ Այդ երեկո պարզվեց, որ մենք գնում ենք Ատլանտյան օվկիանոս։

Իմ դիտողությունների արդյունքը ես հաղորդեցի Կոնսեյլին և Նեդ Լենդին։

— Դա ուրախալի է,— ասաց կանադացին,— սակայն ի՞նչ նպատակով է ընթանում «Նաուտիլուսը»։

— Առայժմ այդ չեմ կարող ասել ձեզ, Նեդ։

— Գուցե ձեր նավապետը Հարավային բևեռից հետո ուզում է հայտնագործել Հյուսիսայինը և այնտեղից հոչակավոր Հյուսիս-Արևմտյան ճանապարհով անցնել խաղաղ օվկիանո՞ս։

— Համենայն դեպս մենք նրան չենք դրդի այդ անելու,— ասաց Կոնսելը։

— Բայց մենք կաշխատենք նրան զրկել մեր ներկայությունից, նախքան նա կկատարի այդ պլանը,— դիտեց կանադացին։

— Ինչ էլ որ լինի,— հայտարարեց Կոնսելը,— կեցցե նա, այդ նավապետ Նեմոն։ Ես չեմ ցավելու, որ ծանոթացել եմ նրա հետ։

— Մանավանդ նրանից բաժանվելուց հետո,— հեգնանքով ավելացրեց կանադացին։

Հաջորդ օրը, ապրիլի 1-ին, երբ «Նաուտիլուսը» կեսօրից մի քանի րոպե առաջ բարձրացավ ծովի մակերևույթը, մենք ինչ-որ եզերք նկատեցինք։ Այդ Հրո Երկիրն էր, որին առաջին հետազոտիչն այդպես է կոչել որովհետև բնիկների խրճիթներից բազմաթիվ տեղերում ծուխ է բարձրանում։

Հրո Երկիրն իրենից ներկայացնում է մի արշիպելագ, որն ունի հարյուր քսան կիլոմետր երկարություն և երեք հարյուր քսան կիլոմետր լայնություն, գտնվում է 53° և 56° հարավային լայնության և 67°50′ ու 77°15′ արևմտյան երկարության միջև։ Մեզ ամենամոտիկ կղզու ափը ցածրադիր էր, սակայն հորիզոնում բարձր լեռներ էին երևում։ Կարծեմ ես ճանաչեցի Սարմիյենտո լեռը, որ երկու հազար յոթանասուն մետր բարձր է ծովի մակերևույթից։ Այդ լեռան սրածայր գագաթը ծովագնացների համար եղանակը նախատեսելու միջոց է, եթե գագաթի առաջնաձև կողաստվերը պարզ ուրվագծվում է կապույտ երկնքում, ուրեմն եղանակը լավ կլինի, իսկ եթե մշուշապատ է՝ վատ։ Այդպես ասաց ինձ Նեդ Լենդը։

— Եվ ի՞նչ, Նեդ ծանրաչափի ցուցմունքը ճի՞շտ են լինում,— հարցրի ես։

— Բոլորովին ճիշտ, պարոն պրոֆեսոր,— պատասխանեց կանադացին,— որքան մենք անցել ենք Մագելլանի նեղուցով, ծանրաչափը երբեք չի խաբել մեզ։

Այդ րոպեին լեռան գագաթը պարզ երևում էր կապույտ երկնքում։ Դա լավ եղանակ էր նախագուշակում։ Եվ այդ կանխատեսությունը հաստատվեց։

Նորից ջրասույզ լինելով, «Նաուտիլուսը» մեծ արագությամբ սլացավ դեպի հյուսիս։

Երեկոյան մենք մոտեցանք Ֆոլկլենդյան կղզիներին և երբ հաջորդ օրվա արշալույսին դուրս եկանք օվկիանոսի երեսը, ես տեսա այդ կղզիների ահեղ լեռնագագաթները։

Այստեղ օվկիանոսը խորը չէր։ Դրանից իմ գլխում ծագեց այն միտքը, որ արշիպելագի երկու գլխավոր կղզիները և նրանց կից բոլոր փոքրիկ կղզիները վաղեմի ժամանակներում կազմել են Մագելլանի երկրի մի մասը։

Ֆոլկլենդյան կղզիներն ըստ երևույթին հայտնագործել է հռչակավոր Ջոն Դևիսը, անվանելով դրանք Դևիսյան հարավային կղզիներ։ Շատ ավելի ուշ՝ Ռիչարդ Հաուկինսը դրանց կոչեց ս. Կույսի կղզիներ։ XVIII դարի սկզբում Սեն-Մալոյի ծովագնացներն այդ կղզիները կոչեցին Մալուինյան, ի պատիվ իրենց հայրենի քաղաքի։ Վերջապես, անգլիացիք, որոնց այժմ պատկանում են այդ կղզիները, դրանք անվանեցին Ֆոլկլենդյան կղզիներ։

Վայրի սագերի ու բադերի երամները ճախրում էին տախտակամածի վրա և նրանցից շատերին վիճակվեց այդ օրը զարդարել մեր ճաշասեղանը։ Զկներն աչքի էին ընկնում իրենց ոսկրաշատ մարմիններով և ամբողջովին ծածկված էին թուխ և դեղին բծերով։

Երբ հեռվում չքացան Ֆոլկլենդյան կղզիների լեռնագագաթները, «Նաուտիլուսը» ջրասույզ եղավ և քսան—քսանհինգ մետր խորությամբ սլացավ հարավ-ամերիկյան ափերի երկայնքով։

Նավապետ Նեմոն դարձյալ չէր երևում։

Մինչև ապրիլի 3-ը մենք լողում էինք պատագոնական ջրերում, մերթ ջրասույզ լինելով և մերթ դուրս գալով օվկիանոսի երեսը։ Ապրիլի 4-ին «Նաուտիլուսը» անցավ Լա-Պլատայի գետաբերանի մոտ գտնվող ծովախորշը և մոտեցավ Ուրուգվային, սակայն գտնվում էր ծովափից հիսուն մղոնի վրա։ Նավը շարունակում էր ընթանալ դեպի հյուսիս, անցնելով ամերիկյան ցամաքի ծուռումուռ ափերի երկարությամբ։ Ճապոնական ծովից (ուր մենք հայտնվեցինք նավապետ Նեմոյի ընդծովյայում) մինչև այստեղ «Նաուտիլուսը» անցել էր տասնվեց հազար լյո։

Առավոտյան ժամը մոտ տասնմեկին, երեսունյոթերորդ միջօրեականի տակ մենք անցանք Այծեղջյուր արևադարձը։ Որքան էլ այդ հաճելի չէր Նեդ Լենդին, նավապետ Նեմոյին ըստ երևույթին դուր չէր գալիս Բրազիլիայի այդ բնակելի

տեղերի մոտիկությունը, և նավապետն իր նավը տանում էր գլխապտույտ արագությամբ։ Ոչ մի ձուկ, ոչ մի թռչուն, որքան էլ արագաշարժ լիներ, չէր հասնում «Նաուտիլուսին», այս պատճառով մենք չկարողացանք ծանոթանալ այս ծովերի կենդանական աշխարհի հետ։

Մինչև ապրիլի 9-ը մենք սլանում էինք նույն կատաղի արագությամբ։ Այդ օրվա երեկոյան մենք հասանք հարավաֆրիկական ցամաքի ամենաարևելյան կետին՝ Ռոկ հրվանդանին։ Այստեղ «Նաուտիլուսը» փոխեց իր ուղղությունը և բավականաչափ ջրասույզ եղած՝ ընթացավ դեպի ստորջրյա հովիտը, որ Ռոկ հրվանդանը միացնում է աֆրիկական ափում գտնվող Սիերրա-Լեոնի հետ։ Անտիլյան կղզիների բարձրության վրա այդ հովիտը երկու մասի է բաժանվում և հյուսիսում վերջանում է մի վիթխարի անդունդով, որ ունի ինը հազար մետր խորություն։ Այդ տեղերում օվկիանոսի հատակը մինչև փոքր Անտիլյան կղզիներն իրենից ներկայացնում է վեց հազար մետր բարձրությամբ մի ուղղաբերձ ժայռ։ Կանաչ Հրվանդանի կղզիների մոտ անցնում է երկրորդ, ոչ պակաս բարձր պարիսպը, որը հարավից սահմանագծում է Ատլանտիդայի ջրասույզ ցամաքը։ Այդ վիթխարի հովտի հատակում տեղ-տեղ կան լեռներ, որոնք առանձնապես գեղեցկացնում են ստորջրյա տեսարանները։ Ես այդ մասին խոսում եմ՝ հիմնվելով գլխավորապես ձեռագիր քարտեզների վրա, որ ըստ երևույթին կազմել է նավապետ Նեմոն անմիջական դիտումներից հետո։

Երկու օրվա ընթացքում մենք այցելեցինք օվկիանոսի այս մասի բոլոր խորը տեղերը։ «Նաուտիլուսը» դործարկելով խորության ղեկերը, իջնում էր այդ տեղերն ու նորից բարձրանում։

Ապրիլի 2-ին նավը կրկին դուրս եկավ ծովի երեսը և մենք նորից տեսանք Ամազոնի գետաբերանի մոտ գտնվող ցամաքը։ Այս գետից այնպիսի հսկայական քանակությամբ ջուր է թափվում ծովը, որ ափից բաղմաթիվ մղոն հեռու օվկիանոսի ջուրն անուշահամ է։

Մենք անցանք հասարակածը։ Մեզնից քսան մղոն դեպի արևմուտք մնաց Գվիանան՝ ֆրանսիական գաղութը, ուր

մենք կարող էինք հրաշալի ապաստան գտնել։ Սակայն փլուզում էր մրրիկի չափ ուժեղ քամի և կատաղի ալիքները թույլ չէին տալիս մտածել հասարակ մակույկը ծով իջեցնելու մասին։ Դա ակներև էր նույնիսկ Նեդ Լենդի համար, քանի որ նա ինձ հետ չխոսեց փախչելու մասին։ Իմ կողմից ես էլ ոչ մի ակնարկ չարեցի այդ ուղղությամբ, որպեսզի նրան չդրդեմ անմիտ քայլ անելու, որն անխուսափելիորեն փորձանքով պիտի վերջանար։

Սակայն այս հանգամանքն ամենևին չէր վշտացնում ինձ, և ես միխթարվում էի հետաքրքիր դիտողություններով։ Երկու օրվա ընթացքում, ապրիլի 11—12-ին «Նաուտիլուսը» շարունակ մնում էր ծովի վրա և, նրա ուղևորը դուրս բերեց մեծ քանակությամբ զոոֆիտներ, ձկներ ու սողուններ։

Կոնսելին վիճակված էր երկար ժամանակ հիշել ուղևորն ընկած ձկներից մեկին։

Ահա թե ինչպես եղավ։

Նավաստիների նետած ուղևորը մյուս ձկների հետ միասին դուրս բերեց կատվաձկան մի տեսակը, որ տափակ էր, և եթե պոչը կտրեինք, բոլորովին կլոր կլիներ։ Այս կատվաձուկը բավական մեծ էր և պետք է, որ կշռեր առնվազն քսան կիլոգրամ։ Նրա որովայնն ապիտակ էր, մեջքը թուխ, մարմարադույն մեծ բծերով։ Զուկն ուներ կոկիկ մաշկ ու երկծայր լողաթևեր։ Ուղևորից տախտակամածի վրա նետված կատվաձուկը հուսահատորեն թպրտում էր, փորձելով դառնալ փորի վրա, և ջղաձգական շարժումներ անելով այնքան մոտեցավ տախտակամածի ծայրին, որ մի վայրկյան ևս, ու նա կընկներ ջուրը։ Սակայն Կոնսելը, որին այդ ձուկը հետաքրքրեց, վրա հասավ և նախքան իմ նախազգուշացնելը, երկու ձեռքերով բռնեց նրան։

Նույն վայրկյանին նա գլխիվայր ընկավ տախտակամածին, կիսով չափ անդամալույծ դարձած։

Նա գոչեց.

— Ա՛խ, պարոն, պարոն, օգնիր ինձ։

Մեր ամբողջ ծանոթության ընթացքում այդ առաջին դեպքն էր, երբ խեղճ տղան ինձ դիմեց ոչ երրորդ դեմքով։

Կանադացին ու ես նրան ոտքի հանեցինք և սկսեցինք եռանդով տրորել։ Երբ նա վերստին կարողացավ շարժել ոտքերն ու ձեռքերը, ընդհատ ձայնով շշնջաց.

— Ձկների դաս, կոճկային ձկների ենթադաս, կատվաձկների ջոկատ, էլեկտրական կատվաձկների ընտանիք, մարմարագույն էլեկտրական կատվաձկների տեսակ...

— Այո, բարեկամս,— ասացի ես,— հենց մարմարագույն էլեկտրական կատվաձուկն էր, որ քեզ հասցրեց այդպիսի դրության։

— Պարոնը կարող է ինձ հավատալ,— առարկեց Կոնսելը,— որ ես վրեժս կառնեմ այդ կատվաձկներից։

— Ինչպե՞ս։

— Ես նրան կուտեմ։

Եվ նա հենց նույն երեկոյան կատարեց իր խոստումը, ըստ երևույթին, միայն նրա համար, որպեսզի վրեժ լուծի, քանի որ կատվաձկան միսն անտանելի համ ուներ։

Խեղճ Կոնսելը գործ ունեցավ էլեկտրական կատվաձկների ամենավտանգավոր տեսակի հետ։ Այդ տարօրինակ կատվաձուկը ջրում, որն էլեկտրահոսանքի լավ հաղորդիչ է, ձրկներին սպանում է մի քանի մետր տարածության վրա։ Ահա թե որչափ ուժեղ է նրա էլեկտրական լիցքը։

Հետևյալ օրը, ապրիլի 12-ին, «Նաուտիլուսը» մոտեցավ հոլանդական գաղութի ափին, Մարոնա գետաբերանին։

Այստեղ մենք տեսանք լամանտինների մի քանի ընտանիք։ Դրանք մանատներ էին, որոնք, ինչպես դյուգոնները, պատկանում են ծովահարսների կամ ծովակովերի ջոկատին։ Այդ խոշոր կենդանիներն ունեն վեց-յոթ մետր երկարություն և մոտ չորս հազար կիլոգրամ ծանրություն։

Ես Կոնսելին պատմեցի, թե կանխատես բնությունն ինչպիսի օգտակար դեր է տվել այդ կաթնասուններին. նրանք փոկերի հետ միասին արածում են ստորջրյա տափաստաններում, ոչնչացնելով արևադարձային գետերի բերանները աղտեղող մացառուտները։

— Եվ գիտե՞ք,— ավելացրի ես,— թե ինչ է կատարվել այն ժամանակից սկսած, երբ մարդը բոլորովին ոչնչացրեց այդ կենդանիներին։ Գետաբերաններում փտող ջրիմուռները

թունավորում էին ջուրն ու օդը, իսկ թունավորված օդում տարածվում էր դողէրոցքը, այդ սքանչելի երկրների ցեցը։ Թունավոր բույսերն աճեցին արևադարձային ծովերի բոլոր ափերում և այդ հիվանդությունը տարածվեց Ռիո դե լա Պլատից մինչև Ֆլորիդա։

Եթե հավատանք Թուանելին, այդ դեռևս դատարկ բան է, համեմատած այն փորձանքների հետ, որոնք սպառնում են մեր սերունդներին, երբ ոչնչացվեն վերջին փոկերն ու կետերը։ Այդ ժամանակ ծովերը, որոնք լիքը կլինեն մեդուզաներով և կալմարներով, կդառնան ամեն տեսակ վարակիչ հիվանդությունների հսկայական օջախներ, որովհետև այլևս չեն լինի «այդ ահագին ստամոքսները, որոնց բնությունը ծովերը մաքրելու առաջադրություն է տվել»։

«Նաուտիլուսի» անձնակազմն ըստ երևույթին այնքան էլ չէր հավատում այդ թեորիաներին և առանց քաշվելու սպանեց վեց մանատ, որոնց միսը տավարի մսից շատ ավելի համեղ է։ Այդ կենդանիների որսը բոլորովին հետաքրքիր չէր, դրանք թույլ էին տալիս իրենց սպանելու, չէին պաշտպանվում և փախչելու փորձ չէին անում։ Այսպիսով «Նաուտիլուսի» մառանը լցվեց մի քանի հազար կիլոգրամ մսով, որը շորացվեց և մեզ երկար ժամանակ ապահովեց համեղ կերակրով։

Նույն օրն այդ ջրերում տեղի ունեցած յուրահատուկ որսն ավելի ևս հարստացրեց «Նաուտիլուսի» ուտեստի պաշարը։ Տախտակամած դուրս բերված ուռկանի օղակներում կային որոշ քանակությամբ ձկներ, որոնց գլուխները վերջանում էին ձվաձև թանթերով և մսոտ, ծալված ծայրերով։ Դրանք թյունոս ձկների ընտանիքին պատկանող և նավակպուկ կոչված ձկներն էին։ Նրանց ձվաձև թանթը կազմված է լայնակի շարժուն կոճիկներից, որոնց միջև այդ ձուկը կարող է դատարկություն առաջացնել, որը նրան հնարավորություն է տալիս կպչել ամեն մի առարկայի։ Մեր նավաստիներն ուռկանում գտնված բոլոր նավակպուկներին անմիջապես տեղավորում էին հատկապես պատրաստված և ջրով լի դույլի մեջ։

Երբ ձկան որսը վերջացավ, «Նաուտիլուսը» մոտեցավ ափին, այն վայրին, ուր ջրի վրա ննջել էին մեծ քանակությամբ խոշոր, ծովային կրիաներ։ Ծովային այդ արժեքավոր սողուններին տիրանալը հեշտ չէր, որովհետև նրանք արթնանում են ամենաչնչին աղմուկից, իսկ նրանց ամուր վահանը պաշտպանության միջոց է եռաժանու դեմ։ Սակայն նավակպուկի օգնությամբ շատ հեշտ կարելի է բռնել կրիաներին։ Այդ ձուկը կարող է երջանկացնել ամեն մի համեստ ձկնորսի, որովհետև նրա միջոցով կարելի է կրիաներ որսալ։

Նավաստիները նավակպուկների պոչերից մի-մի օղակ կապեցին, որը բավականաչափ լայն էր և չէր կաշկանդում նրանց շարժումները, և այդ օղակին կապեցին մի երկար պարան, որի մյուս ծայրն ամրացրին տախտակամածի բազրիքին։

Ջուրն իջեցված նավակպուկները իսկույն լողացին դեպի կրիաները և կպան նրանց վահանին։ Նրանք այնպես ամուր կպան, որ ավելի հեշտ էր քաշելիս նրանց կես անել, քան թե պոկել վահանից։ Հիմա մնում էր միայն քաշել պարանը, որպեսզի տախտակամածի վրա հանվեին կրիաները, որոնց կպել էին նավակպուկները։

Երբ այդ որսը վերջացավ, մենք այլևս չմնացինք Ամազոնի գետաբերանում և գիշերը վրա հասնելուն պես «Նաուտիլուսը» նորից մեկնեց դեպի բաց ծովը։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

ՈՒԹՈՏՆԻԿՆԵՐ

Մի քանի օրվա ընթացքում «Նաուտիլուսը» հեռու էր մընում ամերիկական ափից։ Ակներև էր, որ նավապետ Նեմոն չէր ուզում մտնել Մեքսիկական ծոցը և Անտիլյան կղզիներին մոտ գտնվող ջրերը։ Դրա պատճառը ծանծաղությունը չէր, քանի որ այս ծովերի միջին խորությունը հավասար է հազար ութ հարյուր մետրի։ Ավելի շուտ բազմաթիվ կղզիներ ունեցող այս ծովերն ուղղակի դուր չէին գալիս նավա-

պետ Նեմոյին, որովհետև այնտեղ հաճախ շոգենավեր էին գալիս։

Ապրիլի տասնվեցին գրեթե երեսուն մղոն տարածության վրա մենք տեսանք Մարտինիկա և Գվադելուպա կղզիները։ Հեռվում ես նկատեցի այնտեղի լեռների բարձր գագաթները։

Կանադացին, ո՛ր հույս ուներ այստեղ իրագործել իր պլանները, հասնել ցամաք կամ կղզիների միջև երթևեկող բազմաթիվ նավերից մեկը, խիստ հիասթափվեց։ Փախուստը միանգամայն հնարավոր կլիներ, եթե Նեդ Լենդին հաջողվեր առանց նավապետի գիտության վերցնել մակույկը։ Սակայն բաց ծովում ավելորդ էր մտածել այդ մասին։

Ես, Նեդ Լենդը և Կոնսելը բազմակողմանիորեն քննարկեցինք ստեղծված դրությունը։ Ամբողջ վեց ամիս մենք գերի էինք «Նաուտիլուսում»։ Մենք անցել էինք տասնյոթ հազար լյո և, ինչպես ասում էր Նեդ Լենդը, ոչ մի հիմք չկար ենթադրելու, որ երբևէ կվերջանա մեր ճանապարհորդությունը։ Այս պատճառով կանադացին ինձ առաջարկեց փորձել նավապետին ստիպելու, որ առանց երկդիմության պատասխանի, թե արդյոք ընդմիշտ մեզ պահելո՞ւ է իր նավում։

Նման փորձն ինձ չէր ժպտում։ Իմ կարծիքով այդ կերպ մենք չէինք հասնի մեր նպատակին։ Չէ՞ որ մենք վաղուց համոզվել էինք, որ կարիք չկա հույս դնել նավապետ Նեմոյի վրա, մանավանդ որ վերջերս նավապետն ավելի մռայլ էր, ավելի ինքնապարփակ, ավելի խիստ, քան երբևէ։ Թվում էր, թե նա խուսափում է ինձնից։ Ես նրան շատ ուշուշ էի տեսնում։ Մի ժամանակ նա զբաղվում էր այն բանով, որ ինձ ցույց էր տալիս ստորջրյա զանազան հրաշքներ։ Հիմա նա այլևս չէր երևում սրահում։

Ի՞նչ փոփոխություն էր կատարվել նրա մեջ։ Ինչի՞ց։ Ես ոչնչով չէի կարող կշտամբել ինձ։ Գուցե նավում մեր ներկայությունը ճնշո՞ւմ էր նրան։ Այսպես թե այնպես, ես հույս չունեի, որ այդ մարդը երբևէ կվերադարձնի մեր ազատությունը։

Ես Նեդին խնդրեցի ժամանակ տալ մտածելու նախքան որևէ քայլ ձեռնարկելը։ Եթե այդ փորձը հաջողություն չու-

ենենա, միայն կասկած առաջ կբերի նավապետ Նեմոյի մեջ և կխանգարի կանադացու պլանների իրականացման։ Այստեղ մեր գտնվելն ավելի ծանր էր դառնում։

Ես պետք է ասեմ, որ մեզանից ոչ ոք և ոչ մի կերպ չէր կարող զանգատվել իր առողջությունից։ Եթե չհաշվենք այն ծանր վիրձությունը, որին մենք ենթարկվեցինք հարավային բևեռի սառույցներում, մենք երբեք մեզ այսչափ լավ չենք զգացել, ոչ Նեդը, ոչ Կոնսելը, ոչ էլ ես։ Առողջ սնունդը, թարմ օդը, չափած ու ձևած կյանքը, միշտ հավասար բարեխառնությունը, այս ամենը չէր նպաստում հիվանդանալուն։ Ես հասկանում էի, որ այդպիսի կյանքը միանգամայն ընդունելի է նավապետ Նեմոյի համար, որը երկրի մասին հիշելիս բոլորովին չէր ցավում, որը ուր էլ գտնվեր, զգում էր իրեն ինչպես տանը։ Բայց մե՛նք, մենք չէինք խզել մեր կապը մարդկության հետ և չէինք էլ ուզում խզել։ Օրինակ՝ ես ոչ մի ցանկություն չունեի ինձ հետ միասին թաղել իմ ատորջրյա զգայացունց դիտողությունները։

Հիմա ես անվիճելի իրավունք ունեի գրելու մի գիրք այն մասին, թե ինչ գաղտնիքներ ունի ծովի հատակը, և իհարկե ցանկանում էի, որ այդ գիրքը վաղ թե ուշ լույս տեսնի։

Այո, թեկուզ այստեղ, Անտիլյան կղզիները շրջապատող այս ջրերում, օվկիանոսի մակերևույթից տասը մետր ցած որքա՛ն հետաքրքիր դիտողություններ էի ես ամեն օր գրանցում իմ օրագրի մեջ։

Այստեղ հանդիպում էին գեղատեսիլ մեղուզաներ, որոնք այրող էին ինչպես եղինջ և բարկ հեղուկ են արտադրում։ Հոդվածոտոտնիներից այստեղ կային օղակաձև անելիդներ մեկուկես մետր երկարությամբ, վարդագույն կնճիթով և շարժման հազար յոթ հարյուր օրգաններով։ Նրանք գալարվում էին ջրի տակ, ամեն գույնի ճառագայթներ սփռելով իրենց շուրջը։ Կռճիկային ձկներից այստեղ կային հրակայական կատվաձկներ՝ տասը ոտնաչափ երկարությամբ և վեց հարյուր ֆունտ ծանրությամբ, կրծքի եռանկյունաձև լողաթևերով, ուռուցիկ մեջքով ու գլխի առջևի մասին ծայրերում դուրս ընկած աչքերով։ Նրանք լողում էին ինչպես խորտակված նավի կտորներ, փեղկերի նման ամուր կպչում

մեր լուսամուտներին։ Այստեղ կային ամերիկական թիկնեղջյուրներ, որոնց բնությունը տվել է միայն երկու գույն՝ սպիտակ և սև, թյուննոսներ, մեկ ու կես մետր երկարությամբ, կարճ և սուր ատամներով։ Ապա ամբողջ վտառներով լողում էին արքայաձկները, որոնք գլխից մինչև պոչը ծածկված են ոսկեգույն շերտերով և ունեն զարմանալի գեղեցիկ լողաթևեր։ Այդ ձկները, բնության ամենագեղեցիկ էակները, մի ժամանակ նվիրվել էին Դիանա աստվածուհուն և առանձնապես գնահատվում էին հարուստ հռոմեացիների կողմից։ Նրանց մասին առաջ եկավ նույնիսկ այսպիսի մի ասացված. «Արքայաձկներ չեն ուտում նրանք, ովքեր որսում են այդ ձկները»։ Վերջապես, այստեղ կային առագաստավոր ձկների ընտանիքին պատկանող ձկներ, որոնք կարծես թավիշ և մետաքս էին հագել և մեր աչքերի առաջ անցնում էին ինչպես Վերոնեզի նկարի ծանրաբարո սինյորները։ Փոքրիկ, կայտառ ձկները, տեսնելով նրանց, շտապ վազում էին այս ու այն կողմ։ Կապտաձկներն իրենց ուժեղ, շաղլիկ պոչերով ճեղքում էին ջուրը։ Արծաթաշող լուսին-ձկները, որ արժանի են իրենց անվան, լողում էին ջրում ինչպես լուսինը երկնքում, սպիտակ ցոլքեր սփռելով իրենց շուրջը։

Դեռ ինչքա՛ն հրաշալի և նոր տեսակներ կտեսնեի ես, եթե «Նաուտիլուսը» չիջներ ծովի խորքերը։ Հորիզոնական ղեկերը թեքվեցին, և նավը խորացավ երկու հազար, երեք հազար և երեք հազար հինգ հարյուր մետր։ Այստեղ կենդանական աշխարհը ներկայացնում էին միայն ծովային աստղերը, մեդուզաները և մի քանի կակղամորթներ։

Ապրիլի քսանին մենք լողում էինք մոտավորապես հազար հինգ հարյուր մետր խորությամբ։ Ամենամոտ ցամաքը Բահամյան կղզիներն էին, որոնք հսկայական կոպիճների պես ցցվել էին ծովի վրա։ Այնտեղ կային ատորջրյա բարձր ժայռեր, որոնց ուղղաբերձ լանջերը կանգնել էին շարեշար և հղկված էին ջրից։ Դրանց միջև կային սև ճեղքվածքներ, որոնք չէին կարող լուսավորվել նույնիսկ մեր լուսարձակի ճառագայթներով։

Այդ ժայռերը ծածկված էին վիթխարի ջրիմուռներով՝ ծովասեզներով։ Դա մի իսկական ծովային այգի էր, որ արժանի էր տիտանների աշխարհին։

Ես, Կոնսելը և Նեդն այդ վիթխարի բույսերի մասին խոսելուց հետո բնականաբար անցանք ծովային հսկայական կենդանիները թվելուն։ Դրանցից մի քանիսին վիճակված է լինել մյուսների ուտելիքը։ «Նաուտիլուսի» լուսամուտից ստորջրյա երկար ճյուղերի վրա ես նկատեցի խեցգետնանմանների ընտանիքի միայն մի քանի ներկայացուցիչները, երկար չանչերով, խոշոր և մանիշակագույն խաչափառները։

Արդեն ժամի տասնմեկն էր, երբ Նեդ Լենդն իմ ուշադրությունը հրավիրեց փարթամ աճած ջրիմուռներում տեղի ունեցող ինչ-որ բանի վրա։

— Դա շատ հարմար տեղ է ութոտնիկների համար,— ասացի ես,— և ես բոլորովին չէի զարմանա, եթե այստեղ տեսնեի այդ հրեշներից մի երկուսին։ Սակայն իմ բարեկամ Նեդն ըստ երևույթին սխալվեց, որովհետև ես այստեղ կասկածելի ոչինչ չեմ տեսնում։

— Շա՛տ ափսոս,— ասաց Կոնսելը,— ես կցանկանայի մի լա՛վ դիտել այդ ութոտնիկներից որևէ մեկին, որոնք, ինչպես ես լսել եմ, ընդունակ են մի ամբողջ նավ քաշելտանել ծովի անդունդը։ Այդ հրեշները կոչվում են կրա...։

— Կրա, պրծավ գնաց,— հեգնաբար ընդհատեց նրան կանադացին։

— Կրակեններ,— անխռով լրացրեց այդ բառը Կոնսելը, ոչ մի ուշադրություն չդարձնելով հեգնանքի վրա։

— Ես երբեք չեմ հավատա,— ասաց Նեդ Լենդը,— որ աշխարհում այդպիսի հրեշներ կան։

— Ինչո՞ւ,— առարկեց Կոնսելը,— չէ՞ որ մենք հավատում էինք միաժանու գոյության։

— Եվ մենք սխալվեցինք, Կոնսել։

— Անկասկած։ Սակայն ուրիշները հիմա էլ են հավատում։

— Հնարավոր է, Կոնսել, բայց ինչ վերաբերում է ինձ,

ես այդ հրեշների գոյությանը կհավատամ միայն այն ժամանակ, երբ նրանց կդիահատեմ իմ սեփական ձեռքերով,— ասաց ես։

— Այդպես ուրեմն,— ասաց Կոնսելը,— պարոնը չի՞ հավատում վիթխարի ծովահրեշների գոյության։

— Իսկ ո՞վ է հավատացել,— գոչեց Նեդ Լենդը։

— Բազմաթիվ մարդիկ, իմ բարեկամներ։

— Միայն ոչ ձկնորսները. գիտնականները՝ գուցե։

— Ներողություն եմ խնդրում, Նեդ, թե ձկնորսները և թե գիտնականները։

— Սակայն ես, ես ինքս,— ասաց Կոնսելն ամենալուրջ տոնով,— ինքս սեփական աչքերով տեսել եմ, թե ինչպես ծովահրեշը դեպի անդունդ է տարել հսկայական մի նավ։

— Դուք այդ տեսե՞լ եք,— հարցրեց կանադացին։

— Այո, Նեդ։

— Ձեր սեփական աչքերո՞վ։

— Այո, բարեկամս։

— Կուզեի իմանալ, ո՞րտեղ։

— Սեն-Մալոյում,— հանգիստ պատասխանեց Կոնսելը։

— Նավահանգստո՞ւմ,— հեգնաբար հարցրեց Նեդը։

— Ոչ, եկեղեցում,— պատասխանեց Կոնսելը։

— Եկեղեցո՞ւմ,— զարմացավ կանադացին։

— Այո, սիրելի Նեդ։ Դա մի պատկեր էր, որի վրա հենդ այդպիսի մի ծովահրեշ էր նկարված։

— Ախ, այդպե՛ս,— գոչեց Նեդ Լենդը և քա՛հ-քա՛հ ծիծաղեց,— Կոնսելը ծաղրում է ինձ։

— Բայց չէ՞ որ Կոնսելը ճշմարտությունն է ասում,— միջամտեցի ես,— պատկերի մասին ես լսել եմ։ Դրա այսօրվան վերցված է մի առասպելից, իսկ դուք գիտեք, թե ինչպես պիտի վերաբերվել բնական պատմությանը վերաբերող առասպելներին, մանավանդ երբ խոսքը հրեշների մասին է... Այստեղ արդեն երևակայությունը սահման չունի։ Մարդիկ չեն բավարարվում մի ամբողջ նավ ծովի հատակը տանելու ընդունակություն ունեցող ծովահրեշների մասին պատմություններ լսելով։ Մի ոմն Նիկոլա Մագնուս պնդում է, թե տեսել է մի ամբողջ մղոն երկարությամբ ծովահրեշ, որ

ավելի շուտ նման է եղել կղզու, քան կենդանի արարածի։ Մի ուրիշ «ականատես» հաղորդում է, թե մի անգամ Նիդրոսի եպիսկոպոսը եկեղեցական արարողության համար սեղան է կառուցել հսկայական ժայռի վրա։ Երբ նա վերջացրել է պատարագը, ժայռը շարժվել է տեղից և ընկել ծովը։ Պարզվել է, որ դա ծովահրեշ է եղել։

— Ուրիշ ոչի՞նչ,— հարցրեց կանադացին։

— Մի ուրիշ եպիսկոպոս,— պատասխանեցի ես,— որի անունը Պանդևպիդանա էր, հաղորդել է մի ութոտնիկի մասին, որի վրա կարող էր աղաղ զորախաղ կատարել մի ամբողջ հեծելագունդ։

— Սակայն Ֆնշպիսի՛ ստախոսներ են եղել այդ եպիսկոպոսները,— ասաց Նեդը։

— Եվ վերջապես, հնադարյան բնախույզները պատմում էին այնպիսի հրեշների մասին, որոնց երախը նման է եղել մի ամբողջ ծովածոցի և որոնք այնքան մեծ են եղել, որ չեն կարողացել անցնել Ջիբրալտարի նեղուցը։

— Ա՛յ քեզ մեծություն,— ասաց կանադացին։

— Սակայն որչա՞փ ճշմարտություն կա այդ բոլոր պատմություններում,— հարցրեց Կոնսելը։

— Ոչ մի ճշմարտություն, բարեկամներս։ Այստեղ ճշմարտության հետքն անգամ չկա։ Այնուամենայնիվ պատմողների երևակայությանը հարկավոր է, եթե ոչ առիթ, գոնե պատրվակ։ Չի կարելի ժխտել, որ գոյություն ունեն հրակայական մեծության ութոտնիկներ և կալմարներ, բայց և այնպես դրանք իրենց մեծությամբ զիջում են կետանմաններին։ Օրինակ, Արիստոտելը պնդում էր, թե լինում են հինգ լոկտա, այսինքն երեք մետր և տասը սանտիմետր երկարությամբ կալմարներ։ Մեր ձկնորսները հաճախ գրեթե երկու մետր երկարությամբ կալմարներ են տեսել։ Բնագետների հաշվով գլխոտանին, ընդամենը վեց ոտնաչափ երկարությամբ կալմարը կամ ծովահրեշն ունի ամբողջ քսան յոթ ոտնաչափ երկարությամբ շոշափուկներ։ Դա միանգամայն բավական է սարսափելի հրեշ թվալու համար։

— Մեր օրերում է՞լ են դրանց որսում,— հարցրեց կանադացին։

— Չգիտեմ թե արդյոք որսում են, բայց ծովագնացները համենայն դեպս հանդիպում են։ Իմ բարեկամներից մեկը, Հավրեցի նավապետ Պոլբոսը պնդում էր, թե մի անգամ Հնդկական օվկիանոսում մի հսկայական ծովահրեշ է տեսել։ Սակայն 1861 թվից հայտնի է ամենազարմանալի մի փաստ, որն այլևս չի թույլ տալիս կասկածելու, որ այդ հսկայական կենդանիները գոյություն ունեն։

— Այդ ի՞նչ փաստ է,— հարցրեց Նեդ Լենդը։

— Հիմա կպատմեմ։ 1861 թվականին Թեներիֆից դեպի հյուսիս-արևելք, գրեթե նույն լայնության տակ, ուր հիմա մենք գտնվում ենք, «Ալեկտոն» նավի անձնակազմը մոտիկ տեղում նկատեց մի հրեշավոր ութոտնիկ։ Նավի հրամանատար Բուգեն մոտեցավ կենդանուն և գրոհեց եռաժանիներով ու հրացանի կրակոցներով, սակայն առանց մեծ հաջողություն ունենալու, որովհետև գնդակներն ու եռաժանիները անցնում էին կենդանու փափուկ մարմնի մեջ, ինչպես ոչ-թանձր ժելեով։ Երկարատև ու ապարդյուն փորձերից հետո անձնակազմին հաջողվեց օղակ նետել կակղամորթի մարմնի վրա։ Օղակը սահեց մինչև լողաթևը և այնտեղ կանգ առավ։ Փորձեցին հրեշին քաշել դեպի նավը, բայց նա այնքան ծանր էր, որ պարանը նրան երկու կես արավ, պոչը կտրվեց, իսկ ինքը, հրեշը չքացավ ալիքներում։

— Եվ այդ փա՞ստ է,—հարցրեց Նեդը։

— Անվիճելի փաստ է, սիրելի Նեդ։ Առաջարկեցին այդ ութոտնիկն անվանել Բուգեի ութոտնիկ։

— Որքա՞ն էր նրա երկարությունը,— հարցրեց Կանադացին։

— Վեց մետր, այնպես չէ՞,— ասաց Կոնսելը, որը լուսամուտի մոտ կանգնած, կրկին սկսեց դիտել ստորջրյա ժայռերի ճեղքվածքները։

— Միանգամայն ճիշտ է,— պատասխանեցի ես։

— Արդյոք նրա գլուխը չունե՞ր ութ շոշափուկ, որոնք ջրի մեջ գալարվում էին ձերի նման։

— Այո, ուներ։

— Եվ նա գլխի վրա ուներ խիստ զարգացած աչքե՞ր։

— Այո, Կոնսել։

— Եվ նրա բերանը հիշեցնում էր թութակի կտուցը, միայն թե հսկայական մեծություն ուներ, այո՞։

— Միանգամայն ճիշտ է։

— Հրաշալի։ Պարոնի թույլտվությամբ,— հանգիստ ասաց Կոնսելը,— ահա նա, հենց այդ Բուգելի ութոտնիկը, կամ գոնե նրա ամենամոտ ցեղակիցներից մեկը։

Ես ապշած նայեցի Կոնսելին։ Նեդ Լենդը շտապեց դեպի լուսամուտը։

— Զարհուրելի հրեշ է,— գոչեց նա։

Ես նայեցի լուսամուտից և զզվանքով ծռմռեցի դեմքս։ Իմ աչքերի առաջ էր մի հրեշ, որ իրոք արժանի էր առասպելական կոչվելու։ Այդ հսկայական մեծություն, ութ մետր երկարություն ունեցող մի ծովահրեշ էր։ Նա մեծ արագությամբ լողում էր դեպի «Նաուտիլուսը», անընդհատ մեզ նայում էր ահագին, կանաչավուն-կապույտ աչքերով։ Նրա ութ շոշափուկները կամ ոտքերը, որ սկսվում էին ուղղակի գլխից, և հենց այս պատճառով էլ այդ տիպի կենդանիները գլխոտանիներ են կոչվում, կրկնակի մեծացնում էին նրա իրանը և գալարվում ինչպես Ֆուրիայի մազերը։ Կարելի էր պարզ տեսնել բոլոր երկու հարյուր հիսուն ծծուկները, որոնք կիսագնդաձև պատիճների էին նման և դասավորված էին շոշափուկների ներքին կողմում։ Երբեմն այդ շոշափուկները կարծես կպչում էին սրահի պատուհանին։ Հրեշի երախը, որ եղջերային էր ու ծռված ինչպես թութակի կտուցը, բացվում ու փակվում էր ուղղահայաց դիրքով։ Նրա լեզուն, որ նույնպես ինչ-որ եղջերային նյութից էր և ուներ բազմաշարք սուր ատամներ, ցցվում ու դուրս էր գալիս այդ սարսափելի ունելիքից։ Բնության ինչպիսի՛ քմահաճույք։ Կակղամորթը թռչունի կտուց ուներ։ Նրա իլիկաձև, մեջտեղից ուռած մարմինն իրենից ներկայացնում էր մոտ մի զանգված, որը պետք է ունենար առնվազն քսան կամ քսանհինգ հազար կիլոգրամ ծանրություն։ Կենդանու գույնը միշտական չէր, այլ շարունակ փոխվում էր նայած կենդանու զրգռման աստիճանին, նա լինում էր մոխրագույն կամ դարչնագույն-կարմրավուն։ Ի՞նչն էր գրգռում այդ կակղամորթին։ Անշուշտ «Նաուտիլուսի» ներկայությունը, որին

նրա ծծող շոշափուկները և ահարկու ծնոտները ոչ մի վնաս չէին հասցնում։

Ի՜նչ սոսկալի են այդ ծովահրեշները, ինչպիսի՛ արտասովոր կենսական ուժ է նրանց տվել բնությունը, ինչքա՛ն կորով կա նրանց շարժումներում։ Իզուր չէ, որ նրանք երեք սիրտ ունեն։

Դեպքերի բերմամբ մենք հանդիպեցինք ութոտնիկին, և ես չէի ուզում ձեռքիցս բաց թողնել գլխոտանու այդ տեսակը մանրամասն ուսումնասիրելու հնարավորությունը։ Ես հաղթահարեցի այն սարսափը, որ զգացել էի կենդանուն տեսնելիս և վերցնելով մատիտը, սկսեցի նկարել նրան։

— Գուցե սա հենց այն ութոտնիկն է, որին որսում էր «Ալեկտոնը»,— ասաց Կոնսելը։

— Ոչ,— առարկեց կանադացին,— չէ՞ որ սա բոլորովին առողջ է, իսկ նա կորցրել է իր պոչը։

— Դա ապացույց չէ,— առարկեցի ես,— այդ կենդանիների շոշափուկներն ու պոչը վերականգնվելու ունակություն ունեն և յոթ տարվա ընթացքում Բուգեի ութոտնիկի պոչը բավականաչափ ժամանակ ուներ կրկին աճելու։

— Սակայն,— ասաց Նեդը,— եթե սա Բուգեի ութոտնիկը չէ, գուցե այն գտնվում է այստեղ, սրանց մեջ։

Արդարև, աջակողմի լուսամուտի առաջ էլի մի քանի ծովահրեշներ երևացին։ Դրանք յոթ հատ էին, շրջապատեցին «Նաուտիլուսը», և ես լսում էի, թե ինչպես կատուներով խփում են նավի երկաթե պատերին։ Հիանալի՛ առիթ դիտողությունների համար։ Ես շարունակում էի իմ աշխատանքը։ Հրեշները ոչ մի քայլ չէին նահանջում մեզանից, նրանք թվում էին անշարժ, եթե ես ցանկանայի, կարող էի նրանց ուրվագծել ապակու վրա, մանավանդ որ մենք ընթանում էինք չափավոր արագությամբ։

Հանկարծ «Նաուտիլուսը» կանգ առավ։ Ամբողջ նավը ցնցվեց ինչ-որ հարվածից։

— Մենք ընդհարվեցինք որևէ բանի հե՞տ,— հարցրի ես։

— Համենայն դեպս այդ խուշընդոտն արդեն անցանք, քանի որ շարունակում ենք ընթանալ,— պատասխանեց կանադացին։

Անկասկած, «Նաուտիլուսը» փորձում էր լողալ, բայց տեղից չէր շարժվում։ Պտուտակի թիակներն այլևս չէին ճեղքում ալիքները։ Անցավ մի րոպե։ Նավապետ Նեմոն և իր օգնականը մտան սրահ։

Բավական երկար ժամանակ ես չէի տեսել նավապետին։ Նա ինձ շատ մոայլ երևաց։ Ոչ մի ուշադրություն չդարձնելով մեզ վրա, գուցե և չնկատելով մեզ նա մոտեցավ լուսամուտին, նայեց ութոտնիկներին և մի քանի խոսք ասաց իր օգնականին։

Վերջինս դուրս գնաց։ Շուտով փեղկերը ծածկվեցին և սրահի առաստաղը լուսավորվեց։

Ես մոտեցա նավապետին։

— Ութոտնիկների հետաքրքիր հավաքածո է,— ասացի ես հնարավոր անհոգությամբ։

— Դուք իրավացի եք, պարոն բնագետ, և մենք նրանց դեմ պետք է կյանքի և մահվան կռիվ մղենք։

Ես տարակուսանքով նայեցի նավապետին։ Ինձ թվաց թե լավ չեմ լսել։

— Կյանքի և մահվան կռի՞վ,— կրկնեցի ես։

— Այո, պրոֆեսոր։ Մեքենան կանգ է առել։ Ես կարծում եմ, որ այդ ութոտնիկներից մեկի եղջյուրե ծնոտները մնացել են մեքենայի թիակներում։ Այդ խանգարում է մեր շարժումը։

— Եվ դուք ի՞նչ պետք է անեք։

— Բարձրանալ ջրի երեսը և ոչնչացնել այդ բոլոր հրեշներին։

— Դժվար գործ է։

— Կարծում եմ։ Էլեկտրական գնդակներն անզոր են այդ փափուկ զանգվածների դեմ։ Գնդակները նրանց մեջ դիմադրության չեն հանդիպում և այս պատճառով չեն պայթում։ Մնում է նրանց վրա հարձակվել կացիններով։

— Եվ եռաժանիով, նավապետ, եթե դուք չհրաժարվեք իմ օգնությունից,— ասաց կանադացին։

— Ես ընդունում եմ այդ օգնությունը, միստր Լենդ։

— Մենք կգնանք ձեզ հետ,— ասացի ես նավապետին։

Սանդուղքի մոտ արդեն կանգնած էին տասը նավաստիներ, որոնք զինված էին կացիններով։ Ես ու Կոնսելը նույնպես կացիններ վերցրինք։ Նեդ Լենդը վերցրեց եռաժանին։

«Նաուտիլուսը» բարձրացավ օվկիանոսի մակերևույթը։ Նավաստիներից մեկը, սանդուղքի վերջին աստիճանին կանգնած, բաց էր անում դռնակի մոտ եղած հեղույսները։ Հենց որ նա հանեց պտուտակները, փեղկերն անմիջապես բացվեցին, ըստ երևույթին ութոտնիկի շոշափուկների ճնշումով։ Ութոտնիկի երկար ոտներից մեկն անմիջապես օձի նման ներս սողաց։ Նավապետ Նեմոն կացնի հարվածով կտրեց այդ սարսափելի շոշափուկը, որը սահելով ու գալարվելով, գլորվեց սանդուղքից։

Երբ մենք իրար հրելով շտապում էինք դեպի տախտակամած, երկու ուրիշ շոշափուկներ կայծակի արագությամբ փաթաթվեցին նավապետ Նեմոյի առջև կանգնած նավաստուն և սեղմեցին անհաղթահարելի ուժով։

Նավապետ Նեմոն ճչաց և առաջ նետվեց։ Մենք հետևեցինք նրան։ Ինչպիսի՛ ահարկու տեսարան։ Դժբախտը շոշափուկների մեջ սեղմված, վեր էր բարձրացվել ու կախվել օդում, խռխռացնելով ու շնչասպառ լինելով։ Նա գոչում էր՝ «Օգնեցե՛ք։ Օգնեցե՛ք»։ Ֆրանսերենով արտասանված այդ բառերը խորապես զարմացրին ինձ։ Այսպես ուրեմն, այստեղ, նավում ես ունեի հայրենակից, գուցե նույնիսկ մի քանի հայրենակիցներ։ Ամբողջ կյանքումս ես չեմ մոռանա այդ սրտաճմլիկ ճիչը։

Դժբախտը կարող էր մեռնել։ Ո՞վ կարող էր նրան ազատել այդ հզոր շոշափուկներից։ Նավապետ Նեմոն վազեց դեպի ութոտնիկը և կացնի հարվածով նրա մի ոտն էլ կտրեց։ Նրա օգնականը կատաղաբար կռվում էր մյուս հրեշների հետ, որոնք սողում էին «Նաուտիլուսի» վրա։ Ամբողջ անձնակազմը կռվում էր կացիններով։ Կանադացին, Կոնսելը և ես կացիններով հարվածում էինք մսոտ զանգվածներին։ Օդում տարածվեց մուշկի սուր հոտը։

Մի ակնթարթ ես հավատացի, թե ութոտնիկի բռնած դժբախտ նավաստին կազատվի նրա զարհուրելի ծծուկներից։

Ութ ոտներից յոթն արդեն կտրվել էին և միայն մեկը, փետուրի նման պատելով իր զոհին, գալարվում էր օդում։ Սակայն այն րոպեին, երբ նավապետ Նեմոն ու իր օգնականը հարձակվեցին նրա վրա, կենդանին իր ատամոքսում գրտնըվող պարկից բաց թողեց ինչ-որ սև հեղուկ։ Մենք կարծես կուրացանք։ Երբ հեղուկը ցրվեց, ութոտնիկը չքացել էր իմ հայրենակցի հետ։

Որքա՛ն զայրացանք մենք։ Կատաղությունից մեզ կորցրել էինք։ Տասը կամ տասներկու ութոտնիկ բարձրացան «Նաուտիլուսի» տախտակամածը։ Մենք դես ու դեն էինք ընկնում օձանման կտրվածքների քառում, որոնք գալարվում էին տախտակամածի վրա, արյան ու սև հեղուկի մեջ։ Թվում էր, թե այդ կպչուն շոշափուկները նորից կենդանանում են ինչպես հիդրաների գլուխները։ Նեդի եռաժանին յուրաքանչյուր անգամ հարվածելիս խրվում էր ութոտնիկների աչքերի մեջ։ Սակայն հանկարծ հրեշի շոշափուկները բռնեցին մեր քաջ ընկերոջը, որը չկարողացավ խուսափել դրանից։

Ինչպե՞ս այդ ժամանակ իմ սիրտը չպայթեց վախից ու սարսափից։ Ծովահրեշի սոսկալի կտուցն արդեն բացվել էր Նեդ Լենդի դեմ։ Խեղճը պետք է երկու կտոր լիներ։ Ես շտապեցի օգնության։ Սակայն նավապետ Նեմոն կանխեց ինձ։ Նրա կացինը իջավ հրեշի ահագին ծնոտներին և հրաշքով ազատված կանադացին, ոտքի կանգնելով, իր եռաժանին մինչև դաստակը մխեց ծովահրեշի եռակի սիրտը։

— Ես ձեր հանդեպ պարտք ունեի,— ասաց կանադացուն նավապետ Նեմոն։

Նեդը լուռ գլուխ տվեց։

Այս ճակատամարտը տևեց քառորդ ժամից ոչ ավելի։ Հաղթված, անդամահատված հրեշները մաքրվեցին ճակատամարտի վայրից և չքացան ալիքներում։

Նավապետ Նեմոն, ամբողջովին արյունոտված, անշարժ կանգնել էր լուսարձակի աշտարակի մոտ և նայում էր ծովին, որը կլանեց նրա ընկերներից մեկին։ Արցունքի խոշոր կաթիլները հոսում էին նրա աչքերից։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

ԳՈԼՖՍՏՐԻՄ

Այս զարհուրելի դեպքը, որը մեզանից ոչ ոք երբեք չի մոռանա, տեղի ունեցավ ապրիլի 20-ին։ Ես այդ դեպքը նկարագրեցի անմիջականորեն ապված սաստիկ հուզումի թարմ տպավորության տակ։ Հետո վերանայեցի իմ պատմվածքը և կարդացի Կոնսելի ու կանադացու մոտ։ Նրանք գտան, որ իմ պատմածը միանգամայն ճիշտ է, բայց ոչ բավականաչափ տպավորիչ։ Որպեսզի ի վիճակի լինել նման պատկեր նկարագրելու համար, պետք է ունենալ մեր բանաստեղծներից ամենահռչակավորի՝ Վիկտոր Հյուգոյի, «Ծովի մշակների» հեղինակի ձիրքը։

Ես արդեն ասացի, որ նավապետ Նեմոն նայում էր ծովին ու լալիս։ Անսահման էր նրա վիշտը։ Մեր միատեղ ճանապարհորդության ժամանակ նա կորցրեց արդեն երկրորդ ընկերոջը։ Եվ ինչպիսի՛ զարհուրելի մա՛հ։ Նրա ընկերը, որը ճզմված, շնչասպառ եղած, կտրատված էր ութոտնիկի հրեշավոր շոշափուկներով, բզկտված էր նրա երկաթե ծնոտներով, նույնիսկ չի հանգչելու իր ընկերների մոտ, կորալային գերեզմանոցի անդորր ջրերում։

Ես ինքս մինչև հոգուս խորքը ցնցվեցի այն սոսկալի ճիչից, որ հանկարծ լսվեց պայքարի ժամանակ։ Այդ խեղճ ֆրանսիացին մոռացավ իր պայմանական լեզուն և մահվան ժամին խոսեց իր հայրենիքի լեզվով։ Այսպես ուրեմն, «Նաուտիլուսի» անձնակազմին պատկանող մարդկանց մեջ, որոնք հոգով ու մարմնով հավատարիմ են նավապետ Նեմոյին, նրա պես խուսափել են մարդկության հետ հարաբերություն պահպանելուց՝ գտնվում էր նաև իմ հայրենակիցը։ Արդյոք նա միակ ֆրանսիացի՞ն էր այդ տարօրինակ մարդկանց մեջ, որոնք ակնհայտորեն տարբեր, ազգությունների ներկայացուցիչներ էին։ Այդ մեկն էր այն չլուծված պրոբլեմներից, որոնք ծառանում էին իմ առաջ։

Նավապետ Նեմոն գնաց իր սենյակը, և ես մի քանի օր չէի տեսնում նրան։

Սակայն ես ստորջրյա նավի ընթացքից կարող էի դատել, թե որքան մեծ ու անկեղծ է նավապետի տխրությունը, չէ՞ որ նա նավի ոգին էր և այդ նավի վրա անդրադառնում էին նրա ապրումները։ «Նաուտիլուսը» չէր լողում որոշակի ուղղությամբ։ Ալիքները տանում էին նավն ինչպես դիակ։ Մեքենան կարող էր աշխատել անխափան, սակայն հազիվ էր շարժվում։ Նավապետ Նեմոն ոչ մի կերպ չէր կարողանում անջատվել պայքարի տեղից, չէր կարողանում հեռանալ այն ծովից, որը կլանեց իր մի ընկերոջը։

Այսպես անցավ տասը օր։

Եվ միայն մայիսի 1-ին «Նաուտիլուսը» վճռականապես ընթացավ դեպի հյուսիս, անցավ Բահամյան կղզիների մոտից և մեկնեց դեպի Բահամյան ջրանցքի բերանը։

Հիմա մենք լողում էինք օվկիանոսային մեծ գետի հոսանքով։ Այդ գետն ունի իր ափերը, իր կենդանական աշխարհը և իր հատուկ բարեխառնությունը։ Ես խոսում եմ Գոլֆստրիմի մասին։

Արդարև, դա իսկական մի գետ է, որ ազատ հոսում է Ատլանտյան օվկիանոսի մեջտեղում և նրա ջուրը երբեք չի խառնվում օվկիանոսի ջրին։ Այդ գետն աղի է, ավելի աղի, քան իրեն շրջապատող ծովը։ Գետի միջին խորությունը երեք հազար ոտնաչափ է, միջին լայնությունը՝ վաթսուն մղոն։

Գոլֆստրիմի ակունքը, եթե կարելի է այդպես անվանել, հայտնագործել է նավապետ Մորին։ Ակունքը գտնվում է Բիսկայան ծոցում։ Այնտեղ հոսանքն իր բարեխառնությամբ ու գույնով քիչ է տարբերվում շրջակա ջրից։ Այնուհետև Գոլֆստրիմը հասարակածային Աֆրիկայի ափերով գնում է դեպի հարավ, ճանապարհին կլանելով արևադարձային արևի ճառագայթների տաքությունը, կտրում է Ատլանտյան օվկիանոսը, հասնում Ռոկ հրվանդանը, բրազիլական ափը, բաժանվում է երկու թևի, որոնցից մեկն է՛լ ավելի է տաքանում, անցնելով Անտիլյան ծովի տաք ջրերից։ Այստեղ Գոլֆստրիմը որ կոչված է պահպանել երկրագնդի բարեխառնության հավասարակշռությունը, անցնում է իր պարտականությունների կատարման։ Մեքսիկական ծոցում տաքանալով գրեթե մինչև եռալը, բարձրանում է դեպի հյու-

սիս, դեպի ամերիկական ափերը, հասնում մինչև Նյուֆաունդլենդ, Գևիսյան նեղուցի սառը հոսանքի ճնշման տակ փոխում է իր ուղղությունը և կրկին հոսում դեպի օվկիանոս, ընթանալով մի մեծ շրջանի գծով։ Քառասուներեքերորդ զուգահեռականի մոտ Գոլֆստրիմը բաժանվում է երկու թևի, որոնցից մեկը հյուսիս-արևելյան պասատի ազդեցությամբ վերադառնում է Բիսկայան ծոցը, և Ազորյան կղզիները, իսկ մյուսը, տաքացնելով Իռլանդիայի ու Նորվեգիայի ափերը, գնում է Շպիցբերգենից ավելի հեռու, ուր սառչելով մինչև շորս աստիճան, կազմում է Հյուսիսային բևեռի ազատ ծովը։

Դուրս գալով Բահամյան ջրանցքը, Գոլֆստրիմը տասնչորս լյո լայնությամբ և երեք հարյուր հիսուն մետր խորությամբ հոսում է առաջ, անցնելով մեկ ժամում ութ կիլոմետր։ Քանի նա մոտենում է հյուսիսին, այնքան պակասում է այդ արագությունը։ Եվ պետք է ցանկանալ, որ արագությունը պակասելու այդ աստիճանը պահպանվի, որովհետև եթե հոսանքի արագությունը և ուղղությունը փոխվի, ապա Եվրոպայի կլիմային կսպառնան այնպիսի ցնցումներ, որոնց հետևանքը դժվար է նույնիսկ պատկերացնել։

«Նաուտիլուսը» լողում էր օվկիանոսային հենց այդ գետի ուղղությամբ։

Կեսօրին ես ու Կոնսելը կանգնած էինք տախտակամածում։ Ես նրան պատմեցի Գոլֆստրիմի մի քանի առանձնահատկությունների մասին։

Վերջացնելով բացատրությունս, ես նրան առաջարկեցի ձեռքը սուզել հոսանքի մեջ։

Կոնսելն այդպես էլ արեց և շատ զարմացավ, զգալով, որ ջուրը ոչ տաք է, ոչ էլ սառը։

— Այդ նրանից է,— ասացի ես,— որ Գոլֆստրիմի ջրերի բարեխառնությունը Մեքսիկական ծոցից դուրս գալիս քիչ է տարբերվում մարդու մարմնի ջերմաստիճանից։ Գոլֆստրիմը ջերմության մի հսկայական աղբյուր է, որի շնորհիվ Եվրոպայի ափերը ծածկված են մշտադալար կանաչով։ Մորիի հաշվով, ջերմության այն էներգիան, որ բնությունը

ծախսում է Գոլֆստրիմի ջրերը տաքացնելու համար, կարող է հալված վիճակում պահել Ամազոնի կամ Միսուրիի մեծությամբ մի ամբողջ երկաթե գետ։

Այստեղ Գոլֆստրիմը մեկ վայրկյանում անցնում էր երկու և քառորդ մետր։ Հոսանքը խիստ տարբերվում էր շրջապատող ծովից։ Ծովի կանաչ ալիքների ֆոնի վրա պարզ երևում էին նրա մթին, աղերով հարուստ, ջինջ-կապույտ ջրերը։

Դրանց միջև սահմանաբաժան գիծը այնքան պարզ էր, որ Կարոլինյան կղզիների մոտ եղավ մի ակնթարթ, երբ կարելի էր նկատել, թե ինչպես «Նաուտիլուսի» սուր ծայրը ճեղքում է Գոլֆստրիմի ջրերը, մինչդեռ պտուտակը դեռ շարունակում է փրփրեցնել օվկիանոսի ալիքները։

Գոլֆստրիմն իր հետ տանում էր կենդանի արարածների մի ամբողջ աշխարհ։ Արգոնավտները, որ ապրում են Միջերկրական ծովում, անհամար վտառներով ճանապարհորդում էին այստեղ։ Կռճիկավորներից աչքի էին ընկնում կատվաձկները, որոնց պոչերը կազմում էին ամբողջ մարմնի գրեթե մեկ երրորդ մասը։ Դրանք իրենցից ներկայացնում էին մի տեսակ վիթխարի շեղանկյունիներ, քսանհինգ ոտնաչափ երկարությամբ։ Հետո մենք տեսանք մի մետր երկարությամբ փոքրիկ շնաձկներ, մեծ գլխով, կարճ ու կլոր դնչով և սուր ատամների բազմաթիվ շարքերով։ Նրանց մարմինը կարծես թեփուկով էր ծածկված։

Ոսկրոտ ձկներից ես տեսա ծածանազդիները, որ սովորաբար լինում են այդ ծովերում, մեկ մետր երկարությամբ շերտավոր օձագլուխները, որոնց մարմնի վրա կարծես գծված են շերտերը և կետերի ձևով շարունակվում են նաև լողաթևերի վրա, ոսկե թյունիկը — հիանալի ոսկե գույնով և կապտավուն երանգավորումով, վահանաձկները, որոնց աչքերը գտնվում են աջ կողմում, ռոմբները, որոնք պատկանում են նույն ընտանիքին, ինչ-որ վահանաձկները, բայց սրանց աչքերն ու լայն բերանը գտնվում են ձախ կողմում, բազմաթիվ մանր բեկասյան ձկներ փողաձև դնչով, որոնց մեջքը դժգույն կարմրավուն է, իսկ որովայնը՝ արծաթա-

վուն, սալմոն ձկների ընտանիքի զանազան ներկայացուցիչները և այլն։

Գիշերը Գոլֆստրիմի ջրերի ֆոսֆորային փայլը մրցում էր մեր լուսարձակի էլեկտրական լույսի հետ։ Այդ լույսն առանձնապես պայծառ էր փոթորիկին նախորդող ժամերին։

Մայիսի ութին մենք գտնվում էինք Հատտերաս հրվանդանի մերձակայքում, Հյուսիսային Կարոլինայի լայնության տակ։ Այստեղ Գոլֆստրիմի լայնությունը յոթանասունհինգ մղոն է, խորությունը՝ երկու հարյուր մետր։ «Նաուտիլուսը» շարունակում էր լողալ բախտի վրա հույս դրած։ Կարծես բոլոր նախազգուշությունները մի կողմ էին թողնված։ Այս պայմաններում փախուստը միանգամայն հնարավոր էր մեզ համար։ Արդարև, կարելի էր ապաստան գտնել բնակելի ափերում։ Բազմաթիվ շոգենավեր լողում էին Բոստոնի ու Նյու-Յորքի կամ Մեքսիկական ծոցի միջև։ Գիշեր ու ցերեկ երթևեկում էին փոքրիկ, բեռնված երկկայմանավերը, որոնք բեռներ էին տանում ամերիկյան ափի զանազան կետերը։ Մենք կարող էինք հուսալ, որ մեզ կփրկեն։ Այսպես, ուրեմն, սա հենց երկար սպասված «հարմար առիթն» էր, չնայելով, որ Միացյալ Նահանգների ափերից մենք հեռու էինք ամբողջ երեք հարյուր մղոնով։

Սակայն մի վրդովեցուցիչ հանգամանք խանգարում էր կանադացու պլանների իրագործման. եղանակը շատ վատ էր։ Մենք մոտենում էինք այն տեղերին, ուր հաճախ կատաղի փոթորիկներ են լինում։ Այստեղ իսկական հայրենիքն է թաթառների և ցիկլոնների, որոնք առաջ են գալիս հենց Գոլֆստրիմից։ Փոթորիկի ժամանակ ճանապարհ ընկնել փոքրիկ մակույկով, նշանակում էր կորստի մատնվել։ Նեդ Լենդը հասկանում էր այդ, և անզոր բարկությունից կրճատացնելով ատամները, օրեցօր հետաձգում էր փախուստը։ Վերջիվերջո հայրենիքի հուսահատական կարոտը հիվանդության հասցրեց նրան և նա միայն փախուստի միջոցով կարող էր բուժվել։

— Պարոն պրոֆեսոր,— ասում էր նա ինձ,— պետք է վերջ տալ այս դրության։ Ձեր Նեմոն հեռանում է բնակելի երկրներից և դեպի հյուսիս է գնում։ Սակայն ես արդեն ա-

սել եմ ձեզ, որ Հարավային բևեռը գնալը բավական է և ես ոչ մի գործ չունեմ Հյուսիսային բևեռի հետ։

— Հապա ի՞նչ անել, Նեդ, եթե այժմ հնարավոր չէ փախչել։

— Ես պնդում եմ իմ առաջարկի վրա։ Պետք է խոսել նավապետի հետ։ Դուք լռում էիք այն ժամանակ, երբ մենք լողում էինք ձեր հայրենիքի ափերի մոտով։ Հիմա մենք մոտ ենք իմ հայրենիքին, և ես չեմ կարող լռել։ Երբ մտածում եմ, որ մի քանի օրից հետո «Նաուտիլուսը» կլինի Նոր-Շոտլանդիայի մոտ և որ այնտեղ, Նյուֆաունդլենդի մերձակայքում գտնվում է մի լայն ծովախորշ, ուր թափվում է սուրբ Լավրենտիոսի գետը, որ սուրբ Լավրենտիոսի գետն իմ հայրենի գետն է, Կվեբեկ քաղաքի, իմ հայրենի քաղաքի գետը, երբ ես մտածում եմ այդ բոլորի մասին, դողում եմ կատաղությունից։ Պարոն պրոֆեսոր, ես այլևս չեմ կարող, ես կնեռվեմ ծովը։ Ես այստեղ չեմ մնա։ Ես շնչասպառ եմ լինում։

Ակներև էր, որ կանադացին բոլորովին կորցրել էր համբերությունը։ Նրա ուժեղ բնավորությունը չէր կարող հաշտվել մեր երկարատև բանտարկության հետ։ Օրեցօր մոայլվում էր նրա դեմքը։ Ես լավ էի հասկանում նրա տանջանքները, որովհետև ինձ էլ էր մաշում հայրենիքի կարոտը։

Անցել էր արդեն յոթ ամիս այն օրից, երբ մենք բոլորովին կտրել էինք մեր կապը երկրի հետ։ Բացի դրանից, նավապետ Նեմոյի ինքնապարփակված լինելը, ծովահրեշների դեմ ճակատամարտելուց հետո նրա տրամադրության փոխվելը, նրա լռակյացությունը, այս բոլորը փոխում էր իրերի դրությունը։ Ես արդեն չէի զգում առաջին օրերի խանդավառությունը։ Հարկավոր էր լինել ֆլամանդացի, ինչպես Կոնսելը, որպեսզի հաշտվել այս դրության հետ, որը միանգամայն հարմար է կետերի և ծովային այլ կենդանիների և ոչ թե մարդկանց համար։ Հիրավի, եթե այդ հիանալի մարդը թոքերի փոխարեն քիմուխներ ունենար, կլիներ իսկական ձուկ։

— Ուրեմն ի՞նչ, պարոն պրոֆեսոր,— հարցրեց Նեդ Լենդը, տեսնելով, որ ես իրեն չեմ պատասխանում։

— Ուրեմն այդպես, Նեդ Լենդ, դուք ուզում եք, որ ես նավապետ Նեմոյից իմանամ, թե ինչ դիտավորություններ ունի մեր նկատմամբ։

— Այո, պրոֆեսոր։

— Եվ դուք պնդում եք այդ, չնայելով, որ մի անգամ նա հայտնել է այդ դիտավորությունները։

— Այո։ Վերջին անգամ ես ուզում եմ պարզել ամեն ինչ։ Խոսեցեք իմ մասին, միայն իմ մասին, եթե ուզում եք։

— Բայց ես գրեթե չեմ հանդիպում նրան։ Նա խուսափում է ինձանից։

— Ուրեմն ավելի ևս հիմք կա նրան տեսնելու։

— Լավ, ես կհարցնեմ, Նեդ։

— Ե՞րբ,— պնդում էր կանադացին։

— Երբ որ ես նրան հանդիպեմ։

— Պարոն Արոնաքս, ուզո՞ւմ եք ես ինքս գնամ և գտնեմ նավապետին։

— Ոչ, ոչ, այդ թողեք ինձ։ Վնդը...

— Այսօր,— ասաց Նեդ Լենդը։

— Շատ լավ։ Այսօր ես նրան կտեսնեմ,— պատասխանեցի ես կանադացուն, վախենալով, որ նա կփչացնի ամբողջ գործը, եթե դրանով ինքը զբաղվի։

Ես մնացի մենակ։ Խոստանալով պարզել ամեն ինչ, ես որոշեցի անմիջապես անել այդ։ Դառն ճշմարտությունը ես միշտ գերադասել եմ տանջալից անորոշությունից։

Ես վերադարձա իմ սենյակը։ Պատի մյուս կողմից լսվում էին նավապետ Նեմոյի քայլերը։ Չէր կարելի ձեռքից բաց թողնել այդպիսի լավ առիթը։ Ես թակեցի նրա դուռը։ Ոչ մի պատասխան։ Ես նորից թակեցի, հետո պտտեցի դռան բռնակը։ Դուռը բացվեց։

Ես ներս մտա։ Նավապետն այնտեղ էր։ Իր աշխատասեղանին թեքված, նա ինչ-որ բան էր գրում։ Նա չսեց իմ քայլերը։ Որոշելով, որ չպիտի հեռանամ առանց խոսելու, ես մոտեցա նրան։ Նա կտրուկ շարժումով բարձրացրեց գլուխը, կիտեց հոնքերը և բավական կոպիտ տոնով հարցրեց ինձ.

— Դուք այստե՞ղ եք։ Ի՞նչ եք ուզում ինձնից։

— Ուզում եմ խոսել ձեզ հետ, Նավապետ։

— Բայց ես զբաղված եմ, պարոն, ես աշխատում եմ։ Ես ձեզ լիակատար իրավունք եմ տրամադրել առանձնանալու, արդյոք դուք մտածո՞ւմ եք, որ ես ինքս զրկված եմ այդ իրավունքից։

Այդպիսի ընդունելությունն այնքան էլ հույս չէր տալիս, թե բանակցությունները հաջողությամբ կվերջանան։ Այնուամենայնիվ ես որոշեցի գործը հասցնել մինչև վերջ։

— Պարոն,— սառը տոնով ասացի ես,— ձեզ հետ պետք է խոսեմ մի գործի մասին, որը հետաձգել չի կարելի։

— Ի՞նչ գործի մասին, պրոֆեսոր,— հեգնանքով հարցրեց նա,— դուք բախտ եք ունեցել անելու մի որևէ հայտնագործությո՞ւն, որը վրիպել է իմ ուշադրությունից։ Ծովը ձեզ մի որևէ գաղտնի՞ք է հաղորդել։

Նախքան ես կպատասխանեի, նա ինձ ցույց տվեց սեղանի վրա դրված ձեռագրի թերթերը և ավելի լուրջ տոնով ավելացրեց.

— Ահա, պարոն Արոնաքս, մի ձեռագիր, որը գրված է մի քանի լեզուներով։ Այն պարունակում է ծովում իմ կատարած դիտական հետազոտությունների արդյունքները, և ես հույս ունեմ, որ չի կորչի ինձ հետ։ Այս ձեռագիրը, որ ստորագրված է իմ անունով և լի է իմ կյանքի պատմությամբ, կդրվի մի փոքրիկ, ջրի տակ չանցնող ապարատի մեջ։ «Նաուտիլուսում» կենդանի մնացած վերջին մարդը ծով կնետի ապարատը և ալիքները կվերցնեն այն։

Այդ մարդու անո՛ւնը։ Նրա պատմությո՛ւնը, որ գրված է իր իսկ ձեռքո՛վ։ Այդպես ուրեմն, երբևէ պետք է բացվի նրա գաղտնիքը։

Բայց այդ ժամանակ ես նրա հաղորդածը միայն առիթ համարեցի ինձ հետաքրքրող թեմային անցնելու համար։

— Նավապետ,— ասացի ես,— կարող եմ միայն հավանություն տալ այն քայլին, որ դուք պատրաստվում եք անելու։ Խելահեղություն կլիներ, եթե ձեր աշխատանքի պտուղները կորչեին։ Սակայն այն միջոցը, որ հնարել եք դուք, ինձ չափազանց պարզունակ է թվում։ Ո՞վ գիտե, թե քանին ուր կտանի այդ ապարատը և դա ում ձեռքը կընկնի։ Չի՞ կարելի արդյոք մի ավելի նպատակահարմար բան մը-

տածել։ Գուցե դուք ինքներդ կամ ձեր ընկերներից մեկը...»

— Երբե՛ք պարոն,— անմիջապես ընդհատեց ինձ նավապետը։

— Այդ դեպքում ես և իմ ուղեկիցները... մենք պատրաստ ենք պահպանել այդ ձեռագիրը, և եթե դուք վերադարձնեք մեր ազատությունը...

— Ազատությո՞ւնը,— վեր կենալով ասաց նավապետ Նեմոն։

— Այո, նավապետ, դա այն է, ինչի մասին ես ուզում էի խոսել ձեզ հետ։ Ահա արդեն յոթ ամիս է, որ մենք գտնվում ենք «Նաուտիլուսում», և ես ուզում եմ այսօր իմ անունից և իմ ընկերների անունից հարցնել ձեզ, արդյոք դուք մտադիր եք մեր ամբողջ կյանքում մեզ փակվա՞ծ պահել ձեր ստորջրյա նավում։

— Պարոն Արոնաքս, ես ձեզ կպատասխանեմ նույնը, ինչ որ պատասխանել եմ յոթ ամիս առաջ. ով ընկել է «Նաուտիլուսի» վրա, նա այլևս երբեք չի հեռանա այս նավից։

— Բայց չէ՞ որ դա իսկական ստրկություն է։

— Անվանեցեք այդ ինչպես ցանկանաք։

— Ստրուկն իրավունք ունի դեպի ազատությո՛ւն ձգտելու։ Դրա համար ներելի են բոլոր միջոցները։

— Այդ իրավունքը ոչ ոք չի խլել ձեզանից,— պատասխանեց նավապետ Նեմոն,— մի՞թե ես ձեզ կաշկանդել եմ որևէ երդումով։

Նավապետ Նեմոն ձեռները խաչաձև դրեց կրծքին և նայեց ինձ։

— Պարոն,— ասացի ես նրան,— ոչ ես, ոչ էլ դուք չէիք ուզում երկրորդ անգամ խոսել այս թեմայի շուրջը։ Սակայն քանի որ շոշափեցինք այն, հարկավոր է խոսել մինչև վերջ։ Ես կրկնում եմ, խոսքը միայն ինձ չի վերաբերում։ Ինձ համար գիտությունը հանդիսանում է մի հզոր նեցուկ, հրապուրանք, զվարճություն, եթե ուզում եք՝ կիրք, որի օգնությամբ ես կարող եմ մոռանալ ամեն ինչ։ Ինչպես դուք, այնպես էլ ես կարող եմ ապրել անորոշ վիճակում, բավականանալով այն հույսով, որ իմ աշխատանքների արդյունքները երբևէ

կկտակեմ մարդկության։ Մի խոսքով, ես կարող եմ ձեզնով հիանալ, որոշ չափով ընդունել ձեր իրավացիությունը և նույնիսկ որոշ հաճույք զգալ, որ մասնակցում եմ ձեր թափառումներին։ Սակայն ձեր կյանքն ունի նաև ուրիշ կողմեր, որոնք ինձ պատկերանում են իբրև բարդ, առանձնահատուկ զաղտնիքներ, որոնց հետ այս նավում միայն ես ու իմ ընկերները, ոչ մի առնչություն չունենք։ Նույնիսկ այն ժամանակ, երբ մեր ու ձեր սրտերը բաբախում էին միասին, հուզվելով ձեր վշտից կամ հիանալով ձեր տաղանդի ու խելքի հանդեպ, մենք պետք է հրաժարվեինք այն համակրանքն ամենաչնչին չափով իսկ ցուցաբերելուց, որ անխուսափելիորեն ծնում է այն, ինչ որ գեղեցիկ է և բարի։ Եվ այն հանգամանքը, որ մենք օտար ենք ձեզ վերաբերող ամեն ինչին, մեր այստեղ գտնվելն անհնարին է դարձնում նույնիսկ ինձ համար։ Սակայն դա առանձնապես անհանդուրժելի է Նեդ Լենդի համար։ Յուրաքանչյուր մարդ, հենց միայն այն պատճառով, որ նա մարդ է, արժանի է, որ մտածեն նրա մասին։ Արդյոք ձեզ զբաղեցրե՞լ է այն հարցը, թե վրեժխնդրության ինչպիսի ծրագրեր կարող է հղանալ այն մարդը, որ սիրում է ազատությունը և ատում ստրկությունը, այնպիսի մարդը, ինչպիսին է մեր կանադացին։ Արդյոք ինքներդ հարցրե՞լ եք ձեզ, թե նա ինչ կարող է ծրագրել, ինչ քայլ կարող է անել...

Նավապետ Նեմոն վեր կացավ։

— Ի՞նչ կարող է ծրագրել Նեդ Լենդը և ի՞նչ քայլ կարող է անել։ Ես ի՞նչ գործ ունեմ այդ ամենի հետ։ Ես նրան չեմ որոնել։ Սեփական հաճույքիս համար չէ, որ ես նրան պահում եմ այստեղ։ Ինչ վերաբերում է ձեզ, պարոն Արոնաքս, դուք այն մարդկանցից եք, որոնք կարող են հասկանալ ամեն ինչ, նույնիսկ լռությունը։ Ես այլևս ոչինչ չունեմ ձեզ պատասխանելու։ Այս թեմայի մասին ինձ հետ խոսելու ձեր առաջին փորձը պետք է վերջինը լինի, որովհետև երկրորդ անգամ ես ձեզ նույնիսկ չեմ լսի։

Ես հեռացա։ Այդ օրվանից սկսած՝ մեր հարաբերությունները խիստ լարվեցին։

Այս խոսակցությունը ես հաղորդեցի իմ երկու ընկերներին։

— Հիմա մենք գիտենք, որ ոչ մի սպասելիք չունենք այդ մարդուց,— ասաց Նեդ Լենդը։— «Նաուտիլուսը» մոտենում է Լոնգ-Այլենդին։ Ինչպիսի եղանակ էլ լինի, մենք պետք է փախչենք։

Սակայն երկինքն ավելի և ավելի սպառնալից էր դառնում։ Փոթորկի նշաններ երևացին։ Սպիտակ-կաթնագույն մշուշը պատել էր մեր շուրջը։ Հորիզոնը ծածկվել էր փոթարկաբեր ամպերով։ Ամպերն արտասովոր արագությամբ շվում էին ծովի վրա։ Ծովը հուզվում էր ու ալեկոծվում։ Թռչունները չքացան, բացի մրրկահավերից՝ փոթորկի այդ բարեկամներից։ Ծանրաշափն իջավ։

Փոթորիկը պայթեց մայիսի տասներկուսին, ցերեկը, հենց այն ժամանակ, երբ «Նաուտիլուսը» գտնվում էր Լոնգ-Այլենդի մերձակայքում, Նյու-Յորքից մի քանի մղոն հեռու։ Ես կարող եմ նկարագրել տարերքի այդ պայքարը, քանի որ, ծովի խորքն իջնելու փոխարեն նավապետ Նեմոն անբացատրելի քմահաճույքով մնաց ծովի վրա։

Քամին փչում էր հարավ-արևելքից, մի վայրկյանում տասնհինգ մետր արագությամբ։ Ցերեկվա ժամը երեքին նրա արագությունն հասավ մի վայրկյանում քսանհինգ մետրի։ Դա արդեն փոթորիկ էր։

Նավապետ Նեմոն տեղ գրավեց տախտակամածում։ Նա ինքն իրեն կապեց բազրիքին, որպեսզի փոթորկահույզ ալիքներն իրեն չտանեն։ Ես էլ բարձրացա այնտեղ և ինձ կապեցի նրա կողքին, միևնույն չափով հիանալով փոթորկի և այդ անսովոր մարդու հանդեպ, որը բաց ճակատով էր դիմավորում փոթորկին։

Ամպերի փեշերը շոշափում էին ծովի լեռնացող ալիքները։ Ես չէի տեսնում փոքրիկ, միջանկյալ ալիքները, որոնք սովորաբար առաջ են գալիս մեծ ալիքների միջև։ Երևում էին միայն մրուրի նման սև ալիքները, որոնց գագաթը նույնիսկ չէր թափվում ու փրփրում, այնքան ամուր էր։ Նրանց բարձրությունն ավելանում էր շարունակ։ «Նաուտիլուսը» մերթ պառկում էր կողքի, մերթ նրա առաջամասը վեր էր բարձրանում, իսկ հետնամասը մտնում ջուրը, և ամբողջ նավն օրորվում էր անընդհատ։ Երեկոյան ժամը հինգին հորդառատ

անձրև եկավ, սակայն քամին ու ծովը չհանդարտեցին։ Հողմը սլանում էր մեկ վայրկյանում քառասունհինգ մետր արագությամբ։ Այդպիսի քամիները տներ են քանդում, պոկում են կղմինդրե տանիքները, ջարդում երկաթե ցանկապատերը և գնդակի նման նետում նավերի տախտակամածներում եղած մեծ թնդանոթները։ Սակայն այդ քառսում գտնվող «Նաուտիլուսը» միանգամայն արդարացնում էր մի հռչակավոր ինժենների հետևյալ խոսքերը՝ «Չկա այնպիսի նավ, որը չկարողանա մաքառել ծովի հետ, եթե լավ է կառուցված»։ Դա մի անշարժ ժայռ չէր, որը կարող էին քանդել ալիքները, դա պողպատե, իլիկաձև մի մարմին էր, որը շարժուն էր և մարդուն հնազանդ։ Զուննալով պարանասարք և կայմեր, մեր նավն անպատիժ կերպով կռվում էր փոթորկահույզ տարերքի դեմ։

Ես ուշադրությամբ դիտում էի ալիքները, որ կարծես պոկվել էին շղթաներից։ Դրանք հասնում էին տասնհինգ մետր բարձրության և հարյուր հիսունից մինչև հարյուր յոթանասունհինգ մետր երկարության, և արշավում էին քամուց կիսով չափ պակաս արագությամբ։ Ալիքների ծավալն ու հզորությունն ավելանում էր նայած ծովի խորությանը։ Ես այն ժամանակ հասկացա, թե ինչ դեր են խաղում այդ ալիքները, որոնք իրենց մեջ օդ են հավաքում, տանում են ծովի խորքը, այդ կերպ թթվածին հասցնում այնտեղ։ Գիտնականների հաշվով նրանց ամենաբարձր ճնշումը հասնում է մեկ քառակուսի ոտնաչափի վրա երեք հազար կիլոգրամի։ Ահա այդպիսի ալիքները Հեբրիդյան կղզիներում տեղահան արեցին ութսունչորս հազար ֆունտ կշռող մի ժայռ։ Այդպիսի ալիքներն էին, որ 1864 թվականի դեկտեմբերի 23-ին, ոչնչացնելով Ճապոնիայի Իյեդո քաղաքի մի մասը, մեկ ժամում յոթ հարյուր կիլոմետր արագությամբ սլացան օվկիանոսի վրա և նույն օրը հասան Ամերիկայի ափերին, որոնց դիպչելով ցրվեցին։

Գիշերը վրա հասնելիս՝ հորիզոնում ես տեսա մի մեծ նավ, որ հուսահատական պայքար էր մղում փոթորկի դեմ։ Նավը խոտորվել էր ու պահպանում էր գոլորշին, որպեսզի դիմադրի քամուն։ Գուցե սա մեկն էր այն շոգենավերից, որոնք երթե-

վեկում են Նյու-Յորքի ու Լիվերպուլի կամ Հավրի միջև։ Շուտով այն չքացավ խավարում։

Երեկոյան ժամը տասին ամբողջ երկինքը կարծես բոցավառված լիներ։ Շողշողուն կայծակները ճեղքում էին օդը։ Ես չէի կարողանում դիտել դրանց արտասովոր փայլը, իսկ Նավապետ Նեմոն անընդհատ նայում էր երկնքին։ Կարծես նա ներշնչում էր փոթորկի ոգին...

Աներևակայելի բոմբյունը ցնցում էր օդը, մեկմեկու վրա փշրվող ալիքների թնդյուն, քամու ոռնոց, որոտի ճայթյուններ... Քամին կարծես փչում էր բոլոր չորս կողմերից և արևելքից սկսված ցիկլոնը, անցնելով դեպի հյուսիս, արևմուտք ու հարավ, կրկին վերադառնում էր արևելք։

Ա՛խ, այդ Գոլֆստրիմը։ Նա միանգամայն արժանի է «փոթորիկների արքա» իր անվան։ Այս հրեշավոր մրրիկներն ինչի՞ց են առաջանում, եթե ոչ նրա ջրերի և օդի բարեխառնության տարբերությունից։

Անձրևին հաջորդեց իսկական հրեղեն տարափը։

Ջրի կաթիլները կարծես դարձան հալված մետաղի հեղեղներ։

Կարելի էր կարծել, որ Նավապետ Նեմոն, արժանավոր մահ ընտրելով իր համար, ուզում է կայծակնահար լինել։

Այն մոմենտին, երբ սարսափելի օրորվում էր «Նաուտիլուսը», նրա պողպատե ժանիքը ցցվում էր դեպի վեր ինչպես շանթարգել, և ես տեսնում էի, թե ինչպես նրանից կայծեր էին թափվում։

Բոլորովին ուժասպառ եղած, ես փորիս վրա սողացի մինչև դռնակը, բացեցի այն և իջա սրահ։ Այդ ժամանակ մրրիկը հասավ ամենաբարձր լարվածության։ «Նաուտիլուսի» ներսում ոչ մի վայրկյան չէր կարելի ոտքերի վրա կանգնած մնալ։

Նավապետ Նեմոն ներքև իջավ միայն կեսգիշերին։ Ես լսեցի, թե ինչպես լցվեցին պահամանները և «Նաուտիլուսը» դանդաղ իջավ ծովի անդորր խորքը։

Սրահի փեղկերը բաց էին, և ես տեսնում էի մեծ ձկների մի ամբողջ վտառ, որոնք ուրվականների պես այս ու այս

կողմ էին վազում հրեղեն ջրերում։ Դրանցից մի քանիսն իմ աչքերի առաջ կայծակնահար եղան։

«Նաուտիլուսը» շարունակում էր իջնել։ Ես կարծում էի, թե նա տասնհինգ մետր ջրասուզվելով, կլինի հանգիստ վիճակում։ Սակայն ծովի վրա այնքան ուժեղ էր փոթորիկը, որ մենք ստիպված եղանք իջնել օվկիանոսի խորքը, հիսուն մետր։

Ինչպիսի՛ լռություն էր այստեղ, ինչպիսի՛ անդորրություն ու հանգստություն։ Ո՞վ կարող էր կարծել, թե այն զարհուրելի մրրիկը շարունակվում է ծովի վրա։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

47° 24′ ԼԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ 17° 28′ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Փոթորիկը մեզ նետեց դեպի արևելք։ Նյու-Յորքի ափերի կամ Լավրենտիոս գետի բերանի մոտ փախչելու բոլոր հույսերը կործանվեցին։ Խեղճ Նեդ Լենդը հուսահատության դուռը հասավ և խորշում էր բոլորից, ինչպես նավապետ Նեմոն։ Ես ու Կոնսելն իրարից չէինք բաժանվում։

Ես արդեն ասացի, որ «Նաուտիլուսը» գնացել էր դեպի արևելք, ավելի ճիշտ՝ դեպի հյուսիս-արևելք։ Մի քանի օր նա թափառում էր մերթ ջրի տակ, մերթ ջրի վրա։ Մեր շուրջը գրեթե միշտ մշուշ էր, որ այնքան վտանգավոր է ծովագնացների համար։ Այս մշուշի ժամանակ հալվում են սառույցները և մթնոլորտը հագենում է ջրի գոլորշիներով։

Քանի-քանի նավեր են խորտակվում այս տեղերում, փորձելով հասնել ափը և դրա համար կողմնորոշվելով ցամաքի խաբուսիկ լույսերից։ Քանի՛-քանի դժբախտություններ են պատահել մառախուղի պատճառով։ Քանի՛ անգամ ընդհարվել են նավերը, չնայած լապտերներին, չնայած սուլոցներին, չնայած նավազանգերի տագնապալից ղողանջյունին։ Քանի՛ անգամ նավերը զարնվել են ստորջրյա քարերին, այնտեղ, ուր քամին անլսելի է դարձնում մակընթացության աղմուկը։

Զարմանալի չէ, որ այս տեղերում ծովի հատակը պատերազմի դաշտն է հիշեցնում, այնտեղ թափթփված էին խորտակված նավերի մնացորդները, մի քանիսը հին ու խարխուլ, մի քանիսը նոր, դեռևս չփչացած արտաքին պղնձե մասերով, որոնց մեջ անդրադառնում էր մեր լուսարձակի լույսը։ Քանի՛-քանի անհայտ նավեր էին ընկած այստեղ իրենց ամբողջ անձնակազմով և վտարանդիների բեռով։ Ամեն տարի քանի՛ նավաբեկումներ են լինում բոլոր տեղեկատու գրքերում նշված ամենավտանգավոր տեղերում՝ Սեն-Պոլ կըղզու, Ռաս Հրվանդանի, Բելիլ նեղուցի, Լավրենտիոս գետի բերանի մերձակայքում։ Միայն վերջին մի քանի տարում այս տեղերում խորտակված նավերի սգո ցուցակի մեջ մտան «Սոլվեյ», «Իզիդա», «Պարամատտա», «Հունգարացի», «Կանադացի», «Անգլոսաքս», «Հումբոլդտ», «Միացյալ Նահանգներ», նավերը, որոնք բոլորն էր խորտակվել էին մրրկից, «Արկտիկա» և «Լիոնցին», որոնք խորտակվել էին ընդհարվելուց, «Պրեզիդենտը», «Խաղաղ Օվկիանոսը», «Գլազգո քաղաքը», որոնք խորտակվել են անհայտ պատճառներից։

«Նաուտիլուսը» լողում էր խորտակված նավերի միջև, կարծես մեռելների ստուգատես էր կատարում։

Մայիսի տասնհինգին մենք գտնվում էինք Նյուֆաունդլենդի ծանծաղուտի հարավային ծայրում։ Այս ծանծաղուտն առաջացել է ջրաբերուկներից։ Այստեղ կուտակվել են ամեն տեսակ օրգանական մնացորդներ, որ հասարակածից բերել է Գոլֆստրիմը կամ հյուսիսային բևեռից՝ հակադիր սառը հոսանքը, որ անցնում է ամերիկյան ափերով։ Այստեղ առաջացել է նաև միլիարդներով ոչնչացված ձկների ոսկորների, կակղամորթների ու զոոֆիտների մնացորդների հրեշավոր կուտակում։

Նյուֆաունդլենդի ծանծաղուտում ծովի խորությունը շատ չնչին է, ընդամենը մի քանի հարյուր ոտնաչափ։ Սակայն դեպի հարավ հանկարծ սկսվում է երեք հազար մետր խորությամբ հսկայական մի անդունդ։ Այստեղ լայնանում է Գոլֆստրիմը։ Նա այստեղ լցվում է մի ամբողջ ծով, սակայն կորցնում է իր արագությունն ու մինչ այդ ունեցած ջերմաստիճանը։

«Նաուտիլուսից» վախեցած ձկների թվում ես նկատեցի կես մետր երկարությամբ, սև մեջքով և նարնջագույն որովայնով կլորաթև ձկները, որոնք ամուսնական բացառիկ հավատարմության օրինակ են հանդիսանում, երկար, զմրուխտե փողոշները, որոնք խիստ դուրեկան համ ունեն, մեծաշյա ծովածածանները, որոնց գլուխը մի քիչ նման է շան գլխին, արջառներն ու ծածանագդիները։ Ամենից շատ մեզ հանդիպում էր ձողաձուկը, որ ապրում է իր սիրած տեղերում, Նյուֆաունդլենդի ընդարձակ ծանծաղուտներում։

Կարելի է համարձակ ասել, որ ձողաձուկը լեռնային ձուկ է, որովհետև Նյուֆաունդլենդն ուրիշ բան չէ, եթե ոչ ստորջրյա մի լեռ։ Երբ «Նաուտիլուսն» անցնում էր ձողաձկներով շրջապատված, Կոնսելը չկարողացավ պահել զարմանքի բացականչությունը։

— Ինչպե՛ս, սա ձողաձո՞ւկ է,— դոչեց նա,— իսկ ես հավատացած էի, թե ձողաձուկը նույնպես տափակ է, ինչպես և տափակաձուկը։

— Ի՛նչ անհեթեթություն, ձողաձուկը տափակ է լինում միայն ձկնեղենի խանութում, ուր հասնում է փորոտիքը մաքրված դրությամբ։ Ծովում դա նույնիսկ իլիկանման ձուկ է, ինչպես ծածանաձուկը, և հրաշալի հարմարություններ ունի լողալու համար։

— Պարոնն ավելի լավ գիտե,— պատասխանեց Կոնսելը,— բայց այստեղ որքա՛ն շատ են ձկները, անկարելի է հաշվել։

— Դրանք ավելի շատ կլինեին, բարեկամս, եթե չլիներ գիշատչական որսը։ Գիտե՞ս, թե մի էգ ձկան մեջ խավյարի որքան հատիկ կա։

— Ենթադրենք հինգ հարյուր հազար։

— Տասնմեկ միլիո՛ն, բարեկամս։

— Տասնմեկ միլիո՛ն։ Է՛հ, դրան ես երբեք չեմ հավատա, մինչև որ ինքս չհաշվեմ։

— Հաշվիր։ Բայց ես կարծում եմ, որ ժամանակի խնայողություն կանես, եթե հավատաս ինձ։ Զմոռանաս, որ ֆրանսիացիք, անգլիացիք, ամերիկացիք, դանիացիք, նորվեգացիք հսկայական քանակությամբ ձողաձուկ են որսում։ Այս ձու-

կը չափազանց շատ է սպառվում, և եթե չունենար բազմանալու արտակարգ ունակություն, վաղուց չքացած կլիներ։ Այսպես, միմիայն Անգլիայում և Ամերիկայում հինգ հազար նավ յոթանասունհինգ հազար նավորդներով զբաղված են ձողաձկան որսով։ Յուրաքանչյուր նավ մի որսաշրջանում որսում է միջին թվով առնվազն քառասուն հազար հատ, ուրեմն բոլոր նավերը քսան միլիոն։ Նորվեգիայի ափերի մոտ այս ձուկը որսում են նույն քանակությամբ։

— Հրաշալի է,— ասաց Կոնսելը,— ես հավատում եմ պարոնին և չեմ հաշվի։

— Ի՞նչը չես հաշվի, Կոնսել։

— Տասնմեկ միլիոն խավյարի հատիկը։ Սակայն ես պետք է մի դիտողություն անեմ։

— Հապա՞։

— Եթե խավյարի յուրաքանչյուր հատիկից ձուկ դուրս գար, բավական կլիներ մի զույգ ձողաձուկ, որպեսզի կերակրվեին ամբողջ Անգլիան, Ամերիկան և Նորվեգիան։

Այն ժամանակ, երբ մենք անցնում էինք Նյուֆաունդլենդի ծանծաղուտները և քիչ էր մնում, որ նավի ողնուցը թաղվեր ավազի մեջ, ես տեսա երկար ու բարակ պարաններ, որոնց վրա, ձողաձուկ որսալու համար, կար երկու հարյուր կեռ։ Յուրաքանչյուր ձկնորսական նավակ դրանք դյուժիններով է նետում ծովը։ Պարանի մի ծայրը կապվում է կեռին և ձողանշանի միջոցով մնում է ծովի վրա։ «Նաուտիլուսը» ստիպված էր առաջախաղ կատարել այդ ստորջրյա ուռկանի մեջ։

Սակայն ստորջրյա նավը երկար չմնաց այդ մարդաշատ տեղերում։ Նավը բարձրացավ մինչև Նյուֆաունդլենդի լայնությունը, ուր Սեն-Ջոնս կղզու վրա դուրս է գալիս անդրատլանտյան մալուխի ծայրը։

Այստեղից «Նաուտիլուսը», փոխանակ շարունակելու իր ճանապարհը դեպի հյուսիս, ուղևորվեց դեպի արևելք, կարծես ցանկանալով հետազոտել այդ տափարակ բարձրությունը, որի վրա գտնվում է մալուխը։ Այդ բարձրության ռելյեֆը հայտնի էր բոլոր մանրամասնություններով, շնորհիվ հատակի բազմաթիվ ուսումնասիրությունների։

Մալուխի տասնյոթին Սեն-Ջոնսից հինգ հարյուր մղոն հե-

ու, երկու հազար ութ հարյուր մետր խորության տակ ես տեսա ավազի վրա ձգված մալուխը։ Կոնսելը, որին ես չէի նախազգուշացրել, մալուխն ընդունեց ծովային վիթխարի մի օձի տեղ և ուզում էր այն դասակարգել իր մեթոդով։ Բայց ես հիասթափեցրի հրաշալի մարդուն և նրան մխիթարելու համար մի ամբողջ շարք մանրամասնություններ պատմեցի այն մասին, թե ինչպես է անցկացվել այդ մալուխը։

Առաջին մալուխն անցկացվեց 1857 և 1858 թվականների ընթացքում։ Սակայն չորս հարյուր հեռագիր հաղորդելուց հետո հանկարծ մալուխն այլևս չաշխատեց։ 1863 թվականին ինժեներները անցկացրին մի նոր մալուխ, որի երկարությունը հասնում էր երեք հազար չորս հարյուր կիլոմետրի։ Այդ մալուխը կշռում էր չորս հազար հինգ հարյուր տոն և այդ հսկայական բեռը տեղավորելու համար հատկապես հարմարեցվեց «Գրեդ-Իսթերն» շոգենավը։ Սակայն այդ փորձը նույնպես անհաջողության մատնվեց։

Մայիսի քսանհինգին «Նատիլուսը» խորասուզվելով երեք հազար ութ հարյուր երեսունվեց մետր, հասավ հենց այն տեղ, ուր կտրվել էր մալուխը։ Այդ տեղի ունեցավ Իռլանդիայի ափերից վեց հարյուր երեսունութ մղոն հեռավորության վրա։ Յերեկվա ժամը երկուսին նկատեցին, որ Եվրոպայի հետ հաղորդակցությունը կտրված է։ «Գրեդ-Իսթերն»-ում գտնվող ինժեներները գտան կտրված տեղը և մինչև երեկոյան ժամը տասնմեկը կարողացան ջրից դուրս քաշել մալուխի երկու ծայրերը։ Ուղղելով վնասվածքները, նրանք մալուխը կրկին իջեցրին ջուրը։

Սակայն մի քանի օրից հետո դարձյալ մալուխը կտրվեց և այս անգամ չհաջողվեց այն ջրից հանել։

Ամերիկացիք չէին նահանջում դժվարությունների առաջ։ Քիրուս Ֆիլդը, այդ ամբողջ գործի համարձակ նախաձեռնողը, որ դրա համար ներդրել էր իր ամբողջ կարողությունը, նոր բաժնեգրություն կազմակերպեց։ Նոր բաժնետոմսերը անհապաղ սպառվեցին։ Պատրաստվեց մի նոր, ավելի կատարելագործված մալուխ։ Մետաղալարի կապոցը, որ չեզոքացված էր գուտապերչի թաղանթով, հարմարեցվեց մանրաթելից բաղկացած բարձիկին և դրվեց մետաղյա արմատուրայի մեջ։

«Գրեդ-Իսթերնը» ծով դուրս եկավ 1866 թվականի Հուլիսի 13-ին։

Ամեն ինչ լավ էր գնում։ Սակայն մի անգամ տեղի ունեցավ հետևյալը. ինժեներները մալուխը խորասուզելուց առաջ զննելիս նկատեցին, որ մի քանի տեղից այն ծակված է մեխերով, ըստ երևույթին միջուկը փչացնելու համար։ Նավապետ Անդերսոնը, նավի սպաները և ինժեներները հավաքվեցին, քննարկեցին այդ գործը և որոշեցին, որ եթե գտնեն հանցավորին, նա առանց որևէ դատարանի դեն կշպրտվի նավից։ Այդ ժամանակից սկսած՝ հանցավոր փորձերն այլևս չէին կրկնվում։ Հուլիսի քսաներեքին «Գրեդ-Իսթերնը», որ գտնվում էր Նյուֆաունդլենդից ընդամենն ութ հարյուր կիլոմետրի վրա, Իռլանդիայից հեռագիր ստացավ, թե Պրուսիան և Ավստրիան Սադովի ճակատամարտից հետո զինադադար են կնքել։ Հուլիսի 27-ին, անցնելով մշուշի միջից, նավը հասավ ամերիկյան ափը։ Ճեռնարկումը հաջողությամբ վերջացավ և երիտասարդ Ամերիկան ծեր Եվրոպային ուղարկեց մի հեռագիր, որով ողջունում էր հաշտություն կնքելը։

Իհարկե ես հույս չունեի էլեկտրալարը տեսնելիր սկզբնական վիճակում, այսինքն այնպես, ինչպես այն դուրս էր եկել գործարանից։

Մետաղյա օձը, որ ձգվել էր քարքարոտ հատակում, ծածկված էր կրի կեղևով, որը նրան պահպանելու էր կակղամորթներից։ Մալուխը ձգված էր օվկիանոսի հատակում, ալեկոծությունից պաշտպանված. և էլեկտրական կայծն այդ լարի միջով Եվրոպայից Ամերիկա հաղորդելու համար պահանջվում էր ընդամենը երեսուներկու հարյուրերորդական վայրկյան։ Այդ մալուխը պետք է հավիտյան գոյություն ունենա, քանի որ նկատված է, թե գուտապերչն ամրապնդվում է ծովի ջրի ազդեցության տակ։ Բացի դրանից, մալուխի ուղղությունն այնքան հաջող էր ընտրված, որ այն ոչ մի դեպքում չի հասնի այնպիսի խորության, ուր կարող է կտրվել ջրի ուժեղ ճնշումից։

«Նաուտիլուսն» ընթանում էր այն տեղերով, ուր մալուխն ամենից շատ էր խորասուզված, չորս հազար չորս հարյուր երեսուն մետր խորությամբ։

Մենք մեկնեցինք այն տեղը, ուր 1863 թվականին կտրվել էր մալուխը։

Այստեղ, օվկիանոսի հատակում կար ընդամենը հարյուր քսան մետր լայնությամբ մի ձոր։ Եթե Մոնբլանը նստած լիներ այս ձորում, նրա գագաթը դուրս չէր գա ջրից։ Այս ձորն արևելյան կողմից եզերվում էր երկու հազար մետր բարձրությամբ ժայռերով։ Այստեղ մենք հասանք մայիսի 28-ին։ Հիմա «Նաուտիլուսը» գտնվում էր Իռլանդիայից ընդամենը հարյուր հիսուն կիլոմետրի վրա։

Գուցե նավապետ Նեմոն մտադիր էր անցնել Բրիտանական կղզիների մոտի՞ց։ Ոչ։ Նա դարձյալ ուղևորվեց դեպի հարավ, դեպի եվրոպական ծովերը, և այդ հանգամանքը չափազանց զարմացրեց ինձ։

Երբ մենք անցնում էինք Էնգլեզի կղզու մոտից, ես մի ակնթարթ տեսա այնտեղի փարոսը, որ լուսավորում է Գլազգոյից կամ Լիվերպուլից մեկնող հազարավոր նավերի ճանապարհը։

Մի կարևոր հարց զբաղեցրել էր միտքս. արդյոք «Նաուտիլուսը» կհամարձակվի՞ մտնել Լամանշ։ Նեդ Լենդը, որ դուրս էր եկել իր որջից, հենց որ մենք մոտեցանք ցամաքին, այդ մասին անդադար հարցնում էր ինձ։ Ես նրան ի՞նչ կարող էի պատասխանել։ Նավապետ Նեմոն առաջվա պես չէր երևում։ Նա կանադացուն չզայնացրեց Ամերիկայի ափերով անցնելով, արդյոք մտադիր չէ՞ անցնել Ֆրանսիայի մոտից, որպեսզի ինձ չզայնացնի։

«Նաուտիլուսը» շարունակում էր լողալ դեպի հարավ։ Մայիսի 30-ին մենք տեսանք Լենդ կղզին, որ հեռու չէ Բրիտանական կղզիներից։

Եթե նավապետ Նեմոն ուզում էր մտնել Լամանշ, պետք է նավը տաներ դեպի արևելք։

Բայց նա այդպես չարեց։

Մայիսի 31-ի ամբողջ օրը «Նաուտիլուսը» ծովում ինչ-որ տարօրինակ շրջաններ էր գծում, որոնք չափազանց հետաքրքրեցին ինձ։ Կարծես նավն ինչ-որ մի տեղ էր փնտրում, բայց չէր գտնում։ Կեսօրին նավապետ Նեմոն ինքը դիտողություններ կատարեց։ Նա ոչ մի բառով չդիմեց ինձ։ Նա երբեք

այդքան մռայլ չէր եղել։ Ի՞նչն էր հուզել նրան։ Գուցե եվրոպական ափերի մոտիկությո՞ւնը։ Գուցե նրան իր հայրենիքին վերաբերող հուշե՞րն էին տանջում։ Ի՞նչ էր զգում նա, զղջո՞ւմ, թե՞ ափսոսանք։ Այս միտքը երկար ժամանակ զբաղեցնում էր ինձ։ Կարծես թե ես նախազգում էի, որ դեպքերի բերմամբ այսպես թե այնպես կբացվի նավապետի գաղտնիքը։

Հետևյալ օրը, հունիսի 1-ին, «Նաուտիլուսը» շարունակում էր իր տարօրինակ մանյովրները։ Ակներև էր, որ նա օվկիանոսում ինչ-որ մի որոշ տեղ էր փնտրում։ Նավապետ Նեմոն, ինչպես և նախընթաց օրը, ինքն էր կատարում կեսօրվա դիտողությունները։

Ծովը հանգիստ էր, երկինքը՝ ջինջ։ Ութ մղոն դեպի արևելք, հորիզոնում պարզ երևվագծվում էր ամբողջ արագությամբ ընթացող մի նավ։ Նավի վրա չկար ոչ մի դրոշակ և ես չկարողացա որոշել, թե որ պետությանն է պատկանում։

Այն մոմենտին, երբ արևն անցնում էր միջօրեականից, նավապետ Նեմոն վերցրեց սեքստանտը և մանրազնին կերպով դիտողություններ կատարեց։ Այդ շատ հեշտ էր անել, որովհետև ծովը բոլորովին հանգիստ էր։ «Նաուտիլուսը» չէր օրորվում, բոլորովին անշարժ էր։

Այդ րոպեին ես զտնվում էի տախտակամածում։ Հենց որ դիտողությունները վերջացան, նավապետ Նեմոն ասաց։

— Դա այստեղ է։

Նա սանդուղքով իջավ ներքև։ Արդյոք նա տեսա՞վ այն նավը, որը կարծես շափավորում էր իր ընթացքը և մոտենում էր մեզ։ Այդ ես չեմ կարող ասել։

Ես վերադարձա սրահ։ Դռնակը փակեցին, ու ես լսեցի պահամանները լցվող ջրի ֆշշոցը։ «Նաուտիլուսն» սկսեց ջրասույզ լինել։ Նա իջնում էր ուղղահայաց գծով, որովհետև պտուտակը չէր աշխատում։

Մի քանի րոպեից հետո նավը կանգ առավ ութ հարյուր երեսուներեք մետր խորության տակ և իր առջևի մասով շոշափեց հատակը։

Սրահում լույսը հանգավ։ Փեղկերը բացվեցին և լուսամուտից ես տեսա ծովը, որ կես մղոն տարածությամբ պայ-

ծառ լուսավորված էր մեր լուսարձակի լույսով։ Զախ լուսամուտից ես ոչինչ չէի տեսնում բացի անդորր ջրից։

Նավի աջ կողմից ես նկատեցի մի սև զանգված, որ գրավեց իմ ուշադրությունը։ Դա ինչ-որ մի առարկա էր, որ ծածկված էր կարծես ձյունե պատմուճանով, սպիտակ խեցիներով։ Ավելի ուշադիր նայելով, ես նկատեցի անկայմ նավի ուրվագիծը։ Ըստ երևույթին այդ նավը ջրասույզ էր եղել առջևի մասի վրա։ Խորտակված նավը պետք է որ վաղուց գտնվեր օվկիանոսի հատակում, քանի որ ծածկվել էր կրային նյութերով։

Այդ ի՞նչ նավ էր։ Ինչո՞ւ «Նաուտիլուսը» եկավ այցելելու նրա գերեզմանը։ Գուցե ծովային փոթորիկը չի եղել նրա խորտակման պատճառը։

Ես չգիտեի ինչպես բացատրեմ այդ։ Հանկարծ նավապետ Նեմոն սկսեց խոսել չափված ձայնով.

— Մի ժամանակ այդ նավը կոչվում էր «Մարսելցի»։ Նավը ծով իջեցվեց 1762 թվականին և ուներ յոթանասունչորս թնդանոթ։ 1778 թվականի օգոստոսի տասներեքին այդ նավը Լա-Ռոյպա-Վերտիյեի հրամանատարությամբ կատաղի ճակատամարտ մղեց «Պրեստոնի» դեմ։ 1779 թվականի հուլիսի չորսին նավը ծովակալ Դ' Էստենի նավախմբի հետ մասնակցեց Գրենադայի գրավման։ 1781 թվականին, սեպտեմբերի հինգին, Չիզպիկ ծովախորշում նավը ճակատամարտեց կոմս դե-Գրասսայի ղեկավարությամբ։ 1794 թվականին Ֆրանսիական հանրապետությունը փոխեց նրա անունը։ Նույն թվականի ապրիլի տասնվեցին Բրեստում այն միացավ Վիլարե Ժուայոզի նավախմբին, որին հանձնարարված էր ուղեկցել հացահատիկի տրանսպորտը, որ գնում էր Ամերիկայից, ծովակալ Վան-Ստաբելի հրամանատարությամբ։ Այդ թվականի ապրիլի տասնմեկին և տասներկուսին նավախումբը հանդիպեց անգլիական նավերի հետ։ Պարոն պրոֆեսոր, այսօր, 1868 թվականի հունիսի մեկն է։ Ուղիղ յոթանասուն տարի առաջ հենց այստեղ, 47° 24′ լայնության և 17° 28′ երկարության տակ, հերոսական մարտից հետո կիսով չափ խորտակված բոլոր կայմերը և իր անձնակազմի մեկ երրորդը կորցրած նավը գերադասեց անցնել ջրի տակ, բայց անձնատուր

չինել... Կենդանի մնացած երեք հարյուր հիսունվեց մարտիկները, նավախելում բարձրացնելով հանրապետության դրոշը, ջրասույզ եղան բարձրաձայն գոչելով՝ «Կեցցե՞ հանրապետությունը»։

— Սա «Վրիժառո՞ւն» է, —գոչեցի ես։

— Այո, պարոն պրոֆեսոր, «Վրիժառուն» է։ Հիանալի անուն է,— ձեռները խաչելով շշնջաց նավապետ Նեմոն։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՇԻՐԻՄ

Այդ ամբողջ տեսարանի անսպասելիությունը, հեղափոխական նավի այդ պատմությունը, որ սկսվեց անհոգ տոնով ու վերջացավ ինչ-որ մի առանձնահատուկ հուզումով, այդ «Վրիժառու» անունը, որի նշանակությունը չէր կարող վրիպել իմ ուշադրությունից, այդ ամենը խորապես ապշեցրեց ինձ։ Ես չէի կարողանում չնայել նավապետին։ Ձեռքը մեկնելով դեպի ծովը, նա ագահությամբ դիտում էր խորտակված նավը։

Թերևս ինձ երբեք չհաջողվի իմանալ, թե ով է եղել նավապետ Նեմոն, որտեղից է եկել և ուր է գնում, բայց ես տեսնում էի, թե ինչպես նրա մեջ մարդը հաղթահարում է գիտնականին։

Ոչ, սոսկ մարդատյացությունը չէ, որ նավապետ Նեմոյին և իր ընկերներին արգելափակել է այս պողպատյա պատերի մեջ, այլ սարսափելի, ահեղ ատելությունը, որը չի թուլացել նույնիսկ ժամանակի ազդեցության տակ։

Արդյոք նա ծարա՞վ էր վրեժի։ Ապագան պետք է ցույց տար դա։

Այդ ժամանակ «Նաուտիլուսը» դանդաղ բարձրացավ ջրի երեսը և «Վրիժառուի» ուրվագծերը հեռահեռ չքացան մեր տեսողությունից։ Շուտով նավը սկսեց թեթև օրորվել, և դա նշանակում էր, որ մենք լողում ենք ծովի վրա։ Այդ բոպեին

ես լսեցի մի խուլ պայթյուն։ Ես նայեցի նավապետին։ Վերջինս չէր շարժվում։

— Նավապե՞տ,— ասացի ես։

Նա չպատասխանեց։

Ես նրան թողեցի և բարձրացա տախտակամած։ Կոնսելն ու կանադացին արդեն այնտեղ էին։

— Այն ի՞նչ դղրդյուն էր,— հարցրի ես։

— Թնդանոթի որոտ էր,— պատասխանեց Նեդ Լենդը։

Ես նայեցի այնտեղ, ուր առաջ գտնվում էր նավը։ Այն մոտենում էր «Նաուտիլուսին» ամբողջ արագությամբ։ Նավը գտնվում էր մեզանից ընդամենը վեց մղոնի վրա։

— Այդ ի՞նչ նավ է, Նեդ։

— Գրազ կգամ, որ դա ռազմանավ է,— պատասխանեց կանադացին,— այդ երևում է նրա սարքավորումից և կայմերի բարձրությունից։ Օ՜, եթե նա հարձակվեր մեզ վրա և խորտակեր այս անիծված «Նաուտիլուսը»։

— Սիրելի Նեդ,— պատասխանեց Կոնսելը,— այդ նավն ի՞նչ վնաս կարող է հասցնել «Նաուտիլուսին»։ Չէ՞ որ նա չի կարող ջրի տակ հարձակվել «Նաուտիլուսի» վրա, կամ ծովի խորքում ռմբակոծել նրան։

— Ասացեք, Նեդ,— դիմեցի ես կանադացուն,— արդյոք կարո՞ղ եք որոշել, թե որ պետությանն է պատկանում այդ նավը։

Հոնքերը կիտելով և աչքերը կկոցելով կանադացին սկսեց լարված դիտել նավը։

— Ոչ, պրոֆեսոր,— վերջապես պատասխանեց նա,— ես չեմ կարող որոշել, թե այդ նավը որ պետությանն է, նավի վրա այդպիսի դրոշակ չի երևում։ Սակայն ես դարձյալ պընդում եմ, որ նա ռազմանավ է, որովհետև նրա միջնակայմի վրա ծածանվում է երկար ռազմադրոշակը։

Քառորդ ժամի չափ մենք շարունակում էինք դիտել ուղիղ դեպի մեզ եկող նավը։

Նավը դանդաղ մոտենում էր։

Ես չէի կարողանում պատկերացնել, որ նա այդպիսի տարածության վրա տեսել է «Նաուտիլուսը»։ Ավելին՝ ես չէի

ենթադրում, որ այդ նավն առհասարակ տեղյակ է ստորջրյա նավի գոյության մասին։

Շուտով կանադացին հայտնեց ինձ, թե այդ մի մեծ ռազմանավ է, ունի ժանիք և երկու զրահապատ տախտակամած։ Նրա ծխնելույզներից բարձրանում էր թանձր, սև ծուխը։ Առագաստները հավաքված էին։ Նավի վրա ընդհանուր դրոշակ չի եղել։ Տարածությունը խանգարում էր տեսնելու, թե ինչ գույն ունի ռազմադրոշակը, որ նեղ ժապավենի նման ծածանվում էր օդում։

Նավն արագ մոտենում էր։

Եթե նավապետ Նեմոն թույլ տա շատ մոտենալու, մենք ազատվելու առիթ կունենանք։

— Պրոֆեսոր,— ասաց Նեդ Լենդը,— երբ այդ նավը մոտենա մեզ այնքան, որ մնա ընդամենը մի մղոն, ես կնետվեմ ծովը և առաջարկում եմ ձեզ հետևել իմ օրինակին։

Ես ոչինչ չպատասխանեցի կանադացու առաջարկին և շարունակեցի դիտել նավը, որ քանի մոտենում, այնքան մեծանում էր։ Լինի այն անգլիական, ֆրանսիական, ամերիկյան կամ ռուսական, միևնույն է, կվերցնի մեզ, եթե կարողանանք լողալով հասնել նրան։

— Հավանորեն պարոնը հիշում է, որ մենք լողալու որոշ փորձ ունենք,— ասաց Կոնսելը։— Նա կարող է ինձ հանձնել իրեն բուքսիրի առնելու հոգսը, եթե միայն որոշի հետևել մեր բարեկամ Նեդի խորհրդին։

Ես ուզում էի պատասխանել, սակայն հանկարծ ռազմանավի առաջամասում սպիտակ ծուխ երևաց։ Մի քանի վայրկյան անց, ծանր մարմնի ընկնելուց փրփրած ջուրը հեղեղեց «նաուտիլուսի» հետնամասը։ Կրակոցի ձայնը խլացրեց ինձ։

— Ինչպե՛ս, նրանք կրակո՞ւմ են մեր վրա,— գոչեցի ես։

— Քաջ մարդիկ են,— շշնջաց կանադացին։

— Ուրեմն նրանք մեզ չեն համարում նավաբեկման ենթարկվածներ։

— Եթե պարոնը կամենում է...— սկսեց Կոնսելը։

Այդ ժամանակ մի նոր ռումբ, ընկնելով ավելի մոտիկ, նրա վրա ջուր շպրտեց ոտից մինչև գլուխ։

— Պարոնի թույլտվությամբ կասեմ,— շարունակեց Կոն-

սելը,— որ նրանք մեզ միաժանու տեղ են ընդունում և ամբակոծում են այդ միաժանուն։

— Բայց նրանք պետք է տեսնեն, որ գործ ունեն մարդկանց հետ,— գոչեցի ես։

— Գուցե նրանք հենց դրա համար էլ կրակում են,— պատասխանեց Նեդ Լենդը, շեշտակի նայելով ինձ։

Այդ խոսքերը կարծես հայտնագործություն լինեին ինձ համար։ Անկասկած, հիմա ամբողջ աշխարհին հայտնի էր, թե ինչ կարծիք պետք է կազմել մտացածին հրեշի գոյության մասին։ «Աբրահամ Լինկոլնի» հետ եղած ընդհարման ժամանակ, երբ կանադացին իր եռաժանիով խփեց հրեշին, նավապետ Ֆարրագուտը կարողացավ իմանալ, որ միաժանին, այդ սարսափելի հրեշն ուրիշ բան չէ, եթե ոչ ստորջրյա նավակ, ավելի վտանգավոր, քան ամենավտանգավոր կետանմանը։

Այո, այդպես էլ եղել է, և հիմա բոլոր ծովերում հետապընդում են այս վտանգավոր նավը։

Արդարև, այս նավն իրենից ներկայացնում էր մի սարսափելի սպառնալիք, եթե, ինչպես դյուրին էր ենթադրել այդ, նավապետ Նեմոն պատրաստվում էր «Նաուտիլուսը» նվիրել վրիժառության գործին։ Հիմա ես այլևս չէի կասկածում, որ Հնդկական օվկիանոսում եղած ժամանակ, այն գիշերը, երբ նավապետ Նեմոն մեզ արգելափակեց պողպատե խցիկում, «Նաուտիլուսը» կռվում էր մի ինչ-որ նավի հետ։ Ես այլևս չէի կասկածում, որ հիմա կորալլային գերեզմանոցում թաղված մարդը եղել էր «Նաուտիլուսի» կողմից դիտմամբ ստեղծված ընդհարման զոհը։

Նավապետ Նեմոյի խորհրդավոր կյանքի վարագույրը մի քիչ բարձրացավ։ Եվ եթե նրա անձնավորությունը դեռ չէր պարզված, ապա համենայն դեպս, զանազան ազգերի ներկայացուցիչները համախմբվել և հետապնդում էին ոչ թե երևակայական կենդանուն, այլ երդվյալ թշնամուն, մի մարդու, որ ուխտել էր անհաշտ ատելություն տածել դեպի մարդկությունը։

Այդ ամբողջ սարսափելի անցյալը պատկերացավ իմ աչքերի առաջ։ Մեզ մոտեցող նավի վրա բարեկամների փո-

խարեն, մենք պետք է հանդիպենք միայն անդուր թշնամիների։

Թնդանոթների ռումբերը շարունակում էին թափվել մեր վրա։ Դրանցից մի քանիսը, որ որոշ անկյան տակ ընկնում է էին ջուրը, այնուհետև շեղակի թռչում էին մեծ տարածությամբ և չքանում էին ալիքներում։ Սակայն ոչ մի ռումբ չէր հասնում «Նաուտիլուսին»։

Հիմա ռազմանավը գտնվում էր մեզանից ընդամենը երեք մղոն հեռավորության վրա։

Չնայած հետզհետե ուժեղացող թնդանոթաձգության, նավապետ Նեմոն չէր բարձրանում տախտակամած։

Մինչդեռ եթե այդ կոնաձև ռումբերից մեկը խփեր «Նաուտիլուսին», այդ կրակոցը կարող էր ճակատագրական հետևանք ունենալ ատորջրյա նավի համար։

Կանադացին ինձ ասաց.

— Պարոն պրոֆեսոր, մենք պետք է գործադրենք մեր բոլոր ջանքերը, որպեսզի «Նաուտիլուսի» վրա հարձակվող նավին ցույց տանք, թե մենք ոչ մի առնչություն չունենք այս նավի չարագործությունների հետ։ Փորձենք ազդանշան տալ։ Գրո՛ղը տանի։ Գուցե նրանք այնուամենայնիվ հասկանան, որ գործ ունեն ազնիվ մարդկանց հետ։

Նեդ Լենդը գրպանից հանեց թաշկինակը։ Սակայն դեռ չէր բացել այն, երբ բռնվեց երկաթե մի ձեռքով, և, չնայած իր բացառիկ ուժին, գետին շպրտվեց։

— Թշվա՛ռ,— գոչեց նավապետը,— դու ուզում ես, որ այդ նավի վրա հարձակվելուց առաջ քեզ կապեմ ժանիքի՞ն։

Սարսափելի էր լսել նավապետ Նեմոյին, բայց ավելի ևս սարսափելի էր նրան նայելը։ Նրա դեմքը գունատ էր ինչպես մեռելի դեմքը։ Բիբերը լայնացել էին բարկությունից։ Զայնը մոնչոցի էր նման։ Թեքվելով պառկած կանադացու վրա, նավապետն ահագին ուժով սեղմում էր նրա ուսերը։

Վերջապես, նա թողեց Նեդին և դարձավ դեպի ռազմանավը, որ շարունակում էր ռումբեր տեղալ մեր շուրջը։

— Իսկ դու գիտե՞ս, թե ես ով եմ, անիծվա՛ծ ժողովրդի նավ,— գոռաց նա ահարկու ձայնով,— ես կարիք չունեմ տես-

նելու քո դրոշակի գույնը, որպեսզի ճանաչեմ քեզ։ Նայի՛ր, հիմա ես քեզ ցույց կտամ իմ դրոշակը։

Եվ նավապետ Նեմոն բացեց սև դրոշակը, որ նման էր հարավային բևեռում բարձրացրած դրոշակին։

Այդ րոպեին մի ռումբ խփեց «Նաուտիլուսի» հետնամասին, առանց վնաս հասցնելու։ Անցնելով նավապետ Նեմոյի կողքից, ռումբն ընկավ ծովը։

Նավապետը թոթվեց ուսերը։ Դառնալով դեպի ինձ, նա կտրուկ ասաց.

— Գնացեք ներքև։ Դուք և ձեր ընկերները...

— Նավապետ,— գոչեցի ես,— մի՞թե դուք մտածում եք գրոհել այդ նավը։

Ոչ միայն գրոհել, այլև խորտակել, պարոն պրոֆեսոր։

— Դուք այդ չեք անի։

— Ես այդ կանեմ,— սառը պատասխանեց նավապետ Նեմոն,— չմտածեք դատել ինձ, պարոն պրոֆեսոր։ Պատահմամբ դուք տեսաք այն, ինչ որ չպիտի տեսնեիք։ Իմ թշնամիները հարձակվեցին ինձ վրա, նրանց սոսկալի հակահարվածը կտրվի։

— Այդ ո՞ւմ նավն է։

— Դուք այդ չգիտե՞ք։ Ավելի լա՛վ։ Դուք այդ չե՛ք իմանա։ Գնացե՛ք։

Կանադացին, Կոնսելը և ես չհամարձակվեցինք առարկել։ «Նաուտիլուսի» տանհինգ նավաստիները շրջապատեցին նավապետին, անհաշտ ատելությամբ նայելով մոտեցող նավին։

Այն ժամանակ, երբ ես իջնում էի սանդուղքով, մի նոր արկ խփեց «Նաուտիլուսի» հետնամասին։ Ես լսեցի, թե ինչպես նավապետը գոռում էր.

— Դեհ, կրակի՛ր, խելահեղ նավ, վատնիր քո անզոր ռումբերը։ Դու չե՛ս ազատվի «Նաուտիլուսի» ժանիքից։ Ես քեզ կխորտակեմ ո՛չ այստեղ։ Ես չեմ ուզում, որ քո բեկորները խառնվեն ազնիվ «Վրիժառուի» բեկորների հետ։

Ես գնացի իմ սենյակը։ Նավապետը և նրա օգնականը մնացին տախտակամածում։ Պտուտակը շարժվեց։ «Նաուտիլուսն» արագ հեռացավ այնքան, որ ռազմանավի արկերն այլևս չէին կարող հասնել նրան։ Սակայն հետապնդումը չէր

դադարում, և նավապետ Նեմոն շարունակում էր պահպանել այդ տարածությունը։

Ցերեկվա ժամը շրսին, այլևս չկարողանալով ինձ մաշող անհամբերությունն ու անհանգստությունը զսպել, ես մոտեցա գլխավոր սանդուղքին։

Դուռը բաց էր։ Ես դուրս եկա տախտակամած։ Նավապետը հուզված հետ ու առաջ էր քայլում այնտեղ։ Նա անընդհատ նայում էր նավին, որ քամու ուղղությամբ ընթանում էր մեզանից ընդամենը հինգ—վեց մղոն հեռու։ Նա պտտում էր նավի շուրջն ինչպես վայրի գազան, տանելով այն դեպի ափեր, թույլ տալով, որ այն հետապնդի իրեն։ Սակայն առայժմ ինքը չէր հարձակվում նավի վրա։ Գուցե դեռ տատանվո՞ւմ էր։

Ես փորձեցի կրկին միջամտել։ Բայց հազիվ էի մի բառ արտասանել, երբ նավապետ Նեմոն ինձ ստիպեց լռել։

— Արդարությունն ու իրավունքն իմ կողմն է,— ասաց նա,— ես ճնշված եմ, իսկ սա ճնշող։ Այդ նրա պատճառով էր, որ ես կորցրի այն ամենն, ինչ որ սիրում էի, այն ամենն, ինչ որ ինձ համար թանկ էր ու սրբազան, հայրենիքս, կնոջս, երեխաներիս, հորս, մորս, ամեն ինչ։ Այն ամենն, ինչ որ ես ատում եմ, այնտեղ է, այն նավի վրա։ Լռեցե՛ք։

Ես վերջին անգամ նայեցի ռազմանավին, որ մոտենում էր արագ, և իջա ներքև, Նեդի և Կոնսելի մոտ։

— Մենք պետք է փախչե՛նք,— գոչեցի ես։

— Հրաշալի,— ասաց Նեդը,— բայց այդ ո՞ւմ նավն է։

— Այդ ես չգիտեմ։ Այսպես թե այնպես, այդ նավը կբախորտակվի մինչև գիշերը։ Համենայն դեպս, ավելի լավ է մեռնել նրա հետ միասին, քան մասնակից դառնալ մի վարմունքի, որի արդարացիության մասին մենք չենք կարող դատել։

— Ես էլ եմ այդպես կարծում,— սառը պատասխանեց Նեդը,— սպասենք գիշերվան։

Գիշերը վրա հասավ։ Նավում խորը լռություն էր տիրում։ Կողմնացույցի տվյալներն ասում էին, թե «Նաուտիլուսը» չի փոխել իր ուղղությունը։ Ես լսում էի պտուտակի չափածո հարվածները։ Նավը ծովի վրա էր։

Մենք որոշեցինք փախչել այն պահին, երբ նավը մեզ մոտենա այնքան, որ կարողանան մեզ լսել կամ գոնե տեսնել, երեք օրից հետո լուսինը լրանալու էր և բավականաչափ պայծառ էր լուսավորում։ Հասնելով այդ նավին, մենք, եթե չկարողանանք կանխել նրա խորտակումը, համենայն դեպս կփորձենք անել այն ամենն, ինչ որ թույլ կտան հանգամանքները։ Շատ անգամ ինձ թվում էր, թե «Նաուտիլուսը» պատրաստվում է սկսել ճակատամարտը։ Սակայն երբ հակառակորդը մոտենում էր, «Նաուտիլուսը» դարձյալ ավելացնում էր արագությունը և հեռանում նրանից։

Գիշերվա մի մասը հանգիստ անցավ։ Միայն երբեմն բառեր փոխանակելով, մենք հարմար պահի էինք սպասում փախչելու համար։ Մենք սաստիկ հուզված էինք։ Նեդ Լենդն ուզում էր լողալով գնալ դեպի ռազմանավը։ Ես նրան սիրում էի սպասել։ Ես հավատացած էի, որ «Նաուտիլուսն» իրեն հետապնդողի վրա կհարձակվի առանց ջրասույզ լինելու, իսկ այս դեպքում մեր փախուստը ոչ միայն հնարավոր, այլև հեշտ կլինի։

Առավոտյան ժամը երեքին, սաստիկ անհանգստանալով, ես նորից բարձրացա տախտակամած։ Նավապետ Նեմոն այնտեղ էր։ Նա կանգնած էր նավի առջևի մասում։ Նրա գլխավերևում փողփողում էր սև դրոշակը։ Նա շարունակում էր դիտել նավը։ Նրա լարված հայացքը կարծես դեպի իրեն էր քաշում հետապնդողին, հիպնոսացնում վերջինիս, քաշում իր հետևից ինչպես բուքսիրային պարան։

Լուսինն անցնում էր միջօրեականի վրայով։ Արևելքում ծագում էր Լուսնթագը։ Շուրջը լուռ էր ամեն ինչ։ Երկինքն ու օվկիանոսը կարծես անդորրությամբ մրցում էին իրար հետ։

Եվ երբ տարերքի այդ անդորրությունը ես համեմատում էի այն ատելության հետ, որ գոյություն ուներ «Նաուտիլուսի» ամեն մի անկյունում, զգում էի, թե ինչպես ցնցվում եմ իմ ամբողջ էությամբ։

Նավը գտնվում էր մեզանից երկու մղոնի վրա։ Նա մոտենում էր, շարունակ ընթանալով «Նաուտիլուսի» լուսարձակի ֆոսֆորային փայլի հետքերով։ Ես տեսա նրա ճանաչման

կրակները, կանաչ ու կարմիր, և սպիտակ լապտերը, որ կախված էր առաջակայմի վրա։ Նավի ծխնելույզից կայծեր էին դուրս գալիս և լուսավորում շուրջը, պարզ էր, որ շոգու ճնշումն ամենաբարձր աստիճանի էր հասցրած։ Ես տախտակամածում մնացի մինչև արևելյան ժամը վեցը։ Նավապետ Նեմոն շարունակում էր անտարբեր մնալ դեպի ինձ։ Ռազմանավը գոնվում-էր մեզանից ընդամենը մեկուկես մղոնի վրա և հենց որ լույսը բացվեց, նավը վերսկսեց ռմբակոծությունը։

Մոտենում էր այն պահը, երբ «Նաուտիլուսը» պետք է հարձակվեր իր հակառակորդի վրա, ու հենց որ այդ տեղի ունենա, ես ու իմ ընկերներն ընդմիշտ կհեռանանք այդ մարդուց, որին դատել ես չէի համարձակվում։ Ես ուզում էի ներքև իջնել, որպեսզի նախազգուշացնեմ Կոնսելին և Նեդին։ Այդ ժամանակ նավապետի օգնականը բարձրացավ տախտակամած։ Մի քանի նավաստիներ ուղեկցում էին նրան։ Նավապետ Նեմոն չէր տեսնում նրանց, կամ չէր ուզում տեսնել։ «Նաուտիլուսում» մարտի էին պատրաստվում։ Այդ պատրաստություններն այնքան էլ բարդ չէին։ Տախտակամածը շրջապատող բազրիքը ծալվեց։ Լուսարձակի և ղեկի աշտարակները քաշվեցին ստորջրյա նավի ներսը, այնուհետև նրանք դրսից հազիվ էին երևում։ Երկաթե, սիգարաձև նավի դրսի կողմում այլևս չկար որևէ ցցվածք և նրան ոչինչ չէր խանգարում ճարպիկ շարժ կատարելու։

Ես վերադարձա սրահ։ «Նաուտիլուսը» շարունակում էր մնալ ծովի վրա, որ լուսավորված էր արևի առաջին ճառագայթներով։ Նրա կարմրավուն ցոլքերն անդրադառնում էին ապակիներում։

Վրա հասավ հունիսի 2-ի զարհուրելի օրը։

Ժամը հինգին արագությունը չափող գործիքը ցույց տվեց, թե «Նաուտիլուսը» չափավորել է իր արագությունը։ Ես հասկացա, որ նա ուզում է մոտ թողնել ռազմանավը։ Թնդանոթների կրակոցներն ավելի հաճախ էին լսվում։ Մեր շուրջը ջուրը փրփրում էր արկերից, որոնք ընկնում էին ինչ-որ հատու սուլոցով։

— Բարեկամնե՛ր,— ասացի ես,— եկել է ժամը. սեղմենք մեկմեկու ձեռները և թող լինի ինչ որ լինելու է։

Նեղ լենդը համակված էր վճռականությամբ, Կոնսելը հանգիստ էր, իսկ ես դժվարությամբ էի զսպում ինձ պաշարած հուզումը։ Մենք անցանք զրադարան։ Այն րոպեին, երբ ես հրեցի դռան փեղկը, որ բացվում էր դեպի գլխավոր սանդուղքը, լսեցի, թե ինչպես հանկարծ փակվեց դռնակը։

Կանադացին նետվեց դեպի սանդուղքը, բայց ես պահեցի նրան։ Լսվեց ծանոթ վշշոցը, «Նաուտիլուսի» պահամանները լցվում էին ջրով։ Մի քանի վայրկյանից հետո «Նաուտիլուսն» իջավ մի քանի մետր ջրի տակ։

Ես հասկացա այդ մանյովրը։ Մենք ուշացրել էինք մեր փախուստը։ «Նաուտիլուսը» չէր հարձակվելու ծովի վրա, ուր մարտանավը պաշտպանված էր անխոցելի զրահով։ Սորջրյա նավը գրոհելու էր ջրի տակ, ջրագծից ցած, այնտեղ, ուր վերջանում էր նրա մետաղյա կողվածքը։

Այսպես ուրեմն, մենք դարձյալ գերիներ էինք, այն էլ սպասվելիք մոայլ ողբերգության ակամա ականատեսներ։ Սակայն մտածելու ժամանակ չկար։ Փակվելով իմ սենյակում, մենք լուռ նայում էինք մեկմեկու։ Ինձ տիրեց խորը մի սարսափ։ Ես գտնվում էի այն ծանր կացության մեջ, որ սովորաբար նախորդում է արևէ սարսափելի ցնցման։ Ես տանջալից կերպով սպասում էի պայթյունին, ես ուշադրությամբ լսում էի ամեն մի շշուկ, ես ամբողջովին լսողություն էի դարձել։

Մինչ այս մինչ այն, «Նաուտիլուսը» զգալիորեն ավելացրեց իր արագությունը։ Պարզ էր, որ հարձակվում է։ Ամբողջ նավը ցնցվում էր։

Հանկարծ ես ճչացի։ Տեղի ունեցավ ընդհարում։ Ցնցումն այնքան էլ ուժեղ չէր։ Այնուամենայնիվ ես զգացի, թե պողպատե ժանիքն ինչպիսի ուժով մեխվեց փայտի մեջ։ Լսվեց ճռինչ և շրխկոց։ «Նաուտիլուսը», որ շարժման իներցիայով առաջ էր սլանում, անցավ նավի պինդ զանգվածի միջով, ինչպես ասեղն է անցնում քաթանից։

Ես այլևս չէի կարողանում հանդուրժել այդ։ Սարսափից խելքս կորցրած՝ սենյակից վազեցի սրահ։ Նավապետ Նեմոն

այնտեղ էր։ Անխոս, մռայլ, անողոք, նա դիտում էր այն, ինչ որ կատարվում էր ապակու մյուս կողմում։

Հսկայական, գրեթե անձև զանգվածը սուզվում էր ջրի տակ և նրա հոգեվարքին մինչև վերջ ներկա գտնվելու համար «Նաուտիլուսը» նրա հետ իջնում էր հատակը։ Ինձանից տասը մետր հեռու ես տեսա նավի իրանը, որ համարյա կիսվել էր։ Ջուրը սոսկալի աղմուկով լցվում էր այնտեղ։ Տախտակամածում բազմաթիվ սև ստվերներ էին շարժվում։

Նավը լցվում էր ջրով։ Դժբախտ մարդիկ նետվում էին դեպի կայմապարանները, բարձրանում կայմերը, գալարվում ջրի տակ։ Դա մի մարդկային մրջնանոց էր, որը հեղեղվել էր հանկարծ։

Սարսափից թուլացած, մազերս բիզ-բիզ եղած, աչքերս լայն բացած, ես դիտում էի այդ ցնցող տեսարանը, անկարող լինելով հայացքս շուռ տալ ապակուց, կարծես շղթայված լինելով լուսամուտին։ Հսկայական նավը դանդաղ ջրասույզ էր լինում։ «Նաուտիլուսը» կրնկակոխ հետևում էր նրան։ Հանկարծ պայթյուն լսվեց։ Խուցացած օդը նավի տախտակամածը ճեղքեց մի այնպիսի բոմբյունով, կարծես թե վառոդի պահետ էր պայթել։ Ջրի ճնշումն այնքան մեծ էր, որ «Նաուտիլուսը» մի կողմ շպրտվեց։

Այդ ժամանակ դժբախտ նավն սկսեց ավելի արագ սուզվել։ Երևում էին կայմերն իրենց կառչած զոհերով, առագաստափայտերը, որ ծռվում էին մարմինների ծանրությունից, հետո — միջնակայմի ծայրը և վերջապես, մթին զանգվածն իր ամբողջ խեղդված անձնակազմով չքացավ ջրապտույտում... Ես դարձա դեպի նավապետ Նեմոն։ Այդ սարսափելի դատավորը, ատելության իսկական դևը, շարունակում էր դիտել խավարը։ Երբ ամեն ինչ վերջացավ, նա քայլեց դեպի իր սենյակը, բացեց դուռը և ներս մտավ... Ես նայում էի նրա հետևից։

Սենյակի պատի վրա, սիրած հերոսների պատկերներից ներքև ես տեսա դեռ բոլորովին երիտասարդ կնոջ և երկու փոքրիկ երեխաների նկարները։

Նավապետ Նեմոն մի քանի ակնթարթ դիտեց այդ նկարները և ծունկ չոքելով, սկսեց հեկեկալ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ՆԱՎԱՊԵՏ ՆԵՄՈՅԻ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԵՐԸ

Սոսկալի տեսարանը չքացավ և լուսամուտները փակվեցին։ Բայց սրահում լույս չէր վառվում։ «Նաուտիլուսում» թագավորում էին խավարն ու լռությունը։ Նավն արագ փախչում էր ավերման ու վշտի այդ վայրից։

Ես վերադարձա իմ սենյակը, ուր Նեդն ու Կոնսելը լուռ սպասում էին ինձ։ Ես անհաղթահարելի մի սարսափ զգացի նավապետ Նեմոյի հանդեպ։ Ինչպիսի տանջանքներ էլ որ նա կրած լիներ մարդկանց մեղավորությամբ, այնուամենայնիվ իրավունք չուներ նրանց այդպես պատժել։ Եվ նա ինձ դարձրեց իր վրեժխնդրության ականատես, եթե ոչ մասնակից։ Այդ արդեն չափազանց էր։

Ժամը տասնմեկին վառվեց էլեկտրական լույսը։ Ես անցա սրահ։ Այնտեղ ոչ ոք չկար։ Ես նայեցի պարագաներին։ «Նաուտիլուսը» մեկ ժամում քսանհինգ մղոն արագությամբ ընթանում էր դեպի հյուսիս, գտնվելով մերթ ծովի վրա, մերթ երեսուն ոտնաչափ ջրի տակ։

Քարտեզի վրա գտնելով մեր տեղը, ես տեսա, որ մենք անցել ենք Լամանշի գետաբերանը և հիմա զգալի արագությամբ սլանում ենք դեպի հյուսիսային ծովերը։

Մինչև երեկո մենք Ատլանտյան օվկիանոսով անցել էինք երկու հարյուր լյո։

Մթնշաղը թանձրանում էր, և մինչև լուսնի ծագումը ծովը ծածկված էր խավարով։

Ես վերադարձա իմ սենյակը։ Սակայն չկարողացա քնել։ Մղձավանջները խեղդում էին ինձ։ Նավի խորտակման ամբողջ զարհուրելի տեսարանը շարունակ կանգնած էր աչքերիս առաջ։

Այդ օրվանից սկսած՝ քարտեզի վրա այլևս չէին նշում օրվա անցած ճանապարհը։

Ո՞վ կարող է ասել, թե «Նաուտիլուսը» որքան հեռու էր գնում դեպի Ատլանտյան օվկիանոսի հյուսիսային կողմը, մեծ արագությամբ սլանալով հյուսիսային միգում։ Ար-

դյոք նավը Շպիցբերգենի՞ն էր մոտենում, թե՞ գնում էր դեպի Նոր Երկրի ափերը։ Գուցե նա անցնում էր սակավ հայտնի ծովերով, Սպիտակ ծովով, Կարայի ծովով, Օբի ծովախորշով, Լյախովի արշիպելագի մոտից, Հյուսիսային Ասիայի գրեթե անհայտ ափերից ոչ հեռու։ Ես դրան պատասխանել չէի կարող։

Ես կորցրեցի ժամանակի հաշիվը։ Թվում էր, թե ցերեկն ու գիշերը, ինչպես թևեռում, սովորական կարգով չէին հաջորդում իրար։ Ես զգում էի, որ ընկել եմ խորհրդավոր ու սարսափելի մի բնադավառ, որ ավելի շատ հատուկ է էդգար Պոյի հիվանդ երևակայության, քան իրական կյանքին։ Ես ամեն րոպե սպասում էի, որ Պոյի գրվածքի հերոս Գորդոն Պիմուի նման կտեսնեմ «ծածկոցով փաթաթված մարդկային մի կերպարանք, որ իր մեծությամբ գերազանցում է երկրիս բոլոր կենդանի արարածներին և փակում բևեռի մուտքը։

Ինձ թվում է, սակայն ես գուցե և սխալվում եմ, որ այդ ճանապարհորդությունը հաջողությամբ շարունակվեց տասնհինգ կամ քսան օր, և ես չգիտեմ, թե դեռ որքան կշարունակվեր, եթե տեղի չունենար այն աղետը, որով վերջացավ մեր ճանապարհորդությունը։

Նավապետ Նեմոն և իր օգնականը կարծես թե նավում չլինեին։ Անձնակազմից ոչ ոք և ոչ մի րոպե չէր երևում։ «Նաուտիլուսը» գրեթե միշտ լողում էր ջրի տակ։ Երբ այն բարձրանում էր ջրի վրա, որպեսզի օդ վերցնի, դռնակը բացվում ու փակվում էր ավտոմատ կերպով։ Ես ոչ մի գաղափար չունեի, թե որտեղ ենք գտնվում մենք։

Այլևս չէր երևում կանադացին, որ սպառել էր իր բոլոր ուժերն ու համբերությունը։ Նա համառությամբ լռում էր։ Կոնսելը չէր կարողանում գեթ մի բառ լսել նրանից և շատ էր վախենում, որ կանադացին կարող է ինքնասպան լինել հուսահատությունից և հայրենիքի կարոտից։ Կոնսելը շարունակ հետևում էր կանադացու յուրաքանչյուր քայլին։

Հասկանալի է, որ այսպիսի պայմաններում կյանքն անտանելի էր դարձել։

Մի անգամ, չեմ կարող ասել ամսի քանիսին, ես առավոտյան դեմ քնել էի հիվանդոտ ու ծանր քնով։ Երբ արթնացա, տեսա նեղ լենդին, որ թեքվել էր դեպի ինձ։

Նա շշնջալով ասաց ինձ.

— Մենք փախչում ենք։

— Ե՞րբ,— հարցրի ես։

— Առաջիկա գիշերը։ Հիմա «նաուտիլուսում» չկա ոչ մի հսկողություն։ Նավը կարծես քնած է։ Դուք համաձա՞յն եք, պարոն պրոֆեսոր։

— Այո։ Մենք ո՞րտեղ ենք գտնվում։

— Ինչ որ ցամաքի մերձակայքում։ Այդ ցամաքն ինձ հաջողվեց տեսնել այսօր առավոտյան, մշուշում, քսան մղոն դեպի արևելք։

— Այդ ի՞նչ երկիր է։

— Չգիտեմ, բայց ինչ երկիր էլ որ լինի, մենք այնտեղ ապաստան կգտնենք։

— Այո, նեղ... Այո, այդ որոշված է, մենք կփախչենք այս գիշեր, եթե անգամ մեզ վիճակված է մեռնել ծովում։

— Ծովը հուզվում է, քամին ուժեղ է, սակայն այնքան էլ դժվար չի լինի «նաուտիլուսի» թեթև մակույկով անցնել քսան մղոն։ Ինձ հաջողվեց մի քիչ ուտելիք և մի քանի շիշ ջուր տեղավորել մակույկում։

— Ես կհետևեմ ձեզ։

— Իմացեք, որ եթե ինձ բռնեն, ես պետք է պաշտպանվեմ։ Ես պատրաստ եմ մեռնել, բայց անձնատուր չլինել։

— Մենք միասին կմեռնենք, սիրելի նեդ։

Ես պատրաստ էի ամեն ինչ անել։ Կանադացին գնաց։ Ես բարձրացա տախտակամած։ Այնտեղ հազիվ կարելի էր ոտքի կանգնել, այնքան ուժեղ էին ալիքների հարվածները։ Ահավոր էր երկինքը։ Բայց քանի որ այդ թանձր մշուշից այն կողմ գտնվում է ցամաքը, ուրեմն պետք է փախչել։ Մենք ոչ մի օր և ոչ մի ժամ չպիտի կորցնենք։

Ես վերադարձա սրահ, վախենալով և միևնույն ժամանակ ցանկանալով հանդիպել նավապետ Նեմոյին։ Ես թե՛ ուզում էի և թե՛ չէի ուզում տեսնել նրան։ Ի՞նչ պիտի ասեմ նավապետին։ Արդյոք կհաջողվի՞ թաքցնել այն սարսափը, որ նա

ներշնչում էր ինձ։ Ո՛չ, ավելի լավ է՞մենք չհանդիպենք դեմ առ դեմ։ Ավելի լավ է մոռանալ նրան։ Եվ այնուամենայնիվ...

Ի՛նչ երկար էր տևում այն օրը, վերջին օրը, որ ես պետք է անցկացնեի «Նաուտիլուսում»։ Ես շարունակ մենակ էի մնում։ Նեդ Լենդն ու Կոնսելը վախենում էին ինձ հետ խոսելուց, վախենում էին, թե կմատնեն իրենց։

Ժամը վեցին ես ճաշեցի։ Քաղցած չէի, բայց ստիպված կերա, որպեսզի չկորցնեմ ուժերս։

Վեցն անց կեսին Նեդ Լենդը մտավ իմ սենյակը։

Նա ինձ ասաց.

— Մինչև փախչելու րոպեն մենք այլևս չենք տեսնվի։ Ժամը տասին լուսինը դեռ չի երևա։ Օգտվենք խավարից։ Գնացեք ուղղակի դեպի նավակը։ Ես ու Կոնսելն այնտեղ կըսպասենք ձեզ։

Կանադացին դուրս գնաց, ժամանակ չտալով, որ ես պատասխանեմ իրեն։

Ես ուզում էի ստուգել «Նաուտիլուսի» ընթացքի ուղղությունը և վերադարձա սրահ։ Մենք հրեշավոր արագությամբ, հիսուն մետր խորությամբ սլանում էինք դեպի հյուսիս-հյուսիս-արևելք։

Ես վերջին անգամ դիտեցի բնության հրաշալիքները և արվեստի գործերը, որ պահվում էին թանգարանում, բոլոր հավաքածոները, որ իրենց նմանը չունեին ամբողջ երկրագնդի վրա և պետք է կորչեին այն մարդու հետ, որ դրանք հավաքել էր այստեղ։ Ես ուզում էի դրանք երկար ժամանակ պահել հիշողության մեջ։ Մի ամբողջ ժամ ես դիտում էի այդ գանձերը, որ դարսված էին ապակու տակ և լուսավորված առաստաղում գտնվող լապտերների պայծառ ու մեղմ էլեկտրական լույսով։ Հետո ես վերադարձա իմ սենյակը։

Այստեղ ես ծովային դիմացկուն զգեստ հագա, հավաքեցի իմ բոլոր գրանցումները և դրեցի հագուստիս մեջ։ Սիրտս ուժեղ բաբախում էր։ Իմ հուզումը, իմ ջղագրգիռ տեսքն ինձ անպայման կմատնեին նավապետ Նեմոյին, եթե նա տեսներ ինձ։

Ի՞նչ էր անում նա այդ րոպեին։ Ես մոտեցա նրա սենյակի դռան և ականջ դրեցի։ Ոտնաձայներ լսվեցին։ Նավապետ

Նեմոն այնտեղ էր։ Յուրաքանչյուր շշուկ վախեցնում էր ինձ։ Թվում էր, թե հիմա նա դուրս կգա և կհարցնի, թե ինչու եմ ուզում փախչել։ Երկյուղը տիրել էր ինձ, երևակայությունս գործում էր։ Այս դրությունն այնքան էր տանջալից, որ ես ինձ ակամա հարց էի տալիս, թե ավելի լավ չէ՞ դեմ առ դեմ հանդիպել նավապետին։

Այդ, իհարկե, խենթություն կլիներ։ Բարեբախտաբար ժամանակին ես զսպեցի ինձ։ Վերադառնալով սենյակս, ես մեկնվեցի անկողնի վրա և աշխատում էի հանգստանալ։

Իմ հուզումը հետզհետե անցնում էր, բայց ուղեղս շարունակում էր տենդոքեն աշխատել։ Ես հիշում էի այն ամենն, ինչ որ ապրել էի «Նաուտիլուսում», բոլոր երջանիկ ու դժբախտ դեպքերը, որ տեղի էին ունեցել այն օրվանից սկսած, երբ ես ընկա «Աբրահամ Լինկոլնի» տախտակամածից, ըստորջրյա որսերը, Թորրեսի նեղուցը, Նոր Գվինեայի վայրենիներին, ծանծաղուտում կանգ առնելը, կորալային գերեզմանոցը, Արաբական թունելը, Սանտորին կղզին, Կրետեի ուղակին, Ատլանտիդան, սառցակույտերը, Հարավային բևեռը, համատարած սառույցները, ութոտնիկների դեմ մղված ճակատամարտը, Գոլֆստրիմի գոտու փոթորիկը, «Վրիժառուն» և վերջապես, ռազմանավի և իր ամբողջ անձնակազմի կործանման սոսկալի տեսարանը։ Այս բոլոր պատկերներն անցնում էին իմ աչքերի առջև, որպես դեկորներ, որ անդադար փոխվում են թատրոնական բեմի վրա։ Այդ բոլոր հիշողությունները կապված էին նավապետ Նեմոյի հետ։ Իմ երևակայության մեջ նրա դեմքը հրեշավոր պատկեր էր ներկայացնում։ Այդ արդեն բոլոր մարդկանց նման մարդ չէր, այլ ջրերի ինչ-որ մի խորհրդավոր բնակիչ, օվկիանոսի հանճար։

Արդեն ժամի ինն անց կես էր։ Այրվում էր գլուխս, ես այն սեղմում էի ձեռներովս և փակում աչքերս։ Ես փորձում էի ոչնչի մասին չմտածել։ Մնում էր ևս կես ժամ։ Մղձավանջայի՛ն կես ժամ։ Քիչ էր մնում խելագարվեի։

Հանկարծ լսեցի երգեհոնի անորոշ հնչյուններ, տխուր մեղեդի, ինչ-որ մի երգ։ Հազիվ շնչելով, ես իմ ամբողջ էու-

թյամբ կլանում էի այդ ձայները, հափշտակվում երաժշտությամբ, ինչպես և նավապետ Նեմոն։

Հետո հանկարծակի մի միտք ապշեցրեց ինձ. նավապետ Նեմոն դուրս էր եկել իր սենյակից։ Նա գտնվում էր սրահում, իսկ ես կես ժամից հետո պիտի անցնեի այնտեղից։ Ես նրան կհանդիպեմ վերջին անգամ, և նա կխոսի ինձ հետ։ Նրա միմիայն մի շարժումը կարող է ոչնչացնել ինձ, միմիայն մի բառը կարող է ինձ ընդմիշտ շղթայել այս նավին։

Խփեց ժամը տասը։ Վրաճասավ այն րոպեն, երբ ես պետք է դուրս գայի սենյակից և միանայի իմ ընկերներին։ Ես այլևս չէի կարող տատանվել, եթե նույնիսկ նավապետ Նեմոն դուրս գար իմ առաջ։

Մեծագույն զգուշությամբ ես մի քիչ բաց արի դուռը, ինձ թվում էր, որ այն բացվում էր սարսափելի ճռինչով։ Գուցե այդ ճռինչը գոյություն ուներ միայն իմ երևակայության մեջ։ Ես շոշափելով անցնում էի «Նաուտիլուսի» խավար միջանցքներով, յուրաքանչյուր քայլափոխում կանգ առնելով, որպեսզի չափավորեմ սրտիս բաբախումը։

Վերջապես, ես հասա մինչև սրահի անկյան դուռը և կամացուկ բացեցի։

Սրահում անթափանցելի խավար էր տիրում։ Մեղմ հընչում էին երգեհոնի ակկորդները։ Նավապետ Նեմոն այնտեղ էր։ Նա ինձ չտեսավ։ Ես կարծում եմ, որ նա ինձ չէր տեսնի նաև ցերեկվա ամենապայծառ լույսի տակ, որովհետև խորը հափշտակված էր երաժշտությամբ։

Ես ոտք դրեցի գորգի վրա, վախենալով ամենաչնչին շշուկից, որ կարող էր մատնել իմ ներկայությունը։ Հարկավոր էր ամբողջ հինգ րոպե, որպեսզի հասնեի դռանը, որ գտնվում էր սրահի մյուս կողմում և տանում էր դեպի գրադարանը։

Ես պատրաստվում էի բաց անել այն, բայց հանկարծ լսեցի նավապետի հառաչանքը։ Ես քարացա։ Հասկացա, որ նավապետ Նեմոն վեր է կացել իր տեղից և նույնիսկ խավարում տեսա նրա ուրվականը, որովհետև գրադարանից այստեղ էին թափանցում լույսի թույլ ճառագայթները։ Նավապետը ձեռքերը կրծքին խաչած, կամացուկ մոտենում էր ինձ՝ կարծես

չէր քայլում, այլ սահում էր ինչպես ուրվական։ Նրա կուրծքը դողում էր հեկեկանքներից։ Ես լսեցի այն խոսքերը, որ նա շշնջաց, իմ լսած վերջին խոսքերը.

— Բավական է, բավակա՛ն է։

Ուրեմն խղճի խայթը տանջում էր այդ մարդուն...։

Ինքս ինձ կորցրած, վազեցի գրադարան։ Բարձրացա զբաղված սանդուղքով և վերին անցքով քայլեցի դեպի մակույկը։

«Նաուտիլուսի» երկաթե պատի մեջ եղած անցքը պինդ փակվում էր անգլիական բանալիով, որ Նեդ Լենդը վերցրել էր իր մոտ։ Մակույկի կափարիչը փակվում էր նույն կերպ։ Կանադացին արդեն սկսեց քանդել պտուտակները, վերջին պարագաները, որ մեզ կապում էին ստորջրյա նավին։ Հանկարծ մենք լսեցինք խուլ աղմուկ, որ գալիս էր նավի ներսից։ Այդ ի՞նչ կարող էր լինել։ Գուցե այնտեղ նկատե՞լ են մեր անհետանալը։

Ես զգացի, թե ինչպես Նեդ Լենդը ձեռքիս մեջ դրեց դանակը։

— Այո,— շշնջացի ես,— մենք պետք է պատրաստ լինենք մեռնելու։

Կանադացին դադարեցրեց իր աշխատանքը։ Սակայն մի բան, որ կրկնվել էր տասնյակ անգամ, մի սարսափելի բան ինձ համար պարզեց «Նաուտիլուսում» եղած իրարանցման պատճառը։

Այդ պատճառը բոլորովին մեր փախուստը չէր։

«Մալշտրեմ, մալշտրեմ»։

Մալշտրե՛մ։ Այդ ամենասարսափելին էր, որ մենք կարող էինք լսել։ Այսպես ուրեմն, մենք գտնվում էինք ամենավտանգավոր տեղերում, նորվեգական ափի մոտ։ Մի՞թե «Նաուտիլուսին» վիճակված էր ընկնել այդ մահացու անդունդը, հենց այն րոպեին, երբ մենք պատրաստվում էինք ազատություն ձեռք բերել։

Հայտնի է, որ այստեղ, մակընթացության ժամանակ Ֆարոյան և Լոֆոտենյան կղզիների միջև եղած ջուրը հոսում է անհաղթահարելի ուժով։ Առաջանում է ջրապտույտ, որից դեռ

ոչ մի նավ դուրս չի եկել։ Ամեն տեղից, հորիզոնի ցանցը կետերից այստեղ են սլանում հրեշավոր ալիքները։ Նրանք այստեղ առաջացնում են անհատակ մի անդունդ, որ կոչվում է «օվկիանոսի պորտ» և որի կենտրոնաձիգ ուժը տարածվում է տասնհինգ կիլոմետրի վրա։ Այս ջրապտույտում կորչում են ոչ միայն նավերը, այլև կետերն ու նույնիսկ արկտիկական երկրների սպիտակ արջերը։

Եվ ահա նավապետ Նեմոն ակամա, գուցե և դիտմամբ, այստեղ բերեց իր «Նաուտիլուսը»։ Նավը այստեղ շրջան էր կատարում, որի շառավիղը հետզհետե փոքրանում էր։ Նավի հետ միասին սարսափեցնող արագությամբ պտտվում էր նաև մեր մակույկը, որ դեռ կապված էր նավին։ Ես այդ զգում էի։ Ես զգում էի մաշող, հիվանդագին գլխապտույտ։ Խելահեղ սարսափն ու երկյուղը տիրեցին ինձ, արյունս կանգ էր առնում երակներիս մեջ։ Սիրտս արդեն չէր խփում։ Սառը քրտինքը պատում էր մեզ, ինչպես հոգեվարքի վերջին րոպեներին։ Ինչպիսի դժոխային աղմուկ էր այն փոքրիկ մակույկի շուրջը։ Ինչպիսի՛ մռնչոց, որ անվերջ արձագանքվում էր տասնյակ մղոն տարածության վրա։ Ինչպես էին դղրդում ալիքները, փշրվելով ատորջրյա ժայռի սուր գագաթներին, այնտեղ, անդնդում, ուր ամենապինդ մարմինները, ծառերի ամենահուժկու բները ջարդ ու փշուր են լինում։

Ինչպիսի՛ սարսափ։

Մենք զարհուրելի կերպով օրորվում էինք։ «Նաուտիլուսը» կենդանի արարածի նման պաշտպանվում էր ալիքների հարվածներից։ Նրա պողպատե մկանները ճթճթում էին։ Երբեմն նավը կարծես ծառս էր լինում։

— Հարկավոր է ամուր կառչել «Նաուտիլուսից»,— ասաց Նեդը,— փորձենք նորից ամրացնել բոլոր պտուտակները։ Եթե մենք չկտրվենք «Նաուտիլուսից», գուցե կարողանանք փրկվել։

Նա դեռ չէր վերջացրել խոսքը, երբ լսվեց զարհուրելի մի ճայթյուն։ Պտուտակները դուրս թռան և մակույկը, պոկվելով իր տեղից, ինչպես պարսատիկից նետված քար, շպրտվեց ջրապտույտի հենց մեջտեղը։

Իմ գլուխը խփվեց երկաթե նավին, և ես սաստիկ ցնցումից կորցրեցի գիտակցությունս։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՎԵՐՋԱԲԱՆ

Այսպե՛ս վերջացավ մեր ստորջրյա ճանապարհորդությունը։

Թե ինչ կատարվեց այն սարսափելի գիշերը, մեր մակույկն ինչպես դուրս եկավ կործանարար ջրապտույտից, ինչպես Նեդ Լենդը, Կոնսելն ու ես ազատվեցինք անդնդից, ես այդ չեմ կարող պատմել։ Ես ուշքի եկա Լոֆոտենյան կղզիներում ապրող մի ձկնորսի խրճիթում։ Իմ երկու ընկերները, որ առողջ էին ու անվնաս, կանգնել էին ինձ մոտ և հրճվանքով սեղմում էին ձեռքերս։ Մենք ջերմորեն գրկվեցինք։

Այդ ժամանակ ավելորդ էր մտածել Ֆրանսիա վերադառնալու մասին։

Հյուսիսային և Հարավային Նորվեգիայի միջև հազվագյուտ դեպքում է հաղորդակցություն լինում։ Մենք ստիպված էինք սպասել այն շոգենավին, որ ամսական երկու անգամ մեկնում է դեպի Հյուսիսային հրվանդանը։

Այստեղ, մեզ ազատող այս հասարակ, բարի մարդկանց մեջ ես վերանայում եմ իմ արկածների պատմությունը։ Այն միանգամայն ճիշտ է։ Ոչ մի փաստ չի վրիպել։ Ոչ մի մանրամասնություն չի փոխված։ Դա բոլորովին ճշմարիտ մի պատմություն է մարդու համար անմատչելի տարերքում կատարված արտասովոր ճանապարհորդության մասին, այն տարերքում, ուր մարդկությունն ու գիտությունը երբևէ ազատ ճանապարհներ կստեղծեն։

Արդյոք կհավատա՞ն ինձ։ Չգիտեմ։ Միևնույն չէ՞ ինձ համար։ Ինչ էլ որ լինի, ես իրավունք ունեմ խոսելու այն ծովերի մասին, որոնց խորքերում տասն ամսից պակաս ժամանակամիջոցում անցել եմ քսան հազար լյո, այդ ստորջրյա աշխարհաշուրջ ճանապարհորդության մասին, որ ինձ համար այնքան հրաշքներ հայտնագործեց խաղաղ օվկիանոսում, Հնդկական օվկիանոսում, Կարմիր ու Միջերկրական ծովերում, Ատլանտյան, Հյուսիսային ու Հարավային սառուցյալ օվկիանոսներում։

Բայց ո՞ւր մնաց «Նաուտիլուսը»։ Արդյոք նրան հաջողվե՞ց փրկվել ջրապտույտից։ Արդյոք դեռ կենդանի՞ է նավապետ Նեմոն։ Արդյոք նա շարունակո՞ւմ է վրեժխնդրության իր սարսափելի գործը, թե՞ բավարարվեց այդ վերջին եղեռնագործությամբ։ Արդյոք երբևէ ալիքները կբերե՞ն նրա ձեռագիրը, ուր տրված է նրա ամբողջ կյանքի պատմությունը։ Արդյոք ես կիմանա՞մ այդ մարդու անունը։ Կիմանա՞նք մենք նրա ազգությունը, երբ պարզվի, թե որ երկրին էր պատկանում խորտակված ռազմանավը։

Ես հուսով եմ, որ կիմանանք։ Ես հուսով եմ նաև, որ նրա սքանչելի նավը հաղթահարել է ծովի ամենաղարհուրելի անդունդը և որ «Նաուտիլուսն» ազատվել է այն տեղից, ուր այնքա՛ն նավեր են խորտակվել։

Եթե այդպես է, եթե նավապետ Նեմոն դեռ լողում է օվկիանոսում, որ դարձել է նրա հայրենիքը, թող ատելությունը չքանա նրա անողոք սրտից։ Նա այնքա՛ն հրաշալիքներ է տեսնում, թո՛ղ ուրեմն դրանք հանգցնեն վրիժառության կրակը։ Ահեղ դատավորը պետք է չքանա և իր տեղը զիջի ծովը հանգիստ ուսումնասիրող գիտնականին։ Բախտը լինում է արտասովոր, բայց նաև վեհ։ Մի՞թե ես ինքս չզգացի այդ։ Չէ՞ որ ես տասը ամիս ապրեցի այդ գերբնական կյանքով։ Եվ հիմա այն հարցին, որ վեց հազար տարի առաջ տվել էր էկլեզիաստը, «Ո՞վ է երբևէ չափել անդունդի խորությունը», երկրիս բոլոր մարդկանցից միայն երկուսն իրավունք ունեն պատասխանելու՝ «Ես»։

Այդ երկուսից մեկը նավապետ Նեմոն է, մյուսը՝ ես։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջին մաս

Գլուխ առաջին. *Լաղացաղ խութը* 7
Գլուխ երկրորդ. *Թեր և գեմ* 14
Գլուխ երրորդ. *Ինչպես որ պարոնը կամենա* 21
Գլուխ չորրորդ. *Նեղ լենդը* 28
Գլուխ հինգերորդ. *Կուրորեն հետապնդում* 36
Գլուխ վեցերորդ. *Արագ ընթացք* 44
Գլուխ յոթերորդ. *Կետի անհայտ տեսակը* 55
Գլուխ ութերորդ. Mobilis in mobile 63
Գլուխ իններորդ. *Նեղ լենդը վրդովված է* 72
Գլուխ տասներորդ. *Անդունդի մարդը* 80
Գլուխ տասնմեկերորդ. «*Նաուտիլուսը*» 91
Գլուխ տասներկուերորդ. *Ամեն ինչ էլեկտրականության միջոցով* . 100
Գլուխ տասներեքերորդ. *Մի քանի թվեր* 108
Գլուխ տասնչորսերորդ. «*Սև գետը*» 117
Գլուխ տասնհինգերորդ. *Գրավոր հրավեր* 131
Գլուխ տասնվեցերորդ. *Զբոսանք ստորջրյա հարթավայրում* . . 141
Գլուխ տասնյոթերորդ. *Ստորջրյա անտառը* 148
Գլուխ տասնութերորդ. *Չորս հազար լյո խաղաղ օվկիանոսի ջրերի տակ* 156
Գլուխ տասնիններորդ. *Վանիկորո* 167
Գլուխ քսաներորդ. *Թորիեսի նեղուցը* 178
Գլուխ քսանմեկերորդ. *Մի քանի օր ցամաքում* 189
Գլուխ քսաներկուերորդ. *Նավապետ Նեմոյի կայծակը* . . . 203
Գլուխ քսաներեքերորդ. *Անբացատրելի քնկոտություն* . . . 217
Գլուխ քսանչորսերորդ. *Կորալների աշխարհը* 227

Երկրորդ մաս

Գլուխ առաջին. Հնդկական օվկիանոսը 241
Գլուխ երկրորդ. Նավապետ Նեմոյի առաջարկը 253
Գլուխ երրորդ. Տասը միլիոն արժողությամբ մարգարիտը . . 266
Գլուխ չորրորդ. Կարմիր ծովը 279
Գլուխ հինգերորդ. Արաբական թունելը 294
Գլուխ վեցերորդ. Հունական արշիպելագը 305
Գլուխ յոթերորդ. Քառասունութ ժամում անցանք Միջերկրական ծովը 318
Գլուխ ութերորդ. Վիգո ծովախորշը 329
Գլուխ իններորդ. Կորած մայր ցամաքը 342
Գլուխ տասներորդ. Սարգասյա ածխահանքեր 355
Գլուխ տասնմեկերորդ. Սարգասյան ծովը 369
Գլուխ տասներկուերորդ. Վիշապաձկներ և կետեր . . . 380
Գլուխ տասներեքերորդ. Սառույցներում 394
Գլուխ տասնչորսերորդ. Հարավային բևեռը 410
Գլուխ տասնհինգերորդ. Դժբախտ դեպք կամ չնչին պատահար . 426
Գլուխ տասնվեցերորդ. Օդի պակասություն 436
Գլուխ տասնյոթերորդ. Հորն հրվանդանից դեպի Ամազոն . . 449
Գլուխ տասնութերորդ. Ութոտնիկներ 458
Գլուխ տասնիններորդ. Գոլֆստրիմ 471
Գլուխ քսաներորդ. 47°24′ լայնության և 17°28′ երկարության տակ 484
Գլուխ քսանմեկերորդ. Նրբայրական շիրիմ 493
Գլուխ քսաներկուերորդ. Նավապետ Նեմոյի վերջին խոսքերը . 504
Գլուխ քսաներեքերորդ. Վերջաբան 512

ԺԲՈՒԼ ՎԵՐՆ

Երկերի ժողովածու տաս հատորով

Հատոր IV

20 000 լյո ջրի տակ

Հրատ. խմբագիր՝ Ա. Է. Թովշյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Մանդակունի
Տեխ. խմբագիր՝ Կ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Լ. Խուդոյան

Պատվեր 1083 Տիրաժ 20000

Հանձնված է արտադրության 8/VI 1963 թ.։
Ստորագրված է տպագրության 28/VIII 1963 թ.։
Թուղթ՝ 84×108 1/32, տպագր. 32,25 մամ.=26,44 պայմ. մամ.,
հրատ. 22,4 մամ.։ Գինը՝ 85 կ.։

ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության հրատարակչություն՝
և պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության
պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91։